Ս.Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Ն.Ա. ՊԱՊՈՆՅԱՆ
Հ.Ա. ՁՇՏԱՆՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ՀԱՏՈՐ
2

ԵՐԵՎԱՆ

ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЯЗЫКА ИМ. Г. АЧАРЯНА

С. Г. АБРААМЯН, Н. А. ПАРНАСЯН,
А. А. ОГАНЯН

СОВРЕМЕННЫЙ АРМЯНСКИЙ ЯЗЫК

ТОМ 2

МОРФОЛОГИЯ

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1974

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

491.99
Ա-12

Մ. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Ն. Ա. ՊԱՌՆԱՍՅԱՆ,
Հ. Ա. ՕՀԱՆՅԱՆ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ՀԱՏՈՐ 2

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1974

4 Ար
Ժ 21

«Ձևաբանություն» հատորը գրել են Ս. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ («Ներածություն», «Գոյական», «Դերանուն», «Մակբայ», «Կապ», «Շաղկապ», «Եղանակավորող բառեր», «Ձայնարկություն»), Ն. Ա. ՊԱՌՆԱՅԱՆԸ («Բայ»), Հ. Ա. ՕՀԱՆՅԱՆԸ («Ածական», «Թվական»):

Պատասխանատու խմբագիրներ՝
Ս. Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Է.Դ. ԱՂԱՅԱՆ

Ժ 0713—012 / 703 (02)—74 64—74 © Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն. 1974.

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում տարիների ընթացքում զգալի աշխատանք է կատարվել ժամանակակից հայոց լեզվի կառուցվածքի ուսումնասիրության բնագավառում: Հրատարակվել են մի շարք մենագրություններ հայերենի կառուցվածքի համարյա բոլոր հիմնական հարցերի վերաբերյալ: Այդ բնագավառում աշխատանքներ են կատարվել նաև մեր բուհերի համապատասխան ամբիոններում: Գրված լինելով տարբեր հեղինակների կողմից, այդ ուսումնասիրություններում հաճախ առկա են տարբերություններ հետազոտության եղանակի, նյութի ընդգրկման, գիտական մեկնաբանությունների և այլ տեսակետներից: Այնպես որ, վաղուց զգացվում էր ժամանակակից հայերենի համակարգի համակողմանի ուսումնասիրության պահանջը մեկ աշխատության մեջ և ըստ հնարավորին միասնական սկզբունքներով:

Այդ աշխատանքին տարիներ առաջ ձեռնարկել է Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը և արդյունքները հրատարակում է երեք հատորով:

Ներկա հատորում ընդվում է ժամանակակից հայերենի ձևաբանական կառուցվածքը: Սույն աշխատությունը, ստեղծված լինելով լեզվաբանության զարգացման այնպիսի շրջանում, երբ շատ սկզբունքային հարցերի վերաբերյալ կան և առաջ են բաշխվում տարբեր, երբեմն իրարամերժ տեսակետներ, հավակնություն չունի սպառիչ ու բոլորի համար անառարկելի լուծում ու պատասխան տալու ընդհարկվող բոլոր հարցերին: Այդպիսի աշխատություն այժմ անկարելի է գրել: Սակայն ինչ ուղղությամբ էլ զարգանալու լինի լեզվաբանությունը, նա պետք է հենվի այն դրականի վրա, որ ըստեղծել է դասական լեզվաբանությունը: Այդ դրականի հաշվառումով ու օգտագործումով էլ գրված է սույն աշխատությունը:

Նրանում միաժամանակ շատ հաճախ ցուցաբերվում է նոր մոտեցում, նոր խոսք է ասվում, արվում են նշումներ, նշգրտումներ:

Ուսումնասիրությունը կատարված է հայոց լեզվի արդի շրջանի օրինաչափություններին հաշվառումով, իսկ աշխարհաբարի առավել վաղ շրջաններին առանձին երևույթների, ըստ անհրաժեշտության, համառոտակի անդրադարձվել է համապատասխան երևույթների ներկա օրինաչափություններն ավելի հիմնավորելու նպատակով:

Նշենք նաև, որ չնայած ուսումնասիրությունը միասնական սկզբունքով ու ոճով գրելու նպատակին ու ձգտմանը, այնուամենայնիվ աշխատության վրա իր կնիքն է թողել տարբեր հեղինակների կողմից գրված լինելու հանգամանքը:

ՀՐ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ. ԿԱՊԸ ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՀԵՏ

§ 1. Լեզվաբանական գիտության մեջ չկա միասնական ըմբռնում ձևաբանության, որպես քերականության բաժնի, առարկայի ու խնդիրների վերաբերյալ։ Ակնհայտ է հատկապես ձևաբանության սահմանների ընդլայնումն ի հաշիվ բառակազմության, բառերի շարահյուսական հատկանիշների ու կիրառությունների հարցերի։ Այսպիսի մոտեցման տեղիք է տալիս մասնավորապես այն իրողությունը, որ ձևաբանությունը սերտ հարաբերության մեջ է մի կողմից բառագիտության, մյուս կողմից շարահյուսության հետ։ Այդ առնչություններն ունեն տարբեր ու բազմազան դրսևորումներ, բայց քննարկվող հարցի կապակցությամբ էական է հատկապես այն, որ բառը տարբեր առումներով դառնում է թե՛ բառագիտության, թե՛ ձևաբանության և թե՛ շարահյուսության առարկա։ Այսպիսի պարագայում առանձնահատուկ կարևորություն է ստանում լեզվի կառուցվածքի այդ տարբեր մակարդակների տեսակետից բառի, որպես լեզվական միավորի, գիտական տարբերակված գնահատությունը։

Կա նաև հակառակ մոտեցումը, որ հանգում է ձևաբանության սահմանների խիստ նեղացման, ըստ որի քերականության այդ բաժնի խնդիրն է համարվում բառերի քերականական ձևերի ուսումնասիրումը։ Այսպիսի մոտեցման դեպքում, նախ, մի շարք խոսքի մասեր, որոնք չեն թեքվում, դուրս են թողնվում ձևաբանությունից և դիտվում են որպես շարահյուսության ուսումնասիրության առարկա, և, երկրորդ, ձևաբանության մեջ ընդգրկված խոսքի մասերը քննվում են (կամ համենայն դեպս փորձում են քննել) սոսկ ձևային տեսակետից, անտեսելով իմաստը։ Երկու մո-

տեղումներն էլ ծայրահեղություններ են, որոնցից պետք է խուսափի գիտությունը։

Ձևաբանությունն ուսումնասիրում է խոսքի մասերը, իրեն ճամակարգ, նրանց բերականական կարգերն ու նատկանիշները ձևային և իմաստային տեսակետից։

Խոսքի մասերն առանցքային տեղ են գրավում լեզվի կառուցվածքի մեջ, և նրանց համակարգը չի կարելի երկփեղկել, բաժանել տարբեր բաժինների միջև, վերագրել տարբեր մակարդակների։ Եթե որևէ մասնավոր նպատակի համար այդպիսի բաժանումը կարող է ինչ-ինչ պատճառով հարմար լինել, ապա լեզվի ամբողջական ու համակարգային ուսումնասիրության խնդրում այդպիսի բաժանումը չի կարող արդարացվել։

Վերցնենք այս տեսակետից մի շատ բնորոշ խոսքի մաս՝ կապը։ Կապերն արտահայտում են բառերի ստորադասական հարաբերություններ և չեն թեքվում։ Թեև այս հարաբերությունները նախադասության մեջ շարահյուսական արժեք ունեն, բայց դա չի նշանակում, թե կապերը սոսկ շարահյուսական միավոր են և չպետք է ուսումնասիրվեն ձևաբանության մեջ։ Պետք է նկատի ունենալ, որ ձևաբանական կարգերի ձևաբանական իմաստները նախադասության մեջ ձեռք են բերում շարահյուսական արժեք։ Այսպես, հոլովը անառարկելիորեն ձևաբանական կարգ է և իր ձևային ու իմաստային կողմով ուսումնասիրվում է ձևաբանության մեջ։ Սակայն հոլովները խոսքի մեջ շարահյուսական դեր են կատարում, արտահայտում են շարահյուսական տարբեր հարաբերություններ, որոնք և ուսումնասիրվում են շարահյուսության մեջ։ Կապն իր քերականական դերով հարաբերակից է հոլովական ձևերին, և ինչպես վերջինս ունի իր ձևաբանական և շարահյուսական կողմերը, այնպես էլ կապը։ Անշուշտ, անտառում և անտառի մեջ տարբեր կարգի երևույթներ են այն իմաստով, որ առաջինը բառաձև է, երկրորդը՝ շարահյուսական կապակցություն։ Բայց քննարկվող հարցի տեսակետից այստեղ կարևորն այն է, որ այդ շարահյուսական կապակցությունը կազմված է երկու ոչ թե շարահյուսական, այլ բառա-ձևաբանական միավորներից, իհարկե, իրենց յուրահատկություններով հանդերձ։ Մեջ-ը, առանց ձևափոխության, իր ուղիղ ձևով այնպիսի իմաստային հատկանիշ ունի, որ նրան թույլ է տալիս նախադասության մեջ ձևավորելու շարահյու-

սական պաշտոններ՝ տեղի պարագա, ժամանակի պարագա և այլն։ Այդ պատճառով այն, որպես լեզվական միավոր, պետք է քննվի ձևաբանության մեջ իր թե՛ ձևային, թե՛ իմաստային ընդհանուր հատկանիշով, որի տարբեր շարահյուսական դրսևորումները քննվելու են շարահյուսության մեջ։

Այսպիսով, ձևաբանության մեջ քննվում են բառերի ոչ միայն քերականական փոփոխությունները և այդ կապակցությամբ՝ թեքվող խոսքի մասերը, այլև առհասարակ բոլոր խոսքի մասերը, խոսքի մասերի ամբողջ համակարգը։

§ 2. Խոսքի մասերն ընդգրկում են լեզվի բառապաշարը, բոլոր բառերը, որոնք միաժամանակ բառագիտության ուսումնասիրության առարկան են։ Արդ, ձևաբանությունն ի՞նչ տեսակետից է անդրադառնում բառերին, վերջիններս ի՞նչ կողմերով են դառնում ձևաբանության ուսումնասիրության առարկա։

Ընդունված է ասել, թե բառականի և քերականականի հիմնական տարբերությունն այն է, որ առաջինը գործ ունի մասնավորների, իսկ երկրորդը՝ վերացությունների հետ։ Որ քերականական ամեն մի իրակություն վերացարկման արտահայտություն է, կասկածից վեր է։ Իրոք, բազմաթիվ տարբեր բառական միավորներ կարող են ենթարկվել մեկ ընդհանուր քերականական կանոնի, ունենալ միևնույն քերականական կարգը։ Գիր, ոչխար, ծով, դար բառերը, որոնք ունեն բառական բոլորովին տարբեր իմաստներ, պատկանում են միևնույն խոսքի մասին (գոյական), հոլովվում են, ենթարկվում են միևնույն հոլովման (ի)։ Սիրել, ատել, զբոսնել, պեղել բոլորովին տարբեր իմաստ ունեցող բառերը պատկանում են միևնույն խոսքի մասին (բայ), ունեն միևնույն քերականական կարգը (խոնարհվում են)։ Բառերին, որպես բառապաշարի միավորների, հատուկ չեն այսպիսի վերացությունները։ Բերված օրինակներից յուրաքանչյուրը մեկ բառական միավոր է և այս առումով էապես տարբերվում է մյուսներից։ Սակայն սա չի նշանակում, թե բառական միավորներին, որպես այդպիսիների, հատուկ չէ վերացությունը։ Նախ՝ յուրաքանչյուր բառ, ինքնին վերցրած, վերացության արդյունք է. այն վերացություն է իբրև լեզվական միավոր և խոսքի մեջ է ստանում իր կոնկրետ դրսևորումը։ Ասենք, ծառ բառը իր մեջ բովանդակում է որոշակի կարծրություն ու այլ հատկանիշներ ունեցող հայտնի նյութի ընդհանուր գաղափարը և

այդ պատճառով էլ այն կարող է վերաբերել բոլոր քարերին, քարի բոլոր տեսակներին։ Իհարկե, այսպիսի վերացությունները վերաբերում են ամեն մի բառի առանձին վերցրած և էապես տարբերվում են քերականական վերացություններից։

Բացի սրանից, պետք է նկատի ունենալ իմաստային ընդհանրությամբ պայմանավորված տարբեր բառախմբերի առկայությունը բառապաշարի մեջ, որոնք նույնպես վերացության յուրահատուկ արտահայտություն են, ասենք՝ ժամանակի անուններ, տեղի անուններ, չափ ու քանակ ցույց տվող բառեր, առարկայի որակ ցույց տվող բառեր և այլն։ Այսպիսով, բառերին ևս հատուկ է վերացությունը, և տարբերությունը քերականությունից՝ վերացության բնույթի մեջ է։

Ավելի ակնհայտ ու յուրահատուկ վերացություններ հատուկ են բառերի կազմությանը։ Հենց վերոհիշյալ երկու կարգի օրինակներից յուրաքանչյուրը բառակազմական (իսկ սա բառական հատկանիշ է) տեսակետից պատկանում է միևնույն տիպին. գիր, ոչխար, ծով, դար բառերը պարզ, արմատական բառեր են, իսկ սիրել, ատել, զբոսնել, պեղել բառական բաղադրյալ ձևեր են։ Այստեղ մենք գործ ունենք բառերի կազմության վերացությունների հետ։

Վերցնենք այսպիսի օրինակներ.

երեխայություն	հերոսացում	աշակերտություն
երեխայական	հերոսական	աշակերտական
երեխայաբար	հերոսաբար	աշակերտաբար
երեխայանալ	հերոսանալ	աշակերտել

Դիտելով այս բառերը, տեսնում ենք, որ կազմության տեսակետից ուղղահայաց շարքերն ունեն որոշ ընդհանրություն. ամեն մի շարքում ունենք միևնույն արմատը (երեխա, հերոս, աշակերտ), և բառերի իմաստը մասնավորվում է այդ միևնույն արմատների վրա։ Յուրաքանչյուր ուղղահայաց շարքի բառակազմական այդ ընդհանրությունը կարելի է արտահայտել «տվյալ արմատ+ածանց» կաղապարով։ Բոլոր շարքերում, միասին վերցրած, ունենք բառակազմական ավելի մեծ ընդհանրություն՝ «արմատ+ածանց»։

Այս կաղապարները, անշուշտ, որոշակի վերացության արտահայտություն են, ինչպես որ վերացության արտահայտություն է «ձիմմ+ճոլովական վերջավորություն» կաղապարը։ Միայն թե, ի

տարբերություն վերջինիս, որը քերականական արժեք ու բնույթ ունի, առաջինը վերաբերում է բառագիտությանը և մանավորապես բառակազմական արժեք ունի։ Վերջապես վերացություն են և՛ ամեն ածանց, և՛ ածանցների տարբեր խմբերը, և՛ ածանցը, արմատը առհասարակ։ Սրանք բառական, բառակազմական վերացություններ են, որոնք իրենց բնույթով տարբեր են քերականական վերացություններից։

Դիտելով վերոհիշյալ բառերի հորիզոնական շարքերը, կարելի է նկատել, որ թեև դրանք կազմված են տարբեր բառերից, որոնք ունեն տարբեր արմատներ, այնուամենայնիվ դրանց միջև կա որոշակի ընդհանրություն։ Առաջին շարքի բառերը ցույց են տալիս առարկա (կամ իբրև առարկա մտածված երևույթ), երկրորդ շարքի բառերը ցույց են տալիս առարկայի հատկանիշ, երրորդ շարքինը՝ գործողության հատկանիշ, չորրորդ շարքինը՝ գործողություն։ Այս վերացությունները կազմվում են համապատասխան առանձին բառերի իմաստներից՝ վերջիններիս մեջ առկա ընդհանրության հիման վրա և տարբերությունների անտեսումով։ Այսպես են կազմվում, ուրեմն, խոսքի մասային վերացությունները։

Այսպիսով, բառապաշարին ևս հատուկ են վերացությունները, միայն թե վերջիններս տարբերվում են քերականական վերացություններից։ Բառական և մանավորապես բառակազմական վերացությունները չեն բացառում, որ իմաստային տեսակետից յուրաքանչյուր բառ բնութագրվի իբրև առանձին միավոր, և այս առումով բառական վերացությունները, իրոք, տարբերվում են քերականականից։ Այս հանգամանքով պայմանավորվում են նրանց ուսումնասիրման որոշ տարբերություններ։ Լեզվի բառային կազմի, մանավորապես իմաստային կողմի լիակատար ուսումնասիրության համար անհրաժեշտ է հավաքել լեզվի ամբողջ բառապաշարը, բոլոր բառերը, թեև դրանց մեջ կան կառուցվածքային մեծ ընդհանրություններ։ Այդ նպատակին են ծառայում բառարանները, որոնք ներկայացնում են տվյալ լեզվի բառապաշարը։ Թեև հայտնի է, ասենք, -ական ածանցի բառակազմական արժեքը, այնուամենայնիվ բառապաշարի ամբողջական ուսումնասիրության համար անհրաժեշտ է հաշվի առնել այդ ածանցով բոլոր կազմությունները, ինչպես՝ աշակերտական, խմբական, լեռնական, մասնական, ավանդական, դասական և այլն, որոնցից յուրաքանչյուրը իմաստային տեսակետից ունի իր յուրահատկությունը։ Մինչ-

դեռ, օրինակ, տրական հոլովի ուսումնասիրման դեպքում անհրաժեշտ չէ հավաքել և ներկայացնել ընթերցողին այն բոլոր բառերը, որոնք ստանում են ի կամ այդ հոլովի այլ վերջավորություն, ինչպես՝ բաղարի, գյուղի, նանապարհի, գրիչի, ընկերոջ, գրության, շաբաթվա և այլն։ Հոլովի, տվյալ դեպքում տրական հոլովի հիմնավոր ուսումնասիրության դեպքում բավական են լինում սահմանափակ թվով համապատասխան տիպական փաստեր։ Այսպես է քերականական կարգերի ուսումնասիրման առանձնահատկությունը, որ պայմանավորված է նրանց վերացության բնույթով։ Նշենք նաև, որ ի տարբերություն բառագիտության, որին, այլ հարցերի հետ միասին, հետաքրքրում է բառի կազմությունը, ձևաբանությունը բառը քննում է որպես ամբողջական միավոր։

§ 3. Խոսքի մասերի ուսումնասիրության մեջ ըստ անհրաժեշտության պետք է տեղ տալ բառերի նաև ձևային հատկանիշներին։ Այս կապակցությամբ ձևաբանության մեջ քննվում են նաև բառակազմական հարցեր այն չափով, ինչ չափով դրանք բնութագրական արժեք ունեն տվյալ խոսքի մասի համար և դրանով իսկ քերականական որոշ դեր են կատարում։ Այսպես, քանի որ -ություն ածանցով կազմվում են միայն գոյականներ (արտադրություն, բնակչություն, քննություն, լեզվաբանություն), ուստի այդ երևույթը ձևաբանության մեջ քննվում է այդ առումով, և -ությունն-ով կազմությունը գնահատվում է որպես գոյականի ձև։ Իսկ բուն բառակազմական ներքին հարցերը (այդ ածանցի կազմությունը և այլն) վերաբերում են բառակազմությանը։ Ավելացնենք, որ այդ ձևային հատկանիշը կարևոր է նաև համապատասխան գոյականների հոլովման տիպի համար (ա հոլովում)։

Որպես բառի ձևային հատկանիշ որոշ առումով կարող է կարևոր լինել, թե բառը ինչպիսի՛ կամ մասնավորապես ո՛ր հնչյունով է վերջանում։ Այսպես, մի մասնավոր նպատակի՝ որոշյալ առման ձևավորման համար կարևոր է տվյալ բառի՝ ձայնավորով կամ բաղաձայնով վերջանալը (որպեսզի ըստ այդմ գործածվի և կամ ը հոդը)։ Կամ՝ գոյականի հոլովման մեջ, օրինակ, քերականական որոշ դեր է ստանում բառի՝ ի-ով վերջանալը, քանի որ ձևային այդ հատկանիշով որոշվում է բառի հոլովման տիպը։ Այդ նույն հատկանիշը բառագիտությանը հետաքրքրում է մի այլ տե-

սակետից՝ որոշելու համար բառաբարդման ժամանակ հոդակապի բնույթի հարցը (համմտ. ձևռագործ, գինեգործ)։

Վերջապես, բառի ձևային հատկանիշ է նրա միավանկ կամ բազմավանկ լինելը, որ երբեմն հիմք է դառնում բառի քերականական յուրահատկության համար։ Այսպես, բայի միավանկությունը կարող է պայմանավորել նրա խոնարհման անկանոնություն (գալ, տալ, լալ), գոյականի միավանկությունը պայմանավորում է թվի քերականական կարգի ձևավորման յուրահատկություն, ի տարբերություն բազմավանկ բառերի, և այլն։

Ձևաբանությանը քերականական առումով հետաքրքրում է բառերի նաև իմաստային հատկանիշը, միայն թե ոչ մասնավոր, այլ ընդհանուր իմաստը։ Բացի խոսքի մասերի դասակարգման հարցում այդ հատկանիշի շատ էական դերից, ձևաբանությունը հաճախ հաշվի է առնում համեմատաբար ստորին մակարդակի իմաստային հատկանիշները, որոնք, լինելով բառերի առանձին խմբերի իմաստային վերացարկումներ, հաճախ ունենում են ձևաբանական արժեք։

Նշենք, օրինակ, գոյականների որոշ խմբերի իմաստային հատկանիշի դերը նրանց հոլովման տիպի հարցում (ասենք, ժամանակի անունների պատկանելը վա հոլովման, անձ ցույց տվող անունների պատկանելը ա, ոջ հոլովումներին և այլն), բայի իմաստային բնույթի դերը քերականական սեռի հարցում, ածականների իմաստային յուրահատկության դերը նրանց համեմատության աստիճան ունենալու կամ չունենալու հարցում և այլն։

*Այսպիսով, ձևաբանության հիմնական խնդիրների քննության տեսակետից հաճախ անհրաժեշտ է լինում հաշվի առնել բառերի **ձևային և իմաստային հատկանիշները. այս դեպքում բառերի այդ** հատկանիշների քննությունը նպատակային բնույթ չի կրում. դրանք ընդհանուր ձևով հաշվի են առնվում որպես միջոց՝ համապատասխան ձևաբանական կարգերն ու երևույթները հիմնավոր քննելու, բնութագրելու, պատճառաբանելու համար։*

ԲԱՌԻ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

§ 4. Բառը կարելի է քննել, վերլուծել տարբեր տեսանկյուններով՝ հնչյունաբանական, բառակազմական, ձևաբանական, շարահյուսական (ըստ համապատասխան մակարդակների)։ Բառի

ձևաբանական վերլուծության նպատակն է՝ որոշել նրա բառային-քերականական արժեքը, քերականական կարգերը և կատարել քերականական ձևի ձևակազմական վերլուծություն։ Այսպիսի վերլուծումով որոշվում են բառի կամ բառաձևի հետևյալ հատկանիշները՝ խոսքի մասային պատկանելությունը, խոսքի մասային տեսակը, ձևաբանական կարգերը և դրանց հետ կապված՝ քերականական ձևն ու իմաստը, այդ ձևի բաղադրիչները, վերջիններիս դերն ու փոխհարաբերությունը։ Անշուշտ, ոչ բոլոր բառերին ու բառաձևերին են վերաբերում այս բոլոր հատկանիշներն ու դրանց բացահայտումը։

§ 5. *Բառի ձևաբանական վերլուծության հետ կապված ամենահիմնական հասկացություններն են* **հիմքը և վերջավորությունը**։

Վերջավորությունը քերականական մասնիկ է, որն արտահայտում է քերականական իմաստ։ Դպրոցից և դպրոցներ բառաձևերի մեջ վերջավորություններն են ից և ներ, որոնցից առաջինը անջատման, ելակետի քերականական իմաստ է հաղորդում բառին, երկրորդը՝ թվի։

Հիմքերը լինում են երկու տեսակ՝ **բացարձակ և հարաբերական**։ *Բացարձակ կոչվում է բառի հիմքը առանց քերականական որևէ վերջավորության։ Բացարձակ հիմքը միշտ մնում է նույնը բառի քերականական բոլոր փոփոխությունների դեպքում։ Այսպես՝* **դպրոց**ի, դպրոց**ներ**, դպրոց**ների**, դպրոց**ներից** *բառաձևերի մեջ բացարձակ հիմքն է* դպրոց-*ը։ Ծառը, ծառից, ծառերով բառաձևերի մեջ բացարձակ հիմք է* ծառ-*ը։*

Ինչպես երևում է օրինակներից, բառը կարող է ստանալ մեկից ավելի վերջավորություններ։ Այդպիսի դեպքերում (ի տարբերություն մեկ վերջավորություն ունեցող բառաձևերի, ուր այդ վերջավորությունը հակադրվում է մեկ որոշակի հիմքի) հիմքի և վերջավորության հարաբերությունը փոխվում է։ Բացի բացարձակ հիմքից, նման դեպքերում հիմքի արժեք է ստանում բառաձևը առանց վերջին վերջավորության։ Այդպիսի հիմքը կարելի է կոչել հարաբերական, հաշվի առնելով, որ այն կայուն, բացարձակ չէ և փոփոխվում է՝ նայած թե ո՛ր վերջավորության համեմատությամբ է վերցվում։ Այսպես՝ ծառերից *բառաձևի մեջ հարաբերական հիմք է* ծառեր, ծառերից *ձևի մեջ՝* ծառերից, կնոջով *բառաձևում՝* կնոջ, կանանցից *բառաձևում՝* կանանց *և այլն։*

Միևնույն բառի տարբեր վերջավորությունները սովորաբար

դրվում են որոշակի հերթականությամբ։ Գոյականի համակարգում այդ հերթականությունը հետևյալն է՝ թվի վերջավորություն, հոլովական վերջավորություն և հոդ[1]։

Սակայն ոչ միշտ է քերականական ամեն մի իմաստ ունենում իր հատուկ արտահայտության ձևային կողմը։ Հաճախ միևնույն վերջավորությունը ծառայում է տարբեր քերականական իմաստ արտահայտելուն։ Դա առավելապես հատուկ է բայական համակարգին։ Այսպես՝ գրեցի, գրեցիր ձևերի մեջ -ի և -իր վերջավորությունները միաժամանակ և՛ դեմքի, և՛ թվի իմաստ են արտահայտում։

§ 6. Թե՛ անվանական և թե՛ բայական համակարգում հանդես է գալիս քերականական զրո վերջավորությունը, որը կատարում է ձևային վերջավորության հավասար դեր։ Զրո վերջավորությամբ բառաձևի քերականական իմաստը որոշելու համար անհրաժեշտ է հաշվի առնել, թե տվյալ ձևը քերականական ի՛նչ ձևերի հակադրության մեջ է վերցվում[2]։ Այսպես՝ հայտնի է, որ ծառից բառաձևը բացառականի ձև է, քանի որ ունի -ից վերջավորությունը։ Մինչդեռ ծառ ձևի զրո վերջավորությունը քերականորեն կարող է արժեքավորվել այն դեպքում, երբ մենք այդ ձևը վերցնենք այս կամ այն ձևի հետ որոշակի հակադրության մեջ։ Ծառ-ը կարող է ունենալ եզակի թվի դեր կատարող 0 վերջավորություն, երբ այն վերցնելու լինենք ծառեր հոգնակիի հակադրության մեջ և կարող է ունենալ նաև հոլովական 0 վերջավորության արժեք, եթե վերցնելու լինենք, ասենք, ծառի, ծառից հոլովական ձևերի հակադրությամբ։ Ըստ որում, ինչպես երևում է, միևնույն բառաձևը, վերցվելով տարբեր քերականական շարքերի հակադրության մեջ, միաժամանակ կարող է արժեքավորվել մեկից ավել զրո վերջավորությամբ։ Այսպես՝ գնաց, գրեց ձևերը (գնացի, գնացիր, գրեցի, գրեցիր շարքում) ունեն միաժամանակ և՛ թվի, և՛ դեմքի զրո վերջավորություններ։

Պետք է նկատի ունենալ, որ զրո վերջավորությամբ հատկանշվող բառաձևը կարող է առհասարակ չունենալ որևէ քերականական ձևույթ, այլ լինել բառի ուղիղ ձևը, ինչպես վերը բերված ծառ բառն է։ Այն, սակայն, իր կազմում կարող է ունենալ քերականական այս կամ այն ձևույթը, ինչպես գնաց. գրեց ձևերը, որոն-

[1] Տե՛ս Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 133 և շար.։

[2] Նույն տեղում, էջ 132—133։

ցում ացը և եցը հիմք կազմող ձևույթներ են, որոնք առկա են նաև 1-ին, 2-րդ դեմքերի ձևերում՝ գնաց-ի, գնաց-իր, գրեց-ի, գրեց-իր:

ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԸ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ

§ 7. Խոսքի մասերի համակարգի ու դասակարգման հարցը լեզվաբանության առավել վիճելի հարցերից է: Խոսքի մասերը ոմանք համարում են քերականական կարգեր, ոմանք՝ մասնավորապես ձևաբանական, երրորդները՝ շարահյուսական, չորրորդները՝ բառա-քերականական, ուրիշները՝ բառական, իմացաբանական և այլն:

Խոսքի մասերի դասակարգման վերաբերյալ տարակարծությունները հիմնականում հանգում են հետևյալին: Նրանց դասակարգման հիմունք են համարում՝

ա) Ոմանք բառերի բոլոր հատկանիշները՝ իմաստային, ձևաբանական, շարահյուսական, բառակազմական.

բ) Ուրիշները՝ բառերի իմաստային, ձևաբանական ու շարահյուսական հատկանիշները.

գ) Երրորդները՝ բառերի միայն ձևաբանական հատկանիշները.

դ) Չորրորդները՝ բառերի ընդհանուր իմաստային ու շարահյուսական հատկանիշները.

ե) Հինգերորդները՝ բառերի ընդհանուր իմաստը և այլն[3]:

Խոսքի մասերի համակարգի ու դասակարգման գիտական լուծման համար անհրաժեշտ է ապահովել հետևյալ պահանջները.

ա) Խոսքի մասերի բնույթի, նրանցում բառականի ու քերականականի ճիշտ գնահատում.

բ) Լեզվի, իբրև լեզվաբանության առարկայի, ճիշտ գնահատում, որը ելակետային դեր է կատարում խոսքի մասերի որոշման հարցում.

գ) Գիտական դասակարգման պահանջների հաշվառում. մասնավորապես դասակարգման հիմունքի ու դասակարգվող միավորների այլ հատկանիշների տարբերում.

---

3 *Խոսքի մասերի դասակարգման վերաբերյալ եղած կարծիքների մանրամասն քննությունը տե՛ս* Ս. Գ. Աբարեամյան, *Չքնքվող խոսքի մասերը ժամանակակից հայերենում և նրանց բառական ու քերականական հատկանիշների փոխհարաբերությունը, Երևան, 1965, էջ 15—71:*

դ) *Լեզվի ու խոսքի, լեզվականի ու խոսքայինի փոխհարաբերության բավարար հաշվառում։*

Անհրաժեշտ է նաև նկատի ունենալ խոսքի մասերի դասակարգման դժվարության, այսպես ասած, օբյեկտիվ կողմը, որ առկա է բուն լեզվի մեջ, խոսքի մասերի համակարգի էության մեջ։ Դրանք են՝

ա) *Տարբեր խոսքի մասերի պատմական փոխանցումներ և այդ պատճառով հաճախ նրանց ոչ որոշակի սահմանազատվածություն բուն իսկ լեզվի մեջ.*

բ) *Խոսքի մասերի միմյանց նկատմամբ ունեցած հակադրությունների տարբեր բնույթներն ու տարբեր մակարդակները։*

§ 8. *Նախ՝ խոսքի մասերի բնույթի մասին։ Ամեն մի վերացություն իր բնույթով բնականաբար համապատասխանում է այն առանձիններին, որոնցից կատարվում է տվյալ վերացությունը։ Ինչ խոսք, որ այդպես պետք է գնահատել նաև խոսքի մասերը։ Խոսքի մասային վերացության համար իրրև առանձիններ ծառայում են բառերը, ուստի և բառերից ստեղծված վերացությունը չի կարող բացառել բառականը և լինել զուտ քերականական։*

Ինչի՞ հիման վրա է կազմվում, օրինակ, բայի խոսքի մասային՝ գործողության իմաստը։ Չէ՞ որ տարբեր բայեր ունեն տարբեր իմաստներ, ինչպես՝ fայլել, երգել, մտածել։ Այս և բոլոր բայերը իրենց բնույթով տարբերվում են այնպիսի բառերից, ինչպիսիք են՝ fայլ, երգ, միտ, երեf, չnրս և այլն։ Այս ընդհանուր տարբերիչ հատկանիշը գործողության ընդհանուր իմաստն է, որ կա բոլոր բայերի մեջ և ամեն մի բայի մեջ, իբրև բառիմաստի ավելի բարձր մակարդակի վերացություն, քան տվյալ բայի մասնավոր իմաստն է։ Տվյալ գործողության իմաստը, որ արտահայտվում է բայի մեջ, և գործողության ընդհանուր իմաստը, որ հատուկ է բայ խոսքի մասին, առանձինի և ընդհանուրի փոխհարաբերության մեջ գտնվող երևույթներ են, ավելի ճիշտ, նույն երևույթի տարբեր կողմերը։ Եվ, ինչ խոսք, չի կարելի միևնույն երևույթի տարբեր կողմերը դասել լեզվի կառուցվածքի տարբեր բնագավառների մեջ։ Այս վերաբերում է ոչ միայն բային, այլև բնականաբար մյուս բոլոր խոսքի մասերին։

Պետք է նշել, որ խոսքի մասային իմաստը, լինելով բնույթով ու էությամբ լինելով բառական կարգի վերացություն, ունի նաև քերա-

կանական կողմ ու արժեք: Այն հիմք է հանդիսանում տվյալ խոսքի մասի մեջ մտնող բառերի քերականական փոփոխությունների և ընդհանրապես քերականական հատկանիշների համար: Այսպես, գոյականի խոսքի մասային ընդհանուր իմաստը առարկա (կամ որպես այդպիսին մտածված երևույթ) անվանելն է: Այս հատկանիշը որոշակի դեր է կատարում գոյականի ձևաբանական կարգերի (թվի, հոլովման և այլն) հարցում, ճիշտ այնպես, ինչպես բայի ընթացականության իմաստը՝ նրա քերականական կարգերի (սեռ, խոնարհում և այլն) հարցում: Այս տեսակետից հետաքրքրական է բայի և բայանվան տարբերությունը իմաստային ու քերականական տեսակետից: Եթե տվյալ դենոտատը լեզվականորեն արտահայտվում է որպես բայ, այսինքն՝ իմաստային տեսակետից հատկանշվում է ընթացականությամբ, ապա բնականաբար ձեռք է բերում նաև համապատասխան քերականական հատկանիշներ (ինչպես՝ շարժել, շարժող, շարժելու, շարժեցի, շարժեցինք, շարժելու ենք և այլն), իսկ եթե այդ նույն դենոտատը լեզվականորեն մտածվում է որպես առարկա, այսինքն՝ հանդես է գալիս գոյականական իմաստով, ապա ստանում է այդ իմաստին համապատասխան ձևաբանական կարգեր ու արտահայտություններ (ինչպես՝ շարժում, շարժումներ, շարժման, շարժումից, շարժումով, շարժումներ, շարժումների, շարժումներից և այլն):

Այսպիսով, խոսքի մասերը բառա-իերականական կարգեր են: Ըստ որում, տարբեր խոսքի մասերի մեջ բառականի ու քերականականի այս հարաբերությունը միատեսակ չէ:

Խոսքի մասերի բնույթի ճիշտ որոշումը օգնում է ճիշտ կողմնորոշվելու նաև մի այլ կարևոր հարցում՝ բառային կազմի ու խոսքի մասերի հարաբերության հարցում. հարցի հիշյալ լուծումով պայմանավորված՝ չի կարող արդարացվել որոշ խոսքի մասեր՝ խոսքի մասերի ընդհանուր համակարգից դուրս թողնելն այն պատճառաբանությամբ, թե նրանք նախադասության անդամի քերականական դեր չունեն: Բոլոր բառերը, անկախ իրենց իերական դերից, մտնում են խոսքի մասերի շարքը և այդ համակարգում ունեն իրենց տեղը:

§ 9. Լեզվի, իբրև լեզվաբանության առարկայի, տարբեր ըմբրռնումները համապատասխան դեր են կատարում խոսքի մասերի որոշման հարցում: Այն լեզվաբանները, որոնք լեզուն բնորոշում են նրա հաղորդակցական դերով և այն քննում են մտածողության հետ

անխզելի կապի մեջ, խոսքի մասերի որոշման մեջ հատուկ նշանակություն են տալիս նրանց իմաստային կողմին։ Իսկ խոսքի մասերը միայն ձևաբանական փոփոխություններով որոշելու հիմքում ընկած է այն ըմբռնումը, ըստ որի լեզուն նշանների համակարգ է, և լեզվաբանության խնդիրն է՝ այդ նշանների համակարգի, լեզվի արտաքին կողմի քննությունը։

Լեզվի, իբրև համակարգի, ըմբռնումը առաջին պլան մղեց լեզվական միավորների հարաբերությունների ուսումնասիրումը։ Այդ հարաբերությունների դերն այնքան գերագնահատվեց, որ որոշ մասնագետների կողմից ըստ էության ժխտվեց լեզվական միավորի ինքնուրույնությունը։ Լեզվի կառուցվածքի մեջ հարաբերությունների այդ գերագնահատումը վճռական դեր է կատարում ժամանակակից լեզվաբանության որոշ ծայրաթևերի հայացքներում, ըստ որոնց խոսքի մասերը պետք է որոշել բառերի շարահյուսական հարաբերություններով։

Շարահյուսական հարաբերությունների գերագնահատումը տեղիք է տալիս խոսքի մասային վերացությունների լեզվական յուրահատկության անտեսման կամ թերագնահատման և տրամաբանական ու նույնիսկ դենոտատային կողմի հաշվառման։ Հիշենք, օրինակ, դերանունները հարաբերակից խոսքի մասերի մեջ տարրալուծելու հին ու նոր առաջարկությունները՝ շարահյուսական հատկանիշի որոշ ընդհանրության հիման վրա։ Ով, խոտ, մարդ և սա, դա, նա բառերի խոսքի մասային արժեքի նույնացումը նշանակում է տվյալ մակարդակում այդ բառերի գնահատման հարցում իմաստային-լեզվական ելակետից (գոյականն անվանողական արժեք ունեցող բառ է, դերանունը՝ հարաբերություններով ցույց տվող, ակնարկող) փոխարինել արտալեզվային ելակետով, դենոտատի ընդհանրության հանգամանքով. ավելի պարզ՝ գնահատել իճը (արտալեզվայինը) և անտեսել իճչպեսը (լեզվայինը)։ Այսպես է և մյուս դեպքերում։ Մի փոքր ավելի խորանալու դեպքում պարզվում է, որ լեզվի տեսակետից, լեզվական առումով, այդ թվում և խոսքի մասերի որոշման համար առանձնահատուկ կարևորություն է ստանում բառերի ոչ այնքան ինչ ցույց տալը, որքան ինչպես ցույց տալը։ Համմտ. սպիտակ և սպիտակություն, վազել և վազք, սակայն և հակադրություն, օխա՛յ և բավականություն և այլն։ Բառի ձևաբանական ու շարահյուսական հատկանիշները խոսքի մասերի դասակարգման հիմքում դնելու աննպատա-

կահարմարության ու անհնարինության հարցը այլ առումով քննվում է § 10-ում։

Լեզուն և՛ հաղորդակցական դեր է կատարում, և՛ համակարգ է հանդիսանում, ըստ որում, այդ հատկանիշները ոչ միայն իրար չեն բացառում, այլև պայմանավորում են միմյանց և բնորոշում են լեզուն թե՛ գործառական (ֆունկցիոնալ) և թե՛ կառուցվածքային տեսակետից։ Այդ պատճառով էլ լեզվի իմաստավոր միավորների, այդ թվում և բառերի դասակարգման համար չի կարող տեսականորեն ընդհանրապես բացառվել հատկապես իմաստային կողմը կամ հատկապես ձևային կողմը։ Այս հարցը, սակայն, չի կարող լուծվել միայն տեսականորեն, քանի որ այն վերաբերում է որոշակի փաստերի և չի կարող վճռվել այդ փաստերի բնույթից ու էությունից կտրված։

§ 10. Խոսքի մասերի դասակարգման վրա բացասաբար են անդրադարձել գիտական դասակարգման պահանջների անտեսումը և դասակարգման հիմունքի ու դասակարգվող միավորների այլ կարգի հատկանիշների նույնացումը։

Այն հատկանիշը, որի հիման վրա կատարվում է դասակարգումը, պետք է լինի ամենաբնորոշը դասակարգվող օբյեկտի էության համար։ Տվյալ դասակարգման մեջ կամ դասակարգման տվյալ մակարդակում իբրև հիմունք վերցրած հատկանիշի տեսակետից դասակարգման եզրերը, բաժանման անդամները պետք է հակադրվեն և բացառեն իրար։

Նշենք, որ խոսքի մասային վերացություններ որոշման և այդ առումով նրանց դասակարգման համար ձևաբանական հատկանիշը չի կարող հիմունք ծառայել[4]։ Քանի որ մենք ունենք ոչ միայն fարից, այլև յուրաքանչյուրից, գրելուց, ինչպես և լավից, երկուսից և այլն, հասկանալի է, որ ընդգծված բառերի, այդ թվում և fար բառի (ու բոլոր գոյականների) խոսքի մասային պատկանելության որոշման հարցում հոլովմանը հիմունքի դեր վերագրել չի կարելի։ Անկարելի է, օրինակ, դերանունը, որպես խոսքի մաս,

4 *Բառի ձևաբանական, շարահյուսական, բառակազմական ու խոսքային հատկանիշները, որպես խոսքի մասերի դասակարգման հիմունք, հիմնավոր քննադատել ու մերժել է ակադ. Գ. Սևակը իր «Խոսքի մասերի ուսմունքը» (ԵՊՀԱ, 1939, հ. 11) ուսումնասիրության մեջ, ուր նա դասակարգման հիմունք է ընդունում բառերի լեզվական-իմացաբանական իմաստը։*

որոշել ձևաբանական հատկանիշով։ Դերանվան համար որպես խոսքի մասային հատկանիշ ու հիմունք առաջարկվում է դերանվանական հոլովումը։ Այս դեպքում կստացվի, որ ինձս, ինձդ, ինքը դերանուններից միայն վերջինը պիտի համարենք դերանուն, նրա հոգնակին՝ իրենք, պիտի համարենք գոյական, քանի որ ենթարկվում է անվանական ց հոլովման, իսկ այդ միևնույն դերանվան առաջին ու երկրորդ դեմքերը՝ ինձս, ինձդ, չպիտի համարենք ո՛չ դերանուն, ո՛չ գոյական, քանի որ չեն հոլովվում։ Հայերենում ձևաբանական հատկանիշը չի կարող հիմունք հանդիսանալ խոսքի մասերի դասակարգման համար, թեև որոշ ձևաբանական կարգեր այս կամ այն խոսքի մասի համար ավելի բնորոշ են։

Խոսքի մասերի դասակարգման հիմքում չի կարելի դնել նաև բառերի շարահյուսական հատկանիշը, իբրև միասնական հիմունք։ Ժամանակակից լեզվաբանության որոշ ներկայացուցիչներ գտնում են, որ գոյականը ամեն մի բառ է, որը կատարում է ենթակայի ու խնդրի դեր, ածականը ամեն մի բառ է, որ կատարում է որոշչի դեր, բայը ստորոգյալն է, ըստ որում ոչ միայն պարզ, այլև բաղադրյալ։ Մակբայը ստորոգյալի մի լրացում է՝ արտահայտված ամեն մի բառով ու բառաձևով՝ գոյականի թեք հոլովներով, ածականով և այլն (որ համապատասխանում է պարագաներին)։

Ինչպես որոշակիորեն երևում է նույնիսկ այս համառոտ բացատրությունից, այս ձևով ճանաչված «խոսքի մասերը» ըստ էության հանդիսանում են ոչ թե բառական, լեզվական վերացություններ, այլ նախադասության մեջ գործածված շարահյուսական հարաբերության տարբեր արտահայտություններ։ Ակնհայտ է, որ խոսքի մասերի անուններն այստեղ պարզապես պայմանական անվանումներ են շարահյուսական որոշակի գործածությունների։

Չի կարելի խոսքի մասերի դասակարգման հիմունք համարել նաև բառակազմական հատկանիշները։ Իբրև դասակարգման հիմունք ներկայացվող հատկանիշը (ասենք, բառակազմության տրվյալ միջոցը կամ միջոցների ամբողջությունը) պետք է հատուկ լինի տվյալ խոսքի մասի մեջ մտնող բոլոր բառերին. այն չպետք է ունենան այլ խոսքի մասերի պատկանող բառեր։ Քանի որ հայերենի բառերի ճնշող մեծամասնությանը այդպիսի հատկանիշ առաջադրվել չի կարող, ուստի և բառակազմական հատկանիշը չի կարելի համարել դասակարգման հիմունք։ Կարելի է, իհարկե, ցույց

տալ, որ բառակազմական որևէ մասնավոր հատկանիշ հատուկ է միայն մեկ խոսքի մասի։ Ասենք, -ություն-ով կազմված բառերը միայն գոյական են։ Սակայն այսպիսի առանձին երևույթները չեն փոխում հարցի էությունը։ Նախ, դրանք մասնակի իրողություններ են և ընդհանուր արժեք չունեն։ Երկրորդ, ինչի՞ց գիտենք, ինչի՞ հիման վրա ենք եզրակացնում, որ, օրինակ, ճայտարարություն բառը միայն գոյական է, իսկ կոմերիտական բառը՝ թե՛ գոյական, թե՛ ածական։ Անշուշտ, այդ բառերի ընդհանուր իմաստային հատկանիշը քննելով և նկատի ունենալով է, որ հանգում ենք այդ եզրակացությանը։

Ձևաբանական, շարահյուսական և բառակազմական հատկանիշները ոչ միայն առանձին-առանձին, այլև միասին վերցրած չի կարելի դնել խոսքի մասերի դասակարգման հիմքում։ Մենք տեսանք, որ այդ հատկանիշներից ամեն մեկով առանձին մոտենալու դեպքում հանգում ենք տարբեր արդյունքի, բոլոր հատկանիշները միաժամանակ հաշվի առնելը գործնականորեն անհնարին է, քանի որ ըստ տարբեր հատկանիշների կատարվող դասակարգման արդյունքները նշված պատճառով իրար պիտի հակասեն։

Խոսքի մասերը իրար ճակատվում են ընդհանուր, խոսքի մասային իմաստով։ Այս հատկանիշը բառերի խմբերի կատեգորիական իմաստն է, որ վերացարկվում է յուրաքանչյուր բառախմբի մեջ մտնող միավորների իմաստներից։ Բերենք մեկ օրինակ։ Բայի, որպես խոսքի մասի, ամենաընդհանուր ու բնորոշ հատկանիշը գործողության ընթացականության իմաստն է։ Դա հատուկ է բայի թե՛ դիմավոր ձևերին, որոնք նախադասության գլխավոր անդամի դերով են հանդես գալիս (գնում եմ, գնացի, կգնամ), թե՛ կապակցության մեջ երկրորդային դիրքով (ածականական կիրառությամբ) հանդես եկող դերբայներին (կարդացող աշակերտ, կանգնած երեխա, խմելու ջուր), թե՛ ձևաբանական ու շարահյուսական հատկանիշներով գոյականին հարող անորոշ դերբային (կարդալը, կարդալու, կարդալուց, կարդալով)։ Այնպես որ, որքան էլ տարբեր ձևաբանական ու շարահյուսական հատկանիշներ այս կամ այն չափով հատկանշական լինեն բայի համար, այնուամենայնիվ տվյալ խոսքի մասը պետք է բնորոշել այն հատկանիշով, որը հատուկ է բայի բոլոր արտահայտություններին ու ձևերին։ Դա էլ հենց նրա

ընդհանուր կատեգորիական իմաստն է՝ գործողության ընթացականության իմաստը։

Խոսքի մասային իմաստը բնութագրելիս ու գնահատելիս պետք է նկատի ունենալ, որ կարևոր է բառերի ոչ միայն ինչ ցույց տալը, այլև ինչպես ցույց տալը, ըստ որում վերջինս հաճախ առավել կարևորություն է ստանում նախորդի համեմատությամբ։ Կարելի է բերել բազմաթիվ փաստեր հաստատելու համար բառի խոսքի մասային իմաստի երկրորդ կողմը՝ ինչպես ցույց տալու հատկանիշը, որի շնորհիվ հաճախ միևնույն դենոտատը արտահայտվում է տարբեր խոսքի մասերով։ Այդ տեսակետից բնորոշ են բայի և բայանվան տարբերությունը (համմտ. ընթերցել և ընթերցանություն, ընկնել և անկում, գնել և գնում, կառուցել և կառուցում և *այլն), զգացում արտահայտող ձայնարկությունների, վերաբերմունք արտահայտող եղանակավորող բառերի ու համապատասխան հասկացություն արտահայտող գոյականների (*օհո՜, վա՜ և զարմանք, թու՜ն և զզվանք, ավաղ և ափսոսանք, երևի և հավանականություն, միայն և սահմանափակում և *այլն), դերանունների ու հարաբերակից խոսքի մասերի* (ես և մարդ· սա և գրիչ, այսպիսի և լավ, այսման և հարյուր) *տարբերությունները և այլն։*

Այսպիսով, խոսքի մասերի որոշման, դասակարգման համար ամենավստահելի չափանիշը կամ հիմունքը բառերի ընդհանուր իմաստն է։

§ *11.* Խոսքի մասերի էության ճանաչման օբյեկտիվ դժվարություններից առաջինը խոսքի մասերի ոչ որոշակի սահմանազատությունն է իրարից և շատ դեպքերում միևնույն բառը տարբեր խոսքի մասերի հատկանիշներ ունենալու և նույնիսկ տարբեր խոսքի մասերի պատկանելու փաստը։

Բառերի մեծ մասի խոսքի մասային պատկանելությունը որոշելը դժվար չէ։ Այդպիսի բառեր են, օրինակ, փայտ, կամուրջ, աքոռ, թուղթ, տանիք, գրել, խոսել, վազել, աշխատել, պայքարել, հոսել, երեք, հաս, հարյուր, հազար, և, ու, սակայն, որովհետև *և այլն։ Սակայն շատ բառերի խոսքի մասային պատկանելությունը որոշելն այնքան էլ հեշտ չէ։*

Ի՞նչն է պատճառը։ Լեզվի բառային կազմը բաղկացած է ամենաբազմազան, ամենաբազմապիսի բառերից։ Այդ բազմազան ու բազմաբնույթ բառերը խմբավորվում են շատ սահմանափակ

թվով առավել ընդհանուր խմբերի՝ խոսքի մասերի մեջ։ Դրա հետևանքով էլ թեև յուրաքանչյուր խոսքի մասի մեջ մտնող բառերին հատուկ է որևէ ընդհանուր իմաստ, բայց տվյալ խոսքի մասն իր հերթին ունի ներքին տարբեր իմաստային խմբեր, ենթախմբեր, որոնց հատուկ են առավել մասնավոր իմաստային երանգներ։ Բառերի այդ մասնավոր իմաստները և խոսքի մասային իմաստը բնականաբար կտրված չեն և անկախ չեն իրարից, այլ գտնվում են փոխադարձ կապի ու պայմանավորվածության մեջ։ Մասնավոր տարբեր իմաստները տարբեր անդրադարձում են ունենում խոսքի մասային իմաստի մեջ և վերջինիս վրա դնում են իրենց կնիքը։

Այդ փոխհարաբերությունն ու փոխազդեցությունը ցույց տանք մատիտ, ուսուցիչ, մութ բառերի վրա։ Այս երեք բառերից առաջինը հայտնի առարկայի անուն է, այդ իմաստն ունի իր բոլոր կիրառություններում և իմաստային այլ երանգներ չունի։ Մատիտ բառի մասնավոր իմաստի ու խոսքի մասային իմաստի միջև եղած լիակատար համապատասխանության պատճառով էլ այդ բառի խոսքի մասային պատկանելությունը շատ հեշտ է որոշվում, և նրա գոյական լինելը առաջին իսկ հայացքից ակնհայտ է դառնում։

Ուսուցիչ բառը ևս գոյական է, քանի որ անձ է անվանում։ Սակայն այս դեպքում իրային, առարկայական իմաստը նախորդ բառի առարկայական իմաստի պես անխառն չէ։ Եվ չնայած նրա մեջ եղած հատկանիշի որոշ իմաստին և բայի ու ածականի հետ ունեցած որոշ մոտիկությանը, այնուամենայնիվ նա չի հանդում բայի կամ ածականի, այլ միայն գոյական է (անկախ շարահյուսական կիրառությունից), քանի որ բոլոր դեպքերում ցույց է տալիս անձ, այսինքն միշտ ունի առարկայի իմաստ, որը իշխողն է իմաստային մյուս երանգների համեմատությամբ։

Մութ բառը թեև իրային իմաստ չունի, բայց կարող է մտածվել իբրև առարկա՝ «մթություն» իմաստով (որ համապատասխանում է ռուսերենի темнота-ին) և լինել գոյական։ Այդ բառի իմաստը կարող է նաև չառարկայացվել, դիտվել իբրև ոչ ինքնակա հատկանիշ՝ վերագրվելով որևէ առարկայի։ Այս դեպքում այն հանդես է գալիս իբրև ածական, իմաստով համապատասխանում է ռուսերենի темный բառին։ Օրինակ՝ մութ սենյակ, մութ գիշեր և այլն։

Այսպիսով, եթե իմաստով միատարր բառերի (ինչպես՝ մատիտ) խոսքի մասային պատկանելությունը որոշելը հեշտ է, ապա

ոչ միատարր իմաստով, իմաստային տարբեր երանգ ունեցող բառերի խոսքի մասային պատկանելությունը (ինչպես՝ ուսուցիչ, մութ) որոշելը հաճախ հեշտ չէ։ Ըստ որում, այդպիսի բառերը կամ պատկանում են միայն մեկ խոսքի մասի (ինչպես՝ ուսուցիչ), կամ տարբեր խոսքի մասերի (ինչպես՝ մութ)։

Այս վերջին երևույթը (միևնույն բառի՝ տարբեր խոսքի մասերի պատկանելը) հաճախ կապվում է խոսքի մասերի փոխանցման հետ։ Վերջինս տեղի է ունենում պատմական երկար ժամանակաշրջանում, շատ դանդաղ կերպով, բառի երկրորդական, ածանցյալ իմաստի աստիճանաբար ակտիվացման ու բառի համար բնորոշ դառնալու ճանապարհով։ Բառի՝ նախկինում երկրորդական եղած իմաստի այսպիսի զարգացումը հասցնում է բառի արդեն իսկ ունեցած մեկ բնորոշ իմաստի կողքին մի այլ բնորոշ իմաստի առկայության։ Ճիշտ ինչպես երկրորդական իմաստը միանգամից չի վերածվում գլխավորի, բնորոշի, այնպես էլ բառի ունեցած նախկին բնորոշ իմաստը միանգամից չի վերանում։ Հետևանքն այն է լինում, որ այս կամ այն բառը լեզվի զարգացման տվյալ շրջանում կարող է ունենալ երկու (սակավ դեպքերում նույնիսկ երեք) բնորոշ, ընդհանուր իմաստներ և այս վերջիններով պայմանավորված՝ համապատասխան քերականական հատկանիշներ։

Տարբեր խոսքի մասերի միջև տատանվող կամ իրենց բնորոշ հատկանիշներով տարբեր (հատկապես երկու) խոսքի մասերի պատկանող բառեր միշտ եղել են և կլինեն։ Ահա թե ինչու հաճախ դժվար է որոշակիորեն սահմանագծել խոսքի մասերը միմյանցից։ Այս օբյեկտիվ դժվարությունը կարելի է հաղթահարել լեզվի և խոսքի իրական փոխհարաբերությունը ճիշտ գնահատելու և այդ հնդրում ճիշտ կողմնորոշվելու միջոցով։

Վերը տեսանք, որ խոսքի մասերը խոսքի մեջ որոշելու և խոսքային կարգեր համարելու տեսակետին հակադրվել է դրանք լեզվական կարգեր համարելու տեսակետը։ Սա, անշուշտ, առաջընթաց քայլ էր խոսքի մասերի ճանաչման խնդրում։ Սակայն անցյալի ծայրահեղությունը իսպառ վերացնելու գնահատելի ձգտումը հասցրեց լեզվի և խոսքի ծայրահեղ հակադրության, որոշ դեպքերում՝ դրանց խզման։ Մենք նկատի ունենք խոսքի մասերը միայն խոսքից դուրս և խոսքից անկախ որոշելու տեսակետը։

Լեզվի ու խոսքի, լեզվականի ու խոսքայինի, տվյալ դեպքում

խոսքի մասերի և նրանց տարբեր կիրառությունների միջև կա վերացականի և կոնկրետի հակադրամիասնություն։ Բառերի՝ տարբեր խոսքի մասերի պատկանելու փաստերը (կուսակցական, տակ, էլ, մութ և այլն) ոչ միայն չեն հակասում բառերի ընդհանուր իմաստին, այլև հանդիսանում են այդ իմաստի, բայց արդեն երկփեղկված իմաստի արտահայտություններ և այդ երկփեղկվածությունը հաստատող փաստեր։ Այսպիսով, խոսքի մասերի որոշման հարցում քննարկված օբյեկտիվ բնույթի դժվարությունը հաղթահարելու համար անհրաժեշտ է ելնել լեզվի ու խոսքի, լեզվականի ու խոսքայինի իրական փոխհարաբերությունից, նիշա հաշվի առնել դրանց հակադրամիասնությունը և այդ առումով արժեքավորել բառերի այնպիսի կիրառություններ, որոնք հանդիսանում են տվյալ բառի խոսքի մասային արժեքի երկփեղկվածության արտահայտություններ։

§ 12. Խոսքի մասերի դասակարգման հարցում եղած մյուս օբյեկտիվ դժվարությունն այն է, որ ինչպես նշվել է վերը, տարբեր խոսքի մասեր միատեսակ հակադրության մեջ չեն գտնվում մյուսների նկատմամբ։

Տարբեր խոսքի մասեր տարբեր կարգի ու բնույթի հակադրության մեջ են մյուսների նկատմամբ։ Այսպես, շաղկապն ու կապը ուղղակիորեն հակադրվում են իրար, քանի որ երկուսն էլ ունեն հարաբերության իմաստ և տարբերվում են այդ հարաբերության տեսակով։ Ձայնարկությունն ու եղանակավորող բառերը խոսողի վերաբերմունքն արտահայտող խոսքի մասեր են և տարբերվում են միայն արտահայտած վերաբերմունքի տեսակով. ձայնարկությունն արտահայտում է զգացական, եղանակավորող բառերը՝ դատողական վերաբերմունք։ Այդպիսի հակադրությունը կարելի է կոչել անմիջական (կամ ուղղակի) հակադրություն։

Մինչդեռ շաղկապի և, ասենք, գոյականի կամ ձայնարկության ու բայի հակադրությունը այդպիսին չէ։ Այս հակադրության մեջ կարևոր չէ, թե շաղկապն ինչ մասնավոր հարաբերություն և ձայնարկությունը հատկապես ինչ վերաբերմունք է արտահայտում, այլ կարևորն այն է, որ առաջինը հարաբերություն է արտահայտում, երկրորդը՝ վերաբերմունք (և ոչ թե նյութական իմաստ)։ Այդ պատճառով գոյականի նկատմամբ ունեցած հակադրության մեջ շաղկապի և կապի խոսքի մասային տարբեր հատկանիշները կարևոր չեն, և շաղկապն այնքան է հակադրվում գոյականին, որքան

և կապը: Եվ, հակառակը, շաղկապի ու կապի նկատմամբ հակադրության մեջ կարևոր չէ գոյականի՝ առարկա ցույց տալու խոսքի մասային իմաստը, և կապն ու շաղկապն այնքան են հակադրված գոյականին, որքան և բային, ածականին, թվականին և այլն, որոնց խոսքի մասային տարբերություններն այդ հարաբերության մեջ կարևոր չեն, և կարևորը նրանց միջև եղած ընդհանրությունն է՝ նյութական իմաստը: Նույնը պետք է ասել ձայնարկության մասին: Բայի հետ ունեցած նրա հակադրության մեջ կարևոր չէ նրա մասնավոր վերաբերմունքի իմաստը, և բային ու նյութական իմաստ ունեցող մյուս խոսքի մասերին նա այնքան է հակադրված, որքան և եղանակավորող բառերը: Ուրեմն՝ ձայնարկության և եղանակավորող բառերի հակադրությունը անմիջական. իսկ բայի հետ նրա հակադրությունը անուղղակի է, ոչ անմիջական:

Այսպիսով, ոչ անմիջական (կամ անուղղակի) կոչում ենք խոսքի մասերի այնպիսի հակադրությունը, որի դեպքում մի խոսքի մասը մյուսից տարբերվում է ոչ թե իր խոսքի մասային մասնավոր հատկանիշով, այլ վերջինիս և սրան անմիջականորեն հակադրվող խոսքի մասի (կամ խոսքի մասերի) միջև եղած ընդհանուր հատկանիշով: Այստեղ մենք ըստ էության գործ ունենք վերացությունների հակադրությունների տարբեր մակարդակների հետ: **Ածականն** ու թվականն անմիջական հակադրության մեջ գտնվող խոսքի մասեր են, և երկուսը միասին, որպես առարկայի հարաբերականորեն կայուն հատկանիշ անվանող բառեր, անկախ իրենց ներքին տարբերություններից, հակադրվում են բային, որպես առարկայի փոփոխային հատկանիշ ցույց տվող խոսքի մասի:

Այսպիսով, խոսքի մասերը հակադրության տեսակետից միևնույն մակարդակի վրա չեն. գոյություն ունեն տարբեր աստիճանի, տարբեր մակարդակի հակադրություններ:

Խոսքի մասերի հակադրությունների մեջ կա ոչ միայն մակարդակների, այլև բնույթի տարբերություն:

§ 13. Լեզուն արտաքին աշխարհի առարկաների, հատկանիշների անվանումների, դրանք ցույց տվող բառերի գումար կամ շղթա չէ. այդ անվանումներից բացի լեզուն արտահայտում է նաև նրանց տարբեր հարաբերություններ, այլև խոսողի վերաբերմունքը: Այս երեք կողմերը իրենց արտացոլումն են գտել նաև խոսքի մասերի մեջ, և այդ պատճառով համապատասխանաբար գոյություն ունեն

երեք տարբեր բնույթի խոսքի մասեր։ Դրանք են՝ նյութական իմաստ ունեցող (գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ), հարաբերություններ արտահայտող (կապ, շաղկապ), խոսողի վերաբերմունք արտահայտող խոսքի մասեր (եղանակավորող բառեր, ձայնարկություններ)։ Վերջին երկու խմբի խոսքի մասերը հակադրվում են առաջինին՝ նյութական իմաստ ունեցողներին նրանով, որ չունեն նյութական իմաստ, այսինքն ո՛չ առարկա են ցույց տալիս, ո՛չ հատկանիշ։ Այդ երկու խմբերը (հարաբերություն արտահայտող և խոսողի վերաբերմունք արտահայտող) կարելի է միավորել մեկ մեծ խմբի մեջ որպես սպասարկու խոսքի մասեր։ Ընդունված է սպասարկու համարել հատկապես կապն ու շաղկապը, քանի որ սրանք քերականական-սպասարկու դեր են կատարում խոսքի մեջ։ Բայց սպասարկու բառը, լայն իմաստով վերցնելով, կարելի է գործածել նաև եղանակավորող բառերի ու ձայնարկությունների վերաբերմամբ, նկատի ունենալով, որ սրանք էլ նյութական իմաստ չունեն և նախադասության մեջ վերաբերմունքային-սպասարկու դեր են կատարում։

Խոսքի մասերի բնույթի տարբերությունները բնականաբար ստեղծում են նրանց հակադրությունների տարբերություններ։ Այդ առումով, օրինակ, ածականի ու թվականի, որպես նյութական իմաստ ունեցող խոսքի մասերի, հակադրությունը իր բնույթով այլ է հարաբերություններ արտահայտող խոսքի մասերի՝ կապի ու շաղկապի հակադրությունից։ Բնույթի տեսակետից յուրահատուկ է նաև դերանունների և նրանց հարաբերակից խոսքի մասերի (գոյականի, ածականի, թվականի, մակբայի) հակադրությունը։ Եթե այս վերջին խոսքի մասերի հակադրության մեջ ավելի կարևոր է այն, թե նրանցից յուրաքանչյուրն ի՛նչ է ցույց տալիս (թվականը թիվ ու քանակ է ցույց տալիս, բայը՝ գործողություն և այլն), ապա դերանունը հարաբերակից խոսքի մասերին հակադրվում է ոչ թե նրանով, թե ինչ է ցույց տալիս (քանի որ ցույց է տալիս այն, ինչ որ նրանք՝ առարկա, առարկայի հատկանիշ, գործողության հատկանիշ), այլ նրանով, թե ինչպես է ցույց տալիս։

Բնական է, որ տվյալ բնույթի խոսքի մասերի բաժանումն ու հակադրությունները կարող են տարբերվել այլ բնույթի խոսքի մասերի բաժանումից ու հակադրություններից։

Սակայն վերոհիշյալից չպետք է կարծել, թե ինչպես ցույց

տալը հատուկ է միայն դերանուններին։ Այս կապակցությամբ նշենք, որ խոսքի մասերի և առարկաների, երևույթների միջև չկա բացարձակ ուղղագիծ համապատասխանություն։ Ճիշտ է, ասենք, իրար համապատասխանում են **մր** գոյականը և **մր** առարկան, ջարդել բայը և ջարդել գործողությունը, կարմիր ածականը և կարմիր գույնը և այլն, բայց մյուս կողմից մենք ունենք բառեր, որոնք թեև գոյական են, բայց առարկա (իր) չեն ցույց տալիս, այլ գործողություն, հատկանիշ, ինչպես՝ ջարդ, կարմրություն։ Հաճախ միևնույն իրողությունը կարելի է լինում արտահայտել տարբեր խոսքի մասերով։ Ասենք, թռչելու գործողության մասին կարելի է ասել՝ Օդանավը թռչում է։ Այդ նույն գործողությունը կարելի է արտահայտել գոյականով, դերանունով՝ Օդանավի թռիչքը հաջող ավարտվեց, այն տևեց տասը ժամ։ Միևնույն հատկանիշը կարելի է արտահայտել ածականով, գոյականով և դերանունով, ինչպես՝ Անահիտը սպիտակ մեխակ է սիրում։ Նրան դուր է գալիս մեխակի սպիտակությունը։ Անահիտը այդպիսի մեխակ է սիրում և ոչ թե կարմիր։

Այսպիսի փաստերը ցույց են տալիս, որ, ինչպես ասվել է վերը, խոսքի մասերը դասակարգելիս և առանձին խոսքի մասերը գնահատելիս չի կարելի կողմնորոշվել նրանց՝ ինչ ցույց տալով միայն, այլև անհրաժեշտ է հաշվի առնել, թե նրանք ինչը ինչպես են ցույց տալիս։ Ըստ որում, այս ինչպեսը՝ առարկան, հատկանիշը, հարաբերությունը և այլն ցույց տալու եղանակը, կերպը տարբեր դեպքերում իրեն տարբեր չափերով է զգալ տալիս և տարբեր բնույթ է կրում։

Այսպիսով, խոսքի մասերի միջև եղած հակադրությունները տարբեր մակարդակի ու տարբեր բնույթի են։ Այս հանգամանքը զգալիորեն դժվարացնում է խոսքի մասերի դիտական դասակարգումը, և վերջինիս մեջ երբեմն որոշակիորեն չեն երևում խոսքի մասերի հակադրությունը և բացառումը միմյանց։ Խոսքի մասերի երբեմն իրար չհակադրվելն ու չբացառելը դիտվել է որպես նրանց ավանդական դասակարգման հիմնական թերություններից մեկը, եթե ոչ ամենահիմնականը, և եղել է ու մնում է այդ դասակարգումը խիստ քննադատողների ու մերժողների ամենամեծ կռվանը։

Խոսքի մասերի տարաստիճան և տարաբնույթ հակադրությունները բացահայտելու համար անհրաժեշտ է կատարել նրանց դա-

սակարգումը ոչ թե մեկ մակարդակով, այլ աստիճանական կերպով՝ ձգտելով վեր հանել բուն լեզվի մեջ եղած խոսքի մասային բոլոր հակադրությունները, վերջիններիս տարբեր մակարդակները:

§ 14. Լեզվի բառային կազմը ըստ բառերի իմաստի ընդհանուր բնույթի (որով և պայմանավորվում են տարբեր դերեր) բաժանվում են երեք խմբի՝ ա) նյութական իմաստ ունեցող բառեր, բ) քերականական հարաբերություն արտահայտող բառեր, գ) վերաբերմունքային իմաստ արտահայտող բառեր: Նյութական, քերականական հարաբերություն և վերաբերմունքային իմաստ արտահայտող բառերը միմյանցից տարբերվում են նաև նախադասության մեջ ունեցած իրենց դերով, որը պայմանավորված է նրանց իմաստի բնույթով: Նյութական խոսքի մասերը նախադասության անդամի դեր են կատարում, քերականական իմաստ ունեցող խոսքի մասերը միայն հարաբերություններ են արտահայտում և նախադասության մեջ միայն համապատասխան քերականական դեր են կատարում, երրորդ խմբի բառերը, որպես կանոն, չունեն ոչ նախադասության անդամի և ոչ քերականական հարաբերության դեր, այլ արտահայտում են խոսողի տարբեր տեսակի վերաբերմունքը, խոսքին որոշ երանգ են տալիս:

Վերաբերմունքային իմաստ ունեցող բառերը ըստ իմաստի բաժանվում են երկու խմբի կամ երկու խոսքի մասի՝ ա) եղանակավորող բառեր և բ) ձայնարկություններ: Հարաբերություն արտահայտող բառերը ըստ իրենց քերականական դերի բաժանվում են երկու խոսքի մասի՝ ա) կապ և բ) շաղկապ:

Ավելի բարդ է նյութական իմաստ ունեցող խոսքի մասերի աստիճանական դասակարգումը, քանի որ այստեղ հակադրությունների տարբեր աստիճանները խաչաձևվում են բնույթի տարբերության հետ: Այդ խոսքի մասերը ըստ առարկան, հատկանիշը, գործողությունը ցույց տալու եղանակի՝ բաժանվում են երկու մասի՝ ա) իրողությունները անվանումով արտահայտող բառեր (խոսքի մասեր) և բ) իրողությունները ոչ անվանումով, այլ այս կամ այն հարաբերությամբ ցույց տվող բառեր. առաջին խմբին հատուկ է տարբերակված իմաստ, երկրորդին՝ չտարբերակված իմաստ: Երկրորդ տեսակի մեջ են մտնում միայն դերանունները, որոնք առարկա, հատկանիշ չեն անվանում, այլ այդպիսիք ցույց են տալիս այս կամ այն հարաբերությամբ՝ դիմային (ես, դու, ինքը

և այլն), տարածական (այս, այդ, այն և այլն) և այլն։ Առաջին խմբի մեջ են մտնում նյութական իմաստ ունեցող մյուս բոլոր խոսքի մասերը (գոյական, ածական, թվական, բայ, մակբայ)։

Ապա իրողություններն անվանումով արտահայտող բառերը բաժանվում են երկու խմբի՝ ա) ինքնակա կամ որպես այդպիսին դիտվող իրողություն (առարկա) անվանող և բ) հատկանշային իմաստ արտահայտող բառեր։ Առաջին խմբի մեջ է մտնում գոյականը, երկրորդի մեջ՝ բայը, ածականը, թվականը, մակբայը։ Գոյականի՝ ինքնակա իմաստ արտահայտելն ինքնին հասկանալի է. առարկան գոյություն ունի ինքնին, և լեզվի մեջ նրա անվան գործածությանը հատուկ է ոչ կախյալ բնույթը։

Մյուս խմբի խոսքի մասերի՝ բայի, ածականի, թվականի, մակբայի՝ հատկանշային խոսքի մասեր լինելը ապացուցման կարիք չի զգում։ Ըստ որում, դրանցից բայը, ածականն ու թվականը առարկայի տարբեր բնույթի հատկանիշ են ցույց տալիս և խոսքի մեջ վերաբերում են ինքնակա իմաստ ունեցող խոսքի մասին՝ գոյականին, իսկ մակբայը գործողության կամ հատկանիշի հատկանիշ է ցույց տալիս։

Ըստ այդմ, հատկանշային իմաստ ունեցողները բաժանվում են առարկայի հատկանիշ արտահայտող խոսքի մասերի (բայ, ածական, թվական) և գործողության կամ հատկանիշի հատկանիշ արտահայտող բառերի (մակբայ)։

Առարկայի հատկանիշ արտահայտող բառերը բաժանվում են երկու խմբի՝ առարկայի փոփոխային հատկանիշ՝ գործողության ընթացականություն արտահայտող բառեր (բայ) և առարկայի հարաբերականորեն կայուն հատկանիշ անվանող բառեր։ Վերջիններս էլ բաժանվում են ածականի ու թվականի։ Խոսքի մասերի աստիճանական դասակարգումը ներկայացնենք սխեմայով։

Յուրաքանչյուր հորիզոնական շարքի խոսքի մասերը (տե՛ս սխեման), որոնք ուղղակիորեն ճյուղավորվում են խոսքի մասերի նախորդ խմբից, միմյանց նկատմամբ անմիջական հակադրության մեջ են գտնվում նույն մակարդակի վրա։

Անմիջական հակադրությունը, ըստ հակադրվող եզրերի խոսքի մասային կազմի, հետևյալ ձևով է արտահայտվում՝

ա) մեկ խոսքի մասն անմիջականորեն հակադրվում է մեկ այլ խոսքի մասի.

բ) մեկ խոսքի մասն անմիջականորեն հակադրվում է խոսքի մասերի մի խմբի.

գ) խոսքի մասերի մեկ խումբը հակադրվում է մյուսին։

Առանձին-առանձին միմյանց անմիջականորեն հակադրվում են հարաբերություն արտահայտող խոսքի մասերը (կապ ու շաղկապ), վերաբերմունքային իմաստ արտահայտող խոսքի մասերը (եղանակավորող բառեր ու ձայնարկություն) և նյութական իմաստ ունեցող խոսքի մասերից՝ ածականն ու թվականը։ Դերանունը, գոյականը, բայը և մակբայը առանձին-առանձին հակադրվում են խոսքի մասերի մի խմբի։ Մի այլ մակարդակով հատկանշային իմաստ ունեցող բառերը (խոսքի մասերը) հակադրվում են ինքնակա իմաստ արտահայտող բառերին (խոսքի մասերին)։

Այժմ՝ միջնորդավորված հակադրությունների և նրանց միջնորդող օղակների մասին։ Այն խոսքի մասերը, որոնք սխեմայում ուղղակիորեն չեն միանում միևնույն խմբի խոսքի մասերին (միևնույն բառախմբին) կամ, որ միևնույնն է, անմիջականորեն չեն ճյուղավորվում նրանցից, իրար հետ կապված են միջնորդավորված կապով կամ ունեն միջնորդավորված հակադրություն։ Իբրև այդպիսի հակադրությունների միջնորդ օղակներ ծառայում են սխեմայում նշված բառախմբերը, ավելի ճիշտ, նշված բառախմբերի ընդհանուր հատկանիշները։ Այդպիսի կապող օղակներ կան բոլոր հորիզոնական շարքերում, բնականաբար բացի առաջին և վերջին շարքերից, որոնցից մեկը ամենածայրի հանգման կետն է, մյուսը՝ բաժանումների ելակետը։

Ամեն մի բնույթի (նյութական, հարաբերության, վերաբերմունքային) յուրաքանչյուր խոսքի մասը այլ բնույթի տվյալ խոսքի մասի հետ է կապվում դարձյալ միջնորդ օղակներով. ասենք, ածականն ու կապը, բայն ու եղանակավորող բառերը, ձայնարկությունն ու շաղկապը. այս և նման զույգ խոսքի մասերի միջև չի կարելի որոնել անմիջական հակադրություն։ Յուրաքանչյուր միջնորդավորված հակադրություն կարող է ունենալ մեկ միջնորդ օղակ կամ մեկից ավելի միջնորդ օղակներ։

Խոսքի մասերի աստիճանական դասակարգումը հանգեցնում է հետևյալին.

Ա. Այն վեր է հանում խոսքի մասերի հակադրությունների ու ընդհանրությունների բնույթը և որոշակիորեն պարզում, որ դրանք

ոչ թե մեկ մակարդակի ու բնույթի են, այլ տարաստիճան ու տարաբնույթ։ Այստեղից էլ բխում է, որ՝

Բ. Խոսքի մասերի հակադրությունը երկու կարգի է՝ անմիջական (կամ ուղղակի) և ոչ անմիջական (կամ անուղղակի)։ Այդ նշանակում է՝

Գ. Խոսքի մասերը դասակարգելիս և դասակարգումը գիտական պահանջների տեսակետից քննելիս չպետք է բոլոր դեպքերում, ամեն մի երկու խոսքի մասի միջև կամ բոլոր խոսքի մասերի միջև որոնել միատեսակ անմիջական հակադրություն և բացառում։ Անմիջական հակադրություն պետք է որոնել նույն մակարդակի նույն բնույթի խոսքի մասերի միջև, մյուս դեպքերում հակադրությունը միջնորդավորված է, որի յուրահատկությունները պետք է հաշվի առնել։

Այսպիսով, աստիճանական դասակարգումն օգնում է թե՛ պահպանելու գիտական դասակարգման պահանջները և թե՛ հաշվի առնելու դասակարգման ենթակա խոսքի մասերի յուրահատկությունները։

Ինչպես երևում է, բառերի որոշ հատկանիշներ չեն դրվում դասակարգման հիմքում, քանի որ խոսքի մասերի ճանաչման համար բնդհանուր սահմանազատիչ արժեք չունեն, մասամբ են հատուկ տվյալ խոսքի մասին, այս կամ այն չափով հատուկ են նաև այլ խոսքի մասի կամ խոսքի մասերի։ Այս հատկանիշներն ըստ կարևորության այս կամ այն չափով, համապատասխան մանավորումներով ու վերապահումներով կարող են հաշվի առնվել առանձին խոսքի մասերի ամբողջական բնութագրման համար (ոչ դասակարգման)։

Նշենք, որ չի կարելի դասակարգմանը՝ դասակարգվող առարկայի ամբողջական բնութագրման պարտադիր պահանջ ներկայացնել. դասակարգումով սկսվում է ուսումնասիրության առարկայի ճանաչումը և ճիշտ դասակարգումով դրվում է ճիշտ ճանաչման հիմքը։

ԳՈՅԱԿԱՆ

ԳՈՅԱԿԱՆԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ

§ 15. Գոյականը մյուս բոլոր, այդ թվում և իրեն հարաբերակից խոսքի մասերից տարբերվում ու որպես խոսքի մաս բնորոշվում է յուրահատուկ իմաստային հատկանիշով։ Իսկ բառի խոսքի մասային իմաստն ու արժեքը քննելիս, ինչպես ասվել է նախորդ գլխում, պետք է հաշվի առնել ոչ միայն այն, թե ինչ է ցույց տալիս, այլև թե ինչպես է ցույց տալիս կամ արտահայտում այն։ Դա հավասարապես վերաբերում է նաև գոյականին։

Գոյականին ամենից առաջ հատուկ է նյութական մարմիններ ցույց տալը։ Այդպիսի գոյականներ են՝ **քար, փայտ, հող, ջուր, մարդ, ճարտարապետ, երեխա, առյուծ, հավ, մրջյուն, ծաղիկ** *և այլն, որոնք կոչվում են թանձրացյալական։ Սրանց են հարում* **կայծակ, քամի, հոտ, համ** *և նման բառերը, որոնք նույնպես նյութական են և ունեն յուրահատուկ առարկայական իմաստ։*

Սակայն կան մեծ քանակությամբ գոյականներ, որոնք նյութական մարմին չեն ցույց տալիս։ Այդպիսիք են՝ **հիացմունք, ուն, որակ, բանակ, հոտավետություն, օրինականություն, չկամություն** *և այլն։*

Վերջապես հիշենք բայանունները, որոնց մեջ ակնհայտորեն առկա է գործողության իմաստ, բայց նրանք, որպես խոսքի մաս, գոյական են. ինչպես՝ **աճկում, բարեկարգում, դիտում, հաղորդում, ճարձակում, ընթերցանություն, շարժում, խոստում, տապալում, օգնություն, ընձարկում** *և այլն։*

Ինչպես երևում է, բացի բառից բուն իմաստով առարկա ցույց տվող գոյականներից, կան այդ խոսքի մասի մեջ մտնող մեծ քանակությամբ այնպիսի բառեր, որոնք ցույց են տալիս հատկանիշներ (գործողություն, որակ, չափ)։ Սակայն պետք է նկատի

ունենալ, որ հատկանիշների գոյականական արտահայտությունը էապես տարբեր է նրանց այլ խոսքի մասային (բայական, ածականական, թվականական) արտահայտություններից ու բնույթից։

Եթե իրականում հատկանիշներն անբաժան են առարկայից, բայց լեզուն այնուամենայնիվ նրանք արտահայտելու համար ըստեղծել է առանձին բառեր (ածականներ, թվականներ, բայեր), որոնցով հատկանիշն անվանվում և խոսքի մեջ սովորաբար վերագրվում է առարկային (խելոք երեխա, սպիտակ վարդ, կարմիր կակաչ, երգող աղչիկ, աղչիկը երգում է), ապա հատկանիշը գոյականով արտահայտելու դեպքում այն դիտվում, մտովի վերցվում է իբրև ինքնակա գոյություն ունեցող, այն չի վերագրվում առարկային, այլ կերպ՝ իրական հատկանիշը այդ դեպքում լեզվականորեն մտածվում, դիտվում է որպես առարկա։

Ինչ խոսք, որ, ասենք, մեծ հատկանիշը առարկաներից անկախ գոյություն չունի. նա առարկայի չափ է ցույց տալիս, ինչպես՝ մեծ սար, մեծ քաղաք։ Սակայն մարդկային մտածողությունը կարիք է զգում, որ հատկանիշը դիտվի նաև որպես ինքնակա, այն դարձվի մտքի ինքնուրույն առարկա՝ մտովի վերանալով այն կրող առարկայից. դրա համար էլ ստեղծվել է մեծություն գոյականը։ Օրինակ՝ Սարի մեծությունը նկատելի էր հեռվից։ Նորաստեղծ քաղաքի մեծությունը զարմացրել էր նորեկներին։

Այս երևույթը, ըստ որի իրականությունն ավելի խոր ու բազմակողմանի ճանաչելու նպատակով կատարվում են տարբեր կարգի վերացարկումներ ու բնականաբար ստեղծվում համապատասխան լեզվական միջոցներ կամ օգտագործվում եղած հնարավորությունները, մարդու ճանաչողական գործունեության հետաքրքրական արտահայտություններից մեկն է լեզվի մեջ։ Այս կարգի բառերի խոսքի մասային արժեքի ձևավորման ու գնահատման համար կարևոր է բառի ոչ թե ինչ ցույց տալը, այլ ինչպես ցույց տալը։

§ 16. Քննարկվող երևույթի շնորհիվ, երբ հատկանիշի իմաստը ձևավորվում է որպես գոյական, բառը ձեռք է բերում գոյականին հատուկ քերականական հատկանիշներ։ Այս տեսակետից նախ պետք է նշել գոյականի (այդ թվում նաև նշված կարգի բառերի) առաջնային դիրքը անվանական բառակապակցություններում։ Եթե գոյականը անվանական կապակցություններում առաջնային բառ է (լրացյալ), և հատկանիշ ցույց տվող բառերը, որպես լրացում, դրվում են նրա վրա (մեծ քաղաք, սպիտակ վարդ), ապա երբ հատ-

կանիշի իմաստով գոյական է ձևավորվում, այն ևս, իբրև գոյական, բառակապակցության մեջ հանդես է գալիս որպես առաջնային բառ և ինքն է ընդունում լրացում (զարմանալի մեծություն, հաճելի կարմրություն)։

Դրա հետ միասին այսպիսի բառերը ձեռք են բերում գոյականի նաև մյուս քերականական հատկանիշները՝ թվի, հոլովի և այլն։

Այսպիսով, եթե գոյական-հասկացությունները դենոտատային տեսակետից (ավելի ճիշտ՝ դենոտատային մակարդակում) էապես տարբեր են (կարող են ցույց տալ իր, գործողություն, որակ և այլն), ապա սոսկ լեզվական տեսակետից միասնական են. ոչ-առարկան գոյականի մեջ դիտվում է որպես առարկա։ Եվ քանի որ լեզվական մակարդակում այդ դենոտատային տարբերությունները վերանում են, ուստի սեղմության, ամփոփման միասնականության համար ասում ենք, որ գոյականը առարկա է ցույց տալիս, որի տակ հասկացվում են ոչ միայն բուն առարկաները, այլև որպես առարկա մտածված հատկանիշները, երևույթները։

§ 17. Սակայն այսքանը քիչ է գոյականի ճանաչման համար։ Բանն այն է, որ առարկաները, ինչպես և իբրև առարկա մտածված երևույթները, հատկանիշները կարող են ցույց տրվել ոչ միայն գոյականով, այլև դերանունով, ինչպես՝ ես, դու, նա, ինքը, սա, դա, ինչ, ոմն և այլն։

Բոլոր առարկաները, առանց բացառության, կարող են ցույց տրվել այդ երկու խոսքի մասերից թե՛ մեկով և թե՛ մյուսով։ Ուրեմն գոյականների և առարկա ցույց տվող դերանունների տարբերությունը ինչ ցույց տալով չի կարելի որոշել. այստեղ դարձյալ հանդես է գալիս ցույց տալու, արտահայտելու եղանակը, որ հավասարապես դառնում է կարևոր թե՛ գոյականի և թե՛ դերանվան համար։

Գոյականը առարկան ցույց է տալիս անվանելով, իսկ դերանունը չի անվանում, նա տարբերակված իմաստ չունի. դերանունները առարկա են ցույց տալիս տարբեր հարաբերություններով (դիմային՝ ես, դու, ինքը, տարածական՝ սա, դա, նա և այլն)։

Այսպիսով՝ գոյական կոչվում են այն բառերը, որոնք անվանում են առարկա կամ որպես այդպիսին մտածված երևույթ։ *Կարելի է նաև որպես առարկա մտածված երևույթը ևս քերականորեն համարել առարկա և գոյականը բնորոշել որպես առարկա անվանող խոսքի մաս։*

ԳՈՅԱԿԱՆԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ-ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԽՄԲԵՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 18. Գոյականն ունի իմաստային խմբեր, որոնք բնորոշվում են նաև քերականական հատկանիշով։ Այստեղ դրանցից քննվում են նրանք, որոնք գոյականի համար ընդհանուր արժեք ունեն և կարևոր են նրա, որպես խոսքի մասի, ընդհանուր գնահատության տեսակետից։ Դրանք են գոյականների՝ տարբեր հիմունքներով որոշվող հետևյալ խմբերը՝ հատուկ և հատուկ, *թանձրացական և* վերացական, *անձ և ոչ-անձ (իր)։*

§ 19. Քննարկվող հարցի տեսակետից ուշադրության արժանի են նաև այնպիսի խմբեր, ինչպիսիք են՝ ժամանակ ցույց տվող գոյականներ, ազգակցություն և մարդկային այլ հարաբերություններ արտահայտող գոյականներ (հայր, մայր, քույր, տեր, կին և այլն), հավաքական իմաստ ունեցող գոյականներ և այլն։ Գոյականների իմաստային այս և նման խմբերն ունեն նաև քերականական որոշակի առանձնահատկություններ։ Այսպես, առաջին խմբի գոյականների՝ ժամանակի անունների մի զգալի մասի համար բնորոշ է վա հոլովման պատկանելը, երկրորդ խմբի գոյականների մի մասին հատուկ է ո, մյուս մասին՝ ոջ հոլովիչով հոլովվելը և այլն։ Հավաքական գոյականներին հատուկ է եզակի ձևով հոգնակիին մոտ իմաստ արտահայտելն ու հոգնակի ձևով չգործածվելը և այլն։

Սակայն այս վերջին երևույթները քննվում են համապատասխան քերականական կարգերի (հոլովման ու թվի) կապակցությամբ հետևյալ պատճառով։ Նախ, դրանք լեզվի կառուցվածքի մեջ ավելի շատ կարևոր են իրենց քերականական կողմով և ոչ թե հատկապես բառիմաստային, և, երկրորդ, դրանք բառերի խիստ մասնավոր խմբեր են, այսինքն շատ փոքր կշիռ ունեն գոյական խոսքի մասին պատկանող բազմահազար բառերի մեջ։

Վերջապես այստեղ պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ բառերի այդ խմբերը և համապատասխան քերականական հատկանիշը ոչ միշտ են ծավալով իրար ծածկում։ Ասենք, ժամանակի իմաստ ունեցող ոչ բոլոր բառերն են ենթարկվում վա *հոլովման։ Իսկ սա նշանակում է, որ ձևաբանական այս հատկանիշի տեսակետից ժամանակի իմաստ ունեցող և վա հոլովումից*

դուրս մնացող բառերը քերականական հետաքրքրություն չեն ներկայացնում։ Ուրեմն բառական այդ իմաստը (ժամանակային) ձևաբանական տեսակետից հետաքրքրություն է ներկայացնում միայն այն դեպքում, երբ բառը պատկանում է վա հոլովման։ Իսկ սա էլ նշանակում է, որ այս և նման դեպքերում ձևաբանական տեսակետից կարևորը դառնում է քերականական հատկանիշը և ոչ թե տվյալ իմաստն ունեցող բառերի խումբը։ Ահա թե ինչու այդ կարգի երևույթները քննում ենք ոչ թե ըստ բառախմբերի, այլ ըստ համապատասխան քերականական կարգերի ու քերականական հատկանիշների։

ՀԱՍԱՐԱԿ ԵՎ ՀԱՏՈՒԿ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ

§ 20. Բոլոր գոյականների անվանողական դերը միատեսակ չէ։ Գոյականների ճնշող մեծամասնությունը անվանում է առարկաների տեսակը, և այդ տեսակի անունը խոսքի մեջ կարող է մասնավորվել այս կամ այն առարկայի շուրջը։ Քար բառը նշանակում է և այդ առարկան ընդհանրապես, և այս կամ այն քարը։ Մատ բառը առարկայի մեկ տեսակի ընդհանուր անուն է, որի մասնավորումով կարելի է ցույց տալ ամեն մի ծառ։ Այսպիսի բառերը, որոնք անվանում են առարկայի տեսակը ընդհանուր կերպով և կարող են մասնավորվել տվյալ տեսակի բոլոր առարկաների վրա, կոչվում են հասարակ գոյական։ Հասարակ գոյականները մարդկային մտածողության վերացարկելու արդյունք են, դրանք հասկացություններ են և ճանաչողական մեծ արժեք ունեն։ Հասարակ գոյականներ են՝ մարդ, ծաղիկ, գիրք, տեառ, խոտ, գյուղ, մատիտ, գլուխ, դաշտ, հայր, հյուր, հայրենասիրություն, վաշտ, գնդակ և այլն։

§ 21. Կան գոյականներ, որոնցով անվանվում է ոչ թե առարկայի տեսակը, այլ տվյալ մասնավոր առարկան։ Այդպիսի անուններ տրվում են մարդկանց, աշխարհագրական վայրերին (ծովերին, գետերին, լեռներին, դաշտավայրերին և այլն), պետություններին ու երկրներին, հիմնարկներին, ձեռնարկություններին, ստեղծագործություններին, կենդանիներին և այլն։ Միևնույն տեսակին պատկանող ամեն մի առանձին առարկային տրվող անուններ կոչվում են հատուկ անուն։

§ 22. Հատուկ անունները տրվում են առանձին առարկաները անվանելու պահանջով, ուստի դրանք տարբեր տեսակի առարկաների՝ տարբեր չափով և յուրահատկությամբ են տրվում։ Այսպես, աշխարհի երեք ու կես միլիարդ մարդուց ամեն մեկն ունի իր հատուկ անունը, և դա պայմանավորված է հասարակական կյանքի թելադրանքով։ Բայց աշխարհի ամեն մի բույս չունի իր անունը, որովհետև այդպիսի անհրաժեշտություն չկա. անուններ ունեն բույսերի տեսակներն ու ենթատեսակները (առանձին անվանումներ թերևս չեն բացառվում փորձնական հողամասերում աճեցվող առանձին բույսերի վերաբերմամբ)։ Կենդանիներին հաճախ տրվում են անուններ, քանի որ պետք է լինում նրանց դիմելու՝ մղելու այս կամ այն գործողությանը և այլն։

Այնուհետև գրքի ամեն մեկ օրինակը իր հատուկ անունը չունի։ Դ. Դեմիրճյանի «Վարդանանք»-ի տարբեր հրատարակությունների ավելի քան 100.000 օրինակները «Վարդանանք» են կոչվում։ Ծվյալ դեպքում հատուկ անունը տրվում է ոչ թե ամեն մի գրքին, այլ հեղինակի տվյալ մեկ ստեղծագործությանը առանձին վերցրած՝ նույն հեղինակի մյուս և այլ հեղինակների ստեղծագործություններից տարբերելու համար։ Ուրեմն՝ այս դեպքում, որպես կանոն, ամեն մի առանձին գիրք, գրքի ամեն մի օրինակ չի անվանվում, որովհետև դրա անհրաժեշտությունը չկա։ Այս խմբի հատուկ անուններին են հարում առարկաների տիպերի, մակնիշների անունները, որոնք ոչ թե մեկ առանձին առարկա են անվանում, այլ տիպը, մակնիշը։ Այդպիսիք են՝ «Զայկա», «Պոբեդա», «Մոսկվիչ» (ավտոմոբիլի անուններ), «Սկյուռիկ», «Ոսկյա բանալի», «Կարմիր» (կոնֆետների անուններ), «Ռեկորդ», «Ռուբին», «Էլեկտրոն» (հեռուստացույցի անուններ), «Ավրորա», «Էրեբունի», «Հոբելյանական» (ծխախոտի անուններ) և այլն։

§ 23. Հատուկ անունները լինում են՝

Անձնանուններ՝ Արամ, Աշոտ, Անահիտ, Սմբատ, Գոհար, Հասմիկ *և այլն.*

Աշխարհագրական անուններ՝ Եվրոպա, Ասիա, Կովկաս, Մասիս, Արագած, Սևանա լիճ, Վոլգա, Արաքս *և այլն.*

Պետությունների, երկրների, վարչական այլ միավորների անուններ՝ ՍՍՀՄ, Հայաստան, Ֆրանսիա, Իտալիա, ԱՄՆ, Ուրարտու, Արտաշատի շրջան *և այլն.*

Ստեղծագործությունների, պարբերականների, հրատարակությունների անուններ՝ «Անուշ», «Մեծապատիվ մուրացկաններ», «Պատերազմ և խաղաղություն», «Հայոց աննձանումների բառարան», «Հայ ժողովրդական հեքիաթներ», «Ավանգարդ», «Պատմաբանասիրական հանդես», «Լրաբեր» *և այլն.*

Հիմնարկությունների, ձեռնարկությունների, հաստատությունների և այլ անուններ՝ Երևանի պետական համալսարան, Միավորված ազգերի կազմակերպություն, Կիրովականի քիմիական գործարան, Հայկական թատերական ընկերություն, «Կռունկ» սրճարան *և այլն:*

§ 24. Հասարակ և հատուկ անունների միջև եղած իմաստային յուրահատկությունը ստեղծում է նաև որոշ քերականական տարբերություններ: Այսպես, ի տարբերություն հասարակ անունների, հատուկ անունները սովորաբար չեն ունենում հոգնակի թիվ: Համմտ. գիրք–գրքեր, մարդ–մարդիկ, բաղաք–բաղաքներ, *բայց՝* «Քաոս», «Մեռելաձարցուկ», Անահիտ, Երևան, Մոսկվա *(սրանք հոգնակի թիվ չունեն):*

Պետք է նկատի ունենալ, սակայն, որ կան նաև միայն հոգնակի ձևով գործածվող անուններ, ինչպես՝ «Կայծեր», «Վարդանանք», «Յեցեր», Նիդերլանդներ, Ալպեր, Կարպատներ, Ամերիկայի Միացյալ Նահանգներ *և այլն: Այսպիսի հատուկ անունները, սակայն, անվանողական տեսակետից եզակիի արժեք ունեն. հոգնակի ձևով գործածված այդ բառերը դիտվում են որպես մեկ երկի, մեկ պետության, մեկ վայրի անուն:*

Դա իր համապատասխան արտահայտությունն է գտնում նաև նրանց քերականական համաձայնության գործում:

Համմտ. 1. Պռոշյանի «Յեցերը» ուղղված է գյուղական վաշխառուների դեմ:

2. Գյուղական յեցերը հարստահարում էին *աշխատավոր գյուղացիությանը:*

1. «Կայծերը» *արագ տարածվեց ընթերցողների շրջանում:*

2. Կայծերը *արագ տարածվեցին շորս կողմը:*

Որոշ անձնանուններ ունեն հավաքականության մտեցող յուրահատուկ հոգնակի՝ Վարդանանք, Հակոբենք, Արամենք *և այլն, որոնք չեն նշանակում շատ Վարդան, շատ Հակոբ, շատ Արամ, այլ Վարդանը, Հակոբը, Արամը իրենց յուրայինների (գեր-*

դաստանի, ընտանիքի անդամների, համախոհների) հետ։ Այսպիսի հոգնակի թվով անվանումը, իբրև երկի վերնագիր, ունենում է եզակիի արժեք։

Համմտ. Վարդանանք *հերոսաբար մարտնչում էին թշնամու դեմ։*

«Վարդանանք»-*ը Դ. Դեմիրճյանի գլուխ-գործոցն է։*

Այն հատուկ անունները, որոնք նշում են առարկաների տիպը, մակնիշը կարող են գործածվել հոգնակի թվով, ինչպես՝ «Մոսկվիչ»-ներ, «Ռուբին»-ներ, «Սկյուտիկ»-ներ *և այլն։*

Վերջապես համեմատաբար տարածված է ազգանունների հոգնակի գործածությունը։ Դա սովորաբար լինում է այն դեպքում, երբ մեկից ավելի անձինք ունենում են միևնույն ազգանունը, և վերջինս գործածվում է մեկ անգամ, բայց հոգնակի թվով, ինչպես՝ Վանան *և* Վարդան Մամիկոնյաններ, Լևոն *և* Հովսեփ Օրբելիներ, Տիգրան *և* Արմեն Արմենյաններ, Արամ *և* Աշոտ Պապայաններ *և այլն։*

Ազգանվան հոգնակին գործածվում է նաև ամբողջ գերդաստանը, ընտանիքը անվանելու համար, ինչպես՝ Գրիգորյաններ *տանը այսօր տոնախմբություն է։ Հակորյաններն այլևս այստեղ չեն բնակվում։*

§ 25. Հատուկ անուններն ըստ կազմության լինում են պարզ և բաղադրյալ։ Պարզ հատուկ անունները արտահայտվում են բառական մեկ միավորով, ինչպես՝ Մոսկվա, Անի, Գուրգեն, Սևան, Արաքս, Արարատ, *բաղադրյալ հատուկ անունները՝ մեկից ավելի բառական միավորներով. ինչպես՝* Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միություն, Կասպից ծով, Արարատյան դաշտավայր, Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզ, Մեծ Բրիտանիա, Երևանի պետական համալսարան, Լև Տոլստոյ, Հովհաննես Թումանյան *և այլն։*

§ 26. Հատուկ անունները մի կարգի առարկայից կարող են անցնել մյուսին. անձնանունը՝ ստեղծագործությանը («Սամվել», «Անուշ», «Դավիթ բեկ», «Գևորգ Մարզպետունի»), աշխարհագրական վայրերին (Վաշինգտոն, Գորկի, Կամո), աշխարհագրական վայրերից՝ անձանց, ստեղծագործություններին (Մասիս, Արարատ, Հայաստան, Սևան, «Սովետական Հայաստան», «Հացավան») և այլն։

Փոխանցումները լինում են նաև հասարակ և հատուկ անունների միջև։ Հատուկ անունները մեծ մասամբ ծագում են հասարակից, ինչպես՝ Անդրանիկ, Անուշ, Մաղիկ, Անթառամ, Բուրաս-

տան, Համեստ, Նվեր, Վարդ, Մանուկ, Վրեժ, Կորյուն, Արշալույս, Նահապետ, Աշտարակ, Մաղկաձոր, Ջրառատ և այլն։ *Սակավ դեպքերում լինում է նաև հակառակը. հասարակ անունն է ծագում հատուկից, ինչպես՝* ամպեր, մեկենաս, կայսր, ռենտգեն, վոլտ, օհմ *և այլն։*

ԹԱՆԶՐԱՅԱԿԱՆ ՈՒ ՎԵՐԱՑԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ

§ 27. Գոյականները, ըստ իրենց արտահայտած իմաստի բնույթի, լինում են թանձրացական *և* վերացական։ Թանձրացական գոյականներն *անվանում են բուն առարկայական աշխարհն իր ամբողջ բազմազանությամբ, այն է՝ իրեր, նյութեր, մարդիկ, կենդանիներ, բույսեր և այլն։ Օրինակ՝* գիրք, մատիտ, կոշիկ, աֆցան, սպոց, ավտոմեքենա, ինքնաթիռ, քար, հող, ջուր, պղինձ, nuկի, գազ, յուղ, պանիր, մարդ, հայր, մայր, Սմբատ, Սուրեն, Ղազարոս, Սամվել, Վարդուհի, առյուծ, նապաստակ, այծյամ, ձուկ, ծիծեռնակ, ծառ, ուռենի, կաղնի, խոտ, մեխակ, վարդ *և այլն։*

§ 28. Վերացական գոյականները *նյութական մարմիններ չեն անվանում, այլ ցույց են տալիս հատկանիշներ, երևույթներ (բնության, հասարակական, մտավոր), բայց քերականորեն հասցված առարկայի աստիճանի, մտածված որպես առարկա։ Օրինակ՝* վախ, հարգանք, սեր, ամոթ, միտք, գաղափար, ազատություն, համեստություն, հայրենասիրություն, շահագործում, օգտակարություն, շարություն, արագություն, շարշարանք *և այլն։* Վերացական *անվանումն այս գոյականների համար այնքան էլ հաջող չէ. այդ տերմինը պետք է հասկանալ ոչ իրային, ոչ թանձրացական իմաստով։*

§ 29. Գոյականների նշված երկու խմբերի իմաստային յուրահատկությունները պայմանավորում են քերականական որոշ տարբերություններ։ Վերացական գոյականները, ի տարբերություն թանձրացականների, գերազանցապես չեն գործածվում հոգնակի թվով, քանի որ նրանց ցույց տված օբյեկտները հիմնականում քանակական հատկանիշ չունեն։ Թվի քերականական կարգի մեկ եզրը (հոգնակին) չունենալը, ուրեմն, նաև մյուս եզրի յուրահատկություն է նշանակում և, ավելի ճիշտ, պայմանավորված է մյուս մեկ և միակ եզրի յուրահատկությամբ։

Վերացական գոյականները, ի տարբերություն թանձրացականների, նշված յուրահատկության պատճառով ունեն կապակցելիության որոշ սահմանափակություն և առանձնահատկություններ։ Նրանք չեն կարող կապակցվել թվականով, քանակ ցույց տվող դերանուններով ու գոյականներով արտահայված որոշչի հետ։ Չի կարելի ասել՝ հինգ վախ, մի բանի հարգանք, մեծ բանակությամբ սեր և այլն։ Համմտ. հինգ գիրք, մի բանի մատիտ, մեծ բանակությամբ կոշիկ և այլն։

Վերացական գոյականները սովորաբար չեն գործածվում ներգոյական հոլովով։ Ի դեպ, այդ հատկանիշն ունեցող բառախմբեր կան նաև թանձրացական գոյականների մեջ (հատկապես անձ և կենդանի անվանող գոյականները)։ Սակայն թանձրացականների ճնշող մեծամասնությունն ունի ներգոյական հոլով։

§ 30. Թանձրացական և վերացական գոյականների միջև անջրպետ չկա։ Շատ բառեր մեկ խմբից անցնում են մյուսը իմաստափոխության հետևանքով։ Սա նշանակում է, որ կան նաև անցողիկ, տատանվող երևույթներ այդ խմբերի միջև։ Հաճախ էլ միևնույն բառը իր մեկ իմաստով վերացական է, մի այլ իմաստով՝ թանձրացական։ Օրինակ՝ հայտարարություն բառը հայտարարելը իմաստով վերացական է, իսկ այդ գործողության ամեն մի մասնավոր արտահայտությունը թանձրացական է (Պատին կախված է երկու հայտարարություն)։ Նույնը վերաբերում է դիմում բառին, որը դիմելու գործողության իմաստով վերացական է, իսկ նրա ամեն մի դրսևորումը թանձրացական է (Նա դիմում է ներկայացրել աշխատանքի ընդունվելու համար)։ Անցում բառը անցնելը իմաստով վերացական է (Անցումը դեպի գետի մյուս ափը խանգարվեց), իսկ այդ նույն բառը, օրինակ, անցնելու հատուկ տեղի իմաստով թանձրացական է (Նոր բացված փողոցի անցումները ձևավորվում են ու կարգավորվում)։

ԱՆՁ ԵՎ ՈՉ-ԱՆՁ (ԻՐ) ՅՈՒՅՑ ՏՎՈՂ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ

§ 31. Գոյականները բաժանվում են նաև երկու այլ ընդհանուր խմբի կամ դասի՝ անձ և ոչ-անձ ցույց տվող գոյականների։ Անձ ցույց տվող գոյականներ են, ինչպես երևում է անվանումից, անձերի հասարակ ու հատուկ անունները՝ մարդ, կին, գյուղացի,

ուսուցիչ, ճարտարապետ, երիտասարդ, երեխա, հաճախորդ, Աշոտ, Անահիտ, Համլիկ և այլն։ Ոչ-անձ ցույց տվող գոյականներն են մյուս բոլորը՝ իրերի, կենդանիների անունները, բոլոր վերացական գոյականները՝ լեռ, ծառ, թուղթ, ձի, եղնիկ, աղավնի, համեստություն, խամի, ազնվություն և այլն։

§ 32. Գոյականների իմաստային այս երկու խմբերը որոշ չափով տարբերվում են նաև քերականորեն։ Դրանց միջև քերականական ամենաէական տարբերությունն այն է, որ սովորաբար կրող խնդրի դեր կատարելիս անձ ցույց տվող գոյականները դրվում են տրականով, իսկ ոչ-անձ ցույց տվող գոյականները՝ ուղղականով։

Համմտ. Նա տեսավ Համլիկին։
Նա տեսավ արբանյակը։

Ես սիրում եմ իմ ուսուցչին։
Ես սիրում եմ իմ հայրենիքը։

Պետք է հարգել մարդուն։
Պետք է հարգել մարդու իրավունքները։

Այնուհետև, անձ ցույց տվող գոյականները սովորաբար ներգոյական հոլով չեն ունենում, իսկ ոչ-անձ ցույց տվող գոյականների ճնշող մեծամասնությունը այդ հոլովն ունի։

Անձ ցույց տվող գոյականները պատասխանում են ո՞վ, իսկ ոչ-անձ ցույց տվող գոյականները՝ ի՞նչ հարցին։ Հասկանալի է, որ այս տարբերությունը վերաբերում է համապատասխան գոյականների ու դերանունների ոչ միայն ուղղական, այլև մյուս բոլոր հոլովներին։

Վերջապես, անձ ցույց տվող գոյականների մի մասն ունի քերականական տարբերակիչ հատկանիշ. ենթարկվում է ներքին թեքման ո, արտաքին ոչ հոլովումներին (հայր, մայր, քույր). անձ են ցույց տալիս նաև ց հոլովման պատկանող գոյականները (Գրիգորենք, Արամենք, պապոնք)։

§ 33. Գոյականների այս երկու խմբերը քերականական հատկանիշներով ոչ միշտ են սահմանազատվում։ Երբեմն իմաստային մի խմբի բառը կարող է գործածվել մյուս խմբի բառերի քերականական հատկանիշով, այլ կերպ՝ միևնույն առարկան կարող է

մտածվել թե՛ որպես իր և թե՛ որպես անձ, ըստ որում, իրը կարող է մտածվել որպես անձ, անձը՝ որպես իր։

Համմտ. Նա սիրում է շուն։ Նա սիրում է շանը։

Նա երեխաներին *տարավ ճամբար։* Նա *իր մեքենայով* երեխաներ *է տանում ճամբար։*

Նա Մեծարենց *շատ է սիրում։* Նա Մեծարենցին *շատ է սիրում։*

ԳՈՅԱԿԱՆԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 34. Գոյականն ունի հետևյալ քերականական կարգերը՝ թվի, հոլովի և առկայացման (տարորոշման)։ Այս կարգերը այս կամ այն չափով հատուկ են նաև այլ խոսքի մասերի։ Եթե մի կողմ թողնենք գոյականի թվի և բայի թվի էական տարբերությունները, ապա պետք է ասել, որ նշված կարգերը այլ խոսքի մասեր ևս ունեն այն չափով, ինչ չափով որ վերջիններս իրենց էությամբ մոտ են կամ տվյալ կիրառությամբ մոտենում են գոյականներին։

Այսպես, հոլովի կարգ, բացի գոյականից, ունեն նաև գոյականներին մոտ կանգնած՝ առարկա ցույց տվող դերանունները (սա, դա, նա, ես, դու և այլն), անորոշ դերբայը, որի արտահայտած գործողության իմաստը զգալիորեն վերացարկված է առարկայից։ Համմտ. մի կողմից՝ գնում է, կարդում է *(նա),* գնացել ես, կարդացել ես *(դու),* գնացած, կարդացած *(երեխա),* գնացող, կարդացող *(մարդ), մյուս կողմից՝* գնալ(ը), կարդալ(ը), գնալուց, կարդալուց, գնալով, կարդալով։

Նշենք նաև, որ առարկայի հատկանիշ ցույց տվող բառերը սովորաբար կարող են հոլովվել գոյականաբար գործածվելիս, այսինքն, երբ նրանց հատկանիշի իմաստի մեջ ներառնվում է նաև առարկայի իմաստ։ Համմտ. ճոտավետ ծաղիկ և ճոտավետը, բաջ զինվոր և բաջը, խելոք աշակերտ և խելոքը, սպիտակ մեխակ և սպիտակը, կարդացած մարդ և կարդացածը, վազող երեխա և վազողը և այլն։

Այսպիսի փաստերը ցույց են տալիս, որ նշված կարգերը կապվում են բառերի առարկայական իմաստի հետ, հետևապես և հատուկ են գոյականին։

§ 35. Գոյականի կարգերի ընդգրկման ոլորտը տարբեր է։

Թվի քերականական կարգը հատուկ է գոյականի բոլոր դրսևորումներին՝ թե՛ նրա հոլովված բոլոր ձևերին և թե՛ նույնիսկ նրա ըստկըզբնաձևին, երբ գոյականն իր անվանողական արժեքով հանդես է գալիս որպես բառարանային միավոր։ Ուրեմն՝ որտեղ էլ հանդես գա գոյականը, այն անպայմանորեն ունի թվի կարգ։

Ընդգրկման ոլորտի տեսակետից երկրորդ տեղը գրավում է հոլովը։ Գոյականը հոլով չունի սոսկ անվանողական արժեքով հանդես գալու դեպքում, այսինքն, երբ գոյականը հարաբերություն չի արտահայտում, այլ սոսկ բառարանային միավոր է։ Այսպես՝ գիրք, աթոռ, fաղաք, թուղթ *գոյականները նշված եղանակով, այսինքն որպես համապատասխան առարկաների սոսկ անվանումներ դրված չեն որևէ հոլովով։ Հիշենք, սակայն, որ թվի կարգի տեսակետից դրանք չեզոք չեն. դրված են եզակի թվով։ Առկայացման կարգը տարբեր ընդգրկումներ ունի։ Այսպես՝* որոշյալության ենթակարգը *հատուկ է գոյականի հոլովների մի մասին միայն՝* ուղղականին *ու* տրականին։ *Մյուս հոլովաձևերին այն հատուկ չէ։ Բանն այն է, որ որոշյալության արտահայտիչը որոշիչ հոդն է, իսկ այն կարող է դրվել միայն* ուղղական *ու* տրական *հոլովաձևերի վրա, իսկ բացառական, գործիական ու ներգոյական հոլովները որոշիչ հոդ չեն ընդունում, հետևապես և այդ ձևերը բուն որոշյալություն չունեն։*

Թվի կարգը

§ 36. Գոյականի թվի կարգով արտահայտվում է առարկաների քանակը քերականական վերացարկումով՝ մեկ և մեկից ավելի։ Ըստ այդմ, ժամանակակից գրական հայերենում գոյականն ունի երկու թիվ՝ եզակի և հոգնակի։

Եզակի թիվ

§ 37. Գոյականի եզակի թիվը քերականական ձևային վերջավորություն չունի. այն, որպես այդպիսին, գիտակցվում է հոգնակերտ մասնիկ չունենալու հատկանիշով և հակադրվում է հոգնակերտ մասնիկ ունեցող ձևերին, ինչպես՝ fար–fարեր, աշակերտի–աշակերտների, փողոցից–փողոցներից, որդու–որդիների *և այլն։*

Եզակիի ու հոգնակիի ձևային և իմաստային հակադրությունը

գոյականի համակարգում շատ որոշակի է։ Այդ հակադրության որոշակիությունն առավել ևս զգալի է լինում, երբ այն համեմատում ենք դերանունների համակարգի որոշ բառերի համապատասխան հակադրության հետ։ Հմմտ. ֆաղաֆ–ֆաղաֆներ և ես–մենք։ Քաղաֆներ ձևը ֆաղաֆ–ին հակադրվում է ներ հոգնակերտով, իսկ իմաստային տեսակետից «շատ քաղաք»-ի գաղափար արտահայտելով, մինչդեռ մենք-ը ես-ի համեմատությամբ չունի այդպիսի հակադրություն. մենք-ը կազմված չէ ես-ից, իմաստով էլ չի նշանակում «շատ ես», այլ «ես և ուրիշներ»։

Թվի կարգը, ինչպես նշվել է վերը (§ 34), առկա է գոյականի ամեն մի արտահայտության մեջ. այնպես որ այն գոյականից անբաժան կարգ է։ Այդ կարգը գոյականին հատուկ է ոչ միայն խոսքի մեջ, նրա գործածություններում, այլև նրա նույնիսկ անվանողական արժեքի դեպքում։

§ 38. Քանի որ գոյականի եզակի թիվը, ինչպես ասվեց, դիտակցվում է հոգնակիի հետ ունեցած հակադրության մեջ, ուստի եզակիի ամենաբնորոշ իմաստը պետք է համարել այն, ինչ որ ակնհայտորեն հատուկ է այդ հակադրությանը և երևում է նրանում։ Իսկ այդ հակադրության մեջ եզակի ձևի ամենաակնհայտ իմաստը մեկ առարկա ցույց տալն է։ Հմմտ. ծաղիկ–ծաղիկներ, երեխա–երեխաներ, ուր ծաղիկներ ու երեխաներ հոգնակիների հակադրությամբ ծաղիկ ու երեխա ձևերը ցույց են տալիս մեկ ծաղիկ, մեկ երեխա։

Եզակիության գաղափարը, բացի նշված իմաստից, ունի այլ արտահայտություններ ևս։

Այդ իմաստային արտահայտություններն են՝

1. Եզակի թիվը կարող է ցույց տալ առարկայի տվյալ տեսակըն ընդհանրապես. օրինակ՝ Գիրքը զարգացնում է մարդուն։ Քաղաքի և գյուղի տարբերությունները աստիճանաբար նվազում են։ Ինքնաթիռը շատ հարմար փոխադրամիջոց է։ Ենթական և ստորոգյալը նախադասության գլխավոր անդամներն են։ Աշխը գիտե վարազի ժանիքի թափը, նախահարձակ չի լինում (ԱԲ, Մխնաձոր)։

2. Գոյականի եզակի թիվը հաճախ արտահայտում է համեմատաբար սահմանափակ ընդհանրացում. այդ սահմանափակումը կատարվում է համապատասխան բառերի ու արտահայտությունների միջոցով։ Օրինակ՝ Դաշտի ձյունը ինչ էլ լինի՝ սարի ձյանը

չի հասնի (ՀՇ)։ Գյուղի աշխատավորն այժմ ապրում է բոլորովին այլ կենցաղով։ Ջերմոցում աճեցրած ծաղիկը պակաս հոտավետ է լինում։ Արարատյան դաշտի դեղձն ու խաղողը իրենց տեսքով ու բույրով տարբերվում են լեռնային շրջանների մրգից։ Այսօրվա աշակերտի մեջ են ձևավորվում մեր վաղվա fաղաfացու հատկանիշները, ուստի պետք է մեծ ուշադրություն նվիրել նրա դաստիարակությանը։

Ինչպես երևում է բերված օրինակներից, գոյականի եզակի թվով արտահայտված առարկաների տեսակի կամ ընդհանուր հատկության սահմանափակումը կատարվում է տարածական և ժամանակային առումներով։

3. Խոսքի մեջ գոյականի եզակի թիվը կարող է հենց թվի տեսակետից արտահայտել թվային անորոշություն, որի տակ կարող են հասկացվել մեկ առարկա կամ մեկից ավելի առարկաներ։ Օրինակ. «Արամն ամեն օր գիrf է գնում» նախադասության մեջ գիrf բառը որոշակիորեն չի նշում՝ մե՞կ, թե՞ մեկից ավելի գրքի մասին է խոսքը. հնարավոր է թե՛ մեկը և թե՛ մյուսը։ Բառի ցույց տված առարկայի քանակական անորոշության իմաստը բխում է տվյալ ասույթից, խոսքից։ Դա ավելի համոզիչ կդառնա, եթե հիշյալ նախադասությանը հակադրենք, օրինակ, հետևյալը. «Արամը այս գրախանութից հետաքրքրական գիrf է գնել», ուր արդեն խոսքը որոշակիորեն վերաբերում է մեկ գրքի։ Գիrf բառի (և ամեն մի բառի) եզակի թվի իմաստային հիշյալ յուրահատկության դրսևորմանը որոշ չափով նպաստում է նաև անորոշ առումը։

Եզակի թվի ձևի կիրառության իմաստային հիշյալ յուրահատկությունը մտածական նրբությունների, քերականական նրբերանգների արտահայտություն է և չի խոսում ո՛չ եզակի թվի, ո՛չ էլ նրա գնահատման հակասականության մասին, քանի որ այն բխում է ասույթից, կոնտեքստից։ Դա նշանակում է, որ եզակի թվի ճիշտ գնահատման համար ամենից առաջ պետք է այն նկատի ունենալ խոսքից դուրս և վերցնել հոգնակի թվի հետ հակադրության մեջ՝ գիrf–գրfեr։ Իսկ իմաստային տարբեր երանգները վեր հանելու համար, իհարկե, անհրաժեշտ է հաշվի առնել ասույթը, խոսքը։

ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎ

§ 39. Ժամանակակից գրական հայերենում գոյականի հոգնակի թիվը սովորաբար կազմվում է եր և ներ մասնիկներով: Հոգնակիի կազմության մեջ որոշ դեր ունեն իկ, այք, f մասնիկները:

Որոշ միավանկ բառերի՝ հին հայերենում ունեցած վերջին ն-ն, *որը եզակի թվում ընկել է, հոգնակիի կազմության ժամանակ վերականգնվում է, ինչպես՝* բեռ–բեռներ, գառ–գառներ, դուռ–դռներ, եզ–եզներ, թոռ–թոռներ, լեռ–լեռներ, ծունկ–ծնկներ, կուռ–կռներ, մուկ–մկներ, ձուկ–ձկներ, ոտ–ոտներ *և այլն: Սա վերաբերում է նաև այն դեպքերին, երբ այդ միավանկ բառերը հանդես են գալիս որպես բաղադրյալ բառի վերջին բաղադրիչ. ինչպես՝* դաշտամուկ–դաշտամկներ, շնաձուկ–շնաձկներ *և այլն: Այնպես որ, թեև այսպիսի բառերի հոգնակիի ձևը եզակիից տարբերվում է* ներ–ով, *բայց սա չպետք է շփոթել ներ հոգնակերտ մասնիկի հետ:*

Միավանկ բառերից միակ բացառությունը ոտս-ն է, *որի հոգնակին կազմվում է ներ վերջավորությամբ՝* ոտսներ: *Սա բացատրվում է այդ բառի բարբառային արտասանությամբ՝* (ը)ոտս *կամ* (ու)ոտս, *որով բառը դառնում է երկվանկ և ստանում ներ. վերջինս պահպանվում է նաև գրական հայերենում* ոտս *արտասանության դեպքում:*

§ 40. Միավանկ բառերի հոգնակիի կազմության ժամանակ ի *և* ու *ձայնավորները սովորաբար հնչյունափոխվում են՝ կապված շեշտի տեղափոխության հետ: Այդ ձայնավորները նման դեպքերում փոխվում են* ը-ի: *Օրինակ՝* գիծ–գծեր, գին–գներ, գիրք–գրքեր, թիվ–թվեր, լինդ–լնդեր, միտք–մտքեր, միրգ–մրգեր, սիրտ–սրտեր, վիշտ–վշտեր, բուն–բներ, գունդ–գնդեր, դուռ–դռներ, բումբ–բղմբեր, խումբ–խմբեր, շուն–շներ, սուր–սրեր, տուն–տներ *և այլն:*

Հնչյունափոխական այս երևույթն ունի որոշ շեղումներ: Ինչպես՝ դիրք–դիրքեր. ծիլ–ծիլեր, կիրճ–կիրճեր, լուր–լուրեր, ռումբ–ռումբեր *և այլն:*

Ու-ով *վերջացող միավանկ բառերի հոգնակիի ձևում* ու-ն *փոխվում է* վ-ի. *ինչպես՝* ձու–ձվեր, լու–լվեր, բու–բվեր *(կա նաև՝* բուեր*):*

§ 41. Միավանկ արմատական բաղադրիչով վերջացող բաղադրյալ բառերի հոգնակին կազմվում է եր կամ ներ մասնիկ ներով:

եր *հոգնակերա մասնիկով կազմվում է այն բազմավանկ բառերի հոգնակին, որոնց վերջին բաղադրիչը միավանկ գոյական է, և վերջինս բաղադրյալ բառի մեջ պահպանում է իր հիմնական առարկայական իմաստը։ Օրինակ՝* ավտոդղեր, առուտավայրեր, բազմակետեր, գետնախորշեր, գինետներ, դաշտավայրեր, դասագրբեր, զորամասեր, ծովախորշեր, հեռագրեր, հողատերեր, ձեռագրեր, սեպագրեր, անցագրեր, ոտնաթետրեր, ոտնաձայներ, վերնախավեր, ջրափոսեր, ցուցափեղկեր, տիեզերանավեր *և այլն։*

Միավանկ անվանական բաղադրիչով վերջացող բազմավանկ բառը ևեր հոգնակերա մասնիկ է ստանում այն դեպքում, երբ վերջին միավանկ բաղադրիչը բաղադրյալ բառի մեջ գործածվում է ոչ թե առարկայական իմաստով, այլ ուրիշ և մասնավորապես դերբայական (գործողություն կատարողի կամ տվյալ վիճակում եղողի) իմաստով։ Այսպես, ունենք գիր–գրեր, ձեռագիր *(ձեռքի գիր),* ձեռագրեր, *բայց ունենք նաև* մատենագիր, *ուր* գիր–ը *նշանակում է գրող (մատյան գրող), ուստի և հոգնակին կազմվում է* ներ*-ով՝* մատենագիրներ. *կամ՝* գորգագործներ *նշանակում է՝ գորգ գործողներ,* անգործներ՝ *առանց գործի եղողներ, գործ չունեցողներ։ Բերենք այդ կարգի այլ օրինակներ ևս՝* ականատեսներ, ականորսներ, բանասերներ, բարեկամներ, գնդացիրներ, գրագետներ, դավադիրներ, ժամագործներ, խոտակերներ, կաթնատուներ, հիմնադիրներ, մանկավարժներ, մեղալակիրներ, նույնանիշներ, ուղղամիտներ, պատմագիրներ, ուսադիրներ, փայտահատներ, օրինապահներ *և այլն։*

Լինում են շեղումներ այս ընդհանուր օրինաչափությունից։ Շեղումները հիմնականում պայմանավորված են այն հանգամանքով, որ երբեմն բարդ բառի վերջին միավանկ բաղադրիչի իմաստային հատկանիշը հստակ չի գիտակցվում։ Այդ շեղումներից հատկապես բնորոշ է անցք *բառով բարդված բառերի հոգնակին, որ ձևավորվում է* ներ*-ով, փոխանակ* եր*-ի։*

Օրինակ՝ Նա իջավ և սպասավորի առաջնորդությամբ անցավ երկար միջանցքներ՝ մինչև հասավ բակը (ԴԴ, Վարդանանք, 1)։ Խավար միջանցքների քարերի վրա լսվեց սապոգների մեռաղյա ձայնը (ԱԲ, Մի անգամ հոկտեմբերի 25-ին)։ Մենք ջրանցքներ ենք շինել հիմա, և մեր դաշտերը ոսկեզօծ են (ԵՉ)։ Մի՛ խնայեք գրքի լուսանցքները։ Գրառեցեք։ Իմ գրառած գիրքն ինձ համար

տասնապատիկ թանկ է նոր գրքից (ՍՄ)։ Ճեմարանի բոլոր սենյակների ու նրբանցքների պատերին կարելի էր տեսնել «Ձլինկը շուն է» մակագրությունը (Յ. Խանզադյան)։ Մեծ փողոցների կողքին, բարձրահարկ շենքերի մեջ մոլորված նրբանցքներ կան քաղաքում (Վխ, Մեզ մոտ հարավում)։ Դրանք հասակավոր զորականներ էին, սրածայր գլխանցքներով (ԴԴ, Մեսրոպ Մաշտոց)։

Մանոթ.—Նկատելի է, որ երբ բաղադրյալ բառի վերջին բաղադրիչը, հակառակ սպասված օրինաչափության, առանձին դեպքերում չի հնչյունափոխվում, եր-ի փոխարեն ստանում է ներ հոգնակերտ մասնիկը։ Այս երևույթը, սակայն, այժմ հնացած է և ոչ օրինաչափական։ Օրինակ՝ Գնում էր տուն բոլորովին այլ ծրագիրներով (ԴԴ, Վարդանանք, 1)։ Նա տակնուվրա էր անում Կոդակի և Վասակի ծրագիրները (ԴԴ, Վարդանանք, 1)։ Ունենք երբայական բնագիրներ (Հր. Աճառյան)։ Պետք էր աշխատանքի ընթացքում միշտ ձեռքի տակ ունենալ բոլոր ձեռագիրները (Ստ. Մալխասյան)։ Մեսրոպը, որ առաջին հայերեն կարդացողն էր, ինչպե՞ս սովորեց կարդալ, որ միևնույն է ասել, թե ինչպե՞ս հնարեց նա հայոց լեզվի նշանագիրները (ՍԴ)։ Ժամանակակից գրական հայերենի համար ավելի օրինաչափական է նշված և նման բառերի վերջին արմատի ձայնավորի հնչյունափոխությունը, որի դեպքում էլ բառը ստանում է եր հոգնակերտ. ինչպես՝ ծրագրեր, բնագրեր, ձեռագրեր և այլն։

§ 42. Բազմավանկ բառերի հոգնակին կազմվում է ներ-ով, ինչպես՝ քաղաքներ, անտառներ, ծաղիկներ, երեխաներ, արբանյակներ, մեքենաներ, բանաստեղծություններ, հայտարարություններ և այլն։

§ 43. Մեկուկես վանկանի (մեկ լրիվ և մեկ գաղտնավանկ ունեցող) բառերի հոգնակին կազմվում է եր-ով կամ ներ-ով։ Եթե լրիվ վանկը երկրորդն է, բառը ստանում է ներ վերջավորությունը։ Օրինակ՝ բրիչներ, գլխարկներ, գնդակներ, գնորդներ, գրիչներ, գրողներ, թրթուռներ, խնջույքներ, խրատներ, հրթիռներ, սխալներ, սլաքներ, ցնցուղներ, ցրիչներ և այլն։

Երբ լրիվ վանկը ընկնում է բառի սկիզբը, հոգնակին սովորաբար կազմվում է եր վերջավորությամբ։ Օրինակ՝ ագռեր, աստղեր, արկղեր, եզրեր, վագրեր, տեսրեր, դուստրեր, սաձրեր, կայսրեր և այլն։

Հանդիպում են շեղումներ այս օրինաչափությունից. այս

կարգի բառերի հոգնակին երբեմն կազմվում է նաև ներ մասնիկով։ Օրինակ՝ Հանգուցյալի արկղների մեջ գտան մի քան քսակներ (Ր, Խամսայի մելիքությունները)։ Սակայն Արսենին մնում էր զարմանալ, թե ինչ հրաշքով բոլոր արկղները բաց են (ԳՍ, Թեհրան, 2)։ Հայաստանը շատ կայսրներ ու մեծ զորապետներ է տվել (Ր, Կայծեր)։ Տանում էին անգղները մի սպիտակ աղավնի (ՀՇ, Սիամանթո և Խաչեզարե)։

§ 44. Իկ-ով *կազմվում է մարդ բառի հոգնակին (մարդիկ),* այֆ-ով՝ կիճ *բառի հոգնակին (կանայք), ըստ որում վերջին դեպքում բառի արմատի մեջ կատարվում է ի>ա հերթագայություն՝* կիճ>կան։

§ 45. Ք հոգնակերտ մասնիկը հանդես է գալիս մեր լեզվի հատկապես ժողովրդախոսակցական տարբերակում։ Օրինակ՝ անգլիացիք, գառնեցիք, աշտարակցիք, գյուղացիք, տեղացիք *և այլն։ Որոշ դեպքերում այսպիսի կազմությունները թափանցում են գրական խոսքի մեջ։ Սրա հետևանքով ստեղծվում են հոգնակի թվի զուգահեռ ձևեր, որոնցից մեկը կազմվում է գրականի, իսկ մյուսը՝ ժողովրդախոսակցական լեզվի կամ բարբառի օրինաչափությամբ։ Օրինակ՝* ճամփաներ–ճամփեք, տեղացիներ–տեղացիք, նախիներ–նախիք, անգլիացիներ–անգլիացիք *և այլն։*

Բերենք ք *հոգնակերտ մասնիկով կազմված հոգնակիի գործածության օրինակներ։ Այս փառքը, օ՜, գառնեցիք, մենք կարող ենք ժառանգել (Մուր., Գևորգ Մարզպետունի)։* Օսմաճցիք *պաշարեցին քերդը (Ր, Դավիթ Բեկ)։* Տեղացիք *սովորելով լատիներենը, ամբողջապես դարձրին իրենց ամենօրյա սեփական լեզուն (Ա՜., Լիակատար քերականություն հայոց լեզվի, Ներածություն)։ Գալիս է երկնի ճամփեքով արձակ Կարապ-ամպերի երամն սպիտակ (ՀՍ)։ Մի՞թե անգլիացիք իրենց պահանջը արդեն արել են թղթով (ՎՓ, Ալեմգիր)։ Եվ տարիք անցան, բայց իր կորիճին Մըտքից չհանեց մայրը մի վարկյան (ՀՇ)։*

§ 46. Որոշ յուրահատկություն ունեն տիկին *ու* պարոն *գոյականների հոգնակիի կազմությունն ու կիրառությունը։ Սրանց հոգնակին սովորաբար կազմվում է բազմավանկ բառերին հատուկ ներ հոգնակերտ մասնիկով՝* տիկիններ, պարոններ։ *Սակայն ժամանակակից հայերենում գործածվում են նաև* տիկնայք, պարոնայք *ձևերը։ Դրանք նախ գործածվում են պատմական երկերում, համապատասխան ոճավորման նպատակով։ Օրինակ՝ Այստեղ*

էին Հովհաննես կաթողիկոսը, բոլոր նախաթոռ եպիսկոպոսները, արքայազուններ, նախարարներ, իշխաններ, ազատ տիկնայք, իշխանուհիք և իշխանազն օրիորդներ (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Տիկնայ *հայոց աշխարհին դուրս եկան քաջալերելու կռիվ գնացողներին (ԴԴ, Վարդանանք, 2)։* Տիկնայ... *հավաքվեցին սրահը, ուր եսթերն ու Արշալույս տիկինը բոլորին ընդհանուր սեղան տվին (ԴԴ, Վարդանանք, 2)։ Նշված իմաստով գործածվում է հատկապես* տիկնայ *բառը։*

Տիկնայ, պարոնայ *ձևերը այժմ ունեն մեկ այլ մասնավոր կիրառություն ևս. դրանք երբեմն գործածվում են պաշտոնական ոճի մեջ հատկապես կոչականի դերով։*

§ 47. *Հոգնակի թիվը, բացի իր բուն իմաստից, երբեմն արտահայտում է անորոշության, մոտավորության իմաստ։ Օրինակ՝ Նրանց ժամանումն սպասվում է ամենամոտ ժամանակներս (ՍՀ)։ Այդ ժամանակներ Պոլսում ի պաշտոնե փաստաբանների շարքում Զոհրապը փաստաբան էր նաև իր կոչումով (Վ. Փափ., Սրտիս պարտքը)։ Երեսունական թվականների կեսերը Անտուան դը Սենտ-Էքսյուպերիին բերում են գրական փառք (ՍԳ)։ 1938 թվականի աշնանից կազմակերպվեց ադրբեջանական բաժին, որը փակվեց պատերազմի տարիներին (ՍՄ)։*

§ 48. *Հոգնակիության յուրահատուկ իմաստ ունեն աք, եք, ուք, ոք ձևույթներով կազմված բառաձևերը. ինչպես՝* Վարդանաք, Սմբատեք, պապոք, Հուռումք: *Այսպիսի բառերը ժամանակակից հայերենի քերականական աշխատություններում միավորվում են որպես ց հոլովման պատկանող գոյականներ։ Իհարկե, նշված և նման ձևերը հոլովվում են ց հոլովիչով, ուրեմն և պատկանում են ց հոլովման։ Սակայն այդ բառերը (Վարդանանք և այլն) բառական իսկական սկզբնաձևեր չեն, ի տարբերություն մյուս հոլովումների պատկանող բառերի, որոնք ինքնուրույն բառական միավորներ են (քար-քարի, մարդ-մարդու, արյուն-արյան, քույր-քրոջ և այլն)։* Վարդանաք, Սմբատեք, պապոք, Հուռումք *ձևերի սկզբնաձևերն են՝* Վարդան, Սմբատ, պապ, Հուռի: *Սա նշանակում է՝ ց հոլովման պատկանող բառերը ինքնուրույն բառային միավորներ չեն, այլ համապատասխան եզակիների յուրահատուկ հոգնակիներ։*

Դա են հատատատում հետևյալ փաստարկները.

ա) Զևային տեսակետից Վարդանանք, Սմբատեանք, պապանք, Հուսուանք *կազմված են համապատասխան եզակիներից* ան, եան, ոան, ուան *ձևույթներով։ Դրանց միջև կա քերականական թվի տարբերություն՝ եզակի և հոգնակի։*

Համմտ. Վարդանը եկավ։ Վարդանանք եկան։
Սմբատն այստեղ է։ Սմբատեանք այստեղ են։

բ) Եթե մի կողմ թողնենք հիշյալ ձևույթների կանոնական մակարդակի որոշ սահմանափակությունը, ըստ որի դրանք առավելապես հատուկ են ժողովրդա-խոսակցական լեզվին, ապա կառուցվածքային մակարդակում դրանք առանց սահմանափակության կարող են դրվել բոլոր հատուկ անձնանունների (Սմբատեանք, Սուրեններ, Ղազարոսեանք, Սամվելեանք, Վարդուշեանք, Ներսեսեանք, Արտաշեսեանք, Շահենենք և այլն), այլև անձերի հարաբերություն նշանակող շատ գոյականների վրա (խնամոնք, փեսեանք, քեռոնք, հայրիկենք և այլն)։ Նշված ձևույթների այսպիսի անսահմանափակ գործածությունը մանավանդ հատուկ անձնանունների հետ հաստատում է, որ դրանց մեջ, իրոք, կա քերականական իմաստ։

գ) Ուշադրության արժանի է այն երևույթը, որ հիշյալ ձևույթներով բաղադրված ձևերի հասարակ կամ հատուկ անուն լինելը պայմանավորված է նրանց եզակիի ձևով. այսինքն՝ հատուկ անունից կազմվում է հատուկ անուն (Արամ-Արամեանք), հասարակ անունից՝ հասարակ անուն (պապ-պապոնք)։ Մինչդեռ հայտնի է, որ բառակազմական ձևույթներով հատուկ անունից հասարակ անուն է կազմվում, ինչպես՝ Լենին, լենինիզմ, լենինյան, լենինաբար, *իսկ քերականական մասնիկներ ստանալու դեպքում հատուկ անունը մնում է հատուկ՝* Լենին, Լենինին, Լենինից, Լենինով *և այլն։ Սա ևս ցույց է տալիս, որ նշված ձևույթները հիմնականում ձևաբանական են։*

Անք, եանք, ոանք, ուանք *ձևույթներով կազմված հոգնակիի իմաստը յուրահատուկ է և տարբերվում է սովորական հոգնակիի իմաստից։ Այսպես՝* Արամեանք *նշանակում է ոչ թե «շատ Արամ», այլ «Արամը և յուրայինները»։ Հոգնակիի այսպիսի իմաստը նման է որոշ դերանունների հոգնակիի իմաստին։ Համմտ. մենք չի նշանակում «շատ ես», այլ «ես և ուրիշներ»,* իմքներս՝ *«ինքս և ուրիշներ» և այլն։*

ԱՆՀՈԳՆԱԿԱՆ ԳՈՅԱԿԱՆՆԵՐ

§ 49. Ժամանակակից հայերենում կան զգալի թվով գոյականներ, որոնք հոգնակի թիվ չունեն, ուստի և կարելի է անվանել անհոգնական բառեր[5]*։ Քերականական այդ յուրահատկությունը պայմանավորված է համապատասխան բառերի իմաստով. դրանք կամ եզակի ձևով արտահայտում են հավաքական իմաստ (աշակերտություն, մարդկություն և այլն) և հոգնակի ձևավորվելու կարիքը չունեն, կամ արտահայտում են այնպիսի երևույթներ, վերացարկված հատկանիշներ և այլն (տապալում, պանդխտություն, ուսում), որոնք թվարկվել չեն կարող, և այդ պատճառով էլ նրանց հոգնակի իմաստը, հետևապես և հոգնակի ձևը տրամաբանորեն սպասելի չեն։ Անհոգնական գոյականները իրենց քերականական այդ հատկանիշի դրսևորման տեսակետից երկու խմբի կարելի է բաժանել՝ ա)* բացառնակ անհոգնական *բառեր, որոնք առհասարակ հոգնակի չունեն (ինչպես՝* խաղողագործություն, ֆեոդալիզմ, էլեկտրոնիկա, իմպերիալիզմ *և այլն), բ)* մասնակի անհոգնական *բառեր, որոնցում անհոգնականությունը մասնակիորեն է դրսևորվում, այսինքն՝ որոշ կիրառություններում հոգնակի թիվ չունեն, իսկ այլ կիրառություններում ունեն։*

§ 50. Ժամանակակից հայերենի անհոգնական գոյականներն են՝

ա) Ություն և եղեն *ածանցներով վերջացող գոյականներ, որոնք ունեն հավաքական իմաստ և այդ պատճառով նրանց հոգնակին սպասելի չէ։ Օրինակ՝* աշակերտություն, աշխատավորություն գյուղացիություն, ուսանողություն, մտավորականություն, մարդկություն, ածաքեղեն, մրգեղեն, կաճաչեղեն, բանջարեղեն, ամանեղեն, փայտեղեն, երկաթեղեն, ոսկեղեն և այլն։

բ) Ություն *ածանցով կազմված նաև այնպիսի բառեր, որոնք արտահայտում են հատկանիշի իմաստ. ինչպես՝* աշխատասիրություն, առաջադիմություն, ծուլություն, հպարտություն, վեհություն, հետադիմություն, խաղաղություն, համեստություն,

---

5 *Հմմտ.* Մ. Ե. Ասատրյան, *Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Երևան, 1970, էջ 134—136։*

հետևողականություն և այլն։ Հատկանիշի իմաստ ունեցող մի շարք գոյականներ իմաստային այլ յուրահատկության պատճառով կարող են ցույց տալ տվյալ հատկանիշի մեկից ավելի մասնավոր արտահայտություն, ուստի և ունեն հոգնակի թիվ, ինչպես՝ ընդունակություն–ընդունակություններ, մոլորություն–մոլորություններ, կամայականություն–կամայականություններ, հարստություն–հարրստություններ և այլն։

գ) Արհեստ, մասնագիտություն, արտադրության ճյուղ նշանակող բառեր. ինչպես՝ ատաղձագործություն, ասեղնագործություն, դարբնություն, երկրագործություն, խաղողագործություն, ծխախոտագործություն, հյուսնություն, մետաղամշակություն, փայտամշակություն, հաստոցաշինություն, արդյունաբերություն, գյուղատնտեսություն *և այլն։*

դ) Հասարակարգ, հասարակարգի ձև նշանակող բառեր. ինչպես՝ ֆեոդալիզմ, սոցիալիզմ, կապիտալիզմ, ավատականություն, սոցկատիրություն, կոմունիզմ *և այլն։*

ե) Գիտության բնագավառ, ճյուղ նշանակող բառեր. ինչպես՝ հասարակագիտություն, լեզվաբանություն, հանքաբանություն, բուսաբանություն, երկրաբանություն, սոտաբանություն, կիբեռնետիկա, էլեկտրոնիկա, ֆիզիկա, ֆիմիա, հաճրահաշիվ, մաթեմատիկա *և այլն։*

զ) Գիտական, կրոնական ուսմունք, հասարակական մտքի ուղղություն և նման երևույթներ նշանակող բառեր. ինչպես՝ ուտոպիա, մարքսիզմ, լենինիզմ, դարվինիզմ, ռեալիզմ, հումանիզմ, պրագմատիզմ, իմպրեսիոնիզմ, ինտեռնացիոնալիզմ, նացիոնալիզմ, հումանիզմ, fրիստոնեություն, լուսավորչականություն, մահմեդականություն *և այլն։*

է) Այն անունները (հատուկ), որոնք միայն մեկ առարկա են անվանում. ինչպես՝ Երկրագունդ, Լուսին, Մարս, Մոսկվա, Եվրոպա, Ասիա, Կիև, Երևան, Էջմիածին և այլն։ *Այն հատուկ անունները, որոնցով անվանվում են մեկից ավելի անձեր, առարկաներ, կարող են գործածվել հոգնակի թվով. ինչպես՝ Մեր կուրսի երկու* Աճաիտներն էլ լավ են սովորում։ *Այդպիսիք են նաև՝* Գուրգենեներ, Գրիգորյաններ, Ջամբախովներ, Մասիսներ *և այլն։*

ը) Նյութի մի շարք անուններ. ինչպես՝ օդ, կաթ, յուղ, մածուն, թան, արճիճ, գինի, պողպատ *և այլն։ Այս կարգի բառերի հոգ-*

նակի կազմելու կամ չկազմելու հարցում դեր կատարում է նրանց իրական վիճակը. այսինքն՝ տվյալ նյութը իր վիճակով ենթակա՞ է հաշվվելու, ընկալվելու քանակական կողմով, թե՞ ոչ։ Համմտ. **fur** *և* **օդ** *բառերն այդ տեսակետից։*

Վերոհիշյալ բառերը, որպես նյութի ընդհանուր անուններ, չունեն հոգնակի, բայց երբեմն (ըստ որում տարբեր հաջողությամբ ու հաճախականությամբ) դրանք կարող են գործածվել նյութի այս կամ այն մասնավոր արտահայտությունը ցույց տալու համար։ Այսպես, **գինի**-*ն, որպես որոշակի նյութի անուն, հոգնակի թվով չի կարող գործածվել, բայց այդ նյութի տարբեր տեսակները կամ տարբեր ամաններում տեղավորվածները նշելու համար գործածվում է* **գինիներ** *հոգնակին։ Համմտ. նաև՝* **Մածունը պատրաստում են կաթից։** *Այս* **մածուններ***ը (տարբեր շշերում գտնվող) հնացել են, հարկավոր է թափել։*

Կաթն *արագ թթվող նյութ է։ Քո գնած* **կաթերից** *(շշերի կամ ծրարների մեջ լցված) երկուսը հարևանը խնդրեց և տարավ։*

ՀՈԼՈՎԻ ԿԱՐԳԸ

Հ Ո Լ Ո Վ Ն Ե Ր Ի Ո Ր Ո Շ Մ Ա Ն Հ Ի Մ Ո Ւ Ն Ք Ը

§ 51. Ժամանակակից հայերենի հոլովների քանակի և էության հարցը վեճերի առարկա է դարձել դեռևս մեր դարի սկզբներին։ Մանուկ Աբեղյանն այդ հարցը լուծել է հօգուտ հինգ հոլովի, որոնք են՝ ուղղական, տրական, բացառական, գործիական և ներգոյական։ 30-ական թվականներին սեռական ու հայցական հոլովները վերականգնվեցին որպես ինքուրույն հոլովներ։ Սեռականի և հայցականի ընդունումը հետևանք էր հոլովների որոշման սկզբունքների վերանայման, ըստ որի այս հարցում հոլովական իմաստին ձևի համեմատությամբ որոշակի առաջնություն է տրվում։ Սեռական ու հայցական հոլովների ճանաչման համար հիմք ընդունվեց հատկապես իմաստային հատկանիշը, որով տարբերվում են մյուս հոլովներից։ Անշուշտ, 7 հոլովի տեսության հեղինակներն ու կողմնակիցներն աշխատում էին և աշխատում են նշված երկու հոլովների գոյությունը հիմնավորել նաև ձևի տեսակետից։ Եվ որպես այդպիսի ձևային հատկանիշ ընդունում են սեռական հոլովի համար որոշիչ հոդ չստանալը, ի տարբերություն

տրականի, որը որոշյալ առման դեպքում ստանում է այդպիսի հոդ, իսկ հայցականի համար՝ այն երևույթը, որ ուղիղ խնդիրը անձի առման դեպքում նման է տրականին, իրի առման դեպքում՝ ուղղականին։ Այդ հոլովների գոյության հիմնավորման մեջ նըշվում է նաև նրանց իմաստի դրսևորումը շարահյուսական որոշակի կապակցություններում. այն է՝ պատկանելության իմաստի դրսևորումը՝ գոյականի հետ գործածվելիս և կրող խնդիր դառնալը՝ ներգործական բայի հետ գործածվելիս[6]։

Հոլովների վերաբերյալ վեճը վերջին տարիներին վերսկսվեց, և այժմ շատ մասնագետներ ժամանակակից հայերենում ընդունում են հինգ հոլով։ Պրոֆ. է. Աղայանը, մերժելով հայցական հոլովը, պաշտպանում է սեռական հոլովի գոյությունը, այդպիսով, ընդունելով վեց հոլով[7]։

§ 52. Հոլովների հարցը ճիշտ լուծելու, ինչպես և ամեն մի լուծում ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է ելնել առհասարակ քերականական կարգերի և մասնավորապես հոլովի որոշման գիտական սկզբունքներից։

Հոլովը գոյականի (և գոյականական գործածություն ունեցող բառերի) քերականական այն փոփոխությունն է, որով արտահայտվում են առարկայի (կամ որպես առարկա մտածված հատկանիշի) վերաբերական տարբեր հարաբերություններ՝ ա) առարկայի հարաբերությունն այլ առարկայի նկատմամբ (գրքի թերթերը), բ) առարկայի հարաբերությունը գործողության կամ այլ հատկանիշի նկատմամբ (կարդալ գիրքը, գիրը հետաքրքրական է), գ) առարկայի հարաբերությունը խոսողի նկատմամբ, երբ վերջինս դիմում է նրան (գիրք, շատ խորն ես ու խորհրդավոր)։

Ինչպես երևում է հոլովի բնորոշումից, այն ունի իր ձևային ու իմաստային հատկանիշները։ Հոլովը որոշվում է հոլովական ձևի ու հոլովական իմաստի միասնությամբ։

---

6 Յոթ հոլովի հիմնավորումը տե՛ս հետևյալ ուսումնասիրություններում. Ստ. Մալխասյանց, Հայցական հոլովը աշխարհաբարի մեջ, Թիֆլիս, 1910։ Ա. Ղաբիբյան, Հայոց լեզվի դասագիրք, Երևան, 1934, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, 1954, Մանկավարժական լեզվաբանություն, 1969։ Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի տեսություն, դիրք Ա, 1939, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, 1955, և այլն։

7 Հանգամանալից հիմնավորումը տե՛ս է. Բ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967։

Յուրաքանչյուր լեզվի, այդ թվում բնականաբար նաև հայերենի, հոլովների որոշման հարցում հատուկ կարևորություն ունի հոլովական ձևի և հոլովական իմաստի դերի ու հարաբերության գնահատությունը։ Վերջին շրջանում շատ է խոսվում այն մասին, թե դրանցից ո՛րն է էականը, որոշիչը։ Այսպիսի հարցադրումը ճիշտ չէ, քանի որ այդ երկու հատկանիշներից միայն մեկով հոլով չի որոշվում, ուրեմն երկուսն էլ կարևոր են։ Հոլովների և առհասարակ քերականական կարգերի գիտական գնահատության մեջ հաշվի են առնվում և պետք է հաշվի առնել այս երկու հատկանիշները հավասարապես։ Եթե որևէ լեզվում գոյականը հոլովական ձևեր չունի, ապա միայն իմաստային հիմքով հոլով չի ճանաչվում։ Այդպիսի լեզվում հոլովների հարցն ինքնին վերանում է, չնայած նրանցում կարող են արտահայտվել գործողի, եղողի (ենթակայի), պատկանելության, հանգման և այլ հարաբերություններ, որոնք մի այլ լեզվում արժեքավորվում են որպես գոյություն ունեցող հոլովական ձևերի հոլովական իմաստներ։

Ինչո՞ւ մի լեզվում ընդունվում է երկու հոլով (օրինակ՝ անգլերենում), մյուս լեզվում երեք (օրինակ՝ արաբերենում), այլ լեզուներում՝ 6 (օրինակ՝ ռուսերենում), տասնմեկ հոլով (օրինակ՝ էստոներենում) և այլն։ Եթե մի կողմ թողնենք հոլովաձևերի փոփոխակները (արյամբ և արյունով, անկողնու և անկողնի, տարվա և ընկերոջ և այլն) և վերցնելու լինենք հարացուցային անփոփոխակները, ապա կարելի է ասել՝ որևէ լեզվի հոլովների քանակը չի կարող ավելին լինել նույն լեզվի հոլովական հարացույցի ձևերի քանակից։ Իսկ ավելի ճշգրիտ արտահայտվելու դեպքում պետք է ասել, որ հոլովական հարացուցային ձևերը կամ միավորները տվյալ լեզվի հոլովներն են։ Հարացուցային ձևը մի միավոր է, որը որոշվում է ոչ միայն ձևի, այլև իմաստի հաշվառումով։ Հենց դա է պատճառը, որ, օրինակ, ժամանակակից հայերենի հոլովական բազմազան ձևերը (ի, ու, ոջ, վա, ա, ան, յան, ից, ուց, ով, ը, ում և այլն) մենք միավորում ենք և ստանում սահմանափակ քանակությամբ հոլովներ։ Իմաստի հաշվառումով ու նրա անխուսափելի գնահատման շնորհիվ է, որ իրար հետ մեկ միավորի՝ հոլովի մեջ են դասվում, ասենք, ուց-ը և ից-ը, ով-ը և ը-ն, ի-ն, ու-ն, ոջ-ը, վա-ն, և ոչ թե, օրինակ, ի-ն և ով-ը, ոջ-ը, ից-ը և ում-ը և այլն։ Այսպիսով, հոլովական հարացուցային յուրաքանչյուր միավոր, այսինքն՝ յուրաքանչյուր հոլով որոշվում է հոլովական ձևի և

հոլովական իմաստի միասնությամբ, որոնք երկուսն էլ էական են, կարևոր։ Հոլովի այս երկու հատկանիշներից որևէ մեկի թերագնահատումը կամ անտեսումը տեղիք կտա թյուրիմացություններիւ

§ 53. Ժամանակակից հայերենում գոյականներն ունեն առավելագույնը հինգ հոլովական հարացուցային միավոր՝

1) դպրոց, 2) դպրոցի, 3) դպրոցից, 4) դպրոցով, 5) դպրոցում.

1) ժամանակ, 2) ժամանակի (ժամանակվա), 3) ժամանակից (ժամանակվանից), 4) ժամանակով, 5) ժամանակում.

1) արյուն, 2) արյան, 3) արյունից, 4) արյունով (արյամբ).

1) մայր, 2) մոր, 3) մորից, 4) մորով։

Կա՞ արդյոք հոլովական այլ ձև ժամանակակից հայերենում։ Արդյո՞ք հոլովական միևնույն ձևի՝ որոշ կիրառություններում որոշիչ հոդ ստանալը (որոշյալության դեպքում) և այլ կիրառություններում չստանալը կարելի է համարել հոլովական ձևի տարբերություն։ Հասկանալի է, որ խոսքը վերաբերում է յոթ հոլովի համակարգում սեռականի ու տրականի տարբերակմանը։ Նման երևույթը չի կարելի դիտել որպես հոլովական ձևի տարբերություն։ Նախ, հոդերը հոլովական վերջավորություններ չեն, այլ ուրիշ քերականական կարգի մասնիկներ, որ արտահայտում են որոշակի քերականական իմաստ, բայց ոչ հոլովական։

Քանի որ «Գիրք նվիրեցի մի աշակերտի» և «Գիրք նվիրեցի իմ աշակերտին» կաղապարային օրինակներում ունենք ոչ թե հոլովների, այլ միևնույն հոլովի որոշյալության ու անորոշության հակադրություն, նշանակում է՝ հոդը հոլովակազմիչ արժեք չունի, և նրանով հոլով չի ձևավորվում։ Իսկ այն հանգամանքը, որ բառի միևնույն հոլովաձևը (աշակերտի) իբրև գոյականի վերադիր առհասարակ որոշիչ հոդ չի ստանում (աշակերտի գիրքը), իսկ իբրև բայի լրացում կարող է որոշիչ հոդ ստանալ կամ չստանալ, կապ չունի հոլովի, որպես ձևաբանական կարգի ու նրա տարբերակման հետ։ Դա ավյալ շարահյուսական պաշտոնի յուրահատկություններն է՝ պայմանավորված շարահյուսական կապակցությամբ, խոսքային հանգամանքներով։ Դա պարզ երևում է ուղղական հոլովի կիրառություններում ևս։

Այսպես. ուղղականի երկու կիրառությունները (գոյական որոշիչ և կոչական) որոշիչ հոդ չեն ստանում, ի տարբերություն մյուս կիրառությունների, որոնք կարող են այդպիսի հոդ ստանալ։

Համմտ. Այս շինարարությունը ղեկավարում է ոմն ինժեներ Հակոբյան։

Այս շինարարությունը ղեկավարում է մեր ինժեներ Հակոբյանը։

Ընկե՛ր ինժեներ, Ձեզ հրավիրում են շինարարական տեղամաս։

Ոմն ինժեներ ուզում է ծանոթանալ շինարարությանը։

Մեր ինժեները ուզում է ծանոթանալ շինարարությանը։

Հակոբյանը ինժեներ է։

Հակոբյանը մեր ինժեներն է։

Ձնայած ուղղականի տարբեր պաշտոնների հոդառական օրինաչափ տարբերությանը, այնուամենայնիվ դա հիմք չի տվել և չի տալիս այստեղ տարբերակելու երկու հոլովներ։ Այս կապակցությամբ հիշենք, որ նախագրային հայերենում կոչականը առանձին հոլով էր իր որոշակի ձևավորումով։ Բայց կորցնելով իր ինքնուրույն ձևը, այն չի գիտակցվում իբրև հոլով և որոշիչ հոդ չստանալը, ի տարբերություն ուղղականի այլ կիրառությունների, այստեղ հոլովի ձևային տարբերակման չափանիշ չի հանդիսանում։ Պետք է նշել նաև, որ հոդառության հետ կապված այդ հակադրությունը հատուկ է յոթ հոլովի համակարգի տրականի ոչ բոլոր կիրառություններին։ Այսպես՝ «Երեխան վերադարձավ առանց գրքի», «Նրանք զոհվեցին հանուն մեր մեծ հայրենիքի» և նման կիրառություններում ընդգծված հոլովաձևը որոշիչ հոդ չի ընդունում, թեև համարվում է տրական։ Եթե հոդ չառնելու և առնելու հակադրությունը դիտելու լինենք որպես սեռականի ու տրականի ձևային հատկանիշ, ապա դրանք նշված պատճառով պետք կլինի համարել սեռական, բայց շարահյուսական, կապակցական հատկանիշով դրանք հարում են տրականին։ Այս ամենը նշանակում է, որ իրոք հոդառության յուրահատկությունը չի կարող սեռական ու տրական հոլովների ճանաչման հիմք կամ նրանց ձևային հատկանիշ ծառայել։ Ինչպես երևում է վերը բերված փաստերից, որոշիչ հոդ չստանալը ժամանակակից հայերենում հատուկ է առհասարակ գոյականի վրացում վերադիրներին, անկախ, թե ո՛ր հոլովով են արտահայտված և ի՛նչ պաշտոն են կատարում (որոշիչ, հատկացուցիչ)։

Յոթ հոլովի համակարգի հայցականը, ինչպես հայտնի է, ըստ էության ճանաչված է իմաստային հիմունքով, թեև այդուհանդերձ այդ հոլովն ընդունողները գտնում են, որ այն ունի ձևավորման

յուրահատկություն։ Նկատի է առնվում, որ ուղիղ խնդիրը, որն արտահայտվում է հայցականով, մի դեպքում նման է տրականին, մի այլ դեպքում՝ ուղղականին։ Պետք է նկատի ունենալ, որ այդ իրողությունը վերաբերում է ոչ թե հատկապես հայցականին, այլ նրա միայն մեկ պաշտոնին, իսկ մյուս կիրառությունները՝ տեղի, ժամանակի, չափի պարագաները, չունեն այդ հատկանիշը և միշտ ուղղականաձև են։ Նշանակում է՝ երկակի ձևավորումը ոչ թե հոլովի հատկանիշ է, այլ շարահյուսական մեկ կիրառության՝ ուղիղ խնդրի հատկանիշ։ Այսինքն՝ այստեղ ունենք մի երևույթ, ըստ որի տարբեր հոլովներ կարող են արտահայտել միևնույն պաշտոնը։ Իսկ սա շարահյուսական երևույթ է, ըստ որում՝ ոչ բացառիկ և չի կարելի համարել հոլովի ձևավորման եղանակ։

Այսպիսով, ժամանակակից գրական հայերենի գոյականի հոլովական հարացույցում ունենք հինգ միավոր, ուրեմն և՝ հինգ հոլով, որոնք են՝ ուղղական, տրական, բացառական, գործիական, ներգոյական[8]։

Հոլովական հարացուցային այդ միավորները, ինչպես նշվեց վերը, որոշված են հավասարապես թե՛ ձևի և թե՛ իմաստի հաշվառումով, առանց այդ երկու հատկանիշներից որևէ մեկին գերագնահատություն տալու և մյուսը թերագնահատելու։ Իմաստային հատկանիշի հաշվառման, իմաստային ընդհանրությունների ու հակադրությունների գնահատման շնորհիվ է միայն, որ 18 հոլովական վերջավորությամբ ձևերի առկայության դեպքում ունենում ենք հինգ հարացուցային միավոր։

Իմաստային հատկանիշի այդպիսի ընդհանուր հաշվառումից

---

8 Ժամանակակից հայերենում հինգ հոլովի համակարգի հիմնավորումը տեղ է գտել հետևյալ աշխատություններում. Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն, Վաղարշապատ, 1906, Աշխարհաբարի հոլովները, Վաղարշապատ, 1908, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1931։ Ր. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Երևան, 1967։ Հ. Խ. Բարսեղյան, Մ. Աբեղյանի հինգ հոլովի տեսությունը և նրա հին ու նոր քննադատությունները, Երևան, 1967։ Պ. Շաբաթյանյան, Է. Պիվազյան, Արդի հայերենի հոլովների մասին (ՊԲՀ, 1967, № 4)։ Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումն ու կառուցվածքը, Երևան, 1969։ Ս. Գ. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի քնրականություն, Երևան, 1969։ Մ. Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Երևան, 1970։ Ռ. Ս. Իշխանյան, Արդի հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1971, և այլն։

հետո տեսնենք, թե ինչպես պետք է գնահատել ուղղական ու տրական հոլովների իմաստները։

§ 54. Ժամանակակից լեզվաբանությունը հոլովի իմաստը որոշում է նրա ոչ թե բոլոր կիրառությունների, այլ գլխավոր կիրառությունների հիման վրա։ Եվ քանի որ հոլովը առարկա ցույց տվող (կամ որպես այդպիսին մտածված) բառերի հարաբերություններ է արտահայտում, նրա իմաստային կիրառությունների մեջ գլխավորը պետք է համարել ոչ թե պարագայական կամ հատկանշային կիրառությունները, այլ նրանք, որոնցում նա առարկա է ցույց տալիս (գործող կամ եղող առարկա, գործողության հետ կապված առարկա), առարկայական հարաբերություններ է արտահայտում։ Այս տեսակետից յուրահատուկ է ներգոյականը, որն առհասարակ պարագայական հոլով է։ Նշենք, որ գլխավոր կիրառությունների իմաստը մեծ մասամբ այս կամ այն չափով արտահայտվում է նաև երկրորդական կիրառություններում։ Դա զգալու համար կարելի է համեմատել տարբեր հոլովներով արտահայտված միևնույն պարագան, այդ դեպքում պարզ կդառնա, թե ինչպես յուրաքանչյուր դեպքում ամեն մի հոլով իր յուրահատուկ իմաստն է հաղորդում տվյալ պարագային։ Համմտ. Միտը նստած է տանիքին։ *Միտը մտավ* տանիքը։ *Միտը թռավ* տանիքից։

Անդրադառնալով բուն հարցին, պետք է ասել, որ եթե բացառական, գործիական ու ներգոյական հոլովները մենիմաստ են, ապա ուղղականն ու տրականը բազմիմաստ են։

§ 55. Ուղղականն արտահայտում է այնպիսի տարբեր իմաստներ, ինչպիսիք են՝ գործողություն կատարող առարկան և գործողությունն իր վրա կրող առարկան, ինչպես և այն առարկան (կամ անձը), որին դիմում է խոսողը։ Համմտ. 1. Միտը ծառին ծլվլում է։ 2. Երեխան բռնեց ծիտը։ 3. Աշոտ, ես կսպասեմ քեզ։

Այս օրինաչների ընդգծված բառերը, որոնք ձևով ուղղական են, արտահայտում են այնպիսի տարբեր իմաստներ, որ մեկ հատկանիշով բնորոշել հնարավոր չէ։ Եվ դա հասկանալի է, քանի որ հինգ հոլովի համակարգի ուղղականն իր մեջ ներառել է յոթ հոլովի համակարգի ուղղականի ու հայցականի իմաստները, որին ավելանում է կոչականը։ Այս նշանակում է, որ հոլովական մեկ ձևն արտահայտում է տարբեր գլխավոր իմաստներ։ Մնում է որոշել, թե ինչպե՞ս գնահատենք և անվանենք այդ իմաստները։ Քանի որ դրանք յոթ հոլովի համակարգի ուղղականի ու հայցականի

իմաստներն են, ուստի ուղղականի ձևի մեկ իմաստը կարելի է համարել բուն ուղղական, մյուսը՝ հայցական ուղղական, երրորդը՝ կոչական ուղղական:

§ 56. Տրական հոլովաձևը նույնպես արտահայտում է իրարից տարբեր գլխավոր իմաստներ, որոնք մեկ հատկանիշով հնարավոր չէ բնորոշել: Տրական հոլովի այդ բազմիմաստությունն այն բանի հետևանք է, որ նա ևս իր մեջ պատմականորեն ներառել է հոլովական տարբեր հարաբերություններ, բացի բուն տրականից, նաև սեռականի ու մասամբ հայցականի իմաստները: Այդ պատճառով էլ ունենք ձևով մեկ տրական, որն արտահայտում է երեք տարբեր գլխավոր իմաստներ, որոնք են՝ բուն տրական, սեռական տրական և հայցական տրական:

§ 57. Այսպիսով, քննարկվող երկու հոլովները ձևի և իմաստի տեսակետից ներկայացնում են հետևյալ պատկերը.

1. Ուղղական (մարդ(ը)).

ա) Բուն ուղղական (Մարդը բանական էակ է).

բ) Հայցական ուղղական (Մենք մի մարդ տեսանք).

գ) Կոչական ուղղական (Մա՛րդ, կոչմանդ արժանի պահիր քեզ):

2. Տրական (մարդու(ն)).

ա) Բուն տրական (մոտենալ մի (այն) մարդու(ն)).

բ) Սեռական տրական (մարդու ունեցվածքը, մարդու քայլերը).

գ) Հայցական տրական (հարգել մարդու(ն)):

Այս իմաստների տարբերակների անվանումները գործածել է դեռևս պրոֆ. Մ. Աբեղյանը՝ նշելու համար ուղղականի նշանակությունները: «Ուղղականի հոլովական ձևը բացի իր բուն նշանակությունից գործածվում է նաև կոչական և հայցական հոլովների նշանակությամբ. ուստի պետք է զանազանել՝ ա) բուն կամ անվանական ուղղական, բ) կոչական ուղղական և գ) հայցական ուղղական»[9]: Ժամանակակից հայերենում ընդունելով հինգ հոլով և այդ հիմնավորելով ժամանակակից լեզվաբանական մեթոդներով, պրոֆ. Գ. Ջահուկյանը այդ համակարգի առաջին երկու

9 Մ. Աբեղյան, *Աշխարհաբարի շարահյուսություն*, Վաղարշապատ 1912, էջ 50:

հոլովների համար ճիշտ կերպով ընդունում է դիրքային տարբերակներ: «Սրանցից (հինգ հոլովներից—Ս. Ա.) առաջին երկուսը,— գրում է Գ. Ջահուկյանը,—ըստ ձևաբանական և շարահյուսական շրջապատների տարբերության հանդես են գալիս հինգ դիրքային տարբերակների ձևով՝ «ուղղական», «կոչական», «հայցական», «սեռական», «տրական». սրանցից «ուղղականն» ու «կոչականը» ուղղականի, «սեռականն» ու «տրականը» տրականի ձևաբանա-շարահյուսական դիրքային տարբերակներն են, իսկ «հայցականը» բաշխվում է այդ երկուսի վրա որպես դրանց շարահյուսական տարբերակ»[10]: Պրոֆ. Գ. Ջահուկյանն այդ տարբերակների միջև նշում է շարահյուսական ու ձևաբանական մի շարք տարբերություններ[11]: Կոչական ուղղականը բուն և հայցական ուղղականներից տարբերվում է որոշիչ հոդ չընդունելու հատկանիշով: Ավելացնենք, որ դա նշանակում է՝ կոչական ուղղականը բնորոշվում է որոշյալի և անորոշի կարգ չունենալով: Նկատի ունենալով բուն ուղղականի և հայցական ուղղականի գլխավոր կիրառությունները, դրանց միջև կարելի է նշել հետևյալ տարբերությունը կապակցելիության տեսակետից. բուն ուղղականը ստորոգյալի հետ կապվում է դիմայնության հարաբերությամբ՝ առարկայորեն բացահայտելով ստորոգյալի դեմքը (Մարդը կառուցեց տուն), իսկ հայցական ուղղականը բացառում է դիմայնությունը և բայական ստորոգյալի հետ կապվում է բայական, մասնավորապես (նկատի ունենալով գլխավոր կիրառությունը) խնդրային հարաբերությամբ (Մարդը կառուցեց տուն):

Տրականի սեռական տարբերակն ունի ձևաբանական (բայց ոչ հոլովական) տարբերիչ գիծ: Այն իր տարբեր կիրառություններում, ի հակադրություն բուն և հայցական տրականների, չունի որոշյալի ու անորոշի քերականական կարգ և հոդ չի ստանում: Բուն տրականի և հայցական տրականի միջև կա կապակցելիության որոշակի տարբերություն:

Եթե տրականի ձևը հանդես է գալիս որպես ներգործական բայի սեռային խնդիր, ուրեմն հայցական տրական է (Աշակերտը սիրում է ուսուցչին), մյուս դեպքերում (եթե, իհարկե, սեռական

10 Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 173—176:

11 Հմմտ. Գ. Բ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 173—175:

չէ) տրականի ձևը բուն տրական է (Աշակերտը մոտեցավ ուսուցչին։ Նա գիրքը տվեց ուսուցչին և այլն)։

Այսպիսով՝ հարաբերությունների այն արտահայտությունները, որոնք մի ժամանակ հատուկ են եղել ուղղական, սեռական, տրական, հայցական, կոչական հոլովներին՝ առանձին-առանձին վերցրած. իսկ ժամանակակից հայերենում տեղ են գտել ձևային հատկանիշով ընդհանրացած երկու հոլովաձևերի մեջ, դիտվում են որպես այդ հոլովաձևերի իմաստներ։

Միևնույն հոլովի տարբեր իմաստների որոշումն անհրաժեշտ է տվյալ հոլովի էության գիտական գնահատության տեսակետից, որպես այդ լեզվական ձևերի մեջ պատմականորեն առաջացած և այժմ գոյություն ունեցող քերականական բազմիմաստության ուղղակի արտահայտություն։ Ինչպես ասվեց վերը, իմաստային նշված տարբերակների որոշմանը նպաստում են ձևաբանական և կապակցելիության որոշ հատկանիշներ։

Տեղին ենք համարում զուգահեռ անցկացնել հոլովաձևի քերականական բազմիմաստության և բառի բազմիմաստության միջև։ Հասկանալի է, որ բառի իմաստը բառական հատկանիշ է և ոչ թե շարահյուսական։ Բնականաբար դա վերաբերում է ոչ միայն մենիմաստությանը, այլև բազմիմաստությանը։ Եվ այն հանգամանքը, որ բազմիմաստ բառի տարբեր իմաստները որոշվում են համապատասխան կապակցություններում, բնավ կասկածի տակ չի առնում այն ճշմարտությունը, որ բառիմաստը (նաև բազմիմաստության դեպքում) բառի հատկանիշ է և ուսումնասիրում է բառագիտությունը։

§ 58. Թեև գիտական հարցի լուծման ճշտությունը ամենից առաջ հենց գիտական հիմնավորվածությամբ պետք է որոշել, այնուամենայնիվ այդ հարցին անդրադառնանք նաև մանկավարժական տեսակետից։ Հարցի հիշյալ դրվածքը, այսինքն՝ ձևաբանության մեջ հոլովների ձևերի հետ միասին նաև նրանց նշված իմաստները որոշելը մանկավարժորեն ևս անհրաժեշտ է երկու առումով։ Նախ. ձևաբանության ուսուցումը ինքնանպատակ ձևերի ուսուցում չէ, այլ իմաստակիր ձևերի ուսուցում, հետևապես և եթե մենք նկատի ունենք գիտակցական ուսուցումը, ուրեմն սովորողին պետք է հենց ձևաբանության մեջ գիտակցել տալ ինչ-

պես այլ, այնպես և հոլովական ուղիղ ձևերի իմաստային արժեքը։ Երկրորդ. իմաստային հիշյալ բաժանումները անհրաժեշտ են նաև գրաբարի, ինչպես և այլ լեզուների ուսուցման գործը դյուրացնելու համար։ Հայտնի է, որ ուրիշ լեզու սովորելու հարցում մայրենի լեզվի օրինաչափությունների գիտակցումը կարևոր է այլ լեզվի երևույթները մայրենի լեզվի համապատասխան երևույթների հետ համադրելու համար։ Հոլովների իմաստային հիշյալ բաժանումները, որոնք հոլովական տարբերակի արժեք ունեն, կնպաստեն այլ լեզուների, ինչպես և գրաբարի համապատասխան իմաստներն ունեցող հոլովների յուրացմանը։

ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈԼՈՎՆԵՐԸ

ՈՒՂՂԱԿԱՆ ՀՈԼՈՎ

§ 59. Ուղղական հոլովի ձևային հատկանիշը հոլովական զրո վերջավորությունն է, այսինքն հոլովի ձևային վերջավորություն չունենալը, որով հակադրվում է մյուս բոլոր հոլովներին։ Օրինակ՝ Սեղանի վրա գիրք կա։ Արամն իճժեներ է։ Ուսուցիչ Հակոբյանը հմուտ մասնագետ է։ Սիրում ենք մեր հայրենիքը։ Աշոտն արդեն հաճախում է դպրոց։

Ինչպես երևում է, ուղղականով դրված բառերի մեծ մասն առհասարակ ձևով նման է լինում բառի սկզբնաձևին։ Բայց ինչպես ցույց է տալիս հայրենիքը բառաձևը, ուղղականը կարող է և ստանալ հոդ։ Հոգնակի ուղղականում բառը ևս բնականաբար հոլովական զրո վերջավորությամբ է հանդես գալիս և ունենում է հոգնակիի ձևային վերջավորություն։ Ինչպես՝ Սեղանի վրա գրքեր կան։ Դրանք հետաքրքրական գրքեր են։ Ուսուցիչներ Հակոբյանն ու Արամյանը հմուտ մասնագետներ են։ Ամառը վերանորոգվեցին բոլոր դպրոցները։

Հոգնակի ուղղականի հոդառությունը եզակիի համեմատ ունի որոշ սահմանափակություն. սովորաբար իկ, այք, ք, այլև ակ, եկ, ոկ, ուկ մասնիկներով հոգնակիները որոշիչ հոդ չեն ստանում։ Համմտ. Բակում հավաքված մարդիկ (կանայք) ցրվեցին տները։ Բակում հավաքված երեխաները ցրվեցին տները։

Գրիգորեկ մեզ հրավիրել են տուն։ Գրիգորյանները մեզ հրավիրել են տուն։

Աշտարակցիք *խաղողի հարուստ բերք են հավաքել։* Աշտարակցիները *խաղողի հարուստ բերք են հավաքել։*

Նշված կարգի որոշիչ հոդ չառնելու այս հատկանիշը վերաբերում է նաև տրական հոլովին։

§ 60. Ուղղական հոլովի իմաստը, ինչպես ասվեց վերը, մեկ ընդհանուր հատկանիշով բնորոշել հնարավոր չէ։ Իհարկե, միևնույն հոլովը կարող է արտահայտել մեկից ավելի մասնավոր հարաբերություններ, որոնք միավորվում են մեկ ընդհանուր իմաստի մեջ ու վերջինիս շարահյուսական դրսևորումներն են։ Օրինակ՝ բացառական հոլովը տարբեր մասնավոր հարաբերություններ է ցույց տալիս (անջատման, տեղի, ժամանակի և այլն), սակայն դրանք բոլորը կարելի է բնորոշել մեկ ընդհանուր իմաստային հատկանիշով (առարկայի շարժման, գործողության սկզբնակետի, ելակետի հարաբերություն)։ Ուղղականի իմաստային հարաբերություններն այդ կարգի չեն. այս դեպքում մենք գործ ունենք իմաստային բոլորովին տարբեր, հակադիր հարաբերությունների հետ։

Պրոֆ. Էդ. Աղայանն իր «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» գրքում (էջ 224) ուղղականի իմաստը համարում է բացարձակ՝ նկատի ունենալով նրա բազմիմաստությունը, իմաստային համապարփակությունը։ Հարցին հիմնականում նույն կերպ է մոտենում նաև պրոֆ. Գ. Ջահուկյանը. «Ըրո վերջավորությամբ բնորոշվում է իմաստի բացարձակությունը, սահմանափակությունը կամ իմաստային լիածավալությունը»[12]։ Ընդունելով, որ ուղղական հոլովի իմաստը որոշ առումով կարելի է համարել բացարձակ, այնուամենայնիվ գտնում ենք, որ անհրաժեշտ է բնորոշել այդ բացարձակի մեջ մտնող իմաստները։

Վերապահումն անում ենք այն պատճառով, որ իմաստային բացարձակությունը բազմիմաստության առումով, այնուամենայնիվ, անսահմանափակ չէ, լիածավալության առումով այն անվերապահ կարելի է համարել բառի սկզբնաձևի, բառի որպես բառարանային միավորի վերաբերմամբ, իսկ ուղղականն իր արտահայտած տարբեր հարաբերություններով որոշ չափով մասնավորում և դրանով իսկ սահմանափակում է իր, իրոք, լայն իմաստը։

12 Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, էջ 165։*

Ուղղական հոլովի իմաստները կարելի է որոշել այդ բառաձևի զուգորդելիության (ձևային ու իմաստային) հատկանիշով և, ինչպես ասվեց վերը (§ 57), անվանել բուն ուղղական, հայցական ուղղական և կոչական ուղղական:

ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎ

§ 61. Տրական հոլովը ձևային հատկանիշներով շատ անմիօրինակ է: Գոյականի հոլովումների տարբերությունը երևում է մասնավորապես այս հոլովում:

Եզակի գոյականի տրական հոլովի հիմնական ցուցիչներն են՝ **ի, ու, ան, ոջ, ա, վա, ն**[13]:

Բերենք համապատասխան օրինակներ՝

Անտառ—անտառ-ի, միտք—մտք-ի, առու—առվ-ի,

Ձի—ձի-ու, ամուսին—ամուսն-ու, գինի—գին-ու,

Ձուկ—ձկ-ան, անցում—անցմ-ան,

Ընկեր—ընկեր-ոջ, տեր—տիր-ոջ, կին—կն-ոջ,

Քաջություն—քաջության, շուն—շան,

Օր—օր-վա, ամիս—ամս-վա, տարի—տար-վա,

Մայր—մոր:

Սրանք տրական հոլովի առավել տարածված ձևերն են: Մակավաթիվ բառերի տրականը տարբերվում է նշված օրինաչափությունից և ձևավորվում այլ կերպ: Այսպես՝

Գալուստ—գալստ-յան, հանգիստ—հանգստ-յան,

Աղջիկ—աղջկ-ա,

Սեր—սիր-ո,

Մահ—մահ-վան,

Անուն—անվան,

Դուստր—դստեր:

Սրանք տրականի բուն հոլովական վերջավորություններն են (եզակի թվի անորոշ առման դեպքում): Որոշյալ առման դեպ-

13 *Տրական հոլովի կազմության սույն քննությունը հմմտ. է. Բ. Աղայանի «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» և Գ. Բ. Ջահուկյանի «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» աշխատությունների համապատասխան հատվածների հետ:*

քում այդ ձևերին ավելանում է համապատասխան հոդ. ինչպես՝ անտառին, ձիուն, ձկանը, ընկերոջը և այլն։ Բացառություն է կազմում սեր բառի որոշյալ տրականը, որը կազմվելիս՝ բուն վերջավորության մեջ հնչյունափոխություն է կատարվում (սիրո—սիրուն)։

§ 62. Գոյականի հոգնակի թվի տրականի հիմնական վերջավորությունն է ի, ինչպես՝ անտառների, ձիերի, ձկների, ընկերների, շների, օրերի, մայրերի, աղջիկների, մահերի, անունների, դուստրերի, տեգրերի, սերերի։

Որոշ կարգի բառերի հոգնակի տրականը կազմվում է ց հոլովիչով, որը հանդես է գալիս ուղղականի f-ի փոխարեն, օրինակ՝ Արամենք—Արամենց, Հակոբենք—Հակոբենց, Գրիգորենք—Գրիգորենց, պապոնք—պապոնց և այլն։

Տրական հոլովի կազմության մեջ հատուկ շեղում է մարդ և կին բառերի հոգնակիի ձևը, ուր նույնպես հանդես է գալիս ց-ն՝ մարդիկ—մարդկանց, կանայք—կանանց։ Այստեղ առկա են իկ/անց և այք/անց հերթագայությունները։

§ 63. Հոլովական տվյալ ձևի մասին ավելի ամբողջական պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է իմանալ, թե հոլովական ինչպիսի հիմքեր կան, և որ վերջավորությունը որ հիմքի վրա է դրվում։

Տրական հոլովը կազմվում է ուղղականի ձևից, այսինքն բառի ուղղականի ձևը հանդես է գալիս որպես տրականի հիմք։ Եվ քանի որ եզակի թվի անորոշ առման դեպքում բառի ուղղական հոլովը ձևով նույնն է բառի սկզբնաձևի հետ, ուրեմն՝ կարելի է ասել, որ եզակի տրականի հիմքը բառի ուղիղ ձևն է։

Այսպես, ծառ ձևը ուղղական է, տրականի կազմության դեպքում այն հանդես է գալիս որպես հիմք, վրան ավելացվում է ի վերջավորությունը, և կազմվում ծառի տրականը։ Այսպես են fաղաք-ի, աշակերտ-ի, օր-վա, ժամ-վա, ընկեր-ոջ և այլ ձևեր։

Սակայն ոչ միշտ է, որ տրականը կազմվում է՝ բառի վերջից ավելացվելով վերջավորություն։ Հոլովական ցուցիչը երբեմն հանդես է գալիս բառի մեջ, մասնավորապես վերջին վանկի մեջ՝ ձայնավորի հնչյունափոխության (հերթագայության) միջոցով, ինչպես՝ քաջություն—քաջության, արյուն—արյան, տուն—տան։

Տրականի այս ձևը կազմվում է ուղղականից ու/ա հերթագայությամբ։

Խոսելով ուղղականի ձևի՝ տրականի հիմք դառնալու մասին, պետք է նկատի ունենալ, որ եզակի տրականի համար հիմք է ծառայում եզակի ուղղականը, հոգնակի տրականի համար՝ հոգնակի ուղղականը։ Երկու դեպքում էլ հոդը բացառվում է հիմքից (եթե ուղղականը հոդով է վերցված)։

§ 64. Տրականի ի, ոջ, վա, ան վերջավորությունները դրվում են ուղղականի ձևի վերջից, ըստ որում, այդ ձևը կարող է լինել անհնչյունափոխ (սար-ի, պահարան-ի, ընկեր-ոջ, տալ-ոջ, երեկ-վա, ժամ-վա, թոռ-ան, լեռ-ան և այլն) և հնչյունափոխված։

Տրականի այսպիսի կազմության դեպքում բառի հիմքում կարող են կատարվել հետևյալ հնչյունափոխությունները.

ի>ը—գիրք—գ(ը)րքի, սիրտ—ս(ը)րտի, վիշտ—վ(ը)շտի և այլն

ու>ը—գունդ—գ(ը)նդի, ցուրտ—ց(ը)րտի, դուրս—դ(ը)րսի և այլն

ի>0—հաշիվ—հաշվի, պատիվ—պատվի, հովիվ—հովվի և այլն

ու>0—անցում—անցման, ուսում—ուսման, ցասում—ցասման և այլն

ույ>ը—քույր—ք(ը)րոջ

ե>ի—տեր—տիրոջ

Տարի բառի հոլովական վա վերջավորությունը ավելանում է բառավերջի ի-ի տեղում (տարի—տար-վա), այսինքն՝ հոլովման հիմքում ուղիղ ձևի վերջին ի-ն չի պահպանվում։

§ 65. Ու հոլովական վերջավորության ավելացման դեպքում ի-ով վերջացող բառերի ուղիղ ձևի ի-ն ընկնում է, և որպես հոլովական հիմք հանդես է գալիս բառի սկզբնաձևն առանց ի-ի։ Ինչպես՝ գինի—գինու, գարի—գարու, որդի—որդու և այլն։ Դա չի վերաբերում ի-ով վերջացող միավանկ բառերին, որոնց ի-ն պահպանվում է հոլովական հիմքի մեջ, ինչպես՝ ձի—ձիու։

Յ վերջավորությունը, ինչպես ասվեց վերը, դրվում է ուղիղ ձևի f-ի տեղում, և այդ f-ն, այդպիսով, ընկնում է թեք ձևերում. ինչպես՝ Վարդանանց f—Վարդանանց, Գուրգենենց f—Գուրգենենց, Հուռուց f—Հուռուց, Գոգոնց f—Գոգոնց։

Տրականի համեմատաբար քիչ ձևեր են կազմվում բառամիջի ձայնավորի հերթագայությամբ. այն է՝ այ/ո (մայր/մոր), ու/ա (տուն/տան):

Կան առավել մասնակի ընդգրկում ունեցող երևույթներ, ինչպես՝ դուստր—դստեր, կայսր—կայսեր, *ուր բառի վերջին վանկում արդի վիճակով կա* ր/ե *հերթագայությունը, թեև պատմականորեն երևույթը հակառակն է եղել՝* ե/ր[14]:

Վերջապես, բառավերջի վանկի յուրահատուկ հնչյունափոխությամբ է կազմվում աուն *բառի տրականը՝* ավան (<աուան):

§ 66. Տրական հոլովի իմաստը միասնական բնորոշումով անկարելի է ներկայացնել: Այդ հոլովի տարբեր հարաբերությունները կարելի է ամփոփել երեք կետի մեջ՝ ա) բուն տրական, բ) սեռական տրական, գ) հայցական տրական:

Ուղղական և տրական *տերմինները ստորև գործածում ենք այդ հոլովների ընդհանուր անվանումների համար, իսկ երբ պետք է հատուկ նշել դրանց տարբեր իմաստները, գործածում ենք վերջիններիս անունները՝* բուն ուղղական, հայցական ուղղական, բուն տրական, սեռական տրական *և այլն,*

§ 67. Սեռական տրականը նույն հոլովի մյուս երկու տարբերակներին հակադրվում է իր ձևային (իհարկե, ոչ հոլովական) հատկանիշով ու գուգորդելիությամբ: Տրական հոլովի սեռական տարբերակի ձևային հատկանիշը որոշիչ հոդ, հետևապես և որոշյալի քերականական կարգ չունենալն է:

Տրական հոլովի այս կիրառության յուրահատկությունն այն է, որ նա կապվում է գոյականի (և գոյականական գործածություն ունեցող բառերի) հոլովաձևի հետ. ինչպես՝ Արամի գիրքը, Արամի ամեն ինչը, Արամի փոքրը (փոքր երեխան), Արամի գրելը, Արամի գրելուց հետո, Արամի գրելուն պես, Արամի գրածը (այլև՝ Արամի գրած նամակը, ուր գրած-ը, հասկանալի է, հոլովաձև չէ):

§ 68. Բուն տրականը (ինչպես և հայցական տրականը) նախորդ կիրառությունից տարբերվում է հոդառությամբ, հետևապես և որոշյալի քերականական կարգ ունենալով, այլև բայի նկատ-

[14] *Այս բառերի նախնական ուղիղ ձևը եղել է* դստեր, կայսեր, *որոնցում* ե>ր *հնչյունափոխությամբ առաջացել են* դուստր, կայսր *ձևերը, որոնք գիտակցվել և գիտակցվում են որպես ուղիղ ձև, իսկ նախկին ուղիղ ձևերը՝ թեք ձևեր:*

մամբ ունեցած իր կախման հարաբերությամբ։ Եթե սեռական տրականը որոշիչ հոդ չի ընդունում, ապա բուն տրականը (և հայցականը) կարող են ընդունել։ Օրինակ՝ Մոտեցանք մի շենքի (բայց՝ այն շենքին)։ Հայացքը հառել էր մի կետի (բայց՝ այն կետին)։ Մի մայիսի (բայց՝ անցյալ տարվա մայիսին) մենք բարձրացանք մեր սարերը։

Ի տարբերություն սեռական տրականի, բուն տրականի համար բնորոշ է բայի նկատմամբ կախման հարաբերություն արտահայտելը։ Թեև սեռական տրականը ևս երբեմն հանդես է գալիս բայի հետ, բայց տվյալ դեպքում կարևորը այդ բառի բայ լինելը չէ, այլ հոլովված բառ լինելը, այսինքն այն, ինչով հեռանում է բայից և մոտենում գոյականին ու հոլովվում (բացառություն է հարակատար դերբայը. տե՛ս վերը)։

Հենց դա է պատճառը, որ բուն սեռականը բայի դիմավորձևերի վրա չի դրվում, մինչդեռ հենց այս կիրառությունը ամենաբնորոշն է բուն տրականի համար։

§ 69. Հայցական տրականը բուն տրականից տարբերվում է զուգորդելիությամբ։ Այն ևս սեռականին հակադրվում է հոդառության հատկանիշով, հետևապես և որոշյալի քերականական կարգ ունենալով։ Հայցական տրականը իր արտահայտած քերականական իմաստով ու զուգորդելիությամբ նման է հայցականուղղականին և հակադիր է բուն ուղղականին։ Օրինակ՝ խնամել հիվանդին, սիրել մարդկանց, հարգել մեծերին։ Ինչպես երևում է, տրականի այս տարբերակը կախման հարաբերությամբ կապվում է ներգործական սեռի բայերի հետ և ցույց է տալիս կրողառարկա։

ԲԱՑԱՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ

§ 70. Բացառական հոլովը ձևավորվում է ից, ուց վերջավորություններով, ինչպես՝ աճտառից, fարից, տարվանից (անցյալ տարվանից), ընկերոջից, տնից, fաչուրյունից, աճունից, ձիուց, գիճուց և այլն։

Ինչպես երևում է, տրական հոլովի բաղմաձևության դիմաց բացառականում առկա է միայն երկու ձև, այն էլ բաղաձայն բաղադրիչի ընդհանրությամբ։

§ 71. Բացառական հոլովը կազմվում է երկու հիմքով. որպես հիմք են հանդես գալիս ուղղականի ու տրականի ձևերը:

Ուղղականից կազմվում է բառերի ճնշող մեծամասնության բացառականը: Բերենք տրականում տարբեր վերջավորություններ ունեցող բառերի բացառականի օրինակները, ուր երևում է քերականական ձևերի միասնականացման միտումն այդ հոլովում. **ֆաղաֆից, ճայոտարարությունից, կայսրից, անունից, օրից** (կա նաև՝ **օրվանից**), **տալից** (կա նաև՝ **տալոջից**, որ գրքային է):

Մի շարք դեպքերում բացառականի համար իբրև հիմք ծառայում է տրականի ձևը, ինչպես՝ **ընկերոջից** (հազվադեպ գործածվում է նաև **ընկերից** ձևը), **մորից, աղջկանից**: Եթե տրականի ձևը վերջանում է **ա** ձայնավորով (**աղջկա, վաղվա, տարվա**), ապա բացառականի կազմության մեջ հիմքի և վերջավորության միջև հանդես է գալիս **ն** ներույթը, ինչպես՝ **աղջկանից, վաղվանից, տարվանից**:

Ինչ վերաբերում է **ձիուց, գինուց** և նման բառերի բացառականին, ապա ըստ ձևի կարող է այդ բացառականը համարվել կազմված թե՛ տրականից՝ **ց**-ի հավելումով (**ձիու-ց, գինու-ց**) և թե՛ բառի ուղիղ ձևից (բազմավանկ բառերի վերջին ի ձայնավորի սղումով)՝ **ուց** վերջավորության հավելումով: Սակայն ժամանակակից հայերենում հոլովիչի ըմբռնումը մթագնված է (բացի տրականի ձևից), ուստի ավելի ճիշտ է դրանք վերցնել և սովորաբար վերցվում են միայն իբրև մեկ վերջավորություն: Այսպիսի մոտեցման ճշտությունն է հաստատում նաև այն իրողությունը, որ տրականում տարբեր հոլովման ենթարկվող բառեր բացառականում ստանում են **ից** վերջավորությունը: Դա նշանակում է, որ բացառականի **ից**-ը թեև պատմականորեն **ի**-ի և **ց**-ի միացումից է ստացվել, բայց ժամանակակից հայերենում այլևս չի ըմբռնվում որպես այդպիսին, այլ մեկ միասնական վերջավորության արժեք է ստացել:

Այս տեսակետից կարևոր է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ բացառականի ու տրականի վերջավորության ձայնավոր բաղադրիչը կարող է տարբեր լինել: Օրինակ՝ **սիրո–սիրուց, տարի–տարվա**, բայց՝ **տարուց**, այլև՝ **տարվանից**: Հարկե, **տարվանից**-ը **տարվա** տրականից է կազմվել, իսկ **տարուց**-ը՝ **տարու**, բայց այս վերջինն այժմ արդեն չի գործածվում գրական հայերե-

նում, մինչդեռ տարուց բացառականը շատ սովորական է և որոշ կիրառություններում նույնիսկ միակ ձևը (հինգ տարվա աշխատանք, բայց՝ հինգ տարուց հետո)։ Այսպիսի փաստերը ևս ցույց են տալիս ից, ուց մասնիկների բաղադրիչների միասնական լինելը։

§ 72. Հոգնակի բացառականը կազմվում է միայն ից վերջավորությամբ։

Ուղղականի հիմքը հոգնակի բացառականի կազմության մեջ ավելի շատ է հանդես գալիս, քան եզակիի կազմության մեջ։ Համմտ. հորից, բայց՝ հայրերից. եղբորից, բայց՝ եղբայրներից. քրոջից, բայց՝ քույրերից. ընկերոջից, բայց՝ ընկերներից։ Այս երևույթի պատճառն այն է, որ հոգնակի հոլովաձևը սովորաբար կազմվում է ոչ թե նույն հոլովի եզակիից, այլ հոգնակի ուղղականից։ Հոգնակի հոլովաձևերի այսպիսի կազմության հետևանքով է նաև, որ ի-ով վերջացող բառերի եզակի թվի հոլովման ուղիղ ձևի ի-ի անկում կամ փոփոխություն տեղի չի ունենում. համմտ. ապակի–ապակու, բայց՝ ապակիներ–ապակիներից, գինի–գինու, բայց՝ գինիներ–գինիներից, գոտի–գոտու, բայց՝ գոտիներ–գոտիներից։

Միայն ց հոլովման պատկանող բառերի, այլև կանայք, մարդիկ հոգնակիների բացառականն է, որ կազմվում է տրական հիմքով. ինչպես՝ կանայք–կանանց–կանանցից, Գրիգորենք–Գրիգորենց–Գրիգորենցից, պապոնք–պապոնց–պապոնցից և այլն։

§ 73. Բացառական հոլովի իմաստը ավելի որոշակի է ու միասնական։ Այն արտահայտում է սկզբնակետի, ելակետի իմաստ, որը կարող է մասնավորել առարկայի, տեղի, ժամանակի նկատմամբ։ Օրինակ՝ Տետրից մի թուղթ պոկեցի։ Վերադարձավ երևանից։ Արձակուրդն սկսվում է հուլիսի մեկից և այլն։ Այս բոլոր դեպքերում բացառականով դրված բառի ցույց տված առարկան դիտվում է որպես շարժման, գործողության, անջատման սկզբնակետ։

ԳՈՐԾԻԱԿԱՆ ՀՈԼՈՎ

§ 74. Եզակի գործիականն ունի երկու վերջավորություն՝ ով և ը։ Ով վերջավորություն ստանում է բառերի ճնշող մեծամասնությունը. ֆաղաֆ–ով, դաշտ–ով, ձի–ով, ձեռ–ով, ապակի–ով (կամ ապակով), մարդ–ով, ամս–ով, տար–ով, տիրոջ–ով և այլն։

Բ-ով կարող է կազմվել ներքին ա հոլովման պատկանող այն բառերի գործիականը, որոնք ուղղականում վերջանում են յուն-ով, ինչպես՝ բաջություն-բաջությամբ, խաղաղություն-խաղաղությամբ, խստություն-խստությամբ, արյուն-արյամբ *և այլն։*

Ինչպես հայտնի է, գործիական հոլովում կատարվում է ն>մ հնչյունափոխություն. տրականի ձևի վերջին առաջնալեզվային ն-ն, դնկնելով բ շրթնայինի մոտ, առնմանությամբ դառնում է շրթնային մ։

§ 75. Գործիական հոլովը կազմվում է տարբեր հիմքերով.

1. Այն մեծ մասամբ կազմվում է ուղղականի հիմքով. բսա որում այդ դեպքում կարող է լինել անհնչյունափոխ, ինչպես՝ ձեռ-ձեռով, վեճ-վեճով, մատիտ-մատիտով, վարիչ-վարիչով, կախիչ-կախիչով, տեատր-տեատրով, պատուհան-պատուհանով, մարդ-մարդով *և այլն, և հնչյունափոխված, ինչպես՝* վիշտ-վշտով, գիրք-գրքով, թիվ-թվով, տուն-տնով, դուռ-դռնով, անկողին-անկողնով։

Հնչյունափոխության տեսակետից կան տատանվող հիմքեր, և մեր լեզվի արդի շրջանում կարելի է գործածել մի շարք բառերի թե՛ անհնչյունափոխ, թե՛ հնչյունափոխված ձևերը. ինչպես՝ գրիչ-գրիչով/գրչով, գործիչ-գործիչով/գործչով, կաղին-կաղինով/կաղնով, գինի-գինով/գինով *և այլն։*

2. Տրականի հիմքով է կազմվում հետևյալ բառերի գործիականը.

ա) Ոչ հոլովման պատկանող բառեր՝ ֆույր (ֆրոչով), տեր (տիրոչով) *և այլն։ Կան նաև՝* ընկեր-ընկերով, տալ-տալով։

բ) Ո հոլովման ենթարկվող բառերը. ինչպես՝ հայր-հոր-հորով, մայր-մոր-մորով, եղբայր-եղբոր-եղբորով *և այլն։*

գ) Ա. հոլովման պատկանող շատ գոյականներ, երբ ունենում են բ հոլովական վերջավորությունը, այսինքն, երբ յուն-ով վերջացող բառերը ենթարկվում են ա ներքին թեքման։ Ինչպես՝ հերոսություն-հերոսության-հերոսությամբ, համեստություն-համեստության-համեստությամբ, գիտություն-գիտության-գիտությամբ, արյուն-արյան-արյամբ *և այլն։*

Գ կետում նշված բառերի գործիականը երբեմն կազմվում է ուղղականի հիմքով, և այդ դեպքում գործածվում է ով վերջավորությունը, ինչպես՝ հերոսությունով, համեստությունով, արյունով *և այլն։*

§ 76. Հոգնակի գործիականը կազմվում է միայն ով վերջավորությամբ. ինչպես՝ fարեռով, եղբայրներով, տարիներով, ապակիներով, մարդկանցով, Գրիգորենցով: Այստեղ ևս հանդես են գալիս երկու հիմքերը՝ ուղղական և տրական, ըստ որում՝ օրինաչափորեն հոգնակի բացառականի նման (տե՛ս § 72). այսինքն՝ ց հոլովման դեպքում հանդես է գալիս տրական հիմքը, իսկ մյուս բոլոր դեպքերում հանդես է գալիս ուղղականը, որպես հիմք. ինչպես՝ fաղաfներով, հայելիներով, ժամանակներով, ամիսներով, հայրերով, մայրերով, հաջողություններով, տներով, դուստրերով, տիկիններով, fույրերով, աղջիկներով և այլն. բայց՝ Աբամենցով, Վարդանանցով, պապոնցով և այլն: Նշենք, որ ց հոլովման այս կարգի բառերի գործիականը, մասամբ և բացառականը շատ քիչ են գործածվում, և քանի որ ձևով նույնն է հատկացական սեռական-տրականի հետ, վերջնիս իմաստն էլ զգալի է այդ ձևերի մեջ:

§ 77. Գործիական հոլովի հիմնական իմաստը գործողության միջոց ցույց տալն է: Օրինակ՝ Նրանք հնձում են կոմբայնով: Նա մեկնեց ինfնաթիռով:

Միջոցի իմաստը ավելի ակնհայտ է գործիական հոլովի հատկապես խնդրային կիրառության դեպքում (միջոցի խնդիր). բայց հոլովական այդ իմաստը թույլ չափով առկա է նրա նաև այլ կիրառություններում:

ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎ

§ 78. Ներգոյական հոլովը կազմվում է ում վերջավորությամբ: Օրինակ՝ fաղաfում, սենյակում, փչակում, աշխատությունում, հայտարարությունում, օրում, շաբաթում, տարում, հայելում և այլն:

§ 79. Եզակի ներգոյականը սովորաբար կազմվում է ուղղական հիմքով:

Ներգոյական հոլովի հիմքի մեջ սովորաբար տեղի են ունենում այնպիսի փոփոխություններ, ինչպիսիք որ գործիականի հիմքի մեջ (տե՛ս § 75): Կան մասնակի տարբերություններ. ներգոյականում հնչյունափոխություն համեմատաբար շատ է կատարվում: Այսպես, գործիականի ոսկիով և ոսկով ձևերի դիմաց

Ներգոյականում ունենք միայն ոսկում, գինիով *և* գինով *ձևերի դիմաց՝ միայն* գինում:

Եղակի թվում որական հիմքով սովորաբար ներգոյական չի կազմվում: Այն բառերը, որոնց ներգոյականը սպասվում է, որ կազմվեր որական հիմքով, սովորաբար ներգոյական չունեն: Այդպիսի բառեր են. հայր, մայր, հույր, ընկեր *և այլն, որոնց ներգոյականը գործածական չէ:*

§ 80. Հոգնակի ներգոյականը ևս կազմվում է ում վերջավորությամբ, որ դրվում է ուղղականի ձևի վրա, ինչպես՝ բաղաքներում, սենյակներում, աշխատություններում, հայտարարություններում, հայելիներում *և այլն: Յ հոլովման պատկանող գոյականների, որպես անձ ցույց տվող բառերի, ներգոյականը սովորաբար չի գործածվում:*

§ 81. Ներգոյական հոլովը արտահայտում է տարածական ու ժամանակային սահմանափակում, տարածական ու ժամանակային սահմաններ, որոնց մեջ կատարվում է գործողությունը, եղելությունը, կա առարկա: Օրինակ՝ երեխաները խաղում են բակում: *Երեք ժամում օդանավը հասավ Երևան: Նրա* գրադարանում *հետաքրքրական շատ գրքեր կան:*

§ 82. Ի տարբերություն մյուս հոլովների, ներգոյական հոլովն ունի կազմության զգալի սահմանափակություն: Կան մեծ թվով գոյականներ, որոնք ներգոյական չունեն կամ որոնց ներգոյականը սովորական չէ ու չի գործածվում:

Այդպիսի բառեր են՝

ա) Անձնանունները՝ Գրիգոր, Հակոբ, Արամ, Աստղիկ, Հռիփսիմե, ուսուցիչ, ճարտարապետ, դիրեկտոր, գյուղացի, *այդ թվում նաև* ո, ոչ, ց *հոլովումներին պատկանող բառերը, ինչպես՝* հայր, մայր, հույր, տեր, ընկեր, պապոճ *և այլն:*

բ) Այլ բառեր, որոնք տեղի գաղափար չեն արտահայտում, նրանց ցույց տված առարկաները չեն գիտակցվում իբրև տեղ, որի սահմաններում կատարվում է գործողություն, կա առարկա: Օրինակ՝ ասեղ, մեխ, սլաք, դռոչ, ուսելի *և այլն:*

գ) Վերացական գոյականների մեծ մասը. ինչպես՝ սպիտակություն, կարմրություն, լավություն, մեծաճոգություն, բարեկամություն, եղբայրություն, թշնամություն, հանդիսավորություն *և այլն:*

դ) Ում–ով վերջացող բայանունները, որոնք, իհարկե, նույնպես վերացական գոյականներ են։

ե) Ժամանակ ցույց տվող մի շարք բառեր, ինչպես՝ այսօր, երեկ, կեսօր, առավոտ, ցերեկ, գիշեր, կեսգիշեր, գարուն, ամառ, աշուն, ձմեռ, հունվար, փետրվար, մարտ, ապրիլ, մայիս, երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի և այլն։

Շատ դեպքերում ներգոյական հոլով չունեցող բառերի համապատասխան քերականական իմաստն արտահայտվում է նախդրագրական եղանակով՝ հոլովվող գոյականի տրականի ու մեջ բառի կապակցությամբ։ Ինչպես՝ Հակոբի մեջ, աշակերտի մեջ, մարդու մեջ, բոջ մեջ, տերևի մեջ։ Դա հատկապես վերաբերում է ա, բ, գ, դ վեհերում նշված բառերին, իսկ ե վեհի բառերի մեծ մասին հատուկ չէ մեջ կապի հետ կապակցվելը։

ՀՈԼՈՎԱԿԱՆ ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵԶԱԿԻ ՈՒ ՀՈԳՆԱԿԻ ՁԵՎԵՐԻ ՄԻՋԵՎ

§ 83. Սովորաբար գոյականի եզակի ու հոգնակի հոլովաձևերի միջև տարբերությունը լինում է քերականական թվի հարցում, իսկ բուն հոլովական տեսակետից դրանք համապատասխանում են իրար։ Համմ. գիրք և գրքեր, գրքի և գրքերի, գրքից և գրքերից, գրքով և գրքերով, գրքում և գրքերում։ Ինչպես երևում է, եզակի ու հոգնակի ձևեր ունեն գիրք բառի բոլոր հոլովները, և յուրաքանչյուր հոլովի եզակի ու հոգնակի ձևերը նման են իրենց արտահայտած հոլովական հարաբերությամբ։ Տարբերությունը նըշված դուլգերի թվի մեջ է։

Սակայն ոչ միշտ է, որ եզակի ու հոգնակի հոլովաձևերի միջև լինում է նաև հոլովական այսպիսի համապատասխանություն։ Այդ ձևերի միջև լինում են նաև հոլովական որոշ տարբերություններ։

§ 84. Մի շարք բառեր եզակի ներգոյական չունեն, բայց հոգնակի ներգոյական ունեն։ Օրինակ՝ առաջ, տուն, յեռ և այլն, այլև ում–ով վերջացող գոյականների մի զգալի մասը. ինչպես՝ մրցում, շարժում, տատանում, սպասում, բեկում և այլն։ Ունենք՝ առաջներում, տներում, յեռներում, բայց չունենք առաջում, տնում, յեռում։

Առաջներում ներգոյականի իմաստը եզակի թվում արտահայտվում է ուղղականով, իսկ տներում ներգոյականի համապատասխան եզակի իմաստն արտահայտվում է կամ տրականով, կամ տրականի ու մեջ կապի կապակցությամբ։

Համմտ. Առաջներում բարքերն այլ են եղել։

Առաջ բարքերն այլ են եղել։

Այժմ գյուղական տներում բոլոր հարմարությունները կան։

Այժմ գյուղացու տանը (տան մեջ) բոլոր հարմարությունները կան։

Հանգստյան տներում։

Հանգստյան տանը։

Այդպես են նաև տուն բաղադրիչով վերջացող բարդ բառերը։ *Համմտ.* մանկատներում–մանկատանը, դեղատներում–դեղատանը, ծննդատներում–ծննդատանը, ցախատներում–ցախատանը և այլն։

Միևնույն հոլովական իմաստն առաջ բառի եզակի ու հոգնակի թվերի տարբեր հոլովներում վերջնականապես կայունանալու և այդ հոլովաձևերը նշված իմաստն արտահայտող միակ միջոցները դառնալու հարցում որոշ դեր կատարում է այն երևույթը, որ առաջ բառը գոյականից վերածվում է մակբայի (այլև կապի)։ Այժմ արդեն սահմանափակվում է առաջ բառի մյուս հոլովաձևերի գործածությունը (առաջի, առաջից, առաջով, առաջներից(ս), առաջներով(ս) և այլն), մինչդեռ առաջներում–ը վերոհիշյալ իմաստի համար շատ սովորական է։ Այնուամենայնիվ, նշված յուրահատկությունը ոչ թե առաջ բառի՝ մակբայի վերածվելու հետևանք է, այլ մի երևույթ, որ գալիս է նրա գոյականական վիճակից, այլապես այդ իմաստի համար կարող էր կայունանալ եզակի ներգոյականը (*Համմտ.* ճնում, անցյալում)։ Մակբայի վերածման ընթացքում նշված տարբեր ձևերի մեջ պարզապես կայունանում է այն իմաստը, ինչ որ նրանցում եղել է և կա գոյականական վիճակում։

Ինչ վերաբերում է ում-ով վերջացող բառերի եզակի թվում ներգոյական չունենալուն, իսկ հոգնակի թվում ունենալուն, ապա այս հարցում դեր կատարում է բառերի ձևային հատկանիշը։ Քանի որ այդ բառերը վերջանում են ում-ով, ապա ներգոյականի ում վերջավորության հավելումով կստեղծվեր միևնույն հնչյու-

նախմբի կողք-կողքի կուտակում (ասենք՝ մրցումում, տատանումում*), որպիսի միօրինակ հնչյունական կուտակումներից լեզուն խուսափում է (համմտ. հապլոլոգիայի երևույթը)։ Մինչդեռ հոգնակի թվում այդպիսի կուտակում չի առաջանում, քանի որ երկու ում հնչյունախմբերի միջև հանդես է գալիս ներ հոգնակերտ մասնիկը. ինչպես՝* մրցումներում, շարժումներում, տատանումներում, սպասումներում *և այլն։ Այդ պատճառով նշված բառերը եզակի թվում ներգոյական չունեն, և անհրաժեշտության դեպքում այդ հոլովի իմաստն արտահայտվում է նկարագրական եղանակով. ինչպես՝* մրցման մեջ, շարժման մեջ *և այլն։*

§ 85. 2. Եզակի ներգոյականին երբեմն համապատասխանում է հոգնակի տրականը։ Համմտ. վերջին տարում*—վերջին* տարիներին*, վերջին* ամսում *—վերջին* ամիսներին*։*

§ 86. 3. Եզակի ուղղականին երբեմն կարող է համապատասխանել հոգնակի տրականը։ Համմտ. Անցյալ տարի*—անցյալ* տարիներին*, նախորդ* օրը*—նախորդ* օրերին*, տոն* օրը*—տոն* օրերին*, երկուշաբթի* օրը*—երկուշաբթի* օրերին *և այլն։*

ՀՈԼՈՎՄԱՆ ՏԻՊԵՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 87. Հոլովման տիպը որոշվում է բառի հոլովական փոփոխության ձևային հատկանիշով, այսինքն՝ ըստ այն բանի, թե հոլովումը ինչպիսի վերջավորությամբ է կատարվում։ Ժամանակակից հայերենում տարբեր բառախմբերի հոլովման ձևային հատկանիշը չի ընդգրկում բոլոր հոլովները և ոչ էլ հոլովների մեծ մասը։

Ձևային տարբերությունների տեսակետից տարբեր հոլովներ տարբեր վիճակ են ներկայացնում։ Այսպես, ժամանակակից հայերենի բոլոր բառերի ուղղական և ներգոյական հոլովներն ունեն մեկական ձև (ուղղականը՝ զրո վերջավորություն, իսկ ներգոյականը՝ ում*), բացառականը և գործիականը՝ երկուական վերջավորություններ (բացառականը՝* ից *և* ուց*, որոնց մեջ* ց*-ն ընդհանուր է, գործիականը՝* ով *և* ը*), տրականը՝ 17 վերջավորություն (տե՛ս § 61)։*

Տարբեր հոլովների ձևերի անհավասար վիճակը ցույց տանք

մի քանի օրինակով։ Ահա տարբեր հոլովումներին պատկանող մի քանի բառերի հոլովական վերջավորությունների պատկերը.

դպրոց, մարդ, տարի, մայր, սյուն, արյուն, հույր, գարուն, պապոնճ

Ուղղ. 0

Տ. ի, ու, վա, ո, ա, ան, ոջ, ց

Բ. ից, ուց

Գ. ով, բ

Ն. ում

Այս պատկերից ևս երևում է, որ ժամանակակից հայերենում կան հոլովման տիպերի որոշ արտահայտություններ, որոնք հանդես են գալիս մասնավորապես տրական, մասամբ և բացառական ու գործիական հոլովներում։

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ, ԻՄԱՍՏԱՅԻՆ ՈՒ ՁԵՎԱՅԻՆ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

§ 88. Բառերի՝ այս կամ այն հոլովման պատկանելը պատահական չէ. այդ երևույթը հաճախ ունի իր ձևային կամ իմաստային հիմունքը։ Այսպես՝ խաղաղություն, ուրախություն բառերը պատկանում են ա հոլովման իրենց ձևային հատկանիշի հիման վրա (վերջանում են ություն ածանցով. և առհասարակ ձևային այդ հատկանիշն ունեցող բոլոր բառերը պատկանում են ա հոլովման)։ Իսկ, ասենք, օր, տարի, ժամ բառերի վա հոլովման պատկանելը բացատրվում է այդ բառերի՝ ժամանակի իմաստ ունենալով։

Ըստ այդմ, ժամանակակից հայերենում կան իմաստային ու ձևային հոլովումներ։

Ձևային հոլովումներն են՝ **ա, ան, ու, ց,** *իմաստային հոլովումներն են՝* **ո, ոջ, վա**։

§ 89. Պետք է նկատի ունենալ, սակայն, որ այս բաժանումը բացարձակ չէ։ Ձևային կամ իմաստային տվյալ հատկանիշն ունեցող ոչ բոլոր բառերն են, որ կարող են ենթարկվել տվյալ հոլովման, և երբեմն այս կամ այն հոլովման մեջ մտնում են որոշ բառեր, որոնք չունեն այդ հոլովման պատկանող բառերին բնորոշ հատկանիշը։

Այսպես, ա հոլովման պատկանող բառերն ունեն ձևային որոշակի հատկանիշ, բացի **տուն, շուն** *բառերից, թեև սրանք ևս ենթարկվում են ա հոլովման։ Այս և որոշ այլ մասնակի երևույթ-*

ներ ունեն պատմական հիմք։ Վա *հոլովման պատկանում են ժամանակ ցույց տվող բառեր* (տարի–տարվա, շարաթ–շաբաթվա, or–orվա *և այլն), բայց ոչ բոլորը* (վայրկյան–վայրկյանի, դար–դարի)։ Ոջ *հոլովման պատկանում են անձ ցույց տվող որոշ գոյականներ (ինչպես՝* ընկեր–ընկերոջ, fույr–frոջ), *բայց այդ նույն կարգի այլ անձնանուններ այդ նույն հոլովման չեն պատկանում (ինչպես՝* բաrեկամ–բաrեկամի, եղբայr–եղբոr *և այլն)։*

Որոշ յուրահատկություն ունի ց *հոլովումը, որը ձևային հատկանիշի հետ միասին (այդ բառերը վերջանում են* անք, ենք, ոնք, ունք *մասնիկներով) ունի նաև իմաստային յուրահատկություն (անձ են ցույց տալիս)։ Կարծում ենք, այնուամենայնիվ, առաջնությունը պատկանում է ձևին. եթե անձ ցույց տվող բառերի այդ յուրահատուկ հոգնակիության իմաստը արտահայտվելու լիներ այլ մասնիկով, չպետք էր սպասել, թե այդպիսի բառերը կպատկանեին* ց *հոլովման։ Վերջապես, այդ ձևն ունեցող որոշ բառեր (իմոնք, քոնոնք) կարող են ցույց չտալ ոչ միայն անձ, այլև իր, բայց, միևնույն է, սրանք ևս պատկանում են* ց *հոլովման։*

Վերոհիշյալ ու այլ մասնակի վերապահումներով հանդերձ, նշված հոլովումների՝ իմաստային ու ձևային հիմունքով դասակարգումը անառարկելի է։

§ 90. Մի շարք բառեր հանդես են գալիս տարբեր հատկանիշներով և համապատասխանաբար պատկանում են տարբեր հոլովումների։ Այսպես՝ ճաշ *բառը ժամանակի իմաստով* վա *հոլովմամբ է հոլովվում* (ճաշվա), *իսկ «կերակուր» իմաստով՝* ի *հոլովմամբ* (ճաշի)։

Օրինակ՝ Ճաշվա *շոգը նեղում էր (ԴԴ, Վարդանանք, 2)։ Օրվա ընթացքում նրա համար ամենից ծանր րոպեներն էին առավոտն ու* ճաշվա *երեքը (ԱԲ, Իվան բեյը)։ Սկսեց իր ձեռքով հավաքել* ճաշի *պարագաները (ՆԴ, Պայքար)։ Հասանք քահանայի տունը, ուր* ճաշի *սեղանը պատրաստած՝ սպասում էին մեզ (Մուր., Առաքյալը)։*

Առաջ *բառը ժամանակի իմաստով* վա *հոլովման է պատկանում* (առաջվա), *իսկ տեղի իմաստով՝* ի *հոլովման* (առաջի)։

Օրինակ՝ Խոսում էին հողի մասին, գանգատվում էին, որ հողը առաջվա *բերքը չի տալիս (ԱԲ, Խոնարհ աղջիկը)։ Նստում էր* առաջվա *տեղը, վառարանի կողքին (ԱԲ, Իվան բեյը)։ Բայց էլ պառավ չկար, որ մոտենար նրան և ասեր* առաջվա *պես (ԱԲ, Իվան բեյը)։*

Վեր կալավ ծանր գավաթն առաջի (ՀԹ, 2)։ Բայց դռան առաջի խոտերը վկայում էին, որ այլ էր պատճառը (ԱԲ, Կյորես)։

Ուշագրավ է տարի բառը, որ որպես ժամանակի անուն, ենթարկվում է վա հոլովման, բայց որպես ի–ով վերջացող բառ, երբեմն տրականում ստանում է ու (որն այլևս օրինաչափական չէ), բացառականում՝ ուց (տարու, տարուց) և այլն։

Օրինակ՝ Տարվա այդ ժամանակ հազվագյուտ էր թարմ միրգը (ԱԲ, Խ. Աբովյան)։ Այդ վեց տարվա ընթացքում հայ ուսուցչի անհաստատ վիճակը Թիֆլիսից ինձ դարձյալ գավառներ էր նետել (ՆԴ, Տանտիրոջս աղջիկը)։

Մինչև այստեղ... նոր տարու օրն եմ գրել (ՀԹ, Նամականեքից)։ Յանկանում էին նոր տարու հետ և նոր բախտավորություններ (Ր, Սամվել)։

Հետաքրքրական է, թե տարի բառի երկակի հոլովման նշված յուրահատկությունն ինչպես է արտահայտվում բացառական հոլովում։ Այս բառի բացառականն ունի երկու ձև՝ տարվանից և տարուց, որոնք, ինչպես երևում է, կազմված են տարբեր հիմքերով ու տարբեր վերջավորություններով։

Իմաստային հիմք ունեցող հիշյալ տարբերակները խիստ անջրպետված չեն, թեև օրինաչափական են։ Նշված օրինաչափություններից շեղումներ ու տատանումներ լինում են ի հոլովման աճող ազդեցության պատճառով, որին կարող են ենթարկվել նշված բառերը, նույնիսկ համապատասխան մասնավոր (ժամանակի) իմաստ ունենալու դեպքում։ Օրինակ՝ ձաշի մոտ քահանան նրան հաղորդություն էր տվել (ԱԲ, Կարմրաքար)։

Մի կողմ թողնելով այդ կարգի ընդհանուր դարձած շեղումներն ու տատանումները, նշենք, որ բառը կարող է, բացի նշված կարգի տատանումից, իր մի մասնավոր իմաստով պատկանել միայն մի այլ հոլովման։ Այսպես, ժամ բառը ժամանակի իմաստ ունեցող շատ այլ բառերի պես ենթարկվում է վա հոլովման, բայց ի հոլովման ազդեցությամբ՝ նաև ի հոլովման։ Օրինակ՝ Մեկ ժամվա նյութը սպառեց 30 րոպեում (ՍԴ)։ Եվ ուխտը և դաշինքը... նրանց համար մի խոսք էր՝ ասված միայն մի ժամի համար (ԴԴ, Վարդանանք, 2)։ Մի ժամի մեջ, կարմիրն ասավ, կը հասցընեմ Դավթի կըռվին (ՀԹ, Սասունցի Դավիթ)։

Բայց նույն ժամ բառը, պահ, ժամանակ իմաստով գործածվե-

չիս ենթարկվում է միայն ի հոլովման։ Օրինակ՝ Մեռնելու ժամին խակ եթե երկու սիրուն աչքեր իրենց ժպտուն հայացքը հառեն ինձ վրա, կարող եմ հոգեդարձ լինել (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Գիշերվա մի ժամին աչքս բաց արի (ՆԴ, Տանտիրոջս աղջիկը)։ Դուք դավաճանության եք սերմանում արհավիրքի ժամին (ԴԴ, Վարդանանք, 1)։ Վերքը բացվել էր, մոմռում էր, և հնար չկար երթի ժամին կապելու (ԴԴ, Վարդանանք, 2)։

§ 91. Իմաստային և ձևային հոլովումներից դուրս է մնում ի հոլովումը։ Սա ժամանակակից հայերենի ամենատարածված հոլովումն է, որին պատկանում է բառերի ճնշող մեծամասնությունը։ Այդ բառերը թե՛ քանակով են շատ և թե՛ բնույթով են բազմազան, քան որում դրանք այնքան բազմաբնույթ են, որ հնարավոր չէ սահմանել իմաստային կամ ձևային հատկանիշներով։ Ի հոլովման այսպիսի լայն ընդգրկման պատճառով այն կարելի է կոչել ընդհանրական հոլովում։

Այս հոլովման այսպիսի լայն տարածումը նմանակության հետևանք է։ Ի հոլովումն այս օրենքի շնորհիվ ազդում է մյուս բոլոր հոլովումների վրա և ձգտում նրանց հաշվին ընդլայնել իր ընդգրկման սահմանները։ Սակայն մյուս հոլովումները հեշտությամբ չեն զիջում իրենց դիրքերը, մանավանդ, որ նրանք իրենց գոյության համար ունեն իմաստային կամ ձևային հիմք։ Այս հակադիր միտումները էական դեր են կատարում լեզվի մեջ՝ նրա թե՛ զարգացման և թե՛ պահպանողականության տեսակետից։

Այսպիսով՝ ժամանակակից հայերենի հոլովումները բառերի ձևի և իմաստի նկատմամբ ունեցած հարաբերության տեսակետից լինում են՝ ընդհանրական, ձևային և իմաստային[15]։

---

15 *Պրոֆ. Գ. Սևակը բոլոր հոլովումները բաժանում է երկու խմբի. իմաստային՝ որ, ոջ, վա և ձևային՝ ի, ու, ան, յան, ց (տե՛ս Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 272)։ Հոլովման տիպերի որոշ տարբերությունների իմաստային հիմքը դիտել ու բնութագրել է նաև պրոֆ. Գ. Ջահուկյանը իր «Հայոց լեզվի պատմա-համեմատական քերականության հիմունքները» հոդվածում (ԳՍՏ, 1955, № 1, էջ 77)։ Հոլովումների բաժանումը երեք տեսակի՝ ընդհանրական, իմաստային ու ձևային, կատարված է Ս. Գ. Աբրահամյանի «Ժամանակակից հայ լեզվաբանության մի հերթական խնդիրը» հոդվածում (ՊԲՀ, 1959, № 2—3)։ Այս հարցի վերաբերյալ տե՛ս նաև Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, 1969, Մ. Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա։*

ԱՐՏԱՔԻՆ ՈՒ ՆԵՐՔԻՆ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

Ը Ն Դ Հ Ա Ն Ո Ւ Ր Բ Ն Ո Ւ Թ Ա Գ Ի Ր

§ 92. Հոլովումները ըստ կազմության բնույթի երկու տեսակ են՝ արտաքին և ներքին։

Արտաքին թեքման դեպքում հոլովական վերջավորությունը կցվում է բառի վերջից. ինչպես՝ ծառի, դրքի, սրտի, քրոջ, տարվա, գարնան և այլն։ Այս դեպքում հոլովվող բառի հիմքում կատարվող հնչյունափոխությունը ձևաբանական դեր չունի։ Արտաքին թեքման առավել տարածված հոլովական վերջավորություններն են (տրականում)՝ ի, ու, ոջ, վա, ան, ց։ Բերենք մեկական օրինակ. անտառի, մարդու, frոջ, orվա, լեռան, Գրիգորենց։

Ի, ոջ, վա հոլովումների արտաքին թեքման լինելն ինքնին հասկանալի է, քանի որ նշված հոլովիչները ավելանում են բառի ուղիղ ձևի վրա՝ կցվելով նրան։ Ինչպես՝ ֆաղաֆ–ֆաղաֆի, ընկեր–ընկերոջ, ժամ–ժամվա։

Ու, ան, ց հոլովումների՝ արտաքին լինելու վերաբերյալ անհրաժեշտ է տալ որոշ բացատրություն։ Ու հոլովման տարբերությունը նախորդ հոլովումներից այն է, որ եթե ի, ոջ, վա վերջավորությունները դրվում են բառի ամբողջական ուղիղ ձևի վրա, ապա ու-ն դրվում է ի-ով վերջացող բազմավանկ բառերի վերջին ի ձայնավորի փոխարեն՝ հերթագայության կարգով՝ գինի–գինու, գարի–գարու, հայելի–հայելու։ Այսուամենայնիվ որոշ վերապահության ու հոլովումը կարելի է համարել արտաքին, հաշվի առնելով, որ ու–ն բոլոր դեպքերում դրվում է բառի վերջից, այլև այն, որ այլ կարգի բառերում (ի–ով վերջացող միավանկ և մարդ, ամուսին, անկողին, աստված բառերում) ու–ն ավելանում է բառի ուղիղ ձևի վերջից, առանց հիշյալ կարգի հերթագայության։

Ան հոլովումը ժամանակակից հայերենում արտաքին թեքման է, քանի որ այդ հնչյունակապակցությունը կցվում է բառի վերջից և գիտակցվում է որպես վերջավորություն, ինչպես՝ ուսում–ուսման, շարժում–շարժման, մուկ–մկան, լեռ–լեռան, եզ–եզան *և այլն։ Այն հանգամանքը, որ այս և նման բառերը գրաբարում պատկանել են ներքին թեքման (ա հոլովում), չի կարող կասկածի տակ առնել նրանց ժամանակակից հոլովական դրության նշված գնահատումը։ Բանն այն է, որ նշված կարգի բառերը գրաբարում վերջավորվել են ն-ով (ուսումն, շարժումն, մուկն, լեառն*

և այլն), և սեռականի ա հոլովիչը հանդես էր գալիս այդ բառերի ն վերջավորությունից առաջ, այսինքն բառի ներսում և ոչ թե վերջում, ուստի և այդ հոլովումը դրաբարում ներքին թեքման էր։ Իսկ ուղղականի ն-ի անկումից հետո հին հայերենի ա հոլովիչը սեռականում պահպանված է և դրան հաջորդող ն-ի հետ միասին արժեքավորվել է որպես հոլովական վերջավորություն, այն էլ արտաքին թեքման, քանի որ ժամանակակից հայերենում այն կրցվում է բառի ուղիղ ձևի վերջից։

Յ վերջավորությունը թեք հոլովներում հանդես է գալիս ուղղականի f-ի փոխարեն, այսինքն տեղի է ունենում f/g հերթագայություն։ Այստեղ արտաքին թեքումն ավելի ակնհայտ է, եթե մենք նկատի ունենանք, որ g-ն բառի վերջում է դրվում, այլև այն, որ հերթագայությունը կատարվում է հոլովիչի և ոչ թե բառի արմատի հնչյունի միջև (համմ. գինի–գինու), այլ հոլովիչի և ուղիղ ձևի քերականական ցուցիչի միջև։

§ 93. Ներքին թեքումը կատարվում է բառահիմքի ձայնավորի (որոշ բառերում այ հնչյունակապակցության) փոփոխության միջոցով, առանց վերջավորության կցման։ Ինչպես՝ հայր–հոր, արյուն–արյան, ուրախություն–ուրախության և այլն։ Այստեղ առկա են այ /ո, ու/ ա հերթագայությունները, որոնք ունեն այն արժեքը, ինչ որ արտաքին թեքման դեպքում կցվող հոլովական վերջավորությունները. այսինքն՝ դրանք ունեն ձևաբանական դեր, ձևաբանական միջոց են։

ԱՐՏԱՔԻՆ ԹԵՔՄԱՆ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

Ի հոլովում

§ 94. Ի հոլովման շատ լայն տարածվածության, նրա ընդհանրականության պատճառով հնարավոր չէ նրան տալ դրական բնորոշում, ուստի այդ հոլովման ենթարկվող բառերը բնորոշվում են մյուս հոլովումներին չպատկանելու հատկանիշով։ Ի հոլովման պատկանում են մյուս հոլովումներին չպատկանող բառերը։ Պետք է նկատի ունենալ նաև, որ քիչ չեն այն բառերը, որոնք պատկանում են այլ հոլովումների, բայց կարող են ենթարկվել և ի հոլովման։ Այսպիսի փաստերի մասին կխոսվի ստորև, տարբեր հոլովումների առիթով։

Ի հոլովման պատկանող բառերի բազմաբնույթ լինելը ցույց

տալու համար բերենք մի քանի կարգի բառեր, որոնք ենթարկվում են այդ հոլովման։

Իրերի անուններ՝ գիրք, մատիտ, գրիչ, դաճակ, fար *և այլն։*

Անձ ցույց տվող բառեր՝ ուսուցիչ, բժիշկ, աշակերտ, ճարտարապետ, դերասան *և այլն.*

Բուսանուններ՝ ծառ, մեխակ, վարդ, մանուշակ, խոտ *և այլն.*

Կենդանիների անուններ՝ արջ, ճպուռնակ, ոչխար, կատու *և այլն.*

Վերացական գոյականներ՝ միտք, գաղափար, ճպռտակ, վարք *և այլն.*

Բնության ու հասարակական երևույթների անուններ՝ փոթորիկ, աճուն, կայծակ, որոտ, զործադուլ, աfսոr, պատերազմ *և այլն.*

Գիտության, արվեստի և այլ բնագավառների բառեր՝ ռադիո, ոճ, ատոմ, մոլեկուլ, վեպ, պոեմ, երգ, էստրադա *և այլն։*

Այս ամենին պետք է ավելացնել որ ի հոլովումը այժմ էլ շարունակում է իրեն ենթարկել այլ հոլովումների պատկանող բառեր։ Դա է պատճառը, որ ամենից շատ տատանումներ կան մի կողմից՝ մյուս բոլոր հոլովումների, մյուս կողմից՝ ի հոլովման միջև, ըստ որում տատանումները հիմնականում առաջանում են մյուս հոլովումներից դեպի ի հոլովումը հակումների դրսևորման հետևանքով։

§ 95. Ի հոլովման դեպքում ի վերջավորությունը տրականում, իսկ մնացած հոլովներում համապատասխան վերջավորությունները դրվում են բառի ուղղական հիմքի վրա, ինչպես՝ փողոց-ի, փողոց-ից, փողոց-ով, փողոց-ում:

Երբ բառը վերջանում է ա կամ ո ձայնավորով, ապա սրանց և հոլովական վերջավորությունների միջև ավելանում է յ ձայնակապը։ Ինչպես՝ տղա-յ-ի, տղա-յ-ից, տղա-յ-ով, երեխա-յ-ի, երեխա-յ-ից, երեխա-յ-ով, Սարո-յ-ի, Սարո-յ-ից, Սարո-յ-ով *և այլն։*

Բառավերջի ու-ն մի շարք բառերում հոլովական վերջավորությունից առաջ փոխվում է վ-ի։ Ինչպես՝ առու—առվ-ի, առվ-ից, առվ-ով, առվ-ում, կատու—կատվ-ի, կատվ-ից, կատվ-ով, բրու—բրվ-ի, բրվ-ից, բրվ-ով, ձու—ձվ-ի, ձվ-ից, ձվ-ով, ձվ-ում *և այլն։*

Այս հնչյունափոխությունը ոչ միշտ է կատարվում։ Մի շարք բառերում բառավերջի ու-ն հոլովման դեպքում պահպանվում է.

ինչպես՝ թեկնածու—թեկնածու-ի, թեկնածու-ից, թեկնածու-ով, լորտու—լորտու-ի, լորտու-ից, լորտու-ով, գնչու—գնչու-ի, գնչու-ից, գնչու-ով *և այլն։ Այս հնչյունափոխությունը առավել ևս տեղ չունի նորագույն փոխառություններում, ինչպես՝* ճոճու, ճոճու-ի, ճոճու-ից, ճոճու-ով, Տարտու, Տարտու-ի, Տարտու-ից *և այլն։*

Ծանոթ.—*Այլ հոլովումներից ի հոլովմանն անցած մի քանի բառեր առանձին կիրառություններում գործածվում են իրենց նախկին հոլովական ձևով (միայն տրականում)։ Այսպես՝* ճույս, լույս, սուգ *բառերը ժամանակակից հայերենում օրինաչափորեն ենթարկվում են ի հոլովման (*ճույս-ի, լույս-ի, սգ-ի, ճույս-ից, լույս-ից, սգ-ից *և այլն)։ Այդ բառերը հազվադեպ, սոսկ ոճական նկատառումով գործածվում են ո վերջավորությամբ (*ճուսո, լուսո, սգո) *և կազմում սակավաթիվ կապակցություններ։*

Կայսր *և* դուստր *բառերը ևս ժամանակակից հայերենում ենթարկվում են ի հոլովման։ Բայց երբեմն, մանավանդ պատմական կոլորիտ ստեղծելու կամ հանդիսավորության նպատակով, գործածվում են դրանց* կայսեր *և* դստեր *ձևերը։*

Վերջապես, ի հոլովման պատկանող գալուստ, ծնունդ, հանգիստ *գոյականները երբեմն տրականում գործածվում են հին ձևով՝* գալստյան, ծննդյան, հանգստյան։ *Այս ձևերը ածականի վերածվելու միտում ունեն։*

Ու հոլովում

§ 96. Ու հոլովման պատկանում են հետևյալ բառերը՝

Ա. Ի-ով վերջացող բառեր՝ հայելի, գինի, երգչուհի, եղևնի, Քառակուսի, թթենի, ձիթենի, կաղնի, Գորկի, Բաֆֆի *և այլն։*

Բ. Մարդ, անկողին, ամուսին, ասված *բառերը։*

Գ. Անորոշ դերբայը՝ գրել, խոսել, աշխատել, երգել, խաղալ, կարդալ *և այլն։*

Ի-ով վերջացող որոշ բառեր ենթարկվում են ի հոլովման, ինչպես՝ ժյուրի, պապի, հոգևակի, աճդրի, Աճի, Նելլի, Վիլլի, Պագանինի *և այլն։ Օրինակ՝ Առանց Ջմեռ պապիի նոր տարվա և ոչ մի խնջույք պատկերացնել չի լինի (ՍՄ)։ Անավարտ աճդրիի նման հազիվ նշմարվում էին մի պառկած մարդու կասկածելի ու մշուշոտ ուրվագծերը (Վ. Փափ.)։ Ժյուրիի որոշմամբ, երրորդ տուրին մասնակցելու են հինգ երկիր ներկայացնող 12 երաժիշտներ (ՍՀ)։ Նա*

Անիի *ճարտարապետությամբ է զբաղվում (ԳԹ)։* Աբեղեի *մոտով անցնելիս ուղեկիցներիս ուշադրությունն եմ հրավիրում այս նորակառույց ավանի վրա (ԳԹ)։ Ճապոնացի ջութակահարուհին... կատարեց* Պագանինիի *առաջին կոնցերտը (ՍՀ)։* Ղորանիից և Վսուղիից *լսեց, որ նրանք պետք է բանտարկեն* Ազադիին *(ԳՍ, Թեհրան)։*

§ 97. Ա *խմբի բազմավանկ բառերի ի-ն տրականում փոխվում է ու-ի, այսինքն՝ տեղի է ունենում ի/ու հերթագայությունը. ինչպես՝* թթենի–թթենու, ձիթենի–ձիթենու, գինի–գինու, հայելի–հայելու, աշակերտուհի–աշակերտուհու *և այլն։*

Ու *հոլովման դեպքում այդ բառերի ուղիղ ձևի ի-ն չի պահպանվում նաև բացառականում. ինչպես՝* թթենուց, ձիթենուց, գինուց, հայելուց, աշակերտուհուց: *Նույն օրինաչափությունը, որոշ տատանումներով հանդերձ, նկատվում է նաև գործիականի կազմության մեջ։ Այդ տատանումներից երևում է, որ կա որոշ միտում գործիականում պահպանելու բառավերջի ի-ն։ Այսպես, օրինակ,* ցի (ացի/եցի) *մասնիկի ի-ն պահպանվում է, ինչպես՝* լոռեցիով, վանեցիով, լեռնցիով, դարաբաղցիով *և այլն։*

Հաճախ պահպանվում է նաև են, ին, ալի, ելի, ուհի *ածանցներով կազմված բառերի վերջին ի-ն (գործիականի կազմության դեպքում).* եղևնի–եղևնիով, բանալի–բանալիով, ածելի–ածելիով, Գորկի–Գորկիով, Րաֆֆի–Րաֆֆիով, Թբիլիսի–Թբիլիսիով, հայուհի–հայուհիով *և այլն։*

Նշված կարգի մի շարք բառերի ի-ն գործիականում երբեմն պահպանվում է, երբեմն՝ ոչ, ինչպես՝ գինիով–գինով, հայելիով–հայելով:

Ի-*ով վերջացող բառերի ներգոյականի կազմության դեպքում ի-ն երբեմն սղվում է, երբեմն՝ ոչ, ինչպես՝* Թբիլիսիում, Վեդիում, *բայց՝* գինում։ *Նկատենք, որ այս հոլովման պատկանող բառերի (մասնավորապես ի-ով վերջացող) մեծ մասը ներգոյական հոլովի ձև չի կազմում։*

Ու *հոլովման ենթարկվող միավանկ* ձի *բառի ի-ն պահպանվում է բոլոր թեք հոլովներում. ինչպես՝* ձիու, ձիուց, ձիով:

§ 98. Մարդ, աննողին, ամուսին, ասված *բառերը հիմքերի փոփոխության տեսակետից տարբեր օրինաչափություններ ունեն։* Մարդ *բառը չի հնչյունափոխվում, հոլովական վերջավորությունները դրվում են նրա անփոփոխ ձևի վրա՝* մարդ, մարդ–ու, մարդ–

ուց և այլն։ Անկողին և ամուսին բառերի վերջին վանկի ձայնավորը սովորաբար սղվում է. ինչպես՝ անկողնու, անկողնուց, անկողնով, անկողնում, ամուսնու, ամուսնուց, ամուսնով։

Երբեմն հանդիպում են այս բառերի գործիականի չհնչյունափոխված գործածություններ, որոնք օրինաչափական չեն՝ անկողինով, ամուսինով։

Ասված *բառը հոլովվելիս ենթարկվում է ոչ սովորական հնչյունափոխության. նրա վա հնչյունակապակցությունը փոխվում է շատ թույլ լսվող ը-ի կամ բոլորովին սղվում է. ինչպես՝* ասածու, ասածուց, ասածով։ *Հոգնակի թվով հոլովվելիս* ասված *բառը չի հնչյունափոխվում. ինչպես՝* ասվածների, ասվածներից *և այլն։*

Ծանոթ.—1. *Ժամանակակից հայոց լեզվի զարգացման առավել վաղ շրջաններում, մինչև 20-րդ դարի սկիզբները,* ամուսին, անկողին, մարդ, տղամարդ *բառերը ենթարկվում էին նաև ի հոլովման։ Օրինակ՝ Աշխատեց նրա մեջ պաշտպանություն գտնել* ամուսնի *բռնության դեմ (Ր, Դավիթ բեկ)։ Հարսը* ամուսնի *մահից հետո էլ մարդու չգնաց (Ր, Խենթը)։ Նա...* անկողնից *չելավ (Մուր., Խորհրդավոր միանձնուհի)։ Երբ խոր գիշերով, ցուրտ* անկողնիս *մեջ, Քունը իմ աչքից հեռու է փախչում (Հ. Հովհ.)։ Երեկ առավոտյան ժամը տասն և մեկն էր, բայց նա դեռ վեր չէր կացել* անկողնից *(ՆԴ, Աննա Սարոյան)։ Այդքանը բավ չէ, մի գինեսպառ մարդի պակասությունը նկատելու համար (ՊՊ, Հունոն)։ Գյուղացիք միշտ ուրախանում էին, որ այնպիսի մի մեծ աղա, այնքան բարի էր, որ իրենց մարդի տեղ էր դնում (Ր, Ոսկի աքաղաղ)։ Չգիտեմ ինչու կնիկները սիրում են տղամարդի մեջ տեսնել մեծություն (Ր, Խենթը)։ Այս հետաքրքրական երևույթից երևում է, որ ի ընդհանրական հոլովման ազդեցությանը ուժեղ կերպով դիմադրում են մյուս հոլովումներն իրենց իմաստային ու ձևային հիմունքով, որոնք նույնիսկ երբեմն վերացնում են ի հոլովման ունեցած ազդեցությունը որոշ բառերի վրա։*

Ծանոթ.— 2. *Ոճական որոշ երանգով անցյալում հաճախ, իսկ այժմ երբեմն* ասված *բառը հոլովվում է հին* աստուծո *կամ* աստծո *ձևով։ Օրինակ՝ Կյանքն այնքան հրապույրներ ունի, որ* աստուծո *լույս տեսնող և նրա ջերմությունը վայելող մարդ արա-*

բածը անկարող է չտենչալ (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Ասես՝ ասածո աչքը պայծառ հսկում է ցած երկնքից (ՀՓ, Լուսավորչի կանթեղը)։ Էս էլ քանի ագամ է, որ կոնսիստորը քննում է ասածո լույսի պես պարզ այս գործը (ԱԲ, Խաչատուր Աբովյան)։ Նրա մահվան պատճառով պատիժը թողնել ոչ թե ասածո կամքին, այլ նրա ահեղ վրեժխնդրության (ԱԲ, Խաչատուր Աբովյան)։

§ 99. Անորոշ դերբայների թեք հոլովաձևերը կազմվում են բառի անհնչյունափոխ ուղիղ ձևից։ Ինչպես՝ գրելու, գրելուց, գրելով. խաղալու, խաղալուց, խաղալով *և այլն։*

Ան հոլովում

§ 100. Ան հոլովման ենթարկվում են հետևյալ բառերը՝

ա) Ում *(հին* ումն*) ածանցով կազմված բայանունները՝ ինչպես՝* աճկում, բեկում, բաժանում, մրցում, իրարանցում, բորբոքում, ուսում, զեկուցում, կառուցում, շարժում, ծագում *և այլն։*

Այս կազմության ոչ բոլոր բառերն են ժամանակակից հայերենում ենթարկվում ան հոլովման. այդ կարգի շատ բառեր այժմ պատկանում են ի հոլովման։ Օրինակ՝ միտում, հաճախում, տեղում, վայելում *և այլն։*

բ) Մի շարք միավանկ բառեր, որոնք գրաբարում վերջացել են ն*-ով ու նրան նախորդող բաղաձայնով, ինչպես՝* բեռ, բուռ, գառ, դուռ, եզ, թոռ, լեռ, ծոռ, ծուռն, կուռ, ձուկ, մուկ, նուռ։

գ) Գարուն, աշուն, ամառ, ձմեռ, մանուկ *բառերը։*

§ 101. Ան վերջավորությունը դրվում է այս հոլովման պատկանող բառերի ուղղականի ձևի, որպես հիմքի վրա։ Ընդ որում, հիմքը լինում է անհնչյունափոխ կամ հնչյունափոխված։ Հիմքը անհնչյունափոխ է, եթե վերջին վանկում ունի ա *կամ* ո *ձայնավոր. ինչպես՝* գառ—գառան, թոռ—թոռան, ծոռ—ծոռան։ *Հիմքը հնչյունափոխվում է, երբ վերջին վանկում ունի* ու *ձայնավորը։ Ըստ որում, եթե բառը բազմավանկ է,* ու*-ն սղվում է. ինչպես՝* աճկում—աճկման, մրցում—մրցման, ծագում—ծագման, գարուն—գարնան, մանուկ—մանկան։ *Եթե բառը միավանկ է, նրա* ու *ձայնավորը փոխվում է* ը*-ի։ Ինչպես՝* դուռ–դ(ը)–ռան, մուկ–մ(ը)կան, ձուկ–ձ(ը)կան։

Յուրահատուկ է ե *ձայնավորը հնչյունափոխության տեսակե-*

տից։ Նա միավանկ բառերում չի հնչյունափոխվում. ինչպես՝ բեռ—բեռան, եզ—եզան, լեռ—լեռան, իսկ երկվանկ ձմեռ բառում (մեկ գաղտնավանկով) ե-ն սղվում է՝ ձմռան։

Բացառական և գործիական հոլովների կազմության դեպքում ան հոլովման պատկանող բառախմբերը հանդես են բերում որոշ տարբերություններ։ Այդ հոլովների ից և ով վերջավորությունները դրվում են Ա. խմբի բառերի ուղղական հնչյունափոխ հիմքի վրա. ինչպես՝ անկում—անկումից, բեկում—բեկումից, բաժանում—բաժանումից, մրցում—մրցումից, իրարանցում—իրարանցումից և այլն։

Բ խմբի բառերի բացառական ու գործիական հոլովները կազմվում են դարձյալ ուղղականից. ըստ որում՝ ա, ե, ո ձայնավոր ունեցող բառերը չեն հնչյունափոխվում, մյուսների մեջ հնչյունափոխական օրենքը գործում է որոշ տատանումներով։ Համմա. ծնկից, ծնկով. բոլից, բոլով, բայց և՝ բուռից, բուռով. ծուծկից, ծուծկով. նուռից, նուռով և այլն։ Բացառական և գործիական հոլովներում նշված միավանկ բառերի վերջնահար ե-ն երբեմն պահպանվում է. ինչպես՝ դռնից, դռնով, եզնով (կա նաև՝ եզով), մկնով և այլն։ Այս ձևերի մեջ միտումը ե-ի անկումն է։

Գ կետում նշված բառերի բացառականի ից և գործիականի ով վերջավորությունները դրվում են տարբեր հիմքերի վրա (ուղղական և տրական), ինչպես՝ գարնան-ից (հազվադեպ՝ գարուն-ից), բայց՝ գարուն-ով, աշնան-ից (հազվադեպ՝ աշուն-ից), բայց՝ աշուն-ով (Հայաստանի աշունով շատերն են հիանում) և այլն։ Սա չի վերաբերում մանուկ բառին, որը բացառական ու գործիական հոլովներում չի հնչյունափոխվում և հանդես է գալիս ուղղական հիմքով. մանուկ-ից, մանուկ-ով։

Ան հոլովման պատկանող բառերի ներգոյականը գործածական չէ։

§ 102. Նմանակության օրենքն ազդել է ան հոլովման վրա և նրան ենթարկվող բառերի հոլովական հատկանիշի մեջ առաջացրել նկատելի տատանումներ։

Ա կետում նշված շատ բառերի հոլովման մեջ միտում է նկատվում ենթարկվելու ի հոլովման, թեև դրանց համար առայժմ առավել օրինաչափականը ան հոլովումն է։ Օրինակ՝ Ալժիր քաղաքում տիրում է լարված սպասումի իրադրություն (ՍՀ)։ Եվ Թեո-

դիկը... մահվան ու ավերումի անհաշիվ ապրումներով հարուստ մի հոգի եղավ (Վ. Փափ., Սրտիս պարտքը)։ Իր մեջ եռացող աոեղությյան պոռթկումին աղատ ընթացք տալ (Վ. Փափ., Սրտիս պարտքը)։ Ընկերությյան էս սկզբնական գործունեությունը նման է մի հախուռն հարձակումի (ՀՔ, Պետք է լսել)։ Հավատարիմ՝ հայ կնոջը զարդարող այն զգացումին, որ նա գեղեցիկ է, վսեմ առավելապես իր կարոտի ու սպասումի մեջ, արտիստուհին ահա այդ հիմնականն է հաղորդում դահլիճին (ԵԵ)։

Պետք է նկատի ունենալ, որ Գ խմբի բառերից ամառ-ը և ձմեռ-ը ավելի հաճախ ենթարկվում են վա հոլովման՝ ամառվա, ձմեռվա։ Այս բառերի բացառական ու գործիական հոլովները ձևավորվում են վա-ով կազմված տրական հիմքից, որի և վերջավորության միջև ավելանում է ն ներությը, ինչպես՝ ամառվա-ն-ից, ձմեռվա-ն-ից, ամառվա-ն-ով, ձմեռվա-ն-ով։ Սրանց գործիականը սակավ գործածական է։

Ժամանակակից հայերենում ունենք հիման ձևը, որը հիմն բառի հոլովաձևն է, սակայն այդ բառը վաղուց դուրս է եկել գործածությունից, իսկ հիման ձևը սովորաբար հանդես է գալիս վրա կապի հետ և կազմում հիման վրա կապակցությունը։ Այդ բառի մյուս հոլովաձևերից հազվադեպ հանդիպում է հիմամբ գործիականը, այն էլ որոշ ոճերում միայն։

Վա հոլովում

§ 103. Վա *հոլովման պատկանում են ժամանակ ցույց տվող մի շարք բառեր. ինչպես՝* օր, ամիս, տարի, ժամ, շաբաթ, գիշեր, ցերեկ, առավոտ, կեսօր, այսօր, վաղը, երեկ *և այլն։ Որոշ վերապահությամբ այս հոլովման պատկանող բառերի շարքը պետք է դասել ժամանակ, առաջ, անգամ բառերը,* լոռի, Շուշի *տեղանունները (տե՛ս § 109)։*

§ 104. Վա *հոլովման դեպքում տրականը կազմվում է* վա *վերջավորության միջոցով, որը դրվում է վերոհիշյալ բառերի մեծ մասի անհնչյունափոխ ձևի* (օր–վա, ժամ–վա, շաբաթ–վա, գիշեր–վա, ցերեկ–վա *և այլն) ու մի երկուսի հնչյունափոխված ձևի* (ամս–վա, տար–վա) *վրա։*

§ 105. Բացառական հոլովի վերջավորությունն է ից։ *Միայն*

տարի–ն, որպես ի–ով վերջացող բառ, բացառականում ունի նաև ուց վերջավորությունը՝ տարուց (բացի տարվանից ձևից)։

Բացառականը կազմվում է ուղղական կամ տրական հիմքով. ինչպես՝ ա) օր–ից, ժամանակ–ից, ամս–ից, տար–ուց, ժամ–ից, շաբաթ–ից, գիշեր–ից, ցերեկ–ից, առավոտ–ից, կեսօր–ից, բ) այսօրվա–ն–ից, վաղվա–ն–ից, երեկվա–ն–ից։ Ըստ որում, առաջին խմբի բառերը (բացի ժամ բառից) կարող են ունենալ նաև տրական հիմքով բացառական, ինչպես՝ օրվա–ն–ից, ամսվա–ն–ից, տարվա–ն–ից, շաբաթվա–ն–ից, գիշերվա–ն–ից, ցերեկվա–ն–ից, առավոտվա–ն–ից, կեսօրվա–ն–ից։

Համմտ. ա) Գերդաստանի համար նաև հայր էր եղել այն օրից, երբ ամուսինն ընկել էր թշնամու գնդակից (ՀՔ, Մեծ տան զավակները, 1)։ Առավոտից մինչև երեկո նստած եմ լուսամուտի առաջ (ՆԴ, Աննա Սարոյան)։

բ) Այդ օրվանից այլևս չի կարողանում վերականգնել իր առողջությունը (Սխ, Հողը, 2)։ Առավոտվանից արդեն մեր գործերը պաշարել են խոխանաբերդը (Մուր., Ռուզան)։

Ինչպես երևում է, բացառականի (ավելացնենք նաև գործիականի ու ներգոյականի) ձևերը կազմվելիս համապատասխան վերջավորության և տրականի հիմքի միջև ավելանում է ն բաղաձայնը։

§ 106. Մի շարք բառերի հոլովման հատկանիշը կայուն չէ. նրանք ենթարկվում են թե՛ վա և թե՛ ի հոլովումներին։

Ընդ որում, այդ տատանումը կարող է իմաստային հիմք ունենալ։ Իմաստային հիմքով հոլովման զուգաձևություններ ունեն մի քանի բառեր. ինչպես՝ առաջ, ճաշ, անգամ և այլն։

Մի շարք դեպքերում հոլովական զուգաձևությունը իմաստային հիմք չունի։

Վա հոլովման պատկանող բառերից մի քանիսը ժամանակի իմաստով գործածվելու դեպքում ևս երբեմն ենթարկվում են նաև ի հոլովման՝ ինչպես՝ ամսվա—ամսի, ժամվա—ժամի. օրինակ՝ Մեր գործարանի կոլեկտիվը մայիսի մեկը դիմավորում է չորս ամսվա պլանը զգալիորեն գերակատարած (ՍՀ)։ Երեք ժամում նրանք անցան հինգ ժամվա ճանապարհ։

«Մշակն» էլ մինչև այս ամսի վերջը, ասում են, իբրև հաստատ բան կհրատարակվի (ՀՔ)։ Մի քառորդ ժամի ճամփա էլ կա մինչև

էնտեղ (ՀԹ, 3)։ Սրանց շարքը պետք է դասել նաև ժամանակ բառը, որը ավելի ի հոլովման է ենթարկվում, թեև երբեմն հոլովվում է վա հոլովումով։ Ինչպես՝ իսկ այդ գործը ժամանակի գործ է, իշխանիկ (ԴԴ, Վարդանանք, 2)։ Նա ուշքի եկավ ու մի րոպեում հասավ իր տարիքի ու ժամանակի հասունությանը (Ա. Սեկ., Ոսկե վազերի մեջ)։ Բայց՝ Այդ անշուք արտաքինով կրպակները ողջ շուկայի կենտրոնն էին, այն ժամանակվա բորսան (ԱԲ, Խ. Աբովյան)։ Վարաժի տունը լիքն էր վասակի ժամանակվա զանազան փախստականներով ու վտարված մարդկանցով (ԴԴ, Վարդանանք, 2)։

Հաճախ ժամանակ ցույց տվող բառերի բացառականի՝ երկու հիմքերից որևէ մեկով կազմվելը պայմանավորված է իմաստային ու կիրառական որոշ նուրբ տարբերությամբ։ Երբ բառը գործածվում է ժամանակի պարագայի իմաստով և պատասխանում է ե՞րբ, երբվանի՞ց հարցերին, բացառականը սովորաբար կազմվում է տրական հիմքով։ Այս դեպքում տվյալ գոյականը կամ որոշիչ չի ունենում, կամ ունենում է ժամանակային հերթականություն արտահայտող որոշիչներ (անցյալ, նախորդ, այս, այն, հաջորդ և այլն)։ Իսկ երբ ժամանակի անունը վերցվում է սոսկ որպես ժամանակի միավոր և ունենում է թվականով կամ չափ ցույց տվող այլ բառերով արտահայտված որոշիչներ, բացառականը կազմվում է ուղղական հիմքով։

Օրինակ՝ Անցյալ օր*վանից լավ է զգում։ Բայց՝ Երեք* օր*ից հետո լավ կզգա։*

Նախորդ տարի*վանից ոչ մի լուր չունեմ։ Բայց՝ Երկու* տարի*ց ավել է, ինչ ոչ մի լուր չունեմ։*

§ 107. Գործիական ու ներգոյական հոլովների կազմության մեջ ուղղական հիմքը ավելի մեծ տեղ է գրավում։ Օրինակ՝ օր*–ով, ժամ–ով, շաբթ–ում, ժամանակ–ում։ Իսկ* այսօր, էգուց, վաղը, երեկ *բառերը, որոնք ինչպես ասվեց վերը, ենթարկվում են միայն վա հոլովման, բացառական, գործիական հոլովները կազմում են տրական հիմքով. ինչպես՝* այսօր*–վա–ն–ից, այսօր–վա–ն–ով, երեկվա–ն–ից, երեկվա–ն–ով։ Ինչ վերաբերում է* ցերեկվանով, գիշերվանով, առավոտվանով *և նման ձևերին, ապա դրանք* ցերեկվա, գիշերվա, առավոտվա *տրականների փոխանուն գործիականի արժեք ունեն։ Դա է պատճառը, որ ժամանակի իմաստ ունեցող այդ բառերը գործիականի նշված ձևերում ժամանակ չեն ցույց տալիս*

ու պատասխանում են ինչո՞վ հարցին։ Դրանք նշանակում են «ցերեկվա, գիշերվա, առավոտվա (ցերեկը, գիշերը, առավոտյան եղող, կատարող) որևէ բանով»։ Ասենք՝ Գիշերվա գնացքով գնացել է, առավոտվանով վերադարձել։

Նշենք, որ գիշերով, ցերեկով գործիականները, որոնք փոխանուն չեն, ժամանակ են ցույց տալիս և պատասխանում են ե՞րբ հարցին։ Օրինակ՝ Գիշերով եկավ։ Ցերեկով գնաց։

Պետք է նաև նկատի ունենալ, որ վա հոլովման պատկանող մի շարք բառերի գործիական, ինչպես և ներգոյական հոլովները գործածական չեն։ Դրանցից են՝ առավոտ, էգուց, երեկ, վաղը, առաջ։ Առավոտվանով, էգուցվանով, երեկվանով և նման ձևերը փոխանուններ են։

Այս տեսակետից ուշագրավ է շաբաթ բառը։ Այն, որպես օրերից մեկի անուն, գործիական ու ներգոյական չունի, բայց որպես յոթնօրյա ժամանակի միավոր՝ ունի շաբաթով, շաբաթում ձևերը։ Օրինակ՝ Նա մի շաբաթով բացակայում է քաղաքից։ Երկու շաբաթում վերջացրեց այդ հսկայական աշխատանքը։

§ 108. Վա *հոլովման պատկանող բառերի ներգոյականը սովորաբար կազմվում է ուղղականից (իհարկե, եթե ներգոյական առհասարակ ունենում է), այսինքն՝ առանց* վա *հոլովիչի պահպանման։ Ասենք, ամսում և ոչ թե* ամսվանում։ *Որպես* ամսում, տա-րում *և նման ներգոյականների հոմանիշներ ավելի հաճախ գործածվում են տվյալ գոյականի տրականը (սովորաբար* վա *հոլովիչով ձևավորված) և ընթացում կապական բառը կամ մեջ կապը։*

Օրինակ՝ Այս նպատակով սովորեցի մի երկու ամսվա ընթացում կրկնատոմար հաշվապահություն (Մուր., Ինքնակենսագրություն)։ Մեկ գետնասկյուռը ամառվա ընթացում փչացնում է միջին հաշվով 16 կիլոգրամ հաց (ՎԱ, Հայաստանի կենդանական աշխարհը, 2)։ Մի տարվա ընթացում այդքան մարդիկ էին գնացել քաղաք (Ա. Սեկ., Ոսկե վազերի մեջ)։ Մի քանի օրվա մեջ բոլոր շրջականների պաշարը կարող էին նրանք սպառել (Մուր., Գևորգ Մարզպետունի)։

§ 109. Վա *հոլովման են ենթարկվում նաև* Լոռի, Շուշի *տեղանունները հատկապես ժողովրդախոսակցական լեզվում, որից և*

այդ ձևն անցել է գրականին։ Օրինակ՝ Լոռվա բոլշևիկները սերտ կապի մեջ էին Վրաստանի Կոմունիստական կազմակերպությունների հետ (Հայ ժողովրդի պատմություն, 7)։ Փետրվարի 7-ին կազմակերպվում է Լոռվա ռազմա-հեղափոխական կոմիտեն (Ն. տ.)։ Լոռվա աշխատավորները լծվեցին սոցիալիստական շինարարությանը (Ն. տ.)։ Այս բոլոր նոր երևույթները իրենց հսկայական ազդեցությունը թողեցին նաև Շուշվա տնտեսական ու կուլտուրական կյանքի վրա (Ս. Կարապետյան, Լեռնային Ղարաբաղի Մ. Գորկու անվան մարզային գրադարանում)։ Ամառ էր, Շուշվա հարուստ բնությունը... այնքան հրապուրիչ էր, որ էլ ում էր հարկավոր թատրոնը (Օլգա Գուլազյան, Հուշեր)։

Լոռի բառի համար առավել գրական է համարվում Լոռու ձևը, իսկ Շուշի անվան հոլովման ամենատարածված ձևը վա հոլովումն է, թեև կան նաև Շուշու, Շուշիի ձևերը։

Քանի որ Շուշի բառի համար առավել գործածված է վա հոլովումը, ուստի դա իր դրսևորումն է գտել նաև ներգոյականի ձևի մեջ՝ Շուշվում։ Օրինակ՝ Քանի՜-քանի սրտեր են բաբախում Շուշվում։ (ՊՊ, Պատմություն Ղարաբաղի հայոց թեմական հոգևոր դպրոցի—1838—1913 թթ.)։ Կան նաև Շուշում, Շուշիում ձևերը։ Օրինակ՝ Շուշում և Ստեփանակերտում կան գյուղատնտեսական տեխնիկումներ (Ս. Կարապետյան, Լեռնային Ղարաբաղի Մ. Գորկու անվան մարզային գրադարանում)։ Իսկ Լոռի տեղանվան ներգոյականում վ չկա. գործածվում են Լոռում, Լոռիում ձևերը։ Օրինակ՝ Լոռում և նրան սահմանակից սովետական շրջաններում եղած պարտիզանական ջոկատներն ամրացնելու նպատակով Ղարաքիլիսայում կազմակերպվում է ապստամբության շտաբ (Հայ ժողովրդի պատմություն, 7)։

§ 110. Ժողովրդա-խոսակցական լեզվում գործածվող **աշուխ, գարուխ** բառերը ևս հաճախ ենթարկվում են վա հոլովման։ Ինչպես՝ Մի տեղ աշուխվա մուգ-կանաչ արտերն էին, մի տեղ՝ գարնան սև ցելը (ԱԲ, Խոնարհ աղջիկը)։ Վարազները ժանիքով փորում են սև հողը, աշուխվա փտած կաղիններն ժողովում (ԱԲ, Մրենաձոր)։ Եկեք, գարուխվա սարեր գեղանի (ՀՍ, Նաիրյան դալար բարդի)։

Աշուխ, գարուխ բառերը ենթարկվում են նաև ի հոլովման։

Ինչպես՝ Այս աշուհիին միայն նա լույս ընկավ (ՆԴ, Մահը)։ Գարունիին եկան հողերը բաժին անելու (ԱԲ, Հանավանք)։

Աշուհ, գարունհ ձևերը հատուկ չեն գրական հայերենին, թեև գեղարվեստական գրականության մեջ երբեմն գործածվում են։

Ոչ հոլովում

§ 111. Ոչ հոլովման պատկանում են անձ ցույց տվող սակավաթիվ բառեր՝ կին, *fույր,* տեր, տիկին, աներ, սկեսուր, տալ, տեգր *և սրանցով բաղադրված բառեր, որոնցում դրանք հանդես են գալիս որպես վերջին բաղադրիչ, ինչպես՝* fեռակին, մորաfույր, հորաfույր, դասրնկեր, խաղրնկեր, տաճտիկին, տաճտեր, կալվածատեր, հասցեատեր, ուլատեր *և այլն։*

§ 112. Այս հոլովման պատկանող բառերը տրականում ստանում են ոչ վերջավորությունը, որը դրվում է նրանց մի մասի անհնչյունափոխ ձևի վրա (ընկեր–ոչ, աներ–ոչ, տալ–ոչ, տեգր–ոչ, դասրնկեր–ոչ, *և այլն), մյուս մասի՝ հնչյունափոխված ձևի վրա* (կն–ոչ, fր–ոչ, տիր–ոչ, տիկն–ոչ, սկեսր–ոչ, տաճտիր–ոչ, մորաfր–ոչ, fեռակն–ոչ *և այլն)։*

Ինչպես երևում է, այս ձևերում տեղ են գտել հնչյունափոխական տարբեր երևույթներ՝ ի>ը, *ուր ը–ն գրության մեջ չի արտահայտվում (կին—կնոչ, քեռակին—քեռակնոչ և այլն),* ի>0 *(տիկին>տիկնոչ),* ույ>ը (fույր—fրոչ, մորաfույր—մորաfրոչ *և այլն),* ե>ի (տեր—տիրոչ, տաճտեր—տաճտիրոչ *և այլն),* ու>0 (սկեսուր—սկեսրոչ *և այլն)։*

§ 113. Այս բառերի մեծ մասի բացառականը, գործիականը կազմվում են տրական հիմքով, ինչպես՝ կնոչ–ից, fրոչ–ից, ընկերոչ–ից, տիրոչ–ից, տիկնոչ–ից, աներոչ–ից, սկեսրոչ–ից, կնոչ–ով, fրոչ–ով, ընկերոչ–ով, տիրոչ–ով, տիկնոչ–ով, աներոչ–ով, սկեսրոչ–ով: Տեգր *և* տալ *բառերի բացառական ու գործիական հոլովները կազմվում են ուղղական հիմքից՝* տեգր–ից, տեգր–ով, տալ–ից, տալ–ով։ *Սրանց ոչ հիմքով ձևերը սովորական չեն, թեև երբեմն հանդիպում են։*

Ոչ հոլովման պատկանող բառերի հոլովման ձևերում նկատելի են որոշ տատանումներ։ Սկեսուր, տալ *գոյականները հոլովվում են նաև ի հոլովիչով, իսկ* տեգր *բառը երբեմն հոլովվում է ներքին*

թեքման ո հոլովիչով (տեգր) (սա ավելի հատուկ է ժողովրդա-խոսակցական ոճին) և ի հոլովիչով։

Օրինակ՝ Նրա հարսը՝ Ջավահիրը, թեթև թիթեռների նման պտտվում է յուր սկեսուրի շուրջը (Ր, Անբախտ Հռիփսիմե)։ Բայց նրանց ոտնաձայնը զարթեցրեց պառավ սկեսուրին (Ր, Խենթը)։ Սկեսուրս այդ ծերունու քրոջ տալի աղջիկն է (ՆԴ, Պայքար)։

§ 114. Ինչպես նշվել է վերը, տարբեր հոլովումների բառերը հոգնակի թվում ենթարկվում են ի հոլովման։ (Խոսքը բնականաբար չի կարող վերաբերել ց հոլովմանը, քանի որ սա ինքը հոգնակի հոլովում է)։ Դա հիմնականում վերաբերում է նաև ոչ հոլովմանը։ Համմտ. frոջ—fույրերի, տիրոջ—տերերի, սկեսրոջ—սկեսուրների և այլն։ Բացառություն է կազմում կին բառը, որի հոգնակին ենթարկվում է ց հոլովման, և դրա պատճառը հոգնակի ուղղականի յուրահատուկ հին կազմությունն է՝ կանայք, որը և պահպանել է իր հոլովումը։

Այս տեսակետից հետաքրքրական է, որ տիկին բառը, թեև կազմված է նույն կին բաղադրիչով, բայց ժամանակակից գրական հայերենում հոգնակի թվում սովորաբար ենթարկվում է ի հոլովման՝ տիկիններին։

Օրինակ՝ Տիկիններ ինձ մոցրին արհեստանոց (ՍԿ, ՔԴՔ)։ Ճաշասրահի մարմարներն ու հայելիները... ջանում են ավելի դեղեցկորեն արտացոլել սեղանների շուրջը նստած գոհարազարդ շքեղ տիկիններին (Ն. տ.)։ Տիկիններից ավելի երիտասարդն ու ավելի նիհարը շտապ դուրս է գալիս խանութից (Ն. տ.)։

Ինչպես կարելի է նկատել, այս բառի հոգնակիի ի հոլովիչով հոլովվելու պատճառը հոգնակի ուղղականի կազմությունն է ներ-ով։

Միայն պաշտոնական ու հանդիսավոր ոճում հազվադեպ գործածվում է տիկնայք հոգնակին, այն էլ որպես կոչական։ Այդ հոգնակին ց հոլովիչով նույնիսկ պատմական վեպերում հազվադեպ է գործածվում։ Այսպես, Րաֆֆու և Մուրացանի պատմավեպերում տիկնանց ձևը գործածվում է պատմական կոլորիտ ստեղծելու նպատակով։ Օրինակ՝ Կաթողիկոսը պարտավոր էր յուր ուխտի հետ լինել և ոչ թե ամրոցաբնակ տիկնանց (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Իսկ պալատական տիկնանց և իշխանուհիների խումբը... սպասում էր արքային սուրբ Փրկչի տաճարում (Ն. տ.)։ Մինչդեռ Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք» վեպում այդ բառի հոգնակին կազմված

է ներ-ով ու հոլովված է ի հոլովումով, բացի միայն երկու օրինակից, երկուսն էլ գործածված է «տիկնայ հայոց աշխարհին» կապակցության մեջ։ Տիկնայ հայոց աշխարհին հավաքվեցին սրահը, ուր նսթերն ու Արշալույս տիկինը բոլորին ընդհանուր սեղան տվին (ԴԴ, Վարդանանք, 2)։

3 հոլովում

§ 115. 3 հոլովման հիմնականում պատկանում են այն գոյականները, որոնք վերջավորվում են աճ, եճ, ոճ, ուճ մասնիկներով։ Օրինակ՝ Վարդանաճ, Գրիգորեճ, Աշոտեճ, պապոճ, Վեղուճ և այլն։

Ինչպես ասվել է վերը, ց հոլովումը հոգնակի հոլովում է, և այս հոլովման պատկանող նշված կարգի բառերն ունեն յուրահատուկ հոգնակի իմաստ։ 3 հոլովման են պատկանում նաև մի շարք դերանունների հոգնակիները՝ իմոճ—իմոնց, fոնոճ—fոնոնց, մերոճ—մերոնց, ձերոճ—ձերոնց, իրեճ—իրենց, սրաճ—սրանց, դրաճ—դրանց, նրաճ—նրանց, որոճ—որոնց, ոմանճ—ոմանց, ինչպես և որոշ յուրահատկությամբ՝ կին գոյականի հոգնակին՝ կանայ—կանանց։

3 հոլովման պատկանող գոյականները անձ են ցույց տալիս և դերազանցապես անձի հատուկ, մասամբ և հասարակ անուն են։

§ 116. Այս հոլովման պատկանող բառերի տրականը կազմվում է ց վերջավորությամբ, որը փոխարինում է ուղղականի f վերջավորությանը. այսինքն՝ այստեղ տեղի է ունենում f/ց հերթագայություն. Վարդանանք—Վարդանանց, Գրիգորենք—Գրիգորենց, պապոնք—պապոնց։

Կանայ հոգնակիի մեջ այն տեղի է ունենում որոշ յուրահատկությամբ՝ հնչյունական այլ փոփոխության (յ/ն) դուգակցումով։

Մյուս հոլովները՝ բացառականը և գործիականը, կազմվում են տրական հիմքով, որին ավելանում են համապատասխան վերջավորությունները. ինչպես Վարդանանցից, Վարդանանցով, պապոնցից, պապոնցով, Արամենցից, Արամենցով և այլն։ 3 հոլովման պատկանող գոյականները ներգոյական չունեն։

Ժամանակակից գրական հայերենում եճ, աճ, ոճ, ուճ

մասնիկներից ց հոլովման պատկանող բառեր ավելի շատ կազմվում են ենք-ով, այն էլ հատկապես հատուկ անձնանուններից։

Օրինակ՝ Առաջարկում են բոլորի ուժերով տուն շինենք Մանուկենց Հարությունի համար (ՀՔ, Մեծ տան զավակները, 1)։ Ինքը բավական ժամանակ չէր եղել Աստղիկենց տանը (ԳՍ, Թեհրան, 1)։ Գնում ենք Վահրամենց մոտ (Ա. Սեկ., Ոսկե վազերի մեջ)։ Այդ այգին կոլեկտիվացումից առաջ պատկանել էր Վարդանենց գերդաստանին (Ա. Սեկ., Ոսկե վազերի մեջ)։ Արգամը մանրամասն պատմել է Կարոյենց ընտանիքի վիճակը (ՀՔ, Մեծ տան զավակները)։ Սաթթրոսենց ընտանիքի բոլոր անդամները մտերմացել էին Սեդայի հետ (Ա. Սեկ., Ոսկե վազերի մեջ)։

Հատուկ անուններից անք-ով կազմված ձևերն ավելի խոսակցական ոճին են հատուկ։ Ինչպես՝ Պիսիր Ավանը Խաճանց հետ շատ մոտ էր (ԱՔ, Վանդունց Բադին)։ Մուրելանց Առստամը պրիստավի ականջին փսփսաց (ԱՔ, Նամակ ռուսաց թագավորին)։ Իսկ Նիազանց Անդրին ծիծաղի աղմուկի մեջ շարունակում է «հեռախոսել» (ԱՔ, Եղբայրության ընկուզենիները)։ Քիչ հետո Գիլանց Մուքին հոգնած վերադարձավ (ԱՔ, Սպիտակ ձին)։

Հատուկ պետք է նշել Վարդանանք ձևի գրական լինելը, որ գալիս է հայերենի հին շրջանից։ Իսկ այսօր եթե Վարդան անունից կազմելու լինենք համապատասխան ձև, կօգտագործենք Վարդանենք ձևը (տե՛ս վերը)։

Համեմատաբար քիչ չափով գործածվում են ուք-ով ձևերը, որ դարձյալ ավելի շատ հատուկ է ժողովրդա-խոսակցական ոճին։ Օրինակ՝ Վեդուց Սարգիսը մի խավարամիտ... մարդ էր (Մուր., Նոյի ագռավը)։ Իրիկունն ուստան եկավ Վանդուց տուն (ԱՔ, Վանդունց Բադին)։ Շուտուց Աքելը շտապելուց մթնում տրեխները թարս է հագել (ԱՔ, Սպիտակ ձին)։

Ոնք *մասնիկով մեծ մասամբ կազմվում են այս հոլովման պատկանող հասարակ անձնանուններ։ Օրինակ՝ Իսկ իմ կողմից շատ բարև կանեք Բեռոնց, բիձոնց (ՀՔ, Նամակներից)։*

ՆԵՐՔԻՆ ԹԵՔՄԱՆ ՀՈԼՈՎՈՒՄՆԵՐ

Ա հոլովում

§ 117. Ա հոլովման պատկանում են՝

ա) Ություն ածանցով կազմված գոյականները. ինչպես՝ սուր-

տաղություն, գիտություն, դատողություն, բնավորություն, բովանդակություն, խաղաղություն, երջանկություն, համեստություն, ճարտություն, իմաստասիրություն, ինճություն և այլն.

բ) Յուն–ով վերջացող մի քանի բառեր՝ անկյուն, արյուն, ձյուն, սյուն *(որոնցում յուն-ը ածանց չէ)* և դրանցով *(որպես վերջին բաղադրիչ)* բարդված բառերը, ինչպես՝ եռանկյուն, ուղղանկյուն, խառանկյուն, հեռագրասյուն, կամրջասյուն և այլն։ Նշենք, որ յուն ածանցով կազմված գոյականները ենթարկվում են ի հոլովման. ինչպես՝ գոչյուն—գոչյունի, դոփյուն—դոփյունի, դղրդյուն—դղրդյունի, ճնշյուն—ճնշյունի, շաչյուն—շաչյունի և այլն։

գ) Ուն–ով վերջացող միավանկ տուն, շուն *բառերը, որոնցում* ուն-ը *ածանց չէ։*

§ 118. Ա *հոլովման առանձնահատկությունն այն է, որ նրան ենթարկվող բառերի տրականը կազմվում է ուղղականից ու/ա հերթագայությամբ. ինչպես՝ արտադրություն—արտադրության, հերոսություն—հերոսության, ցանկություն—ցանկության, անկյուն—անկյան, սյուն—սյան, տուն—տան, շուն—շան։*

Ներքին թեքման ա *հոլովման պատկանող բառերի բացառականը կազմվում է ուղղական հիմքից. ինչպես՝ արտադրություն-ից, հերոսություն-ից, ցանկություն-ից, անկյուն-ից, սյուն-ից, տուն-ից, շուն-ից և այլն։*

Ինչպես երևում է, ա *և* բ *խմբերի բառերը բացառականում հանդես են գալիս անհնչյունափոխ հիմքով, իսկ* գ *խմբի բառերում տեղի է ունենում* ու>ը *հնչյունափոխությունը։*

Գործիական հոլովը կազմվում է ով *կամ* ը *վերջավորությամբ։* Ով *վերջավորությունը դրվում է ուղղական հիմքի, իսկ* ը*-ն՝ տրական հիմքի վրա։*

Գործիականի կազմության ժամանակ ուղղականի հիմքով հանդես են գալիս գ *խմբի բառերը՝* տուն—տնով, շուն—շնով, բ *խմբի բառերը՝* անկյուն—անկյունով, արյուն—արյունով, ձյուն—ձյունով, սյուն—սյունով։ Արյուն *բառի գործիականը երբեմն գործածվում է նաև տրական հիմքով ու* ը *վերջավորությամբ՝* արյամբ։ *Համմտ. Աչքերը լցվել էին* արյունով *(ՆԴ, Պայքար)։ Նա... աներեր քայլեց իր ու պապերի* արյունով *ներկված հողի վրայով (Սև, Հողը, 2)։*

Արյամբ *պաշտպանեցին նրանք մեր ազատությունը (ԴԴ,*

վարդանանք, 1)։ Նա զգում էր, որ մարդ աշխարհի առաջ արյամբ *և հոգով պատասխանատու է (ԴԴ, Վարդանանք, 2)։*

Ա. *կետում նշված բառերի գործիականը կազմվում է երկու կերպ՝ տրական հիմքով, որի դեպքում ստանում է* ը *վերջավորությունն, և ուղղական հիմքով, որի դեպքում ստանում է* ով *վերջավորությունն։ (Հիշենք, որ* ը *շրթնային բաղաձայնից առաջ տրականի ձևի վերջին* ն*-ն առնմանությամբ դառնում է* մ)։ *Այս հոլովման համար, իհարկե, առավել բնորոշ է* ը *վերջավորությամբ ձևը, սակայն ի հոլովի ազդեցությունը այստեղ զգալի է, և երբեմն հանդիպում են նաև* ով *վերջավորությամբ կազմություններ։ Համմտ.* արտադրությամբ, հերոսությամբ, ցանկությամբ, դատողությամբ, համեստությամբ, *բայց* արտադրությունով, հերոսությունով, ցանկությունով, դատողությունով, համեստությունով։

Այս բառերի գործիականի՝ ը *վերջավորությամբ կազմությունը համարելով շատ սովորական, բերենք միայն* ով *վերջավորությամբ ձևավորելու բնագրային օրինակներ։ Դա նրա կինն էր, որ հայտնի էր ամբողջ ցեղի մեջ իր գեղեցկությունով (Ր, Խենթը,)։ Այդ հայտարարությունով նա փորձեց ինքնարդարացման ելք գտնել (ՍՀ)։*

Ա. *հոլովման պատկանող բառերի ներգոյականի կազմությունը նկատելիորեն սահմանափակ է։ Ներգոյական չունեն* ություն*-ով կազմված վերացական գոյականները (*համեստություն, իմաստախրություն, հանդիսավորություն, բարոյականություն, կարմրություն, տեղատվություն, ընթերցանություն, շարժունություն, օգտակարություն *և այլն), տուն, շուն, այուն գոյականները։* Արյուն *և* ձյուն *բառերի ներգոյական ձևերը սովորական չեն՝* արյունում, ձյունում։

Ա. *հոլովման պատկանող բառերից ներգոյական ունեն* ություն *ածանցով վերջացող թանձրացական որոշ գոյականներ (*արտադրություն—արտադրությունում, հայտարարություն—հայտարարությունում, նախադասություն—նախադասությունում, ձեռնարկություն—ձեռնարկությունում *և այլն) և* անկյուն *բառը՝* անկյունում։

Ո հոլովում

§ 119. Ժամանակակից գրական հայերենում ո *հոլովման պատկանում են սակավաթիվ բառեր՝ անձ ցույց տվող ու ազգակ-*

ցական հարաբերություն արտահայտող հայր, մայր, եղբայր *և դրանցով կազմված բարդությունները, որոնցում նշված բառերը հանդես են գալիս որպես վերջին բաղադրիչ, ինչպես՝* նախահայր, կնքահայր, ծննդայր, հորեղբայր, մորեղբայր *և այլն։*

Ժողովրդախոսակցական ոճում ո հոլովումով երբեմն հոլովվում են նաև աներ, տեգր *բառերը, այլև* ապեր *ժողովրդախոսակցական բառը. ինչպես՝* աներ—աճոր, տեգր—տեգոր, ապեր—ապոր։ *Օրինակ՝ Խնդրեմ ծանոթանաս, Խեչան ապոր տղան—Մինաս Փափախչյան, գերմանական համալսարանի ապագա ուսանող (ՆԴ, Մինաս Փափախչյան)։*

§ 120. Ո *հոլովման տրականը կազմվում է ուղղականից* այ/ո *հերթագայությամբ. ինչպես՝* հայր—հոր, մայր—մոր, եղբայր—եղբոր, նախահայր—նախահոր, հորեղբայր—հորեղբոր *և այլն։*

Այս բառերի բացառականն ու գործիականը կազմվում են տրականի հիմքից համապատասխանաբար ից, ով *վերջավորություններով. ինչպես՝* հոր–ից, մոր–ից, եղբոր–ից, նախահոր–ից, հորեղբոր–ից, հոր–ով, մոր–ով, եղբոր–ով, նախահոր–ով, հորեղբոր–ով *և այլն։*

Ո *հոլովման պատկանող գոյականները ներգոյական չունեն։*

Ա յ լ Ա ձ ե վ Հ Ո Լ Ո վ Ո Ւ Մ Ն Ե Ր

§ 121. Վերը նշված օրինաչափություններից շեղվում է աղջիկ *և* սեր *բառերի հոլովումը։*

Աղջիկ*-ը հոլովվում է արտաքին թեքման* ա *հոլովումով, իսկ* սեր*-ը՝ արտաքին թեքման* ո *հոլովումով։*

Ահա դրանց պատկերը.

Ուղղ. աղջիկ(ը)	*սեր(ը)*
Տր. աղջկա(ն)	*սիրո, սիրուն*
Բաց. աղջկանից	*սիրուց*
Գործ. աղջկանով	*սիրով*

Հոլովումների համակարգում իր բնույթով ու արժեքով սրանցից տարբերվում են հույս, լույս, սուգ, կայսր, կոռուստ, դուստր, գալուստ, ծնունդ, աստված *բառերի հոլովումը։ Եթե* աղջիկ *և* սեր *բառերը ժամանակակից հայերենում հոլովվում են միևնույն վերը*

նշված ձևով, որ տարբեր է սովորական հոլովումներից, ապա թվարկված բառերի հոլովումների շեղում համարվող ձևերը (կայսեր, գալստյան) միակ ձևերը չեն։ Դրանք գոյություն ունեն ժամանակակից հայերենում այդ բառերի համար առավել օրինաչափ դարձած կամ դարձող այլ ձևերի կողքին (տե՛ս § 95 ծանոթ.)։

ԱՌԿԱՅԱՑՄԱՆ (ՏԱՐՈՐՈՇՄԱՆ) ԿԱՐԳ

§ 122. Առկայացման կարգը ձևավորվում է հոդերի միջոցով, որոնք դրվելով գոյականների (այլև գոյականաբար գործածված այլ բառերի) վրա, նրանց բառական իմաստը քերականորեն տարորոշում, առկայացնում են տարբեր մասնավորումներով կամ պարզապես որոշյալության միջոցով։ Բառական իմաստի առկայացումը կամ տարորոշումը կարելի է դիտել հետևյալ հակադրություններում։

1. Նա գիրք շատ է կարդում։ Նա կարդաց հանձնարարված գիրքը։

2. Նա սովորաբար գրիչ է գործածում և ոչ թե մատիտ։ Գրիչդ վերցրու և ոչ թե մատիտդ։

3. Այդ աշխատանքն ավարտելու համար ամիս է հարկավոր և ոչ թե շաբաթ։ Ամսույս 20-ին կբացվի հոբելյանական ցուցահանդեսը։

4. Հավաքին ներկա էին նաև կոմերիտականներ։ Դուք՝ կոմերիտականներդ, պետք է օրինակ ծառայեք դասարանի մյուս աշակերտների համար։

Չնայած իմաստային տարբերություններին, բոլոր հոդերին ընդհանուր է բառերի առարկայական վերաբերության տարորոշումը. գոյականի ցույց տված առարկան հոդով տարբերում, որոշակի ենք դարձնում, ի տարբերություն բառի անհոդ գործածության։ Եվ քանի որ հոդերն այդ դերը կատարում են հիմնականում դրվելով գոյականների վրա, այդ պատճառով էլ հոդերով ու համապատասխան իմաստով ձևավորվում է գոյականի քերականական կարգ։ Կարելի է նաև այդ կարգի ընդհանուր իմաստը համարել որոշյալությունը, քանի որ ս, դ հոդերն իրենց արտահայտած ստացականությամբ, ցուցականությամբ, դիմորոշությամբ որոշյալու-

թյուն են հաղորդում բառին, իսկ ը (ե) հոդի որոշյալությունն ինքնին հասկանալի է։ Սակայն հայտնի է, որ այդ անվանումը հատկացված է ը (ե) հոդին, ու դա սխալ չէ, և բոլոր հոդերը որոշյալությամբ բնորոշելու դեպքում ը (ե) հոդի արժեքը պետք է վերանվանել այլ բառով։ Այսպիսի պարագայում առավել նպատակահարմար է պահպանել ը (ե) հոդի և նրանով արտահայտված քերականական իմաստի անվանումները (որոշիչ հոդ, որոշյալություն), իսկ բոլոր հոդերի քերականական իմաստի համար ունենալ նոր տերմին, որը մոտավորապես արտահայտի բառի իմաստը որոշիչ դարձնելու գաղափար՝ բառերի առարկայական վերաբերությունները առարկայացնելու, մասնավորելու, տարբերակելու միջոցով։ Այս առումով հարմար են առկայացում կամ տարորոշում տերմինները։ Այսպիսով՝ ս, դ, ե (ը) հոդերը կկոչվեն տարորոշիչ կամ առկայացնող հոդեր (ի տարբերություն անորոշ հոդի)՝ իրենց ենթատեսակներով՝ որոշիչ, ստացական, դիմորոշ, ցուցական, իսկ նրանց արտահայտած կարգը տարորոշման կամ առկայացման կարգ։

Ծանոթ.— Պրոֆ. Գ. Ջահուկյանը իր «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» աշխատության մեջ (էջ 144—188) հոդերը քննել է որպես գոյականի քերականական կարգի ցուցիչներ։ Հոդերով ձևավորված կարգը Գ. Ջահուկյանն անվանել է առկայացման կարգ, որը նա բաժանել է երկու ենթակարգի՝ որոշյալության և ցուցա-ստացականության։

Առկայացման (տարորոշման) կարգի քերականական իմաստն ունի հետևյալ դրսևորումները՝ ա) որոշյալություն, բ) ստացականություն, գ) դիմորոշություն, դ) ցուցականություն։

ՈՐՈՇՅԱԼՈՒԹՅՈՒՆ

§ 123. Որոշյալության քերականական իմաստն արտահայտում է առարկայի ծանոթ, հայտնի լինելը խոսողին ու խոսակցին և ձևավորվում է ը, ն հոդերով։ Առարկայի ծանոթ, հայտնի լինելը չի նշանակում նրա խոր ճանաչում. հաճախ այն սահմանափակվում է առարկայի գոյությունը (ընդհանրապես կամ տվյալ պայմաններում) իմանալու փաստով միայն։ Այդ է պատճառը, որ առարկայի անունը խոսքի մեջ մեկ անգամ անորոշ գործածելուց հետո կարելի է լինում գործածել որոշյալ առումով։

Քերականական որոշյալության ու անորոշության հակադրությունը ոչ միշտ է համապատասխանում առարկաների իրապես հայտնի կամ անհայտ լինելուն՝ խոսողին, խոսակցին։ Հաճախ է պատահում, որ ծանոթ առարկան ներկայացվում է քերականական անորոշությամբ։ Դա լինում է այն դեպքում, երբ խոսողը չի ցանկանում կամ անհրաժեշտ չի համարում որոշակիորեն արտահայտել տվյալ բառի առարկայական մասնավորումը։ «Աշոտը քաղաքից տեղափոխվեց գյուղ» նախադասության մեջ գյուղ բառի քերականական անորոշությունը կարող է պայմանավորված լինել ոչ անպայման տվյալ գյուղը խոսողին անհայտ լինելու հանգամանքով։ Դրա պատճառը կարող է լինել խոսողին հայտնի գյուղը քերականական որոշյալությամբ արտահայտելու անհրաժեշտության բացակայությունը։

§ 124. Որոշյալության ձևավորող ը, և հոդերը քերականական դերով նույնարժեք են և ունեն միայն դիրքային տարբերություն։

Սովորաբար ը հոդը դրվում է բաղաձայնով վերջացող բառերի վրա (ծաղիկը, քաղաքը, դիրքը, անտառը), իսկ և–ն՝ ձայնավորով վերջացող բառերի վրա (երեխան, այգին, տարին, երեկոն)։ Ը, և հոդերի կիրառության հարցում որոշ դեր ունեն տվյալ բառի շարահյուսական միջավայրը, իմաստային ու հնչերանգային հանգամանքները։ Այս տեսակետից հատկապես կարևոր դեր ունի բաղաձայնով վերջացող բառին հաջորդող ձայնավորով սկսվող բառի իմաստային և հնչերանգային կապը նախորդ բառի հետ։ Այդպիսի դեպքերում, եթե այդ կապն ուժեղ է, և երկու բառերի միջև արտասանական դադարը հասնում է նվազագույնի կամ բոլորովին չկա, գործածվում է և հոդը, իսկ եթե երկրորդ բառը դադարով և հատուկ շեշտվածությամբ բաժանվում է նախորդից, ապա վերջինս ստանում է ը հոդը, թեև նրան հաջորդում է ձայնավորով սկսվող բառ։

Համմտ. Արամն էլ (ևս) չի գա։
Արամը է՛լ (այլևս) չի գա։
Արամն իրավացի է։
Արամը, իհարկե, իրավացի է։

Որոշյալության ու անորոշության հակադրությունը հանդես է գալիս գոյականի ոչ բոլոր հոլովներում և համապատասխան հոլովների էլ ոչ բոլոր կիրառություններում։

Այդ կարգը հայերենի զարգացման արդի շրջանում հանդես է գալիս ուղղական ու տրական հոլովներում, ըստ որում այդ հոլովների որոշ կիրառություններին հատուկ չէ որոշյալության ու անորոշության հակադրությունը։ Այդպիսիք են՝ կոչականի, որոշիչի և հատկացուցչի կիրառությունները։

Սրանք միշտ հանդես են գալիս առանց որոշիչ հոդի, հետևապես և չունեն այն հակադրությունը, որով ձևավորվում է քննարկվող քերականական երևույթը։

Աշխարհաբարի զարգացման առավել վաղ շրջանում և նույնիսկ մի քանի տասնամյակ առաջ որոշիչ հոդ կարող էին ստանալ նաև բացառական, գործիական, ներգոյական հոլովները։ Օրինակ՝ Իր ցանցիցը մի քանի քայլ հեռվում մի մարդ նշմարեց։ Քահանան նրանց տնիցը անպակաս էր։ Նոր եկած եղբոր գլխովը պտտելիս կլինի (ՎՓ)։

Այդ հոլովները որոշիչ հոդ կարող են ստանալ միայն մի երկու կապակցություններում. ինչպես՝ Ինչու՞մն է բանը։ Գլուխս fառովն էի տվել՝ հանձն առնելով այդ բթամիտ տղայի հետ պարապելու տաժանակիր աշխատանքը (ՆԴ, Տանտիրոջս աղջիկը)։

§ 125. Վերն ասվեց, որ անորոշ առումը ձևավորվում է զրո վերջավորությամբ, այսինքն առանց ձևային միջոցի։ Նշենք, որ անորոշ առումով գործածված բառի հետ երբեմն դրվում է մի, որը ծագում է համանուն թվականից, գործածվում է անորոշ հոդի արժեքով և շեշտում առարկայի անորոշությունը։ Օրինակ՝ Մի իրիկնադեմ վրանում թիկն տված նա զրույց էր անում իր սովորական հյուրերի հետ (ՀՓ, Գրազը)։ Մի մթնագիշեր էր. անձրևն էլ անընդհատ տեղում էր միալար (ՀՓ, Գրազը)։

Քանի որ որոշյալ առումով գործածվում են հայտնի առարկաների անունները, այդ պատճառով էլ խոսողին, խոսակցին անհայտ առարկաների անունները խոսքի մեջ հաճախ նախ գործածվում են՝ անորոշ, իսկ հետո արդեն իբրև մեկ անգամ անվանված և դրանով իսկ հայտնի առարկայի անուն՝ որոշյալ առումով։

Օրինակ՝ Ահա վարագույրի ծալքերից մեկում երևաց ձարձրված հագուստով մի մարդ... Բզիկ-բզիկ հագուստի ծվենները մարմնի վրա պահպանելու համար մարդն իրեն կապկպել էր տարբեր տեսակի չվաններով ու լարերով (ԳՍ, Թեհրան, 1)։ Դրանք բո-

լորը բոկոտն, խեղանդամ մուրացկաններ էին... Մեծ քաղաքում այդ կիսամերկ մուրացկանները թվում էին թշնամիների կողմից հալածված վտարանդիներ, որոնք շրջում էին ապահով մի անկյուն և ուտելիք գտնելու համար (Ն. տ.)։

Երբեմն, հատկապես գեղարվեստական խոսքի մեջ, անծանոթ առարկայի, անձի անունը գործածվում է որոշյալ առումով և ապա տրվում համապատասխան բացատրություն՝ ծանոթացման կարգով։ Օր. երբ դուռը բաց արի, փողոցում, դռան առջև գտնված քարի մի հատիկ աստիճանի կանգնած տեսա Գարեգին Սիսակյանին— մի շատ մոտիկ բարեկամ ընկերոջ, որին գիշերային մթության մեջ իսկույն չկարողացա ճանաչել (ՆԴ, Սպանված աղավնի)։

Սակայն միշտ չէ բառի որոշյալ գործածությանը նախորդում նրա անորոշ գործածությունը կամ հաջորդում բացատրություն. համախ դրա անհրաժեշտությունը չի լինում։ Այսպես, մենք ասում ենք՝ երկինքն ամպել է, աննշան ակավեց, գետինը ձյունով ծածկվել է, արևելքը շառագունել է, խաղաղությունը պայքարով է պահպանվում և այլն, ու կարիք չենք զգում ընդգծված ու նման շատ բառեր նախապես գործածելու անորոշ առումով կամ տալու բացատրություն խոսողին ծանոթացնելու նպատակով. դրա պատճառն այն է, որ երկինք, աննշան, գետին, արևելք, խաղաղություն բառերի առարկայական վերաբերությունը միշտ միանգամայն հայտնի է թե՛ խոսողին, թե՛ խոսակցին։

Այսպիսի կիրառությամբ կարող են հանդես գալ եզակի և որոշ հանրահայտ առարկաների, երևույթների անունները։ Օրինակ՝ Ծուխը թանձր քուլաներով դուրս էր վիժում ծխանից (ՆՋ, Հացավան)։ Սովետական կյանքը բնական էր թվում նրան, ինչպես օդը, ջուրը, արևը։ Ո՞վ կարող էր զրկել աշխարհը օդից, ջրից ու արևից։ Արթնանում է բնությունը, երկիրը պատում դալար կանաչով (ՀՔ, Մեծ տան զավակները)։ Բանակականության գիտական օրենքներին ֆաշիզմը հակադրեց իռացիոնալը, բնազդականը (Իս.)։ Երևի կյանքն արդեն ձանձրացրել է քեզ (ՆԴ, Ջագունյան)։

Միանգամից որոշյալ առումով կարող են գործածվել նաև ոչ եզակի առարկաների անուններ, եթե դրանց գոյությունը տվյալ պարագաներում հասկանալի է։ Օրինակ՝ Արուսը պրիմուսը վառեց (ՆՋ, Հացավան)։ Արուսը լևոնի թղթերից մի թերթ պոկեց, բանա-

Խամաճը հայելու կողքից վերցրեց և դրեց սեղանի վրա, գրիչը ձեռն առավ ու սկսեց մտածել (Ն. տ.)։

Խոսքային և իրադրական վերոհիշյալ հանգամանքներից բացի, բառը որոշյալություն կարող է ստանալ նաև մի շարք վերադիրների շնորհիվ։

Որպես այդպիսի դեր կատարող վերադիրներ կարող են հանդես գալ.

ա) Ածականի գերադրական աստիճանը. Վերջինս ամենաօրինաչափ բրիգադիրն էր ամբողջ կոլխոզում (ՆՋ, Հացավան)։ Այնուհետև եղավ Մեծ Հոկտեմբերը, որ պատմական տարեգրություններիի ամենափառահեղ օրն է (ՀՔ, Մեծ տան զավակները)։ Մի ժամ առաջ Կլարա Սարխոշովան իրեն ամենաերջանիկ կինն էր համարում (Ն. տ.)։

բ) Դասական թվականները. Ես Հացավանում քո առաջին բարեկամն եմ (ՆՋ, Հացավան)։ Բայց երկրորդ ոսոխիկաը, ցույց տալով մետաղե ատամները, չղայնացավ (ԳՍ, Թեհրան, 1)։ Վեցերորդ գիշերը մոլորված մի պտուտահողմ անցավ մեր ժայռերի վրայով (ՎԱ, Ծարավ)։

գ) Ուղղական հոլովով դրված գոյական որոշիչները. Տիկին Վերգինեն մորը ճանապարհ դրեց մինչև աստիճանների գլուխը (ՍՋ, Հեղկոմի նախագահը)։ Գոռ իշխանը ցանկանում է ներկայանալ թագուհուն (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Թագավորի դիտավորությունը հայտնի էր... Վահրամ Սեպուհին (Ն. տ.)։ Պարոն Հարությանն ինքն էլ չէր հասկանում (ՆԴ, Քնքուշ լարեր)։

դ) Հատկացուցիչը. Գարեգինի մայրը շատ գեղեցիկ և կենսաթրթիռ մի կին էր (ՆԴ, Սպանված աղավնին)։ Փոքրիկի ձեռքն ընկել էր մոր դեմքին (ՀՔ, Բարեկամություն)։ Ճարճատում է աշտարակի գնդացիրը (ՀՔ, Որդու վերադարձը)։ Ձեր ճամակը շատ հուզեց մեզ (ՀՔ, Դեներալի քույրը)։

Մանոթ.—Երբ տվյալ հոլովաձևն ունի հատկանիշի իմաստ, հատկացյալը սովորաբար դրվում է անորոշ առումով։ Օրինակ՝ երկար Վասոն... աղամարդու ձայն ունի (ՍՋ)։ Բայց սիրտս... կարոտել է մոր գրկի (ՀՇ)։ Քննարկվող հարցի տեսակետից հետաքրքրական է, որ այդպիսի վերադիրները նույնիսկ երբեմն կարելի է փոխարինել համապատասխան հարաբերական ածականներով՝ աղամարդկային (ձայն), մայրական (գիրկ)։

ե) Այս, այդ, այն, սույն, նույն, միևնույն, մյուս, բոլոր, ողջ, ամբողջ, համայն և նման դերանունները. Այս երգը *պարիսպների սեփականությունից բարձրացել և դարձել է տառապանքի խորհրդանշանը (Իս., Չինական մեծ պարսպի երգը)։* Այդ բաները *Մուկուչը գիտե (Ար., Ընկեր Մուկուչը)։* Այդ այն օրերին էր, երբ ամեն *ինչ շարժվեց (Ար., Կիսատ տունը)։* Նույն օրը *էմման քաղաքային փոստով հետևյալ նամակը ստացավ (ՆԴ, Զազունյան)։*

զ) Որոշակի հարաբերությամբ առարկա ցույց տվող, ցուցականության իմաստ ունեցող մի շարք բառեր՝ միջին, վերջին, նախորդ, հաջորդ, հետևյալ, ճշված, վերոհիշյալ և *այլն։ էմման հետևյալ օրը միայն իմացավ Զազունյանի անձնասպանության լուրը (ՆԴ, Զազունյան)։ Բայց վերջին դեպքերը նորից հաստատեցին, որ դոկտոր Ազադին մնում է ամենասիրված դասախոսներից մեկը (ԳՄ, Թեհրան)։ —Դուք յա՞վ եք հանաչում նրան,— հարցրի բեդավոր սերժանտին, ցույց տալով վերջին հուշատախտակը (ՀՔ, Սըրբազան ուխտը)։*

Որոշիչ հոդը գործածվում է ոչ միայն գոյականների, այլև առարկայի հատկանիշ ցույց տվող բառերի հետ, սրանց գոյականաբար գործածության դեպքում. ինչպես՝ լավը, գեղեցիկը, բարձրը, հաճելին, երեքը, հարյուրը, կարդալը, գրելը, տեսածը, գնացողը, այսքանը, որքանը *և այլն։*

§ 126. Ը (ե) *հոդը ժամանակակից հայերենում ունի որոշիչ իմաստ և ոչ ստացականության, թեև առաջին հայացքից նրա որոշ կիրառություններ այդպիսի տպավորություն թողնում են և այդպիսի կարծիքի տեղիք են տվել։ Թվում է, թե* ը (ե) *հոդի որոշ կիրառություններում կա ստացականության իմաստ։ Վերցնենք մի քանի օրինակներ։*

Նա գիրքը կարդաց մեկ օրում։ Մատները *ծաղկել են։* Աքոռը *սեղանի մոտ է։ Նա ոտը դրեց գետնին։ Այստեղ միևնույն* ը *հոդն ունեցող բառերից մի քանիսը ստացական իմաստ չունեն, իսկ վերջինն ունի։ Եթե, իսկապես,* ը*-ն ստացական լիներ և փոխարիներ նրա և իր դերանուններին, ապա բնականաբար հիշյալ բառերին նա պետք է տար իր հատկացական իմաստը, ցույց տար այդ առարկաների պատկանելությունը 3-րդ դեմքին, ինչպես* ս, դ *հոդերը։*

Ոսր բառի ստացական իմաստը պետք է որոնել ոչ թե ը հոդի, այլ իր իսկ ոտ բառի իմաստի մեջ։ Կան բառեր, որոնց ցույց տրված առարկաները կամ անձերը իրականության մեջ առանձին, անկախ գոյություն չունեն։ Այդ առարկան կամ անձը գոյություն ունի այնչափով, որչափով որ նա ունի իր կրողը, որչափով ինքը պատկանում է մեկին։ Այդ բառերն են՝ ձեռ, ոտ, աչ, բեռան, ֆիք, գլուխ, խելք, ատամ և նմանները. հայր, մայր, ֆույր, եղբայր, ամուսին, կին *(ամուսին)* և նմանները։

Ձեռքը, ոտը, աչքը և այլն գոյություն ունեն որպես որևէ մեկի ձեռք, ոտ, աչք և այլն։ Նրանք իմիջիայլոց պատկանում են մեկին, որևէ մեկինն են (իմ, ֆո, ձրա)։ Հայր, մայր, ֆույր և մյուս բառերի ներքին ստացական իմաստը բխում է նրանց ցույց տված ազգակցական, բարեկամական իմաստից, ավելի ճիշտ՝ հարաբերությունից։ Հայր, մայր, ֆույր և այլն անունները կարող են կրել միայն այն անձինք, որոնք այդպիսին են որևէ մեկի համար։ Այսպիսով, վերոհիշյալ և նման բառերը իրենց մեջ ունեն ընդհանուր հատկացական իմաստ, ստացականության պոտենցիա, որը կոնկրետ կերպով դրսևորվում է գործածության ժամանակ, խոսքի մեջ։

Այն հանգամանքը, որ 3-րդ դեմքի պատկանելության արտահայտում են ը հոդն ունեցող միայն այն գոյականները, որոնք անկախ հոդից ինքնին ստացական իմաստ ունեն, նշանակում է, որ ը հոդը ստացական չէ։ Եթե նա ստացական լիներ, միանգամայն անխուսափելիորեն պետք է իր ստացական իմաստը հաղորդեր ստացական իմաստ չունեցող գոյականներին, այսինքն՝ իր այդ դերը կատարեր հենց այնտեղ, որտեղ անհրաժեշտ է։

Իսկ ինչպե՞ս կարող է բառը որոշյալ դառնալով՝ իր իմաստը կոնկրետացնել 3-րդ դեմքի վրա։ Եթե այս բառերը, ինչպես և բոլոր բառերը անորոշ առումով նշանակում են տվյալ տեսակի առարկա կամ անձ ընդհանրապես՝ ձեռք, մեջք, մայր և այլն, ապա որոշյալ դառնալով՝ դրանք ստանում են որոշյալ և կոնկրետ իմաստ՝ ձեռքը, մեջքը, մայրը *(ինչպես՝ բարը, գրիչը, փողոցը)*։ Եվ քանի որ, ինչպես տեսանք, իրականության մեջ գոյություն ունեցող տրվյալ ձեռքը, մեջքը, մայրը, որպես այդպիսին, պատկանում են որևէ մեկին, ուրեմն՝ խոսքի մեջ ևս, թեկուզ և առանց ստացականություն արտահայտող քերականական ձևային միջոցի, դրանք բնականաբար պետք է հանդես գան որպես որևէ մեկին պատկանող, որևէ

մեկի (իմ, քո, նրա) ձեռք, մեջք, մայր և այլն։ Երեք դեմքերից որևէ մեկին պատկանելու նրանց ներքին իմաստային անհրաժեշտությունը և ս կամ դ հոդ չունենալու պատճառով առաջին ու երկրորդ դեմքերի պատկանելությունը բացառելը պայմանավորում է մյուս մեկ, այն է՝ երրորդ դեմքի պատկանելություն։

Կարելի է հարցը սրանով լուծված համարել, բայց թվենք հետևյալ փաստերը, որոնք դարձյալ հաստատում են, որ իսկապես ը (ն) հոդը միայն որոշիչ հոդ է՝

ա) Հայտնի է, որ մեր գրական աշխարհաբարում բոլոր հոլովները ստացական հոդ են ընդունում՝ ձեռս, ձեռիս, ձեռիցս, ձեռովս, ձեռումս, իսկ որոշիչ հոդ ընդունում են միայն ուղղական, տրական հոլովները, բացառական, գործիական, ներգոյական հոլովները չեն ընդունում։

Եթե ը (ն) հոդը նաև ստացական լիներ, ապա նա վերջին հոլովներում որպես որոշիչ հոդ կարող էր մերժվել, բայց որպես ստացական հոդ պետք է գործածվեր ինչպես ս, դ հոդերը։ Մինչդեռ նա այդ հոլովներում մերժվում է, որ նշանակում է՝ նա միայն որոշիչ է։

բ) Ստացական իմաստ ունեցող բառերի թեք հոլովաձևերը, հաճախ նույնիսկ ը հոդը չունենալով հանդերձ, արտահայտում են 3-րդ դեմքի պատկանելություն։

Օրինակ՝ ես ձեռիցը բռնեցի և ման ածեցի։ Նա երկար ժամանակ մորից նամակ չստանալու պատճառով չափազանց անհանգիստ էր։ Ինչի՞ց է բխում ընդգծված բառերի պատկանելության իմաստը, չէ՞ որ այդ բառերը ոչ հոդ ունեն, ոչ դերանուն-հատկացուցիչ։ Բացառական, գործիական, ներգոյական հոլովները, թեև որոշիչ հոդ չեն ստանում, բայց հաճախ որոշակի առարկա կամ անձ են ցույց տալիս, հետևապես և որոշյալ իմաստ են ունենում։ Այդ բառերի ստացական իմաստը, որոշյալ դառնալով, պետք է վերագրվի որևէ մեկի, և ս, դ հոդ չունենալու պատճառով այդ բառերի հոլովաձևերը հաճախ իրենց ներքին իմաստը կոնկրետացնում են 3-րդ դեմքի վրա։ Սա մի անգամ ևս ցույց է տալիս, որ ստացական իմաստ ունեցող բառերի՝ 3-րդ դեմքի հատկացական իմաստը բխում է այդ բառերի որոշյալ լինելուց ու ս, դ հոդերի բացակայությունից, և ոչ թե ը (ն) հոդի ստացական լինելուց։

գ) Մեր արդի գրական լեզուն ստացական հոդի և ստացական դերանվան գործածության մեջ հասել է լիակատար պարզության։ Դրանք միաժամանակ հանդես գալ չեն կարող միևնույն առարկայի պատկանելությունը արտահայտելու համար։ Գրական չեն իմ մայրս, ֆո ձեռդ և այլն ձևերը։ Մինչդեռ մենք ազատ գործածում ենք ևրա մայրը, ևրա ձեռքը և այլն։ Եթե այս գոյականների ը հոդը ստացական լիներ, ապա նրանց հետ չպետք է գործածվեր ևրա դերանունը։

դ) Ը (ե) հոդի որոշիչ լինելն է վկայում նաև այն իրողությունը, որ ստացական իմաստ ունեցող բառերը երբեմն ոչ ստացական իմաստով գործածվելիս ունենում է նույն ը (ե) հոդը, որը պատկանելության իմաստ չի տալիս գոյականին։ Օրինակ՝

Նախքան գլուխը նկարելը ուզում եմ հանգստանալ։ Նա ձեռքը տվեց ինձ։

Այս նախադասություններում ընդգծված բառերը կարելի է հասկանալ և՛ ստացական, և՛ ոչ ստացական իմաստով։ Առաջին նախադասության մեջ գլուխը բառը կարող է նշանակել և՛ ևրա գլուխը, և՛ այն գլուխը (գլուխ նկարը), որ գտնվում է նկարչի առաջ, և նա պետք է արտանկարի։ Երկրորդ նախադասության մեջ ձեռքը *բառը կարող է նշանակել և՛ իր ձեռքը, և՛ մի առանձին ձեռք (ասենք, մի արհեստական ձեռք կամ մարդու մարմնից անջատված ձեռքը, որը ուսումնասիրվում է լաբորատորիայում)։*

Այսպիսով, ը (ե) հոդն ունեցող բառերի ստացական իմաստը չի բխում հոդից. դա բառի ներքին ստացական է, որի երորդ դեմքի վրա կոնկրետացնելը տրամաբանորեն բխում է տեքստից՝ պայմանավորված՝ ս, դ, հոդերի բացակայությամբ։

ՍՏԱՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

§ 127. Ստացականություն արտահայտում են ս, դ *հոդերը, ինչպես՝* գիրս *(իմ գիրքը),* գիրդ, *(քո գիրքը),* աթոռս *(իմ աթոռը),* աթոռդ *(քո աթոռը)։*

§ 128. Այս հոդերը կարող են ստանալ բոլոր գոյականները (հատուկ թե հասարակ, եզակի թե հոգնակի, անկախ հոլովից), որոնց ցույց տված առարկան կարող է պատկանել որևէ մեկին՝ գրիչս, մատիտովս, ձեռիցս, հայելիս, ընկերոջս, գրիչդ, մատիտովդ, ձեռներիցդ, հայտարարությունդ, հայելիդ, ընկերոջդ *և այլն։*

Որոշ գոյականներ, որոնց ցույց տված առարկաները չեն կարող պատկանել մեկին, սովորաբար ստացական հոդ չեն ընդունում. ինչպես՝ երկրագունդ, լուսին *և այլն։ Հարադիր գոյականները հոդ ընդունում են երկրորդ բաղադրիչի վրա։ Օրինակ՝* Քեզ համար եմ երգս հյուսում՝ ուշ ու միտս քեզ տված *(ՀՇ)։* Հուզմունքից ձեռ ու ոտս *թուլացան։* Տուն ու տեղդ *թողած ո՞ր ես մեկնում։*

Ածականները հոդ կարող են ստանալ գոյականաբար գործածվելիս, երբ անհրաժեշտ է ածականով ցույց տալ տվյալ որակն ունեցող առարկան, անձը։ Օրինակ՝ Մեծդ քանի՞ տարեկան է։ Փոքրիդ շատ եմ սիրում։ Բարձրագույնդ *որտե՞ղ ես ավարտել և այլն։* Վատ, միջակ, լավ, գերազանց *ածականները, որոնք գործածվում են որպես գնահատական և դրանով իսկ գոյականանում են, կարող են հոդ ստանալ։*

Թվականները սակավ դեպքերում գոյականաբար գործածվելիս ընդունում են ս, դ հոդ. այդ դեպքում թվականով ցույց է տրվում այդ թիվը կրող առարկայի պատկանելությունը։ Օրինակ՝ Առաջինդ *(առաջին հատորդ) լուֆյա է տեսել։* Երկրորդդ *ո՞վ է խմբագրել։* Հիսունս *անց է։* Քառասունդ *ե՞րբ է լրանում։ Թվականը նաև իբրև թվանշանի անուն կարող է ստացական հոդ ստանալ։ Օրինակ՝* Պարզ չես գրում, երկուսդ երեքիցդ չի տարբերվում։

Ս, դ հոդերը ստացականության իմաստով դրվում են նաև մի շարք դերանունների վրա, որոնք են՝

ա) Ինչ, որ, որտեղ, ֆանիերորդ *հարցական-հարաբերական դերանունները.* Ի՞նչդ է պակաս։ Ինչի՞ս ես տեղյակ։ Այդ ֆանի՞երորդդ է։ Ո՞րդ ես հագնելու։ Որտե՞ղդ է ցավում։ Վերջին ձևը գործածվում է հատկապես մարդու մարմնի մասերի վերաբերյալ արտահայտվելիս։ Ինչդ որ զգամ վատ է, չեմ ների։ Որդ որ սիրում ես, հագիր։ Որտեղդ որ ցավում է, ասա՛։

բ) Այստեղ, այդտեղ, այնտեղ *ցուցական դերանունները.* Այնտեղդ էլ չի՞ ցավում։ *Երբեմն գործածվում են նաև* այստեղս, այդտեղդ *ձևերը։*

գ) Որոշյալ դերանուններից՝ ամեն ինչ, ոչինչ. Ամեն ինչովդ *տարբերվում ես ուրիշներից։* Ոչնչիցդ *դժգո՞հ չես։*

Բայի եղանակային ձևերը ստացական հոդ չեն ստանում։ Դերբայներից հոդ ստանում են անորոշ, հարակատար, ենթակայական դերբայները՝ ինչպես՝ կարդալս, ասածդ, ընթերցողդ։

Մակբայների, իսկական կապերի, շաղկապների, եղանակավորող բառերի ու ձայնարկությունների հետ սովորաբար u, դ հոդ չի գործածվում։

Ստացական իմաստով հոդ կարող են ընդունել մի քանի կապեր, որոնք են՝ հետ, fով, վրա, մեջ, տակ, դեմ, մոտ և այլն։

Վերջապես յուրաքանչյուր բառ, նույնիսկ արտահայտություն, եթե դիտվում է որպես առարկա, մտքով առարկայացվում է, որի մասին խոսվում է, կարող է ստանալ u, դ հոդ։ Օրինակ՝ Կարծում եմ, ինչուիդ պատասխանելն ավելորդ է։ Եթեներդ տեղին չես գործածում։

§ 129. Ժամանակակից հայերենում ստացական հոդ ունեցող բառը գործածվում է առանց ստացական դերանվան. nnu, գիrfu, ոչ թե՝ իմ nnu, իմ գիrfu։ Ստացական հոդի և ստացական դերանվան համատեղ գործածությունը իրավամբ որակվում է իբրև բարբառայնություն, խորթ մեր գրական լեզվին։

Ստացական հոդերը սովորաբար փոխարինում են համապատասխան դերանվան սեռական հոլովին։ Բայց հաճախ սրանք մեկը մյուսով չի կարելի փոխարինել իմաստա-ոճային որոշ տարբերության պատճառով։

Ստացական հոդերի կիրառությունների մասին պետք է նկատի ունենալ հետևյալը.

ա) Երբ առարկայի պատկանելությունը հատկապես ընդգծելու անհրաժեշտություն չկա, այն արտահայտվում է հոդով։ Օրինակ՝ Դարձրու ամեն մի ակոսդ մի հրձիգի գերեզման (ՀՇ)։

Ընդգծված պատկանելությունը սովորաբար արտահայտվում է անձնական դերանվան սեռական հոլովով։

Թույլ տուր ինձ fn ընկերը, fn օգնականը լինել (ՀՇ)։

Չէ՛, թող fn այդ համառ երազը, fn չար դավադրությունը (Ար., 11)։

Հակադրվող պատկանելությունը նույնպես սովորաբար արտահայտվում է դերանվան սեռական հոլովով։ Օրինակ՝ Քո՛ գիրքը տուր նրան և ոչ թե իմը։ Ի՛մ գրքի մասին է խոսքը և ոչ թե fn գրքի։

բ) Քննարկվող հոդերը կարող են գործածվել անձնական դերանվան եզակի առաջին և երկրորդ դեմքով արտահայտված կողմնակի ենթակայի փոխարեն։ Օրինակ՝ Գրեթե չէի զգում Քալիից աճեջատվելս (ՆԴ, Տանտիրոջս աղջիկը)։ Տվածս դասը ապարդյուն չէր

անցել (ն. տ.)։ Յույց տվածս է ամենագեղեցիկը (Իս., Լիլիթ), Ինչ որ գիտեմ, կանեմ, չիմացածս կսովորեմ (Շիրվ., Ջուր հույսեր)։

Եթե մի քանի առարկաների կամ երևույթների միևնույն դեմքին պատկանելը կարող է արտահայտվել մեկ դերանունով, ապա նույն պատկանելությունը հոդով արտահայտելիս սովորաբար վերջինս դրվում է այդ բառերից յուրաքանչյուրի վրա։ Օրինակ՝ Համբուրեցի այն տեղը, որ նրա մատներն իմ անվան ու ազգանվան սկզբնատառերն էին ասեղնագործել (ՆԴ, Տանտիրոջս աղջիկը)։ Բայց՝ Նրբությամբ ասեղնագործված էին անվանս և ազգանվանս սկզբնատառերը (ն. տ.)։

գ) Երբեմն կոչականները ևս ստացական հոդ են ընդունում։ Օրինակ՝ Կենդանի են, աղջի՛կս, մի՛ կասկածիր (ԴԴ, Վարդանանք, 1)։ Վա՜յ, խեղճ տղաս, Ոչ մի տեղդ չցավա՞ց (Իս.)։ Ինչպե՞ս հայտնեմ սրտիս հուրը, Ճազելի՛ս (Իս.)։

Որպես կոչական հանդես եկող աստված, տեր և նման բառերի հետ ս հոդ չի գործածվում։ Օրինակ՝ Աստված իմ, աստված իմ, և մի՞թե ձեռդ պիտի բարձրանա նրանց վրա (ԴԴ, Վարդանանք, 1)։ Ազատել ենք, տե՛ր իմ (ն. տ.)։

Կոչականների ստացականությունը ավելի հաճախ արտահայտվում է դերանունով։ Ինչպես՝ Դո՛ւ, հավերժող իմ Հայաստան, Անուն քաղցր ու վսեմ (Իս.)։ Անուշ, տանջող, իմ երազներ, իմ խենթ հույզեր, էլ ձերը չեմ, էլ ձերը չեմ (ՀՇ)։

դ) Սովորաբար հոդը, միանալով բառի եզակի թե հոգնակի ձևերին, ցույց է տալիս եզակի ստացականություն։ Ինչպես՝ գիրս—իմ գիրը, գրքերս—իմ գրքերը:

§ 130. Ժամանակակից հայերենում հոգնակի ստացականության իմաստ արտահայտվում է ներս, ներդ, մասամբ և ները բազադրյալ մասնիկներով։ Օրինակ՝ սրտներս=մեր սիրտը կամ մեր սրտերը, սրտներդ=ձեր սիրտը կամ ձեր սրտերը։

Հոգնակի ստացականության իմաստ այդ ձևով կարող են արտահայտել հիմնականում հետևյալ բառերը.

ա) Բոլոր միավանկ գոյականները, բացի եզ, ոտ, մատ, ձեռ, լեռ և նման բառերից, որոնք գրաբարում ունեցել են ն վերջնահնչյունը, և ժամանակակից հայերենում հոգնակիի մեջ երևան է գալիս այդ ն-ն։ Օրինակներ՝ աչք-ներս, կողք-ներս, գրք-ներս,

գործ-ներս, գովք-ներս, խելք-ներս, տեղ-ներս, կյանք-ներս, գոգ-ներս, ձեռք-ներս (քայց ձեռներս=իմ ձեռները) և այլն։

բ) Այն բազմավանկ բառերը, որոնց ցույց տված առարկայից մարդ սովորաբար մեկն է ունենում կամ մեկն ունի տվյալ դեպքում։ Օրինակներ՝ զլուխ-ներդ, բերան-ներդ (փակեցեք), երես-ներդ (այս կողմը դարձրեք), ճակատ-ներդ, իրան-ներդ, անուն-ներդ, ազգա-նուն-ներդ, կոկորդ-ներդ, ծոծրակ-ներդ, լեզու-ներդ, հոգի-ներդ և այլն։

գ) Անորոշ, երբեմն նաև հարակատար դերբայները. օրինակ՝ գալ-ներդ, գնալ-ներդ, ուտել-ներս, գրած-ներս և այլն։ Վերջին բա-ռաձևը կարող է գործածվել և՛ իմ գրածները, և՛ մեր գրածները իմաստով։

ԴԻՄՈՐՈՇՈՒԹՅԱՆ

Տարորոշման կարգի մյուս արտահայտությունը դիմորոշու-թյունն է, որը ձևավորվում է ս, դ հոդերով։ Ս հոդը ցույց է տալիս առաջին դեմք, դ-ն՝ երկրորդ դեմք։ Այսպես՝ «երեքս միասին բարձրացանք պատշգամբ» (ՆԴ) նախադասության մեջ երեխս բա-ռի ս հոդը ցույց է տալիս առաջին դեմքը, այսինքն՝ այդ երեքի (երեք հոգու) տակ հասկացվում է մարդկանց մի խումբ, եռյակ, որի մեջ է մտնում խոսողը։ «Դուք երկուսդ էլ վատ եք կարդում» (ՆԴ) նախադասության մեջ երկուսդ բառի դ հոդը ցույց է տալիս երկրորդ դեմք, այսինքն՝ հոդն ունեցող բառով ցույց են տրվում խոսակից-ները։

§ 131. Դիմորոշ հոդերը դրվում են՝

ա) Անձ ցույց տվող գոյականների, ինչպես և անձ ցույց տը-վող դերանուններից մի քանիսի վրա։ Օրինակ՝ Մենք՝ օտարազգի ըն-կերներս, խոսում ենք գալիք օրերից (Ար.)։ Ինչո՞ւ տղամարդիկդ այնքան ուշ-ուշ եք լաց լինում, բայց որ լաց եք լինում, քարի սիրտ պիտի լինի, որ ձեզ դիմանա (ՆԴ, Մահը)։ Մի րոպեից ամենիս Կոլյայի սենյակումն էինք (ՆԴ, Տանտիրոջս աղջիկը)։ Որ ամենիդ նստեք ու քշեք (ԳՍ, Թեհրան)։

բ) Հատկանիշ ցույց տվող բառերի (ածականներ, թվական-ներ, դերանուններ) վրա, որոնք տվյալ դեպքում ցույց են տալիս առաջին և երկրորդ դեմքին պատկանող անձանց հատկանիշներ։

Օրինակ՝ կազմակերպել ենք բոլորս նրա... ղեկավարությամբ (ՆՋ, Հացավան)։ Մյուսներդ նամակները կտաք նախարարներին (ԴԴ, Վարդանանք, 1)։

դ) Ենթակայական և հարակատար դերբայների վրա և ցույց են տալիս գործողություն կատարողին։ Օրինակ՝ Դուք՝ եռ մնացածներդ (կամ եռ մնացողներդ), պետք է հետևեք առաջավորներին։ Իհարկե, ղեկավար աշխատողներս ամեն կերպ կաջակցենք ձեզ։ Թող կանգնածները դուրս գնան, իսկ նստածներդ սպասեցե՛ք։

§ 132. Արդի հայերենի բոլոր հոդերի համեմատությամբ դիմորոշ հոդերը թույլ են արտահայտում իրենց իմաստը՝ դեմքի իմաստը։ Այդ է պատճառը, որ հաճախ անհրաժեշտ է լինում դիմորոշ հոդով ցույց տված դեմքը արտահայտել նաև անձնական դերանունով. ես՝ ուսանողս, մենք՝ բաղաքացիներս, դուք՝ բանվորներդ և այլն։ Խոսքից դուրս վերցրած՝ բառերի դ հոդը կարող է մի նախադասության մեջ ունենալ դեմքի իմաստ, մի այլ նախադասության մեջ՝ պատկանելության իմաստ։ Ավելին. հաճախ նույնիսկ խոսքից դուրս վերցրած՝ առանձին նախադասության մեջ էլ հնարավոր չէ այդ որոշել (եթե հոդ ունեցող բառը որպես ենթակա հանդես չի գալիս նախադասության մեջ)։ Ուսանողներիդ *մասին գրված է թերթում նախադասության մեջ ուսանողներիդ բառը կարող է նշանակել և՛ «քո ուսանողների», և՛ «ձեր՝ ուսանողներիդ»։ Նման անորոշությունից խուսափելու համար դիմորոշ հոդ ունեցող բառը սովորաբար գործածվում է որպես բացահայտիչ, որի բացահայտյալը արտահայտվում է դիմորոշ հոդի ցույց տված դեմքի անձնական դերանունով։ Վերոհիշյալ նախադասության մեջ դ հոդը ստացական լինելու դեպքում նախադասությունը պետք է գործածել այնպես, ինչպես որ կա, իսկ եթե հոդը դիմորոշ է, ուսանողներիդ բառը պետք է ունենար բացահայտյալ. Ձեր՝ ուսանողներիդ մասին գրված է թերթում։ Երբ դիմորոշ հոդ ունեցող բառը նախադասության մեջ կատարում է ենթակայի պաշտոն, ապա նախադասության ստորոգյալի դեմքից կարող է հասկացվել նրա դիմորոշ լինելը։* Ուսանողներս *լավ են հասկանում մեր պարտականությունները։ Իսկ եթե ստորոգյալն արտա-*

հայտված լիներ բայի երրորդ դեմքով, այդ նախադասության մեջ ա հոդը կլիներ ստացական։ Ինչպես՝ Ուսանողներս լավ են հասկանում իրենց պարտականությունները։

ՅՈՒՑԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

§ 133. Ժամանակակից հայերենում ցուցականության իմաստ արտահայտում է ս հոդը։ Ս հոդը նշված իմաստով ունի շատ սահմանափակ կիրառություն. այն գործածվում է սակավաթիվ բառերի հետ։ Ս հոդն ունի ցուցական այս դերանվան իմաստը, արտահայտում է առարկայի և ժամանակի մոտիկության գաղափար։

§ 134. Ցուցական հոդը գործածվում է՝

ա) ժամանակի անունների հետ և ցույց է տալիս խոսելու պահին մոտ ժամանակ. ամառս, աշունս, ձմեռս, գարունս, տարիս, ամիս, ժամանակս, դար (շատ սակավ դեպքերում), վերջ (ժամանակի իմաստով) և այլն։

Օրինակ՝ Ասում է, որ ամառս հանգստանալ է ուզում (ՎՓ)։ Վերջին օրերս Ռաշիդի հետ շատ տարօրինակ բան էր տեղի ունենում (ԳՍ, Թեհրան, 1)։ Այդ գյուտը լույս սփռեց վերջերս տեղի ունեցած շատ իրադարձությունների վրա (ՆՋ, Հացավան)։

Ծանոթ.—Սովորաբար օր, տարի, ժամանակ, ինչպես և վերջ (ժամանակի իմաստով) բառերի հոգնակի թվի վրա է ավելանում ցուցական հոդը. օրերս, (վերջին) տարիներս, ժամանակներս, վերջերս։

բ) Տեղ ցույց տվող սակավաթիվ բառերի հետ՝ արտահայտելով այս դերանվան իմաստը. Տեղիս (=այս տեղի, այստեղի) բնակիչները հայեր են։ Մի տարի այնտեղ էր տաղանդավոր դերասան մեր սիրելի Վրույրը, որ լուսանկարում էր մայրաքաղաքիս հուշարձանները (Իս.)։ 1773 թվականին, հարավային իր շրջագայությունների ժամանակ Բաղաեումս կանգ է առնում Եկատերինա թագուհին (ՀՔ, Մեծ տան զավակներ)։ Տարեգրությունը... ոչ մի տեղեկություն չի թողել գավառակիս ժողովրդական կյանքի մասին (Ն. ա.)։

Վերջին բառի հետ ս ցուցական հոդը գործածվում է ոչ միայն այս կամ այն առարկան որպես մի քանի առարկաներից վերջինը և խոսողին մոտ գտնվելը ցույց տալու, այլև խոսքի մեջ մեկից ավելի բառերից վերջինը ցույց տալու համար։ Այսպես՝ Վաստակն աշ-

քով արավ գուռնաչուն, և վերջինս թշերը ուռեցրեց (ՆՋ, Հացավան)։ Մի քանի անգամ փորձեց հայացքով կապվել նոր քարտուղարի հետ, սակայն վերջինիս ուշադրությունը կլանված էր ուրիշ ուղղությամբ (Ն. տ.)։

Ծանոթ.—*Արդի հայերենին խորթ է ցուցական հոդը և ցուցական դերանունը գործածել միևնույն բառի հետ։ Ինչպես՝ Հենց այս* rոպեիս *բրիգադները դաշտում աշխատում են (ՆՋ, Հացավան)։*

ԳՈՅԱԿԱՆԻ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 135. Գոյականը, որպես խոսքի մաս, չունի բառակազմական այնպիսի ընդհանուր հատկանիշ կամ հատկանիշներ, որոնք առանձնահատուկ լինեին բոլոր գոյականներին, ի տարբերություն այլ խոսքի մասերի, հետևապես և սահմանազատիչ արժեք ունենային գոյական խոսքի մասի համար։ Նշենք, որ այդպիսի հատկանիշը կամ հատկանիշների ամբողջությունը կարելի կլիներ արժեքավորել ոչ միայն սոսկ բառակազմական, այլև քերականական տեսակետից։ Վերցնենք բառակազմական երկու տիպ և քննենք այդ տեսակետից. ածական+գոյական *և* ածական+ություն։ *Առաջին կաղապարով կարող են կազմվել՝ ա) գոյականներ՝* հարթավայր, մեծատուն, ճորաճառս, սևաճող, վերնաճարկ, վերջնաճաշիվ, *բ) ածականներ՝* բացսիրտ, բարձրաճարկ, գանգրաճեր, շիկաճեր, ցածրաճասակ, փոխրոգի, *գ) մակբայներ՝* կիսաձայն, ցածրաձայն։

Այստեղից կարելի է հանգել մի եզրակացության, որ բառաբարդության այս տիպը, այսպես ասած, քերականական արժեքի տեսակետից չեզոք է, այն հանդես չի գալիս որպես որևէ խոսքի մասի արժեքի ձևավորիչ, հետևապես և նրանով չի կարող բնորոշվել որևէ առանձին խոսքի մաս։

Ածական+ություն *կաղապարով կազմվում է միայն գոյական, ինչպես՝* անճանգստություն, բարձրություն, բարություն, գեղեցկություն, դատարկություն, ճնություն, հոգատարություն, հայտարարություն, նորություն, սպիտակություն *և այլն։ Սա նշանակում է, որ* ություն *ածանցը չեզոք չէ խոսքի մասային արժեք ձևավորելու հարցում։ Եվ եթե խոսքի մասը բառա-քերականական կարգ է, ապա նշանակում է՝ միայն մեկ խոսքի մաս կերտող բառակազմական միջոցը ևս ունի համապատասխան բառա-քերականական արժեք։ Նշենք նաև, որ ածականներից ածանցով կազմված*

գոյականները բնականաբար ձեռք են բերում համապատասխան քերականական հատկանիշներ՝ կազմելով հարացուցային այլ ձևեր, որոնք տարբեր են այդ բառերի առանց ություն ձևի հարացույցից։ Համմա. աճիճգիստ, ավելի աճիճգիստ, ամենաաճիճգիստ *և* աճիճգստություն, աճիճգստության, աճիճգստությունից, աճիճգստությամբ, աճիճգստություններ *և այլն։*

Բարձր, ավելի բարձր, բարձրագույն *և* բարձրություն, բարձրության, բարձրությունից, բարձրությամբ, բարձրություններ, բարձրությունների *և այլն։*

Դիտենք հետևյալ քառանդամ հակադրությունը աճիճգիստ—աճիճգստություն, աճիճգստաճալ—աճիճգստորեն։ *Հասկանալի է, որ այս չորս բառերի խոսքի մասային ու քերականական մյուս տարբերությունները պայմանավորված են նրանց բառակազմական տարբերություններով։ Սա նշանակում է, որ այս բառերի ածանցները, որպես այդպիսին, լինելով բառակազմական միավորներ և ամենից առաջ բնականաբար վերաբերելով բառակազմությանը, ունեն նաև քերականական արժեք և այս առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում քերականության համար։*

Այսպիսով՝ որևէ խոսքի մասի, տվյալ դեպքում գոյականին առանձնահատուկ բառակազմական միջոցներն ունեն քերականական նշանակություն և պետք է քննվեն նրա քերականական ամբողջական նկարագրության մեջ։ Գոյականի համար որպես այդպիսի միջոցներ հանդես են գալիս մի շարք ածանցներ ու բառաբարդման սակավաթիվ տիպեր, որոնցով միայն կամ գրեթե միայն գոյականներն են կազմվում, հետևապես և համապատասխան գոյականները կարելի է ձևա-կառուցվածքային տեսակետից բնութագրել այդ միջոցներով։

§ 136. Որպես այդպիսի գոյականակերտ ածանցներ հանդես են գալիս վերջածանցները։ Չնայած մի շարք նախածանցներ գործածվում են գոյականների կազմության մեջ, սակայն դրանք բուն գոյականակերտ չենք համարում, քանի որ այդ նույն ածանցները այլ խոսքի մասերի բաղադրության մեջ ևս որոշակի դեր են կատարում։

Այսպես, թեև ենթ *նախածանցը հանդես է գալիս* ենթագլուխ, ենթաթեմա, ենթասպա, ենթադրություն *և նման գոյականների մեջ, բայց* ենթ-*ի դերը համապատասխան գոյականներին (գլուխ, թե-*

մա և այլն) նոր, մասնավոր իմաստ տալն է և ոչ թե ընդհանուր խոսքի մասային արժեք ստեղծելը: Դա կարող է երևալ, ասենք, հետևյալ համեմատությունից. ենթադրություն, ենթադրել, ենթադրական, ենթադրաբար, *որոնց բոլորի մեջ առկա է ենթ նախածանցը, բայց բոլորը պատկանում են տարբեր խոսքի մասերի՝ վերջից ավելացված տարբեր խոսքի մասեր կերտող ածանցների շնորհիվ:*

Նույնը վերաբերում է հակ և մյուս նախածանցներին. Համմտ. հակասություն, հակասել, հակասական, հակասաբար:

Նախածանցների դերի նշված յուրահատկության ճիշտ գնահատության համար կարելի է հիշյալ փաստերի հետ համեմատել, օրինակ, ություն ածանցի գոյականակերտ արժեքը, որ դրսևորվում է նրա բոլոր կիրառություններում, անկախ նրանից, թե բառը, որի վրա դրվում է ություն-ը, ի՛նչ խոսքի մասի է պատկանում, ի՛նչ ածանցներ ունի և այլն: Համմտ. ա) գիր, գրություն, գրականություն, գրականագիտություն, *բ)* պատրաստ, պատրաստություն, պատրաստականություն, պատրաստականություն, պատրաստավածություն:

Ժամանակակից հայերենի բուն գոյականակերտ ածանցներն են՝ աճակ, աճոց, աճ, արաճ, արճ, ատակ, եստ, իճ, իճ, մուճ, յակ, յուճ, ճոց, ուրդ, ոց, պաճ, պաճակ, ստաճ, ված/վածճ, ցի /ացի/ եցի, ություն, ուճի, ում, ույթ, ույկ, ույց, ունդ, ուճ, ուճի, ուստ, ուրդ, ուճ, ույճ, f:

Քննենք այս գոյականակերտ ածանցների բառակազմական նշանակությունը:

§ 137. **Աճակ**—*ունի սահմանափակ գործածություն, հանդես է գալիս տարբեր իմաստ ունեցող մի շարք գոյականների կազմության մեջ. ինչպես՝* զանճաճակ, ըմպաճակ, խոզաճակ, հաղթաճակ, մրցաճակ, ճոճաճակ *և այլն:*

§ 138. **Աճոց**—*ա) գերազանցապես գոյականներից և սակավաթիվ բայահիմքերից ու ածականներից կազմում է տեղ ցույց տվող գոյականներ, ինչպես՝* ամառաճոց, արհեստաճոց, բանջարաճոց, գազաճաճոց, վարսավիրաճոց, ծերաճոց, ձյուրաճոց, մեղվաճոց, մթերաճոց, ցախաճոց, ճիվաճղոտաճոց, արգելաճոց, աշխատաճոց, չորաճոց *և այլն:*

բ) Թվականներից ու չափի միավորի անուններից, մասամբ և

չափի իմաստ ունեցող այլ բառերից կազմում է գոյականներ, որոնք արտահայտում են քանակի ու չափի իմաստ. ինչպես՝ երեքանոց, ճնգանոց, քսաննիգանոց, հիսունանոց, հազարանոց, կոպեկանոց, ռուբլիանոց, կիլոգրամանոց, լիտրանոց, բանիսանոց *և այլն։*

§ 139. Ակ—*կազմում է բայանուններ, որոնք արտահայտում են առարկայացված գործողության, վերջինիս կատարողի, նրա արդյունքի կամ նրա միջոցի իմաստ. ինչպես՝* հոսանք, սահանք, մխիթարանք, գովասանք, գուրգուրանք, հարգանք, մեղադրանք, երգիծանք, վիրավորանք, հետևանք, փշրանք, աշխատանք, արտադրանք, պարծանք, կապանք, փականք *և այլն։*

§ 140. Արան—*կազմում է գոյականներ, որոնք ցույց են տալիս՝ ա) տեղ, ուր կատարվում կամ գտնվում է մի բան. ինչպես՝* դատարան, ճաշարան, լողարան, ձուլարան, տպարան, դասարան, լսարան, տնկարան, ուսումնարան *և այլն.*

բ) գործիք, անոթ և նման առարկաներ, որոնց հետ առնչվում է տեղի իմաստը. ինչպես՝ կախարան, ճենարան, մատուցարան, սառնարան, վառարան, ճաստարան, ելագարան *և այլն.*

գ) գիրք, որ պարունակում է այս կամ այն բնույթի երկեր, նյութեր և այլն ու ծառայում է համապատասխան նպատակի. ինչպես՝ երգարան, տաղարան, ճանգարան, կտակարան, այբբենարան *և այլն։*

§ 141. Արք—*կազմում է սակավաթիվ բայանուններ՝* գործարք, լուծարք, սուտարք *և այլն։*

§ 142. Ատակ—*կազմում է գործողության հետ առնչվող որոշ գոյականներ, ինչպես՝* հիշատակ, ճաճատակ, փլատակ *և այլն։*

§ 143. Ենի—*հիմնականում կազմում է ծառերի, թփերի և այլ բույսերի անուններ. ինչպես՝* դեղձենի, խնձորենի, տանձենի, բբենի, թզենի, կեռասենի, ձիթենի, խորդենի, մասրենի, նոնենի, սալորենի, վարդենի, մորենի *և այլն։*

Ծանոթ.—Ենի *ածանցի բառակազմական մյուս արժեքները ժամանակակից գրական հայերենում ակնհայտորեն սահմանափակվել են կամ վերացել։ Մ. Աբեղյանը այդ ածանցը քննելիս ամենից առաջ նշել է նրա ածականակերտ դերը՝ բերելով հետևյալ օրինակները. հայրենի, մայրենի, վայրենի, լրբենի, նրբենի, մաքրենի, թթվենի, քաղցրենի (քաղցր), քաղցրավենի, շողշողենի,*

արփենի (արփային, արեգակնային), մատղաշենի (մատղաշ) (Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, 1931, էջ 261)։

Այս բոլոր բառերից այժմ կենդանի ու գործածական են՝ հայրենի, մայրենի, վայրենի։ Վայրենի բառը թե՛ ածական է, թե՛ գոյական, ընդ որում, ավելի շատ գոյական է, որ հաստատվում է այդ բառի՝ ու հոլովման պատկանելու փաստով, մինչդեռ ածականները, այդ թվում նաև ի-ով վերջացողները, ենթարկվում են ի հոլովման։ Վայրենի բառի ածականական որոշ իմաստներ անցել են վայրի բառին (վայրենի տանձ՝ վայրի տանձ, վայրենի բուսականություն՝ վայրի բուսականություն և այլն)։ Մայրենի և հայրենի բառերը հիմնականում ածական են, թեև երբեմն հանդիսավոր ոճում ու բանաստեղծականորեն գործածվում են որպես գոյական։

Օրինակ՝ Բյուր լեզու գիտես օտար աշխարհում,
Բայց թե մայրենիդ խորթ է քեզ համար,
Հուր լեզուդ պոկված հավք ես վանդակում (ՀՇ)։

Լեզվի ու ոճի ուսումնասիրությունը տրամաբանորեն հանգեցնում է մայրենիի խոր յուրացման գաղափարին (ՍՄ)։

Մեր հողը, մեր հայրենիքն,
Մեր երկիրն ամայացավ (ՊՍ, Անլռելի զանգակատուն)։

Քաղցրավենի ձևը դուրս է եկել գործածությունից՝ փոխարինվելով քաղցրավենիք ձևով, որը գոյական է։

Նիստ սահմանափակվել է ենի ածանցով կազմված այնպիսի գոյականների գործածությունը, որոնք ցույց են տալիս տվյալ կենդանու մորթի, միս։ Այժմ շատ հազվադեպ կարող են գործածվել սամուրենի, ընձենի, և միանգամայն անգործածական են դարձել խոզենի, ոչխարենի, գառնենի, ուլենի, գայլենի, աղվեսենի։

§ *144.* Ուտ, ուտ—*կազմում են գործողության հետ առընչվող անուններ, ինչպես՝* գովեստ, պաճեստ, ապրուստ, գալուստ, ելուստ, ճագուստ, փախուստ *և այլն։*

§ *145.* Իզմ—*միջազգային տարածում ունեցող նորագույն փոխառյալ ածանց է, որ հանդես է գալիս այնպիսի գոյականների կազմում, որոնք անվանում են հասարակարգ, քաղաքական, գիտական, գեղագիտական ուղղություն. ինչպես՝* ֆեոդալիզմ, կապիտալիզմ, սոցիալիզմ, կոմունիզմ, մարքսիզմ, լենինիզմ, մատերիալիզմ, իդեալիզմ, ինտերնացիոնալիզմ, ճացիոնալիզմ, հումանիզմ,

սիոնիզմ, դարվինիզմ, ստոուկսուրալիզմ, ռեալիզմ, ռոմանտիզմ և այլն։ Իզմ փոխառյալ ածանցի բառակազմական արժեքը և արտահայտած իմաստը լիովին գիտակցվում են հայերենում, չնայած հայերեն արմատներով կամ բառերով նոր բառեր չեն կազմվում (բացի հազվադեպ գործածվող և արդեն հնաբանության բնույթ կրող դաշնակիզմ բառից)։ Այս երևույթի պատճառը պարզապես այն է, որ բուն հայերեն արմատներով այդպիսի բառեր կազմելու անհրաժեշտություն ու հիմք չկա։

§ 146. Իստ—միջազգային տարածում ունեցող նորագույն փոխառյալ գոյականակերտ ածանց է, որ հիմնականում հանդես է գալիս այնպիսի անունների կազմության մեջ, որոնք ցույց են տալիս ուսմունքի, ուղղության (քաղաքական, հասարակական, գիտական, գեղագիտական) ներկայացուցիչ, հետևորդ. ինչպես՝ կոմունիստ, մարքսիստ, մատերիալիստ, իդեալիստ, հումանիստ, ինտերնացիոնալիստ, ռեալիստ, ստրուկտուրալիստ և այլն։

Այս ածանցը հիմնականում գործածվում է փոխառյալ բառերում և սակավ դեպքերում է հայերենում կազմում նոր բառ։ Այդպիսիք են՝ թառիստ, ֆյամանչիստ։

§ 147. Իճ—հանդես է գալիս սակավաթիվ գոյականների կազմության մեջ. ինչպես՝ դաշիճ, ճախատիճ, ֆռիճ։

§ 148. Իֆ—ա) դրվելով գոյականների, ածականների ու բայարմատների վրա՝ կազմում է տարբեր իմաստներով գոյականներ. ինչպես՝ գործիֆ, կարիֆ, կարծիֆ, չարիֆ, երաշխիֆ, արգասիֆ, ընթրիֆ։

բ) Դրվելով անորոշ դերբայի վրա՝ կազմում է գոյականներ՝ գործողության առարկայի, երբեմն էլ տեղի իմաստով. ինչպես՝ ուտելիֆ, խմելիֆ, վառելիֆ, օծանելիֆ, խաղալիֆ, ճեմելիֆ, անելիֆ, գալիֆ և այլն։ Վերջին խմբի գոյականների մի մասը երբեմն նաև ածականական կիրառությամբ է հանդես գալիս։

§ 149. Մուճ—կազմում է բայանուններ և գործողության հետ առնչվող գոյականներ, որոնք ցույց են տալիս գործողության արդյունքը, հետևանքը և այլն. ինչպես՝ արարմուճ, զբաղմուճ, ցուցմուճ, ֆիացմուճ, մտածմուճ, վարմուճ, բաժանմուճ, հուզմուճ, բուրմուճ, ուսմուճ և այլն։

§ 150. Յակ—ա) թվականներից կազմում է թվային վերացարկումով ամբողջության իմաստ ունեցող գոյականներ. ինչպես՝ եռյակ, հարյակ, ճնգյակ, ութնյակ, տասնյակ, հարյուրյակ և այլն։

բ) Թվականի և or, ամիս, ամ *(տարի) բառերի բաղադրությամբ կազմում է ժամանակ ցույց տվող գոյականներ, ինչպես՝* ինգօրյակ, տասնօրյակ, միամսյակ, եռամսյակ, քառամսյակ, երեքամսյակ, յոթնամսյակ, տասնամսյակ, հարյուրամսյակ, հազարամսյակ *և այլն:*

գ) Տարբեր իմաստ ունեցող գոյականներ է կազմում այլ (ոչ Թվական) խոսքի մասերից. ինչպես՝ կիսամյակ, նախօրյակ, շաբաթօրյակ, կիրակնօրյակ, լուսնյակ *և այլն:*

§ 151. Յուն—*գերազանցապես բնաձայնական բառերից ու արմատներից կազմում է համապատասխան գործողության անուններ. ինչպես՝* ինչյուն, գոչյուն, դղրդյուն, թնդյուն, շաչյուն, շառաչյուն, խոխոջյուն, կարկաչյուն, կռնչյուն, մռնչյուն, վրնջյուն, սոսափյուն, դոփյուն, պայթյուն *և այլն:*

§ 152. Նոց—*մարմնի մասերի անուններից կազմում է այդ մասերի կրող առարկաների անուններ. ինչպես՝* գոգնոց, վզնոց, ուսնոց: Թիկնոց, մատնոց *և նման բառերում ածանցն է* ոց *և ոչ Թե* նոց, *ուր* ն-*ն գրաբարյան հիմքի բաղադրիչ հնչյուն է: Համմտ.* թիկնեղ, *ուր ածանցն է* եղ *և ոչ Թե* նեղ, մատնել, *որ պարզ բայ է՝ մատրն արմատով և* ել *վերջավորությամբ կազմված. նույնը և* թիկնել *բայը (թիկն+ել):*

§ 153. Ող—*ա) կազմում է գոյականներ, որոնք հանդիսանում են արհեստ, զբաղմունք ունեցողի, գործողի անուն. ինչպես՝* ոսկերդ, վարորդ, սավառնորդ, սայլորդ, ճանապարհորդ, աճյորդ, չմշկորդ, ծանրորդ, հաճախորդ, առաջնորդ, բաժանորդ, հետևորդ, միջնորդ, փոխանորդ *և այլն.*

բ) կազմում է որևէ հատկանիշ կրող առարկայի անուն. ինչպես՝ ձայնորդ, կցորդ, կիսորդ, լծորդ *և այլն:*

§ 154. Ոց—*կազմում է՝ ա) գործողության անուններ. ինչպես՝* դրխկոց, շրխկոց, թրմփոց, գոռգոռոց, բղավոց, խշշոց, ծլվլոց, կչկչոց, հիշոց, փսփսոց *և այլն, բ) տեղ ցույց տվող գոյականներ. ինչպես՝* ամրոց, դարբնոց, դպրոց, թաքստոց, ծաղկոց, հնոց, ջերմոց *և այլն, գ)գործիք, իր ցույց տվող գոյականներ, ինչպես՝* խարտոց, սղոց, էտոց, ջնջոց, սփռոց, ծածկոց, կապոց *և այլն:*

§ 155. Պան—*կազմում է զբաղմունք, արհեստ ցույց տվող գոյականներ. ինչպես՝* այգեպան, պարապետպան, դռնապան, հնոցապան, ջրաղացպան, կառապան, ախոռապան, պանդոկապան, բուֆետապան *և այլն:*

§ 156. Պանակ—*կազմում է սակավաթիվ գոյականներ՝ պարունակելու նշանակությամբ. ինչպես՝* դրամապանակ, թղթապանակ, գրչապանակ, տետրապանակ *և այլն։*

§ 157. Ստան—*ա) կազմում է երկրների անուններ, որոնցում արտահայտվում է տվյալ ժողովրդի տվյալ տեղում բնակվելը. ինչպես՝* Հայաստան, Ռուսաստան, Վրաստան, Ղազախստան, Հրնդկաստան, Հունաստան, Չինաստան *և այլն.*

բ) կազմում է գոյականներ՝ մի բանով առատ լինելու, մի բանի տեղի իմաստով. ինչպես՝ այգեստան, լեռնաստան, բուրաստան, անդաստան, մեհնաստան *և այլն։*

§ 158. Ված/վածք—*համանուն ածանցներ են, որ ունեն տարածվածության տարբերություն. ված-ը ժամանակակից դրական հայերենում գիտակցվում է որպես կրավորական բայերի հարակատարի ձև, ուստի և քիչ է գործածվում որպես բառակազմական ածանց։ Նրանով կազմված են* արարված, դարձված, դիպված, զանգված, ճավելված, ճատված, ճարված *և նման մի քանի գոյականներ։ Այժմ ավելի գործուն է* վածք *ածանցը։*

Այս ածանցները կազմում են գոյականներ, որոնք ցույց են տալիս՝ ա) գործողության կրողը, արգասիքը, հետևանքը. ինչպես՝ բացվածք, գործվածք, գրվածք, հյուսվածք, հոդված, մանվածք, պատռվածք, ունեցվածք, կաթված *և այլն, բ) գործողություն, վիճակ, գործողության ձև. ինչպես՝* կեցվածք, ճայվածք, դրվածք *և այլն։*

§ 159. Ցի/ացի/եցի—*կազմում են անձերի, ինչպես և հատուկ անուններ, որոնք ցույց են տալիս՝ ա) մի տեղի բնակիչ լինելը. ինչպես՝* դարաբաղցի, երևանցի, վանեցի, դարսեցի, աշտարակցի, դաշտեցի, լեռնցի, արևելցի, եվրոպացի, ասիացի, գավառացի *և այլն, բ) ազգ և նրան պատկանող անձ. ինչպես՝* անգլիացի, վրացի, ճապոնացի, չինացի, գերմանացի *և այլն, գ) սովորելու, աշխատելու հատկանիշով, հայացքով և այլն որևէ հանրության պատկանող, ուղղության հետևող անձ. ինչպես՝* կուրսեցի, դասարանցի, ճեմարանցի, համալսարանցի, թամանցի *(Թամանյան դիվիզիայից),* բոնդրակեցի *և այլն։*

§ 160. Ություն—*ամենագործուն գոյականակերտ ածանցներից մեկն է։*

ա) Կազմում է վերացական գոյականներ՝

1) ածականներից. ինչպես՝ ազատություն, ազնվություն, լավություն, համեստություն, խաղաղություն, վեհություն, վատաճություն, անկախություն, սպիտակություն, կարմրություն, մեղմություն, վհատություն, կամայականություն *և այլն.*

2) գոյականներից. ինչպես՝ դարբնություն, հյուսնություն, բնկերություն, ուսուցչություն, դերձակություն, դիրեկտորություն, դեկանություն, ռեկտորություն, գազանություն, խոզություն, աղվեսություն *և այլն.*

3) սակավաթիվ դերանուններից, թվականներից. ինչպես՝ ինքնություն, որպիսություն, ինչպիսություն, ոչնչություն, երկվություն, միություն, երորդություն *և այլն:*

բ) Բայերից (ինչպես և բայարմատներից, բայահիմքերից) կազմում է բայանուններ. ինչպես՝ գործողություն, խնայողություն, կախվածություն, թմրածություն, մշակվածություն, մոլորվածություն, վիճարկություն, դիմադրություն, մոռացություն, գովաբանություն, սպանություն, փրկություն *և այլն:*

գ) Մի շարք գոյականներից կազմում է հավաքական գոյականներ. ինչպես՝ աշխատավորություն, աշակերտություն, ուսանողություն *(ուսանողներ),* բուսականություն, բնակչություն, մարդկություն *և այլն:*

դ) Կազմում է թանձրացական գոյականներ. ինչպես՝ հիմնարկություն, ձեռնարկություն, վարչություն, բնագիտություն, գրականություն, սահմանադրություն, կանոնադրություն *և այլն:*

Ություն *ածանցով կազմված թանձրացական գոյականների մի մասը վերացականից է վերածվել թանձրացականի, մյուս մասը կազմվել է որպես թանձրացական: Նշենք, նաև, որ գ կետում նըշված գոյականները ևս թանձրացական են:*

§ 161. Ուի*—կազմում է իգական սեռի պատկանող անձերի հասարակ, ինչպես և հատուկ անուններ. ինչպես՝* աշակերտուհի, ուսանողուհի, ուսուցչուհի, բանվորուհի, դերասանուհի, ֆարուղարուհի, բժշկուհի, տաճիրուհի, բնորդուհի, գեղեցկուհի, հայուհի, ֆրանսուհի, վրացուհի, գնչուհի, Սրբուհի, Վանուհի, Հրաչուհի, Նաիրուհի, Ազատուհի *և այլն:*

§ 162. Ում*—դրվելով բայահիմքի վրա՝ կազմում է բայանուններ. ինչպես՝* անկում, անցում, ամբեռացում, բաշխում, բռնկում, զգացում, ազգայնացում, գոյականացում, լուծում, կա-

ռուցում, ներշնչում, խորացում, խոշորացում, ճզորացում, կանաչապատում և այլն:

§ 163. Ույք—*կազմում է վերացական ու թանձրացական գնույթի գոյականներ. ինչպես՝* բնույք, երևույք, նորույք, ձանձրույք, հավաճույք, մրցույք, ասույք, ելույք, հաճույք, հասույք, գրույք, սովորույք, ավանդույք, ձևույք, ճնշույք, շարույք և այլն:

§ 164. Ույկ—*ժամանակակից հայերենի ոչ գործուն ածանցներից է, որով կազմված են տարբեր իմաստ ունեցող մի շարք գոյականներ. ինչպես՝* գրճույկ, խարույկ, պարույկ և այլն:

§ 165. Ույց—*սակավ գործածական ածանց է, որ տարբեր իմաստով գոյականներ է կազմում բայարմատներից ու բայաբներից. ինչպես՝* զեկույց, զրույց, սառույց, հանգույց, մատույց և այլն:

§ 166. Ունդ—*ոչ գործուն գոյականակերտ ածանց է. հանդես է գալիս բայարմատից կազմված մի քանի գոյականների կազմության մեջ՝* ծնունդ, սնունդ, սերունդ, ելունդ:

§ 167. Ուհ—*կազմում է տարբեր իմաստ ունեցող գոյականներ. ինչպես՝* ակուհ, արբուհ, բարձուհ, իրավուհ, համեմուհ, ճիմուհ, լորձուհ, մասուհ, շրթուհ, պաշտամուհ, սկզբուհ, ոլորուհ և այլն:

§ 168. Ուտ—*կազմում է մի բանով առատ, բնորոշ տեղի անուններ. ինչպես՝* կաղնուտ, կեչուտ, եղեգնուտ, խնձորուտ, մորուտ, շամբուտ, տղմուտ, ճանճուտ, ծանծաղուտ և այլն:

§ 169. Ուրդ—*տարբեր խոսքի մասերից կազմում է տարբեր իմաստ ունեցող մի շարք գոյականներ. ինչպես՝* ժողովուրդ, արձակուրդ, խառնուրդ, խորհուրդ, ճագուրդ, պարապուրդ, աճուրդ և այլն:

§ 170. Ուցք—*հանդես է գալիս սակավաթիվ գոյականների կազմության մեջ՝* ուռուցք, մոլուցք, սերուցք, այրուցք:

§ 171. Ուհ—*բայահիմքերից կազմում է մի քանի գոյականներ՝ գործողության ու միջոցի իմաստով. ինչպես՝* մաճուհ, մաշուհ *(մաշվածք)*, տաշուհ *(տաշելուց թափված կտորներ)*, կոտրուհ, փրթուհ, գինարբուհ, սրսմաշուհ, fսուհ:

§ 172. Ք—*ծագումով պրաբարյան հոգնակի վերջավորություն է, որ ժամանակակից հայերենում գոյական կերտելու մեծ դեր է կատարում:*

ա) Քարանալով *մի շարք բառերի մեջ, որևէ իմաստ չի ար-*

տահայտում, այլ պարզապես վերածվել է բաղադրական մասնիկի. ինչպես՝ գործիք, կամք, հիմք, թռիչք, մեղք, կառք, փառք, խոսք, կիրք, դեպք, վարք, կյանք, պետք, վերք, մուտք, արարք *և այլն։ Կան* f*-ով և առանց* f*-ի մի շարք զուգահեռ ձևեր, որոնք նույն առարկայական նշանակությունն ունեն և տարբերվում են միայն կիրառությամբ, ոճական նուրբ երանգով. ինչպես՝* աչ—աչք, ոտ—ոտք, ձեռ—ձեռք, աղի—աղիք, շնորհ—շնորհք, շեմ—շեմք, ճիար—ճիարք, հավատ—հավատք, ուշ—ուշք։

բ) Ածականներից կազմում է գոյականներ. ինչպես՝ բարի—բարիք, ընտանի—ընտանիք, արժանի—արժանիք, հայրենի—հայրենիք, լայն—լայնք, արհուրի—արհուրիք, հում—հումք, գաղտնի—գաղտնիք *և այլն։*

գ) Բայահիմքերից կազմում է գոյականներ. ինչպես՝ գնացք, ելք, անցք, մուտք, դիրք, բերք, լվացք, սլացք, հայացք, առուրք, վազք, հանք *և այլն։*

դ) Գոյականներից կազմում է այլ իմաստ ունեցող գոյականներ. ինչպես՝ գիր—գիրք, ծալ—ծալք, խնդիր—խնդիրք, հավ—հավք, բաժին—բաժինք *և այլն։*

ե) Հանդես է գալիս մի շարք պատմական տեղանունների կազմության մեջ. Ասորիք, Աղվանք, Գուգարք, Սյունիք, Ուտիք *և այլն։*

§ 173. Իսկական բարդությամբ անվերապահորեն գոյական կազմելու բառակազմական հատուկ տիպ չկա։ Գոյական կազմելու ամենատարածված ու ամենակենսունակ բառակազմական այդպիսի տիպերով կազմվում են նաև այլ խոսքի մասեր և հատկապես ածականներ։ Մինչդեռ, այսպես կոչված, անիսկական բարդությունների մեջ կան բուն գոյականակերտ բառակազմական տիպեր, որոնցով միայն գոյական է կազմվում։ Այսպիսով, բառաբարդման տիպերը (բառածանցման տիպերի պես) գոյական կազմելու նկատմամբ ունեցած հարաբերության տեսակետից կարելի է բաժանել երկու տեսակի՝ գոյականակերտ, *որով միայն գոյականներն են կազմվում և չեզոք, որով կազմվում են թե՛ գոյականներ և թե՛ այլ խոսքի մասեր։*

§ 174. Բառաբարդման գոյականակերտ տիպի մեջ մտնում են մի շարք կազապարներ, որոնք ժամանակակից գրական հայերենում տարբեր չափի տարածվածություն ունեն.

ա) Գոյականի տրակ. ճոլով+գոյական. *ինչպես՝* ճոռեղբայր, մորեղբայր, տանտեր, տանտիկին, եղբորորդի, քեռորդի *և այլն։*

Բառաբարդման այս կաղապարով միայն գոյական կազմելու պատճառն այն է, որ առաջին (տրական) բաղադրիչը բարդության մեջ որոշակիորեն պահպանում է իր լրացական նշանակությունը, իսկ լրացյալ գոյական բաղադրիչը՝ իր գոյականական արժեքը, որի խոսքի մասային նշանակությամբ էլ հանդես է գալիս ամբողջ բաղադրյալ բառը։ Այլ կերպ՝ առաջին բաղադրիչը դառնում է երկրորդ գոյական բաղադրիչի իմաստը սոսկ մասնավորող միավոր։

բ) Գոյական+ու (և) +գոյական, *որոնք կարող են հանդես գալ թե՛ կցական և թե՛ մասամբ վերլուծական եղանակով. ինչպես՝* աղուհաց, անցուդարձ, այբուբեն, այրուձի, ծաղրուծաղանք, տունուտեղ, որբևայրի, հայր ու որդի, մարդ ու կին: *Այսպիսի բարդությունները, որ հայտնի են բաղհյուսական անվանումով, ավելի շատ հատուկ են ժողովրդախոսակցական լեզվին, որից և անցնում են գրականին։*

գ) Գոյական+գոյական՝ *կապված համադր հարաբերությամբ. գործածվել են և հնում, բայց մեծ չափերով տարածում գտան հատկապես վերջին տասնամյակներում. ինչպես՝* հյուսիս-արևելք, հյուսիս-արևմուտք, հարավ-արևելք, մարքսիզմ-լենինիզմ, ցուցահանդես-վաճառք, վագոն-ռեստորան, ինժեներ-շինարար *և այլն։*

ԱԾԱԿԱՆ

ԱԾԱԿԱՆԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ

§ 175. Նյութական իմաստ ունեցող բառերի մի մասը արտահայտում է առարկայի, երևույթի և այլնի հասկացություն, մյուս մասը՝ հատկանիշի։ Հատկանիշի իմաստ են արտահայտում ածականները, թվականները, բայերն ու մակբայները։ Սակայն եթե թվականները արտահայտում են առարկաների թվային հատկանիշ, բայերը՝ գործողությունը իբրև հատկանիշ, մակբայները՝ հատկանիշի հատկանիշ, ապա ածականները ցույց են տալիս առարկաների որակական, հարաբերական հատկանիշներ։ Ուրեմն ածականների խոսքի մասային հիմնական առանձնահատկությունը, որով նրանք առանձին տեղ են գրավում խոսքի մասերի համակարգում, առարկայի հատկանիշ արտահայտելն է։ Այս առանձնահատկությունը բխում է ածականների բուն էությունից։ Սակայն շատ ածականներ, բացի առարկայի հատկանիշից, կարող են արտահայտել նաև գործողության ու առարկայի հատկանիշի հատկանիշ։ Այսպես՝ որակական ածականների մի զգալի մասը կարող է արտահայտել ոչ միայն առարկայի, այլև գործողության և ընդհանրապես հատկանիշի հատկանիշ։ Օրինակ՝ լավ (գրել, խոսել, նվագել, երգել, պարել, սովորել), գեղեցիկ (հագնել, գծագրել, նկարել, կարել, քայլել), երկար (ծխել, նստել, ծեծել, զրուցել, տանջվել), բացարձակ (գեղեցիկ, մաքուր, աղնիվ, ստույգ, արդար, հիմար, տգետ), արտակարգ (սպիտակ, խելոք, անհամբեր, քնքուշ, ուրախ), ամառանման (բարձր, բարի, հաճելի, ատելի) և այլն։

Ածականների մի մասը առարկայի հատկանիշը արտահայտում է ոչ թե անմիջականորեն, այլ ուրիշ առարկաների հետ հարաբերության մեջ դրվելով միայն։ Այսպես՝ ոսկե ժամացույց, երկաթյա դարպաս, բդոյա գործվածք, բազալտե պատվանդան,

փայտյա մանճակալ, բոնգզե առնան, արծաթե դրամ և այլ կապակցությունների ածականները դրսևորում են այնպիսի հատկանիշներ, որոնք հանդես են գալիս ժամացույց, դարպաս, գործվածք, պատվանդան, մանճակալ առարկաները ուրիշ առարկաների հետ հարաբերության մեջ դրվելու հետևանքով (ոսկու, երկաթի, բրդի, բազալտի, փայտի)։ Որոշ թվով ածականներ արտահայտում են հատկանիշներ ոչ թե ըստ առարկաների կազմության, այլ նրանց՝ տեղի, ժամանակի, հատկացման, վերաբերության և այլ հարաբերություններով։ Այսպես՝ ծովային, հյուսիսային, քաղաքային, օդային, ցերեկային, ամառային, տարեվերջյան, ուսուցչական, աշակերտական, ավտոմոբիլային, մայրական, սոցիալիստական, կոմունիստական և այլն։

§ 176. Ածականների առանձնահատկություններից է համեմատության աստիճաններով հանդես գալը։ Դա հատուկ է հիմնականում որակական ածականներին, թեև բացառված չեն հարաբերականների՝ համեմատության աստիճաններ ստանալու և որակականների՝ այդ աստիճաններով հանդես չգալու դեպքեր։ Ըստ որում, եթե որոշ հարաբերական ածականների համեմատության աստիճաններ կազմելը պայմանավորվում է նրանց՝ նաև որակական հատկանիշ արտահայտելու հանգամանքով, ապա որոշ թվով որակական ածականների համեմատության աստիճաններ չկազմելը՝ նրանց բառային հիմնական իմաստով։ Այսպես՝ համեմատության աստիճան չեն կարող կազմել մերկ, ամուր, էգ, բոբիկ, այրի, ճամբ, բաժանովի և բազմաթիվ այլ որակական ածականներ, իսկ բնկերական, բարեկամական, դեմոկրատական, գործածական, տարրական, ֆենադատական, մարդկային, փողոցային, մղձավանջային և մի շարք ուրիշ հարաբերական ածականների համար շատ սովորական է համեմատության աստիճաններով հանդես գալը։

§ 177. Ածականները կարող են գործածվել գոյականաբար՝ ժամանակավորապես ստանձնել գոյականի քերականական առանձնահատկությունները, այսինքն՝ արտահայտել առարկայի ընդհանուր գաղափար, հոլովվել, նախադասության մեջ հանդես գալ գոյականի բոլոր պաշտոններով։ Հարկ է նկատել, որ ածականը գոյականաբար գործածվելիս արտահայտում է թե՛ առարկան, թե՛ նրա հատկանիշը միաժամանակ։ Այսինքն՝ գոյականաբար գոր-

Ծածված ածականը, ստանալով գոյականի քերականական առանձնահատկությունը, չի զրկվում իր հատկանիշներից։ Այսպես՝ առաջավորները օդնեցին թույլերին։ Վախկոտները նահանջեցին, համարձակները առաջ սլացան։ Մեծերը փոքրերին նկարել սովորեցրին։

Այս նախադասություններում գոյականաբար կիրառված ածականները դրսևորում են թե՛ առարկայի հատկանիշը և թե՛ այդ հատկանիշը կրող առարկան միաժամանակ։ Հենց այն հանգամանքը, որ նրանք կարող են դրսևորվել համեմատության աստիճաններով (ավելի մեծերը, ամենամեծերը, ամենագեղեցիկներին, ամենավախկոտներին և այլն), ինքնին վկայում է, որ նրանք չեն զրկվել ածականի հատկանիշից։

Այն բառերը, որոնք անմիջականորեն կամ այլ առարկայի ենթատմամբ ունեցած հարաբերության միջոցով արտահայտում են առարկայի տարբերակված հատկանիշներ, կոչվում են ածական։

ԱԾԱԿԱՆԻ ԵՎ ԱՅԼ ԽՈՍՔԻ ՄԱՍԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

§ 178. Ածականը, իբրև խոսքի մաս, ընդհանուր գծեր է հանդես բերում մակբայի, գոյականի, բայի և դերանվան հետ։

ԱԾԱԿԱՆԻ ԵՎ ՄԱԿԲԱՅԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

§ 179. Ածականն ու մակբայը, իբրև հատկանիշ արտահայտող խոսքի մասեր, հանդես են բերում խոսքի մասային ու քերականական-ձևաբանական ավելի շատ ընդհանրություններ ու շփման եզրեր, քան դրանցից յուրաքանչյուրը կարող է ունենալ մի այլ խոսքի մասի հետ, իսկ դա, անպայման, դժվարություն է ստեղծում դրանց հարաբերակցության աստիճանը որոշելու խնդրում։ Բացի դրանից, հարցի լուսաբանմանը խոչընդոտում են հետևյալ հանգամանքները։

1. Հայերենում որակական ածականների մի մասը, առարկայի հատկանիշ արտահայտելուց բացի, կարող է արտահայտել նաև գործողության ու առարկայի հատկանիշի հատկանիշ, իսկ որոշ մակբայներ՝ գործողության հատկանիշից բացի, նաև ածականի և երբեմն էլ նույնիսկ առարկայի հատկանիշ, բայց այնպիսի առարկայի, որի մեջ կա հատկանիշի իմաստ։

Օրինակ՝ Այսօր դու fաղցr *ես նայում, առավոտ... Եվ լայն է բացված հեռուն արևոտ... (ՎՏ)։ Ձվարթ անցորդին ուրախ կրժրպտամ, Ինքս ինձ կերգեմ... (ՎՏ)։ Նա դիտմամբ չանում էր ուղղակի ցույց անել իր անսահման բարձր աստիճանը մեծամեծներից (ԴԴ, Վարդանանք)։ Փիլոյի իմաստաբանությամբ այդ նշանակում էր, թե Լամբարյանը բացարձակ մաfուr է, ոչ ոք բաժին չի յուրացրել (ՆՋ, Հացավան)։ Ի՞նչ էր նրա այդ հանկարծակի մանվան պատճառը,—ոչ ոք չիմացավ (ՆԴ, Բարերար և որդեգիր)։ ...Բոլորովին զարմացել էր նրա անսպասելի և հանկարծակի փոփոխության վրա (Ն. տ.)։ Անհրաժեշտ է նշել, որ նման գործածությունը սահմանափակ է մեր լեզվում։*

2. Որակական մի շարք ածականներ չունեն համեմատության աստիճաններ, մի բան, որ ընդհանրապես հատուկ է մակբայներին, իսկ գործողության ձև ցույց տվող որոշ մակբայներ կարող են հանդես գալ համեմատության աստիճաններով, որ ածականի առանձնահատկություններից մեկն է։ Վերջապես, այդ բոլորին ավելանում է և այն, որ որոշ ածականներ և նրանցից կազմված մակբայների համեմատական աստիճանը կազմվում է նույն ձևով։ Օրինակ՝ դանդաղ—ավելի դանդաղ, դանդաղորեն—ավելի դանդաղորեն, առատ—ավելի առատ, առատորեն—ավելի առատորեն և այլն։

Իրար հարաբերակից են միայն որակական ածականներն ու ձևի (որակի) մակբայները։ Որակական ածականների մի մասը նախադասության մեջ հաճախակի հանդես է գալիս պարագայական կիրառությամբ՝ դրսևորելով գործողության հատկանիշի իմաստ։ Այդպիսի ածականներ են՝ լավ, վատ, բարձր, գոհ, գեղեցիկ, հմուտ, խիզախ, հպարտ, ազատ, ագահ, համարձակ, համառոտ, խաղաղ, հանդարտ, քաղցր, լուռ, քնքուշ, խելոք, ամուր, քաջ, ուղիղ, խոր, կոպիտ, մաքուր, լայն, աշխույժ, զգույշ, արդար, դաժան, լուրջ, կարճ, երկար, համեստ, ակտիվ, թեթև, հավատարիմ, հարազատ, ճշգրիտ, ծույլ, շռայլ, ուրախ, տխուր, պարզ, վստահ, ջերմ, ազնիվ, վայելուչ, փարթամ, առատ, դառն, ժիր, հեշտ, ճարպիկ, նուրբ, պայծառ, սերտ, անաչառ և այլն։ Այս բառերն ունեն նաև մի այլ՝ մակբայական դեր, չդադարելով ածական լինելուց։ Հենց այն փաստը, որ վերոհիշյալ ածականները պահպանում են առարկայի հատկանիշ արտահայտելու իրենց առանձնահատկությունը, հեշտու-

թյամբ կարող են գոյականաբար գործածվել, հոլովվել, հոգնակիության իմաստ արտահայտել, չունեն մակբայի առանձնահատկությունը, այսինքն՝ միայն հատկանիշի հատկանիշ չեն արտահայտում, վկայում է նրանց ածական լինելու մասին։ Այդ ածականների մեծ մասը կարող է ստանալ մակբայական յուրահատուկ ձևավորում՝ մակբայակերտ ածանցների ավելացմամբ։ Օրինակ՝ չերմորեն, պարզորեն, գեղեցկորեն, հպարտորեն, դաժանորեն, ազնվորեն, քնքշորեն, մեղմորեն, դառնորեն և այլն։ Այս դեպքում մենք արդեն գործ ունենք որակական ածականներից կազմված մակբայների հետ։

§ 180. Ժամանակակից հայերենում որակական ածականների մակբայական կիրառությունների մի մասը աստիճանաբար տեղի է տալիս ածականներից կազմված մակբայական ձևերի գործածությանը։ Գնալով ավելի են տարածվում որակական ածականներից ուրեն ածանցով կազմված մակբայների գործածությունները։ Այսպես՝ շատ սովորական են՝ լայնորեն, անշեղորեն, ազնվորեն, ակտիվորեն, լրջորեն, հմտորեն, չերմորեն, համառորեն, քնքշորեն, գեղեցկորեն, բազմակողմանիորեն, ղգալիորեն, հետևողականորեն, կուրորեն, դառնորեն, վեհորեն և այլն։

Վերը շարադրվածից կարելի է անելի մի քանի հետևություններ՝

ա) Ածականը կարող է ունենալ մակբայական կիրառություն՝ պահպանելով իր խոսքի մասային հիմնական իմաստը և քերականական առանձնահատկությունը։

բ) Ժամանակակից հայերենում որակական ածականները պարագայաբար կարող են գործածվել նրանցից կազմված մակբայներին զուգահեռ։ Իմաստային տեսակետից հաճախ նախընտրելի են մակբայները։

գ) Եթե տվյալ բառը, գործողության հատկանիշ արտահայտելուց բացի, կարող է արտահայտել նաև առարկայի ու նրա հատկանիշի հատկանիշը, մակբայ չէ, այլ ածական, քանի որ մակբայի համար սովորական չէ առարկայի հատկանիշ արտահայտելը, մինչդեռ ածականի համար հաճախադեպ է պարագայական կիրառությունը։

ԱԾԱԿԱՆԻ ԵՎ ԳՈՅԱԿԱՆԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

§ 181. Ածականի և գոյականի հարաբերակցությունը արտահայտվում է նրանով, որ գոյականի ուղղական, տրական, գործիական, մասամբ նաև բացառական որոշ հոլովաձևեր նախադասության մեջ, ածականների նման, հաճախ գործածվում են իբրև որոշիչներ, ցույց տալով առարկայի հատկանիշ։

Ուղղական հոլովով դրված գոյականների որոշիչային գործածությունը շատ սովորական է մեր լեզվում։ Այսպես՝ քար, փակ, ծակ, դժոխք, կախարդ, կենդանի, հրաշք, լույս, երազ, մշուշ, ծով, ծաղիկ, փորձ, խուլ, փրփուր, շուշան, գարուն, փունջ, անապատ, ցնորք, փուշ, հերոս, այլև՝ ոսկի, զմրուխտ, փիրուզ, գոհար, պողպատ, ատլաս, արծաթ և նման տիպի բազմաթիվ գոյականներ հաճախ հանդես են գալիս որպես որոշիչներ, արտահայտելով մի այլ գոյականի որևէ հատկություն։ Իբրև որոշիչ հանդես են գալիս հատկապես այն գոյականները, որոնք դրվելով մի այլ գոյականի վրա, շնորհիվ իրենց առանձնահատուկ իմաստի ընդունակ են բնութագրելու այդ առարկան որևէ կողմից։ Օրինակներ՝ Բալես ունի հնդու-մաթա, Ոսկի օրորցք, ատլաս ծածկոց... (Իս.)։ Այս փուշ աշխարհում էար սրտերի մեջ, երգ իմ, քեզ համար վայել վայր չը կա... (Իս.)։ Խաղում էինք մենք էն երազ հովտում... (ՀԹ)։ Հրաշք աղջիկ, գիշերների թագուհի... Ոսկե բոցով լցրիր հոգին իմ տկար... (ՎՏ)։ Այս նախադասություններում ընդգծված գոյականները ցույց են տալիս առարկայի հատկանիշ, բայց ածականներից տարբերվում են նրանով, որ առարկայի հատկանիշը դրսևորում են միայն տրվյալ կապակցության մեջ, խոսքից դուրս նրանք այդպիսի իմաստ չունեն։ Որոշ գոյականներ որոշիչային հաճախակի գործածությամբ կարող են ձեռք բերել ածականական իմաստ և անցնել ածականների շարքը։ Այս դեպքում փոխվում է տվյալ բառի խոսքի մասային արժեքը։

Հարկ է նշել, որ մի շարք բառեր իր սկզբանե ունեն ածականի և գոյականի խոսքի մասային իմաստ։ Այդպիսի արժեքով են հանդես գալիս համալսարանական, կուսակցական, ստախանովական, օգնական և այլն բառերը։

§ 182. Ժամանակակից հայերենում տեղի, ժամանակի, նյութի և այլն գաղափար արտահայտող տրական հոլովով դրված գո-

յականների զգալի մասը նախադասության մեջ գործածվում է որոշչի (ոչ հատկացուցչի) պաշտոնով՝ դրսևորելով որակական հատկանիշներ։ Այսպես՝ քարի դար, բրոնզի դար, դաշտի շուշան, սարի ծաղիկ, որսի անտառ, թեյի բաժակ, ճաշի գդալ, ամառվա շոգ, ձմեռվա վերարկու, աշունքվա միրգ, ներսի պատ, պատի ժամացույց, երկաթի դուռ, փայտի պահարան, աղի կերակուր և այլ կապակցությունների մեջ տրականները արտահայտում են ոչ թե պատկանելություն, վերաբերություն կամ սերում, այլ որպիսություն։ Նրանք պատասխանում են ոչ թե ո՞մ, ինչի՞, այլ ո՞ր, որպիսի՞, ինչպիսի՞ հարցերին, հետևաբար հանդես են եկել որոշչի դերով։ Այդ կապակցությունների մեջ նրանք ունեն ածականական գործածություն, սակայն ի տարբերություն ածականների, դրանք առարկայի հատկանիշը արտահայտում են միայն խոսքի մեջ։ Հիշյալ կապակցություններից դուրս նրանք դադարում են այդպիսի նշանակություն դրսևորելուց։

Երբեմն գրեթե իմաստային տարբերություն չի զգացվում իբրև որոշիչ հանդես եկող տրականի և համապատասխան ածականի միջև։ Այսպես՝ գիշերվա խավար և գիշերային խավար, ձմեռվա վերարկու և ձմեռային վերարկու, աշունքվա միրգ և աշնանային միրգ, արծաթի գդալ և արծաթյա գդալ, երկաթի դուռ և երկաթյա դուռ։

Որոշիչային հաճախակի գործածության շնորհիվ գործիական հոլովով դրված որոշ գոյականներ սկզբում իրենց հոլովական իմաստին զուգընթաց, հետո որոշ չափով նրանից զրկվելով, աստիճանաբար ձեռք են բերում նաև ածականական իմաստ, որը լեզվի պատմական երկարատև զարգացման ընթացքում վերջիվերջո կարող է կայունանալ և դառնալ նրանց հիմնական իմաստը։

§ 183. Հոլովական իմաստից բավական հեռանալու հետևանքով նաև ածականական դերով են հանդես գալիս ժամանակակից հայերենում ուժով, ճամով, ճոտով, ճասակով, տարիքով, բեղով, մորուքով, ուսումով, աճումով, պատվով, ճարգաճմով, շնորհով, խալով, ծամով, աղուճացով, սապատով, փառքով, օրենքով, սըրտով, սիրով, վարձով, ընկերով, խելքով, մսով, բրնձով և այլն։ Նշված գործիականների մի մասը հեշտությամբ կարող է փոխարինվել որևէ ածականով, առանց իմաստային էական տարբե-

բության. ինչպես՝ ուժով—ուժեղ, համով—համեղ, հասակով—հասակավոր և այլն։

Գործիականով հանդես եկած այդ բառերի մի մասը արդի հայերենում ձևոք է բերում նաև ածականական իմաստ։

Բացառական հոլովով դրված գոյականները իբրև որոշիչ սահմանափակ են գործածվում և ընդհանրապես չեն զրկվում իրենց հոլովական իմաստից։ Այսպես՝ ռետինից գնդակ, սատինից վզկապ, կապրոնից գուլպա, ոսկուց բաժակ, մորթուց գլխարկ և այլն կապակցություններում մեջ իշխում է հոլովական, քան հատկանիշային իմաստը։ Հարկ է նշել, որ իբրև որոշիչ կարող է կիրառվել միայն նյութի և ծագման բացառականը։ Անհրաժեշտ է նկատել, որ բացառական հոլովով դրված գոյականի որոշիչային գործածության դեպքում տվյալ նախադասության հարակատար դերբայով արտահայտված որոշիչը զեղչվում է, որի հետևանքով էլ որոշչի դերն անցնում է բացառական հոլովին։ Այսպես՝ սատինից վզկապս կորել է նախադասության մեջ զեղչված է պատրաստած (կարած) որոշիչը։ Նույն ձևով էլ մահուդից վերարկու, կապրոնից գուլպա կապակցությունների մեջ զեղչված է պատրաստած (կարած) հարակատար դերբայով արտահայտված որոշիչը։ Թեև նյութի և ծագման բացառականի որոշիչային գործածությունը սովորական է մեր լեզվում, սակայն դա չի հանգեցնում բացառականի հոլովական իմաստի մթագնման, հետևաբար և ածականի վերածման փաստին։ Սակայն իբրև որոշիչ հանդես եկած բացառականը դրսևորում է ե ածանցով կազմված հարաբերական ածականների իմաստին շատ մոտ նշանակություն։

ԱՆԱԿԱՆԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՐԱՆՎԱՆ ՀԵՏ

§ 184. Ածականի հետ հարաբերակցվում են այսպիսի, այդպիսի, նույնպիսի, ցուցական, որպիսի, ինչպիսի հարցական-հարաբերական և այլ դերանուններ։ Ածականի և դերանվան հարաբերակցությունը արտահայտվում է նրանում, որ վերոհիշյալ դերանունները ածականների նման արտահայտում են առարկայի հատկանիշ և հանդես են գալիս որոշչի պաշտոնով։ Սակայն այս դերանունները ածականներից տարբերվում են ամենից առաջ նրա-

նով, որ արտահայտում են չտարբերակված, ընդհանուր հատկանիշ, ի տարբերություն ածականների, որոնք արտահայտում են առարկաների որևէ որոշակի հատկանիշ։

ԱՆԱԿԱՆԻ ԵՎ ԲԱՅԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

§ 185. Հարաբերակից խոսքի մասեր են նաև ածականն ու բայը։ Դրանց հարաբերակցությունը արտահայտվում է նրանում, որ նրանք դրսևորում են հատկանիշի գաղափար և դերբայական որոշ ձևեր, ածականների նման, հանդես են գալիս որոշիչային գործածությամբ։ Այդ հիման վրա էլ դերբայական որոշ ձևեր աստիճանաբար ըրկվում են իրենց խոսքի մասային հատկանիշից և անցնում ածականների շարքը։ Այսպես՝ արդի գրական հայերենում ածականի խոսքի մասային իմաստ ունեն գրաբարյան անցյալ դերբայի սառուցյալ, հանգուցյալ, մեռյալ, կախյալ, ուսյալ, կատարյալ, կարծեցյալ, լքյալ, ճեռևյալ, ինչյալ, վերոհիշյալ, ներքոհիշյալ, անիծյալ, հավելյալ, տառապյալ, որոշյալ, միացյալ և այլ ձևերը։ Դրանցից գրեթե ոչ մեկի մոտ այժմ չի գիտակցվում դերբայական նախկին իմաստը։ Խոսքի մասերի փոխանցման ճանապարհով նրանք ձեռք են բերել ածականի խոսքի մասային արժեք։

Նրանց մեջ դերբայական իմաստները աստիճանաբար մթագրնվել են, ձևերը՝ քարացել։ Նման պրոցես են անցել նաև իշ վերջավորությամբ ենթակայական և ալի (ելի) վերջավորությամբ ապառնի դերբայի մի շարք ձևեր, որոնք զրկվելով դերբայական իմաստից, վերածվել են ածականի։ Այսպես՝ այժմ ածականական (ոչ դերբայական) արժեքով են հանդես գալիս՝ թովիչ, համայիչ, կախարդիչ, քաջալերիչ, խորտակիչ, հրապուրիչ, շլացուցիչ, քայքայիչ, համոզիչ, զովացուցիչ, եզրափակիչ, ջախջախիչ, կիզիչ, գրավիչ, դյութիչ, գրգռիչ, ավերիչ, հուզիչ, արտահայտիչ, զայրացուցիչ, ապականիչ, տպավորիչ, ոգևորիչ, եղկելի, կասկածելի, սիրելի, ատելի, վստահելի, բուժելի, գովելի, անանցանելի, անհասանելի, անտեսանելի, անհասկանալի, նկատելի, ուսանելի, ընդունելի, մերժելի, զզվելի, դատապարտելի, հանդուրժելի, ըմբռնելի և այլն ձևերը։

§ 186. Ածականի հետ հարաբերակցվում են նաև անորոշ դերբայի տրական հոլովաձևերը։ Դա արտահայտվում է ամենից առաջ

նրանում, որ անորոշի տրական որոշ հոլովաձևեր, ածականների նման, հանդես են գալիս որոշիչային կիրառությամբ, դրսևորելով առարկայի որակական հատկանիշ։ Այսպես՝ խմելու ջուր, գրելու թուղթ, գնելու ապրանք և այլ կապակցություններում տրականի ձևերը դրսևորում են որակական հատկանիշ։ Այստեղ դերբայական և հոլովական իմաստները ժամանակավորապես երկրորդական պլանի վրա են մղվել, և իբրև առաջնային հանդես է եկել որակական հատկանիշը։ Անորոշի տրական հոլովաձևերը թեև հանդես են գալիս որոշիչային կիրառությամբ, սակայն չեն կրկնում իրենց բայական և հոլովական իմաստից, հետևաբար ձևոք չեն բերում ածականի խոսքի մասային արժեք։

Ածականի հետ հարաբերակցվում են նաև հարակատար դերբայի ձևերը։ Ած վերջավորությամբ հարակատար դերբայի որոշ ձևեր ժամանակակից հայերենում, բացի դերբայական իմաստից, արտահայտում են նաև ածականական իմաստը։ Դա պայմանավորված է նրա դրսևորած յուրահատուկ իմաստով և որոշիչային կիրառությամբ։ Ի տարբերություն մյուս դերբայների, հարակատարը արտահայտում է վիճակ կամ դրություն, որը, իհարկե, ստեղծվում է գործողության ավարտվածության հետևանքով։ Այսպես՝ գազազած, խամրած, թառամած, թթված, սրած, կատաղած և այլն ձևերը ամենից առաջ արտահայտում են առարկայի որևէ վիճակ կամ դրություն։ Երբ ասում ենք թառամած վարդ, թթված գինի, կատաղած գազան և այլն, ապա մենք նախ շեշտում ենք այդ առարկաների ներկա վիճակը՝ վարդի թառամած (ոչ թարմ) լինելը, գինու թթվածությունը և այլն, ապա գործողության ավարտվածությունը, թեև առարկաների տվյալ վիճակը ստեղծվել է արդեն կատարված, վերջացած գործողության շնորհիվ։ Նկատենք, որ մի շարք բայերի հարակատարը նախադասության մեջ գլխավորապես հանդես է գալիս որոշիչի պաշտոնով՝ արտահայտելով իր որոշյալի որևէ հատկանիշը։

Արդի հայերենում սովորական են հարակատար դերբայի այսպիսի կիրառությունները. ծալած (*թուղթ*), մաfրած (*սոխ*), ներկած (*դուռ*), fնած (*մարդ*), հարբած (*տղա*), ծաղկած (*ծառ*), հասած (*միրգ*), fանդած (*տուն*), ավերված (*գյուղ*), աղավաղած (*տեքստ*), գզած (*բուրդ*), եփած (*միս*), թխած (*հաց*)։ Այս դերբայական ձևերի որոշիչային հաճախակի կիրառությունը կարող է աս-

տիճանաբար հանգեցնել նրանց բայական իմաստի մթագնման և ածականի վերածման։

Ժամանակակից հայերենում սառած, փտած, ճոտած, փորձված, զարգացած, մեռած, չորացած, սիրած, լարված, կատարելագործված *և այլն ձևերը աստիճանաբար հեռանում են իրենց դերբայական իմաստներից և անցնում ածականների շարքը։ Դրանց մի մասը կարող է ստանալ համեմատության աստիճաններ։ Օրինակ՝* սառած, ավելի սառած, շատ սառած, ամենասառած. չորացած, ավելի չորացած, շատ չորացած, ամենաչորացած. ավելի փքտած (ճոտած, փորձված, ճոգնած)։ *Բերենք մի երկու օրինակ՝ հեղինակային վկայությամբ։*

Ամենալարված *վայրկյանը, որ միաժամ և ամենահանգիստն է (ԴԴ, Վարդանանք)։ —Դիտեք ինչ, միստր Վուլվորդ,* ամենափորձված *ըմբիշն անգամ երբեմն վրիպում է (ԳՍ, Թեհրան, 2)։ Դա Սեդրակի ամենասիրած երգն էր (ՆՋ, Պարոն Պետրոսն ու իր նախարարները)։ Նատալյան վերհիշեց իր ամենասիրած երգերից մեկը... (Վ. Ալ., Հյուսիսային աստղ)։* Ամենակատարելագործված *քիմիական ոչ մի մաքրում ի վիճակի չէ արյունից ու կեղտից լվանալու այդ սև բառը (ՍՀ)։ Հնդկաստանը եղել է աշխարհում* ամենազարգացած *և հարուստ երկրներից մեկը (ՍՀ)։*

ԱԾԱԿԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ. ՈՐԱԿԱԿԱՆ ԵՎ ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ

§ 187. Ածականները խմբավորելիս պետք է նկատի ունենալ երկու հանգամանք՝ ա) ի՞նչ հատկանիշ են արտահայտում նրանք, բ) ինչպե՞ս են արտահայտում տվյալ հատկանիշը։

Ըստ այդմ ածականները բաժանվում են երկու մեծ խմբի՝ որակականի *և* հարաբերականի։ *Այդ խմբերն ունեն ինչպես ընդհանրություններ, այնպես էլ առանձնահատկություններ ու տարբերիչ գծեր։ Նրանց համար ամենից առաջ ընդհանուր է այն, որ արտահայտում են առարկայի հատկանիշներ։ Դրանով էլ հենց նրանք միավորվում են միևնույն խոսքի մասի մեջ։*

§ 188. Որակական և հարաբերական ածականների միջև եղած տարբերությունները հետևյալն են՝

1. Որակական ածականները արտահայտում են տարբեր դասերի առարկաների ընդհանուր որակական հատկանիշ, իսկ հարա-

բերականները՝ տվյալ դասի առարկաները ավելի ընդհանուր դասի առարկաներից տարբերող հատկանիշ։ Օրինակ՝ գեղեցիկ քաղաք (տուն, փողոց, մարդ, պարտեզ, օրիորդ), բարձր լեռ (շենք, ձայն, հասակ, թռիչք, ջերմություն, վարձատրություն), մեծ այգի (քաղաք, դահլիճ, պահարան, տարածություն, նվեր) և այլ կապակցություններում ընդգծված ածականները դրսևորում են տարբեր դասերի առարկաների միևնույն որակական հատկանիշներ, իսկ՝ ավտոմոբիլային գործարան (պարկ, տեսչություն, վիթար, ազդանշան), լեռնային երկիր (կլիմա), ծովային կենդանիներ (ճանապարհ), ոսսոդական շուն (ճամպրուկ, հագուստ, խանութ), աշակերտական համազգեստ, ուսանողական հանրակացարան, մայրենի լեզու, հայրենի երկիր և այլն կապակցություններում ընդգծված ածականները արտահայտում են առարկաների տվյալ դասը ավելի ընդհանուր դասից զանազանող հատկանիշ։

2. Որակականները առարկաների հատկանիշը դրսևորում են անմիջականորեն, հարաբերականները՝ միջնորդավորված, այլ առարկաների նկատմամբ ունեցած հարաբերության միջոցով։

3. Որակական ածականները կարող են ստանալ տարբեր աստիճաններ ցույց տվող ձևեր, իսկ հարաբերականները զուրկ են դրանից (նկատի չունենք առանձին բացառությունները)։ Այդ հանգամանքը պայմանավորվում է նրանով, որ հարաբերական ածականները ցույց են տալիս այնպիսի հատկանիշներ, որոնք տարբեր առարկաների մեջ գտնվում են հավասար չափով, այսինքն՝ առարկաները տվյալ հատկանիշը իրենց մեջ բովանդակում են բացարձակապես միևնույն չափով, հետևաբար և այդ հատկանիշները տարբեր աստիճան լինել չեն կարող։ Դա հաստատվում է նաև նրանով, որ համեմատության աստիճաններ չունեն այն որակական ածականները, որոնց արտահայտած հատկանիշները տարբեր չափի լինել չեն կարող։ Օրինակ՝ ամուրի, ազապ, արու, անգլուխ և այլն։

4. Որակական ածականները կազմությամբ կարող են լինել և՛ պարզ, և՛ ածանցավոր, և՛ բարդ, իսկ հարաբերականները պարզ լինել չեն կարող, դա պայմանավորվում է հարաբերական ածականների՝ առարկայի հատկանիշը միջնորդավորված ձևով արտահայտելու հանգամանքով։ Նկատենք, որ հարաբերական ածականներ են կազմվում հիմնականում ական, այինի, յա, յան, ատ, ե, արեն (երեն), ենի, եղեն և այլ ածանցներով։

5. Որակական ածականները բոլոր տեսակի կապակցություններում դրսևորում են նույն իմաստը, իսկ հարաբերականները՝ բացի իմաստային ընդհանրություն դրսևորելուց, տարբեր կապակցություններում կարող են արտահայտել նաև տարբեր իմաստներ, այսպես՝ լավ, մեծ, առողջ, գեր, ազատ և այլն ածականները բոլոր դեպքերում արտահայտում են առարկայի մեծ, լավ, առողջ, գեր, ազատ լինելու հատկանիշ. օրինակ՝ մեծ շենք (երկիր, քաղաք), լավ հյուրանոց (մասնագետ, մեքենա, վերաբերմունք), առողջ կին (սիրտ, դաստղություն, երեխա), ազատ տարածություն (երկիր, քաղաքացի) և այլն։ Իսկ ավտոբուսային, աշակերտական, մթերային, անգլիական և այլ ածականներ տարբեր դեպքերում կարող են նաև տարբեր իմաստներ արտահայտել։ Այսպես՝ «ավտոբուսային գործարան» *նշանակում է՝ ավտոբուս արտադրող գործարան,* «ավտոբուսային պարկ» *նշանակում է՝ պարկ, որտեղ կանգնում են ավտոբուսները չաշխատելու դեպքում,* «ավտոբուսային տեսչություն»-*ը այն է, որ իրականացնում է հսկողությունը ավտոբուսների ճիշտ շահագործման համար,* «ավտոբուսային կանգառ» *այն տեղն է, ուր կանգնում են ավտոբուսները, վերջապես՝* «ավտոբուսային երթևեկությունը» *ավտոբուսով կատարվող երթևեկությունն է։ Նույն ձևով էլ* «մթերային գործարան» *նշանակում է մթերք արտադրող գործարան,* «մթերային խանութ» *նշանակում է մթերք վաճառող խանութ, իսկ* «մթերային պահեստ»-*ն այն է, որտեղ մթերքներ են պահվում և ոչ թե վաճառվում։ Նկատենք, որ հիշյալ ածականների՝ տարբեր կապակցություններում իմաստային տարբերություն դրսևորելը հիմնականում պայմանավորված է նրանց որոշյալների բնույթով։*

6. Որակական ածականները (իհարկե, ոչ բոլորը) կարող են արտահայտել նաև գործողության հատկանիշ, իսկ հարաբերականների համար ամբողջովին բացառվում է այդ հանգամանքը։

7. Որակականներից (ոչ բոլորից) կարելի է կազմել մակբայներ. օրինակ՝ գեղեցիկ—գեղեցկորեն, լայն—լայնորեն, համեստ—համեստորեն, անշեղ—անշեղորեն, ազատ—ազատորեն *և այլն։ Այդ բանը հնարավոր չէ հարաբերականներից։*

8. Որակականները կարող են ունենալ հականիշներ, իսկ հարաբերականները՝ ոչ։ Այսպես՝ որակականներից ունենք հետևյալ հականիշները՝ մեծ—փոքր, համարձակ—վախկոտ, գեղե-

ցիկ—ագեղ, ուժեղ—թույլ, խելոք—հիմար, հաղցր—դառը, բարի—չար, գեր—նիհար, լավ—վատ, բարձր—ցածր, ադեատ—հարուստ, սև—սպիտակ և այլն։

9. Որակական ածականներից կարելի է կազմել փոքրացուցիչ, փաղաքշական և սաստկական իմաստ արտահայտող ձևեր. օրինակ՝ հաղցր—հաղցրիկ, ֆնֆուշ—ֆնֆուշիկ, լավ—լավիկ, կլոր—կլորիկ, փոֆր—փոֆրիկ, սիրուն—սիրունիկ, հանդարտ—հանդարտիկ, թուխ—թխլիկ, խոր—խորին, դժվար—դժվարին, դյուր—դյուրին, անհնար—անհնարին։ *Այդպիսի ձևեր հնարավոր չէ կազմել հարաբերականներից։*

10. Որակականներից կազմվում է վերացական գոյականներ, իսկ հարաբերականներից սովորաբար չեն կազմվում (նկատի չունենք առանձին դեպքեր). օրինակ՝ գեղեցիկ—գեղեցկություն, համեստ—համեստություն, ազնիվ—ազնվություն, առատ—առատություն, հիմար—հիմարություն, մեծ—մեծություն, լուսավոր—լուսավորություն և այլն։

Որակական և հարաբերական ածականների առանձնահատկությունները ամբողջովին պարզելու համար անհրաժեշտ է կանգ առնել նաև այն հարցի վրա, թե այդ խմբերի մեջ մտնող ածականները ինչ տեսակետից կարող են բնորոշել առարկան, այսինքն՝ ինչ կարգի հատկանիշներ կարող են արտահայտել։

§ 189. Ուսումնասիրությունից պարզվում է, որ որակական ածականները կարող են արտահայտել՝

1. Տարածական, կառուցվածքային, կազմվածքային և այլ կարգի հատկանիշներ. օրինակ՝ երկար, կարճ, նեղ, լայն, մեծ, փոֆր, ուղիղ, կոր, հաստ, բարակ, ծուռ, թեք, ուրիշուն, բարակիրան, համաչափ, ներդաշնակ և այլն։

2. Զգայական օրգանների կողմից ընկալվող հատկանիշներ. օրինակ՝ հաղցր, դառը, համեղ, թթվաշ, կծու, թթու, աղի, անալի, ծանր, թեթև, նուրբ, կոշտ, կոպիտ, փափուկ, սառը, տաք, գանգուր, ագեղ, ցցուն, կակուղ, փխրուն, պինդ, խիտ և այլն։

3. Մարդկանց և կենդանիների ֆիզիկական հատկանիշ. այսպես՝ ուժեղ, թույլ, հիվանդ, ծեր, կույր, գեր, նիհար, առույգ, կայտառ, ամուր, աճուկի, ոգոր, տոկուն, քաչ, տկար, երիտասարդ, հաղթանդամ, լայնալանջ, կաղ, խուլ և այլն։

4. Բնավորության, մտավոր կարողության հատկանիշ. օրի-

նակ՝ բարի, չար, լավ, վատ, խելոք, հիմար, համեստ, խոհեմանկ, իմաստուն, վախկոտ, ամաչկոտ, ծույլ, ժլատ, առատաձեռն, խարդախ, ճենգ, չարամիտ, միամիտ, դաժան, կիրթ, հպարտ, համարձակ, դյուրագրգիռ, բրամիտ, ընդունակ, խելացի, մտածկոտ, խոհուն, չարաճճի *և այլն*։

5. Գույնային հատկանիշ. այսպես՝ սև, սպիտակ, կարմիր, ճարճատագույն, թուխ, շեկ, կապույտ, երկնագույն, բաց կանաչ, վառ կարմիր, բոսոր, մանուշակագույն, շագանակագույն *և այլն*։

6. Ունենալու (նաև՝ չունենալու) հատկանիշ. օրինակ՝ լուսավոր, գծավոր, մսոտ, ջղոտ, հիվանդոտ, ժանգոտ, կեղտոտ, ձայնեղ, մսեղ, հիմնավոր, երկերեսանի, միակողմանի, գունատ, վախկոտ, պահանջկոտ, ամաչկոտ *և այլն*։

7. Մի բան կատարողի կամ նմանության հատկանիշ. օրինակ՝ կպչան, կծան, արժան, ազդու, հատու, հասու, կծու, վրիժառու, խոսուն, շարժուն, հոսուն, փայլուն, ցայտուն, ժպտուն, վառվռուն, աղետարար, կենարար, լուսարար, հրաշարար, փրկարար, կովարար, կործանարար, հաշտարար, թովիչ, հմայիչ, կախարդիչ, գրավիչ, համոզիչ, հուզիչ, տպավորիչ, լալկան, խռովկան, բաղաքավարի *և այլն*։

§ 190. Հարաբերական ածականները, իրենց հերթին բնութագրելով առարկաները տարբեր կողմերից, նույնպես տարբեր տեսակի հատկանիշներ են արտահայտում։

Հարաբերականները կարող են արտահայտել՝

1. Տարածական հատկանիշ. այսպես՝ օդային, ջրային, լեռնային, ծովային, դաշտային, երկրային, երկնային, ցամաքային, սիբիրյան, կովկասյան, մոսկովյան, առուստահմանյան, չինական, ճապոնական, անգլիական, բուլղարական, ռումինական, գյուղական *և այլն*։[16]

2. Ժամանակային հատկանիշ. օրինակ՝ ամառային, ձմեռային, մայիսյան, հունվարյան, արձակուրդային, տարեվերջյան,

16 *Միևնույն հարաբերական ածականը կարող է մտնել մեկից ավելի խմբերի մեջ. ջրային, չինական ածականները կարող են մտնել թե՛ տեղային, թե՛ հատկացման ու վերաբերության (պատկանելության) հատկանիշ արտահայտողների շարքը. օրինակ՝ «ջրային կենդանի» նշանակում է ջրում ապրող կենդանի, «ջրային տնտեսություն»՝ ջուր օգտագործող տնտեսություն, «չինական կոտ»՝ նշանակում է Չինաստանում արտադրված կոտ, «չինական դեսպանություն»՝ Չինաստանը ներկայացնող, նրան պատկանող դեսպանություն և այլն։*

ճաղարյան, կիրակնօրյա, տասնօրյա, վեցամսյա, նախապատերազմյան, ետպատերազմյան և այլն։

3. Նյութի ինչից լինելը ցույց տվող հատկանիշ. այսպես՝ երկաթյա, պողպատյա, թիթեղյա, մետաքսյա, բրդյա, արծաթյա, ոսկե, հողե, փայտե, մարմարե *և այլն։ Այս ածականներն արտահայտում են առարկայի հատկանիշը կազմության տեսակետից։*

4. Հատկացական, պատկանելության կամ վերաբերության հատկանիշ. օրինակ՝ մայրական, հայրական, որդիական, ընտանեկան, բանասիրական, իտալական, իսպանական, ուսումնական, ուսանողական, ռուսրդական, աշակերտական, հայրենի, մայրենի, կոլտնտեսային, սովխոզային, ածխային, անտառային, գործարանային, հողային, տնային *և այլն։*

Ելնելով վերը նշված առանձնահատկություններից, որակական և հարաբերական ածականները կարելի է բնորոշել հետևյալ կերպ։

Որակական կոչվում են այն ածականները, որոնք անմիջականորեն արտահայտում են տարբեր դասերի առարկաների ընդհանուր որակական հատկանիշը և կարող են ունենալ հատկանիշի տարբեր աստիճաններ։

Հարաբերական կոչվում են այն ածականները, որոնք ոչ անմիջականորեն՝ մի այլ առարկայի նկատմամբ ունեցած հարաբերության միջոցով, արտահայտում են առարկաների ժամանակային, տարածական, հատկացական, կազմվածքային և այլ հատկանիշներ և չեն կարող ունենալ հատկանիշի աստիճաններ։

ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԸ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 191. Համեմատությունը պահանջում է, որ երկու կամ ավելի առարկաներից մեկը մյուսի (կամ մյուսների) նկատմամբ համեմատվողի դերում հանդես գա։ Համեմատությունը սովորաբար կատարվում է մեկ հատկանիշի հիման վրա։ Այսպես՝ Իմ ունեցած վարդերից մեկը ավելի հոտավետ է, քան մյուսները *նախադասության մեջ համեմատությունը կատարվել է ըստ վարդերի հոտավետության հատկանիշի։* Մեր պարտեզի վարդերը Հասմիկենց պարտեզինից ավելի կարմիր են *օրինակում՝ ըստ գույնային հատ-*

կանիշի։ Իսկ նրա ևվիրած վարդերը բոլորից թարմ էին արտահայտության մեջ՝ թարմ լինելու հատկանիշի հիման վրա։

Իհարկե, չի բացառվում համեմատությունը միաժամանակ մի քանի հատկանիշների հիման վրա կատարելու հանգամանքը։ Այսպես՝ «Գայանեն լուսիկից խելոք, բարի և գեղեցիկ է» նախադասության մեջ համեմատությունը կատարվել է երեք հատկանիշների հիման վրա։ Թեև համեմատությունը սովորաբար կատարվում է երկու կամ ավելի առարկաների միջև և այն էլ միևնույն հատկանիշի հիման վրա, այսինքն՝ համեմատությունը հնարավոր է լինում միայն այն դեպքում, երբ համեմատվող առարկաները ունեն միևնույն ընդհանուր հատկանիշը, սակայն երբեմն հնարավոր է լինում համեմատություն կատարել երկու տարբեր հատկանիշների միջև։ Այդ դեպքում համեմատությունը տեղի է ունենում միևնույն առարկայի շրջանակում։ Օրինակ՝ Արտակը ավելի հարուստ է, քան բախտավոր։ Նա ավելի սրամիտ է, քան սրատես։ Մարոն ավելի աշխատասեր է, քան ընդունակ և այլն։ Համեմատության այս ձևը սահմանափակ կիրառություն ունի մեր լեզվում։ Համեմատությունը սովորաբար կատարվում է կա՛մ համասեռ առարկաների, կա՛մ էլ սեռի ու նրա տեսակի առարկաների միջև։ Այսպես՝ վարդը կարելի է համեմատել ոչ միայն տվյալ կամ ուրիշ տեսակի վարդերի, այլև մանուշակի, ձնծաղիկի, մեխակի և այլնի հետ, տանձը կարելի է համեմատել ոչ միայն տանձի (տանձերի), այլև մրգի բոլոր տեսակների հետ և այլն։

§ 192. Համեմատության հատկացության հետ սերտորեն կապվում է նաև հատկանիշի չափի հարցը։ Դրա համար անհրաժեշտ է պարզել՝ կա՞ արդյոք հատկանիշի այնպիսի չափ, որն ընդունելով իբրև սկզբնական ձև, կազմենք նրա տարբեր աստիճանները։

Հաստատապես կարելի է պնդել, որ հատկանիշի այդպիսի չափանիշ չկա։ Այդ չափանիշը խիստ հարաբերական է և տարբեր առարկաների համեմատության դեպքում կարող է փոփոխվել։ Այսպես՝ երկու փունջ ծաղիկներից մեկը ավելի թարմ է ու հոտավետ, քան մյուսը, բայց նա կարող է նույնքան, գուցե և ավելի, անհոտ ու թառամած լինել ուրիշ ծաղկեփնջերի համեմատությամբ։ Տարբեր տարիքի 5 երեխաներից ամենաընդունակը կարող է սովորականից պակաս ընդունակություն ունենալ։ Սակայն տվյալ ծաղկեփունջը ավելի թարմ ու հոտավետ, երեխան ամենաընդունակ են կոչվում միայն նրա համար, որ համեմատության մեջ եղած ա-

առարկաների նկատմամբ գերազանցություն են ցուցաբերում, որպիսին իսպառ կարող է վերանալ այլ առարկաների հետ համեմատության մեջ դրվելու դեպքում։

Հատկանիշի չափանիշը կարող է փոխվել ոչ միայն համեմատության ոլորտի մեջ գտնվող առարկաների, այլև մարդկային գիտելիքների փոփոխման հետ, որովհետև բաղդատականի և գերադրականի պատկերացումը կախված է մարդկային անհրաժեշտ պրակտիկայից ու գիտելիքներից և յուրաքանչյուր դեպքում կարող է հանդես գալ տարբեր աստիճանով։ Մի ժամանակ նյութի ամենափոքր միավորը համարվում էր ատոմը, բայց գիտությունը ապացուցեց, որ նրանից ավելի փոքր միավորներ կան, հետևաբար ատոմը դադարեց նյութի ամենափոքր միավոր համարվելուց։

§ 193. Համեմատության աստիճաններով հանդես գալը հատուկ է հիմնականում որակական ածականներին։ Հայերենում որակական ածականները ունեն համեմատության երկու աստիճաններ՝ բաղդատական (համեմատական) և գերադրական։ Դրականը պարզապես ցույց է տալիս առարկայի հատկությունը, առանց համեմատելու նման առարկայի (կամ առարկաների) նույն հատկանիշի հետ, այսինքն՝ դրական կոչված աստիճանի դեպքում ոչ միայն համեմատություն տեղի չի ունենում, մի բան, որ կազմում է համեմատության աստիճան-ի էությունը։ Համեմատության աստիճանները արտահայտում են առարկայի հատկանիշի չափն ու աստիճանը այլ առարկաների նույն հատկանիշի համեմատությամբ։ Իսկ դրականը այդպիսի բան չի արտահայտում։

Ծանոթ.— Դրականը համեմատության աստիճան է համարվում այն իմաստով, որ բաղդատականն ու գերադրականը, որպես այդպիսիք, գիտակցվում են նրա համեմատությամբ ու հակադրությամբ, դրանով իսկ դրականն էլ իր հերթին է հակադրվում նրանց. այդպիսով ստացվում է համեմատության երեք եզր։

Դրական աստիճան արտահայտության փոխարեն նպատակահարմար է գործածել ածականի սովորական կամ ուղիղ ձև արտահայտությունը։ Դա ավելի ճիշտ է բնութագրում այդ հասկացության էությունը։ Եթե անհրաժեշտ լինի նշել, թե ինչպես է կազմվում ասենք, բաղդատական աստիճանը, ապա կարելի կլինի ասել, որ նա կազմվում է ածականի ուղիղ ձևին առադրելով ավելի մակբայը։ Ռուսական քերականագիտության մեջ էլ դրականը հա-

Հախ համեմատության աստիճան չի դիտվում։ Ռուսական քերականական աշխատությունների մեծ մասում համեմատության աստիճան են համարվում միայն բաղդատականն ու գերադրականը։

ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ

§ 194. Բաղդատական և գերադրական աստիճանները արտահայտում են հատկանիշի չափը կամ աստիճանը։ Դա այն ընդհանրությունն է, որի հիման վրա էլ նրանք միավորվում են համեմատության աստիճաններ հասկացության տակ։ Բաղդատական և գերադրական աստիճանները, վերոհիշյալ ընդհանրությունն ունենալով հանդերձ, զգալիորեն տարբերվում են իրարից։ Եթե հատկանիշի աստիճանը արտահայտվում է համասեռ բոլոր առարկաների համեմատությամբ, գործ ունենք գերադրականի, իսկ եթե արտահայտվում է նույն տեսակի ոչ բոլոր առարկաների համեմատությամբ՝ բաղդատականի հետ։ Բաղդատական և գերադրական աստիճանների միջև եղած տարբերությունը արտահայտվում է նաև նրանում, որ բաղդատական աստիճանը դրսևորում է առարկայի տվյալ հատկանիշից ավել կամ պակաս կամ էլ նրան հավասար հատկանիշ, իսկ գերադրականը արտահայտում է հատկանիշի բարձրագույն աստիճանը։

Բաղդատական աստիճանը իր հերթին, ըստ հատկանիշի դրսևորման աստիճանի, լինում է երեք տեսակ՝ առավելական, նվազական և հավասարական, *իսկ գերադրականը ըստ հատկանիշի աստիճանը դրսևորելու եղանակի լինում է* բացարձակ և հարաբերական *(հարաբերական գերադրականը որոշ քերականներ կոչում են համեմատությամբ գերադրական)։*

Ելնելով վերը նշվածից՝ բաղդատական և գերադրական աստիճաններին կարելի է տալ հետևյալ սահմանումները։

Որակական ածականների բաղդատական աստիճանը ցույց է տալիս հատկանիշի չափը կամ աստիճանը տվյալ հատկությունն ունեցող մեկ կամ մի քանի առարկաների համեմատությամբ։

Գերադրական աստիճանը արտահայտում է առարկայի հատկանիշի բարձրագույն աստիճանը կա՛մ տվյալ հատկանիշն ունեցող բոլոր առարկաների համեմատությամբ, կա՛մ բացարձակորեն, առանց որևէ համեմատության։

ԲԱՂԴԱՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

95. Ինչպես արդեն նշվել է, բաղդատական աստիճանը լինում է երեք տեսակի՝ առավելական, նվազական և հավասարական։ Դրանցից ամենակարևորն ու կենսունակը առավելական բաղդատականն է։

ԱՌԱՎԵԼԱԿԱՆ ԲԱՂԴԱՏԱԿԱՆ

§ 196. Առավելական բաղդատականը մատնացույց է անում, որ համեմատության մեջ գտնվող առարկաներից մեկը մյուսի (կամ մյուսների) նկատմամբ առավելություն է հանդես բերում տվյալ հատկանիշի տեսակետից։ Այսինքն՝ նշում է, որ նույն հատկանիշը տվյալ առարկայի մեջ ավելի է, քան մյուսներում։ Այսպես՝ Հասմիկը ավելի աշխատասեր է, քան իր քույրը նախադասության մեջ մատնանշվում է, որ աշխատասիրությունը Հասմիկի մեջ ավելի է, քան իր քրոջ մեջ։ Համեմատությունը ավելի որոշակի է լինում, և տվյալ առարկայի առավելությունը մյուսների նկատմամբ ավելի է ընդգծվում, երբ առավելական աստիճանը նախադասության մեջ հանդես է գալիս ստորոգելիական վերադրի պաշտոնով, հատկապես, երբ համեմատության եզրերը կապվում են բան նախադրությամբ։ Ելնելով վերը նշածից՝ առավելական աստիճանին կարելի է տալ հետևյալ բնորոշումը։

Առավելական բաղդատականը ցույց է տալիս առարկայի տրվյալ հատկանիշի առավել աստիճանը մեկ կամ մի քանի այլ առարկաների նույն հատկանիշի համեմատությամբ։

§ 197. Արդի հայերենում առավելական բաղդատականը դրսևորվում է կա՛մ շարահյուսորեն, կա՛մ նկարագրական եղանակով։

Առավելական բաղդատականը արդի հայերենում կազմվում է հետևյալ կերպ։

1. Որակական ածականի ուղիղ ձևին առադրվում է ավելի բառը. օրինակ՝ Ստիպում են կատարված չարիքների արմատը որոնել ավելի խորին, ավելի հիմնավոր պատճառների մեջ (Ր, Սամվել)։ Նա չի կարող Ղազարյանին առաջ քաշել կուսակցական ավելի բարձր աշխատանքի (ՆՋ, Հացավան)։ ...Եվ պետք է լինես ավելի համառ, Ավելի զգաստ, ավելի արթուն (ԵՋ)։ Յուր այդ պարզ սև հագուստի

մեջ նա ավելի գեղեցիկ, ավելի սմանչելի էր երևում (ՆԴ, Քնքուշ լարեր)։

2. Համեմատվող գոյականի բացառական հոլովը առադրվում է ածականի ուղիղ ձևին. օրինակ՝ Կա խորհրդավոր, դյութող մի խավար, Ուր բախտից fաղցր են տրտունջք ու տխրանք (ՎՏ)։ ... Բաժան սրտերն իրար կապող սիրո պես, Սիրուց ճզոր կամուրջ ես դու, իմ բալիկ (ՀՇ)։ Իմ սեր, վաղուց բանտ ես ինձ, վիշտս խորն է աճղնդից... (ՀՇ, Սիրանամե)։ Այժմ ինձնից էլ չաղ ու ինձնից էլ խելոք է (ՆԴ, Զազունյան)։

Համեմատվող գոյականի բացառական հոլովը առադրվում է ոչ թե ածականի ուղիղ ձևին, այլ ավելի բառով կազմված առավելական աստիճանին, այսինքն՝ գոյականի բացառական հոլովի և ածականի ուղիղ ձևի միջև հանդես է գալիս ավելի բառը։ Օրինակ՝ Եվ նա Արփենիկից ավելի ճմայիչ է (ՆՋ, Պարոն Պետրոսն ու իր նախարարները)։ Դու չես կարող մխիթարել այն մարդուն, որ կորուսել է յուր կյանքից ավելի բանկագին գանձը (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Թեպետ տարիքով փոքր էր, քան թագավորը, բայց նրանից ավելի խոհեմ ու շրջահայաց էր (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Մահից ավելի ծանր է ու մռայլ Մանկությունը այս զարհուրելի (ԳՀ)։

Այս ձևով կազմված առավելական բաղդատականը իմաստային նուրբ տարբերություն է հանդես բերում ածականի ուղիղ ձևի ու ավելի բառի առադրմամբ կազմված առավելականի նկատմամբ։ Այդ տարբերությունը արտահայտվում է հատկապես հատկանիշի առավել աստիճանը ընդգծելու, այն սաստկացնելու մեջ։

3. Քան նախադրության միջոցով։ Ածականը դրվում է ուղիղ ձևով, իսկ համեմատելի գոյականը առանում է քան նախադրությունը։ Այսպես՝ Բայց մանավանդ բուրումնավետ է քո մարմինը, քան եղեմի այծյամների մուշկը... (Իս., Լիլիթ)։ Քո աչքերը սիրուն են, Քան աչքերը ծաղկունքի... (ԱԳ)։

Վերոհիշյալ եղանակով առավելականի կազմությունը պայմանավորված է քան կապի բառային իմաստով։ Այդ կապը արտահայտում է առարկաների միջև եղած բաղդատական հարաբերություն և իր կապի խնդրի հատկանիշը վերցնում է մյուս առարկայի համեմատությամբ առավել կամ նվազ չափով՝ նայած նախադասության բնույթին։ Սովորաբար քան կապը իր խնդրի հատկանիշը

նվազ չափով է վերցնում, որի հետևանքով նախորդ եզրի հատկանիշը առավելություն է հանդես բերում կապի խնդրի հատկանիշի համեմատությամբ։ Նա այդ հատկանիշը առավել չափով է վերցնում, երբ նախադասությունը ժխտական բնույթի է. օրինակ՝ Նա ավելի խելքով չէ, քան դու։

Քան նախադրությամբ կազմված ձևին հաճախ միանում է ավելի բառը։ Դրանով նույնպես ավելի է ընդգծվում հատկանիշի առավելությունը։ Այսպես՝ Դա ավելի վատ է, քան եթե Լևոնը բաժանվի Արուսից (ՆՋ, Հացավան)։ Շրջանային կոմիտեի աչքին դու ավելի արժեքավոր ես, քան *Համբարյանը (ՆՋ, Հացավան)։ ...եվ չուսացայտ է քո մարմինը,* ավելի լուսացայտ է, քան *կայծակի բռնկումը գիշերային մթության մեջ (Իս., Լիլիթ)։*

4. Ածականի ուղիղ ձևին առադրվում է գոյականաբար գործածված նույն ածականի բացառական, երբեմն նաև տրական հոլովաձևը։ Այդ դեպքում առավելական աստիճանը փաստորեն արտահայտվում է ածականի կրկնությամբ, Օրինակ՝ Նրան սանձահարելը պարզից պարզ էր և դյուրին (ԴԴ, Վարդանանք)։ Կա ճզոռից ճզոռը (ԴԴ, Վարդանանք)։ Ու մի թիվ մնաց... ճամեսից ճամեսս... (ՊՍ, Անլռելի զանգակատուն)։ ...Որի ժամանումը Ռշտունյաց նախարարը համարում էր անհրաժեշտից անհրաժեշտ *(ԴԴ, Վարդանանք)։*

§ 198. Առավելական համեմատականը կարող է տարբեր աստիճաններ ունենալ։ Դրանք արտահայտվում են տարբեր բառակապակցություններով՝ առավել ևս, շատ առավել, էլ ավելի, մի փոքր ավելի, մի ինչ ավելի, շատ ավելի, չափից ավելի, ավելի ու ավելի *և այլն։ Սրանց մի մասը մոտենում է գերադրականին, համակապես՝* շատ ավելի, չափից ավելի *կապակցություններով կազմվածները։ Օրինակ՝ Գարնան ուժն առավել ևս զգալի էր... օդն առավել ևս բարմ էր... (ՆԴ, Զազունյան)։ Ինչացու է, դա, երբ կան* շատ ավելի բարձր *ու գեղեցիկ հոգսեր (ԴԴ, Վարդանանք)։ Նրանք խոսում էին—մեկը մյուսին նայելով հետզհետե* ավելի ու ավելի կրքոտ *աչքերով (Շիր., Քառս)։ Օ՜,* շատ առավել *դժնի դրանից ես եղկելի էր հազարապատիկ—քո դեմքը հոռի, մեջքը կորանիստ... (ԵՉ)։ Նրա ամուսինը երևի իշխանականից մի* փոքր ավելի բարձր *տիտղոս կունենա (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Իմաստի սաստկացման նպատակով հաճախ համեմատվող գոյականի բացառականին առադրվում է կրկնությամբ բարդված ածականը։ Օրինակ՝*

Բարձր են երկնի ձեղունները, նազելիս, Բայց իմ սերը բարձրաբարձ է նրանից. *Խոր են երկրի հիմունքները, նազելիս, Բայց իմ սերը* խորախոր է նրանից *(Իս.)*։

ՀԱՎԱՍԱՐԱԿԱՆ ԲԱՂԴԱՏԱԿԱՆ

§ 199. Հավասարական բաղդատականը արտահայտում է երկու կամ ավելի առարկաներից միևնույն հատկանիշի հավասար աստիճանը, այսինքն՝ ցույց է տալիս, որ համեմատության մեջ գտնվող առարկաները տվյալ հատկանիշի տեսակետից բացարձակապես հավասար են։ Այսպես՝ «Օդաչուները այնքան համարձակ են, որքան ծովային նավատորմի վարորդները», «Մեր այգին այնքան բուրավետ է, *որքան ձերը» նախադասություններում նշվում է, որ համարձակ և բուրավետ հատկանիշները բացարձակապես հավասարաչափ են համեմատվող առարկաների մեջ։

§ 200. Հավասարական բաղդատականը կարող է արտահայտել ոչ միայն երկու կամ ավելի առարկաների միևնույն հատկանիշի հավասարությունը, այլև միևնույն առարկայի երկու տարբեր հատկանիշների հավասար աստիճանը. օրինակ՝ Հենց այդ աղքատ աղջիկը... որքան ինձ է, նույնքան գեղեցիկ *(Շիր., Քաոս)։ Նա* որքան *քաջ, նույնչափ և բարեպաշտ ու երկյուղած էր... (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Անահիտը* ինչքան որ *քաջ էր, նույնքան և փափկասիրտ էր (ՂԱ, Անահիտ)։*

Այստեղից կարելի է եզրակացնել, որ հավասարական բաղդատական աստիճանը ցույց է տալիս կա՛մ երկու (նաև՝ ավելի) առարկաների նույն հատկանիշի, կա՛մ միևնույն առարկայի երկու (և ավելի) տարբեր հատկանիշների հավասար լինելը։

§ 201. Հավասարական բաղդատականը արտահայտվում է՝

1. Պես, նման, չափ *կապերի ու կապվող բառերի առաջդմամբ՝ ածականի ուղիղ ձևին։ Հավասարական բաղդատականի արտահայտման այդ եղանակը ըստ էության նկարագրական է։ Վերոհիշյալ կապերի խնդիրները դրվում են տրական հոլովով։ Այսպես՝ Նա դեռ պատած էր ձյունի պես ճերմակ մշուշով (Ր, Սամվել)։* Մանվան չափ դառն էին այդ մի քանի րոպեները... *(Ր, Սամվել)։* Հասմիկի նման նպարտ էր այդ աստղը, Հասմիկի նման ճերմակոտ *(ՆՉ, Հացավան)։ Անանի մարդն էր դրոգապան Յագորը, իր դրոգի*

պես կոպիտ ու անտաշ, *իր հսկա* ձիու պես խոշոր ու ջլապինդ *(ՆԴ, Թե ինչ եղավ հետո, երբ շաքարամանից երկու կտոր շաքար պակսեց)։ Լիլիթ,* բոցերի պես թավոտուն, *եկավ կանգնեց Ադամի առջև... (Իս., Լիլիթ)։ Իմ սիրո պես խոր ու մեծ, Շուրջս աշխարհն է ծփում... (ՎՏ)։*

Հաճախ պես, նման, *չափ կապերի նման հավասարական առթիճանի իմաստ են արտահայտում նաև* ինչպես, որպես *կապերը, երբ իրենց խնդիրների հետ առադրվում են ածականի ուղիղ ձևին։ Օրինակ՝ Պատմում էին, որ նրա հոյակապ տան ներքնահարկում կա մի առանձին սենյակ՝ մթին ու սառը,* ինչպես *շիրիմ (Շիրվ., Քառս)։ Նա ուներ խորունկ երկնագույն աչքեր,* Քնքուշ ու տրտում, որպես *իրիկուն... (ՎՏ)։ Մի զույգ եգիպտական աղավնիներ,* սպիտակ որպես *ձյուն, բույն էին դրել ուղիղ անձավի մուտքի վերևում... (Ր, Սամվել)։ Եվ մարմինները* նկուն են՝ *ինչպես ծովի ալիքները (ՎԹ)։*

Ինչպես, որպես *կապերի՝ հավասարական բաղդատական իմաստ արտահայտելը պայմանավորված է նրանց բառային իմաստով։*

2. Երկրորդական նախադասությամբ։ Սա իր հերթին լինում է երկու տեսակ՝

ա) Երբ համեմատության մի եզրում ածականի ուղիղ ձևին առադրվում են որքան, ինչքան, *մյուս եզրում՝* այնքան, նույնքան *բառերը։ Օրինակ՝ Մեկը* որքան սևուկ *էր դեմքով, մյուսը* նույնքան ճերմակ *էր (Ր, Սամվել)։ Եվ* որքան աներկյուղ *էր,* որքան հուսաճատ, նույնքան *գեղեցիկ (Շիրվ., Քառս)։ Եվ կշռեցի մորս սերը սուրբ։ Որն* ինչքան *մեծ էր՝* այնքան *խոր ու նուրբ... (ՀՇ)։ Ո՛չ, ո՛չ,* որքան *ևս դառը լիներ մոլորությունը,* այնքան *ֆաղցր էր նրա հետևանքը (Շիրվ., Քառս)։*

բ) Երբ համեմատության մի եզրում ածականի ուղիղ ձևին առադրվում են հատկանիշի աստիճանը դրսևորող այնքան, այնչափ *և նման դերանունները, իսկ մյուս եզրում այդ բովանդակությունը դրսևորվում է* որ *շաղկապով երկրորդական նախադասությամբ։ Օրինակ՝ Այդ բոպեին էմման այնքան նազելի, այնքան հրապուրիչ, այնքան գեղեցիկ էր, որ Զազունյանը ակամա հիացավ (ՆԴ, Զազունյան)։ ...Այն աստիճան կոպիտ էր նրա ձայնը... հայացքը այնքան դաժան, որ կարելի էր կարծել, թե երբեք չի ժպ-*

տում (ՆԴ, խմբագիրը)։ Բայց այդ կոշտ հնչյունները քո հոգուն այնքան ազդու են, քո սրտին այնքան կախարդիչ են, որ հանկարծ ներշնչվում են մի անբացատրելի ոգևորությամբ (Ր, Սամվել)։

Նման կազմության դեպքում ածականը հիմնականում կիրառվում է ստորոգելիական վերադրի պաշտոնով։

Համախ հավասարական աստիճանի իմաստը արտահայտվում է հավասարաչափ, նույնչափ, հավասար չափով, նույն չափով և այլ բառերը ու կապակցությունները ածականի ուղիղ ձևին առադրելով։ Օրինակ՝ Երկուսն էլ ինձ համար հավասար չափով աճգնահատելի են (Ր, Սամվել)։ Երկուսն էլ հավասար չափով սիրելի էին և արժանի այդ նվերին (Վ. Ալ., Հյուսիսային աստղ)։ Վագրն ու առյուծը հավասարաչափ ուժեղ կենդանիներ են և այլն։

ՆՎԱԶԱԿԱՆ ԲԱՂԴԱՏԱԿԱՆ

§ 202. Առարկայի տվյալ հատկանիշը կարող է ոչ միայն ավել, այլև նվազ կամ պակաս լինել այլ առարկայի նույն հատկանիշից։ Առարկայի հատկանիշի նվազ կամ պակաս լինելը ցույց տվող աստիճանը կոչվում է նվազական։

Ածականի առավելական և նվազական աստիճանները գոնվում են սերտ կապի մեջ։ Մեկի իմաստը արտահայտելիս անհրաժեշտորեն արտահայտվում է նաև մյուսի իմաստը։

Իրոք, եթե համեմատության մեջ գտնվող առարկաներից մեկի հատկանիշը ավելի է մյուսինից, ապա բնականաբար վերջինիս հատկանիշը պակաս է առաջինից։ Այսպես՝ Անահիտը ավելի գեղեցիկ է, քան Հասմիկը։ Վարդը մանուշակից հոտավետ է օրինակներում Անահիտի ավելի գեղեցիկ լինելուց անհրաժեշտորեն բխում է Հասմիկի պակաս (նվազ) գեղեցիկ լինելը, վարդի ավելի հոտավետ լինելուց՝ մանուշակի նվազ հոտավետ լինելը և այլն։ Սա նվազական բաղդատականի տրամաբանական (ոչ լեզվական) արտահայտությունն է։

§ 203. Նվազական աստիճանը դրսևորվում է՝

1. Ածականի ուղիղ ձևին պակաս, նվազ, ֆիչ, սակավ, մի ֆիչ, մի փոֆր, փոֆր-ինչ և այլն բառերի ու կապակցությունների առադրմամբ։ Օրինակ՝ Նա նոր նկատեց, որ բջջի ապագա քարտուղարը չափազանց բարձրահասակ է ու ֆիչ կուզիկ (ՆՋ, Հացավան)։

...Այն ժամանակ մի փոfr ալեխառն էր նրա մորուքը (Իս., Գարիբալդիականը)։ ...Իհարկե, տեսնում ես թագավոր, որ մի fիչ սխալ անուն են տվել ինձ (ՀԹ, Որոտ թագավորը)։ Կարծես թույլ կերպով ժպտում էր... արևի փոfr-ինչ դժգույն ճառագայթների տակ (ՆԴ, Զազունյան)։

Վերոհիշյալ օրինակներում նվազական աստիճանը արտահայտում է հատկանիշի նվազ կամ պակաս աստիճանը առանց ուրիշ առարկայի նույն հատկանիշի հետ համեմատելու։ Նա պարզապես մատնանշում է առարկայի տվյալ հատկանիշի սովորականից պակաս կամ նվազ լինելը։ Երբ նվազական աստիճանը դրսևորվում է այլ առարկաների նույն հատկանիշի համեմատությամբ, ցույց է տրվում ոչ թե նվազ, այլ նրանից ավել աստիճանը։ Այսպես՝ Սա նրանից մի փոքր դժգույն է նախադասության մեջ նշվում է, որ համեմատության մեջ գտնվող առարկաներից մեկը մյուսից մի քիչ ավելի դժգույն է։ Սա արդեն առավելական բաղդատականի իմաստ է արտահայտում։

2. Չափ, պես, նման կապերի ու նրանց խնդիրների առաջրմամբ՝ որակական ածականով արտահայտված բաղադրյալ ստորոգյալի ժխտական ձևին։ Այսինքն՝ երբ հիշյալ կապերով կազմված հավասարական աստիճանը ժխտական (ոչ հաստատական) իմաստով է գործածվում։ Նվազականի արտահայտման այս եղանակը անպայման համեմատություն է պահանջում։ Օրինակ՝ Անգլիան ԱՄՆ-ի չափ հզոր չէ։ Ջորին ձիու պես արագավազ չէ։ Որդին հոր չափ ընդունակ չէ և այլն։

3. (Ա)վուն և -աշ ածանցների միջոցով. օրինակ՝ կարմրավուն, կապտավուն, սևավուն, դեղնավուն, հաստավուն, բարակավուն, երկարավուն, ճիմարավուն, fաղցրավուն, դառնավուն, բրբվաշ, կարմրաշ և այլն։ Հարկ է նշել, որ այդ ածանցները սահմանափակ կիրառություն ունեն մեր լեզվում։ (Ա)վուն-ը նվազական իմաստ է հաղորդում հիմնականում գույն արտահայտող ածականներին, իսկ աշ-ը գործածվում է 2—3 բառերում։ Ա(վուն) և աշ ածանցներով կազմված ածականները ցույց են տալիս տվյալ հատկանիշի ոչ լրիվ աստիճանը։ Այսպես՝ կարմրավուն նշանակում է ոչ լրիվ կարմիր, մի քիչ կարմիր, բարակավուն՝ ոչ լրիվ բարակ, մի քիչ բարակ, քաղցրավուն՝ մի քիչ քաղցրություն ունեցող, բթվաշ՝ ոչ լրիվ բթու, մի քիչ բթու և այլն։ Նշված ածանցները հատկանիշի

նվազ աստիճան են արտահայտում, երբ նրանցով կազմված ածականները ցույց են տալիս առարկայի հատկանիշը առանց որևէ համեմատության։ Երբ համեմատությամբ են արտահայտում, նշում են հատկանիշի ոչ թե նվազ, այլ նրանից մի քիչ ավելի բարձր աստիճանը։ Այսպես՝ կապտավուն նշանակում է՝ մի քիչ կապույտ, իսկ Սա ևրանից կապտավուն է՝ սա նրանից մի քիչ ավելի կապույտ է կամ բավական կապույտ է։ Այստեղ առկա է առավելական բաղդատականի իմաստ։

ԳԵՐԱԴՐԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ

§ 204. Գերադրական աստիճանը, ինչպես արդեն նշվել է, արտահայտում է հատկանիշի բարձրագույն աստիճանը կա՛մ բացարձակորեն, առանց որևէ համեմատության, կա՛մ այլ առարկաների նույն հատկանիշի համեմատությամբ։ Ըստ հատկանիշի բարձրագույն աստիճանի դրսևորման եղանակի, գերադրականը լինում է երկու տեսակ՝ բացարձակ և հարաբերական։

Բացարձակ գերադրականը արտահայտում է տվյալ հատկանիշի բարձրագույն աստիճանը բացարձակորեն, առանց որևէ համեմատության։ Հարաբերական գերադրականը հատկանիշի այդ աստիճանը արտահայտում է համասեռ բոլոր առարկաների համեմատությամբ։

Բացարձակ գերադրականը, իբրև կանոն, կազմվում է վերլուծական եղանակով, հարաբերական գերադրականը՝ թե՛ ձևաբանորեն, թե՛ վերլուծական եղանակով։ Հիմնականը վերլուծականն է։

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԳԵՐԱԴՐԱԿԱՆ

§ 205. Հարաբերական գերադրականը արդի հայերենում կազմվում է հետևյալ կերպ.

1. Ածականի ուղիղ ձևին բաղադրվում է (ա) գույն վերջածանցը։ Գերադրականի կազմության այս եղանակը ձևաբանական է և իբրև այդպիսին գրեթե միակն է գերադրականի կազմության բազմաթիվ ձևերի մեջ։

Անհրաժեշտ է նշել, որ (ա) գույն ածանցը չի կարող բոլոր ածականներից գերադրական կազմել։ Նրանով կազմված գե-

բաղրականների քանակը սահմանափակ է արդի հայերենում: Գերադրականի իմաստ ունեն՝ լավագույն, հզորագույն, բարձրագույն, մեծագույն, գեղեցկագույն, նրբագույն, խստագույն, հնագույն, հեշտագույն, կարծրագույն, վատթարագույն, ծանրագույն և այլն: Ժամանակակիցից հայերենում (ա) գույն ածանցը, բաղադրվելով ածականի ուղիղ ձևին, երբեմն արտահայտում է ոչ թե գերադրական, այլ բաղդատական աստիճանի նշանակություն: Ավելի ճիշտ՝ այդ ածանցով կազմված ածականները միաժամանակ և՛ գերադրական, և՛ բաղդատական աստիճանի նշանակություն ունեն: Այսպես՝ թանձրագույն կարող է նշանակել ամենաթանձր և ավելի թանձր, նորագույն՝ ամենանոր և ավելի նոր, այդպես են նաև փոքրագույն, նվազագույն, դառնագույն, մերձավորագույն, խոշորագույն, պնդագույն, համեստագույն և այլն:

Գերադրականի կազմության այդ ձևը չտարածվեց արդի հայերենում: Այդ իմաստը դրսևորելու համար լայն տարածում ստացավ ամեն(ա) ձևը, որը իր բառային յուրահատուկ նշանակության շնորհիվ նախընտրելի էր (ա)գույն ածանցից:

2. Ածականի ուղիղ ձևին բաղադրվում է ամեն(ա) մասնիկը: Ամենա ձևի մեջ մթագնվել է ամեն գերանվան իմաստը. այն վերածվել է գերադրականություն արտահայտող մասնիկի. ինչպես, ամենագեղեցիկ, ամենադժբախտ, ամենախմաստուն և այլ բարդությունների մեջ հոդակապի առկայությունը գրեթե չի գիտակցվում:

Ամենա մասնիկով կարող է գերադրական աստիճան կազմվել գրեթե բոլոր որակական ածականներից: Այսպես՝ ...Կպատրաստեմ ամենաթանկագին ընծաներ նորընտիր կայսրին տանելու համար (Ր, Սամվել): Հապա ինչ անենք, ներենք էն վիրավորանքը, որ սա հասցրել է մեր ամենախմաստուն, ամենագեղագույն, ամենահեռատես, ամենասրատես թագավորին (ՀՓ, Անգետ քարը):

3. Ամեն, բոլոր բառերի բացառական հոլովաձևերը հարադրվում են ածականի ուղիղ ձևին: Գերադրականի կազմության այս եղանակը վերլուծական է: Օրինակ՝ Ես (եմ) մեղավորը, թե դու, թե վերջապես ամենից զորեղ ու ամենից մեղապարտ պատահմունքը. Համենայն դեպս ուզում եմ քավել իմ մեղքը (ՎՏ, Ավետիք Իսահակյանին): Ամենից մեծ դռնով մտնելով թագուհին անցավ երկու փոքրիկ սենյակներ... (Մուր., Գևորգ Մարպպետունի): Նույն աղբի-

կըն էր՝ չճնաղ բոլորից *Հոգուս մտերիմ, հարազատ այնպես (Իս.)։ Նա էր* բոլորից *տաճարյունն ու համարձակը (Շիրվ., Քառս)։ Ամենից լավն են թվում կյանքում։ Ամենից* թանկը *ու բաղձալին (Գէ)։*

Իմաստի սաստկացման նպատակով երբեմն ածականի ուղիղ ձևի և ամենից, բոլորից ձևերի միջև դրվում են ավելի և շատ բառերը. օրինակ՝ Ամենից ավելի ազատ *սերը տոկալի մի հանցանք, մահացու մի մեղք է թվում քեզ (ՆԴ, Պայքար)։* Ամենից ավելի կասկածամիտ էր *խելքից ցնդած ծերունին (ՆԴ, Բարերար և որդեգիր)։ Մի մոռանա, որ նա ամենից ավելի ոխերիմ թշնամի է Բագրատունի և Մամիկոնյան տոհմին... (ՍՋ, Պապ Թագավոր)։ ...Բայց* ամենից շատ գեղեցիկ *Աչքերն էին լուսաբյուր (ՀՇ)։*

Գերադրականի իմաստ է արտահայտվում նաև այն դեպքում, երբ ածականի ուղիղ ձևին հարադրվում են ամեն *բանից, ամեն ինչից բառակապակցությունները։ Այսպես՝ Հայրենիքը* ամեն *բանից բարձր է... (ԴԴ, Վարդանանք)։ ...Որը նրա համար* ամեն *բանից* թաղցր *էր (ՆԴ, Զաղունյան)։* Ամեն *բանից լավ ու անուշ սիրեկանի դաղն է էլի (ԵՉ)։*

4. Դոյականաբար գործածված ածականի հոգնակի բացառականը առադրվում է ուղիղ ձևին։ Օրինակ՝ Մենք մատնըված ջարդ ու գաղթի, Անբախտներից անբախտ՝ *կյանքում... (ՊՍ, Անլռելի զանգակատուն)։ ...Ու երբ անցնեն մեր առջևից կորիճները պայազատ, Ընտրի՛, զարկի՛ ձեռքիդ խնձորն* Անհաղթներից անհաղթին *(ՀՔ, Փարվանա)։ Դու իմ նշենու անուշ նուշն էիր,* Քնքուշներից *էլ դու քնքուշ էիր... (ԱԳ)։ Աշխարհ, կորիճ յար տուր ինձ* Սիրուններից սիրունն եմ *(ԱԳ)։*

Գերադրականի կազմության այս եղանակը արտաքնապես կարող է հասկացվել ոչ թե գերադրական, այլ բաղդատական աստիճանի իմաստով, բայց իրականում նա արտահայտում է միայն գերադրականության նշանակություն, որովհետև առարկայի գերազանցությունը տվյալ հատկանիշի տեսակետից վերցվում է համասեռ բոլոր առարկաների համեմատությամբ, մի բան, որ բնորոշ է գերադրականին։ Այսպես՝ Նելսոն Ստեփանյանը *բաջերից բաջ էր, համեստներից համեստ օրինակում ցույց է տրվում նրա ավելի քաջ և համեստ լինելը բոլոր քաջերի ու համեստների նկատմամբ։ Եթե քաջ և համեստ հատկանիշների աստիճանը վերոհիշյալ ձևերում չվերցվեր համասեռ բոլոր առարկաների համեմատու-*

թյամբ, ապա գերադրականի փոխարեն բաղդատական աստիճան կունենայինք։ Այդ միտքը հաստատվում է նաև նրանով, որ գոյականաբար կիրառված ածականի եզակի բացառականի և նրա ուղիղ ձևի առադրման դեպքում արտահայտվում է ոչ թե գերադրական, այլ բաղդատական աստիճանի իմաստ, քանի որ առարկայի առավելությունը տվյալ հատկանիշի տեսակետից դրսևորվում է միայն մեկ առարկայի համեմատությամբ. այսպես՝ համեստից համեստ, քաջից քաջ, ուժեղից ուժեղ և այլն։

5. Գերադրական աստիճանի կրկնությամբ. ըստ որում, բաղադրիչներից առաջինը դրվում է եզակի բացառականով։ Օրինակ՝ *Մենք էլ ունենք մեր թշնամին. ամենաուժեղից ամենաուժեղը (ԴԴ, Վարդանանք)։ Արդ հպարտ է ղողանջում մարդու ձայնը մեր հողում, Ազատական, երջանիկ, վեհագույնից վեհագույն (ՔՀ)։*

Այս կազմությամբ գերադրականը ևս պետք է համարել կրկնական կամ սաստկական, քանի որ հատկանիշի բարձրագույն աստիճանը այստեղ նույնպես վերցվում է ոչ թե ածականի ուղիղ ձևի, այլ գերադրական աստիճանի համեմատությամբ։ Դրա շնորհիվ էլ հենց ավելի սաստկացվում և ուժեղացվում է գերադրականության իմաստը։ Գերադրականի սաստկացմանն ու ուժեղացմանը նպաստում է նաև գերադրականի կրկնությունը։ Ինչպես ածականի ուղիղ ձևերի, այնպես էլ գերադրական աստիճանի կրկնությունը հիմնականում սաստկացնում և ուժեղացնում է հատկանիշի իմաստը։

6. Գոյականաբար գործածված ածականի հոգնակի բացառականի և նրա գերադրական աստիճանի առադրմամբ։ Օրինակ՝ *Բայց դու կընտրես քեզ չճաղներից չճաղագույնը՝ արյաց արքայից արքայի աննման դուստրը (Ր, Սամվել)։ Փառք և գոհություն պայծառ Արամազդին, որ ինձ պարգևեց երջանիկներից ամենաերջանիկը լինելու վիճակը... (Ր, Սամվել)։ Այսպիսով, ՄԱԿ-ում... կներկայացվեն իրոք ազատ աշխարհի ազատներից ամենաազատ երկրները և չեզոք երկրները (ՍՀ)։*

Գերադրականի կազմության այս եղանակը նույնպես ուժեղացնում և սաստկացնում է գերադրական աստիճանի իմաստը կրկնակի կամ սաստկական գերադրականի նման։ Սա հատկանիշի ավելի բարձր աստիճան է արտահայտում, քան ածականի հոգնակի բացառականի և ուղիղ ձևի առադրմամբ կազմվածները։ Օրինակ՝

դժնիներից դժնագույն և դժնիներից դժնի, fաջերից fաջագույն և fաջերից fաջ և այլն։

7. Դոյականաբար գործածված ածականի հոդնակի տրականի և նրա գերադրական աստիճանի կամ ուղիղ ձևի հարադրմամբ։ Օրինակ՝ Սիրուճների սիրուճագեղն էիր գյուղի... *(ԱՎ)։ ...Եվ ես դարձա երջանկագույնը երջանիկների՝ Դարձա բանաստեղծ (ՍԿ)։ Վառվում էր հանցավոր կրքով դեպի միակ դուստրը՝* ամենագեղեցիկը գեղեցիկների *(Շիրվ., 8)։*

8. Գերադրականության իմաստ է դրսևորվում, երբ նախադասության ստորոգյալը արտահայտված է լինել հավելավոր բայի ժխտական ձևով, իսկ ածականը բաղդատական աստիճանի է։ Օրինակ՝ ...Զրկա fեզանից գերիչ երազ, Քո աճուճից աճուչ աճուճ... *(ՎՏ)։ ...Աշխարհ անցիր,* Արարատի նման ճերմակ գագաթ չկա... *(ԵՉ)։ ...Մոսկովից մեծ fաղաք—չիf (ԵՉ)։ ...Կակաչից վառ վարդ չկա... (ԱԳ)։ Ռուսական գեմֆի պես ճզոr զեմֆ չկա... (ՀՍ)։*

Երբեմն հիշյալ տիպի նախադասության հետ կապակցվում է fաև *նախադրությամբ երկրորդական նախադասություն։ Օրինակ՝* Չկա ավելի գեղեցիկ մի կին, fաև Կոմսուհի էլլեն դե Կուրսին *(ԵՉ)։*

10. Գերադրականության նշանակություն է դրսևորվում նաև այն դեպքում, երբ նախադասությունն ունի հարցական բնույթի որևէ բառ, իսկ ածականը բաղդատական աստիճանի է։ Օրինակ՝ Քեզանից լավը կա՞ էս աշխարհում... *(ՆՉ, Հացավան)։ Մի՞թե դրանից ավելի թշվառ, ավելի ողորմելի մարդ կա աշխարհիս երեսին... (ՆՒ, Բարեբար և որդեգիր)։ ...Ի՞նչ կա չրից ավելի թանկ... (ԳՀ)։*

Այս տիպի նախադասությունների հետ երբեմն կապակցվում է fաև *նախադրությամբ որևէ երկրորդական նախադասություն։ Այսպես՝ Ի՞նչ կա ավելի ծանր ու խղճալի, քան թե կսկիծը որդեկորույս մոր (ՊՍ, Անլռելի զանգակատուն)։*

ԲԱՑԱՐՁԱԿ ԳԵՐԱԴՐԱԿԱՆ

§ 206. Բացարձակ գերադրականը ժամանակակից հայերենում կազմվում է սաստկություն, աստիճան, չափ ու քանակ և այլ իմաստ արտահայտող մակբայների ու ածականների առադրմամբ՝ ածականի ուղիղ ձևին։ Գերադրականի կազմության այդ եղանակը վերլուծական է։ Բացարձակ գերադրական աստիճան կազմող մակբայների ու ածականների քանակը երեք տասնյակի է հասնում։

Բացարձակ գերադրական աստիճան կազմող բառերը կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1) Չափ ու քանակ արտահայտող բառեր

Այդպիսի իմաստ են դրսևորում՝ շատ, *չափազանց, անչափ, չափից դուրս, անսահման և այլն բառերն ու կապակցությունները։ Օրինակ՝ Կարող եմ լինել և՛ շատ բարի, և՛ շատ չար, և՛ շատ լավ, և՛ շատ վատ, և՛ շատ երկչոտ, և՛ շատ քաջ (Շիրվ., Քառս)։ Նրա վրա չափազանց վատ տպավորություն էր թողել Անուշ Ադամյանը (ՆՉ, Հացավան)։ ...Իմ պատասխանը գուցե չափազանց հանդուգն կթվա (Ր, Սամվել)։ Նրա չափից դուրս ճարուստ մազերը հազիվ էին ծածկվում գլխարկի տակ (ՆԴ, Մահը)։ Նրանցից ոմանք չափից դուրս գոռոզ են, ամբարտավան... (ԳՍ, Թեհրան, 2)։ Վերադարձել եմ դու կրկին ահա Անչափ դժվարին մի ճանապարհով... (ԵՉ)։*

2) Աստիճան ցույց տվող բառեր

Այդպիսիք են՝ վերին աստիճանի, ծայր աստիճան *(ծայրաստիճան), ծայրահեղ և այլն։*

Վերին աստիճանի *կապակցությունը լայն տարածում է ստացել և աստիճանաբար հեռանալով իր բառային իմաստից՝ վերածվում է գերադրականության իմաստ արտահայտող միջոցի։ Օրինակ՝ Վարդանը մղվեց միջամտելու և թույլ չտալու վերին աստիճանի անվայել և հանդուգն արարքը... (ԴԴ, Վարդանանք)։ Այդ վերին աստիճանի աներկյուղ և անձնավստահ մարդը սկսել էր տատանվել (Ր, Սամվել)։*

Ծանոթ.— *Մ. Նալբանդյանը գերադրականության նշանակությամբ* վերին աստիճանի*-ի փոխարեն գործածում է* վերջին աստիճանի *կապակցությունը։ Օրինակ՝* Վերջին աստիճանի ճնճղուկ է *թատերգության ընտրությունը։ Հայերի այլակերպ և վերջին աստիճանի պատառոտուն հանդերձները... մեզ տեղիք է տալիս ենթադրել մի ողբալի աղքատություն։ Ես առայժմ աշխատում եմ քերականության վրա, մի վերջին աստիճանի ծանր գործ։*

Այդ ձևը տարածում չգտավ մեր լեզվում։ Մ. Նալբանդյանից հետո գրեթե ոչ մի հեղինակ գերադրականի նշանակությամբ չի գործածում վերջին աստիճանի *կապակցությունը։*

Գերադրականության իմաստ են արտահայտում նաև ծայր աստիճան կապակցությունը և ծայրաճեղ ածականը։ Օրինակ՝ Ընկա ծայր աստիճան ծանր ու տանջալից մի թմրության մեջ (ՆԴ, Սպանված աղավնի)։ Նա զգաց, որ ամուսնու ծայր աստիճան հիվանդ ինքնասիրությանը տվեց մի այնպիսի հարված, որպիսին երբեք չէր տվել (Շիրվ., Քառս)։ Այժմ դարձել են ծայրաճեղ զգույշ և գաղտնապահ (ՆՋ, Պարոն Պետրոսն ու իր նախարարները)։

Ծայր աստիճան բառակապակցությունը արդեն բռնել է մեկ բարդ բառի վերածվելու ուղին։ Գեղարվեստական երկերում հանդիպում ենք նաև այդ ձևին։ Այսպես՝ Լսել էր նաև, որ ծայրաստիճան ակտիվ աղջիկ է (ՆՋ, Հացավան)։ Փիլոն ծայրաստիճան խաղաղասեր մարդ էր (ՆՋ, Հացավան)։

Ստ. Զորյանը գերադրականության իմաստով ծայր աստիճան-ի փոխարեն գործածում է միայն ծայր բառը։ Այսպես՝ Ուրեմըն հարկ է, արքա, լինել ծայր զգույշ (ՍՋ, Պապ թագավոր)։ Այդ ձևը խորթ է մեր լեզվին։

3) Սաստկություն արտահայտող բառեր

Այդպիսի իմաստ են դրսևորում՝ սաստիկ, խիստ, սոսկալի, սարսափելի, աճառաճելի և *այլն։ Օրինակ՝ Նրա համար սաստիկ անախորժ էր Խաչիկյանի ներկայությունը (ՆՋ, Հացավան)։ Եվ արդարև, կարոն համարվում էր մեր դպրոցի մեջ խիստ սրտոտ, ճամարձակ և աներկյուղ աշակերտ (Ր, Սամվել)։ Աշխատանքն այդ, Վանյա, սոսկալի դժվար է... (ԵՋ)։ Ծանր, սարսափելի ծանր տպավորություն արավ մեզ վրա կույր հոր և որդու երևալը (Մուր., Գևորգ Մարզպետունի)։*

4) Բացառիկություն և արտասովորություն արտահայտող բառեր

Այդպիսիք են՝ բացառիկ, բացարձակ, արտակարգ, արտասովոր *և այլն։ Այսպես՝ Ինչպե՞ս կարող էի ես ըմբռնել, որ նրա համար եղած առարկայական իրականությունից դուրս ուրիշ բացարձակ սուրբ իրականություն գոյություն ունի (Իս., Սրտի դատողությունը)։ Երիտասարդը արտակարգ բարեկազմ էր ու գեղեցիկ (ԴԴ, Վարդանանք)։ Նա արտասովոր ուրախ տրամադրության*

մեջ էր[17] *(ՆԴ, Մահը)։ Այդ օրը ամպերը արտասովոր սպիտակ էին... (ՆՋ, Պարոն Պետրոսն ու իր նախարարները)։*

Գերադրականության իմաստ են արտահայտում նաև անհնարագրելի, աներևակայելի, աճասելի, անպատմելի *և այլ բառեր։ Այսպես՝ Քուշանների զորավարը՝ համարյա անմորուս, աներևակայելի* fաջառողջ *մի երիտասարդ, սուր, զվարթ նայեց այրուձիին... (ԴԴ, Վարդանանք)։ Հանկարծ մեր գավառի լեռները, ձորերը, դաշտերը վերածվում են ուրիշ տեսակի աշխարհի,* անհնարագրելի *գեղեցիկ, առասպելական (Իս., Հայրենի հուշեր)։ Բինան-Ջադեն* աճասելի *գուռատ էր ու մռայլ (ԳՍ, Թեհրան, 1)։*

Բացարձակ գերադրական է կազմվում նաև գեր նախածանցով, որը բաղադրվելով ածականի ուղիղ ձևին՝ արտահայտում է հատկանիշի բարձրագույն աստիճանը։ Օրինակ՝ գերհզոր, գերազնիվ, գերերջանիկ, գերմարդ, գերպայծառ, գերմարդկային, գերաճաղթ, գերարժանի, գերանուշ, գերպարզ, գերընտիր *և այլն։ Գեր-ը, իբրև գերադրականության իմաստ արտահայտող ածանց, սահմանափակ կիրառություն ունի մեր լեզվում։*

Բացարձակ գերադրականի կազմության բազմազանությունը հիմնականում պայմանավորված է մեր լեզվի մեջ քերականական այդ կարգի արտահայտման ձևաբանական միջոցի բացակայությամբ։

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐ ՉՈՒՆԵՑՈՂ ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ

§ 207. Ինչպես արդեն նշվել է, որակական ոչ բոլոր ածականները կարող են ստանալ համեմատության աստիճաններ։

Որակական ածականների մի մասի համեմատության աստիճաններ չստանալը հիմնականում պայմանավորված է նրանց նշանակությամբ, որը թույլ չի տալիս հատկանիշի աստիճանավորումներ մտցնելու։ Համեմատության աստիճաններով չեն կարող հանդես գալ պարզ, ածանցավոր և բարդ մի շարք որակական ածականներ։

17 Արտասովոր *ածականով կազմված գերադրականը չափազանց սահմանափակ է մեր լեզվում։ Նա կարող է ըմբռնվել նաև առավելական աստիճանի իմաստով։ Այսպես՝ «արտասովոր խելոք» կարող է նշանակել թե՛ շատ խելոք, թե՛ սովորականից խելոք, ավելի խելոք։ Առաջին իմաստով գերադրական է, երկրորդ իմաստով՝ առավելական բաղդատական։*

§ 208. Պարզ կամ արմատական ածականներից իրենց բառային ամենահիմնական իմաստով համեմատության աստիճաններ չեն կարող ստանալ՝ ամուլ, ամուրի, ազապ, անջատ, առու, էգ, դատարկ, զուրկ, լերկ, խորթ, խոով, կույր, հավասար, ստերջ, աշխեռ, մերկ, մունջ, որձ, հատուկ, հղի, որբ, ունայն, փուչ, լի *և այլն։*

§ 209. Ածանցավոր ածականներից համեմատության աստիճան չեն կարող կազմել՝

ա) Գոյականից ան ժխտական նախածանցով կազմված որոշ ածականներ, որոնք արտահայտում են ոչ թե վերացական, այլ ֆիզիկական հատկանիշ. օրինակ՝ անգլուխ, անառուն, անվերնագիր, անարհեստ, անոտ, անատամ, անամպ, անրնկեր, անհայր, անմայր, անաճուն, անձայն, անշունչ, անտերև, անպոչ *և այլն։ Հիշյալ ածականները չեն կարող համեմատության աստիճաններ ընտանալ, քանի որ նրանցում ամբողջովին ժխտվում, բացասվում է տվյալ հատկանիշի գոյությունը, մի բան, որ հնարավորություն չի տալիս նրանց աստիճանավորումներ ունենալու։*

Ան *նախածանցով կազմված վերացական հատկանիշ արտահայտող ածականների համար սովորական է համեմատության աստիճաններով հանդես գալը։ Այսպես՝* անխիղճ, անհույս, անհրապույր, անհամ, անմիտ, անհոտ, անշնորհիվ, անճաշակ, աներես, անգութ, անխելք, անվախ, անզոր, անփորձ *և այլն։ Սրանց մեջ ամբողջովին չի ժխտվում տվյալ հատկանիշը, ուստի կարող են տարբեր աստիճանավորումներ ունենալ։*

բ) Ովի վերջածանցով կազմված ածականները անխտիր. օրինակ՝ չրովի, ցանովի, հավաճովի, ծալովի, կախովի, խաղովի, ուզովի, բաժանովի, ճնարովի, կծովի, կիսովի, վճարովի, բացովի, փակովի, չափովի, ածովի, առնովի, ընտրովի *և այլն։*

գ) (Ա)ցի *վերջածանցով կազմված որոշ ածականներ. օրինակ՝* բառացի, տառացի, հարևանցի, մտացի *և այլն։ Նույն կազմությամբ* խելացի, ճշմարտացի, իրավացի, արդարացի *և այլ ածականների համար սովորական է համեմատության աստիճաններ կազմելը* (ամենախելացի, ավելի արդարացի, ամենաիրավացի *և այլն)։*

դ) Ավոր *ածանցով կազմված որոշ ածականներ. օրինակ՝* առատաձավոր, զոլավոր, գծավոր, դիմավոր, զսպաճակավոր, բծավոր, խալավոր, պոչավոր *և այլն։ Նման կազմությամբ* արժեքավոր, լուսավոր, գլխավոր, թունավոր, հիմնավոր, ճշանավոր *և*

այլ ածականներ հնչույթայմբ կարող են համեմատության աստիճաններ ստանալ։ Օրինակ՝ ավելի արժեքավոր *(բախտավոր, նշանավոր, լուսավոր, կեղծավոր),* ամենաարժեքավոր *(ամենաբախտավոր, ամենալուսավոր և այլն)։ Այդ ածականների՝ համեմատության աստիճան ստանալը պայմանավորված է նրանց դրսևորած յուրահատուկ իմաստով։ Նրանք ցույց են տալիս ոչ թե կոնկրետ, այլ վերացական հատկանիշ։ Ընդհանրապես հատկանիշը աստիճանավորում չի ունենում, երբ կապվում է նյութական (իրային) առարկաների հետ, իսկ վերացականի հետ՝ ունենում է։ Այլ կերպ ասած՝ ածականը համեմատության աստիճան չի ստանում, երբ նյութական (իրային) առարկաների հատկանիշ է արտահայտում, իսկ երբ դրսևորում է վերացական առարկաների հատկանիշ, սովորաբար աստիճանավորումներ է ունենում։*

գ) Գրաբարյան անցյալ և ապառնի դերբայներից առաջացած որոշ ածականներ. օրինակ՝ մեռյալ, սառուցյալ, անցյալ, կարծեցյալ, ճիշյալ, միացյալ, անիծյալ, հավելյալ, տառապյալ, բուժելի, լսելի, նկատելի, շոշափելի, բնակելի *և այլն։ Նույն կազմությամբ մի շարք ածականներ ունեն համեմատության աստիճաններ։ Այսպես՝* կատարյալ, սիրելի, վստահելի, մատչելի, ըմբռնելի *և այլն։*

§ 210. Կազմությամբ բարդ ածականներից համեմատության աստիճան չեն ստանում՝

ա) Երկու գոյականներից բարդված ածականների մի մասը, հատկապես, երբ երկրորդ բաղադրիչը կերպ, ձև, նման և այս կարգի բառեր են. օրինակ՝ մարդակերպ, սատանայակերպ, գմբեթանման, աղեղնաձև, ալիքաձև, կամարաձև, շղթայանման, մարդանմման, ճրագնման, արեգնման, ոսկեթել, արևափայլ, բոցափրփուր, ծաղկածիծաղ, մոտորասիրտ, երկաթազգեստ, ճաճանչափայլ, մաճաշուճշ, բոցաշունչ *և այլն։*

բ) Կես բառով բարդված որոշ ածականներ. այսպես՝ կիսամերկ, կիսամաղձր, կիսավայրենի, կիսավարտ, կիսամեռ, կիսաչոր, կիսամտերիմ *և այլն։*

գ) Գույն արտահայտող այն ածականները, որոնք բարդված են գույն բառով. օրինակ՝ մոխրագույն, մանուշակագույն, նարնջագույն, վարդագույն, ծիածանագույն, երկնագույն, կապտագույն, պղնձագույն, արծաթագույն, շագանակագույն, կարմրագույն *և այլն։ Հիշյալ ածականներին կարող են առադրվել բաց և մուգ բա-*

ները, որոնք ոչ թե հատկանիշի աստիճան, այլ պարզապես գույնի խտության երանգներ են արտահայտում։ Այսպես՝ բաց կապտագույն, մուգ նարնջագույն, բաց վարդագույն, մուգ դարչնագույն և այլ կապակցություններ արտահայտում են գույնի տարբեր տեսակներ (բայց ոչ գույնի տարբեր աստիճաններ)։ Մուգ նարնջագույնը նարնջագույնի մի տեսակն է, բաց նարնջագույնը՝ մի այլ տեսակը։ Սրանք նարնջագույնի համեմատության աստիճաններ չեն։

դ) Գոյականով և ածականով բարդված այն ածականները, որոնց առաջին բաղադրիչը երկրորդի խնդիրն է. օրինակ՝ գլխաբաց, ձյունաճերմակ, արյունաճոռդ, լուսավարար, մազագուրկ, ոտաբոբիկ, ծիրանավառ, հողմաբեր, կրծքաբաց, ծիծաղախիտ, աճձրևախառն, ցասմախառը, կարկտախառն, արյունախառն և այլն։

ե) Գոյականով և բայով բարդված որոշ ածականներ. այսպես՝ ոսկեզօծ, երկնասլաց, մորթազերծ, ապգուրաց, կապազերծ, խավարածին, հողմածեծ, կայծակնացայտ, մանվածապատ, մամոապատ, մարմարակերտ, թշնամասատ, միլիոնակուլ, թևաբեկ, լուսաբուխ, գարնանաբեր, երկրակալ, արևածոր, զրահապատ, շղթայակապ, արևածին, երկաթաշեն, սովամեռ, բնատուր, հրդեհավառ և այլն։ Նույն կազմությամբ որոշ ածականներ ունեն աստիճանավորումներ. օրինակ՝ համբերատար, ոխակալ, հայրենասեր, հուսահատ, սանձարձակ, արտացավ, աշխատասեր, փառաճեղ, ուշադիր, ապարկու, հյուրընկալ, հնարագետ, ուշագրավ, ծիծաղաշարժ, մշուշապատ և այլն։

զ) Անի ածանց ունեցող այն ածականները, որոնք բարդված են թվականով ու գոյականով և արտահայտում են նյութական (իրային) առարկաների հատկանիշ. օրինակ՝ երկկողմանի, երկփեղկանի, երկփողանի, միաչխանի, միոտանի, հինգվանկանի, հինգխոփանի, ութձայնաճի, վեցլարանի և այլն։

է) Մակբայով և ածականով կամ գոյականով բարդված որոշ ածականներ. օրինակ՝ բազմադժվար, բազմախառն, բազմաղետ, բազմահմուտ, բազմաչարչար, բազմափորձ, մշտադալար, մշտազվարթ, մշտուրախ և այլն։

ը) Ածականից և բայից կամ գոյականից կազմված որոշ ածականներ. օրինակ՝ գանգրահեր, գարշահոտ, դալարաթև, զրվարթաձայն, թախծօրոր, թուխամազ, լիաբուռն, խորասույզ, համ-

ռաճոս, մեծաշռինդ, նորաճնար, նորափայլ, չարագուշակ, չարավաստակ, սաստկաշունչ, սեազգեստ, սեաճեր, փաղցրորոր, փայլալանջ և այլն։ *Նույն կազմությամբ համեմատության աստիճաններ ունեցող ածականների թիվը բավական շատ է. այսպես՝* արդարադատ, առատաձեռն, արիասիրտ, բարձրաձայն, դաճդաղաշարժ, թուլակազմ, լռակյաց, խորիմաստ, խստապահանջ, հաստատակամ, ձրիակեր, մեծամիտ, նրբանկատ, շքեղազարդ, պարզամիտ, սառնարյուն, սառնասիրտ, սրամիտ և այլն։

բ) Երկու ածականներից բարդված որոշ ածականներ. օրինակ՝ դեղնականաչ, թարմագեղ, խաժակապույտ, ծանրախավար, կարմրաշեկ, հեզագեղ, մարդաջինջ, մեծապայծառ, մեծափարթամ, շիկակարմիր և այլն։ *Այդպիսի կազմությամբ ածականների ճնշող մեծամասնությունը կարող է ստանալ համեմատության աստիճաններ։*

ժ) Գերանունից և բայարմատից կամ ածականից բաղադրված ածականների մի մասը. օրինակ՝ այլազգի, այլասեռ, իմիճաբուխ, իմիճախաբ, իմիճաճաճ, իմիճաճոժար, իմիճաշարժ և այլն։ *Նույն կազմությամբ եսամոլ, իմիճագլուխ, իմիճաճավան, իմիճատիպ, իմիճասեր, իմիճավստահ, իմիճուրույն և այլ ածականների համար սովորական է համեմատության աստիճաններով հանդես գալը։*

Ինչպես տեսանք, համեմատության աստիճաններ չկազմող որակական ածականների քանակը բավական շատ է մեր լեզվում։ Նրանք թեև չեն կարող համեմատության աստիճաններ ստանալ, բայց մնում են որպես որակականներ, չեն անցնում հարաբերականների շարքը։ Իսկ ական և այիճ ածանցներով կազմված մի շարք ածականներ, իրենց որոշ իմաստներով համեմատության աստիճաններ ստանալով, աստիճանաբար հեռանում են հարաբերականներից և անցնում որակականների շարքը, ձեռք բերելով վերջիններիս բնորոշ հատկանիշները։

§ *211.* Ական և այիճ *ածանցներով կազմված հարաբերական ածականներից համեմատության աստիճաններ են ստանում՝ անբարոյական, անմիջական, առաձգական, առաջադիմական, արտահայտչական, արմատական, բանաստեղծական, բարեկամական, բնական, գովական, գործածական, դյութական, դյուցազնական, դեմոկրատական, դրամատիկական, էական, ընկերական, թշնամական, թռչկական, լիրիկական, կախարդական, կենսական, կրո-*

րական, կուլտուրական, հակասական, հավանական, հետևողական, հետաքրքրական, հերոսական, հուզական, ճակատագրական, մասսայական, մարտական, միասնական, մխիթարական, նախնական, նվիրական, ողբերգական, պատվական, ռեալիստական, սովորական, ստիպողական, վերացական, վիրավորական, վճռական, տարրական, տիպական, փոփոխական, քննադատական, գրքային, դժոխային, ճգնաժամային, մարդկային, մղձավանջային, ներվային, չորային, սկզբունքային, հարվածային, փողոցային և այլն։

Ական և ային ածանցներով վերոհիշյալ ածականների մի մասը, որակականների իմաստով գործածվելով, ժամանակի ընթացքում կարող են անցնել վերջիններիս շարքը։

ԱԾԱԿԱՆԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 212. Ինչպես արդեն նշվել է, ածականների քերականական առանձնահատկություններից մեկն էլ նրա չհոլովվելն է։ Թեև ածական անվանը հատուկ չէ հոլովի կարգը, սակայն գոյականաբար գործածվելիս նա հոլովվում է՝ ստանալով գոյականի պաշտոնները։ Գոյականաբար կիրառվելիս կարող են հոլովվել և՛ որակական, և՛ հարաբերական ածականները, ընդ որում, նրանք ենթարկվում են ի հոլովման և ուղղականում միշտ ստանում են ը կամ և որոշիչ հոդը։ Կան ածականներ, որոնք վերաբերում են միայն անձի (առաջավոր, հայրենասեր, մեծամիտ), որոշ ածականներ էլ գոյականաբար գործածվում են միայն իրի վերաբերելով (լուսավոր, կանաչ), վերջապես կան ածականներ էլ, որոնք կարող են վերաբերել թե՛ անձի, թե՛ իրի (թուլլ, ուժեղ, մեծ, փոքր)։ Անձի վերաբերելիս ածականը ներգոյական հոլովում սովորաբար ում վերջավորություն չի ստանում. ներգոյականի իմաստը այդ դեպքում դրսևորվում է տրականի և մեջ կապի միջոցով։ Ում ստանում են իրի վերաբերող ածականի ներգոյական հոլովաձևերը։

Այսպես՝

ուղղ. առաջավորը	*հայրենասերը*
տրակ. առաջավորի(ն)	*հայրենասերի(ն)*
բաց. առաջավորից	*հայրենասերից*
գործ. առաջավորով	*հայրենասերով*
ներգ. —	—

լուսավորը	*կանաչը*
լուսավորի(ն)	*կանաչի(ն)*
լուսավորից	*կանաչից*
լուսավորով	*կանաչով*
լուսավորում	*կանաչում*

ԱԾԱԿԱՆԱԿԵՐՏ ԱԾԱՆՑՆԵՐ

§ 213. Ժամանակակից հայերենում թեև ածականը, իբրև խոսքի մաս, չունի ձևական այնպիսի հատկանիշ, որով տարբերվի մյուս խոսքի մասերից, այսինքն՝ ձևով, ձևաբանորեն չի առանձնանում այլ կարգի բառերից, սակայն մի շարք ածականներ, այնուամենայնիվ, իրենց կազմությամբ սահմանազատվում են մյուս խոսքի մասերից։ Իբրև այդպիսի հատկանիշ ծառայում են ածականակերտ ածանցները։

Ածականակերտ ածանցները բավական շատ են մեր լեզվում։ Դրանց մի զգալի մասը հիմնականում հանդես է գալիս միայն ածականների կազմության մեջ, մյուս մասը կա՛մ հավասարապես մասնակցում է նաև այլ խոսքի մասերի կազմությանը, կա՛մ էլ որոշ դեր է կատարում այլ կարգի բառերի կազմության մեջ[18]։ Ածականակերտ բոլոր ածանցները բառակազմական տեսակետից հավասարարժեք չեն։ Դրանց մի մասը սահմանափակ կիրառություն ունի և հանդիպում է ընդամենը մի քանի օրինակների մեջ, մյուս մասը չափազանց կենսունակ է և ակտիվ դեր է կատարում ածականների կազմության մեջ։

Ածականակերտ ածանցները բաժանվում են երկու խմբի՝

ա) որակական ածականներ կերտող,

բ) հարաբերական ածականներ կերտող։

Եթե որակական ածականները կազմվում են և՛ նախածանցներով, և՛ վերջածանցներով, ապա հարաբերականների կազմության մեջ հանդես են գալիս միայն վերջածանցները։

---

18 *Այստեղ հիմնականում քննության են առնվում այն ածանցները, որոնցով միայն ածականներ են կերտվում, այլև նրանք, որոնց համար թեև բնորոշը ածականներ կերտելն է, սակայն հանդես են գալիս նաև այլ խոսքի մասերի, հատկապես գոյականների կազմության մեջ։*

ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ ԿԵՐՏՈՂ ՆԱԽԱԾԱՆՑՆԵՐ

§ 214. Որակական ածականներ կազմող նախածանցների թիվը 20-ի է հասնում։ Դրանց մի մասը ժխտական իմաստ է արտահայտում։ Այդպիսիք են ան, ապ, դժ, տ, չ։ Մրանցից ակտիվ դեր է կատարում միայն ան-ը, մյուսները հանդես են գալիս միայն մի քանի բառերի կազմության մեջ։ Ապ, դժ, տ, չ *ածանցներով են կազմված՝* ապաշնորհ, ապերջանիկ, ապերախտ, ապաբախտ, ապօրինի, դժբախտ, դժգոհ, դժգույն, դժմիտ, դժկամ, տգեղ, տգետ, տկար, տհաս, տմարդի, չբեր, չտես, չկամ, չհաս *և այլն։*

§ 215. Ան-*ը ածականներ է կերտում գոյականից, ածականից, բայահիմքից և այլ բառերից։ Օրինակ՝* անտուն, անգութ, անկախ, անամոթ, անգործ, անօթևան, անզգույշ, անազգիվ, անհաստատ, անհամեստ, անծանոթ, անգուսպ, անհաշտ, աներեր, անկոչ, անխնամ, անբաժան, անզգա, անսասան *և այլն։*

ՈՐԱԿԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ ԿԵՐՏՈՂ ՎԵՐՋԱԾԱՆՑՆԵՐ

§ 216. Որակական ածականներ կազմող վերջածանցները բավական շատ են մեր լեզվում։ Դրանցից մի քանիսը վաղուց կորցրել են իրենց բառակազմական կենսունակությունը և քարացած ձևով հանդես են գալիս սահմանափակ թվով բառերում։ Այդպիսիք են՝ աշ, արիմ(երիմ), եմ(իմ), եցիկ, ոտի, գար *և այլն։ Նշված ածանցներով են կազմված* թթվաշ, մատղաշ, մտերիմ, ոխերիմ, հավատարիմ, ուշիմ, խոհեմ, երգեցիկ, ազդեցիկ, գեղեցիկ, ճնոտի, սնոտի, օտարոտի, խելագար, լեզվագար, ցավագար *և այլ ածականներ։*

Որակական ածականներ կերտող կենսունակ վերջածանցներն են՝ (ա)վոր, (ա)վետ, ավուն, եղ, կոտ, ոտ, իկ, լիկ, ուկ, ագույն, իճ, աճ, ուճ, արար, իշ, ովի, ուճակ *և այլն, որոնք հիմնականում կազմում են ածականներ, կան նաև այնպիսիները, որոնք հանդես են գալիս նաև գոյականների կազմության մեջ։*

§ 217. (Ա)վետ*-ը ածականներ է կերտում մի բանով առատ լինելու, դրանից շատ ունենալու նշանակությամբ։ Օրինակ՝* ճոտավետ, ծաղկավետ, շահավետ, օգտավետ, կաճաչավետ, սիզավետ, արդյունավետ *և այլն։*

§ 218. (Ա)վոր *ածանցով ածականներ են կազմվում գոյականներից, ածականներից բայահիմքերից՝ մի բան ունենալու, մի բան կատարողի, գործողի և այլ նշանակությամբ։ Օրինակ՝* լուսավոր, մտավոր, արժեքավոր, դիմավոր, բանավոր, հանցավոր, վիրավոր, թունավոր, խալավոր, սգավոր, նպաստավոր, կեղծավոր, ճեռավոր *և այլն։*

Նույն կազմությամբ կան նաև որոշ գոյականներ. այսպես՝ թագավոր, դատավոր, չհավոր, ձիավոր, աշխատավոր, սակրավոր, ջրվոր, ուղևոր *և այլն։ Սրանց մեծ մասը միայն գոյական է։ Կան և այնպիսիները, որ ունեն գոյականի և ածականի խոսքի մասային իմաստ։*

§ 219. Եղ *ածանցը բավական կենսունակ է մեր լեզվում։ Նրանով ածականներ են կազմվում գոյականներից, մասամբ նաև ածականներից ու բայահիմքերից, որոնք դրսևորում են մի բան ունենալու, տվյալ բանից շատ ունենալու հատկանիշ։ Օրինակ՝* զոռեղ, ուժեղ, համեղ, հաճարեղ, թիկնեղ, աճեղ, մարմնեղ, ճնշեղ, շնչեղ, ձայնեղ, շրեղ, վարսեղ *և այլն։*

§ 220. Ոտ*-ը ածականներ է կերտում գոյականից, որոնք արտահայտում են տվյալ գոյականով արտահայտված առարկան, իրը կամ երևույթը ունենալու (իր վրա կրելու) հատկանիշ։ Օրինակ՝* բդոտ, կրճոտ, կեղտոտ, կրակոտ, եռանդոտ, թեփոտ, ճաճոտ, թախծոտ, ճողոտ, փոշոտ, յուղոտ, ոսկրոտ, խալոտ, մսոտ *և այլն։*

Ոտ *ածանցով բայահիմքերից կազմված ածականները արտահայտում են ոչ միայն տվյալ բանը ունենալու, այլև այն կատարելու համար ունակ լինելու իմաստ։ Օրինակ՝* ճեգճոտ, կասկածոտ, խանդոտ, վարանոտ:

§ 221. Կոտ *ածանցը, դրվելով բայարմատների և ածականների վրա, կազմում է ածականներ տվյալ բանից շատ ունենալու նշանակությամբ։ Օրինակ՝* պահանջկոտ, զայրացկոտ, ամաչկոտ, վախկոտ, ծիծաղկոտ, պարծենկոտ, բարկացկոտ, ցասկոտ, ճնկոտ, դանդաղկոտ, խռովկոտ *և այլն։*

§ 222. Իկ *ածանցը դրսևորում է նվազա-փաղաքշական (նաև՝ նվաստական) և սաստկական իմաստ։ Դրանով ածականներ են կազմվում գոյականներից, բայահիմքերից և ածականներից։ Օրինակ՝* կուզիկ, աշխարհիկ, թափանցիկ, շրջիկ, ընթացիկ, թռուցիկ, մածուցիկ, աճառիկ, հուշիկ, խաբուսիկ, սլացիկ, բացառիկ, պայթուցիկ: Իկ *ածանցը հանդես է գալիս նաև բարդությունների մեջ.*

այսպես՝ բարեկեցիկ, մելամաղձիկ, սրտաճմլիկ, ֆաջասլացիկ, բրռնազբոսիկ, վաղամեռիկ *և այլն։ Նշված ածանցը, բաղադրվելով ածականներին, սաստկացնում, երբեմն թուլացնում, հաճախ էլ փաղաքշական իմաստ է հաղորդում ածականներին։ Օրինակ՝* փոքրիկ, մեղմիկ, բաղցրիկ, կլորիկ, լավիկ, ճանդարտիկ, ճեզիկ, ժիրիկ, գաճգուրիկ, ֆնֆուշիկ։

§ 223. Իկ *ածանցը սահմանափակ կիրառություն ունի, հանդես է գալիս ընդամենը մի քանի ածականների կազմության մեջ։* Իկ-*ը հիմնականում դրվում է ածականների վրա և իկ ածանցի նման նվազա-փաղաքշական իմաստ է արտահայտում* (թխլիկ, կարճլիկ, բարալիկ, ճասալիկ, թմփլիկ)։

§ 224. Ուկ-*ը դրսևորում է նվազա-փաղաքշական իմաստ* իկ *ածանցի պես։ Նրանով ածականներ են կազմվում գոյականներից, բայահիմքերից կամ բայարմատներից և ածականներից։ Օրինակ՝* դիպուկ, կարուկ, ճատուկ, բաճուկ, ճեղճեղուկ, վաղաճասուկ, սրտամաշուկ *և այլն։ Դրվելով ածականների վրա՝ նրբերանգային որոշ իմաստ է հաղորդում նրանց. այսպես՝* տաք—տաքուկ, գեր—գիրուկ, չոր—չորուկ, սև—սևուկ, խև—խևուկ, խեղճ—խղճուկ *և այլն։*

Ուկ-*ը հանդես է գալիս նաև գոյականների կազմության մեջ* (արդուկ, խաչմերուկ, ճաճելուկ, միջուկ, ճեղուկ)։

§ 225. (Ա)գույն *ածանցը կազմում է որակական ածականների գերադրական աստիճանը։ Այսպես՝* լավագույն, ուժեղագույն, վատթարագույն, գեղեցկագույն, բարձրագույն, ճորագույն, ճզորագույն, ազնվագույն, ճստակագույն, գերագույն *և այլն։ Այս ածանցով կազմվում է միայն որոշ թվով ածականների գերադրականը։ Իբրև գերադրականության դրսևորման միջոց այն լայն տարածում չունի։*

§ 226. Ավուն *ածանցը ածականներ է կազմում հիմնականում ածականներից։ Դրվելով համի, գույնի, չափի և այլ իմաստ ունեցող ածականների վրա, ցույց է տալիս տվյալ հատկանիշի ոչ լրիվ դրսևորումը։ Այսպես՝* ճաստավուն նշանակում է ոչ լրիվ հաստ, կանաչավուն՝ *ոչ լրիվ կանաչ, կանաչին մոտ։* Ավուն *ածանցով են կերտված նաև* կարճավուն, բարակավուն, կապտավուն, սևավուն, կարմրավուն, դեղնավուն, բաղցրավուն, դառնավուն, խենթավուն, *և այլ ածականներ։*

§ 227. Ին *ածանցով կազմվում են ածականներ տարբեր բառերից։ Օրինակ՝ վերին, ներքին, արտաքին, ետին, առաջին, վերջին, միջին, նախկին, կարգին, ստորին։* Ին-*ը դրվելով ածականների վրա՝ մեծացնում է տվյալ հատկանիշի աստիճանը։ Օրինակ՝* դժվար—դժվարին, դյուր—դյուրին, լուռ—լռին, խոր—խորին, մութ—մթին, աննման—աննմանին, նուրբ—նրբին *և այլն։*

Այստեղ ածանցավոր ձևերը հատկանիշի չափի տեսակետից առավելություն են հանդես բերում պարզ ածականների նկատմամբ։

§ 228. Ան *վերջածանցը հավասարաչափ մասնակցում է և՛ ածականների, և՛ գոյականների կազմությանը։ Նրանով կերտվում են գոյականներ և ածականներ։* Ան-*ը, դրվելով բայարմատների կամ գոյահիմքերի վրա, կազմում է ածականներ ենթակայական դերբայի նշանակությամբ։ Օրինակ՝* կպչան, կծան, ծորան, ծվծվան, ճոճոան, զնգան, փշան, կթան, դուրեկան, վազան *և այլն։* Ան-*ով կազմված գոյականները ևս բավական շատ են (շրջան, վիպասան, ծծան, կռվան, իշխան, խթան, ոլորան)։*

§ 229. Ուն-*ը իբրև ածականակերտ ածանց, չափազանց կենսունակ է հայերենում։ Բաղադրելով բայարմատներին (երբեմն նաև որոշ գոյականների ու ածականների), կազմում է ածականներ ենթակայական (նաև՝ հարակատար) դերբայի նշանակությամբ։ Օրինակ՝* ասուն, խոսուն, գիտուն, շարժուն, սաճուն, փայլուն, ճոսուն, կպչուն, զգայուն, մնայուն, տոկուն, գործուն, ցայտուն, ճրկուն, ժպտուն, հասուն, լեցուն, փխրուն, եռուն, հորդուն, բեղուն, փխուն, զնգուն, ծավալուն, վարարուն, զարդարուն, պսպղուն, բեկբեկուն, կերկերուն *և այլն։*

§ 230. Արար *ածանցով կերտվում են թե՛ գոյականներ, թե՛ ածականներ։ Գոյականներ են* շինարար, հավաքարար, կազմարար, հուշարար, ցուցարար *և այլն։* Արար-*ը ածականներ է կազմում. ա)* գոյականներից *(աղետարար, կենսարար, կենարար, գործարար, լուսարար, տնարար, ղրուցարար, կատակարար), բ)* բայարմատներից *(կործանարար, փրկարար, վնասարար, կռվարար, զեղծարար, ստեղծարար), գ)* ածականներից *(խռովարար, ուրախարար, հաշտարար, նորարար, զովարար, թովչարար)։ Նշված բոլոր ածականներն էլ դրսևորում են ենթակայական դերբայի իմաստ։*

§ 231. Իչ *ածանցը հանդես է գալիս թե՛ գոյականների, թե՛ ածականների կազմության մեջ, սակայն ածականների կազմու-*

թյան մեջ ավելի կենսունակ է, քան գոյականների։ Իչ-ով *կազմված գոյականներից են՝* երգիչ, գրիչ, բերիչ, բրիչ, սեղմիչ, քաշակիչ, սրբիչ, նկարիչ, վարիչ։ Իչ-ը, *դրվելով բայարմատների կամ բայահիմքերի վրա, կազմում է ածականներ ող ածանցի նշանակությամբ։ Օրինակ՝* թովիչ, ճմայիչ, կախարդիչ, խանգարիչ, խորտակիչ։

§ 232. Ովի *ածանցը ածականներ է կերտում հիմնականում բայարմատներից։ Նա լայն տարածում ունի հատկապես ժողովրդական-խոսակցական լեզվում, որից և անցել է արդի գրական լեզվին։ Ովի ածանցով կազմված ձևերը համանիշություն են հանդես բերում կա՛մ հարակատար, կա՛մ կրավորական բայերի ենթակայական դերբայի ձևերին։ Այսպես՝ գնովի=գնած (գնվող), բացովի=բացած (բացվող), ցանովի=ցանած (ցանվող), ծալովի=ծալվող, ջրովի=ջրվող, վճարովի=վճարվող և այլն։ Նշված ածանցը հանդես է եկել նաև* կախովի, սարֆովի, բեռովի, փակովի, առնովի, ածովի, պճղովի, բաժանովի, գռնովի, ընտրովի, ճնարովի, ֆամովի, ֆաղովի *և այլ ածականների կազմության մեջ։*

ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐ ԿԵՐՏՈՂ ԱԾԱՆՑՆԵՐ

§ 233. Հարաբերական ածականներ են կազմվում այիճ, ական, յա, ե, յան, ատ, աճի, ի[19] *ածանցներով։ Սրանցից չափազանց լայն տարածում ունի հատկապես* այիճ-ը։

§ 234. Այիճ *ածանցը ժամանակակից հայերենի ածականակերտ ամենագործուն ածանցներից է։ Նրանով հարաբերական ածականներ են կազմվում հիմնականում գոյականներից։ Սա համանիշ է* ական *ածանցին։ Հիմա էլ կան դրանցով կազմված զուգահեռ ձևեր, սակայն* ական-ը *իր տեղը զիջում է* այիճ-ին, *վերջինիս գործածությունը մեծանում է* ական-ի *հաշվին։ Այժմ մեր լեզվում լայն կիրառություն ունեն* այիճ *ածանցով բազմաթիվ ածականներ։ Դրանցից են՝* ավանայիճ, շրջանայիճ, ատոմայիճ, ջրածնայիճ, գործարանայիճ, գաղութայիճ, ֆաղաքայիճ, կուլակայիճ, կոլխոզայիճ, բեռոնայիճ, ճիվանդանոցայիճ *և այլն։*

[19] Ի *ածանցով կազմվում են նաև որակական ածականներ (արի, վայրի, ձրի, աղի, բոնի, բարի, երկդիմի, արժանի, արդի, հավաստի, կատաղի, հարգելի, գովելի, ատելի, անկարելի, անտեսանելի, անհավատալի և այլն)։ Ի-ն ավելի ակտիվ դեր ունի որակական, քան հարաբերական ածականների կազմության մեջ։*

Ային-ը ածականներ է կերտում վերաբերական այս կամ այն նշանակությամբ, որոնք արտահայտում են տրական, բացառական, ներգոյական հոլովների իմաստներ։ Օրինակ՝ ծովային, ջրային, լեռնային, օդային, ցամաքային, ճարավային, ձյուսիսային, գիշերային, ձմեռային, ամառային, աշնանային, բնակարանային, բանտային, եկամտային, մթերային, դասակարգային *և այլն։ Այինով կազմված որոշ ածականներ արտահայտում են մի բան ունենալու, կրելու նշանակություն և այդ տեսակետից երբեմն համանիշություն են հանդես բերում* ոտ *ածանցով կազմված ձևերի նկատմամբ։ Այսպես՝* ճանճային—ճանճոտ, լեռնային—լեռնոտ, մոլեկուլային—մոլեկուլներ պարունակող, աղային—աղ ունեցող, կրային—կիր պարունակող, ջրածնային—ջրածին ունեցող (պարունակող) *և այլն։*

§ 235. Ական-*ը ևս ժամանակակից հայերենի ածականակերտ գործուն ածանցներից է։ Նրանով կազմվում են ածականներ գոյականներից, բայարմատներից և ածականներից։* Ական-*ով կերտված ածականները արտահայտում են որևէ բանի հատուկ լինելու, պատկանելության կամ վերաբերության և այլ իմաստներ։ Օրինակ՝* հայրական, մայրական, եղբայրական, մանկական, գյուղացիական, տոնական, բաղաքական, հայկական, ռուսական, հոգեկան, բուսական, կենդանական, հրամայական, արդիական, արական, իգական, փաղաքշական, գոհիկական, առողջական *և այլն*[20]։

Ական-*ը մասնակցում է նաև գոյականների կազմությանը։ Նրանով կազմված որոշ ձևեր կա՛մ միայն գոյական են, կա՛մ էլ միաժամանակ համատեղում են ածականի և գոյականի խոսքի մասային իմաստներ* (համալսարանական, ճեմարանական, ազգական, զինվորական, գաղթական, մտավորական, գիտնական, հոգևորական, բուդդայական, մահմեդական, ստախանովական)։

§ 236. Յա ածանցով գոյականներից կազմված ածականները ցույց են տալիս տվյալ նյութից պատրաստված, կազմված կամ առաջացած լինելը։ Օրինակ՝ ոսկյա, արծաթյա, երկաթյա, փայտյա, մետաքսյա, բդյա *և այլն։ Ավելանալով ածական, թվական կամ գոյական բաղադրիչ ունեցող բարդություններին՝* յա *ածանցը*

20 *Ածականներից* ական *ածանցով կազմվածները երբեմն իմաստային նրբերանգ են հանդես բերում այն ձևերի նկատմամբ, որոնցից կազմվել են, երբեմն էլ դրանց միջև իմաստային տարբերություն չի նկատվում։*

որակական ածականներ է կազմում մի բան ունեցողի նշանակությամբ (սեաչյա, խոշորաչյա, միանձնյա, fառոռնյա, հրաչյա)։

Յա *ածանցով տեղի անուններից կազմվում են ածականներ, որոնք ցույց են տալիս տվյալ տեղում կամ ժամանակում եղած, գտնված կամ գոյություն ունեցած հատկանիշ։ Այսպես՝* ծովափնյա, սառռերկրյա, օտարերկրյա, միջերկրյա, եռամսյա, երկամյա, fառամյա, յոթնամյա, տասնօրյա, ինգօրյա *և այլն։*

§ 237. Ե *ածանցը նույնանիշ է* յա-*ին. սա ևս գոյականներից ածականներ է կազմում, որոնք արտահայտում են առարկայի հատկանիշը կազմության տեսակետից, այսինքն՝ ցույց են տալիս առարկայի ինչ նյութից լինելու հատկանիշ։ Օրինակ՝* ոսկե, արծաթե, փայտե, բրդե, բրոնզե, մարմարե, պողպատե։ *Սրանք ունեն* յա *ածանցով կազմված զուգահեռ ձևերը* (փայտե—փայտյա. երկաթե—երկաթյա)։

Որոշ գոյականներից վերը նշված նշանակությամբ ածականներ են կազմվում միայն Ե *ածանցով* (կավե, ճողե, սատինե, մռրթե, ռետինե, fարե)։ *Սրանք չունեն* յա *ածանցով կազմված զուգահեռ ձևեր։*

§ 238. Յան *ածանցը սովորաբար գոյականներից ածականներ է կազմում մի բան ունեցողի, տվյալ ժամանակում կամ տեղում լինելու, այդ տեղին կամ ժամանակին հատուկ լինելու, այլև սերման կամ ծագման նշանակությամբ։ Օրինակ՝* երկլեզվյան, ճինգթևյան, աջակողմյան, ձախակողմյան, երևանյան, մոսկովյան, արևմտյան, արևելյան, ամերիկյան, ճնադարյան, միջնադարյան, առավոտյան, երեկոյան, ճուճվարյան, մառտյան, մարfս-լենինյան, միչուրինյան, ինգելյան։ *Նշված ածանցով կազմվում են նաև գոյականներ* (Վարդանյան, Պողոսյան, Հակոբյան, Բադալյան, Գրիգորյան)։ Յան-*ը այստեղ հանդես է եկել ազգանունների կազմության մեջ։*

§ 239. Ի *ածանցը գոյականներից ածականներ է կազմում առարկայի տվյալ նյութից պատրաստված լինելու նշանակությամբ։ Օրինակ՝* արծաթի, երկաթի, պողպատի, փայտի, կավի *և այլն։ Սրանք նույնանիշ են* յա, Ե *ածանցով կազմված ձևերին* (երկաթյա—երկաթե—երկաթի, փայտյա—փայտե—փայտի)։ *Պետք է նկատել, որ* ի-*ն կարող է գիտակցվել նաև իբրև հոլովական վերջավորություն (արծաթի կտոր, երկաթի չարդոն, փայտի մնա-*

ցորդ)։ Ի-ն ածականներ է կազմում անորոշ դերբայից։ Օրինակ՝ սիրելի, համակրելի, ցանկալի, անցանկալի, անդրդվելի, անսպասելի, անհերքելի և այլն[21]։

§ 240. Ատ-ը, *որ առաջ է եկել հատ արմատի հ-ի անկումով (հատ>ատ), գոյականներից ածականներ է կերտում մի բան չունենալու, դրանից զուրկ լինելու նշանակությամբ։ Օրինակ՝ գունատ, կռնատ, կիսատ, քնատ, պոչատ։ Նույն կազմությամբ որոշ բառեր գոյականի խոսքի մասային արժեք ունեն (միջատ, ջոկատ, փայտատ, հեղեղատ)։*

§ 241. Անի *ածանցը ածականներ է կազմում գոյականներից, որոնք արտահայտում են առարկայի տվյալ բանը ունենալու հատկանիշ։ Օրինակ՝ գեղանի, պիտանի, լեզվանի և այլն։ Պետք է նշել, որ այս ածանցը հիմնականում հանդես է գալիս թվականից կամ ածականից բաղադրված բարդությունների մեջ. ինչպես՝ միոտանի, երկփեղկանի, երկերեսանի, հինգվանկանի, ութձայնանի, նուրբլարանի, սուրգլխանի և այլն։*

Հիմնականում սրանք են ածականակերտ ածանցները, որոնցից մի զգալի մասը սահմանազատիչ դեր է կատարում ածականները այլ խոսքի մասերից տարբերելու գործում։

---

21 *Անորոշ դերբայից ի ածանցով կազմվածները հիմնականում որակական ածականներն են։ Ուստի դրանք այստեղ հանգամանորեն չեն քննվում։*

ԹՎԱԿԱՆ

ԹՎԱԿԱՆԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ

§ 242. Թվականների վերացարկման աստիճանը կոնկրետ առարկաներից շատ ավելի մեծ է, քան մյուս խոսքի մասերինը: Հենց այդ պատճառով էլ նրանք այժմյան նշանակությամբ բոլորովին չեն կապվում այն առարկաների հետ, որոնց անունից ծագել են համապատասխան իմաստային հիմքի վրա:

Հաշվական ամենատարածված և կատարելագործված դրությունը տասնորդականն է, որը հատուկ է հայերենին և մյուս հնդեվրոպական լեզուներին: Համրանքի տասնորդական սիստեմ ունեցող լեզուներում 1—10 թվերը ունեն առանձին անուններ, 11—99 (բացառությամբ տասնյակների) կազմվում են հավելումով, իսկ տասնյակները, հարյուրավորները, հազարավորները և այլն՝ բազմապատկմամբ: Այսպես՝ տասնինն=10+9, քսանհինգ=20+5, հիսուն=5·10, յոթանասուն=7·10, երկու հարյուր=2·100, երեք հազար=3·1000 և այլն: Հայերենում հանդիպում է չորս fuաn, երկու fառասուն և նման արտահայտություններ: Օր. Չորս fuաn տարիս լրացավ... (ՀԹ, Հառաչանք): —Համ իշխան, համ դավաճան, դժվար է ձեր բանը, երկու fառասուն տարի պիտի մեղք քավեք (ԴԴ, Վարդանանք): Այդ ձևը հիմնականում հատուկ է ժողովրդախոսակցական լեզվին:

Թվականները նյութական իմաստ ունեցող այն բառերն են, որոնք ցույց են տալիս առարկայի քանակային կամ թվային հատկանիշը:

§ 243. Թվականներից բացի չափի իմաստ են դրսևորում նաև այսfան, այդfան, այնfան, նույնfան, այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ, որչափ, ինչfան *դերանունները, fիչ, շատ, սակավ, բավական, պակաս և այլն մակբայները:*

Սակայն եթե թվականները քանակի իմաստը դրսևորում են մասնավորված, տարբերակված ձևով, ապա նշված մյուս բառերը քանակը արտահայտում են ընդհանուր ձևով, առանց տարբերակման։ Այլ խոսքով՝ թվականները ցույց են տալիս տարբերակված քանակություն, իսկ նշված դերանուններն ու մակբայները՝ քանակ ընդհանրապես, առանց տարբերակման։

Առարկաների այն քանակությունը, որ արտահայտվում է այդ դերանուններով և մակբայներով, կարող է ընդգրկել առարկաների բազմաթիվ միավորներ՝ սկսած մեկից մինչև միլիոն, միլիարդ և ավելի։ Օրինակ՝ Հասմիկը մեկ ռուբլի ունի։ Այդքան էլ ունի իր եղբայրը։ Մյասնիկյանի անվան գրադարանում կա մեկուկես միլիոն գիրք։ Այդքան էլ ունի Բաքվի հանրապետական գրադարանը։

Նշված բառերը տարբերվում են թվականներից նաև նրանով, որ կարող են դրվել բայի վրա, արտահայտելով հատկանիշի հատկանիշ, իսկ թվականների համար բացառված է այդ բանը։ Այսպես, օրինակ, շատ սովորական են՝ այսքան խոսեց, այդքան վազեց, այնքան գնաց, այսչափ վճարեց, շատ աշխատեց, քիչ ճոգնեց, բավական հզորացավ *և այլ կիրառություններ։ Մինչդեռ չի կարելի ասել՝* շոր գնաց, հարյուր եկավ, հազար մտածեց։

Ծանոթ.— *Այլ են՝* հինգ հշանակել, երեք սահանալ, ութ գրել, հազար վճարել, հարյուր մուծել *և այլն։ Այստեղ թվականները կիրառվել են որպես փոխանուն, այսինքն՝ հանդես են եկել գոյականական իմաստով։ «Ութ գրել» նշանակում է ոչ թե «ութ անգամ գրել», այլ «8 թվանշանը գրել», «հինգ նշանակել» նշանակում է՝ «հինգ թվանշան (գերազանց) նշանակել» և այլն։*

Բացի դրանից, բերված դերանուններն ու մակբայները կարող են արտահայտել նաև առարկայի հատկանիշի հատկանիշ, իսկ թվականների համար բացառված է այդ կիրառությունը։ Այսպես՝ սովորական են՝ շատ գեղեցիկ, քիչ զգայուն, բավական ուրախ, այսքան ուշևոր, այդքան հզոր, այնքան բարձր, այնքան խելոք, նույնքան բուռավետ *և այլ կիրառություններ։ Մինչդեռ չի կարելի ասել՝* հիսուն գեղեցիկ, ութ ուրախ, հարյուր բարձր *և այլն։ Թվականը ունի նաև այնպիսի հատկանիշներ, որոնք բնորոշ են ոչ միայն իրեն՝ թվականին, այլև ուրիշ խոսքի մասերի։ Դրանք, այսպես ասած, մի խումբ խոսքի մասերի հատուկ հատկանիշներ են։ Դրանցից են՝ թվի քերականական կարգի բացակայությունը, անթեքականությունը և գոյականական կիրառություն ստանալը։*

§ 244. Թվականը կարող է հոլովվել և հանդես գալ գոյականի բոլոր պաշտոններով։ Գոյականաբար գործածված թվականը արտահայտում է թվի և առարկայի իմաստ (վերջինս ընդհանուր ձևով)։ Այսինքն՝ թվականը ստանալով գոյականի քերականական առանձնահատկությունը, ամբողջովին չի զրկվում իր առանձնահատկությունից։ Այսպես՝ Հայուրը fսաևից հինգ անգամ մեծ է։ Ութը առանց մնացորդի չի բաժանվում երեքի վրա։ Յոթից երեքը աղջիկ են, չորսը տղաներ։ Նրանցից երկրորդը խելոք է, ևիևգերորդը՝ չար։ Հինգին ներկայացրին պարգևատրման։

Այս նախադասություններում թվականները, որոնք կիրառվել են գոյականաբար, արտահայտում են թվի ու առարկայի նշանակությունը միաժամանակ։ Հենց այն հանգամանքը, որ նրանց մեջ առկա է թվի, քանակի գաղափարը, նշանակում է, որ չեն զրկվել թվականի ամենաբնորոշ հատկանիշից, առարկայի տարբերակված քանակությունը դրսևորելու առանձնահատկությունից։ Անժխտելի է, սակայն, որ նշված օրինակներում ընդգծվում է նաև առարկայական իմաստը։ Այդ պատճառով էլ հենց հոլովվել են, ձեռք բերել գոյականի շարահյուսական կիրառություններ։

Ելնելով վերոհիշյալից՝ կարելի է տալ թվականի հետևյալ բնորոշումը։ Այն բառերը, որոնք արտահայտում են առարկաների թվային հատկանիշը, այսինքն՝ որոշակիորեն ցույց են տալիս առարկաների տարբերակված քանակը, թվային կարգը և հավասարաչափ բաշխումը, կոչվում են թվականներ։

ԹՎԱԿԱՆԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ

§ 245. Թվականների դասդասումը կատարելիս պետք է նկատի ունենալ նրանց ընդհանուր իմաստը, դրսևորման եղանակը և շարահյուսական կիրառությունը միասին։

Այդպիսի մոտեցմամբ թվականները բաժանում ենք չորս տեսակի՝ քանակական, դասական, կոտորակային և բաշխական։ Դրանց համար ընդհանուր է այն, որ արտահայտում են թվի գաղափար, դրանով նրանք միավորվում են միևնույն խոսքի մասի մեջ։ Սակայն նրանք հանդես են բերում նաև որոշակի տարբերություններ, հատկապես իրենց կազմության և իմաստային տեսակետից։ Այսպես՝ դասականը կազմվում է քանակականից rորդ

(երորդ), իսկ բաշխականը՝ ական ածանցով կամ քանակականի կրկնությամբ, կոտորակայինը՝ քանակականի և դասականի հարադրությամբ։

Վերջապես՝ քանակականները արտահայտում են առարկաների տարբերակված քանակը, մինչդեռ դասականները դրսևորում են թվային կարգը, իսկ բաշխականները առարկաների բաշխումը և այլն։ Սրանք հենց այն առանձնահատկություններն են, որով զանազանվում են թվականի տարատեսակները։

ՔԱՆԱԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

§ 246. Քանակական թվականները, որոնք կազմում են թվականների հիմնական խումբը, արտահայտում են առարկաների որոշակի քանակ և թվերի վերացական հասկացություն։ Քանակականների քանակը անվերջ է։ Դրանց թիվը կարելի է միշտ ավելացնել, բայց չսպառել։

Քանակի իմաստ ունեցող հնգյակ, հարյակ, եոյակ, տասնյակ, հարյուրյակ, ութնոց, իննոց, տասնավոր, հարյուրավոր, հազարավոր գոյականներն ու ածականները շփման եզրեր են հանդես բերում քանակական թվականների հետ։ Սակայն դրանք որոշակի տարբերություն են հանդես բերում քանակական թվականների նկատմամբ, որով էլ հենց ընդգրկվում են տարբեր խոսքի մասերի մեջ։ Տարբերությունը հիմնականում այն է, որ քանակական թվականները արտահայտում են միայն քանակ կամ թվերի վերացական հասկացություն անկախ առարկաներից, իսկ բերված բառերը քանակի գաղափարը դրսևորում են առարկաների հետ կապված, նրանց իմաստի հետ միասին։

Այսպես, եթե հինգ թվականը որոշակի քանակի գաղափար է արտահայտում անկախ առարկաներից, ապա հնգանոց-ը կարող է նշանակել՝ հինգ ռուբլիանոց դրամ, հինգ պարունակող խաղաթուղթ, հնգյակ-ը՝ հինգ հոգուց բաղկացած մի ամբողջություն, ասենք՝ հանձնաժողով, խումբ և այլն։

Ուրեմն՝ քանակական թվականների ամենաբնորոշ հատկանիշը այն է, որ արտահայտում են ամբողջական միավորների տարբերակված քանակություն և հանդիսանում թվերի բնական շարքի վերացական անվանումը։ Սա նրանց իմաստային առանձնահատկությունն է։

Քանակական թվականները կարող են որոշել ցանկացած գոյականը քանակային տեսակետից, բայց իրենք չեն կարող որոշվել որևէ կողմից: Սա նրանց շարահյուսական կիրառության յուրահատկությունն է:

§ 247. Քանակական թվականների բառային ֆոնդը մեծ չէ: Այն ընդգրկում է շուրջ 25 բառ, 1—10 (10 բառ), տասնավորները՝ 20—90-ը (8 բառ), հարյուր, հազար, միլիոն, միլիարդ և դրանցից բարձր մի քանի թվեր, որոնք սովորական հաշվումների ժամանակ քիչ են գործածվում: Այդ բառերի տարբեր կապակցություններով կարելի է արտահայտել ցանկացած քանակությունը: Այսպես՝ հարյուր տասնմեկ, հազար ութ հարյուր վաթսունինն, հինգ միլիոն վեց հազար երեք հարյուր հսանչորս և այլն:

Ի միջի այլոց, թվանշանների քանակն էլ սահմանափակ է, ճիշտ այնքան, որքան թվականների բառային ֆոնդն է (մոտ 25): Այդ թվերի տարբեր կապակցություններով կարելի է արտահայտել ցանկացած թիվը:

§ 248. Թեև թվականը արտահայտում է կոնկրետ քանակություն, և դա նրա բնորոշ հատկանիշն է, սակայն որոշ կապակցություններում թվականով դրսևորվում է ոչ թե որոշակի, այլ մոտավոր քանակության իմաստ: Այսպես՝ մեկ (մի) թվականը երբեմն ավելանալով հազար-ին, այնպիսի կապակցություն է ստեղծում, որը արտահայտում է ոչ թե հազար մեկ-ի (1001), այլ առարկաների մեծ, ըստ որում, ոչ որոշակի քանակության իմաստ:

Այդ կապակցությամբ արտահայտվող քանակությունը կարող է ընդգրկել նույնիսկ մեկ կամ մի քանի տասնյակ առարկաներ:

Գեղարվեստական գրականության մեջ հաճախադեպ են այդպիսի կիրառությունները: Օրինակ՝ Ձեռս պակաս, ուժըս հատած, Հազար ու մի ցավի տեր, Ինձ են նայում մերկ ու սոված, Մի տուն լիքը մանուկներ (ՀՔ, Գութանի երգը): —Սիրտս կրծում է հազար ու մի կասկած, մտքովս հազար ու մի փորձանք է անցնում (ՆՉ, Հացավան): Հազարումեկ հարցեր ծագեցան նրա գլխում (Ր, Սամվել):

§ 249. Երբեմն հատուկ կապակցություններում անորոշ քանակություն է արտահայտում նաև հազար թվականը: Հազար-ը այդ դեպքում իր քանակային մեծության շնորհիվ դարձյալ չափազանցում է առարկաների քանակական կողմը: Օրինակ՝ Հազար չար ու շառ, հազար հարամի, Հազար չահելներ վրխտում են հիմի... (ՀՔ,

Անուշ)։ Ուղեղում վխտում էր կասկած հազար. Մտածում էր՝ գնա, թե չգնա (ԵՉ, Խմբապետ Շավարշը)։

Երբեմն այդպիսի իմաստ են դրսևորում նաև հազար թվականով կրկնված ձևերը։ Ըստ որում, բարդության բաղադրիչները կարող են կամ միանալ ու շաղկապով, կամ առանց դրան՝ պարզապես հարադրությամբ։ Օրինակ՝ Ու պիտի գա հանուր կյանքի արշալույսը վառ հագած, Հազար-հազար լուսապայծառ հոգիներով ճառագած... (ՀՔ, Հայրենիքիս հետ)։ Ծամվում են մշուշում ընկած, Հազար ու հազար գաղթական (ԵՉ)։

Ընդգծված ձևերը թեև նույնպես անորոշ քանակություն և չափազանցություն են արտահայտում, սակայն այդ քանակությունը ընդգրկում է մեկից ավելի հազար միավորներ։ Դա պայմանավորված է հազար թվականի կրկնությամբ։

§ 250. Երբեմն անհրաժեշտ է լինում ներկայացնել առարկաների ոչ թե կոնկրետ, այլ մոտավոր քանակը։ Այդ դեպքում տվյալ թվականի հետ գործածվում է մի բառը, որը դրվելով քանակականի վրա, նրան հաղորդում է մոտավորության իմաստ։ Այսպես՝ մի տասը ռուբլի նշանակում է՝ մոտավորապես տասը ռուբլի, մի հարյուր հոգի՝ մոտ հարյուր հոգի և այլն։ Նման ձևերը շատ գործածական են ժամանակակից հայերենում։ Օրինակ՝ Մի հարյուր հոգի զբաղված էին տափարակ ու լայնադիր կրիան գլանների վրա գլորելով. մի հարյուրը առաջ էին վարում անիվների վրա հաստատված եռհարկյան աշտարակը (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ —Մի fuան րոպե էլ էս թափով գա, մի մետր կնստի (ՆՉ, Հացավան)։ Մի հիսուն քայլ գնացինք, քեռի Խեչանը կանգնեց (ՀՔ, Քեռի Խեչանը)։

Առարկաների մոտավոր (ոչ ճշգրիտ) քանակը արտահայտվում է նաև հարադրության միջոցով, ըստ որում, իբրև հարադրություն գործածվում են քանակական երկու թվականներ, որոնցից առաջինը արտահայտում է միավորների նվազագույն, իսկ մյուսը՝ առավելագույն քանակը։ Այս դեպքում նրանք միանում են գծիկով։ Օրինակ՝ ...Այդ ժամանակամիջոցում տասը—տասնհինգ ձու էր ետ գցել թուխս նստեցնելու համար (ՆԴ, Սև փողերի տոկոսը)։ Նրան ուղեկցում էին տասն—fuան ձիավորներ և նույնքան շներ (Ր, Սամվել)։ Բայց հազիվ թե հինգ-վեց օրից ճանապարհվի (ԴԴ, Վարդանանք)։

Ընդգծված թվականները սովորաբար ընթերցվում են այնպես,

ինչպես գրվում են, սակայն նրանց առաջին բաղադրիչը երբեմն ստանում է ոչ թե ուղղական, այլ բացառական հոլովաձևերի արտահայտությունը։ Այս դեպքում առաջին պլանի վրա է դրվում այդ քանակության տվյալ միավորից սկսվելու գաղափարը, մի բան, որ բնորոշ է բացառական հոլովաձևերին։ Համմտ.—Երբ կգա այդ ժամանակը։ —Քսանհինգից երեսուն տարի հետո... (ՆՋ, Հացավան)։

Մոտավոր քանակը արտահայտող թվականները հաճախ միանում են թե շաղկապով։ Օրինակ՝ Երեք թե չորս գնդակ անցնում են իմ կողքով (ՐՀ, Սերմնացանները չվերադարձան)։ Երկու թե երեք րոպեից հետո նա դուրս եկավ այնտեղից (ԳՄ, Թևհրան, 1)։

Քանակի մոտավորության արտահայտման համար երբեմն հիշյալ երկու միջոցները (մի բառը և տարբեր թվականների զուգորդումը) հանդես են գալիս միաժամանակ։ Օրինակ՝ Ինձ ուսումնարան տվին, ինձ հետ էլ մի fաաճ–երեսուն երեխա (ՀՔ, Իմ ընկեր Նեսոն)։ Բոլորը կլինեն մի fաաճ–fաաճինգ հոգի (ԴԴ, Վարդանանք)։

§ 251. Քանակը մոտավոր, ոչ ճշգրիտ ձևով է արտահայտվում նաև այն դեպքում, երբ թվականի հետ նախադաս գործածվում են շուրջ, մոտ, մոտավորապես, մինչև և այս կարգի որոշ բառեր, որոնք թվականի հետ մի բառակապակցություն են կազմում։ Այսպես՝ —Չորս երեխաներից ամենամեծը տղան էր, մոտ տասը տարեկան (ՆԴ, Ադամամութին)։ Որտեղ կարող է նստել մինչև տասը հազար ուղտ... (ԱԲ, Խաչատուր Աբովյան)։ Գերմաններենը Շուրջ երեք տարի, հարկադրաբար, ճկվում էր անվերջ նրա բերանում... (ՊՍ, Անլռելի զանգակատուն)։

§ 252. Մոտավոր քանակ է արտահայտվում նաև չափ անիսկական կապի միջոցով։ Այդ դեպքում թվականը կամ նրա լրացյալը հոլովվում է, ընդունելով կապի պահանջած հոլովը, իսկ կապը եռադաս է կիրառվում։ Օրինակ՝ Հինգ րոպեի չափ մնալով պատրաստամբում... Նա նորից մտավ սենյակը... (ՆԴ, Զազունյան)։ Նա յուր հետ ուներ ընդամենը հինգ հարյուրի չափ զորք (Մուր., Գևորգ Մարզպետունի)։

§ 253. Քանակական թվականների հետ իբրև դասանիշ հաճախ գործածվում են գլուխ, ձեռք, կտոր, զույգ, հատ, ամուն և այլն բառերը, որոնք արտահայտում են հատաքանակի գաղափար։ Նրանք թվականների հետ մի կապակցություն են կազմում, ըստ որում դրանցից առաջին չորսը կիրառվում են ոչ թե իրենց հիմնական

նշանակությամբ, այլ մի ամբողջություն ներկայացնող միավորի արժեքով։ Տվյալ դեպքում նրանք հատ բառի իմաստով են գործածվում։ Այսպես՝ ութ գլուխ ոչխար նշանակում է՝ ութ ոչխար։ Սրանք հիմնականում կիրառվում են հատերով հաշվելի առարկաների անունների հետ։ Օրինակ՝ Նրանք արդեն ունեին երկու եզ, երկու կով և տասնհինգ գլուխ ոչխար (ՆՋ, Հացավան)։ —Երեք հատ ձագ ցույց կտամ քեզ (ՀԹ, Ջարի վերջը)։ Անցած տարի, օրինակ՝ «Մասիս» ֆիրմայի ձեռնարկություններում թողարկվել է բառասուն հազար զույգ կոշիկ... (ԵԵ)։ Հինգ հատ միաշարժիչ ամբակոծիչներ են... (ԲՀ, Սերմնացանները չվերադարձան)։

§ 254. Քանակական թվականների հետ կապակցվում է նաև անգամ բառը։ Օրինակ՝ երկու անգամ, հինգ անգամ, տասն անգամ, հարյուր անգամ, հազար անգամ և այլն։ Այդ բառակապակցությունները մակբայական իմաստ ունեն և հանդես են գալիս չափ ու քանակի պարագայի դերով։ Հազար անգամ կապակցությունը ճիշտ հազար անգամ չի նշանակում, այլ շատ անգամ։ Դա քանակի յուրատեսակ չափազանցում է։ Այսպես՝ Հազար անգամ գնաց եկավ, բայց գործը գլուխ չբերեց նախադասության մեջ հազար անգամ-ը նշանակում է՝ շատ անգամ, ասենք մի քանի տասնյակ անգամ, բայց ոչ երբեք հազար անգամ։

ՔԱՆԱԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

§ 255. Քանակական թվականները կարող են դրսևորվել՝

ա) բառերով. ինչպես՝ մեկ, երկու, երեք, տասը, հարյուր, հազար, միլիոն, քսան միլիարդ հինգ հազար տասնչորս և այլն։

բ) թվանշաններով. այդպիսի դրսևորում կարող են ունենալ բոլոր թվականները։ Օրինակ՝ Իսկ եռևից գալիս էին վեց իշխանների զորքերը՝ թվով 5080 հոգի (Ր, Սամվել)։ Ընկան քուրմերից և 1038 քաջերը (Ր, Սամվել)։ ...Գերի վարեց 10000 հայ և 14000 հրեա (Ր, Սամվել)։

գ) Քանակական թվականը կարող է արտահայտվել միաժամանակ և՛ բառերով, և՛ թվանշաններով։ Այդպիսի թվականները սովորաբար մեծ քանակություն են դրսևորում և վերջանում են մեկից ավելի զրոներով։ Ըստ որում, թվանշաններով են արտահայտում հարյուրավորների, հազարավորների, միլիոնավորների, միլիարդա-

վորների և նման քանակ նշող թվականները։ Այսպես՝ 500-ը կարող է ստանալ 5 հարյուր, 9000-ը՝ 9 հազար, 17,000-ը՝ 17 հազար, 18,000,000-ը՝ 18 միլիոն արտահայտությունը, ուր 5-ը ցույց է տալիս հարյուրների, 9-ը և 17-ը՝ հազարների, իսկ 18-ը՝ միլիոնների քանակը։

Հաճախ միևնույն բաղադրյալ թվականների մեջ թվանշանը և բառը հանդես են գալիս մեկից ավելի անգամ։ Այդ դեպքում թվականը ընդգրկում է առնվազն հազարից ավելի միավորներ, ըստ որում, թվանշանները դարձյալ արտահայտում են հարյուրների, հազարների կամ միլիոնների քանակը։ Այսպես՝ Յոթնամյակի ընթացքում... կկառուցվի 2 միլիոն 400 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն... (ՍՀ)։ ...Արդեն լրացուցիչ թողարկել են 2 միլիոն 800 հազար մետր պատրաստի գործվածք և 360 տոննա մանվածք (ՍՀ)։ 1964 թվականին կարտադրվի 2 միլիարդ 300 միլիոն մետր գործվածք (ՍՀ)։

Շատ հաճախ միաժամանակ և՛ բառերով, և՛ թվանշաններով արտահայտվող թվականները վերջանում են ոչ թե զրոներով, այլ ուրիշ թվանշաններով։ Այդ պատճառով էլ նրանք ամբողջանում են ոչ թե բառերով, այլ թվանշաններով։ Այսինքն՝ վերջին մի քանի թվերը ստանում են ոչ թե բառային, այլ թվանշանային արտահայտություն։ Օրինակ՝ 9 հազար 458,35 հազար 128,8 միլիոն 558 հազար 763 և այլն։

ՔԱՆԱԿԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

§ 256. Քանակական թվականները ըստ կազմության լինում են պարզ կամ արմատական, բարդ և բաղադրյալ։

Քանակականները ածանցավոր չեն լինում։ Դա պայմանավորված է նրանց բառային իմաստով, առարկաների քանակը կամ վերացական թվերի հասկացությունը որոշակիորեն դրսևորելու հանգամանքով։ Պարզ թվականներն են՝ մեկից մինչև տասը, այնուհետև fuանը, հարյուրը, հազարը, միլիոնը, միլիարդը և սրանցից մեծ մի քանի թվեր, որոնք սովորական հաշվումների ժամանակ կա՛մ չեն գործածվում, կա՛մ սակավադեպ են գործածվում։

§ 257. Բարդ թվականները, որոնք հիմնականում կազմվում են իսկական կամ կցական բարդությամբ, ընդգրկում են բոլոր երկանիշ թվերը (11—99) բացառությամբ քսանի։ Բարդ թվական-

ներից տասնավորները արտահայտված են իսկական, իսկ մնացածները՝ կցական բարդությամբ։ Այսպես՝ տասնվեց=տասն և վեց (տասնվեց), քսանութ=քսան և ութ (քսանութ), հիսունչորս=հիսուն և չորս (հիսունչորս), ութսուն=ութ անգամ տասը, յոթանասուն=յոթ անգամ տասը և այլն։

Տասնավորների երկրորդ բաղադրիչը՝ սուն հնդևրոպական արմատ է, որ նշանակում է՝ տասը։ Այն, իբրև արմատ, անկախ գործածություն չունի մեր լեզվում, իսկ իբրև բարդության բաղադրիչ հանդես է գալիս միայն տասնյակների կազմության մեջ։ Սուն արմատով կազմված երեսուն, հիսուն, վաթսուն և յոթանասուն բառերի մեջ բարդության առաջին բաղադրիչը հանդես է գալիս փոփոխված, իսկ մյուսներում (քառասուն, ութսուն, ինսուն) անփոփոխ ձևով։

Տասնավորները (30—90) թեև ծագմամբ բարդ են, բայց այժմյան լեզվամտածողությամբ իբրև այդպիսին համարյա չեն գիտակցվում։ Դրանք կարելի է նույնիսկ պարզ թվականների մեջ մտցնել՝ համարելով երբեմն բաղադրիչներ ունեցողներ։ Անշուշտ, հենց այդ հանգամանքն է նկատի ունեցել պրոֆ. Հ. Աճառյանը, որ դրանք տեղադրել է Արմատական բառարանում, առանց նշելու նրանց բարդ լինելը։

Սուն արմատով կազմվածները այնուամենայնիվ պարզ կամ արմատականների շարքը չենք դասում նրա համար, որ նրանց բաղադրիչների իմաստները դեռևս լիովին չեն մթագնվել և դեռ ակնհայտ է այդ ձևերի բարդ լինելը, այսինքն՝ առանց դժվարության կարելի է վերականգնել բաղադրիչների և՛ ձևերը, և՛ իմաստները։

§ 258. Բաղադրյալ թվականները, որոնք կազմվում են երկու և ավելի անկախ բառերի հարադրումից, ներառում են հարյուրից բարձր թվականները (բացառությամբ հազարի, միլիոնի և միլիարդի, որոնք պարզ են)։ Օրինակ՝ հարյուր հինգ, հազար ութ հարյուր քառասունչորս, մեկ միլիոն երեք հազար չորս հարյուր ինսուն-հինգ և այլն։ Բաղադրյալ թվականները ըստ էության բարդ են, կազմված հարադրական բարդությամբ, սակայն դրանք բաղադրյալ են կոչվել միայն որոշ նկատառումով, կցական կամ իսկական բարդությամբ կազմված թվականներից ավելի հստակորեն տարբերելու համար։ Հարադրական բարդությամբ կազմված թվական-

ները որոշակի տարբերություն են հանդես բերում այդ եղանակով կազմված մյուս խոսքի մասերի նկատմամբ։ Տարբերությունը արտահայտվում է բաղադրիչների քանակի մեջ։ Թվականի բաղադրիչները կարող են հասնել մինչև տասի և նույնիսկ ավելի լինել, իսկ հարադրական բարդությամբ կազմված գոյականների, բայերի և այլնի բաղադրիչները հազվադեպ են երկուսից ավելի բաղադրիչներ ունենում։

Բաղադրյալ թվականների բաղադրիչները գրվում են առանձին-առանձին։ Եթե նրանց բաղադրիչների կազմում կան կցականով արտահայտված թվականներ, ապա նրանք պահպանում են իրենց այդ գրությունը. այսպես՝ երկու հազար fսաևվեց, հինգ հարյուր յոթանասունչորս *և այլն։*

Մեկ թվականը իբրև որոշիչ սովորաբար չի գործածվում հարյուր և հազար թվականների հետ։ Միլիոն և միլիարդ բառերի հետ գործածվում է մեկ թվականը։ Օրինակ՝ մեկ միլիոն հինգ հազար, մեկ միլիարդ երկու միլիոն *և այլն։*

Բարդ թվականների բաղադրիչները գրվում են միասին, առանց և, ու համադասական շաղկապների։ Օրինակ՝ fսաևչորս, հիսունութ, տասնմեկ։

Ծանոթ.— Աշխարհաբարի անցյալի շրջանում այդ թվականները հաճախ գործածվել են և, ու շաղկապներով։ Օրինակ՝ Նա կլիներ ոչ ավելի, քան տասնևչորս *տարեկան (ՆԴ, Բարերար և որդեգիր)։ Աղա Գրիգոր Մոսեիչի ամուսնանալուց հետո անցել էր ամբողջ* fսաևամի *տարի... (Ն. տ.)։ Դվնո առումից հետո՝ անցել էին* տասն *և հինգ երկար տարիներ (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ ...Այդ մի ամսում տարան* տասնեյոթն *հազար զոհեր... (Ր, Սամվել)։*

Սովետական շրջանի հեղինակներից երբեմն այդպիսի ձևեր են գործածում Ն. Զարյանը և Ե. Չարենցը։ Օրինակ՝ —...Բջիջում մենք ունենք երեսունևմեկ *անդամ և թեկնածու (ՆՉ, Հացավան)։ Բոլոր* տասնևհինգ *բրիգադներն իրենց լծկաններով... բռնել էին իրենց տեղերը (ՆՉ, Հացավան)։ 0 ,* տասնևհինգ *անհուն տարիների միջից... Բարձրանում է իմ դեմ հասակը Իլյիչի... (ԵՉ)։*

ԿՈՏՈՐԱԿԱՅԻՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

§ 259. Կոտորակային թվականները ունեն իրենց առանձնահատկությունները, որով և թվականի առանձին տեսակ են կազ-

մում։ Թե՛ իմաստային և թե՛ դրսևորման (կազմության եղանակի) տեսակետից նրանք էապես զանազանվում են քանակականներից։ Ի տարբերություն քանակականների, որոնք դրսևորում են ամբողջական միավորների քանակային հարաբերություն, կոտորակային թվականները արտահայտում են ամբողջի մասերի հարաբերությունը։ Ուրեմն կոտորակային թվականի համար էականը ամբողջի որևէ մասը արտահայտելն է։ Սա էլ հենց նրա առանձնահատկությունն է։

Կոտորակային թվականն ունի և իր կազմության յուրահատկությունը։ Այն արտահայտվում է քանակական և դասական թվականների հարադրությամբ։ Ընդ որում, դասականով նշվում է, թե քանի մասի է բաժանված ամբողջը, իսկ քանակականով՝ թե քանի մաս է վերցված դրանից, այլ կերպ ասած՝ դասականով արտահայտվում է ամբողջի՝ բաժանված մասերի քանակը, քանակականով՝ նրանցից վերցված մասերի թիվը։ Այսպես՝ Վարդանին չախջախելու համար բավ էր այդ ուժերի մի fառորդը (ԴԴ, Վարդանանք)։ Աշխարհի մեկ վեցերորդում վեր պարզվեց և այժմ ազատ փողփողում է լենինի... փառապանծ դրոշը... (ԴՍ, Թեհրան, 1)։ Գրել հետևյալ կոտորակները՝ մեկ հինգերորդ, երկու երորդ, երեք յոթերորդ, տասնհինգ տասնվեցերորդ, հինգ հարյուրվեցերորդ, fսանյոթ հարյուրերորդ (Պոն., Թվաբանություն)։ Այժմ ձեռնարկության արտադրանքի երկու երորդն է գնում քիմիական արդյունաբերությանը (ԵԵ)։

Կոտորակային թվականները արտահայտում են առարկայի քանակային հատկանիշը մասի և ամբողջի հարաբերությամբ։

Կոտորակային թվականի կազմում հանդես եկող դասականը հաճախ ստանում է նաև ական ածանցը, որով նա միաժամանակ ունենում է երկու ածանց՝ երորդ (երորդ) և ական։ Օրինակ՝ ...Հայտարարվել է, որ գյուղացիները պետք է հարկ տան ըստ շարիաթի՝ եկամտի մեկ տասներորդականը... (ԴՍ, Թեհրան, 1)։ —Դու ընկեր ես արդյունքի մեկ հինգերորդականով (Շիրվ., Քաոս)։ Քանի՞ հարյուր հազարերորդական մաս ունի մեկ հարյուրերորդականը (Պոն., Թվաբանություն)։

Տասներորդ-ական-ի *փոխարեն երբեմն գործածվում է* տասնորդական *ձևը։ Օրինակ՝ Մեր արածների ինն տասնորդականը բնազդման ծնունդ են (Շիրվ., Քաոս)։*

Գործածական են՝ չորս տասնորդական, հինգ տասնորդական, ութ տասնորդական և այլն։

§ 260. Կոտորակային թվականը կարող է դրսևորվել ոչ միայն բառերով, այլև թվանշաններով։ Այդ դեպքում նա ունենում է կոտորակի ձև։ Օրինակ՝

$$\frac{1}{3},\quad \frac{2}{5},\quad \frac{3}{4},\quad \frac{5}{9},\quad \frac{8}{73}\quad \text{և այլն։}$$

Համարիչի թիվը արտասանվում է քանակականի, հայտարարինը՝ դասականի նման։ Այսպես՝ $\frac{2}{5}$ = երկու հինգերորդ, $\frac{8}{9}$ = ութ իններորդ և այլն։

Կոտորակային թվականները կարող են արտահայտվել ոչ միայն պարզ կամ հասարակ, այլև խառը և տասնորդական կոտորակներով. օրինակ՝ 0,4, 0,9, 1,8, 44,05, $2\frac{1}{5}$, $9\frac{3}{8}$, $707\frac{7}{9}$ և այլն։ Դրանք արտասանվում են սովորական կոտորակների նման, միայն ամբողջական թվերից հետո օգտագործվում է ամբողջ բառը։ Այսպես՝ $9\frac{3}{8}$ = ինն ամբողջ երեք ութերորդ, 1,8 = մեկ ամբողջ ութ տասներորդ և այլն։ Կոտորակային թվականի կազմի դասականը, որ արտահայտված է թվանշանով, երբեմն ստանում է րդ ածանցամասը։

Մամուլի լեզվում կոտորակային թվականից հետո երբեմն օգտագործվում է րդ ածանցամասը. այսպես՝ Կղզու գրեթե 9/10-րդ մասը ծածկված է հավերժական սառույցով (ԵԵ)։ Այդպիսի կազմությունը, որ, անշուշտ, ստեղծվել է դասական թվականների նմանակությամբ, այնքան էլ ճիշտ չէ, քանի որ կոտորակային թվականի հայտարարը արտասանվում է ճիշտ դասականի նման, ուստի ավելորդ է դառնում այդ ածանցամասի գրությունը։

§ 261. Կոտորակային թվականները ըստ կազմության բարդ են։ Նրանք արտահայտվում են հարադրական բարդությամբ։ Սակայն այն բնորոշ կողմն ունեն, որ նրանց երկրորդ բաղադրիչը միշտ ածանցավոր է լինում, ընդ որում, այն կարող է ունենալ ոչ միայն մեկ, այլև երկու ածանց՝ րորդ (երորդ) և ական (երկու հարյուրերորդական, երեք հինգերորդական և այլն)։

Նկատի առնելով այդ առանձնահատկությունը՝ կոտորակային թվականները պետք է համարել բարդ ածանցավոր։ Կոտորակային թվականների բաղադրիչները գրվում են առանձին-առանձին։ Վերջին բաղադրիչը, որ միշտ ածանցավոր է լինում, պահպանում է իր գրությունը։

Կոտորակային թվականները նախադասության մեջ հիմնականում հանդես են գալիս որոշիչի պաշտոնով, ընդ որում, իբրև այդպիսին, գործածվում են կա՛մ իրենց դասանիշի հետ, կա՛մ էլ հենց իրենց որոշյալի համար։ Այսպես՝ ապրանքի երկու ֆինգերորդ մասը կշռում է 100 կգ.։ Հողամասի վեց յոթերորդ մասը անջրդի է։ Ապրանքի մեկ ութերորդ տոկոսը փչացել էր։ Մեկ ֆինգերորդ մետր կտորից անձեռոցիկ կարեցին։ Երեք ֆառորդ բաժինը պահեցին խնայողական դրամարկղում և այլն։

Կոտորակային թվականները հեշտությամբ կիրառվում են գոյականաբար, հատկապես այն դեպքում, երբ նրանց հետ հանդես չի գալիս որևէ դասանիշ։ Օրինակ՝ Հողամասի երկու ֆինգերորդը քարքարոտ էր, մեկ երորդը անջրդի։ Բանվորների երկու երորդը ժամկետին կատարեց ստանձնած պարտավորությունները։

ԴԱՍԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

§ 262. Դասական թվականները արտահայտում են առարկաների թվային կարգը։

Հաճախ դասական թվականով կարող է արտահայտվել հաջորդականության վերջնական սահմանը, այսինքն՝ առարկաների ճշգրիտ քանակը։ Այդ դեպքում հատաքանակը դրսևորվում է ոչ թե մոտավոր սահմաններում, այլ ճշգրիտ կերպով։ Այսպես՝ —Իսկ ես ահա ֆինգերորդ օրն է այստեղ եմ և չեմ իմանում ինչպես սպանեմ ժամանակս (ՆԴ, Մինաս Փափախյան)։ Երորդ ամիսն է, ինչ նա պառկած է հիվանդանոցում։ Ընդգծված դասականներով որոշակիորեն նշվում է միավորների հաջորդականության վերջնական կարգը։ Դա պայմանավորված է նրանով, որ դասականները համապատասխան միավորների շարքում հանդես են եկել ամենավերջին տեղում։

Նախադասության մեջ դասական թվականը հիմնականում որոշիչի պաշտոն է կատարում։ Ընդ որում, իբրև այդպիսին, կիրառվում է առանձին, առանց որևէ դասանիշի։ Եթե նրա հետ գոր-

ծածվում է որևէ դասանիշ, ապա նա որոշիչ է լինում վերջինիս համար։

ԴԱՍԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

§ 263. Դասական թվականները դրսևորվում են՝

ա) բառերով. օրինակ՝ հինգերորդ, հսկաներորդ, իննսուներորդ-միլիոներորդ *և այլն։*

բ) Արաբական թվանշաններով, ընդ որում, թվանշաններից հետո դրվում է րդ *ածանցամասը, որը արտասանվում է* որդ *կամ* երորդ, *նայած թե որ թվականից հետո է դրվել այն։ 2—4 թվերից հետո ընթերցվում է* որդ, *մյուսներից հետո՝* երորդ։ *Այսպես՝ 2-րդ=երկրորդ, 5-րդ=հինգերորդ, 20-րդ=քսաներորդ և այլն։ Ինչպես տեսնում ենք, նման դեպքերում պահպանվում է դասականների բառային արտասանությունը։ Բերենք թվանշանային դրսևորում ունեցող դասական թվականների բնագրային օրինակներ. Կարմիր բանակի* 84-*րդ բրիգադը վրան էր զարկել լեռնաշղթայի երկարությամբ (ԱԲ, Բրուտի տղան)։ Սուրբ Բարսեղի* 219-*րդ հոդվածն արգելում է պսակադրելը՝ մինչև տղան հասնի յուր չափին (ԱԲ, Խաչատուր Աբովյան)։*

գ) Հռոմեական թվանշաններով. այսպես՝ I, II, III, IV, V, VI, VII, VIII, IX, X, XI, XIX, XX, Xl, l (50), C (100), D (500), M (1000) և այլն։ Առանձին նշաններ ունեն 1, 5, 10, 50, 100 և 1000 թվերի դասականները (I, V,X, l, C, D, M)։ Մյուսները կազմում են դրանց միջոցով, երկրորդ-ը *և* երրորդ-ը՝ *I-ից, ուղղահայաց գծիկների քանակը ավելացնելով,* չորրորդ-ը, վեցերորդ-ը, յոթերորդ-ը *և* ութերորդ-ը՝ *V-ից՝ գծիկների թիվը ավելացնելու միջոցով՝ սկզբից (IV) կամ վերջից (VI, VII, VIII),* իններորդ-ը *և* տասնմեկերորդ-ից *մինչև* երեսուներորդ-ը՝ *X-ից և այլն։*

Հռոմեական նշաններով արտահայտված դասականներից սովորաբար գործածվում են մինչև 30-ը։ Նրանցից բարձր դասականները սակավ կիրառություն ունեն։ Նրանք կա՛մ փոխարինվում են արաբական թվանշաններով, կա՛մ էլ ստանում են բառային դրսևորում։

Հռոմեական նշաններով արտահայտված դասականները օգտագործվում են հատկապես դարերը, գրքերի հատորները, գլուխ-

ները և առհասարակ թվարկում ցույց տվող կետերը ըստ հերթականության նշելու համար։

դ) Հայկական այբուբենի տառերով։

Ինչպես հայտնի է, մինչև արաբական թվանշանների Հայաստան մուտք գործելը մեր լեզվի տառերը գործածվել են նաև քանակական թվականների արժեքով։ Երբ մուտք գործեցին արաբական թվանշանները (16—17-րդ դարեր), տառանունները այլևս չգործածվեցին թվային նախկին արժեքով։ Նրանք, սակայն, շարունակեցին գործածվել դասականի իմաստով, նշանակելով այն քանակականների դասականը, որոնց համապատասխանել են համրանքի տառային համակարգում։ Այսպես՝ բ-ն ունեցել է 2-ի արժեք, այժմ նշանակում է՝ երկրորդ և այլն։ Սրանք իբրև դասական սահմանափակ կիրառություն ունեն։ Գործածական են հատկապես ա-ից մինչև ժ տառերը, որոնք արտահայտում են գրքերի հատորները, մասերը, գլուխները, արձանագրությունների, կանոնների, դիտողությունների, առաջարկությունների, հրահանգների կետերը, թագավորների, կաթողիկոսների հերթական կարգը, դարերը և այլն։ Օրինակ՝ Դա նշանավոր Բագարանն էր, երվանդ բ-ի ձեռակերտը (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Իսկ Վաղարշակ Ա-ի օրերում... Սլկունիները ավելի նշանակություն ստացան (Ր, Սամվել)։ Իսկ Արշակ բ-ի օրերում նրանց թիվը հասնում է մինչև 900-ի (Ր, Սամվել)։ Տրդատ մեծի երեք հաջորդները՝ Խոսրով Բ, Տիգրան Բ և Արշակ Բ ավելի առաջ տարան նրա սկսած գործը (Ր, Սամվել)։ Բայց Արտաշես Գ-ի թագավորության վերջին օրերում՝ օտարազգի կրոնավորները հետամուտ են լինում... Հայրապետական աթոռը իրանց ձեռքը ձգելու (Ր, Սամվել)։

Տառանունները իբրև դասական գործածվում են նաև սպորտային թիմերի խմբերը որոշելու համար։ Այս դեպքում նրանք սովորաբար ունենում են տառանվանական արտասանություն։ Այսպես՝ Մարտ ամսին Մոսկվայում կսկսվի ջրային գնդակախաղի «բ» խմբի առաջնությունը (ՅԵ)։ Ֆուտբոլի «Ա» խմբի թիմերի մրցումները կսկսվեն ապրիլ ամսին, «բ» խմբի թիմերինը՝ մայիսին։

Դասական թվականի իմաստով երբեմն գործածվում է արաբական թվանշանը, որից առաջ դնում են կա՛մ համար բառը, կա՛մ № նշանը, որը դարձյալ համար է նշանակում։ Օրինակ՝ Այդ № 5 սրահի ավազակների ձայներն են, Աստղիկ խանում... (ԳՍ, Թեհ-

բան, 2)։ № 3 խցիկի բանտարկյալն իրեն լավ է զգում (ԳՍ, Թեհրան, 2)։ Ես ստուգել եմ և գիտեմ, որ համար 15 բրիգադում ավելորդ մի շղթա կա (ՆՋ, Հացավան)։ ...Գրեց համար 15-ի բրիգադավարին, որ ավելորդ շղթան հանձնի հիններորդ բրիգադին... (ՆՋ, Հացավան)։

Ծանոթ.— *Երբեմն հանդիպում են համար բառի հետ դասական թվականի գործածություններ, որ սխալ է։ Այսպես՝ կանչեցեք, խնդրեմ, իմ կառքը. համար ութերորդ (Շիրվ., Քաոս)։*

Անգամ բառը համախակի կիրառվում է նաև դասական թվականների հետ և ստեղծում հատուկ բառակապակցություն, որն արտահայտում է մակբայական իմաստ, նախադասության մեջ հանդես գալով ժամանակի և չափ ու քանակի պարագաների պաշտոններով։

Չափ ու քանակի պարագայի պաշտոնով կիրառվում է հատկապես այն դեպքում, երբ ընդգծվում, շեշտվում է դասականի քանակական հատկանիշը, այսինքն՝ երբ ուշադրությունը բևեռվում է գործողության կատարման չափի ու քանակի վրա։ Այսպես՝ Ապացուցիր հարյուրերորդ անգամ, թե ես արժանի չէի քո սիրույն (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Չորրորդ անգամ դուռը ծեծեցին և այս անգամ բավական պինդ... (ՆԴ, Նունե)։ Այդ երկրորդ անգամն էր, որ խեղճ Պետրովը վռնդվում էր նրա տնից (ՆԴ, Քնքուշ լարեր)։

Երբեմն հիշյալ կապակցությունը համատեղում է և՛ քանակի, և՛ ժամանակի իմաստներ։ Այդ դեպքում դժվար է առաջնությունը տալ որևէ մեկին։ Օրինակ՝ Էստեղ երկրորդ անգամ... Կկծեք ձեր շրթունքը... (ԵՉ)։ Երորդ անգամ է կանչում զորքերին (ՀՔ)։

Դասական թվականներից մի քանիսը համախ ստանում են ական ածանցը, դրսևորելով որակական հատկանիշ։ Օրինակ՝ երկրորդական դեմքեր, երկրորդական դեպքեր, երկրորդական դրություն, տասնորդական սիստեմ և այլն։ Այս կապակցությունների մեջ ընդգծված ձևերը ունեն ածականական (ոչ թվականական) իմաստ։

ԴԱՍԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

§ 264. Դասական թվականները կազմվում են քանակականներից **որդ** *կամ* **երորդ** *ածանցներով։ Որդ-ը ավելանում է երկու,*

երեք և չորս թվականներին, երորդ-ը՝ հինգ-ից սկսած բոլոր թվականներին. ինչպես՝ երկրորդ, երրորդ, չորրորդ, հինգերորդ, ութերորդ. հարյուրերորդ. հազարերորդ, հազար հսանվեցերորդ և այլն։ Րորդ-ը կրկնածանց է, կազմված r և որդ ածանցների միացումից։ Այդպիսի կազմություն ունի նաև երորդ ածանցը, ուր ե-ն հինգ թվականի բնի ձայնավորն է եղել (հնգեռասան), որը միանալով րորդ ածանցին, տվել է երորդ ձևը։ Այս ձևը (երորդ) ըմբռնվել է իբրև մի ածանց և անցել մյուս թվականներին, որով և առաջ է եկել դասականների երորդ ածանցը։

Րորդ (երորդ) ածանցով դասական է կազմվում քանակական բոլոր թվականներից, բացառությամբ մեկ թվականի։ Վերջինիս համար գործածվում է առաջին բառը, որ կազմված է առաջ բառից ին վերջածանցով, ինչպես ունենք վերջին, կարգին բառերը՝ կազմված ին ածանցով։

Ծանոթ.— Առաջին բառը ունի նաև ածականական, ոչ թվականական կիրառություն։ Այսպես՝ Եվ սա է քո ամենառաջին պարտականությունը (ՆՋ, Հացավան)։ ...Իր ամենառաջին անելիքը համարեց այն... (ՆԴ, Հատված «Նոր մարդը» անավարտ վեպից)։

Երբ մեկ թվականը հանդես է գալիս որպես բարդ թվականի վերջին բաղադրիչ, ընդունում է դասականի երորդ ածանցը։ Այդ դեպքում ածանցը ըստ էության վերաբերում է ոչ թե մեկ թվականին, այլ ամբողջ բարդությանը. այսպես՝ տասնմեկերորդ, հսանմեկերորդ, իննսունմեկերորդ, հարյուր հիսունմեկերորդ և այլն։

§ 265. Դասական թվականը կապակցվելով կարգ, տեսակ, ասպիճան և այլ բառերի հետ, երբեմն արտահայտում է ոչ թե առարկաների հաջորդական կարգը, այլ որակական հատկանիշը. Այսպես՝ ...երկաթուղու երկրորդ կարգի վագոններից մինում... նըստած էր Թամարը... (ՆԴ, Նոր հավ)։ Ի՞նչ որ նախկին երկրորդ կարգի վաճառական Սարգիս Զարգարյանի աղջիկը գնա ծառայի (Շիրվ., Քառս)։ ...Հագնված էր ամենավերջին տարազով, բայց որպես մի անշնորհք, սակայն գեղեցիկ դերասանուհին կամ առաջին կարգի կոկետուհի... (Շիրվ., Քառս)։ Կոլտնտեսությունը վաճառեց երեք տեսակի որոշ քանակությամբ միս. առաջին տեսակի մսի 1 կգ-ը 1,2 ռուբլով, երկրորդ տեսակինը՝ 0,9 ռուբլով և երրորդ տեսակինը՝ 0,6 ռուբլով (Պոն., Թվաբանություն)։

Գործածական են նաև առաջին կարգի մեխանիկ (շախմա-

տիստ, մրցանակ, վարորդ, շենք, ճաշարան), չորրորդ կարգի խառատ, վեցերորդ կարգի վարպետ, երկրորդ տեսակի ալյուր, առաջին տեսակի ապրանք և այլն։ Սրանք արտահայտում են որակական հատկանիշ։

Եթե կարգ բառը շարք (ряд) բառի նշանակությամբ է գործածված, դասականը, նրա հետ կապակցելով, սովորաբար հատկանիշ չի դրսևորում, իսկ երբ գործածված է որակի, տեսակի (ոչ ряд-ի) իմաստով, արտահայտում է որակական հատկանիշ։ Այսպես՝ երկրորդ կարգի սեղան կարող է նշանակել՝ երկրորդ շարքի սեղան և երկրորդ տեսակի կամ որակի սեղան։ Առաջին կարգի շենք կարող է նշանակել՝ առաջին շարքում տեղավորված շենք կամ առաջին տեսակի (բարձր որակով կառուցված) շենք։

Երկիմաստությունից խուսափելու համար նպատակահարմար է որակական իմաստով գործածել կարգ, դասականի իմաստով՝ շարք բառը։ Այսպես՝ երկրորդ կարգի աթոռ, բայց՝ երկրորդ շարքի աթոռ, առաջին կարգի տուն, բայց՝ առաջին շարքի տուն, երկրորդ կարգի վարորդ, բայց՝ երկրորդ շարքի վարորդ։ Ընդգծված կապակցությունները արտահայտում են որակական հատկանիշ, մյուսները՝ առարկաների հաջորդական կարգը։

ԲԱՇԽԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ

§ 266. Բաշխական թվականը ցույց է տալիս համասեռ առարկաների հավասարաչափ բաշխում։ Բաշխականի միջոցով ճշտորեն նշվում է առարկաների այն քանակը, որ տրվում է ամեն մի անձի, առարկայի կամ ունի ամեն մի անձ, առարկա, իսկ բաշխվելիք առարկաների ընդհանուր քանակությունը և միավորների այն թիվը, որի (որոնց) վրա կատարվել է բաշխումը, մնում են անորոշ։ Այսպես՝ Սարհաշիճական գործարանի բանվորները, իբրև պարգև, ստացան 20-ական ռուբլի նախադասության մեջ Հայտնի չէ ո՛չ բանվորների թիվը, ո՛չ էլ բաժանված գումարի ընդհանուր քանակը։ Որոշակի է ամեն մի բանվորի ստացած գումարը։ Այդպես է նաև հետևյալ օրինակներում. —Եթե նա կհամաձայնի տալ մեզանից յուրաքանչյուրին հարյուրական ոսկի... մենք ամրոցը կհանձնենք նրան... (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Պատերից յուրաքանչյուրը բաժանվում է չորս կամարամասի հնգա-

կան զույգ որմնասյուներով (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Սմբատը հրամայեց Սուլյանին նրան հաշիվներ տալ, տալ նաև յուրաքանչյուրին նահանգական ռուբլի պարգև (Շիրվ., Քառս)։

ԲԱՇԽԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

§ 267. Բաշխական թվականները արտահայտվում են՝

ա) Բառերով. օրինակ՝ երկուական, տասական, հիսունական, հարյուրական և այլն։

բ) Արաբական թվանշաններով. այս դեպքում թվանշանից հետո դրվում է ական ածանցը։ Այսպես՝ 12-ական, 6-ական, 20-ական և այլն։ Բնագրային օրինակներ՝ 11 ամսում նա 14 մերոնից ստացավ 12-ական խոճկոր (ՍՀ)։ ...որոնք 19 հնարավորից վաստակեցին 12-ական միավոր (ՍՀ)։ Դասամիջոցները երկրորդ և երրորդ ու չորրորդ դասերի միջև 20-ական րոպե են... (Պոն., Թվաբանություն)։

Բաշխական թվականների հետ կարող է կապակցվել անգամ բառը, ստեղծելով հատուկ բառակապակցություն։ Օրինակ՝ երկուական անգամ չեմպիոններ են եղել Տ. Պետրոսյանը, Վ. Կորչնոյը և Մ. Տալը (ԵԵ)։ Չեմպիոնատների բոլորից շատ մասնակցել են Մ. Տայմանովը՝ 14 անգամ, Դ. Բրոնշտեյնը՝ 13, Գ. Լևենֆիշը, Վ. Ռագոզինը, Վ. Սմիսլովը՝ 12-ական անգամ (Եր.)։

ԲԱՇԽԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

§ 268. Բաշխական թվականները կազմությամբ լինում են պարզ ածանցավոր, բարդ, բարդ ածանցավոր և կազմվում են հետևյալ կերպ՝

1. Քանակական թվականին ավելացվում է ական ածանցը։ Ական ածանցով կազմվածները կարող են լինել պարզ ածանցավոր և բարդ ածանցավոր։ Պարզ քանակականներից կազմվածները պարզ ածանցավոր են, բարդերից կազմվածները՝ բարդ ածանցավոր։

Քանակական բոլոր թվականներից այդ եղանակով կարելի է կազմել բաշխականներ։ Այսպես՝ մեկ—մեկական, հինգ—հնգական, տասնչորս—տասնչորսական, հարյուր—հարյուրական, հարյուր

հիսունհինգ—հարյուր հիսունհինգական, հազար երեք հարյուր ութսուն—հազար երեք հարյուր ութսունական և այլն։ Բնագրային օրինակներ՝ Յուրաքանչյուր խումբ բաղկացած էր հիսունական հոգուց (Ր, Սամվել)։ Մեզ տվել էին մեկական կտոր խոզի ճարպ, երկուական կտոր երշիկ և հաց (ԲՀ, Սերմնացանները չվերադարձան)։

Ական ածանցը, թեև դրվում է բարդ թվականների վերջին բաղադրիչի վրա, բայց վերաբերում է ամբողջ բաղադրությանը։

Ական ածանցը, դրվելով տարեթիվ արտահայտող քանակական թվականների վրա, ցույց է տալիս ոչ թե առարկաների բաշխումը հավասար քանակով, այլ արտահայտում է մոտավոր ժամանակաշրջան։ Այսպես՝ 1920-ական թվականներ-ը նշանակում է՝ *1920—1929 թվականները ընկած ժամանակը*, 1900-ական թվականները՝ *1900—1909*, իսկ 1850-ական թվականներ՝ *1850—1859 թվերը ընկած ժամանակաշրջանը* և այլն։

2. Բաշխական թվականները կարող են կազմվել քանակականների կրկնությամբ։ Այսպես՝ մի-մի, երկու-երկու, տասը-տասը և այլն։ Բնագրային օրինակներ՝ Նրա հոյակապ տները... մի-մի փուշ էին դարձել քաղաքացիների աչքում (Շիրվ., Քառս)։ Պատերից երկուսի վրա շինված էին երկու-երկու նեղ, բայց երկար ու կամարավոր պատուհաններ (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Ջորագունդը գնում էր դեռ երկար շարքով, երեք-երեք հեծյալ իրար հետևելով (ԴԴ, Վարդանանք)։

§ 269. Քանակական թվականների կրկնությամբ կազմված ոչ բոլոր ձևերն են բաշխականության իմաստ արտահայտում։ Որպես բաշխական թվական կիրառվում են հատկապես փոքր թվերից կազմված կրկնավորները, որոնք կարող են ունենալ նաև մակբայական (ոչ թվականական) իմաստ։ Այսպես՝ Մեր կողբադին գնաց Սասուն, Կանայք բերի խառուն-խառուն (ՀԹ, Սասունցի Դավիթ)։ Հինգ-հինգ, յոթ-յոթ, ինն-ինն շարվում են իրար հետևից... (ԲՀ, Սերմնացանները չվերադարձան)։

Այս օրինակներում կրկնված թվականները ցույց են տալիս հատկանիշի հատկանիշ, այսինքն՝ ունեն մակբայական իմաստ։ Այդ է վկայում նաև այն փաստը, որ նրանք դրվել են բայերի վրա, մի բան, որ բնորոշ է մակբայների համար։

Մեծ քանակություն արտահայտող թվականների կրկնությամբ

կազմված ձևերը, իբրև կանոն, սաստկացնում կամ չափազանցնում են թվականի իմաստը։

Մեկ *թվականի կրկնությամբ կազմված ձևը* (մեկ-մեկ) *այժմ քիչ է գործածվում որպես բաշխական թվական. այդ իմաստով ավելի հաճախ գործածվում է մեկական ածանցավոր ձևը։* Մեկ-մեկ *կրկնավորը հիմնականում մակբայական իմաստ է ստացել։ Օրինակ՝ Բայց մայրը մեկ-մեկ մոռանում էր և կանչում հին անունով (ՆՋ, Հայկական)։*

Մեկ-մեկ *կրկնավորը որոշակի տարբերություն է հանդես բերում մի-մի ձևի նկատմամբ։ Առաջինը հիմնականում գործողության հատկանիշ է արտահայտում, երկրորդը՝ առարկայի։ Այսինքն՝* մեկ-մեկ*-ը հիմնականում մակբայական իմաստ ունի, իսկ* մի-մի *ձևը թվականական։* Մեկ-մեկ *ձևը իմաստով գրեթե համարժեք է բարբառային* միճ-միճ *ձևին։ Այսպես՝* մեկ-մեկ *մոռանալ և* միճ-միճ *մոռանալ,* մեկ-մեկ *ծխել և* միճ-միճ *ծխել։ Այստեղ երկու ձևերն էլ նշանակում են՝* երբեմն։ Մեկ-մեկ *ձևը նաև բաշխականության իմաստ է արտահայտում։ Օրինակ՝ նրանք* մեկ-մեկ *բաժակ գինի և* մեկ-մեկ *բաժակ էլ օղի խմեցին ու դուրս գրնացին։ Այս նախադասության մեջ* մեկ-մեկ *նշանակում է մեկական, հետևաբար և բաշխականության գաղափար է դրսևորում։ Այդ իմաստով, սակայն ավելի շատ տարածված է* մի-մի *ձևը։*

Մեկից բարձր թվերից կազմված կրկնավորները՝ երկու-եր-, կու, երեք-երեք, չորս-չորս, հինգ-հինգ, վեց-վեց, տասը-տասը *և այլն կարող են արտահայտել և՛ բաշխում, և՛ գործողության հատկանիշ։*

Այսպես՝ երեք-երեք *շարվել,* չորս-չորս *գալ,* հինգ-հինգ *ընտել,* երկու-երկու *բայլել.* ութ-ութ *մտնել և այլ օրինակներում կրկնված ձևերը արտահայտում են գործողության հատկանիշը, այսինքն՝ ցույց են տալիս գործողության կատարման ձևը, պատասխանելով ինչպես հարցին։ Պետք է նկատել, սակայն, որ այդ ձևերը վերջին հաշվով արտահայտում են բաշխականության իմաստ, բայց բաշխումը այդ դեպքում կատարվում է ոչ թե անձերի, իրերի կամ ժամանակի միավորների միջև, այլև համասեռ առարկաների (նաև՝ անձերի) ներսում։ Այսպես՝ Հնձվորները դաշտից վերադառնում էին* հինգ-հինգ։ *Գրքերը կապեցին* տասը-տասը։ *Ջինվորները բարձունքից իջնում էին* չորս-չորս։

ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 270. Թվական անվանը հատուկ չէ հոլովի կարգը, սակայն գոյականաբար գործածվելիս հոլովվում է, ստանալով գոյականի պաշտոնները։ Գոյականաբար գործածվող թվականները հոլովվում են ի հոլովմամբ։

Քանակական թվականները հոլովվելիս ուղղականում միշտ ստանում են ը կամ ն որոշիչ հոդը։ Օրինակ՝ մեկը, մեկի(ն), մեկից, մեկով, մեկում։

Անձի անվան փոխարեն կիրառվելիս թվականը ներգոյական հոլովում սովորաբար ում վերջավորություն չի ստանում։ Այդ իմաստը դրսևորվում է տրականի և մեջ կապի միջոցով։

Երկու *թվականը հոլովվելիս ուղղականում ստանում է ս հընչյունը, որը պահպանվում է նաև մյուս հոլովներում։ Այսպես՝* երկուսը, երկուսի, երկուսից, երկուսով, երկուսում։

Պարզ թվականների նման են հոլովվում նաև կցական և հարադրական բարդությամբ կազմվածները, այսինքն՝ 11-ից բարձր բոլոր թվերը։ Ըստ որում, հոլովման է ենթարկվում միայն վերջին բաղադրիչը։ Օրինակ՝ տասներեքը, տասներեքի(ն), տասներեքից, տասներեքով, տասներեքում. հարյուր fսանչորսը, հարյուր fսանչորսի(ն), հարյուր fսանչորսից, հարյուր fսանչորսով, հարյուր fսանչորսում։

§ 271. Դասական թվականները նույնպես հոլովվում են ի հոլովմամբ։ Ուղղականում դրանք միշտ ստանում են ը կամ ն որոշիչ հոդը։ Օրինակ՝ առաջինը, առաջինի(ն), առաջինից, առաջինով, առաջինում. երրորդը, երրորդի(ն), երրորդից, երրորդով, երրորդում։

Այդ եղանակով են հոլովվում նաև մյուս դասականները։ Ըստ որում, բարդությամբ արտահայտված դասականները հոլովվելիս, հոլովման են ենթարկվում միայն վերջին բաղադրիչները։ Այսպես՝ ութսունհինգերորդը, ութսունհինգերորդի(ն), ութսունհինգերորդից, ութսունհինգերորդով, ութսունհինգերորդում։

§ 272. Կոտորակային թվականները հոլովվում են դասականների նման։ Ընդ որում, հոլովվում է միայն վերջին բաղադրիչը, մյուսը մնում է անփոփոխ։ Օրինակ՝ մեկ հինգերորդը, մեկ հինգերորդի(ն), մեկ հինգերորդից, մեկ հինգերորդով, մեկ հինգերորդում։

երբ կոտորակային թվականի վերջին բաղադրիչը ստանում է նաև ակաճ *ածանցը* (երկու հինգերորդական, երեք հարյուրերորդական), *որոշիչ հոդը դրվում է այդ ածանցից հետո* (երկու հինգերորդականը, երեք հարյուրերորդականը), *ապա նոր այդ ձևը ենթարկվում է հոլովման։ Այսպես՝* երկու հինգերորդականը, երկու հինգերորդականի(ն), երկու հինգերորդականից, երկու հինգերորդականով, երկու հինգերորդականում։

§ 273. *Բաշխական թվականները ավելի քիչ են հոլովվում, քան թվականի մյուս տեսակները։ Դա պայմանավորված է նրանց իմաստային և կիրառական առանձնահատկությամբ։ Բաշխականները հիմնականում դրվում են գոյականի կամ իրրև այդպիսին առնված բառերի վրա, հենց այդ պատճառով էլ սակավադեպ են գոյականաբար գործածվում, հետևաբար և հոլովվում։*

Ուրիշ է հազարականները ձևի գործածությունը, որը որոշ բառերի նմանակությամբ արդեն ձեռք է բերել նաև գոյականի իմաստ։ Օրինակ՝ Հազարականները կուսակցության կոչով մեկնեցին գյուղերը։ Հազարականներ ձևը այստեղ բաշխականության իմաստ չի արտահայտում։ Նա ունի միայն գոյականի խոսքի մասային արժեք։

ԴԵՐԱՆՈՒՆ

ԴԵՐԱՆՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ

§ 274. Դերանունը հարաբերակից է տարբեր խոսքի մասերի՝ դոյականին, ածականին, թվականին, մակբային։ Սա դերանվան հատկանիշներից է։ Դերանվան, որպես խոսքի մասի, յուրահատկութիւնը ճիշտ գնահատելու համար անհրաժեշտ է հաշվի առնել այն տարբերութիւնը, որ կա դերանվան և նրա հարաբերակից խոսքի մասերի միջև։

Գոյականը, ածականը, թվականը անվանում են համապատասխանաբար առարկա, առարկայի տարբեր հատկանիշներ՝ որակային ու հարաբերական և թվային։ Մակբայը թեև անուն չի համարվում, քանի որ նրա իմաստը չի առնչվում առարկայի հետ, բայց նա ևս ունի անվանողական արժեք՝ անվանում է գործողութիւն հատկանիշ կամ առհասարակ հատկանիշի հատկանիշ։ Մինչդեռ դերանունը չի անվանում ո՛չ առարկան, ո՛չ հատկանիշ։ **Ինչ, բարձր, ճարյուր, արագորեն** *բառերը որոշակի առարկայի ու հատկանիշների որոշակի անվանումներ են, մինչդեռ* **սա, այսպիսի, այսքան, այսպես** *բառերից և ոչ մեկը որոշակի ոչինչ չի ցույց տալիս և առհասարակ անվանողական արժեք չունի։ Ամեն մի առարկա կարելի է ցույց տալ սա դերանունով, ամեն մի որակային հատկանիշ՝ այսպիսի դերանունով, ամեն քանակ՝ այսքան դերանունով, գործողութիւն ամեն մի ձևային հատկանիշ՝ այսպես դերանունով։ Սա նշանակում է, որ դերանուններին հատուկ է առավել ընդհանրական, չտարբերակված իմաստը։ Նշենք, որ բառիմաստի այդ չտարբերակվածութիւնը բացարձակ չէ, որչափով կան առարկա ցույց տվող և որակային ու քանակային հատկանիշ ցույց տվող դերանուններ։ Առարկա ցույց տվող դերանունների մեջ էլ տարբերվում են անձ ցույց տվող (ես, դու, ինքը, ոմն,*

ով և այլն) և իր ցույց տվող (սա, դա, ինչ և այլն) դերանուններ: Այնուամենայնիվ, նշված սահմաններում իմաստային ընդհանրությունը, իրոք որ, դերանվան հատկանիշներից է:

Սակայն դերանուններին հարաբերակից խոսքի մասերի մեջ ևս կան որոշ թվով բառեր, որոնք իրենց իմաստի ընդհանրականությամբ, իրենց իմաստային ծավալով կարող են մրցել համապատասխան դերանունների հետ: Հմմտ. մարդ (աճն) և ես (ոմն), իր (առարկա) և սա (դա) և այլն: Նման դեպքերում դերանվան և անվան տարբերությունը իմաստային ընդհանրությամբ կամ ոչ ընդհանրությամբ անկարելի է որոշել: Սա նշանակում է, որ հիշյալ հատկանիշը դերանվան՝ այլ խոսքի մասերից տարբերելու բացարձակ չափանիշ չէ, հետևապես և միակ վստահելի հատկանիշը չէ:

Բերված դուգահեռ օրինակներից երևում է գոյականի և դերանվան տարբերությունը, այն է՝ միևնույն առարկան գոյականը անվանումով է արտահայտում, իսկ դերանունը չի անվանում, այլ ցույց է տալիս, ակնարկում է որևէ հարաբերությամբ (դիմային՝ ես, տարածական՝ սա, դա, մասնական՝ ոմն և այլն): Այս տարբերությունը, իհարկե, ոչ միայն նշված փաստերին է վերաբերում, այլև առհասարակ բոլոր դերանուններին, որոնք չունեն առարկայի, հատկանիշի անվանողական արժեք, այլ դրանք ցույց են տալիս որևէ հարաբերությամբ:

Հարաբերության հատկանիշի կարևորությունը ընդգծվում է ոչ միայն նրանով, որ այն հատուկ է բոլոր դերանուններին, այլև նրանով, որ սերտորեն կապված է դերանվան մյուս հատկանիշի՝ համընդհանուր իմաստի հետ: Եթե դերանունները չեն անվանում առարկան, հատկանիշը, այլ մատնացույց են անում կամ ակնարկում են այն, ապա այդ ակնարկումը պետք է կատարվի որևէ ձևով, որևէ հարաբերությամբ, այլ կերպ հնարավոր էլ չէ: Դերանվան այս երկու հատկանիշները՝ ընդհանուր իմաստը և հարաբերության հատկանիշը, հանդես են գալիս միասնաբար, ուստի՝ դերանունն իբրև խոսքի մաս պետք է բնորոշել այդ երկու հատկանիշներով:

Այսպիսով՝ դերանուն կոչվում են այն բառերը, որոնք ունենալով ընդհանուր, չտարբերակված իմաստ, ոչ թե անվանում են առարկան, հատկանիշը, այլ դրանք ցույց են տալիս որևէ հարաբերությամբ:

ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

§ 275. Դերանունները, ըստ իրենց արտահայտած հարաբերության բնույթի լինում են՝ անձնական, ցուցական, փոխադարձ, որոշյալ, անորոշ, հարցական-հարաբերական։

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

§ 276. Անձնական դերանունները սովորաբար անձ են ցույց տալիս։ Բայց մի կողմից անձ են ցույց տալիս նաև այլ տեսակի մի շարք դերանուններ (ով, ոմն, ամենքը, յուրաքանչյուր ոք և այլն) և, մյուս կողմից, անձնական դերանունները կարող են և անձ ցույց չտալ։ Սա նշանակում է, որ այս դերանունների համար անձ ցույց տալը սահմանազատիչ արժեք ունեցող հատկանիշ չէ. նրանց համար առավել բնորոշ հատկանիշը դիմային հարաբերության իմաստն է։ Այդ հատկանիշը որոշակիորեն երևում է անձնական դերանունների շարքից՝ ես, դու, նա. իմս, իմդ, իմը։ *Քննարկվող դերանունների էությունը կարելի էր արտահայտել դիմային անվանումով։ Բայց քանի որ գիտության մեջ տերմինների փոփոխությունը չի խրախուսվում, ուստի ավանդական տերմինը պահպանելով հանդերձ, այն պետք է համարել պայմանական և հաշվի առնել այդ դերանունների, իրոք որ, դիմայնությունը։ Այսպիսով՝* անձնական դերանունները անձ (երբեմն էլ առարկա) են ցույց տալիս դիմային հարաբերությամբ։

Առաջին դեմքի *անձնական դերանուններն են՝* ես, իմս. մեմ, իմմես։

Երկրորդ դեմքի *անձնական դերանուններն են՝* դու, իմդ. դուք, իմմեդ։

Երրորդ դեմքի *անձնական դերանուններն են՝* նա, իմը. նրան, իրեմ։

§ 277. Ինչպես երևում է, անձնական դերանվան յուրաքանչյուր դեմքի համար ժամանակակից հայերենն ունի զույգ դերանուններ՝ և՛ եզակի, և՛ հոգնակի թվով՝ ես—իմս, դու—իմդ, նա—իմը, մեմ—իմմես, դուք—իմմեդ, նրանք—իրեմ։

Առաջին և երկրորդ դեմքերի անձնական դերանունների զուգահեռ ձևերի միջև իմաստային էական տարբերություն չկա։ Դր-

բանք արտահայտում են միևնույն անձի կամ առարկայի վերաբերության իմաստ. այդ պատճառով էլ հաճախ իմիս, իմիդ դերանունները կարելի է փոխարինել ես, դու դերանուններով և ընդհակառակը: Այդ զույգ ձևերի միջև կա միայն ոճական ու կիրառական նուրբ տարբերություն:

Իմիս, իմիդ *դերանունների՝ դեմք ցույց տալու հետ միասին այն ընդգծելու, շեշտելու յուրահատկությունն է պատճառը, որ նրանք հաճախ են գործածվում ես, դու, իսկ նրանց հոգնակի ձևերը՝* իմիներս, իմիներդ՝ *մենք, դուք դերանունների հետ դեմքը ընդգծելու կամ շեշտելու նպատակով (ես* իմիս, *դու* իմիդ, *մենք* իմիներս, *դուք* իմիներդ): *Օրինակ՝ ես* իմիս *չեմ իմանում, թե ինչ եմ միտք անում (ՆՋ, Հացավան): Ընթերցո՛ղ, հիմա դու* իմիդ *դատիր (ԱՇ):*

Իմիր *դերանունը ևս դեմքը ավելի ուժեղ է շեշտում, քան նա դերանունը և հաճախ գործածվում է նրա հետ միասին: Օրինակ՝ Նա* իմիր *ցանկացավ կռվել իր քրոջ հետ (ՆՋ, Հացավան):*

Իմիր *դերանունը կարող է գործածվել նաև գոյականների հետ հիշյալ իմաստով. ինչպես՝ Լևոնը* իմին *իր դեմ զայրացած դուրս եկավ (ՆՋ, Հացավան):*

Սակայն իմիր *դերանունը ոչ միշտ է արտահայտում ևս դերանվան իմաստը և հետևաբար ոչ միշտ է կարելի փոխարինել ևս դերանունով:*

Հաճախ անձնական դերանվան երրորդ դեմքով ցույց է տրվում մեկին, որը գործողության է կատարում: Այդ գործողության առարկան կարող է լինել և՛ հենց ինքը՝ գործողություն կատարողը, և՛ այդ գործողություն կատարողին պատկանող առարկան: Օրինակ՝ Նա կարողանում է ուրիշի աչքերով նայել իր վրա: Նա շատ է սիրում իր գրքերը: Նա դժգոհ է իրենից: Ինչպես երևում է, նման դեպքերում գործողության առարկան ցույց է տրվում իմիր *դերանունով:*

Սակայն այդ գործողության առարկան կարող է լինել մեկ ուրիշը կամ սրան պատկանող առարկան: Օրինակ՝ Նա կարողանում է ուրիշի աչքերով նայել նրա վրա: Նա շատ է սիրում նրա գրքերը: Նա դժգոհ է նրանից: Այս դեպքում, ինչպես տեսնում ենք, գործողության առարկան ցույց է տրվում ևս դերանունով:

ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

§ 278. Ցուցական դերանունները առարկա կամ հատկանիշ են մատնացույց անում տարածական ու ժամանակային հարաբերությամբ։ Այս հարաբերության դրսևորման տեսակետից ցուցական դերանունները կարելի է բաժանել երկու խմբի՝

1. Սա, դա, ձա, այս, այդ, այն, սույն, այսպես, այդպես, այնպես, այսպիսի, այդպիսի, այնպիսի, այսքան, այդքան, այնքան, այսչափ, այդչափ, այնչափ, այստեղ, այդտեղ, այնտեղ.

2. Նույն, միևնույն, նույնպես, նույնպիսի, նույնքան, նույնչափ, մյուս։

§ 279. Ըստ արտահայտած հարաբերության՝ առաջին խմբի դերանունները կարելի է բաժանել հետևյալ երեք շարքերի.

Ա	Բ	Գ
սա	դա	նա
այս	այդ	այն
սույն	—	—
այսպես	այդպես	այնպես
այսպիսի	այդպիսի	այնպիսի
այսքան	այդքան	այնքան
այսչափ	այդչափ	այնչափ
այստեղ	այդտեղ	այնտեղ

Նախ՝ ցուցական դերանունների արտահայտած տարածական հարաբերության մասին։ Յուրաքանչյուր շարքում կան և՛ առարկա, և՛ առարկայի հատկանիշ, և՛ գործողության հատկանիշ, և՛ տեղ ցույց տվող դերանուններ։ Իմաստային այդպիսի բազմազանություն ունեցող դերանուններ միավորվում են տվյալ շարքի մեջ առարկան, հատկանիշը, տեղը միևնույն հարաբերությամբ մատնացույց անելու հատկանիշի հիման վրա։ Ա շարքի դերանուններն արտահայտում են խոսողին մոտիկ լինելու հարաբերություն, Բ շարքի դերանունները՝ խոսակցին մոտիկ լինելու հարաբերություն, Գ շարքի դերանունները՝ խոսողից ու խոսակցից հեռու լինելու հարաբերություն։ Այսպես, սա դերանունով առարկան կարող է մատնացույց արվել, երբ այն գտնվում է խոսողին մոտ կամ մտածվում է որպես այդպիսին, դա դերանունով առարկան կարող է մատնացույց արվել, երբ այն գտնվում է խոսակցին մոտ կամ մտածվում

է որպես այդպիսին, նա դերանունով առարկան կարող է մատնացույց արվել, երբ այն հեռու է խոսողից ու խոսակցից կամ մոտ է վում է որպես այդպիսին։ Նույն կերպ պետք է հասկանալ նաև համապատասխան շարքերի մյուս դերանունների իմաստը։

Ծան.— Հնարավոր է, որ առարկան գտնվի թե՛ առաջին և թե՛ երկրորդ դեմքի մոտ։ Այսպես, ենթադրենք խոսողը և խոսակիցը գտնվում են միևնույն գետի կամ ճանապարհի մոտ կամ մեջ, այդ դեպքում խոսողը գետը, ճանապարհը ցույց կտա ոչ թե դա, այդ, այլ սովորաբար սա, այս դերանուններով. Սա (այս. այս գետը) գալիս է հեռվից։ Սա (այս. այս ճանապարհը) նոր են կառուցել։ Նման դեպքերում առարկայի հատկանիշը ևս ցույց է տրվում առաջին շարքի դերանունով։

§ 280. Ցուցական դերանուններին հատուկ է նաև ժամանակային հարաբերության իմաստը։ Նրանք միայն ժամանակի հարաբերության իմաստ են արտահայտում ժամանակ ցույց տվող բառերի հետ գործածվելիս, ինչպես օրինակ՝ վայրկյան, րոպե, ժամ, ամիս, տարի, գիշեր, ցերեկ, առավոտ, երեկո, գարուն, ամառ, աշուն, ձմեռ. երկուշաբթի, երեքշաբթի. հունվար, փետրվար, մարտ. ժամանակ, պահ. տարեվերջ, տարեսկիզբ, դարավերջ, դարասկիզբ, նիսամյակ, հնգամյակ. դասամիջոց, ընդմիջում, արձակուրդ և այլն։ Այս դեպքում ժամանակի հարաբերության կետը այն ժամանակն է, որում հանդես են գալիս 1-ին և 2-րդ դեմքերը։ Նվ սովորաբար այն ժամանակը, որում հանդես է գալիս 1-ին դեմքը, որպես այդպիսին, բնականաբար նույնն է նաև խոսակցի կամ երկրորդ դեմքի համար։ Այսպիսով՝ ստացվում է, որ 1-ին և 2-րդ դեմքերի գոյության ժամանակը նույնն է, ընդհանուր է այդ երկուսի համար։ Վերը տեսանք, որ այն, ինչ ընդհանուր է 1-ին և 2-րդ դեմքերի համար (երբ օբյեկտը մոտ է 1-ին և 2-րդ դեմքին), ցույց է տրվում 1-ին շարքի դերանուններով։ Այդպես է նաև ժամանակային հարաբերության դեպքում։ Օրինակ՝ Դուք այս տարի զգալի հաջողություններ եք ձեռք բերել։

Ծանոթ.— Երբեմն խոսողը երկրորդ դեմքով կարող է մտովի դիմել անցյալում եղած կամ ապագայում լինելիք անձանց, անցյալի և ապագայի սերունդներին։ Պարզ է, որ այս դեպքում 1-ին դեմքի գոյության ժամանակը չի նույնանում 2-րդ դեմքի գոյության ժամանակի հետ։ Նման դեպքերում 2-րդ դեմքի գոյության

ժամանակը կարելի է ցույց տալ 2-րդ և 3-րդ շարքերի ցուցական դերանուններով։ Այսպիսով, ցուցական դերանուններով ժամանակ ցույց տալու համար որպես համեմատության կետ խոսելու ժամանակն է հանդիսանում։ Խոսելու ժամանակը և դրան մոտ ժամանակը ցույց է տրվում 1-ին շարքի ցուցական դերանուններով։ Օրինակ՝ Գարնանացանի նախապատրաստման այս պատասխանատու օրերին, ընկեր Շմավոնը պատմում է նրանց իր ձիու քաջագործություններից մասին (ՆՋ, Հացավան)։ Հայրենական պատերազմի այս ահեղ օրերում մենք տոնում ենք սովետական իշխանության իրականացման 25-ամյակը (Իս.)։ Եթե դեպքերն սկսվեն այս ամառ, մինչ ձմեռ թերևս կտևեն (ԴԴ, Վարդանանք, 1)։ Թույլ տվեք, որ Աննան այս գիշեր ինձ մոտ մնա (Շիրվ., Ունե՞ր իրավունք)։ Իշխան, չգնաս, մնա այս գիշեր (ԴԴ, Վարդանանք, 2)։

Երրորդ շարքի դերանունները ցույց են տալիս խոսելու պահից հեռու (անցյալ կամ ապագա) ժամանակ, ժամանակի միավոր։ Օրինակ՝ Շատ տարիներ են անցել, բայց ես չեմ մոռանա այն գարնան իրիկունը (ՀԹ, Մայրը)։ Բայց անցան այն օրից շատ տարիներ (Մ. Պետրոսյան)։ Դու պիտի քեզ համար մի մտերիմ կյանքի ընկեր գտնես, այն ժամանակ էլ տխուր չես լինի (ՀԹ, Անխելք մարդը)։

Խոսքի մեջ նշված ժամանակը, որպես այդպիսին, ցույց է տրվում սովորաբար երկրորդ շարքի ցուցական դերանուններով. Օրինակ՝ Թ. Թորոմանյանի հետ ծանոթացա Կարապետ Բասմաջյանի միջոցով Ալեքսանդրապոլում 1903 թ. աշնանը։ Նրանք այդ թվականին էին եկել արտասահմանից (Իս., Ճարտարապետ Թորոս Թորոմանյան)։ Մութ գիշեր էր. այնպես թանձր էր խավարը, որ թվում էր, թե կարելի է սվինով խոցել... Այդ գիշեր ինձ վիճակված էր չորս անգամ միևնույն ձևով հասնել Դնեպրի աջ ափն անցած մեր մի զորագնդին (ԱՍ, Ոսկե մեդալ)։ Նա հակառակ իր բոլոր ջանքերին, առաջին քառորդը փակեց «երկու»-ներով։ Մարիամիկն այդ օրը առավոտից երեկո գլուխը չբարձրացրեց սեղանից (Ն. տ.)։

Ցուցական դերանունները ժամանակի հարաբերության իմաստ են արտահայտում նաև այն ժամանակ, երբ առարկա են ցույց տալիս։ Այդ բացահայտ կերպով երևում է հատկապես այն դեպքում, երբ ցուցական դերանունով ցույց տրված առարկան

վերցվում, նկատի է առնվում անցյալում կամ ապագայում։ Օրինակ՝ եթե գիտենայի, որ դու այդ աստիճան կասկածամիտ ես, գի՞ժ եմ, ինչ է, որ արտասանեի այն խոսքերը (ՆԴ, Մահը)։ Վա՜յ, ուրեմն այն դո՞ւ էիր (ՆՋ, Հացավան)։ Ինչո՞ւ էլ այն չի, ինչո՞ւ էլ չի կարողանում կանգնել, փախչել (ՀՔ, Եղջերուի մահը)։ Էլ աղմկալից կյանքը աշխարհի, Եվ ոչ սերն անուշ յուր երազներով, Այն հրապույրը չունեն վաղեմի, Այն քաղցրությունը և այն մեղմ գորով (Հ. Հովհ.)։

Առաջին և երկրորդ շարքի դերանունները առարկայի անվան հետ գործածվելիս, նույնպես զերծ չեն ժամանակային հարաբերության իմաստից։ Բանն այն է, որ խոսողը խոսող կամ առաջին դեմք է միայն խոսելու պահին։ Նշանակում է, որ, երբ նա ցույց է տալիս իր մոտ գտնվող առարկա և այլն, նկատի է առնում առարկայի՝ հենց իր խոսելու ժամանակ մոտը գտնվելը։ Օրինակ՝ Այս գիրքը հետաքրքրական է նախադասության մեջ այս դերանունը ցույց է տալիս, որ այդ առարկան խոսողի մոտ է նրա խոսելու ժամանակ։ Ուրեմն՝ առարկան նրան մոտ է ոչ միայն տարածությամբ, այլև ժամանակով։ Այս երկու հատկանիշները առաջին շարքի դերանուններից անբաժան են և հանդես են գալիս միասնաբար։ Եթե այդ հատկանիշներից որևէ մեկը բացակայի, առաջին շարքի դերանուն չի գործածվի առարկա, հատկանիշ ցույց տալու համար։

Ինչ որ ասվեց առաջին շարքի դերանունների ժամանակի իմաստի մասին (երբ դրանք իր կամ հատկանիշ են ցույց տալիս), նույնը վերաբերում է նաև երկրորդ շարքի դերանուններին։ Ուստի՝ երկրորդ շարքի դերանունների ցույց տված առարկան և այլն սովորաբար նկատի են առնվում խոսելու ժամանակ, այն է՝ ներկա ժամանակում։

Երկրորդ շարքի դերանուններով ցույց տված առարկայի, հատկանիշի՝ տարածությամբ և ժամանակով խոսակցի մոտ գտնվելն է պատճառը, որ երբ առարկան գտնվում է խոսակցի մոտ, և եթե խոսողը ցանկանում է ցույց տալ այդ առարկան, նկատի ունենալով նրան անցյալում, գործածում է ոչ թե երկրորդ, այլ երրորդ շարքի դերանուն։

Համմտ. Այդ դո՞ւ ես։
Այն դո՞ւ էիր։

Այսպիսով՝ քննարկվող երեք շարքերի ցուցական դերանունների իմաստը հետևյալն է.

Առաջին շարքի *դերանունները ցույց են տալիս տարածությամբ խոսողին մոտ և ժամանակով խոսելու պահին մոտ կամ որպես այդպիսին մտածված առարկա, հատկանիշ։*

Երկրորդ շարքի *դերանունները ցույց են տալիս տարածությամբ խոսակցին մոտ և ժամանակով՝ նրա խոսակից լինելու պահին մոտ կամ որպես այդպիսին մտածված առարկա, հատկանիշ։*

Երրորդ շարքի *դերանունները ցույց են տալիս՝ ա) տարածությամբ առաջին և երկրորդ դեմքերից հեռու (անկախ ժամանակից) առարկա, հատկանիշ. բ) ժամանակով առաջին և երկրորդ դեմքերի, որպես այդպիսիների, ժամանակից (անկախ տարածական հարաբերությունից) հեռու առարկա, հատկանիշ։*

§ 281. Ժամանակի հարաբերության իմաստ չունեն տեղ (տարածություն) ցույց տվող դերանունները (այստեղ, այդտեղ, այնտեղ), *ինչպես և տարածական հարաբերության իմաստ չեն արտահայտում դերանունները այն դեպքում, երբ ժամանակի անվան վրա են դրվում* (այս գիշեր, այսպիսի տարի, այսքան ժամանակ, սույն ամսին և այլն)։ *Ժամանակային հարաբերության իմաստը որոշակիորեն երևում է նաև այն դեպքում, երբ ցուցական դերանունները գործածվում են երևույթների, իրողությունների, գործողությունների անունների հետ (հեղափոխություն, ժողով, նկար, քննարկում, ներկայացում և այլն)։ Մեծ մասամբ այս երկու հարաբերությունները հանդես են գալիս միասնաբար։*

§ 282. **Երկրորդ խմբի** *ցուցական դերանունները (նույն, միևնույն, նույնպես, նույնպիսի, նույնքան, նույնչափ, մյուս) ունեն տարածական ու ժամանակային հարաբերության որոշ յուրահատկություններ։* **Սույն**–*ը չունի իմաստով համապատասխան դերանուններ մյուս երկու շարքերում։ Նրա՝ ձևով համապատասխան դերանուններն են դույն, նույն։ Սրանցից առաջինը գոյություն ուներ գրաբարում և չկա ժամանակակից հայերենում, իսկ* **նույն** *դերանունը ծագումով և ձևով երրորդ շարքի դերանուն է, իսկ իմաստով՝ այժմ ոչ։* **Նույն** *դերանունը չունի առարկան՝ խոսողից և խոսակցից հեռու լինելը ցույց տալու իմաստ։ Նա ցույց է տալիս խոսքի մեջ նշված առարկա, անկախ այն բանից, թե այն ո՛ր դեմքին է մոտ և ո՛ր ժամանակում է նկատի առնված։ Այդ դերանունով կա-*

բելի է ցույց տալ և՛ առաջին ու երկրորդ դեմքին մոտ գտնվող, և՛ դրանցից հեռու առարկա։ Օրինակ՝ Սա *հետաքրքիր գիրք է.* նույն *գրքից ես էլ ունեմ։* Դա *հետաքրքիր գիրք է.* նույն *գրքից ես էլ ունեմ։* Այն *գիրքը քոնն է.* նույն *գրքից ես էլ ունեմ։*

Նույն *դերանունը, ինչպես և նրանով կազմված* նույնպես, նույնպիսի, նույնիսկ, նույնչափ, միևնույն *դերանունները սովորաբար գործածվում են խոսքի մեջ նշված առարկան, հատկանիշը ցույց տալու համար։ Օրինակ՝ Զինվորները պառավին ուժգին հրեցին կախաղանի տակ, բայց նա* նույնպիսի *ուժեղ թափով առաջ մղվեց և իր ցնցապարով և խոպոտ ձայնով ֆշշաց զինվորների վրա (ԴԴ, Խոշտանգվածի ավանդը)։ Արամը նրանից հայելի խնդրեց, նայեց ու զարմացավ... Նախրուհին նրա ուսի վրայով* նույնպես *նայեց հայելուն (ՍԱ, Լեռնցիներ)։*

Մյուս *դերանունը մատնացույց է անում առարկայի նկատմամբ մի այլ՝ տարածությամբ կամ ժամանակով հաջորդող առարկա. ինչպես՝* մյուս *շենքը, մյուս սենյակը, մյուս կայարանը, մյուս ժամը, մյուս օրը։*

ՓՈԽԱԴԱՐՁ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

§ 283. Փոխադարձ *դերանունները ցույց են տալիս իրենց վիճակով կամ գործողությամբ իրար հետ կապված առարկաներ։ Դրանք են՝* իրար, միմյանց, մեկմեկու (մեկմեկի). *Նրանք իրար բարեկամ են։ Մենք միմյանցից հեռու ենք։ Դուք սիրում եք մեկմեկու։*

§ 284. Այս դերանունների ցույց տված առարկաների հարաբերությունը մեծ մասամբ փոխադարձ է լինում։ Օրինակ՝ Պիտի մաշենք իրար՝ պարսիկը՝ մեզ, մենք՝ պարսիկին (ԴԴ, Վարդանանք, 2)։ Միմյանց էինք իրար վրա, ծաղրում էինք իրար, ջրգրացնում, նա ինձ «քնձռոտ վարժապետ» էր անվանում, ես նրան «Քալո խաբարդիանա» (ՆԴ, Տանտիրոջս աղջիկը)։

Սակայն քննարկվող դերանունների ցույց տված առարկաների կապը ոչ միշտ է փոխադարձ։ Համմտ. Իրար *հետևից անցնում են կենսուրախ վագոնները (ՆՉ, Հացավան)։ Թաղի կանայք* իրար *ձեն տալով վազվզում են (ՆԴ, Ինչպես բժշկեցին)։*

ՈՐՈՇՅԱԼ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

§ 285. Որոշյալ դերանունները ցույց են տալիս առարկաների ֆանակական ամբողջությունը կամ առանձին առարկայի ամբողջությունը: Այսպես՝ Նա կարդացել է իր գրադարանի բոլոր գրքերը: Նա մեկ օրում կարդացել է ամբողջ գիրքը: Բոլոր-ը ցույց է տալիս առարկաների քանակական ամբողջությունը, ամբողջ-ը՝ մեկ առարկայի ամբողջությունը: Այսպիսով, որոշյալ դերանուններին հատկանշական է ընդհանրական հարաբերության իմաստը:

§ 286. Որոշյալ դերանունները, ըստ իրենց ընդհանրական իմաստի դրսևորման, կարելի է բաժանել երեք խմբի՝

Ա) Դերանուններ, որոնք ցույց են տալիս առարկաների կամ նրանց քանակի ընդհանուր ամբողջությունը՝ չնշելով այդ ամբողջության մեջ մտնող առարկաներն առանձին-առանձին: Այդ դերանուններն են ամենը, բոլոր(ը): Օրինակ՝ Բոլոր կենդանիները դուրս էին թափվել. տղամարդ չկար մեջները: Բոլորը կանայք, աղջիկներ և երեխաներ էին: Ամենը խոսում էին միանգամից (ՆԴ):

Բ) Դերանուններ, որոնք առարկաների կամ նրանց քանակի ամբողջությունը ցույց են տալիս՝ շեշտելով ամբողջության մեջ մտնող առարկաներն առանձին-առանձին: Դրանք են՝ ամեն, յուրաքանչյուր, ամեն ոք, ամեն ինչ, ամեն մի (ամեն մեկը), յուրաքանչյուր ոք: Այսպես՝ «Յուրաքանչյուր մարդ պարտավոր է լինել ճշտապահ և պարտաճանաչ» ասելով, այդ պարտականությունը դրվում է բոլոր մարդկանց վրա. այդ նշանակում է. «Բոլոր մարդիկ պարտավոր են լինել ճշտապահ և պարտաճանաչ»: Բայց եթե երկրորդ նախադասության մեջ չեն շեշտվում մարդիկ առանձին-առանձին, և բոլոր դերանունը վերաբերում է մարդկանց ընդհանրապես, ապա առաջին նախադասության մեջ բոլոր մարդկանց մասին խոսում են՝ նշելով նրանց առանձին-առանձին, նրանցից յուրաքանչյուրին: Ուրեմն՝ այս դերանունները առարկաների և նրանց քանակական ամբողջությունը ցույց են տալիս առանձինների միջոցով: Այդ պատճառով էլ, ի տարբերություն նախորդների, սրանց իմաստը եզակի է: Երբ այդ դերանունները իրրև ենթակա են գործածվում, նախադասության ստորոգյալը դրվում է եզակի թվով: Օրինակ՝ Յուրաքանչյուր (յուրաքանչյուր ոք) պարտավոր-

վեց *օգնել իր ետ մնացող ընկերներին։* Ամեն ոք պետք է ունենա *պատասխանատվության զգացում։ Այժմ* ամեն ինչ *լավ* է գնում։ Ամեն ինչը կանոնավոր է։ Ամեն մեկը *իր հետ մի գիրք էր բերել։*

Այդ դերանունների իբրև որոշիչների հետ գործածվող գոյականները նույնպես դրվում են եզակի թվով։ Օրինակ՝ յուրաքանչյուր մարդ, ամեն մարդ, ամեն մի մարդ։

Որոշյալ դերանուններից մի քանիսն ունեն ժխտական ձևեր՝ ամեն ինչ—ոչինչ, ամեն ոք—ոչ ոք, ամեն մի—ոչ մի (ամեն մեկը—ոչ մեկը)։

Ժխտական բնույթ ունեցող դերանունների իմաստը նույնպես տարածվում է առհասարակ բոլոր առարկաների կամ խոսքի մեջ նշված բոլոր առարկաների վրա. մի բան, որ հատուկ է որոշյալ դերանուններին։ Դա երևում է հետևյալ զուգահեռ օրինակների համեմատությունից։

Ամեն մի աշակերտ մի ծաղկեփունջ էր բերել։ Ոչ մի աշակերտ ծաղկեփունջ չէր բերել։

Ամեն մեկը *իր գիրքն էր կարդում։* Ոչ մեկը *իր գիրքը չէր կարդում։*

Ամեն ոք *հետևում էր կարգապահությանը։* Ոչ ոք *չէր հետևում կարգապահությանը։*

Ամեն ինչ *իր տեղում էր։* Ոչինչ *իր տեղում չէր։*

Ընդգծված հաստատական որոշյալ դերանունների և դրանց համապատասխան ժխտական որոշյալ դերանունների ցույց տված հարաբերությանն միչև տարբերություն չկա. դրանք բոլորն ունեն հանրական իմաստ։ Տարբերությունն այն է, որ միևնույն իմաստը դերանունների մի մասի մեջ հաստատական ձևով է արտահայտված, իսկ ժխտական ձևերի մեջ՝ ժխտական ձևով, մի դեպքում հաստատվում է, մյուս դեպքում՝ ժխտվում։ Հիշենք, որ լեզվի մեջ ժխտական բառերն ու բառաձևերը համապատասխան հաստատական բառերի ու բառաձևերի հետ միասին մտնում են բառերի միևնույն տեսակի մեջ (համմտ. գրեցի—չգրեցի, կգամ—չեմ գա, կարդում եմ—չեմ կարդում, վերջացած—չվերջացած և այլն)։

Գ) Դերանուններ, որոնք ցույց են տալիս առանձին մի առարկայի (հավաքական կամ ոչ հավաքական) ամբողջությունը։ Այդ դերանուններն են՝ ողջ, ամբողջ, հանյն, ամենայն։ *Օրինակ՝* ամբողջ *քաղաքը, հանյն մարդկությունը։* Ողջ *ջոկատը հետևեց նրան (ԴԴ, Վարդանանք, 2)։*

Ամենայն բառը փոխառություն է գրաբարից և երբեմն գործածվում է հռետորական, վերամբարձ ոճ ստեղծելու համար։ Օրինակ՝ Ձի հողն է ծնում այս արևի տակ Ամենայն բարիք և գեղեցկություն (Ն. Զարյան)։

Ամենայն-ը այս դեպքում նշանակում է «ամեն» և իմաստով համապատասխանում է երկրորդ խմբի որոշյալ դերանուններին։ Բայց ամենայն բառը ձեռք է բերել մի այլ կիրառություն ևս, որը բավական տարածված և սովորական է։ Այդ նրա գործածությունն է որոշ բառերի գործիական հոլովի հետ. ամենայն մանրամասնությամբ, ամենայն պատասխանատվությամբ, ամենայն ճշտությամբ, ամենայն սիրով, ամենայն լրջությամբ և այլն։ Այս կիրառություններում նրա իմաստը համապատասխանում է որոշյալ դերանունների երրորդ խմբին։

Ծանոթ.—Ողջ դերանունը անկախ գործածվելիս երբեմն նշանակում է «բոլորը», այսինքն՝ առարկաների ամբողջությունն է ցույց տալիս։ Օրինակ՝

Աստված, չեմ խնդրում քեզնից դափնիներ,
Ճառեր, հոբելյան, ուղերձ, հեռագիր,
Փառավոր թաղում, մահից հետո սեր—
Այդ ողջն ինձ կտա հայրենի երկիր (Ա.Ծ)։

Ողջ դերանունը գոյականաբար հազվադեպ է գործածվում։ Արդեն ասվեց, որ որոշյալ դերանունները կարող են ցույց տալ և՛ հատկանիշ, և՛ առարկա։

Բոլոր, յուրաքանչյուր, ողջ, ամբողջ, ամեն, ամեն մի դերանունները գործածվում են գոյականների հետ և ցույց են տալիս հատկանիշ։ Հատկանիշ ասելով այստեղ պետք է հասկանալ ոչ թե որակ, այլ առարկաների կամ առարկայի ամբողջություն։ Այսպես՝ Ամբողջ աշխարհը հևիհև սպասում է այդ վիթխարի գոտեմարտի ելքին (Իս., Հաղթանակը պրոգրեսի կողմն է)։ Բոլոր ոտնահարված ժողովուրդները կյանք կառնեն նորից (Իս., Ցաշիզմը պիտի խորտակվի)։ Իշխում էր ողջ քաղաքի և հատկապես Մարինյան գետի վրա (Հ. Հրահան, Բալկանների լանջերում)։ Սրբությամբ կատարում էր յուրաքանչյուր կետ (ՆՋ, Հացավան)։ Ամեն օր տեսնելու եմ նրան (ՆԴ, Տանտիրոջս աղջիկը)։

Այդ դերանունները առարկա են ցույց են տալիս՝ որոշիչ հոդ ընդունելով՝ բոլորը, յուրաքանչյուրը, ամբողջը, ողջը։ Ամեն մի

դերանվան անկախ գործածության ժամանակ երկրորդ բաղադրիչը դառնում է մեկը՝ ամեն մեկը:

Համայն դերանունը հոդ չի ստանում և անկախ չի գործածվում. այն գործածվում է գոյականի հետ:

Առ իմ երգն ու իմ սիրտը նվեր
Հանուն քո փառքի՝ հողում համայն (Գ.):

Ամեն մը, յուրաքանչյուր of, ամեն of, ամեն ինչ (ը), *դերանունները գործածվում են միայն անկախ:*

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

§ 287. Անորոշ դերանունները բնականաբար հակադրվում են դերանվան մյուս բոլոր տեսակներին: Բայց նրանց յուրահատկությունը պարզվում է ամենից առաջ որոշյալ դերանունների հետ հակադրության մեջ վերցնելիս: Եթե որոշյալ դերանունները ունեն հանրական իմաստ, ապա անորոշները, ընդհակառակն, մասնական իմաստ ունեն, այսինքն ցույց են տալիս, ակնարկում են առարկաներից մեկը կամ մի քանիսը:

Բայց առարկաներից մեկը կամ մի քանիսը կարելի է ցույց տալ նաև այլ դերանուններով կամ այլ բառերով: Օրինակ՝ Իմ գրքերից սա քեզ կնվիրեմ: Այս նախադասության մեջ սա *դերանունը ցույց է տալիս գրքերից մեկը, ուրեմն և ամբողջի նկատմամբ մասնական իմաստ ունի: Սակայն* սա *դերանունը այդ մեկ առարկան ցույց է տալիս որոշակի հարաբերությամբ իբրև խոսողի մոտ գտնվող: Մինչդեռ անորոշ դերանունների մասնական իմաստը որևէ այլ հարաբերությամբ որոշյալ չի դառնում: Օրինակ՝ Իմ գրքերից* **որևէ** *մեկը (կամ մի քանիսը) քեզ կնվիրեմ: Այնպես որ, եթե* սա, *այս և նման դերանունների իմաստի մեջ մասնականություն կա, ապա դա սոսկ հետևանք է նրանց բնորոշ հատկանիշի՝ տարածական, ժամանակային հարաբերության, մինչդեռ անորոշ դերանունների համար մասնական հարաբերությունը միակն է, բնորոշը, որը որոշյալ չի դառնում որևէ եղանակով:*

Այսպիսով, անորոշ դերանունները, դրվելով գոյականի վրա կամ գործածվելով անկախ, ակնարկում են առարկաներից մեկը կամ մի քանիսը, առանց որոշակի հարաբերության:

Այլ կերպ՝ ածորոշ դերանուններ առարկա, հատկանիշ են ցույց տալիս մասնական հարաբերությամբ:

Անորոշ դերանուններն են՝ այլ, այսինչ, այնինչ, որոշ, ուրիշ, որևէ, որևիցե, երբևէ, երբևիցե, ոմն, մի (մեկը), ինչ-որ, ինչ-ինչ, մի ֆանի (մի ֆանիսը), մի շարֆ, մի երկու (մի երկուսը):

§ 288. Անորոշ դերանունները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝ ա) մեկից ավելի առարկա ակնարկող, այսինքն՝ հոգնակի իմաստ ունեցող դերանուններ: Ինչպես՝ մի ֆանի (մի ֆանիսը), մի շարֆ, մի երկու (մի երկուսը), ինչ-ինչ: *Օրինակ՝* մի ֆանի ընկերներ, մի շարֆ գրքեր, ինչ-ինչ պատճառներ: *Թեև մի երկու դերանվան հետ դործածվում է եզակի թվով գոյական, նրա հոգնակի իմաստը ակնհայտ է* (մի երկու օր): *բ) Մեկ առարկա ակնարկող, այսինքն՝ եզակի իմաստ ունեցող դերանուններ. ինչպես՝* մի(մեկը), ոմն, որևէ, որևիցե, այսինչ, այնինչ: *Ընկերներիցս* մեկը, ոմն Պետրոսյան, որևէ օր, այսինչ մարդը *և այլն:*

Այս խմբի մեջ պետք է դասել նաև այլ, ուրիշ *դերանունները, որոնք սովորաբար եզակի իմաստ ունեն, ինչպես՝* Այլ գիրք էի խնդրել: Ուրիշ օր կգաս: *Սակայն այս դերանունները կարող են գործածվել նաև հոգնակի գոյականների հետ. ինչպես՝* այլ հարցեր, ուրիշ գրքեր: *Բայց որ սրանք ավելի շուտ այլ խմբի մեջ են մտնում, երևում է հատկապես նրանց գոյականաբար գործածությունից: Ինչպես՝ ես խնդրել էի* ուրիշը: *Այստեղ բացառված է հոգնակի իմաստը: Այդպիսի իմաստ արտահայտելու համար այն կգործածվի հոգնակի թվով՝* ուրիշները:

Յուրահատուկ է այս տեսակետից որոշ *դերանունը, որը ըստ կիրառության ունի և՛ եզակի իմաստ (որոշ մաս, մի որոշ գումար), և՛ հոգնակի (որոշ ընկերներ, որոշ գրքեր, որոշ հարցեր):*

Երբևէ, երբևիցե *դերանունները ցույց են տալիս գործողության հատկանիշ՝ ժամանակ, և դուրս են մնում այս շարքերից:*

ՀԱՐՑԱԿԱՆ-ՀԱՐԱԲԵՐԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

§ 289. Հարցական-հարաբերական դերանուններն են՝ ով, ինչ, որ, ֆանի, որֆան, որչափ, ինչչափ, ինչֆան, որպիսի, ինչպիսի, ֆանիերորդ, որերորդ, որտեղ, ուր, երբ, ինչպես: *Այս միևնույն դերանունները իրենց երկու շարահյուսական կիրառությունների հիման վրա համարվել են երկու տարբեր տեսակի դերանուն-*

ներ՝ հարցական և հարաբերական։ Բերենք միայն մեկ դերանվան օրինակ՝ Ո՞վ էր հարցնում։ Եկել էր նա, ով հարցնում էր։

Միևնույն ով դերանունը հարցական նախադասության մեջ իբրև հարցական բառ գործածվելիս համարվում է հարցական դերանուն, իսկ երբ գործածվում է բարդ ստորադասական նախադասության մեջ, իբրև հարաբերական, համարվում է հարաբերական դերանուն։

Նախ նշենք, որ չի կարող արդարացվել այնպիսի մոտեցումը, երբ խոսքի մասի տեսակների որոշումը, որը ձևաբանական հարց է, կատարվում է սոսկ շարահյուսական հիմունքով։

Այնուհետև, անտեսվում են այդ դերանունների այլ կիրառությունները, որոնք նույնպես սովորական են, տարածված։ Այսպես՝ Ես չգիտեմ, թե ով էր հարցնում։ Ո՞վ էր հարցնում։

Առաջին նախադասության մեջ ստորադաս նախադասությունը դերազատի հետ կապվում է թե շաղկապով, հետևապես և ով–ը հարաբերական չէ։ Երկրորդ օրինակը բացականչական նախադասություն է և ով–ը բացականչում է արտահայտում։ Բերենք այդպիսի գործածությունների բնագրային օրինակներ։

1) Նա այնտեղ աշխատելու է իբրև... էլուշը չի հիշում, թե իբրև ինչ (ՆՋ, Հացավան)։ Մի՞թե չէիր նկատում, թե ինչպես արագ էր կարում, թե ինչպես ճարպկորեն էր գործածում բիզն ու ասեղը (ՀՔ, Բարեկամություն)։ Նրան օտար այս կովի մեջ մեկ չէ՞ արդյոք, թե ով ում, թե ինչ գույնի դրոշակներ կփողփողան փողոցում (ՆՋ)։ Խորհուրդ են անում, թե ինչպես փրկեն (ՆՋ)։

2) Քանի՜–քանի՜ անգամ եղել են վտանգավոր դեպքեր (ՍՋ, Հեղկոմի նախագահը)։ Ի՜նչ հնարքներ, ի՜նչ վատ բաներ է սովորել (ՍՋ, Վարդաձորի կոմունը)։ Դատարկ բաներ են, ի՜նչ նախազգացում, ի՜նչ դժբախտություն (Շիրվ., Արմենուհի)։ Ի՜նչ հազվագյուտ իր է, ի՜նչ պայծառ գույն ունի և ի՜նչ աննման գործ է (ն. տ.)։ Դեռ ինչի՜ն կյանք կար առջևում, դեռ ինչի՜ն պետք է ապրել՝ տեսնելու մարդկանց խառնվածքների տարբեր երանգները (ՀՔ, Մեծ տան զավակները)։ Ինչպե՜ս թե հաց չեն ուզում ուտել (ՍՋ, 3)։

Քննարկվող դերանունները հարցականի ու հարաբերականի դեր ունենալու հիման վրա դերանվան երկու տարբեր տեսակներ համարելու դեպքում հիշյալ երկու կարգի տարածված կիրառությունները դուրս են մնում դերանվան տեսակներից։

Այսպիսով, քննարկվող դերանուններն ունեն ոչ թե երկու, այլ չորս հիմնական տիպի կիրառություններ, որոնք բոլորն էլ տարածված են ու հաճախակի գործածական։ Այստեղից պարզ է, որ հարցականն ու հարաբերականը ոչ թե դերանվան տարբեր տեսակներ պետք է համարել, այլ միևնույն տեսակի դերանվան մի քանի հիմնական կիրառություններից երկուսը։

Իսկ ո՞րն է հարցական ու հարաբերական կոչված դերանունների էական հատկանիշը, առանձնահատկությունը, որով նրանք տարբերվում են դերանվան մյուս տեսակներից, կամ ինչպե՞ս, ի՞նչ հարաբերությամբ են նրանք ցույց տալիս առարկա, հատկանիշ։ Այս տեսակետից այդ դերանունները համեմատաբար մոտ են անորոշ դերանուններին, ունեն անորոշ իմաստ։ Սակայն նրանք չեն նույնանում անորոշ դերանունների հետ և զգալի չափով տարբերվում են նրանցից։ Տարբերությունն այն է, որ անորոշ դերանունները իրենց մասնական հարաբերության շնորհիվ գոնե մոտավոր գաղափար են արտահայտում հատկապես քանակի վերաբերյալ։ Այսպես՝ մի քանի, որոշ, մի շարք անորոշ դերանունները, թեև որոշակի քանակ կամ թիվ չեն արտահայտում, բայց քանակ են ցույց տալիս մոտավոր ճշտությամբ. դրանցից հասկացվում է, որ խոսվում է ոչ մեծ քանակի մասին։ Իսկ դրանց համապատասխան արհան, ինչքան, ինչչափ դերանունները քանակի գաղափար են արտահայտում բոլորովին անորոշ կերպով, առանց որևէ չափով մասնավորելու։ Պատահական չէ, որ հաճախ հարցական դերանուններով բան հարցնողը բավարարվում է անորոշ դերանունով արտահայտված պատասխանով։ Օրինակ՝

—Քանի՞ ուսանող ակադեմիական պարտք ունի։

—Մի քանի, մի երկու։

Այս օրինակում մի քանի, մի երկու անորոշ դերանուններով արտահայտված պատասխանը կարող է բավարար պատասխան լինել հարցնողի համար այն պատճառով, որ, թեև դրանք որոշակի քանակ չեն արտահայտում, բայց համենայն դեպս այդ բառերից որոշակի հասկացվում է, որ պարտք ունեցող ուսանողների քանակը քիչ է։

Կատարենք մի այլ համեմատություն։ Ինչ դերանվան իմաստն այն է, որ սովորաբար ցույց է տալիս առարկա առանց որևէ կոնկրետության և որոշակիության, այսինքն բոլորովին անորոշ ձևով։ Մինչդեռ, օրինակ, թեև այսինչ, այնինչ անորոշ դերանուն-

ները որոշակիորեն որևէ առարկա չեն ցույց տալիս, բայց գոնե հասկացվում է, որ դրանք վերաբերում են մեկ առարկայի. այսինչ մարդը, այնինչը եկավ և այլն։

Այս մի երկու համեմատություններից իսկ երևում է, որ քննարկվող դերանունների տարբերությունը մյուս բոլոր, այդ թվում նաև անորոշ դերանուններից այն է, որ նրանք առարկա կամ հատկանիշ են ցույց տալիս միանգամայն անորոշ ձևով, առանց իրենց իմաստը որևէ չափով որոշակի դարձնող հարաբերության։ Նկատի ունենալով այդ ամենը, այդ դերանունները կարելի էր անվանել բացարձակ անորոշ դերանուններ, համենայն դեպս այս անվանումն է առավել ճշգրիտ արտահայտում նրանց էությունը։ Իսկ ճարցական-հարաբերական անվանումը կարելի է պահպանել միայն պայմանականորեն՝ իբրև ավանդական անվանում։ Այսպիսով՝ ճարցական-հարաբերական (բացարձակ անորոշ) դերանուններ ցույց են տալիս առարկա և հատկանիշ բացարձակ անորոշ կերպով։ Ի դեպ քննարկվող դերանունների յուրահատուկ կիրառությունները բացատրվում ու պատճառաբանվում են նրանց էությունը հանդիսացող բացարձակ անորոշ իմաստով, որն ընկած է նրանց բոլոր կիրառությունների հիմքում։

ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 290. Դերանունները ձևաբանական հատկանիշների տեսակետից մեկ ընդհանուր բնույթ չունեն, ի տարբերություն, օրինակ, գոյականների, որոնք հոլովվում են, թիվ ունեն, ի տարբերություն, ասենք, մակբայների, որոնք չեն թեքվում և այլն։

Դերանունների այս յուրահատկության պատճառը հիմնականում նրանց իմաստային բազմիմաստությունն է, այսինքն այն, որ նրանց մի մասը առարկա է ցույց տալիս, մյուս մասը՝ առարկայի հատկանիշ, երրորդ մասը՝ գործողության հատկանիշ և այլն։ Եվ քանի որ բառերի ձևաբանական առանձնահատկությունների գործում նրանց իմաստը ընդհանրապես կարևոր դեր է կատարում, ուստի՝ իմաստային բազմազանությունը տվյալ դեպքում պայմանավորում է ձևաբանական հատկանիշների անմիօրինակությունը։

Սակայն սրանով չի սպառվում դերանունների ձևաբանական անմիօրինակությունը։ Ինչպես ասվել է, հարաբերակից խոսքի

մասերի և համապատասխան դերանունների միջև չկա քերականական լիակատար ընդհանրություն։ Այսպես, սպասելի էր, որ հոլովվեին առարկա ցույց տվող, ինչպես և առարկայի հատկանիշ ցույց տվող բոլոր դերանունները (վերջիններս գոյականաբար գործածվելիս)։ Սակայն ոչ միայն առարկայի հատկանիշ ցույց տվող դերանունների մի մասը գոյականաբար չի գործածվում ու չի հոլովվում, այլև չեն հոլովվում առարկա ցույց տվող մի շարք դերանուններ։ Ոչ քիչ յուրահատկություններ կարելի է նշել նաև դերանունների թվի կարգի վերաբերյալ թե՛ իմաստային և թե՛ ձևային տեսակետից։

ՀՈԼՈՎՈՒՄԸ

§ 291. Ժամանակակից հայերենի դերանունները հոլովման տեսակետից բաժանվում են երեք խմբի՝

1. Դերանվանական հոլովմամբ հոլովվող դերանուններ.

2. Անվանական հոլովմամբ հոլովվող դերանուններ.

3. Չհոլովվող դերանուններ։

§ 292. Հոլովիչ չունենալը, հոլովիչով չհոլովվելը դերանվանական հոլովման ընդհանուր, ամենահատկանշական առանձնահատկությունն է, ի տարբերություն անվանական հոլովման։ Այս առանձնահատկությունը, սակայն, դրսևորվում է ոչ բոլոր հոլովներում, այլ սովորաբար սեռականում ու տրականում։

Դերանվանական հոլովումով հոլովվում են անձնական դերանուններից ես, դու, նա, ինքը *եզակիները, մենք, դուք հոգնակիները, սա, դա, նա ցուցական դերանունները,* իրար *փոխադարձ դերանունը,* ով *հարցական—հարաբերական դերանունը։*

§ 293. Անձնական դերանունների առաջին ու երկրորդ դեմքերի հոլովումը որոշ չափով տարբերվում է երրորդ դեմքի դերանվան հոլովումից։ Ես, դու *դերանունների սեռականն ու տրականը կազմվում են ուղղականից տարբեր արմատով՝* ես, իմ, ինձ. դու, ձեզ: *Նույն երկու դեմքերի բացառական, գործիական և ներգոյական հոլովները կազմվում են տրականի ձևից՝ անվանական հոլովման* ից, ով, ում *վերջավորություններով։ Տրականի ձևի և այդ վերջավորությունների միջև ընկած է* ան *մասնիկը, կամ դրա կրճատ ձևը՝* ն:

Անձնական դերանվան 3-րդ դեմքի նա *դերանունը մի քիչ այլ*

կերպ է հոլովվում: Սեռականի մեջ (ևրա) ունկա է ուղղականի արմատական ե-ն: Տրականը կազմվում է սեռականի ձևից ե-ի հավելումով (ևրաե): Բացառական, գործիական և ներգոյական հոլովները կազմվում են տրականի ձևից (ևրաե) անվանական ից, ով, ում վերջավորություններով:

Ինքը դերանունը հոլովվում է այսպես. ինքը, իր կամ յուր, իրեն[22]: Մյուս ձևերը կազմվում են նա դերանվան համապատասխան հոլովների կազմության սկզբունքով. այսինքն՝ տրականի ձևի վրա ավելացվում են ից, ով, ում վերջավորությունները:

Այսպիսով, ի տարբերություն անվանական հոլովման, որը կազմվում է վերջավորությունների կցումով բառի հիմքին, կամ ներքին թեքման միջոցով՝ անձնական դերանունների սեռական և տրական հոլովները կազմվում են այլ կերպ: Առաջին և երկրորդ դեմքի անձնական դերանունների սեռականը (իմ, ֆո, մեր, ձեր) չի կազմվում ուղղականից (ես, դու, մենք, դուք): Ուղղականի ձևը կամ ուղիղ ձևը այլևս ոչ մի հոլովում հանդես չի գալիս:

Տրականը ևս նոր ձև է (ինձ, ֆեզ, մեզ, ձեզ). այն չի կազմվում նախորդ հոլովներից որևէ վերջավորության միջոցով: Քանի որ այս ձևերից յուրաքանչյուրը մյուսից բոլորովին տարբեր է, հասկանալի է, որ այստեղ հիմքի և վերջավորության մասին խոսք լինել չի կարող:

ուղղ.	ես	մենք	դու	դուք
սեռ.	իմ	մեր	քո	ձեր
տրակ.	ինձ	մեզ	քեզ	ձեզ

Տեսանք, որ նա և ինքը դերանունների տրականի ու սեռականի հիմքը նույնն է, ի տարբերություն առաջին և երկրորդ դեմքերի: Նա դերանվան տրականը կազմվում է սեռականից ն-ի հավելումով, իսկ ինքը դերանվան տրականը (իրեն) կազմվում է սեռականի վրա են-ի հավելումով՝ իրեն:

22 Գրաբարյան դերանունների համակարգում տարբեր դերանուններ են համարվում ինքն և իր (իր), որոնք հոլովվում էին տարբեր ձևերով: Այսպես՝ իր՝ սեռ., տրակ. իր, բաց. յիւրմէ, գործ. իւրեաւ, իւրև, իւրեամբ. ուղղ. և հայց. չունի. ինքն՝ ուղղ. ինքն, սեռ., տրակ. ինքեան, հայց. զինքն, բաց. յինքենէ, գործ. ինքեամբ: Հետագայում ինքն դերանվան թեք հոլովաձևերը անգործածական են դարձել, դուրս են ընկել կենդանի լեզվից, և ինքն ուղիղ ձևը գիտակցվել ու գիտակցվում է որպես իր դերանվան ուղղական:

Մենք տեսանք, որ անձնական դերանունների բացառական, գործիական և ներգոյական հոլովները կազմվում են տրականից անվանական հոլովման վերջավորություններով։ Տեսանք նաև, որ 1-ին և 2-րդ դեմքերի եզակի և հոգնակի ձևերի մեջ այդ հիմքի ու վերջավորության միջև գոյություն ունի ան կամ ն մասնիկը։

Պետք է ենթադրել, որ այդ ան (ն) մասնիկը անձնական դերանունների 1-ին և 2-րդ դեմքերի հոլովման մեջ է մտել անձնական դերանվան 3-րդ դեմքի հոլովման (որ նույնն է ցուցական նա դերանվան հոլովման հետ) և ցուցական սա, դա դերանունների համապատասխան հոլովաձևերի նմանակությամբ։ Սա, դա, նա դերանունների բացառական, գործիական, ներգոյական հոլովները կազմվում են՝ տրականի վրա ից, ով, ում վերջավորությունների ավելացումով.

տրակ.	*սրան*	*դրան*	*նրան*
բաց.	*սրան-ից*	*դրան-ից*	*նրան-ից*
գործ.	*սրան-ով*	*դրան-ով*	*նրան-ով*
ներգ.	*սրան-ում*	*դրան-ում*	*նրան-ում*

Սրանց նմանությամբ էլ 1-ին և 2-րդ դեմքի դերանունները ունեն ան մասնիկ, որի կրճատ ձևն է –ն–։ Այս նմանակության մեջ տարօրինակ ոչինչ չկա։ Հայտնի է, որ լեզվի մեջ նմանակության ուժը բավական մեծ է, և լեզուն հակում ունի հնարավորության սահմաններում, անհրաժեշտ պայմանների առկայության դեպքում ստեղծել միօրինակություններ։ Անձնական դերանունների 1-ին և 2-րդ դեմքերը հաճախակի գործածվում են 3-րդ դեմքի, ինչպես և ցուցական հիշյալ դերանունների հետ, ուստի բնական է, որ դրանց միջև ստեղծվեր ձևային ընդհանրություն։ Դրան անկասկած նպաստել է այն հանգամանքը, որ սա, դա, նա դերանունների հոգնակիների բոլոր հոլովաձևերն իրենց մեջ ունեն ան հնչյունախումբը. սրանք, սրանց, սրանցից և այլն, դրանք, դրանց, դրանցից և այլն, նրանք, նրանց, նրանցից և այլն։

Դերանվանական հոլովման պատկանող անձնական դերանունների հոլովման տախտակը.

	եզակի			
ուղղ.	*ես*	*դու*	*նա*	*ինքը*
սեռ.	*իմ*	*քո*	*նրա*	*իր, յուր*

տրակ.	ինձ	քեզ	նրան	իրեն
բաց.	ինձնից (ինձանից)	քեզնից (քեզանից)	նրանից	իրենից
գործ.	ինձնով (ինձանով)	քեզնով (քեզանով)	նրանով	իրենով
ներգ.	ինձնում (ինձանում)	քեզնում (քեզանում)	նրանում	իրենում

Հոգնակի

ուղղ.	մենք	դուք
սեռ.	մեր	ձեր
տրակ.	մեզ	ձեզ
բաց.	մեզնից (մեզանից)	ձեզնից (ձեզանից)
գործ.	մեզնով (մեզանով)	ձեզնով (ձեզանով)
ներգ.	մեզնում (մեզանում)	ձեզնում (ձեզանում)

§ 294. Յուցական դերանուններից դերանվանական հոլովումով հոլովվում են սա, դա, նա: Սրանք հոլովվում են անձնական նա դերանվան հոլովման նման:

Ահա սա, դա, նա ցուցական դերանունների հոլովման տախտակը:

ուղղ.	սա	դա	նա
սեռ.	սրա	դրա	նրա
տրակ.	սրան	դրան	նրան
բաց.	սրանից	դրանից	նրանից
գործ.	սրանով	դրանով	նրանով
ներգ.	սրանում	դրանում	նրանում

Այս, այդ, այն դերանունները չեն հոլովվում. անհրաժեշտության դեպքում գործածվում են սա, դա, նա դերանունների համապատասխան հոլովաձևերը:

§ 295. Փոխադարձ դերանուններից դերանվանական հոլովման պատկանում է իրար դերանունը: Դերանվանական հոլովման հատկանիշը երևան է գալիս նրա միայն տրական հոլովում, որը չունի հոլովական վերջավորություն: Բացառական, գործիական հո-

լովներն ունեն անվանական հոլովման ից, ով վերջավորություններ։ Կարևոր է նշել, որ այս դերանունը (ինչպես մյուս փոխադարձ դերանունները) չունի ուղղական հոլով։

§ 296. Դերանվանական հոլովումով է հոլովվում նաև հարցական-հարաբերական ով դերանունը.

ուղղ.	*ով*
տրակ.	*ում*
բաց.	*ումից*
գործ.	*ումով*

Ով դերանվան բացառականը, գործիականը կազմվում են տրականից ից, ով վերջավորությունների ավելացումով։ Ներգոյականը բոլորովին չի գործածվում։

§ 297. Անվանական հոլովումով հոլովվում է դերանունների մեծ մասը։ Սրանց մի զգալի մասը հոլովվում է ի հոլովումով, մի քանիսը՝ ց հոլովումով, մեկը՝ ու հոլովումով։

Ի հոլովման պատկանում են՝

1. Անկախ գործածվող հետևյալ դերանունները.

Ցուցականներից՝ այստեղ, այդտեղ, այնտեղ.
Փոխադարձներից՝ մեկմեկի.
Հարցական-հարաբերականներից՝ ինչ, որտեղ.
Որոշյալներից՝ ամենքը, ամեն ինչ, ոչ ոք, ոչինչ։

2. Գոյականների հետ գործածվող, հատկանիշ ցույց տվող հետևյալ դերանունները գոյականաբար գործածվելիս.

Ցուցականներից՝ այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, այսքան, այդքան, այնքան, նույնքան, այսչափ, այդչափ, այնչափ, նույնչափ, սույն, նույն, միևնույն, մյուս.

Հարցական-հարաբերականներից՝ որ, քանի, որքան, որչափ, ինչչափ, որպիսի, ինչպիսի, քանիերորդ, որերորդ.

Որոշյալներից՝ ամեն, բոլոր, յուրաքանչյուր, ողջ, ամբողջ, ամեն մի, ոչ մի (ոչ մեկը).

Անորոշներից՝ մի (մեկը), այսինչ, այնինչ, մի քանի (մի քանիսը), ուրիշ։

Դերանուններից ի հոլովումը բնականաբար նման է գոյականների նույնանուն հոլովմանը։

Այսպես.

ուղղ.	*ամենքը*	*ինչ(ը)*	*այստեղ*
տրակ.	*ամենքի(ն)*	*ինչի(ն)*	*այստեղի(ն)*
բաց.	*ամենքից*	*ինչից*	*այստեղից*
գործ.	*ամենքով*	*ինչով*	*այստեղով*
ներգ.	—	*ինչում*	—

Ինչպես ամենքը դերանունը, այնպես էլ անձ ցույց տվող շատ դերանուններ չունեն ներգոյական հոլով, որի փոխարեն գործածվում է մեջ կապով կապակցություն։

Ներգոյական հոլով չունեն նաև այստեղ, այդտեղ, այնտեղ *դերանունները։ Այդ բացատրվում է նրանց իմաստով, այսինքն՝ այն բանով, որ նրանք առանց ներգոյական հոլովի էլ ցույց են տալիս այն տեղը, որտեղ կատարվում է գործողությունը կամ գտնվում է առարկան։*

Վերևում ասվեց, որ ի հոլովումով հոլովվում է նաև հատկանիշ ցույց տվող դերանունների մեծ մասը։ Այսպես՝

ուղղ.	*յուրաքանչյուրը*	*այսքանը*	*մյուսը*
տրակ.	*յուրաքանչյուրի(ն)*	*այսքանի(ն*	*մյուսին*
բաց.	*յուրաքանչյուրից*	*այսքանից*	*մյուսից*
գործ.	*յուրաքանչյուրով*	*այսքանով*	*մյուսով*
ներգ.	*յուրաքանչյուրում*	*այսքանում*	*մյուսում*

Այդ դերանունների ներգոյականը գործածական է հատկապես այն դեպքում, երբ իր է ցույց տալիս, իսկ երբ անձ է ցույց տալիս, սովորաբար չի գործածվում։ Այսպես՝ կարելի է ասել. Այս տուփերից յուրաքանչյուրում *(կամ՝ յուրաքանչյուրի մեջ) կա տասը մատիտ։ Բայց չի կարելի ասել. Այս ուսանողներից* յուրաքանչյուրում *(այլ՝ յուրաքանչյուրի մեջ) զգում եմ ջերմ սեր դեպի ուսումը։*

Զայնավորով վերջացող դերանունների մեծ մասը հոլովվելիս որոշ փոփոխության է ենթարկվում։ Այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի *դերանունները հոլովման ժամանակ փոխանուն սեռականի հոլովման պես՝ հոդի կամ հոլովական վերջավորության և հիմքի միջև ստանում են ն. ինչպես՝* այսպիսինը, այսպիսինի, այսպիսինից *և այլն։* Քանի, մի քանի *դերանունները գոյականաբար*

գործածվելիս և հոլովվելիս վերականգնում են իրենց ունեցած գրաբարյան հոգնակի հայցականի ս-ն. ֆանիսը, ֆանիսի, ֆանիսին, ֆանիսից *և այլն։ Մի անորոշ դերանունը և դրանով բաղադրված (մի-ն որպես երկրորդ բաղադրիչ) դերանունները հոլովվելու ժամանակ մի-ի փոխարեն գործածվում է մեկը.* ամեն մեկը, ամեն մեկի, ամեն մեկից *և այլն,* ոչ մեկը, ոչ մեկի, ոչ մեկից *և այլն։*

§ 298. Յ հոլովման պատկանում են հետևյալ դերանունները. սրանիմ, դրանիմ, նրանիմ, իրենիմ, ոմանիմ, որոնիմ, *փոխադարձ միմյանց դերանունը։ Այս բոլոր դերանունները ուղղականում վերջանում են* f*-ով (գրաբարյան հոգնակերտ), բացի վերջինից, որը ուղղական չունի։*

Դերանունների ց հոլովումը որևէ էական ձևային տարբերություն չունի գոյականների նույն հոլովումից։ Համմտ.

ուղղ.	*նրանք*	*ոմանք*	*որոնք*	*Գրիգորենք*
տրակ.	*նրանց*	*ոմանց*	*որոնց*	*Գրիգորենց*
բաց.	*նրանցից*	*ոմանցից*	*որոնցից*	*Գրիգորենցից*
գործ.	*նրանցով*	*ոմանցով*	*որոնցով*	*Գրիգորենցով*
ներգ.	*նրանցում*	—	*որոնցում*	—

Այս դերանունների (ինչպես Գրիգորենք *գոյականի) տրականը կազմվում է ուղղականից* f/ց *հերթագայությամբ։*

Ինչպես տեսնում ենք, և՛ գոյականների, և՛ դերանունների Յ *հոլովման տրականի ձևը հիմք է ծառայում հաջորդ հոլովների կազմության համար։ Դրանք հոդ չեն ստանում։*

Գործածական չէ ոմանիմ *դերանվան ներգոյական, և հազվագյուտ գործածական է գործիական հոլովը։*

Դերանուններից ու *հոլովումով հոլովվում է միայն* մեկմեկու *փոխադարձ դերանունը։*

§ 299. Արդի հայերենի դերանունների մի զգալի մասը չի հոլովվում։ Դրանք են՝ իմիս, իմիդ, այս, այդ, այն, այսպես, այդպես, այնպես, նույնպես, ամենայն, ամենայն, որևէ, որևիցե, երբևէ, երբևիցե, ոմն *(եզակի թվում),* ինչ-ինչ, ինչ-որ, որոշ, մի շարի, յուրաքանչյուր ոք, ամեն ոք, ուր։

ԹԻՎ

§ 300. Թվի կարգի տեսակետից դերանունները բաժանվում են երկու խմբի՝ քերականական թիվ ունեցողներ և չունեցողներ։

Թվի քերականական կարգ ունեցող դերանունները կարելի է բաժանել հետևյալ խմբերի.

1. Դերանուններ, որոնք ունեն և՛ եզակի, և՛ հոգնակի թիվ.

2. Անեզական դերանուններ.

3. Անհոգնական դերանուններ։

ԵԶԱԿԻ ԵՎ ՀՈԳՆԱԿԻ ԹԻՎ ՈՒՆԵՑՈՂ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

§ 301. Եզակի և հոգնակի թիվ ունեցող դերանուններն են՝ ես, դու, իմիս, իմիդ, իմիր, սա, դա, նա, մյուս, այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, ով, ինչ, որ, որպիսի, ինչպիսի, ոմն, այսինչ, այնինչ, ուրիշ։ *Դերանունների հոգնակերտ մասնիկներն են՝* ք, ներ, եր։ *Սրանք նաև գոյականների հոգնակերտ մասնիկներն են։ Տարբերությունն այն է, որ գոյականների հոգնակին մեծ մասամբ կազմվում է* ներ, եր *մասնիկներով, իսկ* ք*–ն գոյականի համակարգում լայն տարածում չունի, որը, սակայն, դերանունների հոգնակիների կազմման մեջ ունի մեծ կշիռ։*

Անձնական դերանունների 1-ին դեմքի հոգնակին (մենք), *չի կազմվում նույն դեմքի եզակիից* (ես), *այլ ուրիշ արմատից* ք *հոգնակերտի միջոցով։ Երկրորդ դեմքի հոգնակին* (դուք) *կազմվում է նույն դեմքի եզակիից* (դուք) ք *հոգնակերտի միջոցով։ Անձնական դերանունների 3-րդ դեմքի հոգնակիները* (իրենք, նրանք) *կազմվում են համապատասխան եզակիներից նույն* ք *մասնիկի միջոցով։ Բայց այս վերջին դեպքում* ք*–ն դրվում է ոչ թե եզակի ուղղականի, այլ եզակի տրականի վրա՝* իրեն*–*ք, նրան*–*ք։ *Նույն սկզբունքով են կազմվում* սա, դա *դերանունների հոգնակիները՝* սրանք, դրանք։ *Ք հոգնակերտը հանդես է գալիս նաև* ոմն, որ *դերանունների հոգնակիի կազմության մեջ՝* ոմանք, որոնք *(վերջինս մեջ՝ այլ մասնիկի հետ բաղադրված)։*

Այս խմբի մեջ կարելի է դասել ամենքը դերանունը, որը ծագումով և կազմությամբ ամեն բառի հոգնակին է։ Սակայն պետք է նկատել, որ ամենքը *բառի* ք*–ն ձեռք է բերել այլ իմաստ, բացի հոգնա-*

կի իմաստից։ Այդ դերանունը գործածվում է անձ ցույց տալու, իսկ նրա եզակի ձևը՝ ամենը, սովորաբար գործածվում է իր ցույց տալու համար։

Ով *դերանվան հոգնակին կազմվում է* f և եր *մասնիկների միջոցով՝* ովfեր։

Մյուս բոլոր դերանունների հոգնակիները կազմվում են եր և եր *մասնիկներով։* Ներ*–ով կազմվում են հետևյալ հոգնակիները.* մյուսներ, այսպիսիներ, այդպիսիներ, այնպիսիներ, նույնպիսիներ, ինչպիսիներ, որպիսիներ, այսինչներ, այնինչներ, ուրիշներ։

Այսպիսի, այդպիսի, այնպիսի, նույնպիսի, ինչպիսի *և նման դերանունների հոգնակին կարող է կազմվել նաև* f *մասնիկով, բայ որում այդ դեպքում հոգնակին չի հոլովվում։ Այս դերանունների՝* f*–ով կազմվող հոգնակին ավելի քիչ է գործածվում.* այսպիսիf, այդպիսիf, այնպիսիf, ինչպիսիf, որպիսիf *և այլն։*

եր *մասնիկով կազմվում են հետևյալ հոգնակիները.* իմիներս, իմիներդ, ինչեր։

Դրանց մեջ եր *մասնիկը դրվում է արմատի վրա։ Իմիս և իմիդ դերանունների հոգնակին կազմվելու ժամանակ վերականգնվում է գրաբարյան ն վերջնահնչյունը։*

Յուրահատուկ է անձնական դերանվան 1-ին ու 2-րդ դեմքերի հոգնակիի իմաստը։ Եթե fարեr *նշանակում է «շատ քար», ձեռfեր նշանակում է «շատ ձեռք», ապա մենք չի նշանակում «շատ ես»։* Մենք*-ի տակ հասկացվող անհատներից մեկը՝ խոսողը, կենտրոնական է, առանցքային՝ մյուսների համեմատությամբ։ Իսկ մյուսները կամ մյուսը, որոնք չեն նույնանում ո՛չ այդ, այսպես կոչված, առանցքային ես–ի, ո՛չ էլ որոշակի կերպով դու–ի, ձա–ի և այլնի հետ, խոսող ես–ի հետ վերցվում են իբրև տվյալ հարաբերության մեջ նույն կարգի անհատներ, իբրև մի ամբողջություն։* Մենք *դերանվան տակ հասկացվում են նույն կոլեկտիվի, խմբի անհատներ, և խոսողը* մենք *դերանունով ոչ թե հակադրում է այդ անդամներին իրեն (ինչպիսի որոշակի հակադրություն ունեն դերանվան տարբեր դեմքերը, որոնցից մեկը բացառում է և հակադրվում է մյուսին), այլ ընդհակառակն, նրանք բոլորը մենք–ի մեջ հանդես են գալիս իբրև դիմային տեսակետից նույն կարգի մեջ մտնող խմբի անդամներ, որոնցից, սակայն մեկը՝ խոսողը, ավելի կենտրոնական է մյուսների կամ մյուսի համեմատությամբ։*

Երկրորդ դեմքի հոգնակին մեծ մասամբ բացահայտ կերպով արտահայտում է համապատասխան դեմքի եզակիի հոգնակի իմաստը և նշանակում է «շատ դու»: Այսպես՝ Բարև ձեզ, ընկերնե՛ր... քեֆներդ ինչպե՞ս է (ՆՋ, Հացավան): Այստեղ ձեզ-ը նշանակում է «շատ դու»:

Մի այլ օրինակ՝ Բարի գալուստ են մաղթում ձեզ սար ու ձոր, հանդ ու լեռ, Ձեզ ողջ երկիրն է ժպտում, ձեզ, հարազատ մարտիկներ, Ամենուրեք ցնծություն և՛ շեփորներ, և՛ նվագ, Դուք հաղթական քայլերով հայոց երկիրը դարձաք (Հ. Պողոսյան): Բանաստեղծուհին դուք դերանունով նկատի ունի հայրենական պատերազմից վերադարձած բոլոր հայ մարտիկներին, որոնցից յուրաքանչյուրը նրա համար այդ դեպքում դու է:

Անձնական դերանվան հոգնակիի առաջին դեմքի յուրահատկություն ունի երկրորդ դեմքի հոգնակին այն դեպքերում, երբ որպես խոսակից հանդես է գալիս մարդկանց խմբից, կոլեկտիվից մեկը, որին խոսողը դուք-ով դիմելով նկատի ունի այն կոլեկտիվին, որի ներկայացուցիչն է խոսակիցը: Օրինակ՝ —Ո՞վ է ձեր կոլխոզի նախագահը,—ընդհատեցի ես նրան (Մ. Դավթյան, Ուռենու տակ): —Իսկ ինչու՞ ձեր տանը սաղաթե ամաններից չկան,—նկատեցի ես (Ն. տ.):

Անեզական դերանուններ

§ 302. Անեզական կամ միայն հոգնակի թիվ (երբեմն միայն իմաստով) ունեցող դերանունների քանակը մեծ չէ: Այդպիսիք են բոլոր փոխադարձ դերանունները՝ միմյանց, իրար, մեկմեկու (մեկմեկի): Փոխադարձ դերանունների հոգնակի իմաստի պատճառն այն է, որ նրանցով ցույց են տրվում որոշ հարաբերությամբ կապված մեկից ավելի առարկաներ: Դրանից էլ բխում է փոխադարձ դերանունների թվի այն առանձնահատկությունը, որ նրանք իմաստով հոգնակի են, անկախ այն բանից՝ հոգնակերտ մասնիկ ունեն, թե ոչ: Այսպես, փոխադարձ դերանուններից միայն մեկը (միմյանց) ունի հոգնակի ձև, թեև նրա մեջ էլ ց հոգնակերտ մասնիկն այնքան է ձուլվել հիմքին, որ առանց նրան այդ փոխադարձ դերանունը որևէ իմաստ չի արտահայտում, ուրեմն և չի գործածվում, իսկ մյուս փոխադարձ դերանունները, թեև հոգնակերտ մաս-

նիկ չունեն, բայց նույնպես միշտ հոգնակի իմաստ ունեն։ Օրինակ՝ Միմյանց տեսան։ Իրարից հեռացան։ Իրար օգնում են։ Մեկմեկով հիանում են։ Պատահական չէ, որ այս և նման նախադասությունների ստորոգյալները հոգնակի թիվ ունեն։

Իմաստով հոգնակի է նաև բոլորը դերանունը, թեև հոգնակերտ մասնիկ չունի։ Նա չունի նաև եզակի ձև։ Բոլորը դերանվան հոգնակի իմաստը բխում է նրա արտահայտած յուրահատուկ հանրական իմաստից, որի մասին խոսվել է վերևում։

ԱՆՀՈԳՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐ

§ 303. Անհոգնական (միայն եզակի թիվ ունեցող) դերանուններն են՝ այս, այդ, այն, սույնը, նույնը, յուրաքանչյուրը, յուրաքանչյուր ոք, ամեն ոք, ոչ ոք, ոչինչ, ոչ մեկը և այլն։ Հետաքրքրական է, որ անհոգնականների մի զգալի մասը որոշյալ դերանուններ են, որոնց հատուկ է հանրական իմաստը։ Թեև այդ դերանուններն ունեն հանրական իմաստ, բայց դրանք առարկաների քանակական ամբողջությունը ցույց են տալիս հանձին բոլոր առարկաների մեջ մտնող առարկաներից յուրաքանչյուրի, այդ պատճառով էլ դրանք ունեն եզակի իմաստ։

Բ Ա Յ

ԲԱՅԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ

§ 304. Ժամանակակից հայերենի խոսքի մասերի համակարգում բայը քերականական դրսևորումներով և քերականական կարգերով ամենահարուստ խոսքի մասն է։

Բայ են կոչվում այն բառերը, որոնք ցույց են տալիս գործողություն կամ եղելություն։ Ինչպես՝ խոսել, խաղալ, վազել, ուտել, կարդալ, մաքրել, մեծանալ, կարմրել և այլն։

Գործողություն կամ եղելություն անվանումը խիստ ընդհանուր է և արտահայտում է իրականության, օբյեկտիվ աշխարհի բազմազան հարաբերությունները՝ կապված շարժման, որևէ երևույթի կամ հատկանիշի առաջացման, դրության, վիճակի և այլնի հետ։ Օրինակ, երբ ասում ենք գնալ, վազել, գրել և այլն, հասկանում ենք շարժման հետ կապված գործողություն, սպիտակել, մեծանալ, սևանալ, ուժեղանալ բայերը ցույց են տալիս որևէ հատկանիշի առաջացում կամ փոփոխություն, ճարգել, սիրել, վիրավորել, մերժել բայերը՝ վերաբերմունքի դրսևորում, ցավել, ըզգալ, դողալ բայերը՝ զգայական ընկալում և այլն։ Այս բոլոր իրողությունները վերացարկված ձևով ներկայացվում են որպես գործողության և եղելության ընդհանուր գաղափար, որի դրսևորումը բայական խոսքի մասի հիմնական հատկանիշն է։ Դա բայիմաստն է։ Որքան էլ տարբեր բառական իմաստներ ունենան վերը նշված բառերը, դրանք բոլորը իրենց ամենաընդհանուր իմաստով՝ բայիմաստով, և նրանից բխող ընդհանուր հատկանիշներով միավորվում են, ստանում խոսքի մասային ընդհանուր արժեքավորում և դիտվում որպես բայեր։

§ 305. Բայը իր բայիմաստով արտացոլում է իրականության մեջ գոյություն ունեցող առարկաների շարժումը, փոփոխությու-

նը։ Վերջիններս հանդես են գալիս որպես առաջինի (առարկայի) հատկանիշ։ Ուրեմն՝ բայիև, որպես խոսքի մասի, հատուկ է հատկանիշ արտահայտելը։

Հայտնի է, որ հատկանիշ կարող են արտահայտել նաև այլ խոսքի մասեր՝ ածականը, մակբայը, թվականը։ Բայը իր արտահայտած հատկանիշով որակապես տարբերվում է հատկանիշ արտահայտող մյուս խոսքի մասերից և հակադրվում է նրանց։ Այսպես՝ կարմիր, մեծ, ճպարտ, ճզոր, ամուր և կարմրել, մեծանալ, ճպարտանալ, ճզորանալ, ամրանալ հավասարապես ցույց են տալիս հատկանիշ և այդքանով նրանք ընդհանրություն ունեն։ Սակայն իրենց արտահայտած հատկանիշի բնույթով այս երկու շարքի բառերը որակապես տարբերվում են իրարից։ Դրանք խոսքի մասային տարբերություններ են։ Եթե առաջին շարքի բառերը՝ կարմիր, մեծ, ճպարտ, ճզոր, ամուր ցույց են տալիս հարաբերականորեն կայուն հատկանիշ, որը դիտվում է որպես տվյալ առարկային, երևույթին ընդհանրապես հատուկ, բնորոշ հատկանիշ (կարմիր ծաղիկ, մեծ տուն, ճպարտ մարդ և այլն), ապա երկրորդ շարքի բառերը ցույց են տալիս փոփոխվող հատկանիշ, մի հատկանիշ, որ առարկան չուներ, սակայն ձեռք է բերում՝ կարմրել, մեծանալ, ճպարտանալ, ճզորանալ, ամրանալ և այլն։ Այս դեպքում հատկանիշի գաղափարը ներկայացվում է որպես գործընթաց, որպես գործողություն, եղելություն։ Բայի այս առանձնահատկությունը դրսևորվում է նրա բոլոր՝ և՛ դիմավոր, և՛ անդեմ ձևերի մեջ (օրինակ՝ մեծանալ, մեծացող, մեծանում է, կմեծանա, մեծացեք), ինչպես նաև նրա բոլոր կիրառություններում՝ հանդիսանալով նրան հատկանիշ ցույց տվող մյուս խոսքի մասերից տարբերակող գծերից մեկը (հմմտ. գուցատ դեմֆ և գուցատված դեմֆ)։

§ 306. Գործողության գաղափար կարող են արտահայտել նաև մի շարք գոյականներ, այսպես կոչված, բայանունները (շարժում, կառուցում, մեծարում, ընկալում, ընդվզում և այլն)։ Սակայն վերջիններս ցույց են տալիս գործողությունը, եղելությունը ոչ թե ընթացքի մեջ, այլ որպես առարկայացված հասկացություն և հենց դրանով սահմանազատվում են բայերից, որոնք ցույց են տալիս գործողությունը, եղելությունը ընթացքի մեջ (հմմտ. շարժում—շարժել, կառուցում—կառուցել, մեծարում—մեծարել, գալուստ—գալ, երթևեկություն—երթևեկել և այլն)։

Այսպիսով, բային հատուկ է ցույց տված գործողության, եղելության ընթացականության հատկանիշը։

§ 307. Բայը սահմանազատվում, առանձնանում է մյուս խոսքի մասերից ոչ միայն բայիմաստով, այլ նաև բառական և քերականական այլ հատկանիշներով, որոնք հատուկ են միայն բայ խոսքի մասին։ Դրանք են բայի սեռը, խնդրառությունը և խոնարհումը։ Վերջինիս հետ կապված են ժամանակի, եղանակի, կերպի, դեմքի, թվի կարգերը։ Վերը նշված կարգերի մի մասը հատուկ է բայի բոլոր ձևերին և դրա համար հանդիսանում են բայը մյուս խոսքի մասերից տարբերակող, բայ խոսքի մասի ընդգրկման սահմանները որոշող կարգեր, իսկ մյուսները հատուկ են բայերի որոշ ձևերին (կամ անդեմ, կամ դիմավոր) և չնայած կարևոր նշանակություն ունեն բայն ամբողջությամբ ուսումնասիրելու համար, սակայն բայի, որպես խոսքի մասի, որոշման համար չեն կարող ծառայել որպես ամբողջ խոսքի մասն ընդգրկող հատկանիշներ։

§ 308. Բայական բոլոր ձևերի մեջ հանդես եկող, բայը որպես խոսքի մաս բնորոշող էական հատկանիշները, բացի բայիմաստից, բայի սեռի և խնդրառության կարգերն են։

Բայի սեռն այն կարգն է, որը ցույց է տալիս գործողության հարաբերությունը սուբյեկտի և օբյեկտի հետ և այդ հարաբերության քերականական վերացարկման ձևը։ Այսպես՝ կառուցել (մի բան), կառուցել տալ (մեկին՝ մի բան), կառուցվել (մեկի կողմից)։ Սա մի կարգ է, որ բացակայում է գործողության անուն հանդիսացող գոյականների մեջ (օրինակ՝ կառուցում)։ Այս կարգը դրսևորվում է բայի բոլոր ձևերում և հանդիսանում է բայը, հատկապես բայի անդեմ ձևերը, այլ խոսքի մասերից տարբերակող հիմնական հատկանիշը (օրինակ՝ կառուցած, կառուցելիս, կառուցող, կառուցել եմ, կկառուցեն, չեն կառուցում, պիտի կառուցեն ձևերը ներգործական սեռի են, իսկ կառուցված, կառուցվելիս, կկառուցվեն, չեն կառուցվում և այլն՝ կրավորական սեռի)։

§ 309. Յուրաքանչյուր գործողություն, եղելություն, դրություն, իրականության մեջ հանդես է գալիս, դրսևորվում է որոշակի պայմաններում, որոշ առարկաների հարաբերակցությամբ։ Դրանից է բխում բայերի այն հատկանիշը, որ յուրաքանչյուր բայ ըստ բայիմաստի ունի իր գործողության ոլորտի մեջ որոշակի թվով առարկաներ ներառելու, որոշակի հոլովով կամ հոլովական

կապակցությամբ դրված խնդիրներ պահանջելու քերականական հատկություն, մի երևույթ, որ կոչվում է խնդրառություն։ Այսպես՝ երբ ասում ենք՝ գնալ, *հարց է առաջանում՝* ո՞ւր գնալ, որտեղո՞վ գնալ, մոտենալ՝ ինչի՞ն, լսել՝ ո՞ւմ, ձայել՝ ինչի՞ն, վախենալ՝ ինչի՞ց և այլն։ *Սա ևս մի կարգ է, որ հատկանշական է բայի բոլոր՝ և՛ անդեմ, և՛ դիմավոր ձևերին։ Բայի խնդրառության մեջ է մրտնում նրա խնդիրներ և պարագաներ առնելու հատկանիշը։ Վերջիններս կարող են արտահայտվել մակբայներով կամ այլ խոսքի մասերով (մեծ մասամբ գոյականով)։ Օրինակ՝* երբ նրանք հասան կայարանին, *կամասրյանը* ճաճույfով սկսեց դիտել ավաճը *(Մուր., Առաքյալը)։* Ջեփյուռը գգվաճfով շոյում, սաճրում էր շորացած խոտերը *(ՎԱ, Առաջին կրակոցը)։* Բայց մենք համառորեճ փակվել ենք տճերում *(ՍՋ, Մի կյանքի պատմություն)։* Կամոն արագ հաճվեց և ջուրը ճեռվեց *(ՎԱ, Սևանի ափին)։*

Այսպիսով՝ բայի սեռը և խնդրառությունը բայիմաստի հետ անմիջականորեն կապված, նրանից բխող հատկանիշներ են, որոնք հատուկ են բայական բոլոր ձևերին և հանդիսանում են բայը որպես խոսքի մաս բնորոշող, այլ խոսքի մասերից զատորոշող հատկանիշներ։

§ 310. Խոսքի մեջ հանդես գալով որպես ստորոգյալ, բայը ցույց է տալիս առարկայի փոփոխվող հատկանիշի՝ գործողության, եղելության ամենաբազմազան հարաբերությունները, միաժամանակ դրսևորելով նաև խոսողի վերաբերմունքը հաղորդվածի նկատմամբ։ Այս բոլորը հնարավոր է լինում արտահայտել քերականական տարբեր կարգերի միջոցով, որոնք երևան են գալիս բայի թեքված՝ խոնարհված ձևերում։ Դրանք են՝ թվի, դեմքի, ժամանակի, կերպի և եղանակի կարգերը, որոնք հատուկ են միայն բայի խոնարհված ձևերին։ Օրինակ՝ գրում եմ *բայաձևն ունի ներկա ժամանակ, եզակի թիվ, առաջին դեմք, սահմանական եղանակ,* գրեր՝ *ըղձական եղանակ, անցյալ ժամանակ, եզակի թիվ, երրորդ դեմք,* գրիր՝ *հրամայական եղանակ, եզակի թիվ, երկրորդ դեմք և այլն։ Մյուս կողմից՝ բայերի անդեմ ձևերին հատուկ է վիճակի կարգը, որը չի դրսևորվում խոնարհված ձևերում։ Օրինակ՝* գրել, գրած, գրելիս, երևալ, երևալիս, երևացող *և այլ ձևերը ցույց են տալիս գործողության, եղելության ընթացքի տարբեր վիճակները։*

§ 311. Հայերենում բայը մյուս խոսքի մասերից առանձնաց-

վում և տարբերվում է նաև իր ձևավորմամբ, որպես բառական միավոր։ Դա այն հատկանիշն է, որ բայերը, որպես բառեր (բառույթներ), միշտ հանդես են գալիս ածանցված ձևով, ունեն իրենց հատուկ բայական վերջավորությունները, որոնք առանձին, կամ հատուկ բայածանցների հետ, ավելանում են բայարմատների վրա (վազ+ել, վազ+ած, ուտ+ել, կարդ+ում, մոտ+ենա+ալ, ուն+են+ալ, ուզ+են+ալ, ցանկ+ան+ալ, տես+ն+ել, փախ+չ+ել, ընկ+ն+ել *և այլն*) *և կամ դրվելով այլ խոսքի մասերի վրա (պարզ կամ բաղադրյալ)՝ վերջիններից կերտում են բայեր* (լավ+ան+ալ, դեղն+ել, կարմր+ել, հուզ+ել, ուղևոր+վ+ել, ընդառաջ+ել, գեղեցկ+ան+ալ, ոգեշնչ+ել *և այլն*)[23]։

§ 312. Ժամանակակից հայերենում (և ոչ միայն հայերենում) ընդունված է բայի ուղիղ, ելակետային ձև համարել անորոշ դերբայի ձևը՝ գրել, կարդալ, *որը հավասարեցվում է գոյականների ուղիղ ձևին։ Դա իհարկե չի բխում այն բանից, որ բայերի բոլոր փոփոխված ձևերը ածանցվում են անորոշի ձևից, այլ պայմանավորված է անորոշ դերբայի այն առանձնահատկությամբ, որ այն բայի մյուս ձևերի համեմատությամբ առավել ընդհանուր ձևով է նշում գործողության գաղափարը, անվանում է գործողությունը և հենց այդ պատճառով էլ մեր լեզվամտածողության մեջ առանձնացվում է որպես բայական խոսքի մասի ելակետային, ուղիղ ձև։ Այսպես՝ երբ ասում ենք* գրեց, գրած, կգրեմ, գրելու *և* գրել, *պարզ երևում է, որ առաջին չորս դեպքերում գործողության գաղափարը դրսևորվում է ավելի որոշակի հարաբերություններով. նշվում է անցյալում երրորդ դեմքի կողմից կատարված գործողություն, անցյալում կատարված, բայց հարատևող գործողության վիճակ, ապագայում առաջին դեմքի կողմից կատարվելիք գործողություն, ապագայում կատարվելիք գործողության ընթացքային վիճակ։ Միայն հինգերորդ դեպքում է, որ գործողության գաղափարը նշվում է ընդհանուր անորոշ ձևով։ Հենց դա էլ հիմք է հանդիսանում, որ բայի անորոշ ձևը դիտվի որպես ուղիղ, ելակետային ձև։ Ճիշտ նույն ձևով* գիրք, գրքի, գրքից, գրքով *ձևերից առաջինը՝ ուղիղ ձևը, անվանում է առարկան ընդհանուր ձևով՝ առանց նշելու նրա կոնկրետ հարաբերությունները, իսկ մյուս ձևերից յուրաքանչյուրը նշում է որոշակի հարաբերություն։ Իհարկե,*

23 Ա. Աբրահամյան, *Բայը ժամանակակից հայերենում, Երևան, 1962։*

երկու դեպքում էլ խոսքը վերաբերում է նախադասությունից՝ խոսքից դուրս վերցրած ձևերին։ Խոսքի մեջ և՛ բայի անորոշ ձևը, և՛ գոյականի ուղիղ ձևը հանդես են գալիս որոշակի հարաբերությամբ, ստանալով որոշակի նշանակություն։

ԲԱՅԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

§ 313. Ինչպես ասվեց, բայը, որպես խոսքի մաս, ունի այն առանձնահատկությունը, որ հանդես է գալիս բաղադրված՝ ածանցված ձևով։ Դա վերաբերում է բայի ոչ միայն ուղիղ ձևին՝ անորոշ դերբային, այլև բառափոխական բոլոր ձևերին։ Բացառություն են կազմում միայն մի շարք բայերի եզակի հրամայականի ձևերը, որոնք նույնանում են այդ բայերի արմատների հետ։ Դրանցից են՝ առ, դիր, ել, տես, բեր *և այլն**։

Բայերը ժամանակակից հայերենում ըստ կազմության լինում են համադրական և հարադրական։ Համադրական են այն բայերը, որոնց բաղադրիչները միաձույլ են. օրինակ՝ արտադրել, առորագրել, հիմնավորել, ճնել, ուրախացնել *և այլն։ Հարադրական են այն բայերը, որոնց բաղադրիչները կապակցվում են հարադրական եղանակով, միաձույլ չեն. օրինակ՝* վազ տալ, գլուխ բերել, ճնահարամ անել, գրել տալ *և այլն։*

ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԲԱՅԵՐ

§ 314. Համադրական բայերը ժամանակակից հայերենում կազմված են լինում.

1) Բայարմատներից և ել, ալ բայական ձևույթներից, ըստ որում, այդ ձևույթների և բայարմատների միջև կարող են հանդես գալ հատուկ բայածանցներ։ Օրինակ՝ ձայ+ել, վազ+ել, կարդ+ալ, լս+ել, ճաղ+ել, բեր+ել, այր+ել, ուտ+ել, աս+ել, տռկ+ալ *և այլ բայեր կազմված են բայարմատներից և ել, ալ վերջավորություններից, իսկ հետևյալ բայերի կազմության մեջ՝* փախ+չ+ել, բնթ+ան+ալ, թռ+չ+ել, ճաս+ճ+ել, ուճ+եճ+ալ, մոռ+ան+ալ, ճեռ+ան+ալ, իջ+ճ+ել *և այլն, բայարմատների և բայական*

* *Այդպիսի համընկնումները ավելի հաճախ էին հանդիպում գրաբարում։*

վերջավորությունների միջև հանդես են եկել հատուկ բայածանցներ, առանց որոնց այդ բայերը գոյություն չունեն։

2) Այլ խոսքի մասերից և դարձյալ ել, ալ ձևույթներից։ Օրինակ՝ մեծ+աճ+ալ, խելոք+ացն+ալ, արդուկ+ել, կարմր+ել, եռապատկ+ել *և այլն։ Հայերենում մեծ թիվ են կազմում հատկապես անվանական խոսքի մասերից ածանցման միջոցով առաջացած բայերը։ Բայակազմության այս եղանակը կենսունակ է և այսօր։ Գիտության, տեխնիկայի, հասարակական հարաբերությունների զարգացման հետ կապված՝ նորանոր հասկացություններ և հարաբերություններ արտահայտելու համար լեզվում պահանջ է առաջանում ստեղծել նորանոր բառեր, բայեր, և լեզուն օգտագործելով իր հարուստ բառակազմական հնարավորությունները՝ կերտում է դրանք։*

§ 315. Այլ խոսքի մասերից բայերի կազմության մեջ առավել կենսունակ է ել մասնիկը։ Ալ մասնիկը այս դեպքում հանդես է գալիս մեծ մասամբ ան բայածանցի զուգակցությամբ։ Բերենք տարբեր խոսքի մասերից բաղադրված բայերի օրինակներ։

ա) Գոյական անուններից բաղադրված բայեր՝ անձրևել, աշակերտել, արյունել, արծաթել, արձանանալ, արմատանալ, բծոտկել, բյուրեղանալ, գետնել, գրպանել, դարբնել, եղբայրանալ, ընկերանալ, թշնամանալ, լճանալ, լուսանալ, կախարդել, ծառել, ճեռախոսել, ճեռագրել, ճերկել, ճյութել, պատկերել, ջրել, փոշիանալ, օդակել, օսլայել *և այլն։ Ինչպես երևում է բերված օրինակներից, բայական վերջավորությունները դրվում են գոյականների ուղիղ ձևերի վրա։ Հազվադեպ, հատկապես խոսակցական լեզվում, հանդիպում են գոյականի թեքված ձևերից՝ գործիական հոլովից բաղադրված բայեր, ինչպես՝* ճամով անալ, գինով անալ, ուժով անալ, խելոք անալ *և այլն։ Դա հետևանք է այն բանի, որ* ճամով, գինով, ուժով, խելոք *և այլն ձևերը սկսել են գիտակցվել որպես ածականներ, հետևաբար՝ համապատասխան բայերը կարող են դիտվել որպես ածականներից բաղադրվածներ։ Նույն ձևով հանդիպում են նաև գոյականների քարացած հոլովաձևերից բաղադրված բայեր. այսպես՝* բարևել, խելոքանալ։

բ) Ածական անուններից բաղադրված բայեր՝ ագահանալ, ազնվանալ, ակտիվանալ, աղոտանալ, աշխուժանալ, արիանալ, բարականալ, բարակել, բարդանալ, դալարել, դառնանալ, դատարկել, դեղնել, թարմանալ, թուլանալ, լայնանալ, լրջանալ,

խեղճանալ, խլանալ, ծանծաղել, ծաւրանալ, կապտել, կարճանալ, կարճել, համեղանալ, հնանալ, մեծանալ, պայծառանալ, պարզել, սպիտակել և այլն։

գ) Մյուս խոսքի մասերից բայեր բաղադրվում են շատ սակավ։ Այսպես՝ թվական անուններից՝ *երրորդել, հնգապատկել, տասնապատկել, հարյուրապատկել և այլն,* դերանուններից՝ *նույնանալ, ոչնչանալ,* մակբայներից՝ *առաջանալ, դանդաղանալ, արագանալ, կանխել, հաճախել, հաճախանալ, հավերժանալ և այլն,* ձայնարկություններից՝ *ավազել, ափսոսել, վայել և այլն։*

§ 316. Ալ (ան+ալ) և ել *բայական վերջավորությունները, դրվելով անվանական խոսքի մասերի վրա և դրանցից կերտելով բայեր, վերջիններիս տալիս են տարբեր բառային, նաև քերականական իմաստներ։ Այդ բանը շատ ակնբախ երևում է միևնույն անունից տարբեր վերջավորություններով կազմված բայերի զուգադրումից։ Այսպես՝* կոպիտ<կոպտանալ—կոպտել, ճստակ<ճստականալ—ճստակել, մաճուր<մաճրանալ—մաճրել, բարդ<բարդանալ—բարդել, մաճր<մաճրանալ—մաճրել, դատարկ<դատարկանալ—դատարկել, գիշեր<գիշերանալ—գիշերել, պատկեր<պատկերանալ—պատկերել, fար<fարանալ—fարել և *այլն։ Ինչպես երևում է բերված օրինակներից, ել և (ան)ալ մասնիկներով կազմված բայերը ունեն և՛ իմաստային, և՛ քերականական տարբերություններ*[24]։

1. Ալ ձևույթը ան բայածանցի հետ զուգորդված, դրվելով ածականների, ինչպես նաև հատկանիշ ցույց տվող այլ խոսքի մասերի (թվական, մակբայ) վրա, ստեղծում է տվյալ հատկանիշը ձեռք բերելու, տվյալ հատկանիշին վերածվելու իմաստ ունեցող բայեր։ Այսպես՝ ագահանալ—ագահ դառնալ, թույլանալ—թույլ դառնալ, մեծանալ—մեծ դառնալ, ուժեղանալ—ուժեղ դառնալ, համեղանալ—համեղ դառնալ, դանդաղանալ—դանդաղ դառնալ, արագանալ—արագ դառնալ *և այլն։*

Նույն անալ-ը դրվելով գոյականների վրա՝ ստեղծում է մի բան դառնալու, մի բանի վերածվելու, ինչպես նաև մի բանի նմանվելու իմաստով բայեր։ Այսպես՝ ածխանալ—ածուխ դառնալ, ածուխի վերածվել, բյուրեղանալ—բյուրեղ դառնալ, բյուրեղի վերածվել, գիշերանալ—գիշեր դառնալ, ընկերանալ—ընկեր դառնալ,

24 *Այս մասին մանրամասն տե՛ս* Ա. Աբրահամյան, *նշվ. աշխ., էջ 49—70։*

կմախսճանալ—կմախս դառնալ, կմախսի վերածվել, փոշիանալ—փոշու վերածվել և այլն։ Այս մասնիկախմբով բայերը կարող են ունենալ նաև իրենց հիմքում ընկած գոյականի ցույց տված առարկայի որևէ հատկանիշը ձեռք բերելու, որևէ հատկանիշով այդ առարկային նմանվելու նշանակություն։ Այսպես՝ աղյուծանալ—աղյուծի նման համարձակ՝ քաջ դառնալ, ծովանալ—մեծությամբ ծովի նմանվել, արձանանալ—արձանի նման անշարժ դառնալ, մանկանալ—մանուկի՝ երեխայի հատկանիշներ դրսևորել, կղզիանալ—կղզու նման մեկուսանալ, առանձնանալ։ Ըստ որում, միևնույն բայը հաճախ այս երկու նշանակությունն էլ ստանում է։ Օրինակ՝ փայտանալ— 1) փայտ դառնալ, փայտի վերածվել, 2) փայտի նման անշարժ դառնալ։ Այս կազմությամբ բայերը հազվադեպ կարող են ցույց տալ նաև որևէ դրության մեջ ընկնելու՝ լինելու իմաստ։ Օրինակ՝ մահանալ, վշտանալ և այլն։

2. Ել ձևույթը, դրվելով մի շարք ածականների վրա՝ անալ-ի նման կարող է բային տալ հատկանիշի վերածվելու իմաստ։ Օրինակ՝ դեղնել, կանաչել, դալարել, ճվազել, սպիտակել, կապտել, կարմրել, փափկել և այլն։ Սրանք կարող են ունենալ անալ-ով կազմված զուգահեռ ձևեր, ինչպես՝ բարակել—բարականալ, կանաչել—կանաչանալ, ապշել—ապշանալ և այլն։ Սակայն իմաստային լրիվ համընկնում այս ձևերի միջև սովորաբար չի լինում։ Իրենց հիմնական իմաստով համընկնելով, սրանք ունեն լրացուցիչ իմաստային տարբերություններ։ Այսպես՝ կանաչել նշանակում է միաժամանակ և՛ կանաչ դառնալ, կանաչանալ, և՛ ծլել, ծաճրել նշանակում է և՛ ծանր դառնալ, ծանրանալ, և՛ հղիանալ, բարակել նշանակում է և՛ բարակ դառնալ, բարականալ, և՛ նիհարել և այլն։

Ավելի հաճախ ել մասնիկը, դրվելով ածականների վրա, նրանց տալիս է ակտիվ գործողության՝ մի որևէ հատկանիշի վերածելու, հատկանիշով օժտելու իմաստ։ Այսպես՝ ապաճովել—ապաճով դարձնել, դատարկել—դատարկ դարձնել, կարճել—կարճ դարձնել, ճարթել—ճարթ դարձնել, պարզել—պարզ դարձնել, պղտորել—պղտոր դարձնել և այլն։ Սրանք իրենց զուգահեռ անալ-ով կազմված ձևերի հետ ունեն հիմնականում սեռային տարբերություններ (համմտ. դատարկել—դատարկանալ, ճարթել—ճարթանալ, պարզել—պարզանալ, պղտորել—պղտորանալ և այլն), իսկ երբեմն նաև բառիմաստի տարբերություններ (համմտ. կարճել—

կարճանալ, կոպտել—կոպտանալ, պնդել—պնդանալ, նեղել—նեղանալ, չորել—չորանալ և այլն)։

3. Ավելի բազմիմաստ են գոյականներից ել մասնիկով կազմված բայերը։ Նրանք կարող են ցույց տալ.

ա) Ակտիվ գործողության գաղափար, որի իրագործման համար օգտագործվում է բայի հիմքում ընկած գոյականով անվանված գործիքը։ Օրինակ՝ արդուկել, արորել, գութանել, խարազանել, խարտոցել, խցանել, ճեռախոսել, շղթայել, սղոցել, փոցխել և այլն։

բ) Ակտիվ գործողության գաղափար, որի համար բայի հիմքում ընկած գոյականը դիտվում է իբրև գործողության անմիջական օբյեկտ։ Օրինակ՝ զինել—*զենք տալ,* ընծայել—*ընծա տալ,* թելել—*թել անցկացնել,* կեղևել—*կեղևը հանել,* կերակրել—*կերակուր տալ,* կոճակել—*կոճակը անց կացնել,* ձևել—*ձև տալ,* մաշկել—*մաշկը հանել,* որակել—*որակը որոշել,* պատժել—*պատիժ տալ,* շեշտել—*շեշտ դնել,* վճռել—*վճիռ արձակել,* դասախոսել և այլն։

գ) Ակտիվ գործողության գաղափար, որն ունի բայի հիմքում ընկած գոյականի անվանած նյութով պատելու՝ լրիվ կամ մասամբ օժտելու իմաստ։ Այսպես՝ աճագել—*անագով պատել,* ապակել—*ապակի անցկացնել, ապակեպատ դարձնել,* աստառել—*աստառ անցկացնել, աստառով պատել,* արծաթել—*արծաթով պատել,* ծեփել, թիթեղել, համեմել, սոսնձել, մոմել, ներկել, օսլայել և այլն։

դ) Որևէ նյութի վերածելու ակտիվ գործողության գաղափար։ Օրինակ՝ աղանձել—*աղանձ դարձնել,* աղունել—*աղուն դարձնել,* ապխտել—*ապուխտ դարձնել,* դիզել,—*դեզի վերածել,* փինջել—*փունջ դարձնել* և այլն։

ե) Մի բանի մեջ դնելու, տեղավորելու ակտիվ գործողության գաղափար։ Օրինակ՝ ամանել, գրպանել, բանտել, վանդակել, տոպրակել և այլն։

զ) Որևէ մասնագիտության, արհեստի գործադրման հետ կապված ակտիվ գործողության գաղափար։ Օրինակ՝ բժշկել, հովվել, ֆանճայել, դարբնել, հեղինակել և այլն։

է) Որևէ բանով զբաղվելու գաղափար։ Օրինակ՝ ընթրել, քեյել, ճաշել, չանաֆել, պայֆարել, վիճել և այլն։

ը) Մի դրության մեջ գտնվելու, մի որևէ հատկության, դրու-

ձյուն ի հայտ բերելու գաղափար. ինչպես՝ աճձրևել, բուրել, գիշերել, թախծել, ձյունել, շնչել *և այլն։*

Եթե անալ*-ով բայերը արտահայտում են հիմնականում վերածության պասիվ գործողության գաղափար, այսինքն՝ չեզոք սեռի են, ապա* ել*-ով անվանական բայերը հիմնականում արտահայտում են ակտիվ գործողության գաղափար, այսինքն՝ ներգործական սեռի են։*

§ 317. Այլ խոսքի մասերից բայերի ստեղծման համար հիմք են հանդիսանում ոչ միայն բուն հայերեն բառերը, այլ նաև հաճախ փոխառյալ բառերը, այսպես՝ ակտիվ—ակտիվանալ, ասֆալտ—ասֆալտել, բետոն—բետոնել, մանևր—մանևրել, սինքեզ—սինքեզել։ *Փոխառյալ բառերից բայերը կազմվում են հիմնականում* ել *մասնիկի օգնությամբ։* Ալ*-ը (*ան*-ի զուգակցումով) գործածվում է միայն մի քանի փոխառյալ ածականներից բայեր կազմելու համար, ինչպես՝* նորմալ—նորմալանալ, ակտիվ—ակտիվանալ, պասիվ—պասիվանալ *և այլն։*

§ 318. Այստեղ անհրաժեշտ է խոսել ցն *և* ավոր *ածանցների բայակազմական դերի մասին։ Հայտնի է, որ* ցն *ածանցն ունի քերականական արժեք. բայերին տալիս է պատճառականության իմաստ։ Սակայն երբեմն, հատկապես փոխառյալ բայակազմության ժամանակ, այն հանդես է գալիս նաև բայակազմական դերով։ Ացիա և ֆիկացիա ածանցներն ունեցող որոշ փոխառյալ բառերից բայեր կազմելիս* ել*-ի հետ անբաժան կերպով հանդես է գալիս* ցն *ածանցը։ Օրինակ՝* կոոպերացիա—կոոպերացնել, լիկվիդացիա—լիկվիդացնել, օկուպացիա—օկուպացնել, գազաֆիկացիա—գազաֆիկացնել, էլեկտրաֆիկացիա—էլեկտրաֆիկացնել *և այլն։*

Նույն ձևով երբեմն բայակազմական դերով է հանդես գալիս նաև ավոր *վերջածանցը։ Վերջինս բառակազմական ածանց է, որի միջոցով կերտվում են ածականներ՝ մի բան ունենալու, մի բանով կամ մի որևէ հատկանիշով օժտված լինելու նշանակությամբ։ Օրինակ՝* բծավոր, գունավոր, լուսավոր, ճեռավոր, փառավոր *և այլն։ Այս ածականները իրենց հերթին կարող են հիմք հանդիսանալ բայեր կազմելու համար, այսպես՝* գունավորել, լուսավորել, բծավորել, փառավորել *և այլն։ Այս կազմություններում* ավոր *վերջածանցը հանդես չի գալիս որպես բայակազմական ածանց, նրա բա-*

ռակազմական դերը արդեն ավարտված է գուճավոր, լուսավոր, փառավոր *բառերում, ճիշտ այնպես, ինչպես բայակազմական ածանց չէ* ատ-*ը գլխատել, գուճատվել և այլ բառերում։ Սակայն բացի իր այս հիմնական իմաստից, ավոր ածանցը հանդես է գալիս նաև բայակազմական դերով՝ բայական վերջավորություններից հետ մեկտեղ գոյականներից կերտելով բայեր։ Օրինակ՝* կաճավորել, սարֆավորել, տեսակավորել, դասավորել, տեղավորել, պարենավորել (կաճավոր, սարֆավոր, տեսակավոր, տեղավոր, դասավոր *բառեր հայերենում չկան)։* Ավոր *ածանցը բայակազմական դերով կենսունակ է դարձել վերջին շրջանում և կիրառվում է հատկապես փոխառյալ արմատներից բայեր կազմելու համար։ Այսպես՝* ավաճսավորել, ատեստավորել, ակտավորել, կոմպլեկտավորել, կոճսպեկտավորել, էկրանավորել, ֆինանսավորել *և այլն։ Այս կազմություններում այն համապատասխանում է ռուսերեն* ова *և* изирова *ածանցներին։*

Ծանոթ.—*Այս ածանցների բայակազմական դերը սպառիչ կերպով ուսումնասիրված է Ա. Աբրահամյանի «Բայը ժամանակակից հայերենում» մեծարժեք աշխատության մեջ։*

§ 319. Ժամանակակից հայերենի բայակազմության մեջ հատուկ տեղ են գրավում վեր, արտ, ներ ածանցները, որոնք նոր իմաստով բայեր են ստեղծում արդեն գոյություն ունեցող բայերից։ Այլ խոսքի մասերից սրանք բայեր չեն կերտում։

Վեր *նախածանցը ժամանակակից հայերենում կարող է դրվել գրեթե բոլոր բայերի վրա՝ նրանց տալով հիմնականում գործողությունը վերսին, նորից կատարելու իմաստ։ Օրինակ՝* միավորել—վերամիավորել, դառնալ—վերադառնալ, բնել—վերաբնել, պատրաստել—վերապատրաստել, ճվաճել—վերաճվաճել, նորոգել—վերանորոգել, կառուցել—վերակառուցել, վաճառել—վերավաճառել *և այլն։*

Ներ *նախածանցը նշանակում է գործողության ուղղվածությունը դեպի ներս կամ մի բանի մեջ։ Սրանով ևս կազմվել և կազմվում են բազմաթիվ բայեր։ Օրինակ՝* ներգրավել, ներմուծել, ներառնել, ներգործել, ներխուժել, ներդնել, ներմարմնավորել, ներհոսել, ներգաղթել *և այլն։*

Ծանոթ.—Ներ-*ով բաղադրված գոյականները միայն բայա-*

նուններ են (ներգրավում, ներմուծում, ներգործում, ներգաղթ և այլն)։

Արտ *նախածանցը, դրվելով բայերի վրա, կազմում է դեպի դուրս ուղղված գործողություն ցույց տվող բայեր և իր իմաստով հակադիր է ներ-ին։ Օրինակ՝* արտաբերել, արտադրել, արտահայտել, արտահանել, արտագրել, արտահանկարել, արտատպել, արտահոսել, արտաշնչել *և այլն։*

Մի քանի նախածանցներ ևս հայերենում հանդես են եկել բայակազմական դերով, սակայն այժմ դրանք կենսունակ չեն և նոր բայեր այլևս չեն կերտում։ Դրանցից են՝ շար (շարադրել, շարակցել, շարահարել, շարահյուսել, շարունակել *և այլն),* ընդ (ընդգրկել, ընդհարվել, ընդգծել, ընդունել, ընդհատել *և այլն),* ենթ (ենթադրել, ենթարկել, ենթագծել *և այլն),* ստոր (ստորագրել, ստորադրել, ստորաբաժանել *և այլն)։*

§ 320. Համադրական բայերին, ինչպես նաև մյուս խոսքի մասերին, հատուկ են բառակազմության, բառաբարդման և ածանցման գրեթե բոլոր տեսակները։ Այդ տեսանկյունով բայերի ուսումնասիրությունը վերաբերում է բառագիտությանը։ Այդ իսկ պատճառով սահմանափակվենք միայն օրինակներ բերելով։

ա) Ածանցավոր բայեր՝ վերականգնել, արտադրել, անհանգըստանալ, փոխադրել, վերլուծել, շարադրել, արտահանել, արտահոսել *և այլն։ Վերջածանցները բայերի կազմության մեջ հանդիպում են միայն այն դեպքում, երբ բայի հիմքում ընկած գոյականը, ածականը կամ այլ խոսքի մաս վերջածանցավոր են, ըստ որում գոյականակերտ և մակբայակերտ վերջածանցները* (ություն, ում, իճ, բար, որեն *և այլն) բայերի կազմության մեջ հանդես գալ չեն կարող։ Ավելի հաճախ բայերի կազմության մեջ հանդես են գալիս ածականակերտ մի շարք ածանցներ, ինչպես՝ համ+եղ+անալ, գուն+եղ+անալ, լուս+ավոր+ել, կեղտ+ոտ+ել, ջր+ոտ+ել, մր+ոտ+ել, կայ+ուն+անալ, գուն+ավոր+ել, պոչ+ատ+ել||անալ, գլխ+ատ+ել, գուն+ատ+ել||անալ և այլն։*

բ) Բարդ բայեր՝ *հեռագրել, մեծամտել, շնորհազրկել, պատվազրկել, ղեկավարել, պարգևատրել, գործադրել, ծաղկազարդել, հուսահատվել, նաև՝ արծարծել, բեկբեկել, գեղգեղել, ձգձգել, չարչարել, ջախջախել, փայփայել, քայքայել, մրմնջալ, կարկաչել, գոչգոչել, թշթշալ, տնքտնքալ, նվնվալ և այլն։*

ՀԱՐԱԴՐԱԿԱՆ ԲԱՅԵՐ

§ 321. Ժամանակակից հայերենում խիստ տարածված են բայական հարադրությունները, որոնց ամենալայն ուսումնասիրությունը բառագիտության խնդիրն է։ Բայերի ձևակազմության համար կարևոր նշանակություն ունեն այն հարադրությունները, որոնց բայական բաղադրիչները լինելով որևէ վերացական բայ՝ կորցրել են իրենց նյութական իմաստը և կատարում են միայն բայակազմական-քերականական դեր՝ այլ խոսքի մասերից, նաև բայարմատներից վերլուծական եղանակով կերտելով բայեր և նրանց հաղորդելով որոշակի քերականական առանձնահատկություններ։ Այս առումով նրանք համանիշ են դառնում ել և (ան)այ ձևույթներին։ Պատահական չէ, որ հաճախ են հանդիպում նույն բայարմատից կամ բառից համադրական և հարադրական եղանակով կերտված համանիշ բայաձևեր (օրինակ՝ վազել—վազ տալ, ձայնել—ձայն տալ, ծլել—ծիլ տալ, հետամտել—հետամուտ լինել, գնդակահարել—գնդակահար անել, առաջանալ—առաջ գալ, մոտենալ—մոտ գալ, մոտեցնել—մոտ բերել և այլն)։ Այդպիսի բայերից են՝ անել, լինել, տալ, գալ, բերել, դառնալ, դարձնել և այլն։

Անել *բայը, հարադրվելով բայարմատներին կամ այլ խոսքի մասերի պատկանող բառերի, կերտում է մեծ մասամբ ներգործական սեռի հարադրական բայեր և այս առումով համանիշ է ել ձևույթով կերտված բայերին։ Օրինակ՝* արմատաճաճ անել—արմատաճաճանել, ուժասպառ անել—ուժասպառել, գինաթափ անել—գինաթափել, թևաթափ անել—թևաթափել, խայտառակ անել—խայտառակել, աղաչանք անել—աղաչել, անտես անել—անտեսել, բաց անել—բացել, փորձ անել—փորձել և *այլն։*

§ 322. Երբեմն անել *բայը, հարադրվելով ածականների, հարադրությանը հաղորդում է նաև պատճառականության իմաստ՝ համանիշ լինելով ցնել ձևույթախմբին։ Այսպես՝* աննիանգիստ անել—աննիանգստացնել, գոհ անել—գոհացնել, անհետ անել—անհետացնել, երջանիկ անել—երջանկացնել և *այլն։ Պատճառականության իմաստը վերլուծական եղանակով ավելի հաճախ արտահայտվում է* դարձնել *բայի օգնությամբ. ինչպես՝* երջանիկ դարձնել—երջանկացնել, ուժեղ դարձնել—ուժեղացնել, դժբախտ դարձ-

ճել—դժբախտացնել, թարմ դարձնել—թարմացնել, խելոք դարձնել—խելոքացնել և այլն։

Լինել *բայը, հարադրվելով բայարմատներին կամ այլ խոսքի մասերի, կերտում է չեզոք սեռի հարադրական բայեր, որոնք համանիշ են լինում աճալ և կամ ավելի հաճախ վել ձևույթախմբով համադրական բայերին։ Օրինակ՝* թևաթափ լինել—թևաթափվել, աննիանգիստ լինել—աննիանգստանալ, զինաթափ լինել—զինաթափվել, խայտառակ լինել—խայտառակվել, ցրտաճար լինել—ցրտաճարվել և այլն։

Գալ *բայը, հարադրվելով բայարմատների և այլ խոսքի մասերի, կերտում է չեզոք սեռի հարադրական բայեր, հաճախ համանիշ լինելով* ել (վել) *կամ* (ան)ալ *ձևույթներով կերտված չեզոք սեռի համադրական բայերին։ Օրինակ՝* փուլ գալ—փլչել, առաջ գալ—առաջանալ, եռ գալ—եռալ, շուռ գալ—շրջվել, պոկ գալ—պոկվել, եփ գալ—եփվել, fnr գալ—fnրվել, աննրև գալ—աննրևել, կծիկ գալ—կծկվել, ձյուն գալ—ձյունել և այլն։

Տալ *բայը, հարադրվելով բայարմատների կամ այլ խոսքի մասերի, կերտում է հիմնականում ներգործական սեռի հարադրական բայեր*[25], *ինչպես՝* եփ տալ—եփել, պոկ տալ—պոկել, fnr տալ—fnրել, շուռ տալ—շրջել, ապտակ տալ—ապտակել և այլն։ *Սակայն նրանով կարող են կազմվել նաև չեզոք սեռի հարադրական բայեր, ինչպես՝* վազ տալ—վազել, բարև տալ—բարևել, պատիվ տալ—պատվել, գրոհ տալ—գրոհել, ձայն տալ—ձայնել և այլն։ *Չեզոք սեռի են հատկապես գոյականներից* տալ-*ով հարադրված բայերը։ Դա պետք է բացատրել նրանով, որ լինելով ներգործական սեռի, տալ բայը հարադիր գոյականի հետ կապվում է ուղիղ խնդրային հարաբերությամբ, որով հարադրությունը զրկվում է այլ ուղիղ խնդիր առնելու հատկությունից (տե՛ս օրինակները)։*

Բերել *բայը, հարադրվելով բայարմատների կամ այլ խոսքի մասերի, կերտում է ներգործական սեռի հարադրական բայեր, որոնք հաճախ համանիշ են լինում* ել *կամ* ցնել *ձևույթներով համադրական բայերին։ Օրինակ՝* փուլ բերել—փլցնել, առաջ բերել—

25 *Այստեղ նկատի չեն առնվում* տալ *բայով կազմված վերլուծական պատճառականները, ինչպես՝* վազել տալ, խմել տալ և այլն։

առաջացնել, եռ բերել—եռացնել, շուտ բերել—շրջել, խելքի բերել—խելոքացնել:

Դառնալ *բայը, հարադրվելով ածականների, նաև գոյականների, կերտում է վերածման իմաստով չեզոք սեռի հարադրություններ՝ համանիշ* անալ *ձևույթախմբով (նաև՝ ել–ով) համադրական բայերին: Օրինակ՝* ուժեղ դառնալ—ուժեղանալ, խելոք դառնալ—խելոքանալ, ճամեստ դառնալ—ճամեստանալ, աղքատ դառնալ—աղքատանալ, բարեկամ դառնալ—բարեկամանալ, թշնամի դառնալ—թշնամանալ *և այլն:*

Բայական հարադրությունների մեջ իրենց նյութական իմաստը կորցրել և հաճախ միայն բայակազմական-քերականական արժեքով են հանդես գալիս նաև առնել, դնել, ընկնել *և այլ բայեր: Օրինակ՝* վեր առնել—վերցնել, կանգ առնել—կանգնել, ճշաև դնել—ճշաևել, մութ ընկնել—մթնել, ցուրտ ընկնել—ցրտել *և այլն:*

ԲԱՅԱԾԱՆՑՆԵՐ

§ 323. Ժամանակակից հայերենում կան ածանցներ, որոնք հատուկ են միայն բայերին և մեծ դեր ունեն ինչպես բայակազմության, այնպես էլ բայական համակարգի հետ կապված զանազան քերականական կարգերի դրսևորման ասպարեզում: Դրանք են՝ աճ, եճ, ն, չ, ատ, ոտ, տ, ց(ն), վ:

Այս ածանցները կոչվում են բայածանցներ: Բայածանցները կամ բաղադրում են բայական բառույթները, դրա հետ մեկտեղ երբեմն որոշակի քերականական իմաստ հաղորդելով բային, կամ արդեն գոյություն ունեցող բային ածանցվելով՝ տալիս են նրան լրացուցիչ քերականական իմաստ: Վերջին դեպքում բայածանցները կարող են դրվել արդեն հսկ բայածանցով բաղադրված բայերի վրա:

Բայածանցները հանդես են գալիս բայարմատի և բայական վերջավորությունների միջև (փախ+չ+ել, հեռ+ան+ալ, մոտ+են+ալ, վազ+եցն+ել, կոտր+ատ+ել, գր+վ+ել և այլն): Սրանք վերջածանցներ են, ճիշտ այնպես, ինչպես վերջածանց են ընկերական-ություն, գրոհայնություն, հանգստանալ, համեղանալ և այլ բառերի կազմության մեջ հանդես եկած ական, ային, իստ, եղ *և*

այլ ածանցները, չնայած այն հանգամանքին, որ նրանք հանդես են եկել ոչ թե բառի վերջում, այլ միջին մասերում (իհարկե բոլոր դեպքերում՝ արմատից հետո)։

Ծանոթ.— *Բայածանց չպետք է համարել ց և ր հիմքակազմիչ մասնիկները, որոնք հանդես են գալիս միայն բայերի անցյալի հիմքում։*

§ 324. Ըստ բայակազմության մեջ բայածանցների կատարած դերի, բայերը բաժանվում են երկու խմբի՝ պարզ *կամ* ածանցազուրկ *և* ածանցավոր։

Պարզ *կամ* ածանցազուրկ *են այն բայերը, որոնց կազմության մեջ բայածանցներ չկան։ Օրինակ՝* հաղթել, վազել, ճեպ, խաղալ, կարդալ, գրել, ճուզել, շնչել, աճել, խմել, ուտել *և այլն։ Պարզ կամ ածանցազուրկ բայերի մեջ կարող են լինել նաև այնպիսինները, որոնք իրենց կազմում ունեն բառակազմական այլ ածանցներ, օրինակ՝* գլխատել, կիսատել, վերակառուցել, գերակատարել, սառեցրել *և այլն։*

Ածանցավոր *են կոչվում այն բայերը, որոնց կազմության մեջ առկա են բայածանցներ։ Այսպես՝ հեռանալ, տեսնել, մոտենալ, մեծանալ, պիտենալ, փախչել, թռչել, գրվել, կանգնեցնել, ընկնել, մեծանալ, թուլանալ, ուժեղանալ և այլն։*

Հաճախ ածանցավոր բայերը ենթարկվում են կրկնակի ածացման՝ կապված քերականական տարբեր իմաստների արտահայտման հետ։ Օրինակ՝ ճեռանալ—ճեռացնել—ճեռացվել, կարդալ—կարդացնել—կարդացվել, փայլել—փայլեցնել—փայլեցվել, կոտրել—կոտրատել—կոտրատվել *և այլն։ Բերված զուգահեռ ձևերից առաջիններն համարվում են սկզբնաձև վերջինների համար, ըստ որում, ինչպես երևաց, սկզբնաձև կարող են լինել և՛ ածանցազուրկ, և՛ ածանցավոր բայերը* (գրել—գրվել, փախչել—փախցնել)։

§ 325. Ըստ բայական համակարգում իրենց կատարած դերի բայածանցները բաժանվում են երկու խմբի՝ 1) բաղադրական-քերականական *բայածանցներ, 2)* քերականական *բայածանցներ։*

ԲԱՂԱԴՐԱԿԱՆ-ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԱԾԱՆՑՆԵՐ

§ 326. Բաղադրական-քերականական ածանցները ժամանակակից հայերենում չորսն են՝ ան, են, ն, չ։

Սրանք ունեն այն ընդհանրությունը, որ մասնակցում են բայերի բաղադրմանը, և այն բայերը, որոնց կազմության մեջ հանդես են գալիս, առանց այդ ածանցների գոյություն ունենալ չեն կարող (խոսքը բայի ուղիղ ձևի մասին է)։ Սրանց մյուս առանձնահատկությունն այն է, որ հանդես են գալիս միայն ներկայի հիմքում, որպես հիմքակազմիչ մասնիկներ, իսկ բայերի անցյալի հիմքում ընկնում են, դրանով ստեղծելով ածանցավոր բայերի յուրահատուկ խոնարհման համակարգ։ Հենց դրանով էլ այս ածանցները կատարում են նաև քերականական դեր։ Այդ դերը ավելի է ընդգծվում նաև նրանով, որ հիշյալ ածանցները բայերին հաղորդում են նաև կերպային որոշ, հաճախ շատ թույլ արտահայտված իմաստ։

Մանոթ.— Հայ քերականագիտության մեջ ընդունված է այս ածանցները կոչել նաև սոսկածանցներ այն հիմնավորմամբ, որ դրանք որևէ հավելյալ իմաստ բային չեն ավելացնում, աննշանակ են։ Այդ ածանցները աննշանակ չեն, ունեն որոշակի քերականական դեր, հետևաբար նաև քերականական իմաստ, և այդ պատճառով սոսկածանց կոչելը նպատակահարմար չէ։ Ավելի ճիշտ և բայածանցների էությունը բացահայտող է Ա. Աբրահամյանի գործածած բաղադրության-քերականական ածանցներ անվանումը[26]*։*

§ 327. Ան—Ժամանակակից հայերենում ան բայածանցը հանդես է գալիս ա չծորդության բայերի կազմության մեջ՝ ընկնելով ալ բայական մասնիկի և բայարմատի միջև։ Այս ածանցը խիստ կենսունակ է և, ինչպես արդեն ասվել է «Բայակազմություն» բաժնում, ալ մասնիկի հետ մասնակցում է այլ խոսքի մասերից վերածության, փոխակերպման իմաստով բայերի կերտմանը։ Օրինակ՝ ագահ+անալ, հզոր+անալ, համեղ+անալ, ուժեղ+անալ, հարստ+անալ, խոնավ+անալ, եղբայր+անալ, ծով+անալ, գեղեցկ+անալ, մեծ+անալ և այլն։ Սրանք չունեն իրենց ածանցաղուրկ զուգահեռները և հիմնականում չեզոք սեռի են։

Մանոթ.—Ժամանակակից հայերենում կան հնից ավանդված որոշ թվով ան ածանցով բաղադրված ձևեր, որոնց մեջ վերածման-փոխակերպման իմաստը խիստ մթագնել է։ Դրանցից են՝

[26] *Տե՛ս նշվ. աշխ., էջ 213։*

գողանալ, գոյանալ, զայրանալ, զարգանալ, զարմանալ, զլանալ, ընթանալ, իմանալ, հասկանալ, հեռանալ, հիանալ, հղանալ, հրդփանալ, մաճանալ, մոռանալ, սլանալ, ստանալ, սմանչանալ, վերջանալ, ուրանալ և այլն։ *Սրանցից մի քանիսը ներգործական սեռի են. ինչպես՝* գողանալ, իմանալ, ուրանալ, մոռանալ, հասկանալ և այլն։ *Այս բայերից մի քանիսի արմատները առանձին կիրառություն չունեն և պահպանվել են միայն տվյալ բաղադրություններիմեջ. ինչպես՝* զայր+անալ, մոռ+անալ, ընթ+անալ, հի+անալ, սմանչ+անալ, զարգ+անալ, զարմ+անալ։

Ան *ածանցով բաղադրված մի քանի բայեր ունեն իրենց ածանցազուրկ տարբերակը։ Դրանք են՝* անձկանալ—անձկալ, լողանալ—լողալ, լվանալ—լվալ, կաղանալ—կաղալ, ցանկանալ—ցանկալ, ցոլանալ—ցոլալ։ *Այս զուգահեռ ձևերը ժամանակակից հայերենում ունեն կա՛մ բառիմաստային և կա՛մ քերականական տարբերություններ։ Այսպես՝* լողալ—լողանալ, կաղալ—կաղանալ *զուգահեռները տարբեր են իրարից բառիմաստով։* Լողալ *նշանակում է լող տալ, ջրի երեսին մնալ, չսուզվել, ինչպես նաև՝ փոխաբերաբար որևէ ասպարեզում իրեն լավ՝ ազատ զգալ։ Իսկ* լողանալ *նշանակում է ջրի մեջ մտնել՝ մաքրվելու կամ զովանալու համար, ջրով մաքրվել, լոգանք ընդունել։* Կաղալ *նշանակում է կաղ քայլել, ինչպես նաև՝ փոխաբերաբար որևէ բնագավառում ետ մնալ, իսկ* կաղանալ՝ *կաղ դառնալ, այսինքն՝ վերջին դեպքում ածանցը ունի վերածման նշանակություն։*

Մյուս զուգահեռները՝ անձկալ—անձկանալ, լվալ—լվանալ, ցանկալ—ցանկանալ *ունեն միայն շատ թույլ արտահայտված կերպային տարբերություններ։ Ան ածանցը այստեղ բայերին տալիս է գործողության տևականության թույլ իմաստ*[27]։

Ան *ածանցն ունեցող մի շարք բայեր իրենց ածանցազուրկ զուգահեռներն ունեն և լծորդությամբ։ Դրանք ըստ իրենց բառական-քերականական նշանակության բաժանվում են երկու խմբի.*

---

27 *Դրաբարում այս տիպի զուգահեռները ավելի մեծ թիվ էին կազմում և տևականության իմաստը ավելի ուժեղ էր արտահայտված. այսպես՝* ամուլ-ամլանալ, անձկալ-անձկանալ, բաղձալ-բաղձանալ, զղջալ-զղջանալ, ըղձալ-ըղձանալ, խոռխոտալ-խոռխոտանալ, ծուլալ-ծուլանալ, մուրալ-մուրանալ, յոխորտալ-յոխորտանալ, ոխալ-ոխանալ, պանծալ-պանծանալ, սոսկալ-սոսկանալ, տեղչալ-տեղչանալ, փրփրալ-փրփրանալ *և այլն (տե՛ս նշվ. աշխ., էջ 226)։*

ա) բայեր, որոնք թե ածանցավոր և թե անածանց ձևերում չեզոք սեռի են։ Օրինակ՝ ապշանալ—ապշել, բարկանալ—բարկել, բթամտանալ—բթամտել, գիշերանալ—գիշերել, դալարանալ—դալարել, դեղնանալ—դեղնել, զառամանալ—զառամել, թանկանալ—թանկել, թանձրանալ—թանձրել, ժրանալ—ժրել, ծանծաղանալ—ծանծաղել, ծանրանալ—ծանրել, ծառայանալ—ծառայել, ծարավանալ—ծարավել, ճաճախանալ—ճաճախել, նվազանալ—նվազել, չերմանալ—չերմել, փափկանալ—փափկել *և այլն (սրանց թիվը բավական շատ է)։ Այս զուգահեռների միջև կան հետևյալ տարբերությունները. ան ածանցով ձևերը բոլոր դեպքերում անխտիր ունենում են վերածության իմաստ (իհարկե խոսքը հիմնական իմաստի մասին է), իսկ ածանցազուրկ ձևերը ոչ բոլոր դեպքերում են ունենում այդ իմաստը, այն էլ ոչ այնքան ցայտուն, ինչպես ածանցավոր ձևերը։ Այսպես՝* դալարել, դեղնել, դժգունել, ծանծաղել, կակղել, կանաչել, կարմրել, նվազել *և այլն. վերածության իմաստը արտահայտում են ավելի թույլ, քան* դալարանալ, դեղնանալ, դժգունանալ, ծանծաղանալ, կակղանալ, կանաչանալ, կարմրանալ, նվազանալ *և այլ ածանցավոր զուգահեռները։*

Այս զուգահեռներից ածանցազուրկ ձևերը շատ հաճախ բոլորովին չեն ունենում վերածության իմաստ։ Օրինակ՝ ամպել, գիշերել, ծաղրել, ծառայել, կայծել, ճաճախել, պարապել, չերմել *և այլն։ Խիստ թույլ է նաև սրանց իմաստային կապը համապատասխան ածանցավոր ձևերի հետ, այսպես՝* ամպել *նշանակում է ամպերով ծածկվել, իսկ* ամպանալ՝ *ամպ դառնալ, ամպի վերածվել,* գիշերել *նշանակում է գիշերը որևէ վայրում անցկացնել, իսկ* գիշերանալ՝ *գիշեր դառնալ, գիշերը վրա հասնել։ Երբեմն այս զուգահեռ ձևերը իրարից իմաստով այնքան հեռու են, որ նրանց միջև կապ տեսնելը դժվար է, թեև ունեն նույն արմատը։ Օրինակ՝* դիմանալ—դիմել, ծառանալ—ծառայել, չերմանալ—չերմել *և այլն։*

Իմաստով իրար մոտ զուգահեռների միջև կա նաև այն տարբերությունը, որ ան ածանցը ածանցազուրկ ձևի առկայության դեպքում վերածության իմաստի հետ միաժամանակ բային տալիս է այդ վերածության տևականության գաղափար, մի բան որ բացակայում է ածանցազուրկ ձևերում։ Օրինակ՝ կանաչել—կանաչանալ, դալարել—դալարանալ, նվազել—նվազանալ, նիհարել—նիհարանալ *և այլն։*

բ) Բայեր, որոնց ե լծորդությամբ ածանցազուրկ զուգահեռ ձևերը ներգործական սեռի են։ Օրինակ՝ բարդանալ—բարդել, գնդանալ—գնդել, դատարկանալ—դատարկել, խոնարհանալ—խոնարհել, կլորանալ—կլորել, կոպտանալ—կոպտել, հստականալ—հստակել, մանրանալ—մանրել, նեղանալ—նեղել, չորանալ—չորել, պնդանալ—պնդել *և այլն։*

Այս զուգահեռ ձևերում ևս կազմության տարբերությունը առաջ է բերում ոչ միայն քերականական տարբերություններ (սեռի, կերպի), այլև բայիմաստի, որը հաճախ երկու ձևերում խիստ տարբեր է։ Օրինակ՝ բարդանալ—բարդել, չորանալ—չորել, ձևանալ—ձևել, նեղանալ—նեղել, սերտանալ—սերտել *և այլն։ Եթե այս ենթախմբի ան ածանցով ձևերը, առանց բացառության, դրսևորում են վերածման գաղափար և պատկանում են չեզոք սեռին, ապա ածանցազուրկ ե լծորդությամբ ձևերը լինում են կրկնասեռ, այսինքն՝ ներգործականությանը զուգահեռ կարող են արտահայտել նաև չեզոք սեռի իմաստ՝ դրսևորելով վերածման գաղափար։ Բերենք մի քանի օրինակ։ Եթե* պարզանալ *բոլոր դեպքերում նշանակում է պարզ դառնալ, ապա* պարզել *նշանակում է 1. պարզ դարձնել և 2. պարզ դառնալ (երկինքը պարզել է), նույն ձևով՝* երկարանալ—երկարել, խավարանալ—խավարել, նոսրանալ—նոսրել, վստահանալ—վստահել *և այլն։*

§ 328. Ժամանակակից հայերենում կան մի քանի ե խոնարհման բայեր, որոնց մեջ թեև առկա է ան բայածանցը, սակայն այն քարացած է և հանդես է գալիս որպես բայարմատի մաս։ Դա երևում է նրանից, որ ածանցը պահպանվում է խոնարհման բոլոր ձևերում և քերականական-հիմքակազմիչ դեր չի կատարում։ Դրանք են՝ բեկանել, կլանել, ուսանել, ընկողմանել *(բեկաննեց, կլաննեց, ուսաննեց, ընկողմաննեց)։*

§ 329. Ն*ե—Ժամանակակից հայերենում են ածանցը հանդես է գալիս ա լծորդությամբ։ Այս ածանցով գործածվող բայերի թիվը խիստ սահմանափակ է։ Դրանք են՝* արբենալ, արժենալ, գիտենալ, ընտանենալ, կամենալ[28], կարենալ, հագենալ, մերձենալ, մոռենալ, պարծենալ, վախենալ, ուզենալ, ունենալ։ *Այս բայերից մի*

28 *Անցյալ դարի հեղինակների մոտ հանդիպում է այս բայի գրաբարյան կամիմ ձևը, բայց այժմ այն բոլորովին դուրս է եկել գործածությունից։*

քանիսը գալիս են դեռևս գրաբարյան շրջանից, մյուսները՝ միջին հայերենից և բարբառներից։ Եվ բայածանցով այժմ բայեր չեն ստեղծվում։

Այս բայածանցով բաղադրված բայերը ևս բաժանվում են երկու ենթախմբի. 1. բայեր, որոնք զուգահեռ ածանցազուրկ ձևեր չունեն (կամենալ, հագենալ, մերձենալ, մոտենալ, պարծենալ), *և 2. բայեր, որոնք ունեն ածանցազուրկ զուգահեռներ* (արբենալ—արբել, արժենալ—արժել, գիտենալ—գիտեմ, վախենալ—վախել, ուզենալ—ուզել, ունենալ—ունեմ)։ *Այս ածանցով բաղադրված ածանցազուրկ զուգահեռ չունեցող բայերում են ածանցն ունի միայն բայակազմական և հիմքակազմիչ դեր (հագենալ, պարծենալ և այլն), իսկ ածանցազուրկ զուգահեռներ ունեցող բայերում՝ նաև տևական կերպի թույլ արտահայտված իմաստ։ Բայածանցի բաղադրական դերը այստեղ թույլ է, քանի որ առանց ածանցի էլ այդ բայերը կան, կիրառվում են (վախել—վախենալ, ուզել—ուզենալ և այլն)։*

§ 330. Հայտնի է, որ են ածանցը առաջացել է ան-ի հնչյունափոխությունից (ան-ի ա ձայնավորը բառավերջի ի-ի հետ տվել է ե[29]), *սակայն ժամանակակից հայերենում այն չի պահպանել վերածության գաղափար արտահայտելու դերը։ Այդ դերով ժամանակակից հայերենում գործառում է ան բայածանցը, ներառյալ նաև այն դեպքերը, երբ բայի հիմքում ընկած անուն խոսքի մասը վերջանում է ի-ով. ինչպես՝ կղզիանալ, հավաստիանալ, խնամիանալ, շոգիանալ և այլն։*

§ 331. Ն—Այս բայածանցը ևս ծագումով կապված է ան-ի հետ և հանդես է գալիս ե յոթորդության սահմանափակ թվով բայերի մեջ։ Դրանք են՝ անցնել, առնել, բուսնել, գտնել, ելնել, ընկնել, թողնել, իջնել, լցնել, հագնել, համբնկնել, հասնել, հատնել, հարցնել, հեծնել, մեռնել, մտնել, տեսնել։

Սահոթ.— *Թվարկված բայերը գրաբարում մեծ մասամբ գործածվել են ան ածանցով, այսպես՝ գտանել, անցանել, բուսա-*

---

29 *Այս երևույթը հատկապես շատ տարածված էր միջին հայերենում, որտեղ ի-ով վերջացող բառերից վերածության իմաստով ստեղծված բայերը ունեին մեծ մասամբ են (բշնամ-ենալ, կատաղ-ենալ, խնամ-ենալ և այլն)։*

նել, հարցանել և այլն։ Այդ ածանցն առկա է նաև առնել, անել, դնել, լինել, տանել անկանոն բայերի մեջ։

Ա ընդդրությամբ և ածանցով կազմված են միայն բանալ, բառնալ, դառնալ բայերը և սրանցով բաղադրված մի քանի բայեր (անդրադառնալ, վերադառնալ և այլն)[30]։

Այս ածանցը ևս ժամանակակից հայերենում կենսունակ չէ. նրանով նոր բայեր այլևս չեն կազմվում։ Այն ունի հիմնականում քերականական արժեք, քանի որ հանդիսանում է հիշյալ բայերի ներկայի և անցյալի հիմքերի միակ տարբերակիչ միջոցը (ճագն—ճագ, մեռն—մեռ, ճասն—ճաս և այլն)։

§ 332. Ժամանակակից հայերենի մի շարք բայերում և ածանցը հանդես է գալիս քարացած ձևով և արդեն ձուլվել է արմատին։ Այսպես՝ զարթնել, զբոսնել, խրտնել, կալնել, ճառնել, ճատնել։ Այդ երևում է նրանից, որ հիշյալ բայերի անցյալի հիմքում ն-ն չի ընկնում (զարթնեցի, զբոսնեցի, խրտնեց, հատնեց, ոստնեց)։

Ծանոթ.— Ածանց չպետք է համարել բռնել, գետնել, խառնել, կանգնել, ճայտնել, մատնել և այլ բայերի կազմում լծորդից առաջ եղած ն-ն, որը այս կազմություններում բայարմատի կամ ածանցի մաս է։

§ 333. Ջ— Այս բայածանցը ևս մեծ ընդգրկում չունի և ժամանակակից հայերենում բայակազմական դերով հանդես չի գալիս։ Այս ածանցը պարունակող բայերը հետևյալներն են՝ դիպչել, թաքչել, թռչել, կորչել, կպչել, ճալչել, ճանգչել, սառչել, ուռչել, փախչել, փակչել, փչել։ Այն ևս կատարում է հիմնականում նույն դերը, ինչ որ նախորդ ն ածանցը, այսինքն՝ հակադրում է ներկայի և անցյալի հիմքերը։ Սակայն, ի տարբերություն ն-ի, չ ածանցը հաճախ կայուն կիրառություն չունի։ Որոշ բայերի մեջ այն կամ արդեն քարացել է (կառչել—կառչեց) կամ արդեն բռնել է քարացման ուղին։ Օրինակ՝ ճանգչել, դիպչել բայերի անցյալի հիմքից կազմված ձևերը գրականության մեջ հանդիպում են նաև չ-ի պահպանմամբ. Հանգչել են աչքերը (ՀԹ)։ Հանգչեց բազուկներիս վրա (Իս.)։ Հանգչած թուխ աչքեր (Ր)։ Չէր դիպչել (ԱԲ) և այլն։ Բացի այդ, բանավոր-խոսակցական լեզվում հաճախ նկատվում է չ ածանցի

30 Բարբառներում և խոսակցական լեզվում հանդիպում են և ածանցով շատ ձևեր, որոնց զուգահեռները գրական լեզվում ան-ով են. օրինակ՝ չարնալ, սևնալ, գիճովնալ և այլն։

փոխանցումը ն–ի. ինչպես՝ դիպնել, թռնել, հանգնել, կպնել, որոնք բանավոր խոսքից համաչափ թափանցում են գրավոր լեզվի մեջ։ Օրինակներ՝ Սարյակները բնից բույն էին թռնում աշխույժ ճովողյունով (ԱՒ, Խոնարհ աղջիկը)։ Դու մտածիր, մինչև ես դիպնեմ մառան՝ դառնամ (ԳՄ, Այրվող այգեստաններ)։ Դես է վազում, դեն է թռնում (ՊՍ, Անլռելի զանգակատուն)։ Իհարկե, հանձնարարելի և գրական պետք է համարել չ ածանցով ձևերը[31]։

§ 334. Չ ածանց ունեցող մի քանի բայեր ժամանակակից հայերենում ունեն վ ածանցով զուգահեռներ, որոնք իմաստով լրիվ համընկնում են. այսպես՝ թաֆչել—թաֆնվել, հալչել—հալվել, փլչել—փլվել։ *Այս երկու ձևերն էլ հավասար տարածում ունեն և հանձնարարելի են, սակայն այժմ անցյալի հիմքով կազմված ձևերում սկսել են գերիշխել վ–ով ձևերը (փլվեց, հալվեց), իսկ* թաֆչել *բայը ընդհանրապես իր տեղն արդեն զիջել է* թաֆնվել *ձևին։*

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՅԱԾԱՆՑՆԵՐ

§ 335. Քերականական են կոչվում այն բայածանցները, որոնք ածանցվելով արդեն գոյություն ունեցող բայերին, վերջիններիս տալիս են հատուկ քերականական իմաստներ։

Քերականական բայածանցները ժամանակակից հայերենում բաժանվում են երկու խմբի՝ կերպային և սեռային ածանցներ։

Ժամանակակից հայերենն ունի միայն մեկ տիպի կերպածանց՝ բազմապատկական-սաստկական կերպածանցները։ Մասամբ պահպանվել է նաև տևական կերպը, որը դրսևորվում է ած բայածանցով, սակայն քանի որ վերջինս ունի նաև բազադրական-բայակազմական դեր, որն այդ ածանցի հիմնական պաշտոնն է, այն քննվել է բաղադրական-քերականական ածանցների խմբում (§ 327—328)։

Սեռային ածանցները ժամանակակից հայերենում երկուսն են՝ պատճառական և կրավորական սեռածանցներ։

Քերականական ածանցները բաղադրական-քերականական

31 Դրաբարում ևս այս բայերից մի քանիսը ունեին ն–ով և ու յոդությամբ զուգահեռ ձևեր. թոչել—թոնով, հանգչել—հանգնով և այլն։

ածանցների համեմատությամբ ունեն այն առանձնահատկությունը, որ նրանցով բաղադրված բայերը ունեն իրենց ածանցազուրկ զուգահեռները։ Այսինքն՝ սրանք ածանցվում են լեզվում արդեն իսկ գոյություն ունեցող բայերին։ Վերջիններս հանդիսանում են սկզբնաձև նրանց համար։ Այսպես՝ կոտրել—կոտրատել, կոխել—կոխոտել, ջարդել—ջարդվել—ջարդոտել, գրել—գրվել—գրոտել, վազել—վազեցնել, խմել—խմեցնել *և այլն։*

ԲԱԶՄԱՊԱՏԿԱԿԱՆ-ՍԱՍՏԿԱԿԱՆ ԿԵՐՊԱԾԱՆՑՆԵՐ

§ 336. Ժամանակակից հայերենի բազմապատկական կերպածանցները հիմնականում երեքն են՝ ուտ, ատ, տ։ *Սրանք ունեն կիրառության նեղ ոլորտ։ Կարող են ածանցվել միայն սահմանափակ թվով բայերի։ Հազվադեպ գործածվում են նաև* կոտ, կլտ, կտ, ռուտ, ռտ, շտ, կրտ *բաղադրյալ ածանցները։*

Այս ածանցներն ունեն այն առանձնահատկությունը, որ ածանցվելով հիմնականում կազմությամբ պարզ բայերի՝ դրվում են բայարմատի և բայական վերջավորությունների միջև՝ պահպանվելով բոլոր բայաձևերում (կոտրատում են, կոտրատեցի, պատառոտեց, ճաշոտեցին *և այլն)։*

§ 337. Բազմապատկական-սաստկական բայածանցներով բայերը արտահայտում են մեկի կամ մի քանիսի կողմից գործողության (եղելության) բազմապատիկ կամ հաճախ կատարումը մեկ կամ շատ առարկաների նկատմամբ, այլև շատ տեղերում։ Այս իմաստը հաճախ զուգակցվում է գործողության սաստկացման գաղափարով։ Վերջինս դրսևորվում է կամ հենց նույն ածանցի միջոցով և կամ առանձին սաստկական ածանցով։ Այսպես՝ եթե կոխել *նշանակում է մեկ տեղ մեկ անգամ ոտք դնել, ապա* կոխոտել *նշանակում է կամ մի տեղում գործողությունը մի քանի անգամ կրկնել, կամ շատ տեղեր կոխել, իսկ* կոխրտել *ձևը ստանում է լրացուցիչ սաստկական իմաստ։*

Բազմապատկական կերպի արտահայտմամբ ածանցների միջոցով հատուկ է հատկապես բարբառներին և ժողովրդական-խոսակցական լեզվին, որից էլ անցել է գրական լեզվին։

§ 338. Ուտ—*Այս ածանցը բազմապատկական կերպածանցներից ամենատարածվածն է։ Օրինակ՝* բռնել—բռնոտել, խոցել—

խոցոտել, ծակել—ծակոտել, կապել—կապոտել, կոխել—կոխոտել, կրծել—կրծոտել, մորթել—մորթոտել, նստել—նստոտել, պատռել—պատառոտել, պոկել—պոկոտել, ջարդել—ջարդոտել, ջնջել—ջնջոտել, սատկել—սատկոտել, ցատկել—ցատկոտել և այլն։ *Այս կերպածանցով բաղադրվում են ճնշող մեծամասնությամբ ներգործական սեռի բայերը* (գրել, ջնջել, ջարդել, պոկել և այլն)։ *Չեզոք սեռի բայերը միայն հազվադեպ կարող են բազմապատկական կերպածանց ընդունել. այսպես՝* նստոտել *(մի քանի հոգի շատ տեղերում նստել),* ցատկոտել, սատկոտել, կանգնոտել *(Գայլերը հեռու կանգնոտել ժնգժնգում են—Հթ)։*

Այս կերպածանցի ցույց տված բազմապատկականության կոնկրետ նշանակությունը կախված է բառիմաստից և կիրառությունից։ Մի դեպքում այն կարող է նշանակել մի գործողությունը շատերի կողմից կատարվել. ինչպես՝ նստոտել, սատկոտել, կանգնոտել, *մեկ հոգու կողմից գործողությունը մի քանի անգամ կրկնվել (Նա պատառոտեցի թուղթը։ Նա ցատկոտում է) և կամ շատերի կողմից շատ տեղերում կամ նույն տեղում կատարվել (Նրանք պոկոտում են ծաղիկները, ջարդոտում են փայտերը և այլն)։*

Ծանոթ.— Ոտ *բազմապատկական կերպածանցը չպետք է շփոթել* ոտ *ածականակերտ ածանցի հետ, որը հաճախ հանդես է գալիս բայերի կազմության մեջ, երբ բայը բաղադրված է լինում այդ ածանցով կազմված ածականից, ինչպես՝ ջրոտել, թթանաքոտել, կեղտոտել, յուղոտել, մեղրոտել, ցեխոտել, ժանգոտել և այլն։ Սրանք կամ չունեն իրենց զուգահեռ ածանցազուրկ ձևերը (կեղտոտել, ժանգոտել և այլն), կամ եթե ունեն էլ, ապա այդ զուգահեռների միջև տարբերությունը ոչ թե կերպային է, այլ բառիմաստային։ Օրինակ, ջրել նշանակում է ջուր ցանել, ջուր տալ, իսկ ջրոտել՝ ջրոտ դարձնել, յուղել նշանակում է յուղ քսել, իսկ յուղոտել՝ յուղոտ դարձնել և այլն։ Ինչպես երևում է, բերված օրինակներում* ոտ*–ը չունի բազմապատկական նշանակություն, այն տրվյալ կազմություններում կերպածանց չէ։ Իհարկե, հազվադեպ պատահում են դեպքեր, երբ միևնույն բայի կազմության մեջ հանդես եկած* ոտ*–ը տարբեր կոնտեքստերում ունենում է կամ կերպային իմաստ և կամ դրսևորում է անվանական ածանցի իմաստ, այսինքն՝ որոշ բայերում այն հանդես է գալիս որպես համանուն ածանց։ Օրինակ՝ մրոտել նշանակում է և՛ մրոտ դարձնել (ձեռքը,*

երեսը, շորերը), և՛ շատ տեղերում կամ շատ անգամ մրել, մուր քսել:

§ 339. Ատ—*Այս բայածանցով ժամանակակից հայերենում հա-մեմատաբար քիչ բազմապատկական բայեր են կազմվում: Դրանցից կարելի է թվել մի քանի շատ գործածականները՝* կոտրել—կոտրատել, կտրել—կտրատել, փետրել—փետրատել, ծռմռել—ծռմռատել, ճուրճրալ—ճուրճրատել: *Վերջին երկու բայերում* ատ *ածանցը ունի առավելապես սաստկական իմաստ: Գործողության բազմապատկական իմաստը այստեղ դրսևորվում է հիմնականում բայարմատի կրկնությամբ* (ճուրճրալ, ծռմռել):

Ծանոթ.— *Այս ածանցը ևս չպետք է շփոթել համանուն* ատ *ածանցի հետ, որով բաղադրվում են և՛ անուններ, և՛ բայեր: Օրինակ՝* գլխատել, ճորատել, ճորթատել, տողատել *և այլ բայերում* ատ–ը *չունի բազմապատկական-սաստկական իմաստ:*

§ 340. Տ—*Այս ածանցով բաղադրված բազմապատկական-սաստկական կերպի բայերը ևս ժամանակակից գրական հայերենում քիչ գործածություն ունեն: Դրանցից կարելի է նշել հետևյալ առավել գործածականները՝* կոտրել—կոտրտել, ճխլել—ճխլտել, ցատկել—ցատկտել, փնտրել—փնտրտել, ոլորել—ոլորտել, փշրել—փշրտել: Տ *ածանցը ևս նախորդ* ոտ, ատ *ածանցների նման բայերին տալիս է գործողության բազմապատկություն, երբեմն նաև սաստկական իմաստ: Այն, որ այս երեք ածանցներն էլ բայերին տալիս են նույն նշանակությունը, երևում է նաև այն բանից, որ երբեմն նույն բազմապատկական իմաստն արտահայտելու համար բայերը ստանում են այս ածանցներից կամ մեկը, կամ մյուսը, երբեմն ստեղծելով միևնույն բայի երկու տարբերակներ՝ լրիվ նույն նշանակությամբ, այսպես՝ կոտրել—կոտրատել—կոտրտել, ցատկել—ցատկոտել—ցատկտել, կտրել—կտրատել—կտրտել, ճանկռել—ճանկռոտել—ճանկռոտտել, պատռել—պատռոտռել—պատրոտռել:*

Ոտ, ատ *և* տ *ածանցներին բազմապատկականության իմաստ տալիս է բոլորի համար ընդհանուր* տ *բաղադրիչը:*

§ 341. Ժամանակակից գրական հայերենում բազմապատկական կերպը սակավ դեպքերում դրսևորվում է նաև կոտ, կլտ, կտ, ոտ, րտ, կրտ, շտ *բաղադրյալ ածանցներով, որոնց բաղադրիչներից մեկը՝* տ–ն *ընդհանուր է բոլորի համար և մեզ ծանոթ բազմա-*

պատկական ածանցն է, իսկ մյուս բաղադրիչները՝ կ, կլ, ռ, ր, կր, չ սաստկական ածանցներն են, որոնք գործողությանը տալիս են սաստկացման, զորացման նշանակություն։

Բերենք օրինակներ յուրաքանչյուր ածանցի համար։

ա) **Կոտ** *ածանցը գրական հայերենում գործածվում է հիմնականում* թռչկոտել *շատ տարածված բայի մեջ։ Մյուս՝ գրականության մեջ հազվադեպ հանդիպող օրինակները ունեն բարբառային երանգավորում. օրինակ՝* ճմլկոտալ, խլչկոտել։

բ) **Կլտ** *ածանցը գրականության մեջ հանդիպում է դարձյալ շատ տարածված* բոցկլտալ, կայծկլտալ, ճեծկլտալ *բայերի մեջ և ունի բազմապատկական-սաստկական նշանակություն։*

գ) **Կտ** *ածանցը հանդիպում է* բզկտել *բայի մեջ, ինչպես նաև ոչ գրական* թալկտել, թելկտալ *և այլ ձևերում։*

դ) **Բտ, ռտ, շտ** *ածանցները բազմապատկական-սաստկական նշանակությամբ շատ տարածված են բարբառներում, որտեղից էլ հաճախ թափանցում են գրական լեզվի մեջ։ Օրինակ՝* ծակըրտել, չարդրտել, բանդրտել, ճանկրտել, խառնշտել։ **Բտ**-*ն գործածվում է նաև մի շարք բնաձայնական բայերում. ինչպես՝* զրնգրտալ, թխկրտալ, շխկրտալ, չխկրտալ *և այլն։*

ե) **Կրտ (կոտ)** *բաղադրյալ ածանցը ևս հատուկ է ժողովրդական-խոսակցական լեզվին և այնտեղից է մուտք գործել գրականության լեզվի մեջ։ Այդ ածանցով բաղադրված բայերից են՝* ծեծկրտել, կռխկրտել, բաշկոտել *և այլն։*

Երբեմն վերը նշված ածանցներին միանում է նաև որ-*ը. ինչպես՝* ճխլտորել, պատտորել, խառնշտորել, բանդրտորել։ *Այն հանդես է գալիս նաև կրկնավոր բարդություններում։ Օրինակ՝* վախվխտորել, խաբխբորել, պաշպշորել *և այլն։ Այս բոլոր ձևերը ևս բարբառային են և հատուկ են ժողովրդական-խոսակցական լեզվին։*

Բազմապատկական-սաստկական ածանց է համարվում նաև ատակ-*ը* փայլատակել, կարմրատակել *բայերի մեջ։*

§ 342. Բազմապատկական կերպը ժամանակակից հայերենում դրսևորվում է ոչ միայն ածանցման միջոցով, այլ նաև բայարմատի կրկնությամբ։ Այսպես՝ վազել—վազվզել, զնգալ—զնգզնգալ, *թափել—թափթփել, ծռել—ծռմռել, ճաքել—ճաճճել, ջոկել—ջոկջկել, քաշել—*բաշբշել *և այլն։ Այս ձևերը ևս ժամանա-*

կակից գրական հայերենի մեջ մուտք են գործել հիմնականում բարբառներից և ժողովրդական-խոսակցական լեզվից։

Բայական կրկնավորներից բազմապատկական կերպի իմաստ, այսինքն՝ գործողության կրկնություն, սաստկություն են ցույց տալիս միայն նրանք, որոնք ունեն իրենց զուգահեռ պարզ ձևերը. ինչպես՝ գոռալ—գոռգոռալ, ճոռալ—ճոռճոռալ, ջարդել—ջարդ-ջրդրել և այլն։ Մի շարք կրկնավոր բայերում, որոնց զուգահեռ պարզ ձևերը ժամանակակից հայերենում չկան, գործողության բազմապատկականության իմաստը մթագնել է կամ բոլորովին բացակայում է։ Օրինակ՝ ջախջախել, ճայթայթել, այլայլվել, չար-չարել. ֆայֆայել և այլն[32]։

ՍԵՌԱՅԻՆ-ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՅԱԾԱՆՑՆԵՐ

§ 343. Սեռային քերականական բայածանցները ժամանակակից հայերենում երկուսն են՝ պատճառական և կրավորական։ Սրանք ևս, կերպածանցների նման, դրվում են արդեն գոյություն ունեցող բայերի վրա և ունեն այն ընդհանրությունը, որ փոխում են բայերի սեռը։ Այսպես՝ վազել—վազեցնել, նստել—նստեցնել, փախչել—փախցնել, խաղալ—խաղացնել, կանգնել—կանգնեցնել և ջարդել—ջարդվել, կառուցել—կառուցվել, խմել—խմվել, գլորել—գլորվել, սիրել—սիրվել, փշրել—փշրվել և այլն։ Բերված օրինակներից առաջին խմբում պատճառական բայածանցը դրվելով չեզոք սեռի բայերի վրա՝ կերտել է պատճառական սեռի բայեր, իսկ օրինակների երկրորդ խմբում վ բայածանցի միջոցով ներգործական սեռի բայերից կերտվել են կրավորական սեռի բայեր։

ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԱԾԱՆՑ

§ 344. Պատճառական բայածանցը ժամանակակից հայերենում մեկն է՝ ց։ Բայերին պատճառականության իմաստ է տալիս և սեռափոխիչ դեր է կատարում այդ ածանցի ց բաղադրիչը, իսկ ն–ն, որը նախկին տևական կերպի ածանցն է (ույց+ան), կատարում է միայն հիմքակազմիչ դեր։ Այդ է պատճառը, որ այն պահպանվում է միայն պատճառական բայերի ներկայի հիմքում և նրանով կազմված ժամանակներում։ Անցյալի հիմքում ն–ն փո-

32 Մանրամասն տե՛ս Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 136—156։

խարինվում է ր հիմքակազմիչով։ Օրինակ՝ վազեցնել—վազեցրել, կերցնել—կերցրել, հագցնել—հագցրել, խաղացնել—խաղացրել, մոտեցնել—մոտեցրել, իջեցնել—իջեցրել և այլն։

Շատ հաճախ ցն բայածանցը հանդես է գալիս ա և ե ձայնավորների (լծորդների) հետ. ինչպես՝ կարդացնել, խաղացնել, մեծացնել, ուտեցնել, վազեցնել, կանգնեցնել և այլն։ Այդ է պատճառը, որ հայ քերականագիտության մեջ ասվում է նաև, որ ժամանակակից հայերենի բայածանցները երեքն են՝ ացն, եցն, ցն։

Պատճառական բայածանցը դրվում է ինչպես պարզ բայերի, այնպես էլ բաղադրական-քերականական ածանց ունեցող բայերի վրա։

§ 345. Ժամանակակից հայերենում ցն բայածանցը, որպես կանոն, դրվում է բայերի անցյալի հիմքի վրա։ Եթե բայի անցյալի հիմքը անցոյական է, պատճառական բայածանցը հանդես է գալիս առանց ա կամ ե լծորդի։ Օրինակ՝ փախչել—փախ+ցն+ել, հասնել—հաս+ցն+ել, տեսնել—տես+ցն+ել, մեռնել—մեռ+ցն+ել, մտնել—մտ+ցն+ել, հագնել—հագ+ցն+ել, դիպչել—դիպ+ցն+ել, թռչել—թռ+ցն+ել, կպչել—կպ+ցն+ել, հանգչել—հանգ+ցն+ել և այլն։ Բացառություն է կազմում իջնել բայը, որի անցյալի հիմքը թեև անցոյական է՝ իջ, սակայն պատճառականի կազմության ժամանակ ցն բայածանցի հետ հանդես է գալիս ե լծորդը՝ իջ+ե+ցն+ել։

§ 346. Բայերի ցոյական անցյալի հիմքի մոտ ցն ածանցը հանդիպում է անցյալի հիմքակազմիչ ց-ին, և վերջինս դուրս է ընկնում։ Ստացվում է այնպես, որ ա խոնարհման ցոյական հիմք ունեցող բայերի մեջ պատճառական ածանցի մոտ հանդես է գալիս ա լծորդը, իսկ ե խոնարհման ցոյական հիմք ունեցող բայերի մեջ՝ ե լծորդը։ Օրինակ՝ ապստամբել—ապստամբ+եց—ապստամբ+ե+ցն+ել, բռնել—բռն+եց—բռն+ե+ցն+ել, գաղթել—գաղթ+եց—գաղթ+ե+ցն+ել, աճել—աճ+եց—աճ+ե+ցն+ել, լռել—լռ+եց—լռ+ե+ցն+ել, խոսել+խոս+եց—խոս+ե+ցն+ել, խաղալ—խաղ+ացն—խաղ+ա+ցն+ել, կարդալ—կարդ+ացն—կարդ+ա+ցն+ել, զարմանալ—զարմ+ացն—զարմ+ա+ցն+ել, բարկանալ—բարկ+ացն—բարկ+ա+ցն+ել, մեծանալ—մեծ+ացն—մեծ+ա+ցն+ել և այլն։

§ 347. Այն բայերը, որոնք ժամանակակից հայերենում ունեն ե և ա խոնարհման զուգահեռ ձևեր, համապատասխանաբար զու-

գահեռ ձևեր ունեն նաև պատճառականում։ Այսպես՝ ցամաքել||ցամաքանալ—ցամաքեցնել||ցամաքացնել, դալարել||դալարանալ—դալարեցնել||դալարացնել, կանաչել||կանաչանալ—կանաչեցնել||կանաչացնել, դանդաղել||դանդաղանալ—դանդաղեցնել||դանդաղացնել և այլն։

§ 348. Ընդհանուր օրինաչափությունից շեղվում են մի քանի բայերի պատճառականները։ Դրանք են՝ դառնալ—դարձնել, վերադառնալ—վերադարձնել, չափազանցել—չափազանցնել։ Այս բայերում արմատական ձ և ց ձայնավորների մոտ պատճառական ց-ն ընկել է, մնացել է միայն ն-ն։ Ուտել բայը ունի պատճառականի երկու ձև՝ օրինաչափական կերցնել ձևը (կեր+ցն+ել) և նմանակումբյամբ կազմված ուտեցնել ձևը։

§ 349. Չեզոք սեռի այն բայերը, որոնք իրենց կազմում ունեն վ կրավորական ածանցը և առանց դրա չեն գործածվում (տե՛ս § 402), պատճառականի կազմության ժամանակ սովորաբար կորցնում են վ-ն։ Օրինակ՝ գժտվել—գժտեցնել, զբաղվել—զբաղեցնել, լվացվել—լվացացնել, հաշտվել—հաշտեցնել, հուսահատվել—հուսահատեցնել, մոլորվել—մոլորեցնել, սթափվել—սթափեցնել և այլն։

Ա. խոնարհման բայերը, ընդունելով պատճառական սեռածանց, փոխում են նաև իրենց խոնարհումը՝ վերածվելով ե խոնարհման։ Օրինակ՝ հասկանալ—հասկացնել, խաղալ—խաղացնել, մոտենալ—մոտեցնել և այլն։ Այսինքն՝ պատճառական սեռածանց ունեցող բոլոր բայերը, անկախ սկզբնաձևային բայի խոնարհումից, ենթարկվում են ե խոնարհման։

§ 350. Պատճառական բայածանցը ոչ բոլոր դեպքերում է, որ փոխում է բայերի սեռը։ Այսպես՝ դրվելով բնաձայնական բայերի վրա, բայերին տալիս է գործողության սաստկական իմաստ։ Օրինակ՝ խոմփալ—խոմփացնել, փռշտալ—փռշտացնել, դողալ—դողացնել, թրմփալ—թրմփացնել, փնչալ—փնչացնել, բլբլալ—բլբլացնել և այլն։ Այս երևույթը հատկապես շատ է տարածված ժողովրդական-խոսակցական լեզվում։ Իհարկե, կան մի շարք բնաձայնական բայեր, որոնք ենթարկվելով պատճառական ածացման, փոխում են իրենց սեռը՝ չեզոքից վերածվելով ներգործական բայերի։ Օրինակ՝ շրխկալ—շրխկացնել (դուռը), դմբդմբալ—

դմբդմբացնել (*գլուխը*), *չփչփալ*—չփչփացնել (*ջուրը, բերանը*) և այլն։

§ 351. *Պատճառական բայածանցը որոշ դեպքերում, հատկապես բայական փոխառությունների մեջ, ունի զուտ բայակազմական արժեք (§ 318), քանի որ այդ բայերը առանց ածանցի չեն գործածվում. դրանցից են՝* լիկվիդացնել, օկուպացնել, էվակուացնել, կոմբինացնել, մոտորացնել, մոբիլիզացնել և այլն։

Մանոք.—*Գրաբարից ավանդված մի շարք պատճառական բայերում բայածանցը քարացել է, և այդ բայերը արդեն չեն գիտակցվում իբրև պատճառական բայեր. դրանք են՝* զեկուցել, ծանուցել, կառուցել, հատուցել, հարուցել, մատուցել։

ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌԱԾԱՆՑ

§ 352. *Կրավորական վ սեռածանցը, դրվելով ներգործական և պատճառական սեռերի բայերի վրա, դրանք վերածում է անանցողական բայերի (մեծ մասամբ կրավորական սեռի բայերի)։ Օրինակ՝ սիրել*—սիրվել, *լսել*—լսվել, *խմել*—խմվել, *ջարդել*—ջարդվել, *իշեցնել*—իջեցվել, *հասկացնել*—հասկացվել և այլն։ *Այս ածանցն ունի այն առանձնահատկությունը, որ հաճախ կերտում է ոչ թե կրավորական սեռի բայեր, այլ կրավորաձև չեզոքներ։ Իհարկե, երկու դեպքում էլ այն ունի սեռափոխիչ դեր։*

§ 353. *Ե խոնարհման ներգործական բայերը կրավորականի վերածելիս վ սեռածանցը դրվում է ներկայի հիմքի վրա։ Օրինակ՝ գրել*—գր—գր+վ+ել, *տեսնել*—տես—տես+վ+ել, *գտնել*—գտն—գտն+վ+ել, *ջարդել*—ջարդ—ջարդ+վ+ել, *հաղթել*—հաղթ—հաղթ+վ+ել և այլն։

Ա խոնարհման բայերի կրավորականը կազմելիս վ ածանցը դրվում է անցյալի հիմքի վրա։ Այս դեպքում փոխվում է նաև բայի խոնարհումը։ Օրինակ՝ կարդալ—կարդաց—կարդաց+վ+ել, *հասկանալ*—հասկաց—հասկաց+վ+ել, *իմանալ*—իմաց—իմաց+վ+ել, *զգալ*—զգաց—զգաց+վ+ել և այլն։ *Այսպիսով, կրավորական բայածանց ունեցող բոլոր բայերը ևս, պատճառականների նման, պատկանում են ե խոնարհման։*

Ի տարբերություն պատճառական բայածանցի, որը բազմապատկական կերպածանց ունեցող բայերի վրա սովորաբար չի դրվում, կրավորական սեռածանցը կարող է դրվել նաև բազմապատկական կերպածանց ունեցող ներգործական սեռի բայերի վրա՝ փոխելով նրանց սեռը։ Օրինակ՝ կոտրատել—կոտրատվել, ջարդոտել—ջարդոտվել, կտրատել—կտրատվել *և այլն։ Ըստ որում, վ սեռածանցը դրվում է բազմապատկական ածանցից անմիջապես հետո։*

§ 354. Պատճառական բայերից կրավորականի կազմությամբ ժամանակ պատճառական ցն ածանցի ն բաղադրիչը ընկնում է. վերջինիս տեղը գրավում է վ-ն։ Օրինակ՝ մեծացնել—մեծացվել, սպիտակեցնել—սպիտակեցվել, փախցնել—փախցվել, կարդացնել—կարդացվել *և այլն։ Այստեղ տեղի է ունենում ա խոնարհման բայերի և նրանցից կազմված պատճառականների կրավորական ձևերի նույնացում. այսպես՝* կարդալ—կարդացվել *և* կարդացնել—կարդացվել, հասկանալ—հասկացվել *և* հասկացնել—հասկացվել *և այլն։*

§ 355. Վ բայածանցը ժամանակակից հայերենում երբեմն հանդես է գալիս որպես սոսկ բայակազմական-բաղադրական ածանց, այսինքն՝ որոշ բայեր, առանց այդ ածանցի, ժամանակակից հայերենում գոյություն չունեն։ Դրանցից են՝ գժվել, գժտվել, զբաղվել, զմայլվել, զզվել, լվացվել, խաղաղվել, խելագարվել, հարձակվել, բնակվել, հաշտվել, սխալվել *և այլն։ Բնականաբար այս բայերը ոչ թե կրավորական սեռի են, այլ չեզոք։*

ԲԱՅԱԿԱՆ ԼԾՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 356. Ժամանակակից հայերենի բայերի բայաձևերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բայակազմության և բայաձևերի փոփոխության մեջ մեծ դեր ունեն անորոշ դերբայի և վերջավորություններից, ինչպես նաև մի շարք այլ բայական վերջավորություններից առաջ հանդես եկող ե կամ ա ձայնավորները, որոնք քերականագիտության մեջ կոչվում են խոնարհիչներ կամ լծորդներ։ Ըստ խոնարհիչների կամ լծորդների ժամանակակից հայերենի բայերը բաժանվում են երկու մեծ խմբի՝ ե կամ I խոնարհման (լծորդության) բայեր և ա կամ II խոնարհման (լծորդության) բայեր։

ե խոնարհման են պատկանում այն բայերը, որոնք անորոշ

դերբայում ունեն եւ վերջավորությունը։ Օրինակ՝ գրել, վազել, աճել, ազդել, շարադրել, շրջել, լռել, փախչել, կարդացնել, ուտել, ջարդել, փշրվել, կոտրատել, դեղնել և այլն։

Ա. խոնարհման են պատկանում այն բայերը, որոնք անորոշ դերբայում ունեն ալ վերջավորությունը։ Օրինակ՝ աղալ, կարդալ, խաղալ, ուրախանալ, մնալ, շողալ, լվանալ, իմանալ, բոցկլտալ, լավանալ, ուժեղանալ և այլն։

§ 357. Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ժամանակակից հայերենում գերակշռում են ե խոնարհման բայերը։ Նրանք կազմում են բոլոր բայերի մոտավորապես 3/4-ը։ Մնացած բայերը պատկանում են ա խոնարհմանը։ Իմաստային որոշակի տարբերակում այս երկու խմբերի բայերի միջև գոյություն չունի, սակայն մոտավորապես կարելի է սահմանել, թե կառուցվածքային և քերականական ինչ առանձնահատկություններով են բնորոշվում այս խոնարհումները։

Թե՛ ե և թե՛ ա խոնարհման բայերը ըստ կազմության կարող են լինել պարզ և ածանցավոր։

§ 358. Ե խոնարհման պարզ բայերի ճնշող մասը ներգործական սեռի է, փոքր մասը՝ չեզոք սեռի։

Որպես կանոն, ե խոնարհման են պատկանում՝ ա) ճ, ջ ածանցներն ունեցող բայերը (փախչել, իջնել, թռչել, ընկնել, գտնել. մռնել և այլն)։ Բացառություն են կազմում բառնալ, դառնալ, բառնալ բայերը, բ) բազմապատկական-սաստկական բայածանց ունեցող բայերը չնչին բացառությամբ (կոտրատել, ջարդռտել, ընտռտել, գրռտել և այլն), գ) պատճառական և կրավորական սեռային-քերականական բայածանց ունեցող բոլոր բայերը՝ անկախ այն բանից, թե սկզբնաձևային բայերը որ խոնարհման են պատկանում (կարդացնել, վազեցնել, կերցնել, խմեցնել, մեծացնել, սիրվել, գրվել, ջարդվել, լսվել, հասկացվել և այլն), դ) ան բայածանցն ունեցող հետևյալ բայերը՝ բեկանել, ընկողմանել, ծանուցանել, ուսանել, ուսուցանել, սնուցանել։

§ 359. Ա. խոնարհման պարզ բայերի ճնշող մեծամասնությունը չեզոք սեռի է։ Ա. խոնարհման պարզ ներգործական սեռի բայերը փոքր թիվ են կազմում (աղալ, զգալ, շշնջալ, ուրսալ և այլն)։

Ածանցավոր բայերից ա խոնարհման են պատկանում միայն ան և են բաղադրական-քերականական բայածանցներով բաղադրը-

ված բայերը (մեծանալ, ուժեղանալ, մոտենալ, գիտենալ, պարծենալ, իմանալ, թուլանալ, համեղանալ *և այլն*), *ինչպես նաև մի քանի բազմապատկական-սաստկական կերպածանց ունեցող բայեր* (բոցկլտալ, ճեծկլտալ, թխկրտալ)։

Ա. խոնարհման մեջ մեծամասնություն են կազմում բնաձայնական բայերը (շրխկալ, զնգալ, կչկչալ, վշշալ, թշշալ, վրնջալ, փռշտալ *և այլն*) *և ան ածանցով բաղադրված բայերը։*

§ 360. Ժամանակակից հայերենում կան բայեր, որոնք հանդես են գալիս և՛ ա, և՛ ե խոնարհմամբ, այսինքն՝ ունեն գործածության զուգահեռ ձևեր։ Դրանք բաժանվում են երկու խմբի։

ա) Բայեր, որոնց հավասարապես գործածվող զուգահեռ ձևերը իմաստային որևէ տարբերություն չունեն։ Օրինակ՝ ափսոսալ—ափսոսել, փրփրալ—փրփրել, ոսոսալ—ոսոսել, տրոփալ—տրոփել *և այլն։*

բ) Բայեր, որոնց զուգահեռ ձևերը ե խոնարհմամբ ներգործական սեռի են, ա խոնարհմամբ՝ չեզոք սեռի։ Այսպես՝ երերալ—երերել, թվալ—թվել, խլրտալ—խլրտել, ծխալ—ծխել, ծփալ—ծփել, ցոդալ—ցոդել *և այլն։*

Բավական մեծ թիվ են կազմում բայերի այն զուգահեռ ձևերը, որոնց ա խոնարհման ձևերում հանդես է գալիս նաև ան բայածանցը։ Այս դեպքում ևս զուգահեռ ձևերը կարող են լինել և՛ նույնասեռ՝ իմաստային և կերպային որոշ տարբերակումով (բարակել—բարականալ, թանկել—թանկանալ, դեղնել—դեղնանալ, երկարել—երկարանալ, նվազել—նվազանալ, նվաղել—նվաղանալ *և այլն*), *և՛ տարբեր սեռերի* (դատարկել—դատարկանալ, հարթել—հարթանալ, **պատկերել—պատկերանալ** *և այլն*)։

Ծանոթ.—*Գրական լեզվի համար խորթ են և հանձնարարելի չեն մի շարք բայերի այն զուգահեռ խոնարհման ձևերը, որոնք տարածված են բանավոր խոսակցական լեզվում և երբեմն ներթափանցում են գրավոր լեզվի մեջ. օրինակ՝* խոսալ *փխնկ.* խոսել, հաչալ *փխնկ.* հաչել *և այլն։*

ԲԱՅԱՀԻՄՔԵՐ

Բայաձևերի, բայական համակարգի կառուցվածքի ամբողջական պատկերը տալու համար խիստ կարևոր նշանակություն ունի բայահիմքերի ուսումնասիրությունը։

Բայերի կառուցվածքի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բայերի մեջ տարբերակվում են երկու տիպի հիմք՝ բացարձակ հիմք և բայահիմքեր։

§ 361. Բացարձակ հիմք է կոչվում բայի այն մասը, որը ընդհանուր է տվյալ բայի բոլոր ձևերի համար։ Այսպես՝ գրեմ, գրում, գրեցի, գրող, գրած ձևերի բացարձակ հիմքն է գր-, որը ընդհանուր է գրել բայի բոլոր բայաձևերի համար։ Առողջացա, առողջանում, առողջացել, առողջացիր ձևերի համար ընդհանուր է առողջ- մասը, հագցնեմ, հագցրու, հագցրեց, հագցնում ձևերի և ընդհանրապես հագցնել բայի բոլոր ձևերի համար ընդհանուր է հագց- մասը, գրվեց, գրվելու, գրվիր, գրվեմ ձևերի համար՝ գրվ- մասը։ Այսպիսով, տվյալ բայերի համար գր-, առողջ-, հագց- և գրվ- մասերը բացարձակ հիմքեր են, որոնցից ածանցվում, կազմվում են այդ բայերի բոլոր բայաձևերը։

Բայերի բացարձակ հիմքը ստացվում է անորոշ դերբայից հանելով դերբայական վերջավորությունը և ան, են, ն, չ ածանցները, եթե այդպիսիք կան։ Պարզ բայերի և ան, են, ն, չ ածանցներն ունեցող բայերի բացարձակ հիմքը համընկնում է բայարմատի կամ բայի բառահիմքի հետ։ Վերջինս իր հերթին կարող է լինել բաղադրյալ։ Այսպես՝ առատագրել, լավաճալ, փախչել, համընկնել, գործադրել, ընկճել *բայերի բացարձակ հիմքերն են* առատագր-, լավ-, փախ-, համընկ-, գործադր-, ընկ-։

Եթե բայն ունի կերպային ածանց կամ սեռածանց, ապա այդ ածանցները պահպանվում են բայերի բոլոր ձևերում, այսինքն՝ մտնում են բայի բացարձակ հիմքի մեջ։ Այսպես՝ կատաղել, կոտրատել, թռչկոտել, բոցկլտալ, սիրվել, կարդացվել, հեռացվել *բայերի բացարձակ հիմքերն են* կոտրատ-, կոտրտ-, թռչկոտ-, բոցկլտ-, սիրվ-, կարդացվ-, հեռացվ-։ *Պատճառական ցն բայածանցից բացարձակ հիմքի մեջ մտնում է միայն ց բաղադրիչը (բուն պատճառականը), իսկ ն-ն պահպանվում է միայն որոշ բայաձևերում (ներկայի բայահիմքում)։ Այսպես՝* հեռացնել, մոռեցնել, կեռցնել, խաղացնել *բայերի բոլոր ձևերի համար ընդհանուր են, հետևաբար տվյալ բայերի բացարձակ հիմքերն են* հեռաց-, մոռեց-, կեռց-, խաղաց- *մասերը։*

§ 362. Բայահիմք է կոչվում բայի տարբեր ձևերի համար ընդհանուր այն մասը, որի վրա ավելանում են բայական վերջավորությունները՝ ստեղծելով տարբեր բայաձևեր։ Այսպես՝ գր+ել, գր+ող, գր+եմ, գր+եք, գր+ելու ձևերի համար ընդհանուր է, գր- մասը, իսկ գրեց+ի, գրեց+եք, գրեց+իմք ձևերի համար՝ գրեց-ը։ Մոռեն+ալ, մոռեն+ում, մոռեն+ամ ձևերի համար ընդհանուր է մոռեն- մասը, իսկ մոռեց+ող, մոռեց+իր, մոռեց+ած, մոռեց+ար ձևերի համար՝ մոռեց- մասը։ Հասն+ել, հասն+ում, հասն+ող, հասն+եմ ձևերի համար ընդհանուր է հասն- մասը, իսկ հաս+ա, հաս+ար, հաս+եք, հաս+իր ձևերի համար՝ հաս- մասը։ Ինչպես երևում է բերված օրինակներից, ամբողջական, ավարտված բայաձևեր ստեղծվում են այս ընդհանուր մասերի վրա տարբեր բայական վերջավորություններ ավելացնելով։ Հենց տարբեր բայաձևերի համար ընդհանուր այդ մասն էլ քերականագիտության մեջ կոչվում է բայահիմք։

§ 363. Ժամանակակից հայերենում բոլոր բայաձևերը (և՛ դիմավոր, և՛ անդեմ) կազմվում են երկու հիմքից՝ ներկայի կամ անորոշի հիմքից և անցյալի կամ կատարյալի հիմքից։

Ծանոթ.—է. Աղայանը ընդունում է նաև երրորդ բայահիմք՝ դերբայական բայահիմք, որից համապատասխան վերջավորությունների հավելումով կազմվում են ապառնի և զուգընթացական դերբայները[33]։

Բայահիմքը կարող է համընկնել բացարձակ հիմքի հետ (օրինակ՝ գր+ել, կարդ+ալ, վազ+եմ, հաս+ա, թռ+ավ, թռչկոտ+ում և այլն), իր կազմում ունենալ բացի արմատից նաև որևէ ածանց (օրինակ՝ մոռեն+ամ, հասն+եմ, փախչ+եմ, վազեցն+ել և այլն), ինչպես նաև հատուկ հիմքակազմիչ մասնիկներ (օրինակ՝ վազեց+ի, գրեց+ի, նստեցր+ի, կերցր+ի և այլն)։

Բայահիմքերի կազմությունը պայմանավորված է բայի լծորդությամբ և այն բանով, թե ինչպիսի կազմություն ունի տվյալ բայը, ածանցավոր է, թե՞ ածանցազուրկ։

---

33 *Տե՛ս* է. Աղայան, *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 327—330։*

ՆԵՐԿԱՅԻ ԿԱՄ ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅԻ ՀԻՄՔ

§ 364. Ներկայի հիմքը ե և ա լծորդության բոլոր բայերի համար որոշվում է նույն ձևով՝ անորոշ դերբայից անջատելով ել կամ ալ դերբայական վերջավորությունը (այդ պատճառով էլ այն կոչվում է նաև անորոշ դերբայի հիմք)։ Օրինակ՝ վազել, ճասնել, կարդալ, փախչել, լավանալ, մոտենալ, վազեցնել, սիրվել և այլ բայերի ներկայի հիմքերն են վազ-, ճասն-, կարդ-, փախչ-, լավան-, մոտեն-, վազեցն-, սիրվ- և այլն։

Ինչպես երևում է բերված օրինակներից, ներկայի հիմքը կարող է լինել և՛ պարզ (գր-, վազ-, կարդ- և այլն), և՛ ածանցավոր (ճասն-, փախչ-, մոտեն-, սիրվ-, վազեցն- և այլն)։ Դա կախված է այն բանից, թե ինչպիսի կազմություն ունի տվյալ բայի անորոշ դերբայը։ Եթե այն պարզ է, ուրեմն ներկայի հիմքը պարզ է, եթե այն ածանցավոր է, ներկայի հիմքը ածանցավոր է. այսինքն՝ բոլոր բայածանցները ներկայի հիմքում պահպանվում են։

§ 365. Ե և ա խոնարհման պարզ բայերի, ինչպես նաև բազմապատկական և կրավորական ածանցներ ունեցող բայերի ներկայի հիմքը համընկնում է նույն բայերի բացարձակ հիմքին, այսինքն՝ դրանք ունեն զրո հիմքակազմիչ (գր+ել, խմ+ել, կարդ+ալ, աղ+ալ, կոտրատ+ել, գրվ+ել, չարդ+վել, հասկացվ+ել և այլն)։

Ան, են, ն, չ բայածանցները, ինչպես նաև պատճառականի ե բաղադրիչը հանդես են գալիս միայն ներկայի հիմքում և հանդիսանում են հիշյալ բայերի ներկայի հիմքի հիմքակազմիչներ՝ հակադրվելով համապատասխանաբար անցյալի հիմքի աց, եց, ր և կամ զրո հիմքակազմիչներին (տե՛ս § 326, 344)։

Ներկայի հիմքից կազմվում են մի խումբ անդեմ և դիմավոր բայաձևեր (տե՛ս §§ 429, 436, 445, 456, 465, 468, 485)։

ԱՆՑՅԱԼԻ ՀԻՄՔ

§ 366. Ժամանակակից հայերենում բայերի անցյալի հիմքը կազմությամբ լինում է ցոյական և անցոյական։

Ցոյական են կոչվում անցյալի այն բայահիմքերը, որոնք կազ-

մըվում են բացարձակ հիմքին կցելով եց *կամ* աց *հիմքակազմիչ մասնիկները, ինչպես՝* գր+եց+ի, վազ+եց+իր, կարդ+աց+իր, խաղ+աց+իմ *և այլն։*

Անցոյական են կոչվում անցյալի այն բայահիմքերը, որոնք իրենց կազմում չունեն եց *կամ* աց *հիմքակազմիչները։ Օրինակ՝* ճաս+ա, փախ+իր, իջ+անք, տես+անք *և այլն։ Ինչպես երևում է բերված օրինակներից, անցոյական անցյալի հիմքը համընկնում է բայի բացարձակ հիմքի կամ բայարմատի հետ, այսինքն՝ ունի հիմքակազմիչ 0 մասնիկ, բացառությամբ* ցն *ածանց ունեցող բայերի։*

§ 367. Ժամանակակից հայերենի ե *և* ա *լծորդության բոլոր բայերը, բացառությամբ* ե *խոնարհման* ն, շ, ցն *բայածանցավոր բայերի, ունեն ցոյական անցյալի հիմք։ Այսպես՝* վազել—վազ+եց, աճել—աճ+եց, աղալ—աղ+ացր, խաղալ—խաղ+ացր, կտրատել—կտրատ+եց, հարձակվել—հարձակվ+եց, չարդվել—չարդվ+եց *և այլն։*

Անցոյական են միայն ե *խոնարհման* ն, շ, ցն *բայածանցներ ունեցող բայերը։ Օրինակ՝* գտնել—գտ+ա, փախչել—փախ+ա, թռչել—թռ+ա, կարդացնել—կարդացր+ի *և այլն։*

§ 368. ե *խոնարհման պարզ բայերի անցյալի հիմքը կազմվում է բայի բացարձակ հիմքի վրա ավելացնելով* եց *հիմքակազմիչը։ Օրինակ՝* գովերգ+եց, սիր+եց, վազ+եց, կանգն+եց, ազատ+եց, ամփոփ+եց, աճ+եց, աղմկ+եց, զն+եց, գաղթ+եց, դալար+եց, դաս+եց, գուշակ+եց, զարկ+եց, զեկուց+եց *և այլն։ Բացառություն է կազմում միայն* ասել *բայը, որի անցյալի հիմքը կազմվում է* ացր *հիմքակազմիչով՝* ասացր[34]։

Ցոյական են նաև ե *խոնարհման բազմապատկական-սաստկական կերպածանց, ինչպես նաև վ կրավորական ածանցն ունեցող բայերի անցյալի հիմքերը։ Օրինակ՝ կոտրատել—*կոտրատ+եց, *նստոտել—*նստոտ+եց, *չարդոտել—*չարդոտ+եց, *սիրվել—*սիր+վ+եց, *գրվել—*գրվ+եց, *չարդվել—*չարդվ+եց *և այլն։ Ըստ որում, ինչպես ասվել է, բազմապատկական և կրավորական բայածանց-*

34 Հանձնարարելի չէ խոսակցական լեզվում տարածված և երբեմն գրավոր լեզվի մեջ թափանցող ասեց ձևը (ասեցի, ասեցիր և այլ կազմություններում)։

ները բայերի բացարձակ հիմքում պահպանվում են։ Եց հիմքակազմիչը դրվում է այդ բայածանցներից հետո։

§ 369. Ե խոնարհման և և չ բայածանցներ ունեցող բայերի անցյալի հիմքը անցոյական է և համընկնում է այդ բայերի բացարձակ հիմքին. այսինքն՝ այն ստանում ենք անորոշ դերբայից հանելով դերբայական ել վերջավորությունը և և կամ չ բայածանցները։ Օրինակ՝ գտնել—գտ+ա, իջնել—իջ+ա, թռչել—թռ+ա, փախչել—փախ+ա, հասնել—հաս+ա, ելնել—ել+ա, հագնել—հագ+ա, մտնել—մտ+ավ, դիպչել—դիպ+ա, կորչել—կոր+ավ և այլն։ Միայն սակավաթիվ բայեր, որոնց մեջ և և չ ածանցները արդեն ձուլվել են բայարմատին և այլևս չեն գիտակցվում որպես ածանց, ժամանակակից հայերենում ունեն ցոյական անցյալի հիմք, որտեղ և-ն և չ-ն պահպանվում են։ Դրանցից են՝ զբոսնել—զբոսնեց, հառնել—հառնեց, ոստնել—ոստնեց, զարթնել—զարթնեց, մարտնչել—մարտնչեց, մեղանչել—մեղանչեց, հանաչել—հանաչեց և այլն։

Անհրաժեշտ է նշել, որ չ բայածանցի անկայունության հետևանքով որոշ բայերի անցյալի հիմքը ժամանակակից հայերենում ունենում է երկու ձև՝ ցոյական և անցոյական. այսպես՝ սառչել—սառ (սառա) և սառել—սառեց (սառեցի), ուռչել—ուռ (ուռա) և ուռել—ուռեց (ուռեցի)։ Հատկանշական է, որ վերջին շրջանում ավելի տարածվել է ցոյական ձևը։ Ժամանակակից գրական հայերենի համար ընդունելի չէ առնել բայի ցոյական անցյալի հիմքը՝ առեց (փոխանակ՝ առ), որը հանդիպում էր հատկապես անցյալ դարի գրողների մոտ և այժմ՝ խոսակցական լեզվում։

Ծանոթ.—Ն և չ բայածանցներով մի շարք բայեր, հանդես գալով բարդությունների մեջ կամ ածանցմամբ, որպես վերջիններիս երկրորդ բաղադրիչ, անորոշում հանդես են գալիս առանց այդ բայածանցների, այսինքն՝ նրանց ներկայի հիմքը համընկնում է այդ բայերի անցյալի հիմքին։ Օրինակ՝ տեսնել, բայց՝ անտեսել, կանխատեսել, նախատեսել[35], անցնել—թափանցել, շրջանցել, թևանցել, դնել—ենթադրել, դիպչել—զուգադիպել, մտնել—ներառմտել, միջամտել և այլն։ Այս բաղադրյալ բայերի անցյալի հիմքը լինում

35 Սխալ պետք է համարել բանավոր խոսքում, երբեմն նաև գրավոր խոսքում հանդիպող նախատեսնել, կանխատեսնել ձևերը։

է ցոյական՝ ե խոնարհման պարզ բայերի նման. այսպես՝ անտեսեց, կանխատեսեց, շրջանցեց, թևացեց, ենթադրեց, զուգադիպեց, հետամտեց, միջամտեց և այլն։

§ 370. Ե խոնարհման մի քանի բայեր ժամանակակից գրական հայերենում կրկնահիմք են, այսինքն՝ անցյալ կատարյալում ունենում են և՛ ցոյական, և՛ անցոյական հիմք։ Դրանք են՝ անել—ար||արեց (արի||արեցի), դնել—դր||դրեց (դրի||դրեցի), թողնել—թող||թողեց (թողի||թողեցի)։ Այս ձևերից անցոյականները, որոնք գալիս են հնից, ավելի տարածված են բանավոր խոսքում։ Գրավոր լեզուն հակված է ավելի դեպի ցոյականությունը։

§ 371. Ա խոնարհման բոլոր բայերը ունենում են ցոյական անցյալի հիմք։ Ա խոնարհման պարզ բայերի անցյալի հիմքը կազմվում է բացարձակ հիմքի վրա ավելացնելով աց հիմքակազմիչը։ Օրինակ՝ խաղալ—խաղաց, կարդալ—կարդաց, գնալ—գնաց, դողալ—դողաց, զգալ—զգաց, թնդալ—թնդաց, ժպտալ—ժպտաց, հնալ—հնաց, ծլվլալ—ծլվլաց և այլն։

Ա խոնարհման են և ան բայածանցավոր բայերի անցյալի հիմքում բայածանցները դուրս են ընկնում։ Ան բայածանցավոր բայերում բացարձակ հիմքի վրա ավելանում է աց հիմքակազմիչը, իսկ են բայածանցավոր բայերում՝ եց հիմքակազմիչը։ Բերենք օրինակներ։ Ան ածանց ունեցող բայեր՝ անհետանալ—անհետ+աց+ա, առողջանալ—առողջ+աց+ա, անշնչանալ—անշնչ+աց+ա, բարկանալ—բարկ+աց+ա, բարձրանալ—բարձր+աց+ա, երջանկանալ—երջանկ+աց+ա և այլն։ են ածանց ունեցող բայեր՝ արժենալ—արժ+եց+ավ, կամենալ—կամ+եց+ավ, հագենալ—հագ+եց-ավ, մերձենալ—մերձ+եց-ավ, մոտենալ—մոտ+եց-ավ, վախենալ—վախ+եց-ավ և այլն։

Ծանոթ.—Եթե ա խոնարհման որոշ բայեր ունեն ածանցավոր և ածանցազուրկ զուգահեռ ձևեր, ապա նրանց անցյալ կատարյալի հիմքերը նույնանում են։ Այսպես՝ լողալ||լողանալ—լողաց, ցոլալ||ցոլանալ—ցոլաց, լվալ||լվանալ—լվաց և այլն։

Յուրահատուկ է դառնալ բայի անցյալ կատարյալի հիմքը, որտեղ վերականգնվում է բայարմատի ձ հնչյունը, որը ներկայի հիմքում դուրս է ընկել. այսպես՝ դառնալ—դարձ+ա (նախապես բայը եղել է դարձնալ. արմատն է դարձ)։

Առանձնահատուկ է նաև ա խոնարհման տալ բայի անցյալի հիմքը, որը հանդես է գալիս տու ձևով (տվի, տվիր, տվեք)։ Վերջին շրջանում գրավոր լեզվում սկսել է տարածվել նաև տվեց ձևը (տվեցի, տվեցիր)։

§ 372. Յուրահատուկ ձևավորում ունի պատճառական ածանց ունեցող բայերի անցյալի հիմքը։ Այն կազմվում է ցն ածանցի ն բաղաձայնը փոխարինելով ր-ով։ Այս տեսակետից այն տարբերվում է և՛ ցոյական, և՛ անցոյական հիմքերից[36]։ Օրինակ՝ կարդացնել—կարդացր+ի, վազեցնել—վազեցր+ի, հասցնել—հասցր+ի, փախցնել—փախցր+ի և այլն։ Հանձնարարելի չպետք է համարել բանավոր լեզվում վերջերս տարածված պատճառական բայերի ցոյական անցյալի հիմքը, երբ ր-ի հետ մեկտեղ ավելանում է եց հիմքակազմիչը. ինչպես՝ մեծացրեցի, հանգցրեցի և այլն։

§ 373. Ստորև տրվում է ժամանակակից հայերենի ներկայի և անցյալի հիմքերի կազմության աղյուսակը։

		Ներկայի հիմք	Անցյալի հիմք
1	*Ե խոնարհման պարզ և կրավորական ու բազմապատկական ածանց ունեցող բայեր*	բացարձակ հիմք +Ø (*գր+Ø+ել, գրվ+Ø+ել, կոտրատ+Ø+ել*)	բացարձակ հիմք +եց (*գր+եց, գրվ+եց, կոտրատ+եց*)
2	*Ա խոնարհման պարզ բայեր*	բացարձակ հիմք +Ø (*կարդ+Ø+ալ, խաղ+Ø+ալ*)	բացարձակ հիմք +աց (*կարդ+աց, խաղ+աց*)
3	*Ն, չ ածանց ունեցող բայեր*	բացարձակ հիմք+ն կամ չ (*փախ+չ+ել, ընկ+ն+ել*)	բացարձակ հիմք +Ø (*փախ+Ø+ա, ընկ+Ø+ա*)
4	*Ան, են ածանց ունեցող բայեր*	բացարձակ հիմք +ան կամ+են (*լավ+ան+ալ, մոտ+են+ալ*)	բացարձակ հիմք +աց կամ+եց (*լավ+աց+ա, մոտ+եց+ա*)
5	*ցն պատճառական ածանց ունեցող բայեր*	բացարձակ հիմք +ն (*կարդաց+ն+ել, մոտեց+ն+ել*)	բացարձակ հիմք +ր (*կարդաց+ր+ի, մոտեց+ր+ի*)

[36] Է. Աղայանը պատճառական բայերի անցյալի հիմքը կոչում է բնական (տե՛ս Է. Աղայան, *Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը*, էջ 335)։

Այսպիսով՝ ներկայի և անցյալի հիմքերի հակադրությունը իրացվում է հիմքակազմիչների հետևյալ հերթագայությամբ՝ 1) 0—եց, 2) 0—ացք, 3) ն—0 կամ չ—0, 4) ան-ացք կամ են-եցք և 5) ն-ր:

Ծանոթ.— *Պատճառական բայերի անցյալ կատարյալի նմանակությամբ ր-ով կամ րեական հիմք ունեն նաև ճարցնել, լցնել բայերը, որոնք թեև պատճառական չեն, բայց ձևով նման են վերջիններիս (լցնել—լցր+ի, հարցնել—հարցր+ի):*

ԲԱՅԻ ՍԵՌԸ

§ 374. Բային հատուկ քերականական կարգերի մեջ իր առանձնահատուկ տեղն ունի սեռի կարգը: Անմիջականորեն կապված լինելով բայիմաստի հետ, սեռը ցույց է տալիս գործողության հարաբերությունը գործողի (սուբյեկտի) և գործողության առարկայի (օբյեկտի) հետ, ինչպես նաև այդ հարաբերությունների քերականական վերացարկման և արտահայտության ձևը:

Հայտնի է, որ բայով արտահայտված գործողությունը իրականության մեջ հանդես չի գալիս ինքնին: Այն կապված է որոշակի առարկաների, երևույթների հետ: Որպեսզի որևէ գործողություն կատարվի, որևէ իրողություն, եղելություն երևան գա, անհրաժեշտ է առարկա, որ կատարի այդ գործողությունը, կամ որի հետ տեղի ունենա այդ իրողությունը, ինչպես նաև անհրաժեշտ է որևէ առարկա կամ երևույթ, որի նկատմամբ կատարվի այդ գործողությունը: Յուրաքանչյուր բայ, ըստ բայիմաստի, ունի գործողության անմիջական ոլորտի մեջ որոշակի թվով առարկաներ առնելու հատկություն և միաժամանակ ցույց է տալիս դրանց միջև եղած իրական և քերականական հարաբերությունների բնույթը: Այսպես, երբ ասում ենք գրել, դրա հետ անմիջապես կապվում են երկու առարկայական հասկացություն՝ մարդ, որ կատարում է գործողությունը և նյութ, որը լինելու է գործողության արդյունքը. կամ՝ երբ ասում ենք գլորել, միաժամանակ պահանջ է առաջանում իմանալ գործողություն կատարողը և այն առարկան, որի նկատմամբ կատարվում է գործողությունը: Կարդացնել բայը իր

գործողության ոլորտում ներառնում է երեք առարկաների հարաբերություն՝ գործողության համար պատճառ հանդիսացող, գործողությունը կատարող և կրող, իսկ, ասենք, fայլել, վազել, մեծանալ բայերը անմիջականորեն կապվում են միայն կատարող, եղող առարկաների հետ և այլն։ Ընդհանրապես առարկաների միջև եղած և բայի միջոցով դրսևորվող հարաբերությունները կարող են բազմազան լինել։ Առարկան կարող է գործողության կատարողը լինել, իր վրա կրել գործողությունը, գործողությունը կատարել ինքնին կամ ինքն իր նկատմամբ և այլն։ Իրական, առարկայական մակարդակում առարկաների և գործողության միջև առկա այս բոլոր հարաբերությունները քերականորեն վերացարկվում և լեզվի մեջ արտացոլվում են բայի սեռի միջոցով։

§ 375. Գործողության և նրա ոլորտում ընկած առարկաների միջև առկա նույն հարաբերությունը լեզվի մեջ, ելնելով հաղորդման նպատակից, ինչպես նաև կախված խոսակցի՝ այդ հարաբերության մասին իրազեկության աստիճանից, կարող է վերացարկվել և ներկայացվել տարբեր ձևով։ Բերենք օրինակ՝ **Այդ ճետաfրfիր զեկուցումը կարդաց Գրիգորյանը և Այդ ճետաfրfիր զեկուցումը կարդացվեց Գրիգորյանի կողմից:** *Բերված երկու նախադասություններում էլ դրսևորված է իրականության մեջ տեղի ունեցած նույն գործողությունը և նրա հետ կապված գործող և կրող առարկաների նույն իրական հարաբերությունը։ Սակայն այդ հարաբերությունը, ելնելով հաղորդման նպատակից, քերականորեն դրսևորվել է իրար հակադիր շարահյուսական կառուցվածքների միջոցով, մի բան, որ պայմանավորված է բայի տարբեր սեռերի գործածությամբ* (**կարդաց—կարդացվեց**)։ *Առաջին դեպքում ներգործական սեռի բայը պահանջել է ներգործական կառուցվածքի նախադասություն։ Երկրորդ դեպքում փոխվել է բայի սեռը։ Այն ներգործականից ածանցմամբ վեր է ածվել կրավորականի, որն իր հերթին թելադրել է կրավորական կառուցվածքի նախադասություն, երբ հաղորդման էլակետային առարկան, քերականական ենթական գործողություն կրողն է։ Նույն ձևով՝* **Նրա այդ վարմունքը վշտացրեց ինձ և Նրա այդ վարմունքից ես վշտացա** *նախադասություններում իրական նույն պատճառահետևանքային հարաբերությունը արտահայտվել է քերականական հակադիր կառուցվածքներով՝ պայմանավորված դարձյալ հաղորդման նպատակով*

և դրա հետ կապված՝ բայի սեռի փոփոխությամբ (վշտանալ—վշտացնել):

Այսպիսով՝ անմիջականորեն կապված լինելով լեզվի հաղորդակցային կողմի հետ, բայի սեռը պահանջում, թելադրում է շարահյուսական որոշակի կառուցվածք:

§ 376. Բայի սեռային տարբերությունները երևում են ոչ միայն նրանց թելադրած շարահյուսական կառուցվածքներում, այլ նաև ձևաբանական մակարդակում, քանի որ այդ փոփոխությունը անպայմանորեն նշույթավորվում է: Դրանով էլ հենց պայմանավորվում է նրա ձևաբանական կարգ լինելը: Վերցնենք հետևյալ շարքերը.

գրել—գրվել	վազել—վազեցնել
խմել—խմվել	բարձրանալ—բարձրացնել
կարդալ—կարդացվել	մեծանալ—մեծացնել
սիրել—սիրվել	իջնել—իջեցնել
ջարդել—ջարդվել	փախչել—փախցնել

Առաջին շարքի բայերը փոխել են իրենց սեռային արժեքը վ կրավորական սեռածանցի միջոցով, իսկ երկրորդ շարքի բայերում այդ փոփոխությունը կատարվել է ց պատճառական սեռածանցի օգնությամբ:

Այսինքն՝ բայերի սեռային տարբերությունները ժամանակակից հայերենում ձևաբանորեն դրսևորվում են ածանցման միջոցով, ինչպես նաև սկզբնաձևի (ածանցազուրկ ձևի) և ածանցված ձևի հակադրությամբ (գրել—գրվել, բարձրանալ—բարձրացնել):

§ 377. Նկատի ունենալով սեռի կարգի ցույց տված առարկայական հարաբերությունների երկկողմանի բնույթը, ինչպես նաև ձևաբանական դրսևորման առանձնահատկությունները ժամանակակից հայերենում, նպատակահարմար է բայերի դասակարգումը ըստ սեռի կատարել աստիճանական կարգով:

Ժամանակակից հայերենի բոլոր սկզբնաձևային (սեռածանց չունեցող) բայերը ըստ գործողություն կատարողի և քերականորեն որպես ուղիղ խնդիր վերացարկված կրող առարկայի (օբյեկտի) նկատմամբ ունեցած հարաբերության բաժանվում են երկու խմբի՝ բայեր, որոնք ունեն այդպիսի ուղիղ խնդիր առնելու հատկություն և բայեր, որոնք չունեն և չեն կարող ունենալ այդպիսի խնդիր: Այ-

սինքն՝ առաջին խմբի բայերի ցույց տված գործողության անմիջական ոլորտում ընկած են երկու առարկաներ՝ գործողություն կատարողը և կրողը, իսկ երկրորդ խմբի բայերի ցույց տված գործողության անմիջական ոլորտում ընկած է միայն մեկ առարկա՝ գործող կամ եղող առարկան։ Առաջին խումբը (գրել, կարդալ, սիրել, ջարդել և այլն) *ներգործական սեռի բայերն են, երկրորդ խումբը* (գնալ, իջնել, բարձրանալ, կարմրել և այլն)՝ *չեզոք սեռի։*

Ներգործական և չեզոք սեռի բայերը, նույնը լինելով ըստ գործողության սուբյեկտի նկատմամբ ունեցած հարաբերության դրսևորման քերականական ձևի (երկու դեպքում էլ գործողություն կատարողը վերացարկվում է որպես քերականական ենթակա՝ հակադրվում են ուղիղ խնդրով դրսևորված օբյեկտ առնելու կամ չառնելու հատկությամբ։

§ 378. Ներգործական սեռ—չեզոք սեռ հակադրությունը ձևաբանորեն նշույթավորված չէ։ Այս դասակարգումը կատարվում է հիմնականում ըստ բայերի ցույց տված իմաստային հարաբերությունների և վերջնականորեն ճշտվում է շարահյուսական մակարդակում՝ ըստ նրանց թելադրած շարահյուսական կառուցվածքների։ Սա բայերի իմաստային ամենալայն դասակարգումն է՝ կապված նրանց արժույթայնության հետ և չէր կարող համարվել նաև սեռային, եթե չլիներ դասակարգման հաջորդ աստիճանը՝ կապված հիշյալ բայերի որոշակի սեռածանցներ առնելու և դրանց միջոցով իրենց սեռը փոխելու հատկության հետ։

Ժամանակակից հայերենում ներգործական սեռի բայերի ճնշող մեծամասնությունը ունի վ սեռածանց ընդունելու հատկություն։ Վերջինս չփոխելով բայի ցույց տված գործողության հիմքում ընկած առարկայական հարաբերությունների բնույթը, փոխում է դրանց քերականական դրսևորման եղանակը՝ բային հաղորդելով սեռային նոր որակի առանձնահատկություններ։ Այն է՝ մի կողմից բային գրկում է ուղիղ խնդիր առնելու հատկությունից, մյուս կողմից փոխում է նաև բայահիմքի ցույց տված գործողության հարաբերությունը քերականական ենթակայի նկատմամբ։ Վերջինս այս դեպքում ոչ թե գործողություն կատարողն է, այլ կրողը, որը հանդիսանում է հաղորդման ելակետային առարկան։ Ստացվում է կրավորական սեռի բայերի խումբը։

Կրավորական սեռի բայերը, ածանցվելով ներգործական սեռի բայերից, հակադրվում են նրանց ձևով (գրել—գրվել, կարդալ—

կարդացվել) և միևնույն առարկայական հարաբերությունների քերականական դրսևորման եղանակով (թելադրում են հակադիր շարահյուսական կառուցվածքներ)։

§ 379. Ուղիղ խնդիր չառնելու հատկությամբ նման լինելով չեզոք սեռի բայերին, կրավորական սեռի բայերը հակադրվում են նրանց բայահիմքի գործողության անմիջական ոլորտում ընկած առարկաների քանակով և նրանց միջև եղած հարաբերության բնույթով, ինչպես նաև քերականական ենթակայի նկատմամբ ունեցած հարաբերությամբ։ Եթե չեզոք սեռի բայերի ցույց տված գործողության կատարման համար պահանջվում է միայն մեկ առարկա՝ գործողություն կատարողը, որը քերականական ենթական է, ապա կրավորական սեռի բայերի ցույց տված գործողության հիմքում ընկած են երկու առարկաների՝ կատարողի և կրողի հարաբերությունն։ Սակայն շատ կիրառություններում կրավորական սեռածանց ունեցող բայերի գործողության անմիջական ոլորտում ևս լինում է միայն մեկ առարկա (գործողը կամ եղողը)՝ վերացարկված որպես քերականական ենթակա (երկիրը պտտվում է, Քարը գլորվում է)։ Այս դեպքում վերանում է կրավորական սեռ—չեզոք սեռ հակադրությունը, և ստեղծվում է կրավորաձև չեզոք սեռի բայերի խումբը (տե՛ս § 401, 402)։

Չեզոք սեռի բայերը, որպես կանոն, վ սեռածանց չեն ընդունում։ Այդ հատկությունն էլ հենց համարվում է նրանց և ներգործական սեռի բայերի հիմնական ձևաբանական տարբերությունը։

§ 380. Չեզոք սեռի բայերի մեծ մասը, ինչպես նաև մի շարք ներգործական բայեր, ընդունելով ց(ե) սեռածանցը, վեր են ածվում (փոխակերպվում են) պատճառական բայերի։ Չեզոք և ներգործական բայերից պատճառական բայեր են կերտվում նաև վերլուծական եղանակով՝ տալ բայի հարադրությամբ (տե՛ս § 412—414)։

§ 381. Ց(ե) սեռածանցն ունի այն առանձնահատկությունը, որ ընդգծում է բայի գործողության հետ կապված պատճառահետևանքային հարաբերությունը և նրա գործողության անմիջական ոլորտի մեջ է մտցնում մեկ առարկա ևս՝ գործողության սկզբնապատճառ հանդիսացող առարկան։ Եթե սկզբնաձևային բայը ցույց է տալիս մեկ առարկայի հարաբերություն գործողությանը, ապա նրանից ածանցված պատճառական բայը ցույց է տալիս երկու առարկաների հարաբերություն (հմմտ. վշտանալ—վշտացնել), իսկ եթե սկզբնա-

ձևային բայը ցույց է տալիս երկու առարկաների հարաբերություն, ապա նրանից ածանցված պատճառական բայը ցույց է տալիս երեք առարկաների հարաբերություն (համմտ. կարդալ—կարդացնել):

§ 382. Առարկայական հարաբերությունների այս տարբերությունը, բնականաբար, իր հետ բերում է նաև քերականական-կառուցվածքային տարբերություններ. բայը ձեռք է բերում ուղիղ խնդիր առնելու հատկություն, միաժամանակ բայահիմքի արտահայտած գործողությունը օտարվում է քերականական ենթակայից: Այստեղ ևս ստանում ենք սեռային նոր որակ՝ պատճառական սեռ, որը մի կողմից հակադրվում է չեզոք սեռի բայերին՝ ուղիղ խնդիր առնելու հատկությամբ և բայահիմքի ցույց տված գործողության՝ ենթակայի կողմից չկատարվելու հատկությամբ, մյուս կողմից՝ ներգործական սեռի բայերին՝ քերականական ենթակայի և ուղիղ խնդրի արտահայտած հարաբերությունների բնույթով:

§ 383. Չեզոք սեռի բայերից կերտված պատճառական բայերի անմիջական ոլորտում ընկած են երկու առարկաների հարաբերություններ, ճիշտ այնպես, ինչպես ներգործական սեռի բայերի մոտ է: Արտաքնապես նման են նաև այս բայերի թելադրած շարահյուսական կառուցվածքները՝ ենթակա+բայ—ստորոգյալ+ուղիղ խնդիր (օրինակ՝ Նա ջարդեց սեղանը, Լուրը ուրախացրեց բոլորին):

Սակայն հիշյալ բայերը իրենց ցույց տված գործողության և առարկայական հարաբերությունների բնույթով որակապես տարբերվում են իրարից:

Եթե ներգործական սեռի բայի գործողության ոլորտում ընկած առարկաներից մեկը գործողություն կատարողն է, մյուսը՝ կրողը, որոնք վերացարկվում են որպես ենթակա և ուղիղ խնդիր, ապա չեզոք սեռի բայերից ածանցված պատճառական բայերի ոլորտում ընկած առարկաներից մեկը գործողության հետ կապված է պատճառային հարաբերությամբ, իսկ մյուսը մի բան կատարող, եղող առարկան է: Ըստ որում, պատճառական սեռի բայերի ենթական չէ բայահիմքի ցույց տված գործողության կատարողը: Այն միայն ստիպում, դրդում, պատճառ է հանդիսանում, որ գործողությունը կատարվի (այդ առարկան համապատասխան սկզբնաձևային բայերի մոտ կամ չի արտահայտվում, կամ արտահայտվում է պատճառի պարագայի միջոցով): Իսկ բայահիմքի ցույց տված գործո-

դուիյունը կատարողը, որ սկզբնաձևային բայերի մոտ դրսևորվում էր քերականական ենթակայի միջոցով, այս դեպքում արտահայտվում է ուղիղ խնդրի միջոցով։ Վերջինս այստեղ կատարում է երկակի դեր. մի կողմից իր վրա է կրում ենթակայի գործողությունը, մյուս կողմից ենթակայի դրդմամբ, ստիպմամբ, ազդեցությամբ կատարում է բայահիմքի ցույց տված գործողությունը։ Հենց սրանով էլ այն տարբերվում է ներգործական սեռի բայերի մոտ դրվող ուղիղ խնդրից[37]։

§ 384. Այսպիսով՝ ժամանակակից հայերենի բայերն ունեն չորս սեռ՝ ներգործական, չեզոք, կրավորական և պատճառական։

Ժամանակակից հայերենի բայերի սեռային համակարգում սկզբնաձևային բայերի մեծ մասը, ենթարկվելով սեռային ձևափոխման և կազմելով սեռային հարացույց, կարող է արտահայտել հիշյալ չորս սեռերի իմաստային հարաբերությունները։

Ներգործական սեռի բայերը կազմում են ձևային եռանդամ հակադրություն՝ ներգործական—կրավորական—պատճառական. սակայն արտահայտում են նաև չեզոք սեռի իմաստ, քանի որ կրավորական սեռածանց ունեցող բայերը կրկնասեռ են (կարող են լինել և՛ կրավորական սեռի, և՛ չեզոք սեռի)։ Օրինակ՝ գրել—գրվել—գրել տալ, խմել—խմվել—խմեցնել (խմել տալ), կարդալ—կարդացվել—կարդացնել (կարդալ տալ), ուտել—ուտվել—կերցնել (ուտել տալ), գլորել—գլորվել—գլորել տալ։

Չեզոք սեռի բայերը կազմում են ձևային քառանդամ հակադրություն՝ չեզոք—պատճառական||ներգործական—բուն պատճառական—կրավորական։ Օրինակ՝ մեծանալ—մեծացնել—մեծացնել տալ—մեծացվել, իջնել—իջեցնել—իջեցնել տալ—իջեցվել, փախչել—փախցնել—փախցնել տալ—փախցվել, մոտենալ—մոտեցնել—մոտեցնել տալ—մոտեցվել։

Այս շարքում պատճառական սեռածանցով բայերը նույնպես կրկնասեռ են. կարող են արտահայտել և՛ ներգործական, և՛ պատճառական սեռի իմաստ։

Ժամանակակից հայերենի բայերի սեռային ձևափոխության

37 *Տե՛ս* Ա. Աբրահամյան, *նշվ. աշխ., էջ 542։*

աստիճանական հաջորդականությունը կարելի է պատկերել սխեմայով.



Ծանոթ.—*Ժամանակակից հայերենի դպրոցական դասագրքերում, ինչպես նաև մի շարք մենագրական աշխատություններում*[38], *պատճառական բայերը չեն դիտվել իբրև առանձին սեռ, այլ մտցվել են ներգործական սեռի մեջ, որպես նրա ածանցված տարբերակը՝ հիմք ընդունելով պատճառական բայերի՝ ուղիղ խնդիր առնելու հատկանիշը։ Այսինքն՝ սեռի սահմանները որոշելիս հաշվի են առնվել միայն գործողության հարաբերումը ուղիղ խնդրին։ Անտեսվել է բայերի սեռը որոշելու մի կարևոր կողմը՝ գործողության հարաբերումը գործողություն կատարողին։ Պրոֆ. Ա. Աբրահամյանը իր «Բայը ժամանակակից հայերենում» մեծարժեք աշխատության մեջ տվել է բայերի սեռերի դասակարգման ուրույն համակարգ։ Նա անցողականությունը և անանցողականությունը համարում է սեռադասեր, որոնց մեջ տարբերակում է 3 սեռ և 2 սեռային առում՝ ներգործական, կրավորական, չեզոք սեռեր և պատճառական ու միջին-անդրադարձ սեռային առումներ*[39]; *Փաստական հարուստ նյութի հիման վրա տալով պատճառական բայերի տարբերությունները ներգործական սեռի բայերից՝ նա պատճառական բայերը առանձնացնում է վերջիններից՝ չհամարելով սակայն անկախ սեռ, այլ միայն սեռային առում։ Այնինչ պատճառական բայերը պետք է համարել առանձին սեռ, որովհետև դրանք տարբերվում են ներգործական բայերից և՛ ձևաբանորեն, և՛ իմաստային փոխհարաբերությունների բնույթով։ Այս տեսակետից միանգա-*

38 Հ. Բարսեղյան, *Արդի հայերենի բայի և խոնարհման տեսությունը, Երևան, 1953։* Մ. Աստուրյան, *Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Երևան, 1959։*

39 Ա. Աբրահամյան, *նշվ. աշխ., էջ 515—516 և հաջորդ գլուխները։*

մայն ճիշտ են վարվել Մ. Աբեղյանը և հետագայում նաև է. Աղայանը, որոնք պատճառական բայերը դիտել են առանձին սեռ[40]։

§ 385. Ընդունված է բոլոր բայերը, ըստ ուղիղ խնդիր առնելու հատկության, բաժանել երկու խմբի՝ անցողական և անանցողական։ Անցողական են կոչվում այն բայերը, որոնք ունեն ուղիղ խընդիր առնելու հատկություն։ Դրանք ներգործական և պատճառական բայեր են։ Անանցողական են կոչվում այն բայերը, որոնք չունեն այդպիսի հատկություն։ Դրանք չեզոք և կրավորական բայերն են։ Այսպիսի դասակարգման հիմքը զուտ շարահյուսական է և կապ չունի սեռային դասակարգման հետ[41]։

ՆԵՐԳՈՐԾԱԿԱՆ ՍԵՌ

§ 386. Ներգործական են անվանվում այն բայերը, որոնք ունեն ակտիվ գործողության նշանակություն, այսինքն՝ ցույց են տալիս այնպիսի գործողություն, որի կատարման համար պահանջվում է մի առարկա, որն իր վրա կրի, որին անմիջաբար անցնի գործողությունը։ Օրինակ՝ կառուցել, հարգել, տեսնել, ջարդել, ուտել, գրել, սովորել բայերը իրենց արտահայտած գործողության բնույթով այնպիսին են, որ պահանջում են մի կրող առարկա, առանց որի գործողություն կատարելն անհնարին է (կառուցել քաղաքը, հարգել մեկին, տեսնել լիճը, ջարդել փայտը, ուտել հացը, գրել նամակ, սովորել դասը և այլն)։

Ներգործական բայերի այս հատկությունը դրսևորվում է ոչ միայն նախադասության մեջ, այլ բնորոշ է բայերին նաև նախադասություններից դուրս, առանձին վերցրած, որովհետև հանդիսանում է նրա ներքին բովանդակային հատկանիշը՝ կապված գործողության բնույթի հետ։ Երբ մենք ասում ենք **կառուցել**, *ապա այս բայի ցույց տված գործողությունը լրիվ պատկերացնելու համար պահանջ է առաջանում իմանալ այն առարկան, որի նկատմամբ պիտի կատարվի գործողությունը (կառուցել ի՞նչ)։*

---

40 Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 375—376,* է. Աղայան, *նշվ. աշխ., էջ 321։*

41 *Եթե այս դասակարգման համար հիմք ընդունենք գործողության անցումային—ուղղվածությունը, ապա անցողական պիտի համարենք նաև կրավորական սեռի բայերը, որովհետև նրանք ևս պահանջում են առարկա, որին անցնի գործողությունը։*

§ 387. Ներգործական սեռը ժամանակակից հայերենում ձևական-քերականական որևէ ցուցիչ չունի։ Այն որոշվում է բայիմաստով՝ նախադասությունից դուրս, իսկ նախադասության մեջ՝ նաև նախադասության կառուցվածքով։ Ներգործական սեռի բայերը թեքվում են նախադասության որոշակի կառուցվածք. այն է՝ գործողություն կատարողը դրսևորվում է քերականական ենթակայի միջոցով, իսկ կրող առարկան՝ ուղիղ խնդիր։ Ներգործական սեռի բայերի՝ ուղիղ խնդիր պահանջելը ընդհանուր կանոն է։

Ծանոթ.—Ուղիղ խնդիրը ժամանակակից հայերենում արտահայտվում է ուղղական-հայցականով կամ տրական-հայցականով։ Բացառություն է կազմում միայն հաղթել բայը, որի մոտ ուղիղ խնդիրը դրվում է բուն տրական հոլովով։ Օրինակ՝ Ու մի կերպ ցավին հաղթելով դուրս է գալիս (ՀԹ)։ Դու հաղթել ես աբխազներին (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Մասամբ այդպես է նաև տիրել բայը, որի մոտ ուղիղ խնդիրը գրականության մեջ հանդիպում է և՛ ուղղական-հայցականով, և՛ բուն տրականով։ Օրինակ՝ Թե տիրես, մեծ շահ, դու նրա սրտին... (ՀԹ)։ Երկյուղը և հուսահատությունը, որ այսպիսի դեպքերում տիրում են հանցավորի սրտին, ինձ բոլորովին զգալի չեղան (Ր, Խաչագողի հիշատակարանը)։ Սկզբում նա մտածում էր տիրել մայրաքաղաքին գաղտնի ճանապարհներով (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Նա... տիրել է Ջարեհավանը (Ր, Սամվել)։ Տիրել երկիրը և այլն։

§ 388. Ներգործական սեռին են պատկանում հիմնականում ե խոնարհման բայերը, ինչպես՝ ազատել, արձակել, կատարել, գրել, գնել, դասել, դասավորել, դատել, դնել, շարադրել, տեսնել, կառուցել, զարդարել և այլն։ Սակայն դա չի կարող համարվել ներգործական սեռի տարբերակման ձևաբանական հատկանիշ, որովհետև լեզվում գոյություն ունեն նաև ե խոնարհման չեզոք սեռի բայեր, թեև զգալի քիչ քանակությամբ. ինչպես՝ բայլել, վազել, աճել, ճստել, կաճգճել և այլն։

Ձևաբանական ոչ մի տարբերություն չկա գրել, ուտել, կառուցել և վազել, բայլել, ճստել բայերի միջև։ Սրանց տարբերությունը ներքին բովանդակային է՝ կապված նրանց դրսևորած գործողության անմիջական ոլորտի մեջ ընկած առարկաների քանակի և նրանց հարաբերության քերականական վերացարկման հետ։

Ա *խոնարհման պարզ բայերից ներգործական սեռին են պատկանում շատ քիչ բայեր (մոտ 10—15 բայ)՝* աղալ, ցանկալ, զգալ, կարդալ, մուրալ, ուրալ, տալ, կանխազգալ և *այլն, շղա են բայածանցավոր բայերից՝ միայն* գիտենալ, կամենալ, ուզենալ և ունենալ *բայերը, իսկ ան բայածանցն ունեցող բազմաթիվ բայերից՝ միայն հետևյալները՝* գողանալ, լվանալ, իմանալ, գլանալ, խոտանանալ, հասկանալ, ճղանալ, մոռանալ, ստանալ, ցանկանալ, բանալ։

Ներգործական սեռին են պատկանում նաև չեզոք սեռի բայերից ածանցված պատճառական բայերի մի մասը, հատկապես բնաձայնական բայերից ածանցվածները. ինչպես՝ չրխկալ—չրխկացնել, խշշալ—խշշացնել, թխկթխկալ—թխկթխկացնել և այլն։ Սրանք այն պատճառականներն են, որոնց մոտ ենթական բայահիմքի ցույց տված գործողության անմիջական կատարողն է (տե՛ս § 408—409)։

§ 389. Ներգործական սեռի տարբերակման ձևաբանական հատկանիշ պետք է համարել միայն այս բայերի վ սեռածանցն ընդունելու և դրանով կրավորական սեռի վերածվելու հատկությունը։ Ինչպես՝ գրել—գրվել, կառուցել—կառուցվել, լսել—լսվել, իմանալ—իմացվել և *այլն։ Մի բան, որ հատուկ չէ չեզոք բայերին։*

Ներգործական սեռ—չեզոք սեռ *հակադրությունը երբեմն արտահայտվում է բայակազմական ել և (ան)ալ ձևույթների հակադրությամբ։ Հաճախ միևնույն բառերից ել ձևույթով կերտվում են ներգործական սեռի բայեր, իսկ անալ-ով՝ չեզոք սեռի։ Այսպես՝* դատարկել—դատարկանալ, խոնարհել—խոնարհանալ, ճստակել—ճստականալ, կլորել—կլորանալ, մաներել—մաներանալ, պնդել—պրկդանալ և *այլն։*

Մի շարք հարադրություններում այդ հակադրությունը իրացվում է անել—լինել, բերել—գալ *հակադրությամբ, որը ևս պետք է համարել ներգործական և չեզոք սեռերի տարբերակման ձևաբանական միջոց (տե՛ս § 321, 322)։ Օրինակ՝* արմատահան անել—արմատահան լինել, ուժասպառ անել—ուժասպառ լինել, տեղահան անել—տեղահան լինել, խայտառակ անել—խայտառակ լինել, *ինչպես նաև՝* առաջ բերել—առաջ գալ, փուլ բերել—փուլ գալ, եռ բերել—եռ գալ, շուռ բերել—շուռ գալ, կույր բերել—կույր գալ և *այլն։*

ԿՐԱՎՈՐԱԿԱՆ ՍԵՌ

§ 390. Ինչպես ներգործական սեռի, այնպես էլ կրավորական սեռի բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որի կատարման համար անհրաժեշտ է երկու առարկա՝ կատարող և կրող: Սակայն, եթե ներգործական սեռի բայերի գործողություն կատարողը դրսևորվում է ենթակայի միջոցով, ենթական ինքն է կատարում գործողությունը, իսկ կրող առարկան դրսևորվում է ուղիղ խնդրի միջոցով, ապա բոլորովին հակառակ պատկեր ենք տեսնում կրավորական սեռի առկայության դեպքում: Այստեղ արդեն քերականական ենթական ոչ թե ինքն է կատարում գործողությունը, այլ հանդիսանում է օբյեկտ մեկ այլ առարկայի կատարած գործողության համար, իսկ այդ գործողությունը կատարող առարկան նախադասության մեջ դրսևորվում է ներգործող խնդրի միջոցով, այսինքն՝ փոխվում է գործողության ուղղվածությունը: Բերենք օրինակ՝ Քամին շարժում է ծառի ճյուղերը և Ծառի ճյուղերը շարժվում են քամուց: Բերված երկու նախադասություններում էլ հաղորդվում է միևնույն իրողության մասին: Սակայն այդ նույն երևույթը լեզվում դրսևորվել է երկու տարբեր, իրար հակադիր ձևով: Մի դեպքում նախադասությունն ունի ներգործական կառուցվածք, այսինքն՝ գործողություն կատարողը ենթական է, ստորոգյալը՝ ներգործական սեռի բայ է, իսկ կրող առարկան դրսևորված է ուղիղ խնդրի միջոցով: Երկրորդ դեպքում նախադասությունն ունի պասիվ՝ կրավորական կառուցվածք: Ենթական ոչ թե գործողության կատարողն է, այլ մեկ ուրիշի գործողությունն իր վրա կրողը. բայը դրված է կրավորական սեռով, իսկ գործողություն կատարողը արտահայտվել է խնդրի միջոցով (քամուց):

Բնության՝ իրականության մեջ տեղի ունեցող, երևան եկող միևնույն երևույթները լեզվում երկու տարբեր՝ իրար հակադիր ձևերով դրսևորվելը ինքնանպատակ չէ. այն անմիջականորեն կապված է հաղորդման նպատակի հետ: Եթե հաղորդման նպատակն է լինում վերարտադրել տվյալ իրողությունը սովորական ձևով, այնպես, ինչպես այն կատարվել է՝ ընդգծելով, թե ում կամ ինչի կողմից է կատարվել գործողությունը, օգտագործվում է ներգործական կառուցվածքի նախադասություն, այսինքն՝ դրվում է ներգործական սեռի բայ (շարժում է): Իսկ եթե հաղորդման նպատակն

է լինում ընդգծել այն միտքը, որ որևէ առարկա կրում է մեկ այլ առարկայի գործողությունը, առաջացել, ձևափոխության է ենթարկվել մեկ այլ առարկայի որևէ գործողության հետևանքով, օգտագործվում է կրավորական կառուցվածքի նախադասության, այսինքն՝ բայը դրվում է կրավորական սեռով։ Այս դեպքում արդեն գործողություն կատարողը չի դրսևորվում նախադասության գլխավոր անդամով՝ ենթակայով, այլ ներգործող խնդրով, իսկ կրող առարկան հանդես է գալիս որպես նախադասության հիմնական, էլակետային անդամ՝ ենթակա։

§ 391. Հայտնի է, որ բայի կիրառությունը լեզվում չի սահմանափակվում ստորոգյալի պաշտոնով։ Դերբայական ձևով այն կարող է հանդես գալ նախադասության տարբեր անդամների պաշտոնով (ենթակա, որոշիչ, խնդիր և այլն)։ Այս դեպքում արդեն կրավորական սեռի բայի գործողության կրող առարկան դրսևորվում է յուրահատուկ ձևով։ Այն նախադասության մեջ կարող է լինել և՛ ենթակա, և՛ խնդիր, և՛ որոշիչ կամ այլ անդամ։ Սակայն բոլոր դեպքերում այն կատարում է երկակի պաշտոն. մի կողմից հանդիսանում է դերբայով արտահայտված գործողության կրողը, իսկ մյուս կողմից հիմնական նախադասության մեջ դրանից անկախ կատարում է որևէ պաշտոն։ Օրինակ՝ Բոլորիս կողմից սիրված դասախոսը եկավ նախադասության մեջ սիրված կրավորական սեռի բայի գործողության օբյեկտը՝ դասախոսը մի ժամանակ նախադասության հիմնական գործողություն կատարողն է։ Իսկ, ասենք, Մենք լսեցինք բոլորի կողմից սիրված դասախոսի ճեպաբերիր զեկուցումը նախադասության մեջ սիրված կրավորական սեռի բայի գործողության օբյեկտը նախադասության մեջ հանդես է եկել հատկացուցչի պաշտոնով։

Կրավորական սեռի բայի գործողությունը կատարողը լեզվում միշտ դրսևորվում է ներգործող խնդրի միջոցով՝ անկախ այն բանից՝ բայը դիմավոր է, թե՞ անդեմ, ճիշտ այնպես, ինչպես ներգործական սեռի բայերի մոտ գործողությունը կրող առարկան միշտ դրսևորվում է ուղիղ խնդրի միջոցով։

Սաճոթ.—Քանի որ կրավորական սեռի գործածության դեպքում հաղորդման նպատակն է լինում ընդգծել գործողության կրման գաղափարը և այն առարկան, որ կրում է գործողությունը, շատ հաճախ նախադասության մեջ ներգործող խնդիրը բացակայում է,

թեև մտքով այն բոլոր դեպքերում հասկացվում է (կա՛մ ընդհանրապես հայտնի է լինում խոսողին, կա՛մ հասկացվում է կոնտեքստից)։ Օրինակ՝ **Նախահաշիվները** *պահվում էին* **որ ձևով** *(Շիրվանզադե, Քառա)։ Դրանք նույն եկեղեցիներից և նույն վանքերից հափշտակված գրքերն էին (Ր, Ամմվել)։ Գոհարները* **գտ**ղացվել էին *հիշյալ երկաթե արկղից (Ր, Խենթը)։*

§ 392. Կրավորական սեռը ժամանակակից հայերենում ունի իր բերականական-ձևաբանական ձևավորումը։ Այն կազմվում է ներգործական սեռի և պատճառական սեռի բայերից վ կրավորական բայածանցի օգնությամբ։ Օրինակ՝ **գրել—գրվել, սիրել—սիրվել, ջարդել—ջարդվել, լսել—լսվել, կարդալ—կարդացվել, աղալ—աղացվել, հասկանալ—հասկացվել, իջեցնել—իջեցվել** *և այլն (վ բայածանցով բաղադրված բայերի կազմության առանձնահատկությունների մասին տե՛ս § 352—354)։*

Կա որոշ տարբերություն ներգործական սեռի բայերից և պատճառական սեռի բայերից կազմված կրավորական բայերի միջև։ Ներգործական սեռի բայերը, վ սեռածանցի միջոցով կորցնելով իրենց ուղիղ խնդիր առնելու հատկությունը, ոչ բոլոր դեպքերում են արտահայտում կրավորական սեռի իմաստ։ Դրան զուգահեռ նրանք կարող են դրսևորել առարկայի՝ ինքնին կատարվող կամ իր նկատմամբ կատարվող գործողության իմաստ, այսինքն՝ լինել չեզոք սեռի։ Օրինակ՝ Նա այն աստիճան հափշտակված էր **յուր գործողություններով, որ բնավ չնկատեց, թե ինչ է կատարվում յուր հետ** *(Ր, Ամմվել)։ Այս նախադասության մեջ* **թեև** *հափշտակված էր բայը ձևով կրավորական է և առաջացել է ներգործական բայից (հափշտակել—հափշտակվել), սակայն այն ոչ թե կրավորական սեռի է, այլ չեզոք, որովհետև չի արտահայտում գործողության կրման գաղափար։ Այնինչ հետևյալ նախադասության մեջ՝ Դրանք նույն եկեղեցիներից և նույն վանքերից հափշտակված գրքերն էին (ն. տ.),* **հափշտակված** *բայն արդեն կրավորական սեռի է։ Նույն ձևով՝ լվանալ—լվացվել, սրբել—սրբվել, պատրաստել—պատրաստվել* և *այլն (տե՛ս § 400, 401)։ Այսպիսով, ներգործական սեռի բայերից ածանցված կրավորականների սեռը որոշելու համար միայն վ ձևաբանական ցուցիչը բավական չէ։ Անհրաժեշտ է, որ բայը ցույց տա այնպիսի գործողություն, որ մեկ ուրիշ առարկայից անցնի ենթակային։ Մի բան, որ հնարավոր է որոշել միայն նախադասության մեջ, խոսքային միջավայրում։ Իհարկե, կան*

կրավորական ածանց ունեցող մի շարք բայեր, որոնց մեջ կրավորականության իմաստը ուժեղ ընդգծվում է նաև նախադասությունից դուրս, հետևաբար դրանց կրավորական սեռին պատկանելը կարելի է որոշել նաև միայն վ ածանցի օգնությամբ. ինչպես՝ գողանալ—գողացվել, հասկանալ—հասկացվել, վերցնել—վերցվել, դնել—դրվել, ուտել—կերվել և այլն։

§ 393. Ի տարբերություն ներգործական սեռի բայերից ածանցված կրավորականների, պատճառական սեռի բայերից ածանցվածները լինում են միայն կրավորական սեռի։ Օրինակ՝ մեծացնել —մեծացվել, չորացնել—չորացվել, եռացնել—եռացվել, դանդաղեցնել—դանդաղեցվել, բարձրացնել—բարձրացվել, արագացնել—արագացվել և այլն։

ՉԵՋՈՔ ՍԵՌ

§ 394. Չեզոք սեռին են պատկանում այն բայերը, որոնց ցույց տված գործողության կատարման համար չի պահանջվում քերականական ուղիղ խնդրով դրսևորված մի առարկա, որն իր վրա էրէ այդ գործողությունը։ Այս դեպքում ենթական գործողությունը կատարում է կամ ինքնին, առանց լրացուցիչ մի այլ առարկա պահանջելու (կանգնել, վազել, նստել, ննջել և այլն), կամ ինքն իր նկատմամբ (հագնվել, լվացվել, սանրվել և այլն) և կամ գործողությունը կատարվելու համար թեև պահանջվում է մեկ այլ առարկա, որի նկատմամբ կատարվի կամ տեղի ունենա, սակայն այն քերականորեն չի արտահայտվում ուղիղ խնդրով (նայել մի բանի, հարձակվել մեկի վրա, վախենալ մի բանից և այլն)։

§ 395. Չեզոք սեռի բայով դրսևորված գործողությունը ևս, ներգործականի նման սկզբնավորվում, կատարվում է քերականական ենթակայի կողմից։ Սակայն, ի տարբերություն ներգործական սեռի բայերի, չեզոք սեռի բայերի մոտ գործողության օբյեկտը կամ ընդհանրապես բացակայում է (վազել, ննջել, նստել, հազալ և այլն) և կամ եթե առկա է, ապա չի դրսևորվում քերականական ուղիղ խնդրի միջոցով։ Չեզոք սեռի բայերի մոտ այն սովորաբար դրվում է հանգման խնդրով (նայել մի բանի, մոտենալ մի բանի, հիասնալ մի բանով և այլն)։

§ 396. Չեզոք սեռի բայերը ըստ ձևի կարելի է բաժանել 2 խմբի՝ 1) սկզբնաձևային, սեռային ածանց չունեցող չեզոք բայեր

(fնել, վազել, ճայել, կաճգնել, նստել, ճագալ, փոշտալ, մեծանալ *և այլն*) և 2) *կրավորական վ սեռածանցն ունեցող չեզոք բայեր* (ճագնվել, նուզվել, սաճրվել, ողջագուրվել, հաշտվել *և այլն*)։

§ 397. Ակզբնաձևային, սեռածանց չունեցող չեզոք սեռի բայերը, ներգործական սեռի բայերի նման, չունեն ձևաբանական հատուկ դրսևորում։ Միայն կարելի է ասել հետևյալը. չեզոք սեռին են պատկանում հիմնականում ա խոնարհման բայերը (գալ, գնալ, գթալ, գոռալ, թնդալ, զնգալ, լողալ, կաղալ, ճնալ, կռնչալ, նվալ, ցոլալ *և այլն*)։ *Ե խոնարհման բայերից չեզոք սեռին են պատկանում հիմնականում չ և ն բայակազմական ածանցներ ունեցող բայերը* (դիպչել, թռչել, կորչել, հանգչել, սառչել, փախչել, իջնել, ածցնել, ընկնել, մեռնել, մտնել *և այլն*) *և համեմատաբար փոքր թվով պարզ, ածանցազուրկ բայեր* (աճել, ազդել, ամպել, առաջադիմել, վազել, վիճել, դալարել, գաղթել, թախծել *և այլն*)։

Չեզոք սեռի բայերի այս խմբում հատկապես մեծ թիվ են կազմում վերածության-դառնալիության իմաստ ունեցող ան բայածանցն ունեցող բայերը (մեծանալ, ուժեղանալ, անեղանալ, ծերանալ, կանաչանալ, գեղեցկանալ *և այլն*) *և բնաձայնական բայերը* (թրխկալ, շրխկալ, վզզալ, դմբդմբալ, փոշտալ, զրնգալ *և այլն*)։

§ 398. Չեզոք սեռի բայերի արտահայտած իմաստները բազմազան են։ Դրանցից կարելի է հիշատակել մի քանիսը՝ 1) տեղափոխություն տարածության մեջ (գալ, գնալ, վազել, մոտենալ, հեռանալ, փախչել, նասնել, ընթանալ *և այլն*), 2) *ընդհանրապես առարկայի դիրքի փոփոխություն* (նստել, կանգնել, պառկել, ընկնել, սայթաքել, թիկնել *և այլն*), 3) *զգացական, կամային, մտավոր և այլ փոփոխություններ, վիճակ, դրություն* (ծիծաղել, վախենալ, սարսափել, զարհուրել, ախրել, մրափել, մրսել, նիրհել, նընջել, ուրախանալ *և այլն*), 4) *բնության զանազան երևույթների վերաբերող եղելություններ, գործողություններ* (ամպել, աննրևել, լուսանալ, մթնել, աճել, բուսնել *և այլն*), 5) *բնաձայնական զանազան երևույթներ* (զնգալ, վզալ, շրխկալ, թրխկալ *և այլն*), 6) վերածություն-դառնալիություն (ուժեղանալ, թուլանալ, կանաչել, դեղնել, գեղեցկանալ, սիրունանալ) *և այլն*։

Այս կարգի բայերը միանում են մեկ սեռի մեջ իրենց մեկ ընդհանուր, բնորոշ հատկանիշով. դա ուղիղ խնդիր չունենալու և չընդունելու հատկանիշն է՝ գործողության՝ ենթակայի կողմից կա-

տարվելու առկայության պայմաններում։ Դրանով նրանք մի կողմից հակադրվում են ներգործական և պատճառական բայերին, որոնք պահանջում են ուղիղ խնդիր, մյուս կողմից՝ կրավորական սեռի բայերին, որոնք թեև նույնպես չունեն և չեն կարող պահանջել ուղիղ խնդիր, սակայն ցույց են տալիս այնպիսի գործողություն, որ չի կատարվում քերականական ենթակայի կողմից։

Գործողության անցումային-ուղղվածության գաղափար չունենալու հատկանիշից էլ բխում է չեզոք սեռի բայերի մեկ այլ ձևաբանական առանձնահատկությունը, այն, որ նրանք չեն կարող ընդունել կրավորական վ ածանցը և վերածվել կրավորական սեռի բայերի (խոսքը սկզբնաձևային չեզոք բայերի մասին է)։ Եվ դա բնական է։ Եթե չկա առարկա, որն իր վրա կրի գործողությունը, այն չի էլ կարող դրսևորվել ենթակայի միջոցով. հնարավոր չէ ասել՝ վազվեցի, կանգնվեց, ննջվում է և այլն։

§ 399. Այսպիսով՝ չեզոք սեռի բայերը հնչույթամբ տարբերվում են մի կողմից՝ ներգործական և պատճառական, մյուս կողմից՝ կրավորական սեռի բայերից քերականական ուղիղ խնդիր և ներգործող խնդիր չընդունելու առանձնահատկությամբ։ Դժվարություն է ներկայացնում միայն մի քանի չեզոք բայերի սեռային տարբերակումը ներգործականներից այն առումով, որ նրանք իրենց բայիմաստով պահանջում են մի առարկա, որին հանգի, որի նկատմամբ կատարվի այդ գործողությունը։ Սակայն այդ առարկան քերականորեն վերացարկվում և դրսևորվում է ոչ թե ուղիղ խնդրով, ինչպես ներգործական սեռի բայերի մոտ է, այլ հանգման խնդրով։ Այդ պատճառով նրանք չեն համարվում ներգործական սեռի բայեր։ Բերենք օրինակներ՝ օգնել մեկին, պատկանել մեկին *կամ մի բանի,* ճաշակել *մի բանի,* ճաճանչել *մեկին, ապավինել մեկին կամ մի բանի, դիպչել մի բանի, հետևել մի բանի, նախանձել մի բանի և այլն։ Այն, որ հիշյալ բայերը ոչ թե ներգործական սեռի են, այլ չեզոք, ձևաբանորեն ապացուցվում է նրանով, որ այստեղ հնարավոր չէ չեզոք սեռ—կրավորական սեռ հակադրությունը, այսինքն՝ ի տարբերություն ներգործական սեռի բայերի, սրանք չեն կարող ընդունել վ կրավորական ածանցը և վերածվել կրավորական սեռի. չկան* օգնվել, պատկանվել, ապավինվել, դիպչվել, նախանձվել *և այլ ձևերը։*

ԿՐԱՎՈՐԱԶԵՎ ՉԵՋՈՔ ԲԱՅԵՐ

§ 400. Ժամանակակից գրական հայերենում ներգործական սեռի բայերը, ընդունելով վ սեռածանցը, ոչ բոլոր դեպքերում են ստանում կրավորական սեռի նշանակություն։ Հաճախ նրանք ցույց են տալիս այնպիսի գործողություն, որ ենթական ոչ թե կրում է իր վրա, այլ հենց ինքն է կատարում, ունենում է դրության, վիճակի փոփոխություն՝ առանց ուրիշի գործողությունը կրելու կամ հենց ինքն է հանդիսանում իր գործողության օբյեկտը և այլն։ Այս բոլոր դեպքերում վ սեռածանցով բայերը ունենում են ոչ թե կրավորական սեռի, այլ չեզոք սեռի արժեք։ Օրինակ՝ Գետակի վրա թեվվել է ուռին (Իս.)։ Պատանի արտիստը խոնարհվում է հավերժահարսի դեմքի վրա (ՆԴ, Նա և Նա)։ Նա պատրաստվում էր բեմին ճվիրվելու (Շիրվ., Արտիստը)։ Բոլորը դեմքով շրջվում էին նրա կողմը, բարևում ու ժպիտով ուղեկցում նրան (ԳՍ, Թեհրան)։ Բերված օրինակներում թեվվել է, խոնարհվում է, պատրաստվում էր, ճվիրվելու, շրջվում էին բայաձևերը թեև ունեն վ սեռածանցը և հարաբերակցում են ներգործական սեռի բայերին (թեվել—թեվվել, խոնարհել—խոնարհվել, շրջել—շրջվել, պատրաստել—պատրաստվել, ճվիռել—ճվիռվել), սակայն կրավորական սեռին չեն պատկանում, որովհետև ենթական ոչ թե հանդիսանում է մեկ ուրիշի կատարած գործողության կրողը, այլ հենց ինքն է կատարում գործողությունը։ Այս նախադասություններում ներգործող խնդիր չկա և հնարավոր չէ վերականգնել։ Իհարկե, շատ հնարավոր է, որ հենց այդ նույն բայերը այլ նախադասություններում հանդես գան որպես կրավորական սեռի բայեր՝ ցույց տալով ենթակային անցնող գործողություն։ Օրինակ՝ Սեղանը պատրաստվել է վարպետի կողմից, Ծաղիկը ճվիրվեց պատանու կողմից և այլն։ Այդ է պատճառը, որ կրավորական սեռի բայերը և կրավորաձև չեզոք բայերը ժամանակակից հայերենում հնարավոր է տարբերակել միայն նախադասության մեջ, կոնկրետ կիրառության մեջ։ Եթե վ ածանց ունեցող բայը նախադասության մեջ ունի ներգործող խնդիր և կամ այն ենթադրվում է, իսկ ենթական հանդես է գալիս գործողության կրողի դերով, գործ ունենք կրավորական սեռի բայի հետ (Սեղանը պատրաստվել է վարպետի կողմից), իսկ եթե նախադասության մեջ չկա և հնա-

բավոր չէ ենթադրել ներգործող խնդիր, և ենթական ինքը հանդիսանում է գործողության կատարողը, ապա գործ ունենք չեզոք սեռի բայի հետ (Ես պատրաստվում եմ քնելու)։ Վերջին դեպքում բայը պատասխանում է ոչ թե ինչ է արվում հարցին, ինչպես կրավորական սեռի դեպքում է, այլ ինչ է անում հարցին։ Դա ևս հանդիսանում է կրավորական սեռի և կրավորաձև չեզոք սեռի տարբերակիչ հատկանիշ։

Ծանոթ.— *Կարելի է ասել, որ կրավորական սեռի բայերի մեծ մասը ունի չեզոք սեռի իմաստով գործածվելու ունակություն։*

§ 401. Ըստ իրենց ցույց տված գործողության բնույթի կրավորաձև չեզոք բայերը կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

1. Բայեր, որոնք ցույց են տալիս ենթակայի կատարած ինքնին գործողություն՝ կապված առարկայի դիրքի, վիճակի, դրության, ինչպես նաև հոգեվիճակի, տրամադրության փոփոխության հետ և այլն։ Սրանք կազմում են կրավորաձև չեզոքների մեծ մասը։ Օրինակ՝ Մանեն սկզբում շվոթվեց, հետո սոխակը իրեն ծիծաղել (ՆԴ, Պայքար)։ Ծաղիկներն ահա՝ քնքուշ փակվեցին, Բացվեցին երկնի ծաղիկներն անհաս (ՎՏ)։ Նրանք նույնպես վրդովված էին Ասլանյան եղբայրների դեմ (ՍՋ, Հեղկոմի նախագահը)։ Մտքի առաջ բացվեց մի էջը հին օրերի (ԱԲ, Իվան բեյը)։

2. Անդրադարձ բայեր.— սրանք ցույց են տալիս ենթակայի այնպիսի գործողություն, որն անցնում է հենց իր վրա, այսինքն՝ առարկան հանդիսանում է միաժամանակ և՛ գործողության կատարողը, և՛ կրողը։ Օրինակ՝ Նա արագ լվացվեց և սանրվեց։ Նա առանց լվացվելու, առանց հագնվելու դուրս էր եկել քնարանից (Ր, Սամվել)։ Լևոնը հագնվեց և կոճկվեց մինչև վերջին կոճակը (ԱԲ, Սև հացը), Գերանների ծայրերը կռացել էին և կախվել (ԱԲ, Կարմրաքար)։ Ամպը կախվել է ամպից (ՀՄ)։ Ֆահրադը հուսահատությունից գիշերը գնում է գետի մոտ, պատրաստվում է գետն ընկնել ու խեղդվել (Ր, Կայծեր)։ Բերված օրինակներում լվացվել, սանրվել, հագնվել, կոճկվել. կախվել, խեղդվել բայերն անդրադարձ են, որովհետև ցույց են տալիս առարկայի՝ իր նկատմամբ կատարվող գործողություն (լվանալ իրեն, սանրել իրեն, կախել իրեն և այլն)։

3. Փոխադարձ բայեր.— սրանց ցույց տված գործողությունը կատարվում է երկու և ավելի անձերի կողմից, և վերջիններս միա-

ժամանակ փոխադարձաբար կրում են միմյանց գործողությունը։ Օրինակ՝ համբուրվել, փաթաթվել, ծեծկվել, տեսնվել և այլն։ Քանի որ այս բայերը ցույց են տալիս երկու և ավելի անձանց գործողություն, այդ պատճառով առորոգյալի պաշտոնում գործածվում են միայն հոգնակի թվով։ Օրինակ՝ Երկու սիրահարները առանց մի րոպե կանգ առնելու գրկախառնվեցին (Մուր., Անպատճառ իշխանուհի)։ Գտավ նրան, փաթաթվեցին, համբուրվեցին սրտագին (Գ. Սար.)։ Սրանց մի մասը կարող է գործածվել նաև եզակի թվով, սակայն այդ դեպքում փոխադարձ գործողության իմաստը կորչում է։ Օրինակ՝ Ներսիկը փաթաթվեց մորը (ԴԴ, Վարդանանք)։

Այս բայերը ևս ունեն իրենց զուգահեռ ներգործական սեռը (համբուրել—համբուրվել, գրկել—գրկվել, փաթաթել—փաթաթվել և այլն)։

4. Բայեր, որոնք ունեն համատեղ գործելու կամ լինելու նշանակություն։ Դրանցից են՝ հավաքվել, կուտակվել, խմբվել, դիզվել, ժողովվել, կիտվել և այլն։ Օրինակներ՝ Երբ լուսինը կաթնագույն լույսով ողողում էր այդ սքանչելի բարձրությունը, պլպլացող խարույկի շուրջն էին կիտվում բոշաները (ՎՓ)։ Ու գալիս են, շարչու գլխին կիտվում պանդուխտ, գերի հայեր (ՀԹ, Թագավորն ու շարչին)։ Ազնվականները խմբված էին իշխանի պատրշգամբում (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Ամբոխվել էին տեսիլներն ահեղ (ԵՉ)։ Նրանք ժողովվել էին հողային տանիքի վրա (Շիրվ., Քաոս)։

Ինչպես երևում է բերված օրինակներից, այս դեպքում ևս, նախորդի նման, բայը դրվում է հոգնակի թվով։ Եզակի թվով գործածվելու դեպքում սրանք ևս այլևս ցույց չեն տալիս համատեղ գործողություն։ Օրինակ՝ Ջյունը կիտվել է բակերում, Անձրևաջուրը հավաքվել էր ջրափոսերում։

4. Բայեր, որոնք առանալով կրավորական վ ածանցը, բացի կրավորական սեռի նշանակությունից, ունենում են նաև առարկայի որևէ հատկանիշը կամ դերը ցույց տալու նշանակություն. ինչպես՝ Ջուրը թափվում է, Արյունը մակարդվում է, Երկիրը պտտվում է, Թելը կտրվում է և այլն։

§ 402. Կան մի շարք կրավորաձև չեզոք բայեր, որոնց մեջ վ ածանցը հանդես է գալիս բայակազմական-բաղադրական դե-

րով, այսինքն՝ այդ բայերը չունեն ածանցազուրկ ներգործական սեռի զուգակիցներ։ Դրանցից են՝ բնակվել, գանգատվել, գժվել, զբաղվել, թաքնվել, խաղաղվել, խելագարվել, հրաժարվել, համարձակվել, հաշտվել, հարձակվել, հպատակվել, նմանվել, շրխկվել, սթափվել, սիրահարվել, սխալվել, վհատվել *և այլն։ Ժամանակակից հայերենում չկան և հնարավոր չէ վերականգնել* բնակել, գանգատել, գժել, զբաղել, հրաժարել, համարձակել, հարձակել *և այլ ձևերը։*

Ծանոթ.— *Այս բայերի մի մասը հին հայերենում ևս չի ունեցել իր ներգործական սեռի զուգահեռը. ինչպես՝* գանգատիմ>գանգատվել, խելագարիմ>խելագարվել, ուշաթափիմ>ուշաթափվել *և այլն, իսկ մի մասը գրաբարում ունեցել է իր ներգործաձև զուգահեռը, որը ժամանակակից հայերենում չի պահպանվել. այսպես՝* բնակեմ||բնակիմ>բնակվել, նմանեմ||նմանիմ>նմանվել, սխալեմ||սխալիմ>սխալվել, վհատեմ||վհատիմ>վհատվել, գրժտեմ||գժտիմ>գժտվել, զբաղեմ||զբաղիմ>զբաղվել, համարձակեմ||համարձակիմ>համարձակվել *և այլն։ Այդ է պատճառը, որ ժամանակակից հայերենի վաղ շրջանի ստեղծագործություններում երբեմն հանդիպում է այս բայերի գործածությունը առանց վ ածանցի։ Օրինակ՝ Ջալալ իշխանը չի պիտի համարձակեր այս փառավոր տոհմի պատիվն այսքան անարգելու (Մուր., Ռուզան)։ Հընարագիտությունը հաջողեց (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Եզերային ծառերն ու գյուղերը ճամանում էին մոայլ սովերների (ՎՓ, Ծովի վրա)։*

§ 403. Ժամանակակից հայերենում կան չեզոք սեռի մի շարք բայեր, որոնք գործածվում են և՛ ածանցազուրկ, և՛ վ ածանցով։ Դրանցից են՝ բռնկել||բռնկվել, համաձայնել||համաձայնվել, հաճդարտել||հաճդարտվել, վերաբերել||վերաբերվել *և այլն։ Իմաստային տարբերակում այս զուգահեռ ձևերի միջև հիմնականում չի նկատվում։ Որոշ իմաստային տարբերակում նկատվում է միայն* վերաբերել||վերաբերվել *զուգահեռների միջև։ Առաջին՝ ածանցազուրկ ձևը գործածվում է հիմնականում իրի անուն հանդիսացող ենթակայի հետ (Դիտողությունը վերաբերում է բոլորին), իսկ երկրորդ՝ ածանցավոր ձևը գործածվում է անձ ցույց տվող ենթա-*

կայի հետ և ունի վերաբերմունքի դրսևորման իմաստ (Աշոտը Արամի հետ լավ է վերաբերվում)։

Ծանոթ.— ժողովրդական-խոսակցական լեզվում, երբեմն նաև գեղարվեստական գրականության մեջ հանդիպում են մի շարք ածանցազուրկ չեզոք սեռի բայերի վ ածանցով զուգահեռներ, որոնք գրական լեզվում ընդունելի չեն։ Դրանցից են, օրինակ՝ նախանձվել, պարապվել, տուժվել, շվարվել, ծծվել և այլն։ Սրանք գրական հայերենում գործածվում են առանց սեռածանցի՝ պարապել, նախանձել, տուժել, շվարել, ծծել և այլն։

ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ՍԵՌ

§. 404. Պատճառական սեռի բայերը ցույց են տալիս այնպիսի գործողություն, որը չի կատարվում ենթակայի կողմից. ենթական պատճառ է լինում, դրդում, ստիպում, միջնորդում է, որ գործողությունը կատարվի (այստեղից էլ պատճառական սեռ անվանումը)։ Իսկ բայահիմքի ցույց տված գործողության կատարողը դրսևորվում է կամ ուղիղ խնդրի միջոցով, ինչպես՝ «Մայրը ֆնեցրեց աղջկան», կամ անուղղակի խնդրի միջոցով, ինչպես՝ «Ուսուցիչը աշակերտներին շարադրություն գրել տվեց»։ Առաջին նախադասության մեջ ենթական՝ մայրը, ոչ թե ինքն է կատարում քնելու գործողությունը, այլ պատճառ է դառնում, ստիպում է, որ մեկ ուրիշը՝ որդին կատարի այդ գործողությունը։ Ուղիղ խնդիրն այստեղ ունի երկակի բնույթ. մի կողմից նա իր վրա է կրում ենթակայի գործողությունը, իսկ մյուս կողմից հենց ինքն է կատարում պատճառական բայահիմքի ցույց տված գործողությունը՝ քնելու գործողությունը։ Հենց սրանով էլ այն տարբերվում է ներգործական սեռի բայերի մոտ դրվող ուղիղ խնդրից, որը միայն կրում է ենթակայի գործողությունը։

Երկրորդ նախադասության մեջ բայահիմքի ցույց տված դրելու գործողությունը դարձյալ չի կատարվում ենթակայի կողմից. ենթական իր գործողությամբ միայն պատճառ է հանդիսանում, ստիպում է, որ այդ գործողությունը կատարվի։ Այստեղ պատճառական բայը պահանջել է երկու խնդիր՝ ուղիղ խնդիր, որն իր վրա է կրում, կամ որին անցնում է գործողությունը (շարադրություն) և

տրական հոլովով դրված անուղղակի խնդիր (աշակերտներին)[42], *որը ենթակայի ստիպմամբ կատարում է գործողությունը։*

§ 405. Պատճառական սեռի բայերը տարբերվում են ներգործական սեռի բայերից նաև նրանով, որ ունեն սեռի ձևաբանական ցուցիչ։ Նրանք կազմվում են չեզոք և ներգործական սեռի բայերից՝ 1) ցն պատճառական բայածանցի օգնությամբ. օրինակ՝ վազել—վազեցնել, fնել—fնեցնել, ճաշել—ճաշեցնել, ուտել—կերցնել, սովորել—սովորեցնել, կարդալ—կարդացնել *և այլն, 2)* տալ *բայի հարադրությամբ՝* գրել տալ, կարդալ տալ, շինել տալ *և այլն։ (Ցն պատճառական ածանցով ածանցված պատճառական բայերի կազմության առանձնահատկությունների մասին տե՛ս § 344—349)։*

§ 406. Մեծ թիվ են կազմում հատկապես չեզոք սեռից ածանցված պատճառական բայերը։ Բոլոր չեզոք սեռի բայերը, չընչին բացառությամբ կարող են ցն ածանցի միջոցով վերածվել պատճառական սեռի։ Դրանով նրանք միաժամանակ փոխում են և՛ սեռը, և՛ վեր են ածվում անցողական բայերի (ձեռք են բերում ուղիղ խնդիր առնելու հատկություն)։ Ներգործական սեռի ոչ բոլոր բայերն են, որ ընդունում են ցն ածանցը։ Այսպես՝ եթե կարելի է ասել՝ կարդացնել, սովորեցնել, կերցնել, հասկացնել, խրմեցնել *և այլն, ապա ժամանակակից հայերենի համար խորթ է և չի կազմվում* գրեցնել, ճկարեցնել, ազատեցնել, ածեցնել, աղացնել *և այլն։ Այս բայերի պատճառականները կազմվում են վերլուծական եղանակով՝* տալ *բայի հարադրությամբ՝* գրել տալ, ճկարել տալ, ազատել տալ, աղալ տալ *և այլն։*

Տալ *բայի հարադրությամբ պատճառական բայեր կարող են կազմվել բոլոր ներգործական և չեզոք բայերից, ինչպես՝* վազել տալ, ուտել տալ, կարդալ տալ *և այլն։ Ավելին՝ ածանցավոր պատճառականները կարող են* տալ *բայի հարադրությամբ կրկնակի պատճառականություն ձեռք բերել, ինչպես՝* վազեցնել—վազեցնել տալ, fնեցնել—fնեցնել տալ, կարդացնել—կարդացնել տալ *և այլն։*

§ 407. Ըստ սկզբնատիպ բայերի բնույթի՝ պատճառական սե-

42 *Ա. Աբրահամյանը այդ խնդիրը կոչում է միջնորդական խնդիր (տե՛ս նշվ. աշխ., էջ 555)։*

ռի բայերը արտահայտում են տարբեր իմաստային հարաբերություններ։

Չեզոք սեռից ածանցված պատճառականները ցույց են տալիս գործողության հարաբերումը երկու առարկաների՝ սուբյեկտի և օբյեկտի հետ, ճիշտ այնպես, ինչպես ներգործական սեռի բայերը։ Սակայն նրանք իրենց արտահայտած գործողության բնույթով որակապես տարբերվում են ներգործական սեռի բայերից։ Այս բայերի մոտ քերականական ենթական, սուբյեկտը իր որևէ գործողությամբ, դրությամբ, վարվելակերպով և այլն պատճառ, առիթ է հանդիսանում պատճառական բայահիմքով դրված գործողության կատարման համար և կամ դրդում, ստիպում է, որ այդ գործողությունը կատարվի։ Իսկ ուղիղ խնդրով արտահայտված առարկան մի կողմից իր վրա է կրում ենթակայի գործողությունը, մյուս կողմից միաժամանակ հանդիսանում է բայահիմքի ցույց տված գործողության կատարողը կամ որևիցե դրության մեջ եղողը։ Օրինակ՝ Նրա այդ հայտարարությունը ուրախացրեց բոլորին։ Այս նախադասության մեջ ենթական՝ հայտարարությունը, պատճառ, առիթ է հանդիսանում, որ բոլորը ուրախանան, այսինքն՝ ուրախանալու գործողությունը կատարվում է ուղիղ խնդրով դրսևորված առարկայի կողմից. միաժամանակ ենթական ազդում, ներգործում է ուղիղ խնդրի վրա՝ դրանով էլ հենց պատճառ դառնալով՝ ստիպելով, որ այն կատարի գործողությունը, կամ լինի որևէ դրության մեջ։ Բերենք այլ օրինակներ՝ Ուսուցիչը երեխաներին կանգնեցրեց ըստ հասակի։ Նրա արարքը ծիծաղեցրեց բոլորին։ Բերված օրինակներում ևս նույն տիպի հարաբերություն է դրսևորված։

Նույնպիսի իմաստային հարաբերություն են արտահայտում նաև կրավորաձև չեզոքներից կազմված պատճառականները։ Սրանք միայն ունեն կառուցվածքային այն առանձնահատկությունը, որ պատճառական ձևում վ ածանցը ընկնում է։ Օրինակ՝ հաշտվել—հաշտեցնել, լվացվել—լվացացնել, գժտվել—գժտվեցնել, հիասթափվել—հիասթափեցնել, խելագարվել—խելագարեցնել և այլն։ Հաշտեցնել նշանակում է՝ այնպես անել, որ մեկը կամ մի քանիսը հաշտվեն, գժտեցնել—այնպես անել, որ մեկը կամ

մի քանիսը դժվարին, ոիասթափեցնել—այնպես անել, որ մեկը հիասթափվի և այլն։

§ 408. Կան չեզոք բայերից ածանցված մի շարք բայեր, որոնք իրենց արտահայտած իմաստային հարաբերությամբ ոչնչով չեն տարբերվում ներգործական սեռի բայերից, այսինքն՝ ցույց են տալիս, որ ենթական ինքն է կատարում գործողությունը։ Օրինակ՝ Նա արագացրեց քայլերը։ Սուրենը բարձրացրեց իր արտադրական ցուցանիշները։ Ես հանգցրի լույսը և այլն։

Այս պատճառականները կարելի է համարել ներգործական սեռի ճիշտ այնպես, ինչպես կրավորական սեռածանցն ունեցող շատ բայեր չեզոք սեռի են (լվացվել, հանձնվել, հաշտվել և այլն)։

§ 409. Երբեմն միևնույն պատճառական բայը տարբեր կիրառություններում, տարբեր խոսքային միջավայրերում, կարող է հանդես գալ և՛ ներգործական սեռի, և՛ պատճառական սեռի արժեքով։ Այսպես՝ Ես գիրքը վազեցրի տուն և Ես Աշոտիկին շատ վազեցրի նախադասություններից առաջինում վազեցնել բայը ներգործական սեռի է, որովհետև ենթական ինքն է կատարում գործողությունը, իսկ ուղիղ խնդիրը միայն կրողն է, իսկ երկրորդ նախադասության մեջ նույն վազեցնել բայը արդեն պատճառական սեռի է, որովհետև ենթական ոչ թե ինքն է կատարում գործողությունը, այլ ստիպում է, պատճառ է դառնում, որ մեկ ուրիշը (Աշոտիկը) կատարի գործողությունը։

Ներգործական սեռի են հատկապես մի շարք բնաձայնական բայերից կազմված պատճառականները. դրանցից են՝ շրխկացնել, թրխկացնել, դմբդմբացնել, չփչփացնել, ցպցպացնել և այլն։

Ծանոթ.— Ժամանակակից հայերենում կան բավականաչափ թվով բնաձայնական չեզոք բայեր, որոնք ընդունելով ցն պատճառական ածանցը՝ մնում են նույն սեռի՝ չեզոք սեռի սահմաններում և սեռային-իմաստային փոփոխություն չեն կրում։ Այստեղ ցն ածանցը չունի պատճառականության իմաստ և բային տալիս է միայն գործողության աստիճանացման նշանակություն։ Օրինակ՝ բզզացնել, վռռացնել, փնչացնել, փոշտացնել, բլբլացնել, ծլվլացնել, խոխոտացնել և այլն։ Այս ձևերը հատկապես տարածված են բանավոր-խոսակցական լեզվում։

§ 410. Ժամանակակից հայերենում կան մի շարք պատճառական բայեր, որոնց սկզբնատիպ բայը չի պահպանվել, այդ

պատճառով նրանք կամ լրիվ կորցրել, կամ կորցնում են իրենց պատճառական իմաստը և համարվում են ներգործական սեռի բայեր։ Դրանցից են՝ ճարուցել, մատուցել, կառուցել, ճատուցել, փակցնել, կասեցնել, յուրացնել, ճրամցնել, վերցնել և այլն։ Այդպիսին պետք է համարել նաև պատկերացնել բայը, որն իր ընկերզենատիպ պատկերաճալ բայից իմաստով շատ հեռացել է։

§ 411. Ներգործական բայերից ածանցված պատճառական բայերի մեջ պատճառականության իմաստը ավելի ցայտուն է դրսևորվում, այդ պատճառով քերականագիտության մեջ սրանք կոչվում են նաև բուն պատճառական բայեր։ Ի տարբերություն չեզոք բայերից ածանցված պատճառականների, այս բայերը ցույց են տալիս ոչ թե երկու, այլ երեք առարկաների միջև եղած հարաբերությունը, այսինքն՝ գործողության կատարումը անմիջականորեն կապված է երեք առարկաների հետ՝ առարկա, որը պատճառ է դառնում գործողության կատարման համար, առարկա, որը կատարում է գործողությունը և առարկա, որը կրում է գործողությունը կամ որին անցնում է գործողությունը։ Օրինակ՝ կարդացնել մեկին մի բան, հասկացնել մեկին մի բան, խմեցնել մեկին մի բան և այլն։ Կարդացնել, հասկացնել, խմեցնել գործողությունների կատարման համար անհրաժեշտ է՝ 1) առարկա, որն ստիպի, դրդի, պատճառ դառնա, որպեսզի գործողությունը կատարվի (ես կարդացրի, հասկացրի, խմեցրի)։ Այդ առարկան նախադասության մեջ դրսևորվում է ենթակայի միջոցով՝ դիմավոր բայերի մոտ և կողմնակի ենթակայով՝ դերբայների մոտ, 2) առարկա, որ կատարի կարդալու, հասկանալու, խմելու գործողությունը (կարդացրի, հասկացրի աշակերտին, խմեցրի երեխային)։ Այդ առարկան նախադասության մեջ դրսևորվում է տրական հոլովով դրված միջնորդական խնդրով (երեխային, աշակերտին) և 3) առարկա, որին անցնի, որն իր վրա կրի այդ գործողությունը (կարդացրի, հասկացրի դասը, խմեցրի ջուրը)։ Այդ առարկան նախադասության մեջ դրսևորվում է ուղիղ խնդրով։ Իհարկե, ճիշտ այնպես, ինչպես ներգործական սեռի բայերի մոտ, հաղորդման նպատակից ելնելով, խոսքի մեջ կարող է ուղիղ խնդիրը չդրվել, այդպես էլ խոսքի մեջ այս երկու խնդիրներից որևէ մեկը, հատկապես անուղղակի խնդիրը, կարող է բացակայել, սակայն դրանք միշտ ենթադրվում են։

§ 412. Ինչպես ասվեց, ոչ բոլոր դեպքերում է հնարավոր ներգործական սեռի բայերից, մասամբ նաև չեզոք սեռի բայերից ածանցման միջոցով ստանալ պատճառական սեռի բայեր։ Այսպիսի դեպքերում լեզուն պատճառականության իմաստ արտահայտելու համար գործածում է վերլուծական եղանակը՝ պատճառականությունը դրսևորվում է սկզբնատիպ բայի անորոշ դերբայի և տալ բայի հարադրությամբ։ Տալ բայը այս հարադրության մեջ կորցրել է իր բայական ինքնուրույն նշանակությունը և կատարում է պատճառական սեռածանցի դեր։ Եթե սեռածանցով պատճառական բայեր կերտվում են հիմնականում չեզոք բայերից, համեմատաբար ավելի քիչ՝ ներգործական բայերից, ապա տալ բայի հարադրությամբ պատճառականներ կերտվում են հիմնականում ներգործական բայերից և շատ քիչ թվով չեզոք սեռի բայերից։

Ներգործական սեռի բայերից հարադրությամբ կազմված պատճառականները, ածանցվածների նման, ցույց են տալիս ենթակայի և երկու խնդիրների միջև եղած հարաբերությունը, իսկ չեզոք սեռից հարադրվածները՝ երկու առարկաների փոխհարաբերությունը՝ ուղիղ խնդրի երկակի քնույթով։ Սրանց տարբերությունը միայն այն է, որ տալ բայով հարադրված ձևերում պատճառականության իմաստն ավելի է ընդգծվում, քան ածանցված ձևերում։

§ 413. Երբեմն լեզվում միևնույն բայի պատճառականը կարող է հանդես գալ երկու ձևով էլ՝ և՛ ածանցված, և՛ հարադրությամբ։ Օրինակ՝ կարդացնել—կարդալ տալ, խմեցնել—խմել տալ և այլն։ Սակայն պետք է նշել, որ եթե բայը ընդունակ է ածանցմամբ պատճառական ձև ստեղծել, ապա ավելի տարածված և հանձնարարելի է ածանցված ձևը։ Դա վերաբերում է հատկապես չեզոք սեռից կազմվող պատճառականներին. այսպես՝ սովորական և ընդունելի են ուրախացնել, ճնեցնել, վազեցնել, մեծացնել, ուժեղացնել և այլն, անսովոր և կիրառելի չեն ուրախանալ տալ, ճնել տալ, վազել տալ, մեծանալ տալ, ուժեղանալ տալ և այլն։

Այլ է պատկերը ներգործական սեռի բայերից պատճառականների կազմության ժամանակ։ Ներգործական սեռի բայերի մեծ մասը կարող է պատճառական դառնալ տալ բայի հարադրությամբ, իսկ մի մասը՝ և՛ ածանցմամբ, և՛ հարադրությամբ։

Ըստ որում, վերջին դեպքում երկու ձևերն էլ հավասարապես գործածվում և ընդունելի են։ Օրինակ՝ խմեցնել—խմել տալ, հիշեցնել—հիշել տալ *և այլն։*

§ 414. Ժամանակակից հայերենում տալ-*ի հարադրությամբ պատճառական բայեր են կազմվում ոչ միայն չեզոք կամ ներգործական բայերից, այլև ածանցված պատճառականներից՝ ստեղծելով կրկնակի պատճառական բայաձևեր։ Երբ հարադրությունը ստեղծվում է չեզոք սկզբնաձև ունեցող պատճառականից և* տալ *բայից, փոխվում է գործողության հետ կապված առարկաների քանակը։ Այսպես՝ եթե կանգնեցնել ձևը ցույց է տալիս երկու առարկաների փոխհարաբերություն* (կանգնեցնել մի բան), *ապա կանգնեցնել* տալ *ձևը, ներգործական սկզբնատիպ ունեցող պատճառականների նման, ցույց է տալիս երեք առարկաների փոխհարաբերություն* (կանգնեցնել տալ մեկին մի բան)։ *Այլ է պատկերը ներգործական սկզբնատիպ բայերից ստեղծված կրկնակի պատճառական բայաձևերում՝* զգացնել տալ, մոռացնել տալ, հիշեցնել տալ *և այլն։*

Այս դեպքում իմաստային տարբերակում պատճառական ձևի և կրկնակի պատճառականի միջև չկա (զգացվում է միայն պատճառականության իմաստի որոշ սաստկացում)։ Վերջին ձևը կարելի է փոխարինել կամ ածանցված պատճառականով, կամ սովորական հարադրական պատճառականով։ Այսպես՝ հիշեցնել տալ-*ը հավասարարժեք է* հիշեցնել *և* հիշել տալ *ձևերին,* մոռացնել տալ-*ը՝* մոռացնել *և* մոռանալ տալ *ձևերին,* զգացնել տալ-*ը՝* զգացրնել *և* զգալ տալ *ձևերին և այլն։ Այդ է պատճառը, որ ներգործականներից կազմված կրկնակի պատճառականները համեմատաբար քիչ են հանդիպում։ Բերենք մի քանի օրինակ՝ Ներկայի փոքրիկ դառնությունները հեշտությամբ* մոռացնել եճ տալիս *մեզ անցյալի բյուրավոր քաղցրությունները (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Բավական է օդի թեթև տատանում, որ նա իրեն խորքերից* զգացնել տա *(ՍԳ)։ Նա երբեք* զգացնել չէր տալիս *իր գժգոհությունն ու անհանգստությունը (ՍՀ)։ Եվ նրա ժպիտը* մոռացնել է տալիս, *թե կյանքը գարնան պես արագահոս է (Իս., Լի-Թայի-Պո)։ Նա ինձ* սպասեցնել չտվեց *(ՍՀ)։ Եվ դիմացինը* հասկացնել չէր տալիս, *որ ինքը գիտե ճշմարտությունը (ՍԳ)։*

ՍԵՌԱՅԻՆ ԶՈՒԳԱՀԵՌՆԵՐ, ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԿՐԿՆԱՍԵՌՈՒԹՅՈՒՆ

§ 415. Ժամանակակից հայերենում հաճախ միևնույն բայը իր տարբեր իմաստներով պատկանում է տարբեր սեռերի։ Այսպես՝ լսել բայը իր հիմնական իմաստներով ներգործական է (ձայն լսել, դաս լսել, լուր լսել և այլն)։ Սակայն այն գործածվում է նաև «հնազանդվել, մեկի ասածներին հետևել, ենթարկվել» իմաստով և այս դեպքում հանդես է գալիս որպես չեզոք սեռի բայ՝ պահանջելով հանգման խնդիր (լսել մեծերի խոսքին, լսել բանականության ձայնին և այլն)։ Աշխատել բայը պատկանում է չեզոք սեռին, սակայն իր մեկ իմաստով՝ «վաստակել», այն հանդես է գալիս որպես ներգործական սեռի բայ և ընդունում է ուղիղ խնդիր (փող աշխատել, հաց աշխատել և այլն)։ Ապրել բայը չեզոք սեռի է, սակայն իր՝ «կյանքի ընթացքում զգալ, կրել» իմաստով ներգործական է և պահանջում է ուղիղ խնդիր (վիշտ ապրել, ուրախություն ապրել, երջանիկ վայրկյաններ ապրել և այլն)։ Նայել-ը չեզոք սեռի բայ է և պահանջում է հանգման խընդիր (նայել սարերին, նայել իրերին, նայել մեկին և այլն)։ Սակայն իր մի քանի իմաստներով՝ «քննել», «փորձել», «աչքի անցկացնել», «թերթել» և այլն, այն ներգործական է (գիրք նայել, գործը նայել, համը նայել, աշխատանքը նայել և այլն)։ Սպասել բայը հիմնական իմաստներով չեզոք սեռին է պատկանում և պահանջում է հանգման խնդիր (սպասել մեկի գալուն, սպասել ավտոբուսին, սպասել հրաժեշտի ժամին և այլն), սակայն իր «ակնկալել», «նախատեսել», «կարծել» իմաստներով այն ներգործական սեռի է (մեկից լավ բան սպասել, բարձր բերք սպասել և այլն)։

§ 416. Իհարկե, ոչ բոլոր դեպքերում է, որ բազմիմաստ բայերը՝ կապված բայիմաստի փոփոխության հետ, փոխում են նաև իրենց քերականական-սեռային հատկանիշը՝ հանդես գալով մե՛կ որպես ներգործական սեռի, մե՛կ որպես չեզոք սեռի բայ։ Շատ բազմիմաստ բայեր իրենց քերականական բնույթով միասեռ են և հանդես են գալիս կա՛մ որպես ներգործական սեռի, կա՛մ որպես չեզոք սեռի բայ։ Այսպես՝ գրել, բերել, շարժել և այլ բազմաթիվ բազմիմաստ բայեր իրենց բոլոր իմաստներով ներգոր-

ծական են, իսկ, ասենք, ընկնել, վազել, չողալ, գնալ և այլ բայեր, դարձյալ իրենց բոլոր իմաստներով չեզոք սեռի են։

§ 417. Երբեմն, հատկապես գեղարվեստական գրականության մեջ, մի շարք չեզոք բայեր, փոխաբերաբար գործածվելով՝ ընդունում են ուղիղ խնդիր։ Դա հատկապես նկատվում է բնության երևույթների, անշունչ առարկաների շնչավորման ժամանակ, երբ վերջիններիս վերագրվում են մարդկային հատկանիշներ։ Օրինակ՝ Երգ են կարկաչում աղբյուր ու վտակ (ՍԿ)։ Գութանն էր ճոճում հորովելները հին (ՆՋ, Ձայն հայրենական)։ Հովը սեր էր շշում կամաց ծաղիկներին, թփիկներին (ՍԿ)։ Բերված օրինակներում կարկաչել, ճոճել, շշալ բայերը ուղիղ խնդիր են ընդունում, որովհետև գործածվել են «ասել», «պատմել» նշանակությամբ։ Այս և նման դեպքերում բայերի փոխաբերական կիրառությունները հազակի, պատահական բնույթ են կրում և բնականաբար չեն ազդում նրանց հիմնական քերականական-սեռային ձևավորման վրա։

Երբեմն չեզոք սեռի բայերը ուղիղ խնդիր են առնում կա՛մ իրենց արմատը, կա՛մ համանիշ բառի արմատը։ Այս երևույթը քերականագիտության մեջ կոչվում է գործողության ներքին խընդրառություն։ Օրինակ՝ ...Իրենց կռիվը կռվել (ԴԴ, Վարդանանք)։ Իսկ ավեր դարձած դյուղակն ալևոր... Ննջում էր անվերջ իր սև հիջը խոր (ԵՉ, Դանթեական առասպել)։ Ես ահավոր երդում Երդվեցա (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Քնած էի հողի ֆուճ (Իս.)։ Նույն ձևով ասվում է պար պարել, լաց լացել և այլն։

Այս դեպքում ևս բայը, թեկուզ ժամանակավորապես, չի փոխում իր սեռային հատկանիշը և մնում է չեզոք սեռի։

§ 418. Լեզուն գտնվում է անընդհատ զարգացման և փոփոխության մեջ։ Ժամանակի ընթացքում հատկապես մեծ փոփոխություն են կրում բառերի իմաստները։ Բառերը կարող են ձեռք բերել կամ բոլորովին նոր իմաստներ՝ կորցնելով հները, կամ կարող են հին իմաստներին զուգահեռ ձեռք բերել նոր իմաստներ։ Բայերը, ենթարկվելով այդպիսի փոփոխությունների, հաճախ փոխում են նաև իրենց որոշ քերականական հատկանիշները։ Իմաստային տեղաշարժերի հետ միասին տեղաշարժեր են կատարվում նաև բայերի սեռային պատկանելության մեջ։ Այսպես, օրինակ, ճաճանչել, աշակերտել, սատակել, բարախել, կանգնել, գաղթել, բարգավաճել, ապավինել և այլ բայեր դրսբարում ու-

նեցել են ներգործական սեռի նշանակություն (երբեմն զուգահեռաբար նաև չեզոք սեռի), սակայն լեզվի զարգացման ընթացքում՝ կապված բայիմաստի, բայի ցույց տված գործողության բնույթի փոփոխության հետ, փոխել են նաև իրենց սեռը՝ վերածվելով հիմնականում չեզոք սեռի բայերի։ Սա մի երևույթ է, որ գործում է նաև այժմ, ժամանակակից գրական հայերենի ներսում։ Ինչպես ցույց են տվել ուսումնասիրությունները, այժմ սեռային տեղաշարժեր կատարվում են հիմնականում չեզոք սեռ> ներգործական սեռ ուղղությամբ։ Եվ դա հասկանալի է։ Հայտնի է, որ կան բավական թվով չեզոք բայեր, որոնց ցույց տված գործողության կատարման համար պահանջվում է մի առարկա, օբյեկտ, որը քերականորեն վերացարկվում է ոչ թե որպես ուղիղ խնդիր, ինչպես ներգործական սեռի բայերի մոտ է, այլ որպես հանդման խնդիր։ Ահա այդ բայերի գործողության բնույթը հիմք է հանդիսացել, որ քերականական նմանակությամբ այս բայերի մի մասը ընդունի ոչ միայն հանգման խնդիր, այլ դրան զուգահեռ՝ նաև ուղիղ խնդիր, որ ի վերջո հանգեցնում է չեզոք սեռ> ներգործական սեռ սեռային տեղաշարժի։ Այսպես՝ ճակել, կարոտել, գրոհել, ուսկնդրել, սպասարկել, ծափահարել և այլ բայեր, որոնք նախկինում պահանջում էին միայն տրական հոլովով անուղղակի խնդիր և հանդես էին գալիս որպես չեզոք սեռի բայեր, այժմ զուգահեռաբար ընդունում են նաև ուղիղ խնդիր՝ վերածվելով ներգործական սեռի բայերի։ Օրինակ՝ Բանակը ճակում էր Գարդմանա մուտքին (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Հսկել եմ արթուն ես ձեր գործերին (ՀԹ), սակայն՝ Հսկել այգին (ՍՋ, Խրնձորի այգին)։ Երբ էր ճակում գետնատարած երկարագիծ ուղիներ (ԵՋ)։ Հսկել հուր (ՀՇ) և այլն, կամ՝ Կարոտում էի իմ հայրենի ծուխին, մեր սրբազան ցորեն ճացին (Իս.), Նա զգաց, որ այնքան կարոտել էր ծովին (ԴԴ, Վարդանանք)։ Կարոտել էր քո ոգին, օ՜ տառապած երգիչ, Մեր արևին ու ճողին (ԵՋ), բայց՝ Կարոտում է կաքավ գյուղի աղբյուր (ԱՔ, Կյորես), Կարոտում էի մեր հողե տաճկը, իմ սուրբ մորը (ԱՔ), Կարոտել իր ծննդեներին, երկիրը, հայրենիքը, Իմ ցավագին աղոթքին ուսկնդրիր ու երևա (ՎՏ), բայց՝ Գոնե այս անգամ կուսկնդրեն մեր ձայնը (Ավանգ.) և այլն։

Այդ նույն ճանապարհով դիմավորել, ձեռնարկել, գերազան-

ցել, տիրել *բայերը վերջնականապես փոխել են իրենց սեռը՝ վերածվելով ներգործական սեռի բայերի* (դիմավորել նոր տարին, ձեռնարկել շինարարական գործ, գերազանցել մեկի սպասելիքները, տիրել երկիրը *և այլն*)[43]։

§ 419. Ժամանակակից հայերենում կան մի շարք բայեր, որոնք գրաբարում պատկանել են ե—ի զուգահեռ լծորդությունների՝ բնականաբար ունենալով և՛ ներգործական, և՛ չեզոք սեռերի նշանակություն (երկարել||երկարիլ, մարել||մարիլ, խամրել||խամրիլ, խռովել||խռովիլ և այլն)։ Ի լծորդության վերացման հետևանքով այս բայերը այժմ հանդես են գալիս միայն մեկ ձևով՝ ե խոնարհմամբ, սակայն շարունակում են գործածվել և՛ որպես ներգործական սեռի բայեր, և՛ որպես չեզոք սեռի բայեր։ Այս բայերի չեզոք սեռով կիրառությունը հատկապես տարածված է ժողովրդական-խոսակցական լեզվում. այսպես՝ Նա կրակը մարեց։ Ծս լույսը մարեցի և՝ Կրակն աստիճանաբար մարեց։ Լույսը հանկարծ մարեց։ Մեկի ճանգիստը խռովել և՝ Նա խռովել է և այլն։

§ 420. Վերը թվարկված բոլոր դեպքերում, երբ միևնույն բայը առանց ձևաբանական փոփոխություն կրելու, հանդես է գալիս մերթ ներգործական սեռի, մերթ չեզոք սեռի հատկանիշներով, գործ ունենք բայական կրկնասեռության հետ, իսկ այդպիսի բայերը կոչվում են կրկնասեռ բայեր[44]։ *Կրկնասեռ բայերը ժամանակակից հայերենում մեծ թիվ չեն կազմում, սակայն դրանք բոլորն էլ խիստ գործածական են (հատկապես բանավոր խոսքում)։ Թվենք դրանցից մի քանիսը՝* սպասել, ապրել, լսել, աշխատել, ճայել, խանգարել, վճասել, տեղալ, ճառագայթել, շնչել, ծափահարել, երկարել, խռովել, խամրել, մեղմել, մարել *և այլն։*

Կրկնասեռ են նաև վ սեռածանցն ունեցող այն բայերը, որոնք հավասարապես կիրառվում են և՛ կրավորական, և՛ չեզոք սեռերի իմաստով (ազատվել, գլորվել, ճուզվել, զինվել, փաթաթվել *և այլն), ինչպես նաև չեզոք սեռի բայերից կերտված այն պատճառականները, որոնք կարող են լինել և՛ ներգործական, և՛ պատճառական սեռի* (բարձրացնել, վազեցնել, արագացնել *և այլն)։*

---

43 *Տե՛ս* Ա. Աբրահամյան, *նշվ. աշխ., էջ 681—702։*

44 *Տե՛ս նույն տեղում, էջ 702—722։*

ԲԱՅԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ

§ 421. Բայը ժամանակակից հայերենում խոսքի մեջ դրսևորվում է երկու եղանակով՝ դիմավոր և անդեմ։

Դիմավոր են կոչվում բայի այն ձևերը, որոնք ունեն դեմքի, թվի, եղանակի, ժամանակի կարգեր և կազմում են խոնարհման հարացույցը։ Այսպես՝ գնում եմ, գնացի, գնացեք, գնամ, կգնա, պիտի գնաս *և այլն բայի դիմավոր ձևեր են, քանի որ նրանց հատուկ են դեմքի կարգը (1-ին, 2-րդ, 3-րդ դեմքեր), թվի կարգը (եզակի, հոգնակի), եղանակ (սահմանական, հրամայական, ենթադրական, ըղձական, հարկադրական) և ժամանակ (ներկա, անցյալ, ապառնի)։*

Անդեմ են կոչվում բայի այն ձևերը, որոնց հատուկ չեն հիշյալ կարգերը։ Այսպես՝ գնալ, գնամ, գնալիս, գնացել, գնացած, գնացող, գնալու *ձևերը չունեն դեմք, թիվ, եղանակ և ժամանակ։ Հենց այդ պատճառով էլ այս բայաձևերը կոչվում են անդեմ։*

Դերբայներ

§ 422. Բայի անդեմ ձևերը հայ քերականագիտության մեջ կոչվում են դերբայներ։ Դերբայներին, ինչպես և բայի դիմավոր ձևերին, հատուկ են բայական հիմնական հատկանիշները՝ բայիմաստը, սեռը և խնդրառությունը, որի շնորհիվ նրանք մտնում են բայ խոսքի մասի մեջ։ Այսպես՝ երբ ասում ենք տեսնելու, տեսած, տեսնում, խմելու, խմող, խմած, կարդացել, կարդալու, կարդացած *և այլն, առաջին հերթին ընկալում ենք այս բայաձևերի բայիմաստը, այն, որ նրանք ցույց են տալիս որոշակի գործողություն։ Դրա հետ մեկտեղ ընկալվում է նրանց սեռը (տվյալ դեպքում՝ ներգործական—*տեսնելու մեկին, *ջուր խմող, գիրք կարդալիս և այլն) և խնդրառությունը (*տեսնելու այսօր, *փողոցում, աղբյուրից բաժակով խմող, *դանդաղ կարդալիս և այլն)։*

§ 423. Հայտնի է, որ բայը ցույց է տալիս գործողությունը իր ընթացքի մեջ, այսինքն՝ բայը իր արտահայտած իմաստով անխզելիորեն կապված է ժամանակի հետ, ցույց է տալիս գործողությունը ժամանակի մեջ։ Սակայն ժամանակը բայի դերբայական և եղանակային ձևերում դրսևորվում է տարբեր ձևով։ Եթե

եղանակային ձևերում ժամանակը գոնում է իր կոնկրետ, որոշակի դրսևորումը, այսինքն՝ եղանակային ձևերը ցույց են տալիս գործողությունը որոշակի ժամանակահատվածում, ապա դերբայական ձևերում ժամանակը դրսևորվում է միայն ընդհանուր-անորոշ ձևով, որպես գործողության ընդհանուր վիճակ։ Այսպես՝ գրում եմ *ձևը ցույց է տալիս խոսելու պահին կատարվող, ընթացքի մեջ գտնվող որոշակի գործողություն, իսկ* գրում *դերբայը դուրկ է այդ որոշակիությունից, ցույց է տալիս ընդհանրապես ընթացքի մեջ գտնվող գործողության ընդհանուր գաղափար՝ առանց կոնկրետացնելու այդ գործողությունը որևէ ժամանակահատվածի մեջ։*

Այսպիսով, բայի անդեմ ձևերը խմբավորվում, միավորվում են դերբայ ընդհանուր խմբի մեջ նաև իրենց դերբայական ուրույն իմաստով, այն է՝ ցույց են տալիս գործողության կամ եղելության ընթացքի դրսևորման բնույթը, գործողության կամ եղելության ընթացքային վիճակը. մի բան, որ տարբեր դերբայների մոտ տարբեր ձևով և տարբեր չափով է արտահայտվում։

Ընդհանրապես գործողությունը, ինչպիսին էլ որ այն լինի, կարող է վերաբերել միայն երեք ժամանակահատվածների՝ ներկա, անցյալ և ապառնի։ Դրան համապատասխան՝ դերբայների ցույց տված վիճակը ևս կարող է լինել հիմնականում երեքը՝ շարունակվող, ընթացքի մեջ գտնվող, կատարելի և կատարված, ըստ որում, ինչպես ասվեց, դերբայների մեջ այդ վիճակները ներկայանում են ընդհանուր-անորոշ ձևով։ Այսպես՝ երբ ասում ենք գրում, կարդում, *ընկալում ենք շարունակվող, ընթացքի մեջ գտնվող գործողության ընդհանուր վիճակ,* գրելու, կարդալու *կամ* գրի, կարդա *դերբայները ցույց են տալիս այնպիսի վիճակ, երբ գործողությունը դիտվում է իբրև կատարելի, իսկ* գրել, կարդացել *դերբայները դրսևորում են կատարված-ավարտված գործողության վիճակ։ Գրած, կարդացած ձևերը ևս ցույց են տալիս կատարված-ավարտված գործողություն, բայց այն այս դեպքում հանդես է գալիս ոչ թե որպես բուն գործողության, այլ տվյալ գործողությունը կատարած առարկայի վիճակ և այլն։*

§ 424. Ըստ ձևաբանական և իմաստային հատկանիշների ժամանակակից գրական հայերենում տարբերակվում են 8 դեր-

բայները՝ անորոշ, ճարակատար, ենթակայական, զուգընթացական, անկատար, ապառնի, վաղակատար և ժխտական: *Ահա այդ դերբայները.*

անորոշ դերբայ	*գրել, կարդալ*
ճարակատար դերբայ	*գրած, կարդացած*
ենթակայական դերբայ	*գրող, կարդացող*
զուգընթացական դերբայ	*գրելիս, կարդալիս*
անկատար դերբայ	*գրում, կարդում*
ապառնի դերբայ	*գրելու, կարդալու (գրելիք, կարդալիք)*
վաղակատար դերբայ	*գրել, կարդացել*
ժխտական դերբայ	*գրի, կարդա*

Ժամանակակից հայերենի բոլոր բայերը ունեն դերբայական այս ձևերը: Բացառություն են կազմում միայն գալ, լալ, տալ բայերը, որոնք չունեն անկատար դերբայի ձևերը, և մի շարք պակասավոր բայեր՝ եմ, կամ, գիտեմ, ունեմ, *որոնք չունեն դերբայական ձևեր:*

§ 425. Ըստ իրենց իմաստային առանձնահատկությունների, ժամանակակից հայերենի դերբայները բաժանվում են երկու խմբի.

1. Դերբայներ, որոնք ցույց են տալիս բուն գործողության ընթացքային վիճակը վերը նշված ժամանակահատվածների նկատմամբ, այսինքն՝ դերբայներ, որոնք ցույց են տալիս կատարելի, կատարվող և կատարված գործողության ընդհանուր-անորոշ վիճակ. դրանք են՝ անկատար, ապառնի և վաղակատար *դերբայները* (կարդում, կարդալու, կարդացել), *մասամբ նաև ժխտական դերբայը, որն ունի կատարելի գործողության խիստ անորոշ իմաստ* (գրի):

2. Դերբայներ, որոնք ցույց են տալիս ոչ թե բուն գործողության ընթացքային վիճակը, այլ դրա հետ որպես խնդիր կամ ենթակա առնչվող առարկայի՝ ավյալ գործողությունը կատարելու, կատարած կամ կատարելիս լինելու վիճակը: Այդ դերբայներն են ճարակատարը, ենթակայականը և զուգընթացականը, *ինչպես նաև ապառնի դերբայի երկրորդ տարբերակը* (գրած, գրող, գրելիս, գրելիք): *Այսպես՝ երբ ասում ենք* գրած, *ընկալում ենք ոչ թե*

բուն գործողության կատարված լինելու դադափարը, այլ նրա հետ անմիջապես զուգորդվում է մի առարկա, որը կատարել է այդ գործողությունը (գրած մարդ, գրած նամակ), այսինքն՝ գրած ձևը ցույց է տալիս գործողության հետ առնչվող առարկայի վիճակը։ Նույն ձևով՝ ենթակայական դերբայը ցույց է տալիս որևէ առարկայի՝ տվյալ գործողության կատարման ընթացքի մեջ լինելու վիճակը (գրող մարդ), զուգընթացական դերբայը՝ առարկայի տվյալ գործողության կատարման վիճակի մեջ լինելը մեկ այլ գործողության կատարմանը զուգընթաց (ճոգնելիս նստել), իսկ ապառնի դերբայի երկրորդ տարբերակը՝ կատարելի գործողության հետ որպես խնդիր կապված առարկայի վիճակը (գրելիք նամակ)։

Նշանք.— է. Աղայանը առաջին խմբի դերբայները կոչում է կերպային դերբայներ, իսկ երկրորդ խմբի դերբայները՝ վիճակային[45]։

Գործողության ընթացքային վիճակ կամ ժամանակային հաջորդականություն ցույց տալու առումով կա որոշակի համապատասխանություն դերբայական հիշյալ խմբերի միջև։ Այսպես՝

Դերբայներ	Կատարված	Կատարվող	Կատարելի
1-ին խումբ	գրել, կարդացել	գրում, կարդում	գրելու, կարդալու գրե, կարդա
2-րդ խումբ	գրած, կարդացած	գրելիս, կարդալիս գրող, կարդացող	գրելիք, կարդալիք

§ 426. Ըստ իրենց կիրառական առանձնահատկությունների ևս ժամանակակից հայերենի դերբայները բաժանվում են երկու խմբի՝ ինքնուրույն կիրառություն ունեցող կամ բուն դերբայներ և ինքնուրույն կիրառություն չունեցող դերբայներ։

1. Ինքնուրույն կիրառություն ունեցող դերբայները հինգն են՝ անորոշ, հարակատար, ենթակայական, զուգընթացական և ապառնի դերբայի երկրորդ տարբերակը։ Այս դերբայների ընդհանուր կի-

45 է. Աղայան, նշվ. աշխ., էջ 345։

բառական առանձնահատկությունն այն է, որ խոսքի մեջ հանդես են գալիս որպես նախադասության անկախ անդամներ, այսինքն՝ ունեն ինքնուրույն շարահյուսական արժեք։ Ունենալով բայական հիմնական հատկանիշները, այս դերբայները խոսքի մեջ հանդես են գալիս գոյականական, ածականական և մակբայական կիրառություններով. մի բան, որ բխում է նրանց իմաստային առանձնահատկություններից։ Ինչպես ասվել է, այս դերբայներից չորսը՝ հարակատարը, ենթակայականը, զուգընթացականը և 2-րդ ապառնին ցույց են տալիս առարկայի վիճակը, հետևաբար կարող են ունենալ ածականական և մակբայական կիրառություն, իսկ անորոշ դերբայի՝ գործողության անվանում լինելը հնարավորություն է տալիս նրան հանդես գալու գոյականական բոլոր կիրառություններով։ Ածականական կիրառություն ունեցող դերբայներն էլ իրենց հերթին կարող են կիրառվել գոյականաբար (ետած մարդը—ետածը, գրող աշակերտը—գրողը)։ Այս դերբայների մյուս ընդհանուր հատկանիշն այն է, որ չեն մասնակցում բայերի հիմնական ժամանակների կազմությանը։ Սրանցից միայն երկուսը՝ հարակատարը և զուգընթացականը մասնակցում են երկրորդական վերլուծական ժամանակների կազմությանը (գրելիս եմ լինում, գրած կլինեմ և այլն)։

§ 427. Որպես ինքնուրույն բառական միավորներ գործածվելու առանձնահատկությունից է բխում այս դերբայների նաև այն հատկանիշը, որ սրանք, բացառյալ զուգընթացականը և 2-րդ ապառնին, ունեն նաև բառակազմական արժեք. նրանցից ածանցման կամ բառաբարդման միջոցով կարող են կերտվել նոր բառեր (ճոգնած+ություն, խոսող+ական, լսող+ություն, շշմած+ություն, գրել+աձև և այլն)։

2. Ինքնուրույն կիրառություն չունեցող դերբայները ժամանակակից հայերենում չորսն են՝ անկատար, ապառնի, վաղակատար և ժխտական։ Այս դերբայները, բացի իրենց իմաստային ընդհանրությունից, ունեն նաև այն ընդհանուր առանձնահատկությունը, որ խոսքի մեջ ինքնուրույն կիրառություն չունեն, չունեն ինքնուրույն շարահյուսական արժեք։ Դա ևս բխում է այս դերբայների իմաստային ընդհանուր առանձնահատկությունից։ Ինչպես ասվել է, այս դերբայները ցույց են տալիս բուն գործողության ընթացքի կատարելի, կատարվող, կատարված կերպային ընդ-

հանուր-անորոշ վիճակ, որը կոնկրետանում է միայն օժանդակ բայի հարադրությամբ։ Այսպիսով՝ այս դերբայների արժեքը միայն ձևաբանական է, այսինքն՝ սրանք հանդես են գալիս միայն բայերի եղանակային կամ դիմավոր ձևերի կազմության մեջ՝ օժանդակ բայի հարադրությամբ կազմելով վերլուծական ժամանակներ (գրում եմ, գրում էի, գրելու եմ, գրելու էի. գրել եմ, գրել էի, չեմ գրի, չէի գրի)։

Այդ է պատճառը, որ այս դերբայների անջատումը բայի եղանակային ձևերից և նրանց դերբայ համարելը քերականագիտության մեջ կատարվում է միայն պայմանականորեն՝ բայական համակարգը ավելի ամբողջական ու համակողմանիորեն ուսումնասիրելու համար[47]։

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՄ ԲՈՒՆ ԴԵՐԲԱՅՆԵՐ

ԱՆՈՐՈՇ ԴԵՐԲԱՅ

§ 428. Անորոշ դերբայը ցույց է տալիս գործողությունը կամ եղելությունը անորոշ վիճակում, ամենաընդհանուր ձևով։ Այդ է պատճառը, որ այն համարվում է բայի ուղիղ, ելակետային ձևը՝ սկզբնաձևը։ Անորոշ դերբայը միաժամանակ համարվում է գործողության կամ եղելության անվանումը և բայական համակարգում ունի նույն արժեքը, ինչ ուղղական հոլովը գոյականների համար։ Օրինակ, ասել, լսել, վազել, մոտենալ, ուսենալ, ճաշախել, սովորել, մտածել և այլ բայաձևերը անվանում են գործողությունը ամենաընդհանուր ձևով և համարվում են այդ բայերի ուղիղ ձևերը։

Մյուս դերբայների նման՝ անորոշ դերբայը ևս ցույց է տալիս գործողության կամ եղելության դրսևորման վիճակ, որը տվյալ դեպքում անորոշ վիճակն է, դրանով էլ այն բռնում է իր ուրույն տեղը դերբայական համակարգում։

§ 429. Անորոշ դերբայը ժամանակակից հայերենում կազմավորվում է ել կամ ալ մասնիկների օգնությամբ, որոնք ավելա-

---

47 *Դերբայների ինքնուրույն կիրառություն չպետք է համարել վերլուծական ժամանակների՝ զեղչված օժանդակ բայով կիրառությունները, ինչպես՝ Հոսում էր փրփրուն վտակն արծաթի, Արևը խաղում պայծառ կապույտում (ՀԹ)։*

նում են բայերի ներկայի հիմքի վրա։ Օրինակ՝ վազ+ել, քն+ել, ուտ+ել, մոտեն+ալ, ունեն+ալ, լավան+ալ, փախչ+ել, փախցրն+ել, ընկ+նել և այլն։ Դերբայական բուն մասնիկը լ-ն է, իսկ ն-ն և ա-ն խոնարհիչներ են, որոնցով որոշվում է բայերի խոնարհման բնույթը։ Վերջիններս այնպես են ձուլվել դերբայական լ մասնիկին, որ այժմ ընդունված է անորոշ դերբայի մասնիկները համարել ել-ը և ալ-ը։

Ի տարբերություն մյուս դերբայական վերջավորությունների, անորոշ դերբայի ել և ալ մասնիկները ունեն երկակի դեր։ Մի կողմից նրանց արժեքը քերականական է, որովհետև բայական համակարգում տարբերակում են անորոշ դերբայը մյուս բայաձևերից (գրել, գրած, գրող, գրեմ, գրեցի, գրելու և այլն), մյուս կողմից նրանք հանդես են գալիս բառակազմական արժեքով, քանի որ այլ խոսքի մասերից կերտում են բայեր. այսպես՝ ծուխ-ծխել, ծխալ, դեղին—դեղնել, կարմիր—կարմրել, կաղ—կաղալ, լավ—լավանալ, ուժեղ—ուժեղանալ և այլն (§ 315, 316)։

Քանի որ անորոշ դերբայը բայի սկզբնաձևն է, այդ պատճառով նրանում երևան են գալիս բոլոր բայածանցները (փախչել, ընկնել, մոտենալ, ունենալ, դեղեցկանալ, ուժեղանալ, թռչկոտել, կտրատել, մոտեցնել, ուռճացնել, սիրվել, գլորվել և այլն)։

§ 439. Անորոշը պատկանում է այն դերբայների թվին, որոնք չեն մասնակցում եղանակային ձևերի կազմությանը։ Լինելով գործողության կամ եղելության անվանումը՝ այն խոսքի մեջ ունի ինքնուրույն կիրառություն և կարող է հանդես գալ տարբեր պաշտոններով՝ ենթակայի, գոյականի լրացումների, խնդիրների, պարագաների, ինչպես նաև ստորոգելիական վերադրի։ Նրանով կարող են ձևավորվել նաև միակազմ անդեմ նախադասություններ։ Ահա օրինակներ՝ Դեռ մի բոպե առաջ էր, որ նա որոշել էր վճռել ապրել գյուղացիների հետ (Մուր., Առաքյալը)։ Այսօր քննվում էր այն կարևոր հարցը, թե նրանցից ո՞րը ինչպե՞ս պիտի գործե կյանքի ասպարեզը մտնելուց հետո (Ն. տ.)։ Ծանր ու ահալի էր միայն սպանվելու միտքը (ՀՔ, Մեծ տան զավակները)։ Եվ նա այդտեղ էլ որոշեց այդ մասին անմիջապես չասել ընկերուհուն (Ա. Սեկ., Ոսկե վազերի մեջ)։ Ապրելու կեսն էլ պատվով մեռնելն է (ՊՍ)։ Ա՛յ թե ճանաչել. Ա՛յ թե իմանալ ընդերքն ու հողը (Ն. տ.)։

§ 431. Անորոշ դերբայն ունի այն յուրահատկությունը, որ նախադասության մեջ ինքնուրույն կիրառություն ունենալով և հանդես գալով տարբեր պաշտոններով՝ ենթարկվում է ձևաբանական փոփոխության՝ հոլովվում է։

Անորոշ դերբայի հոլովումը չի կարելի համարել փոխանվանական հետևյալ պատճառներով։ Մյուս խոսքի մասերը, ինչպես նաև մյուս դերբայները փոխանվանաբար գործածվելիս՝ իրենց մեջ ներառում են նաև այն առարկայի հասկացությունը, որին վերագրվում է ավյալ խոսքի մասով դրսևորված իմաստը (մեծ մասամբ հատկանիշը)։ Այսպես՝ երբ ասում ենք լավը, հասկանում ենք լավ առարկան (աշակերտը, դիրքը և այլն), եռեքը՝ եռեք հոգին (մատիտը), ճնածը՝ քնած մարդը (երեխան), թռչողը՝ թռչող թռչունը (ինքնաթիռը) և այլն։ Այնինչ անորոշ դերբայը որոշյալ առումով գործածվելիս և հոլովվելիս ևս շարունակում է դրսևորել միայն գործողության կամ եղելության գաղափար՝ անկախ այն կատարողից կամ եղելության՝ դրության մեջ լինողից՝ մնալով դարձյալ գործողության կամ եղելության անվանումը։ Այսպես՝ գրելը նշանակում է գրելու գործողությունը, վազելը՝ վազելու գործողությունը, ճնելը՝ քնելու գործողությունը և այլն։ Այդ է պատճառը, որ ի տարբերություն փոխանվանական հոլովման, անորոշ դերբայը հոլովվում է և՛ անորոշ, և՛ որոշյալ առումներով, ինչպես նաև միայն եզակի թվով (հայտնի է, որ փոխանվանական հոլովումը կատարվում է որոշյալ առումով և եզակի ու հոգնակի թվերով)։ Անորոշ դերբայի հոլովումը տարբերվում է փոխանվանական հոլովումից նաև նրանով, որ այն ենթարկվում է ու հոլովման։

Բերենք անորոշ դերբայի հոլովման պատկերը։

	որոշյալ առում		անորոշ առում	
ուղղ. հայց.	վազել, դողալ		վազելը, դողալը	
սեռ. տրակ.	վազելու, դողալու		վազելու, դողալու	վազելուն, դողալուն
բաց.	վազելուց, դողալուց		վազելուց, դողալուց	
գործ.	վազելով, դողալով		վազելով, դողալով	
ներգ.	—	—	—	—

§ 432. Անորոշ դերբայը ժամանակակից գրական հայերենում ներգոյական հոլովաձև չունի։ Ներգոյականի իմաստն արտահայտելու համար սովորաբար գործածվում է սեռական հոլովաձևը մեջ կապի հետ (գրելու մեջ, խոսելու մեջ, աոտասանելու մեջ, սովորելու մեջ և այլն)։ *Սակայն ժողովրդական-խոսակցական լեզվում տարածված է և այնտեղից երբեմն մուտք է գործում գեղարվեստական գրականության լեզվի մեջ ներգոյականի ում-ով հոլովաձևը։ Ինչպես՝ Ես շատ ծույլ եմ նամակներ գրելում (ՆԴ, Զազունյան)։ Վարելում մի հատ է, Յաճելում մի հատ է, Հնձելում նմանը չունի (ՀՍ)։ Մի ննտելում յոթ հաց կուտեր (ԱԲ, Կյորես)։*

§ 433. Բացի որոշիչ հոդից, անորոշ դերբայը կարող է ընդունել նաև ցուցա-ստացական հոդեր։ Օրինակ՝ գալս—իմ գալը, գալդ—քո գալը, գալը—նրա գալը։ Այս դեպքում այն հաճախ (հատկապես ժողովրդական-խոսակցական լեզվում) գործածվում է նաև հոգնակի թվով. գալներս, գալներդ, գալներդ, կամ՝ գնալներս, գնալներդ, գնալները։ Սակայն այստեղ հոգնակի թիվը վերաբերում է ոչ թե բային, այլ հոդին։ Գալներս նշանակում է մեր գալը, գալներդ՝ ձեր գալը, գալներդ՝ նրանց գալը և այլն։

§ 434. Անորոշ դերբայի ձևաբանական առանձնահատկությունների մասին խոսելիս անհրաժեշտ է նաև նշել, որ այն տալ բայի հարադրությամբ և նրա հետ միասին հանդես գալով որպես մեկ բառական միավոր՝ ներգործական և չեզոք սեռի բայերից կերտում է պատճառական սեռի բայեր (գրել տալ, խմել տալ, վազել տալ, ջարդել տալ և այլն)։

ՀԱՐԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ

§ 435. Հարակատար դերբայը ցույց է տալիս անցյալում ընկրկված, կատարված, բայց հարատևող հետևանքով գործողության ընդհանուր գաղափար։ Օրինակ՝ ճնած, ճստած, կաճգճած, գճացած և այլ դերբայները ցույց են տալիս այնպիսի գործողություն, որ կատարվել է անցյալում, բայց որի հետևանքը հարատևում է։ Հարակատար դերբայն ունի այն առանձնահատկությունը, որ ցույց է տալիս գործողության հետ կապված առարկայի՝ տվյալ գործողությունը կատարած լինելու և այդ գործողության հետևանքը իր վրա կրելու վիճակի մեջ գտնվելը. այսպես՝

Երբ ասում ենք՝ կանգնած մարդ կամ նոգնած մարդ, ընկալում ենք մարդ առարկայի վիճակը տվյալ գործողությունների հարաբերակցությամբ (մարդ, որը անցյալում կանգնել կամ հոգնել է և շարունակում է այդ վիճակում մնալ)։ Այս իմաստով նրանք մոտենում են առարկայի հատկանիշը ցույց տվող բառերին՝ ածականներին, սակայն դրանք ածական համարել չի կարելի, որովհետև ունեն բային հատուկ հիմնական հատկանիշները՝ բայիմաստ, սեռ և խնդրառություն։

§ 436. Հարակատար դերբայը կազմվում է ած դերբայական մասնիկով, որը դրվում է ե խոնարհման պարզ բայերի, կրավորական և բազմապատկական բայերի ներկայի հիմքի վրա, իսկ ա խոնարհման բոլոր բայերի և ն, չ, ցն ածանցն ունեցող բայերի անցյալի հիմքի վրա։ Օրինակ՝ վազել—վազ+ած, քնել—քն+ած, նստել—նստ+ած, խմել—խմ+ած, կտրատել—կտրատ+ած, լրվացվել—լվացվ+ած, մոլորվել—մոլորվ+ած և աղալ—աղաց+ած, կարդալ—կարդաց+ած, թուլանալ—թուլաց+ած, մոտենալ—մոտեց+ած, հագենալ—հագեց+ած, տեսնել—տես+ած, ընկնել—ընկ+ած, թռչել—թռ+ած, կպչել—կպ+ած, կպցնել—կպցր+ած և այլն։

§ 437. Հարակատար դերբայի դերը հիմնականում շարահյուսական է։ Խոսքի մեջ այն ինքնուրույն կիրառություն ունի. հանդես է գալիս և՛ որոշչի պաշտոնով՝ ցույց տալով որևէ առարկայի վիճակը, ինչ դրության մեջ լինելը, և՛ ձևի պարագայի պաշտոնով՝ ցույց տալով, թե ենթական ինչ վիճակով, ինչ դրության մեջ է կատարում գործողությունը։ Օրինակ՝ Այդ վայրկյանից սկսեցին սպասել նաև հենց նոր գնացած գինվորների վերադարձին (ՍՋ, Պապ թագավոր)։ Արթնանում է գիշերվա քնից զարթացած քաղաքը (Վհ, Մեզ մոտ հարավում)։ Անցավ սրտից նա քո այս պայքարի ժամին, որպես երբի ելած ցասման թափոր (ԵՋ)։ Դեռ նոր հաճդիպած՝ մենք բաժանվեցինք, Իրար նոր գտած կորցրինք իրար (ՊՍ)։

§ 438. Հարակատար դերբայը գործածվում է նաև փոխանվանաբար՝ արտահայտելով նաև այն առարկայի դաղափարը, որը գտնվում է տվյալ գործողության կամ Հղելության կատարման վիճակում։ Օրինակ՝ ճնածը—ճնած մարդը, կանգնածներ—կանգնած երեխաները, գրածը—գրած նամակը և այլն։ Փոխանվանա-

բար գործածվելիս՝ հարակատար դերբայը հոլովվում է ի հոլովմամբ և նախադասության մեջ կարող է հանդես գալ գոյականին հատուկ բոլոր պաշտոններով։

Ծանոթ.— Որոշչային կիրառության հետևանքով որոշ բայերի հարակատար դերբայները վեր են ածվում ածականների. ինչպես՝ կարդացած (մարդ), հասած (աղջիկ), ճեխած (բնավորություն), խմած (մարդ) և այլն։ Իսկ մի շարք դերբայներ, փոխանվանական կիրառության հետևանքով վեր են ածվել գոյականների, ինչպես՝ սիրած, ճշաճած և այլն։

§ 439. XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին հարակատար դերբայը ունեցել է նաև ձևաբանական դեր՝ օժանդակ բայի հետ կազմելով սահմանական եղանակի հարակատար ժամանակը, որը ցույց էր տալիս անցյալում կատարված, ավարտված գործողություն։ Օրինակ՝ Հագած էր ուսերը խունացած դեղնագույն ամառվա վերարկու, որի ամենավերի կոճակն էր միայն գցված (ՆԴ)։ Գրելու մեջ, մանավանդ, ետ էին մնացած բոլորը (Մուր.)։ Ընկեր-ուղերք սեղի վրա ուրախ սեղան են նստած (Իս.)։ Ժամանակային այս իմաստն արտահայտելու համար այժմ գործածվում է վաղակատար ժամանակը։ Այժմ ճիշտ և օրինաչափական է գործածել հագել էր, ետ էին մնացել, նստել են ձևերը։ Իհարկե, ժամանակակից հայերենում այժմ էլ խիստ տարածված է հարակատար դերբայի կիրառությունը օժանդակ բայի հարադրությամբ, սակայն այն հիմնականում կորցրել է իր ժամանակային արժեքը և վեր է ածվել բաղադրյալ ստորոգյալի։ Քանի որ հարակատար դերբայը ցույց է տալիս գործողության հետ որպես խնդիր կամ ենթակա կապված առարկայի հատկանիշը, հետևաբար նրա և օժանդակ բայի կապակցությունները, որոնք այժմ ցույց են տալիս առարկայի՝ որևէ հարատևող հետևանքով գործողություն կատարած լինելու և այդ հետևանքը իր վրա կրելու վիճակի մեջ լինելը, պետք է դիտել հիմնականում որպես բաղադրյալ ստորոգյալներ. ճիշտ այնպես, ինչպես բաղադրյալ ստորոգյալ են համարվում ենթակայական դերբայի և օժանդակ բայի կապակցությունները։ Այսպես՝ Հեփաթացած է ամեն բան (Իս.), կամ Մթնած ու լուռ է գյուղացու հյուղը (ՀԹ)։ Բերված օրինակներում հեփաթացած է և մթնած է բաղադրյալ ստորոգյալ

ներ են, որտեղ հարակատար դերբայը ցույց է տալիս այն վիճակը, դրությունը, որի մեջ գտնվում է ենթական։

§ 440. Վիճակ, դրություն ցույց տվող մի շարք չեզոք սեռի բայերի, ինչպես նաև կրավորական սեռի բայերի հարակատար դերբայների միացությունները օժանդակ բայի հետ պահպանել են հարակատար ներկա և անցյալ ժամանակների իմաստ, այսինքն՝ ցույց են տալիս անցյալում սկսված և ներկայում հարատևող և կամ մեկ անցյալ ժամանակի համեմատությամբ սկսված և հարատևած գործողության իմաստ։ Օրինակ՝ Քնած է արդեն հովտի մեջ գյուղը *(ՀԹ)։ Ահա կանգնած է իմ առաջ մեր բազմահոգ գյուղացին (ՀԹ)։ Պատից պատ փռված էր մի շատ ընդարձակ գորգ (ՆԴ, Սպանված աղավնի)։*

§ 441. Հարակատար դերբայի՝ վիճակ ցույց տալու առանձնահատկությունից է բխում նաև այն, որ հաճախ ներգործական սեռի բայերի հարակատար դերբայը, առանց կրավորական ածանցման ենթարկվելու, ունենում է կրավորական սեռի իմաստ։ Օրինակ՝ գրած *նամակ,* ուղարկած *գիրք, ջարդած մատիտ և այլ կապակցություններում* գրած, ուղարկած, ջարդած *և այլ ձևերը ներգործական իմաստի հետ զուգահեռ հավասարապես ունեն կրավորական նշանակություն (նամակ,* որ գրել եմ *և նամակ,* որ գրվել է, *գիրք,* որ ուղարկել եմ *և գիրք,* որ ուղարկվել է, *մատիտ,* որ ջարդել եմ *և մատիտ,* որ ջարդվել է *և այլն)։*

§ 442. Բայերի խոնարհման համակարգում հարակատար դերբայը մասնակցում է երկրորդական բաղադրյալ ժամանակների կազմությանը. այսպես՝ գրած կլինեմ, խմած կլինեք, գնացած եմ լինելու, կարդացած պետք է լինի *և այլն (տե՛ս § 502—506)։*

ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ

§ 443. Ինքնուրույն կիրառություն ունեցող դերբայների թվին է պատկանում նաև ենթակայական դերբայը։ Այն ցույց է տալիս առարկայի՝ որևէ գործողության կատարման, եղելության՝ դրության մեջ լինելու կամ որևէ գործողություն իր վրա կրելու վիճակը, ինչպես նաև տվյալ գործողությունը կատարելու, եղելության՝ դրության մեջ լինելու, գործողությունն իր վրա կրելու ունակություն ունենալը։ Օրինակ, վազող *երեխա,* գրող *աշակերտ,*

ծիծաղող աղջիկ, ջարդվող առարկա և այլն նշանակում են երեխա, որ վազում է, աշակերտ, որ գրում է, աղջիկ, որ ծիծաղում է, առարկա, որ ջարդվում է կամ՝ երեխա, որ կարող է վազել, աշակերտ, որ կարող է գրել, աղջիկ, որ կարող է ծիծաղել, առարկա, որ կարող է ջարդվել և այլն։

Ծանոթ.— *Առարկայի վիճակային նման հատկանիշ են արտահայտում նաև իչ, ուն, աճ ածանցն ունեցող ածականներն ու գոյականները, ինչպես՝ նկարիչ (նա, որ նկարում է), շարժուն (այն, որ շարժվում է, կարող է շարժվել), ննջվան (նա, որ ննջում է), սաճուն, խոսուն և այլն։ Սակայն սրանք որակապես տարբերվում են ենթակայական դերբայից, որովհետև ցույց են տալիս հարաբերականորեն կայուն հատկանիշ կամ այդ հատկանիշն ունեցող առարկա, այնինչ ենթակայական դերբայը ցույց է տալիս առարկայի փոփոխվող, շարժման մեջ եղող հատկանիշը, որպես գործողության կամ եղելության և այդ իսկ պատճառով ունի բայական բոլոր հիմնական հատկանիշները՝ բայիմաստը, սեռը, խնդրառությունը, գործողության ընթացքային վիճակը (մի բան, որը բացակայում է վերը թվարկված ածականների և գոյականների մեջ)։ Օրինակ, երբ ասում ենք՝ գրող, հարց է առաջանում՝ ի՞նչ գրող (ներգործական սեռ), որտե՞ղ գրող, ինչպե՞ս գրող, ո՞ւմ գրող և այլն (խնդրառություն), կամ գրվող՝ ո՞ւմ կողմից գրվող, վազող՝ որտեղով, դեպի ո՞ւր և այլն, այնինչ նույնպիսի իմաստ արտահայտող ածականներն ու գոյականները այդպիսի խնդրառություն և սեռային այդպիսի հարաբերություն ունենալ չեն կարող (հնարավոր չէ ասել սիրտ նուգիչ, տուն նկարիչ և այլն)։*

§ 444. Ենթակայական դերբայական ձև կարող են ունենալ ժամանակակից հայերենի բոլոր բայերը՝ առանց սեռային սահմանափակումների։ Ըստ որում, այն պահում է տվյալ բայի բոլոր հատկանիշները (բայիմաստի, սեռային, խնդրառական)։ Հատկանշական է այն, որ ներգործական սեռի բոլոր բայերի ենթակայական դերբայը, առանց բացառության, արտահայտում է միայն ներգործական սեռի իմաստ, ի տարբերություն հարակատար դերբայի, որի ներգործականը արտահայտում է նաև կրավորական սեռի ի-

մասամբ. Այսպես՝ գրող, կարդացող, սովորող բոլոր դեպքերում և կիրառություններում ունեն ներգործական սեռ, իսկ գրած, կարդացած, սովորած կարող են ունենալ և՛ ներգործական, և՛ կրավորական սեռի նշանակություն (համմտ. գրած նամակ—նամակ գրած մարդ, կարդացած գիրք—գիրք կարդացած մարդ և այլն):

§ 445. Ենթակայական դերբայը ժամանակակից հայերենում կազմվում է ող դերբայական մասնիկով, որը դրվում է ե խոնարհման բայերի ներկայի հիմքի, իսկ ա խոնարհման բայերի անցյալի հիմքի վրա. Օրինակներ՝ ե խոնարհում— վազել—վազ+ող, թռչել—թռչ+ող, խմել—խմ+ող, ուտել—ուտ+ող, իջնել—իջն+ող, ընդունել—ընդուն+ող, իջեցնել—իջեցն+ող, վազեցնել—վազեցն+ող, կարդացվել—կարդացվ+ող և այլն. ա խոնարհում— կարդալ—կարդաց+ող, ժպտալ—ժպտաց+ող, աղալ—աղաց+ող, լվանալ—լվաց+ող, մոռանալ—մոռաց+ող, իմանալ—իմաց+ող, հեռանալ—հեռաց+ող, մեծանալ—մեծաց+ող, կաղալ—կաղաց+ող և այլն:

§ 446. Այն բայերը, որոնք ունեն ե և ա խոնարհման զուգահեռ ձևեր, կազմության զուգահեռություն ունեն նաև ենթակայական դերբայում՝ մեղմել—մեղմ+ող, մեղմաճալ—մեղմաց+ող, ծխել—ծխ+ող, ծխալ—ծխաց+ող և այլն, որի շնորհիվ իմաստային և սեռային տարբերությունները պահպանվում են նաև այս ձևերում: Ա խոնարհման պատկանող տալ բայը, որն ունի անցյալի երկու հիմք, ենթակայական դերբայը, հարակատարի նման, կազմում է անցյալական հիմքից՝ տալ—տու—ուղող: Ենթակայական դերբայի կազմության օրինաչափությունից շեղվում է միայն լինել բայը, որն ունի ենթակայական դերբայի երկու ձև՝ լինող և եղող:

§ 447. Ենթակայական դերբայը խոսքի մեջ ունի ինքնուրույն գործածություն, այսինքն՝ նրա դերը շարահյուսական է: Այն հանդես է գալիս որպես որոշիչ, իսկ փոխանվանաբար գործածվելով՝ կարող է հանդես գալ գոյականին հատուկ բոլոր պաշտոններով: Բերենք օրինակներ՝ Ներքևում, լայն բացվող ձորի մեջ, անծանոթը տեսնում է մի խումբ մարդկանց (ԲՀ, Սերմնացանները չվերադարձան): Այնտեղ մահճակալի շուրջը հավաքվել էին մեռնողի ընտանիքի անդամները (Շիրվ., Քաոս):

§ 448. Փոխանվանաբար գործածվելիս ենթակայական դերբայը հոլովվում է ի հոլովմամբ, եզակի և հոգնակի թվերով, որոշյալ, ինչպես նաև անորոշ առումներով։ Երկու դեպքում էլ այն արտահայտում է և՛ գործողությունը կամ եղելությունը, և՛ դրանց հետ որպես խնդիր կամ ենթակա կապված առարկան (վազողը, չարդվողը, խմողը, ուտողին, ազատողից և այլն)։ Անորոշ առումով փոխանվանաբար գործածվելն է պատճառը, որ մի շարք բայերի ենթակայական դերբայները վեր են ածվել գոյականների. ինչպես՝ ծնող, ուսանող, գրող, ընտրող, ծառայող և այլն։ Իհարկե, դրանք շարունակում են պահպանել նաև իրենց դերբայական արժեքը. այսպես՝ եթե գրողների միություն կամ՝ ակաճավոր գրող Դեմիրճյաններ կապակցությունների մեջ գրող-ը գոյական է, ապա Շահրադրությունն գրող աչակերտը դեռ նստած է կամ Նամակ գրողը Արամն էր նախադասություններում գրող-ը բայական արժեք ունի, ենթակայական դերբայ է։

§ 449. Ենթակայական դերբայը ձևաբանական արժեք չունի։ Այն չի մասնակցում բայի դիմավոր ձևերի կազմությանը։ Այս դերբայի և օժանդակ բայի կապակցությունները խոսքի մեջ բաղադրյալ ստորոգյալներ են։ Որպես ստորոգելիական վերադիր այն կարող է հանդես գալ և՛ անփոփոխ, և՛ որպես փոխանուն։

ՉՈՒԳԸՆԹԱՑԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ

§ 450. Ինքնուրույն կիրառություն ունեցող դերբայների խմբի մեջ է մտնում նաև զուգընթացական դերբայը։ Այն ցույց է տալիս չարունակվող գործողության վիճակ, որի ընթացքում, որին զուգընթաց կատարվում է մեկ այլ գործողություն։ Օրինակ, երբ ասում ենք վազելիս, կարդալիս, ուտելիս և այլն, հասկանում ենք առարկայի այնպիսի գործողության վիճակ, որի ընթացքում այդ առարկան կատարում է մեկ այլ գործողություն ևս (վազելիս ընկնել, կարդալիս կակազել, ուտելիս տեսնել և այլն)։

§ 451. Զուգընթացական դերբայը շարունակվող, կատարվող գործողություն ցույց տալու իմաստով մոտենում է անկատար դերբային, սակայն որակապես տարբերվում է նրանից, որովհետև եթե անկատար դերբայը ցույց է տալիս շարունակվող, կատարվող գործողության կերպային վիճակ, ապա զուգընթացական դեր-

բայը ցույց է տալիս առարկայի՝ տվյալ գործողության կատարման վիճակի մեջ լինելը մեկ այլ գործողություն կատարելիս։ Այդ է պատճառը, որ զուգընթացական դերբայը խոսքի մեջ հիմնականում հանդես է գալիս որպես որևէ բայի լրացում՝ ժամանակի պարագայի պաշտոնով։ Օրինակ՝ Տուն գալիս հանդիպեցի ընկերոջս։ Աոտասանելիս նա շատ հուզվեց։ Ուտելիս նա շատ է շտապում և այլն։

§ 452. Զուգընթացական դերբայի վերջավորությունն է իս-ը, որն ավելանում է անորոշ դերբայի վրա. այսպես՝ աղալ+իս, ուտել+իս, գրել+իս, շինել+իս, կառուցել+իս, իջնել+իս, փախչել+իս, ջարդվել+իս, թռչել+իս, իջնել+իս և այլն։

§ 453. Ինչպես ասվեց, զուգընթացական դերբայը խոսքի մեջ հանդես է գալիս անկախ կիրառությամբ, որպես ժամանակի պարագա։

Այս դերբայն ունի նաև ձևաբանական արժեք։ Նրանով կազմվում են երկրորդական վերլուծական ժամանակներ. այսպես՝ ինելիս է լինում, վազելիս կլինի, աշխատելիս է եղել, կարդալիս պիտի լինի և այլն (տե՛ս § 502)։

Լալ, տալ, գալ *բայերի սահմանական եղանակի ներկա և անցյալի անկատար ժամանակները կազմվում են այս դերբայի և օժանդակ բայի հարադրությամբ՝* գալիս եմ, էի, լալիս եմ, էի, տալիս եմ, էի *(այս բայերը, ինչպես ասվել է, չունեն անկատար դերբայի ձևը)։*

Ծանոթ.— *Հայ քերականագիտության մեջ ընդունված է իս վերջավորությունն ունեցող դերբայը համարել անկատար դերբայի տարբերակը։ Սակայն, ինչպես հիմնավորապես ցույց տվեց է. Աղայանը իր «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» աշխատության մեջ, այս դերբայները ժամանակակից գրական հայերենում տարբերվում են և՛ կազմությամբ (գրում—գրելիս, խոսում—խոսելիս), և՛ իմաստով (գրում եմ, գրելիս շտապում եմ)։ Հետևաբար, ժամանակակից գրական հայերենի համար ճիշտ է սրանք առանձին դերբայներ համարելը։ է. Աղայանը այս դերբայը անվանում է ժամանակային, այսինքն՝ հաշվի է առնում նրա կիրառական արժեքը, որով շեղվում է մեր դերբայների անվանումների սկզբունքից (դերբայների անվանումները իրականում բխում են նրանց ցույց տված իմաստից)։ Այս տեսակետից*

ավելի ճիշտ կլինի խոսել վերջացող դերբայներն անվանել գոյընթացական[48]։

ԻՆՔՆՈՒՐՈՒՅՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ ՉՈՒՆԵՑՈՂ ԴԵՐԲԱՅՆԵՐ

ԱՆԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ

§ 454. Անկատար դերբայը պատկանում է ժամանակակից հայերենի ինքնուրույն կիրառություն չունեցող դերբայների թվին։ Այն ցույց է տալիս կատարվող, ընթացքի մեջ եղող գործողության կամ եղելության ընդհանուր գաղափար։ Օրինակ, գրում, խոսում, խայտում, ուտում, մոռեծում դերբայները արտահայտում են ըսկըսված, ընթացքի մեջ գտնվող, չավարտված գործողության ընդհանուր գաղափար, այսինքն՝ ունեն կատարվող կերպային իմաստ։

§ 455. Անկատար դերբայը խոսքի մեջ ինքնուրույն, անկախ գործածություն չունի։ Նրա դերը միայն ձևաբանական է։ Միանալով օժանդակ բայի ձևերին՝ այն կազմում է բայի սահմանական եղանակի ներկա և անցյալի անկատար ժամանակները՝ արտահայտելով կատարվող, ընթացքի մեջ գտնվող գործողության հարաբերությունը ներկա և անցյալ ժամանակների հետ (գազում եմ, գազում էի)։ *Անկատար դերբայը օժանդակ բայի հետ միասին հանդես է գալիս որպես մեկ բառական միավոր՝ սահմանական եղանակի բայաձև։ Օրինակ՝ Ես սիրում եմ մթնշաղը նրբակերտ (ՎՏ)։ Ամենքի հետ ապրում եմ, Ամենքի չափ տառապում (ՀԹ)։ Յոթը հարյուր այունի վրա մարմարի բարձրանում է ապարանքը երկնասույզ (Իս.)։ Վտակը ժայռից ներքև է թռչում, Թափ առած ընկնում քարերի գլխին, Ջարկում ավազին, շաշում է, ճչում (ՀԹ)։ Սարի լանջին, ժայռի տակ, ջուր էր բխում սառնորակ, Ու ցրվելով խոտերում իզուր ճահիճ էր դառնում (ՀԹ)։*

Բերված օրինակներում անկատար դերբայով կազմված ժամանակները արտահայտում են տևական, շարունակվող, կատար-

48 *Ս. Աբրահամյանը այս դերբայի համար ընդունում է ճարակցական անվանումը (տե՛ս ժամանակակից հայերենի քերականություն, էջ 157)։*

վող գործողության. մի իմաստ, որ այդ ժամանակները ձեռք են բերել սիրում, ապրում, տառապում, բարձրանում, թռչում, ընկնում, զարկում, շաչում, ճչում, բխում, դառնում անկատար դերբայների շնորհիվ։

§ 456. Անկատար դերբայը ժամանակակից գրական հայերենում կազմվում է ներկայի հիմքի վրա ավելացնելով ում դերբայական մասնիկը. այսպես՝ գր+ում, վազ+ում, փախչ+ում, մոտեն+ում, հնչեցն+ում, սիրվ+ում, լավան+ում և այլն։

§ 457. Անկատար դերբայ ունեն ժամանակակից հայերենի բոլոր բայերը, բացառությամբ լալ, տալ, գալ բայերի, որոնք անկատարի իմաստն արտահայտում և ներկա ու անցյալի անկատար ժամանակներ են կազմում լալիս, տալիս, գալիս ձևերով (լալիս եմ, տալիս եմ, գալիս եմ)։

ԱՊԱՌՆԻ ԴԵՐԲԱՅ

§ 458. Ապառնի դերբայը ցույց է տալիս ապագայում կատարվելիք գործողության կամ եղելության ընդհանուր գաղափար։ Գրելու, կարդալու, վազելու, ջարդելու, խմելիք, կառուցելիք, կարդացվելիք *և այլ բայաձևերը ապառնի դերբայ են, որովհետև ցույց են տալիս այնպիսի գործողության գաղափար, որի կատարումը ապասվում է ապագայում։ Իհարկե, ապառնիության գաղափարը այստեղ չի ներկայանում որպես որոշակի ապառնի ժամանակ՝ որևէ ժամանակակետի համեմատությամբ, այլ որպես կատարելի գործողության ընդհանուր գաղափար։*

§ 459. Ապառնի դերբայը ժամանակակից գրական հայերենում ունի երկու տարբերակ՝ ինքնուրույն կիրառություն չունեցող և ինքնուրույն կիրառություն ունեցող։ Պայմանականորեն դրանք կարելի է կոչել 1-ին ապառնի և 2-րդ ապառնի։

Ծանոթ.— *Է. Աղայանը իր «Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը» աշխատության մեջ ապառնի դերբայի այս երկու տարբերակները համարել է ինքնուրույն դերբայներ՝ առաջին տարբերակը անվանելով կատարելի դերբայ, իսկ երկրորդի համար պահելով ապառնի դերբայ անվանումը։*

1-ին ապառնի դերբայը կազմվում է անորոշ դերբային ավելացնելով ու դերբայական մասնիկը. այսպես՝ տեսնել+ու, մոտենալ+ու, փախչել+ու, ունենալ+ու, թռչել+ու, վազեցնել+ու, լվացվել+ու, ճավարվել+ու և այլն։ Այս տարբերակը ցույց է տալիս գործողության կատարելի կերպային վիճակ, խոսքի մեջ ինքնուրույն կիրառություն չունի և հանդես է գալիս միայն ձևաբանական դերով՝ օժանդակ բայի հետ կազմելով սահմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակները։ Օրինակ՝ Ընրան թվում էր, որ եթե բոլորն էլ ներեն, հենց միայն այդ աղջիկը տրհամարհելու է իրեն, միշտ զզվանքով երես է դարձնելու (Շիրվ., Քաոս)։ Օգոստոսին Մոսկվայում տեղի է ունենալու Աստղագետների միջազգային միության տասներորդ համագումարը (ՍՀ)։ Բերված օրինակներում տրհամարհելու է, երես է դարձնելու, տեղի է ունենալու բաղադրյալ ժամանակները կազմված են ապառնի դերբայից և օժանդակ բայից. ըստ որում, կատարելի գործողության կերպային իմաստը արտահայտվում է դերբայի միջոցով։ Օժանդակ բայը արտահայտում է միայն այդ կերպային իմաստի հարաբերումը ներկա կամ անցյալ ժամանակակետի հետ։

Ծանոթ.— *Ապառնի դերբայի այս տարբերակը չպետք է շփոթել խոսքում ինքնուրույն կիրառություն ունեցող անորոշ դերբայի սեռական-տրական հոլովաձևի հետ, որից այն որակապես տարբերվում է, թեև ծագումով կապված է նրա հետ։ Այսպես՝ կարդալու գիրք, ճնելու տեղ, ուտելու համար, վազելու ժամանակ, վաճառելու ապրանք, խմելու ջուր և այլ կապակցություններում կարդալու, ճնելու, ուտելու, վազելու, վաճառելու, խմելու բայաձևերը ոչ թե ապառնի դերբայ են, այլ անորոշ դերբայի հոլովաձև։ Ապառնի դերբայի հետ չպետք է շփոթել նաև անորոշ դերբայի տրական հոլովի կիրառությունները բաղադրյալ ստորոգյալի կազմում՝ օժանդակ բայի հետ. այսպես՝ Այս ջուրը խմելու է, Այս ապրանքը վաճառելու է։ Այստեղ խմելու է, վաճառելու է ձևերը ոչ թե սահմանական եղանակի ապառնի ժամանակն են, այլ բաղադրյալ ստորոգյալ, որտեղ որպես ստորոգելիական վերադիր հանդես են եկել անորոշ դերբայի տրական հոլովաձևերը (այդ ձևերը համապատասխարժեք են խմելու համար է, վաճառելու համար է ձևերին)։*

§ 460. Ապառնի դերբայի երկրորդ տարբերակը կազմվում է դարձյալ անորոշ դերբայից, որի վրա այս դեպքում ավելանում է ի՛ դերբայական մասնիկը. այսպես՝ գրել+իք, կարդալ+իք, կատարվել+իք, սկսվել+իք և այլն։

Ծանոթ.— Այս տարբերակը ծագումով կապված է հին հայերենի ի-ով վերջացող ապառնի դերբայի հետ, որի հոգնակի ձևն էր՝ ժամանակակից հայերենում այն բոլորովին չունի հոգնակի նշանակություն և հանդես է գալիս միայն ապառնի դերբայի նշանակությամբ։ Գրաբարյան ի-ով վերջացող ապառնի դերբայը ժամանակակից հայերենում ձեռք է բերել ածականական նշանակություն։ Օրինակ՝ տեսանելի, բուժելի, ոռոգելի, ուտելի, սպասելի, պատկառելի, հիացալի, խոցելի, սարսափելի, տանելի և այլն։ Իսկ մի քանիսը վերածվել են գոյականի, ինչպես՝ բանալի, հայելի, գումարելի, հանելի և այլն։

Ապառնի դերբայի այս տարբերակն ունի այն առանձնահատկությունը, որ ցույց է տալիս ոչ թե գործողության կամ եղելության վիճակը, ինչպես առաջին տարբերակը, այլ գործողության կամ եղելության հետ որպես խնդիր կապված առարկայի վիճակը։ Օրինակ, կարդացվելիք գիրք, կառուցվելիք շենք, գնելիք ապրանք և այլ կապակցություններում կարդացվելիք, կառուցվելիք, գնելիք դերբայներով ցույց է տրվում ոչ թե բուն գործողության վիճակը, այլ գիրք, շենք, ապրանք գոյականների՝ ավյալ կատարելի գործողության վիճակի մեջ լինելու դադափարը (գիրք, որ կարդացվելու է, շենք, որ կառուցվելու է, ապրանք, որ գնվելու է և այլն)։ Այդ է պատճառը, որ այս դերբայը նախադասության մեջ ունի ինքնուրույն կիրառություն և հանդես է գալիս հիմնականում որոշչի պաշտոնով։ Օրինակ՝ Այժմ մոքում հաշվում էր շատրվանից ըստացվելիք միլիոնները (Շիրվ., Քաոս)։ Հետո կներկայացնեմ կիրճում կատարվելիք աշխատանքների իմ ծրագիրը (Սխ, Հողը)։

§ 461. Ապառնի դերբայի այս տարբերակը կարող են ունենալ ժամանակակից հայերենի և՛ ներգործական, և՛ կրավորական, և՛ չեզոք բայերը։ Սակայն ներգործական բայերը ձևով պահպանելով ներգործականությունը, բուն էության ապառնիի այս տար-

բերակում ունենում են կրավորական սեռի իմաստ. այսպես՝ կառուցելիք տուն նշանակում է տուն, որը կառուցվելու է, ուղարկելիք ծաղրոց՝ ծաղրոց, որն ուղարկվելու է, կամ՝ կարդալիք գիրք՝ գիրք, որ կարդացվելու է և այլն։ Կառուցելիք, ուղարկելիք, կարդալիք դերբայները իմաստով նույնանում են կառուցվելիք, ուղարկվելիք, կարդացվելիք կրավորական սեռի դերբայների հետ։ Այդ է պատճառը, որ նրանք, ձևով ներգործական լինելով, չեն կարող ընդունել սեռի խնդիր (ուղիղ խնդիր)։ Դա բխում է ապառնի դերբայի այս տարբերակի իմաստային այն առանձնահատկությունից, որ ցույց է տալիս գործողության հետ որպես խնդիր կապված առարկայի վիճակը և հենց այդ պատճառով ինքն է հանդիսանում այդ խնդրի լրացումը (կառուցելիք տուն)։

§ 462. Ներգործական և կրավորական սեռի բայերի ապառնի դերբայների երկրորդ տարբերակի սեռային տարբերությունը որոշ չափով երևան է գալիս միայն գործողությունը կատարողի շարահյուսական դրսևորման մեջ։ Ներգործական սեռի դերբայի մոտ գործողություն կատարողը դրսևորվում է սեռական հոլովով դրված կողմնակի ենթակայի միջոցով (իմ կարդալիք գիրքը, ընթացս կառուցելիք տունը և այլն), իսկ կրավորական սեռի դերբայի մոտ՝ ներգործող խնդրի միջոցով (իմ կողմից կարդացվելիք գիրքը, նրանց կողմից կառուցվելիք տունը)։ Իհարկե, ժամանակակից հայերենում ապառնի դերբայի այս տարբերակի մոտ գործողություն կատարողը ավելի հաճախ բացակայում է։

Սեռային նշանակությունների այս նույնացումն է թերևս պատճառը, որ ներգործական սեռի բայերի ապառնի դերբայի այս տարբերակը համեմատաբար քիչ է գործածվում (ընդհանրապես ապառնի դերբայի երկրորդ տարբերակի գործածությունը ժամանակակից հայերենում բավականին սահմանափակ է)։

§ 463. Ապառնի դերբայի երկրորդ տարբերակը, կիրառվելով փոխանվանաբար, խոսքի մեջ հանդես է գալիս գոյականին հատուկ բոլոր պաշտոններով (ենթարկվում է ի հոլովման)։ Այդ կիրառության հետևանքով է, որ մի շարք դերբայներ ժամանակի ընթացքում փոխել են իրենց խոսքի մասային արժեքը՝ վերածվելով գոյականների, ինչպես՝ գալիք, սպասելիք, ապրելիք, խաղալիք և այլն։ Իհարկե, այդ ձևերը համապատասխան կիրա-

ռուբյուններում պահպանել են նաև իրենց դերբայական արժեքը, ինչպես՝ գալիք օրեր, սպասելիք լուր և այլն։

Ձևաբանական արժեք ապառնի դերբայի այս տարբերակը չունի, այսինքն՝ չի մասնակցում բայի եղանակային ձևերի կազմությանը։

Ծանոթ.— *Այս ձևերի դերբայական արժեք ունենալը ձևաբանորեն ապացուցվում է վ սեռածանց ընդունելու և ժխտական ձևերը չ մասնիկով կազմելու առանձնահատկությամբ։*

ՎԱՂԱԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ

§ 464. Վաղակատար դերբայը ժամանակակից հայերենում արտահայտում է կատարված, ավարտված գործողության կամ եղելության ընդհանուր գաղափար, այսինքն՝ ցույց է տալիս կատարված-ավարտված գործողության ընթացքային վիճակ։

Վաղակատար դերբայը նախադասության մեջ չունի ինքնուրույն կիրառություն։ Նրա դերը ևս միայն ձևաբանական է, այսինքն՝ օժանդակ բայի հետ կազմում է սահմանական եղանակի վաղակատար և անցյալի վաղակատար ժամանակների բայաձևերը։ Օրինակ՝ Այստեղ երկնել են նախնիները իմ, Դարձել է այստեղ նյութը գաղափար, Հագել է այստեղ երազը մարմին (Իս.)։ Ինչ-որ տխուր, բայց անդորր զգացմունք լցրել էր նրա սիրտը (ՆԻ, Զազունյան)։ Քննությունները վերջացել են։ Կամսարյանն սառցել է ավարտման վկայական (Մուր., Առաքյալը)։

§ 465. Վաղակատար դերբայի դերբայական վերջավորությունն է ել, որը թեև ձևով նույնացել է անորոշ դերբայի ել մասնիկի հետ, սակայն բոլորովին տարբեր ծագում ունի։ Այն առաջացել է հին հայերենի անցյալ դերբայի եալ վերջավորությունից՝ եա>ե պատմական հնչյունափոխության հետևանքով։

Վաղակատարի ել դերբայական վերջավորությունը դրվում է ե խոնարհման պարզ բայերի, կրավորական և բազմապատկական բայերի ներկայի հիմքի վրա, իսկ ա խոնարհման բայերի և ե խոնարհման ն, չ, ցն ածանցավոր բայերի անցյալի հիմքի վրա։ Օրինակ՝ գրել—գր+ել, խմել—խմ+ել, վազել—վազ+ել, կոտրատել—կոտրատ+ել, թուլկոտել—թուլկոտ+ել, սիրվել—սիրվ+ել, ջարդվել—ջարդվ+ել, գնալ—գնաց+ել, աղալ—աղաց+ել, տո-

կալ—տոկաց+ել, վախենալ—վախեց+ել, ուզենալ—ուզեց+ել, լավանալ—լավաց+ել, մտնել—մտ+ել, հագնել—հագ+ել, ընկնել—ընկ+ել, հասնել—հաս+ել, տեսնել—տես+ել, կարդացնել—կարդացր+ել, մոտեցնել—մոտեցր+ել, վազեցնել—վազեցր+ել, ուրախացնել—ուրախացր+ել և այլն։

Ինչպես երևում է բերված օրինակներից, վաղակատար դերբայի՝ ներկայի հիմքից կազմված ձևերը ժամանակակից հայերենում ձևով նույնացել են անորոշ դերբայի հետ (նստել—նստել, գրել—գրել, վազել—վազել և այլն)։ Սակայն այդ ձևական նույնացումը դեռևս բավարար հիմք չէ այդ երկու դերբայները նույնը համարելու համար, քանի որ մի կողմից՝ բայերի զգալի մասում այդ երկու դերբայների ձևական տարբերությունը պահպանվել է (կարդալ—կարդացել, տեսնել—տեսել, իմանալ—իմացել և այլն), մյուս կողմից բավականին մեծ է նրանց իմաստային տարբերությունը։ Եթե անորոշ դերբայը ցույց է տալիս գործողությունը անորոշ վիճակում կամ պարզապես անվանում է գործողությունը, ապա վաղակատար դերբայը ցույց է տալիս կատարված գործողության կերպային վիճակ, մի իմաստ, որ լրիվ դրսևորվում է բայերի խոնարհման ժամանակ (գրել եմ, կարդացել եմ)։

§ 466. Այն բայերը, որոնք ունեն ե և ա խոնարհման զուգահեռ ձևեր, համապատասխանաբար զուգահեռ ձևեր ունեն նաև վաղակատար դերբայում. այսպես՝ ծխել—ծխել, ծխալ—ծխացել, փափկել—փափկել, փափկանալ—փափկացել, դժգունել—դժգունել, դժգունանալ—դժգունացել, դատարկել—դատարկել, դատարկանալ—դատարկացել և այլն։

Սակայն այն բայերը, որոնք ունեն անցյալ կատարյալի երկու հիմք՝ ցոյական և անցոյական, վաղակատար դերբայի համար ունեն միայն մեկ ձև՝ կազմված անցոյական հիմքից. այսպես՝ թողնել—թող‖թողեց—թողել, դնել—դիր‖դրեց—դրել, տվել—տու (տու>տվ)‖տվեց—տվել, անել—ար‖արեց—արել և այլն։

ԺԽՏԱԿԱՆ ԴԵՐԲԱՅ

§ 467. Ժամանակակից հայերենի դերբայների համակարգում իր ուրույն տեղն ունի ժխտական դերբայը, որն առաջացել է անորոշ դերբայից՝ լեզվի զարգացման համեմատաբար ուշ շրջա-

նում։ Այն ցույց է տալիս կատարելի, հնարավոր գործողության քնդհանուր-անորոշ գաղափար, որը ժխտվում է օժանդակ բայի ժխտական ձևերի հարադրությամբ (այստեղից էլ առաջացել է «ժխտական դերբայ» անվանումը)։ Օրինակ՝ (չեմ) գրի, (չես) կարզա, (չէի) գնա, (չէի) խմի և այլն։ Կատարելի գործողության կերպային իմաստը այս դերբայական ձևերում դրսևորվում է շատ թույլ, աղոտ կերպով, որը հավանաբար կապված է անորոշ դերբայից համեմատաբար ուշ շրջանում տարբերակվելու հետ։

Ժխտական դերբայը ևս ինքնուրույն գործառություն չունի։ Խոսքի մեջ այն հանդես է գալիս միայն օժանդակ բայի ժխտական ձևերի հարադրությամբ՝ կազմելով բայերի ենթադրական եղանակի ժխտական ձևերը։ Օրինակ՝ Գումարտակի բոլոր զինվորները հագել էին սպիտակ խալաթներ ու ձուլվելով ձյանը, չէին նկատվի մինչև թշնամու խրամատներին... հասնելը (ՀՔ, Մեծ տան զավակները)։ —Ես հայերենը չեմ թողնի,— ասաց Բաբիկը (ԴԴ, Վարդանանք)։

§ 468. Ժխտական դերբայը կազմվում է ներկայի հիմքին ավելացնելով ա վերջավորությունը՝ ա խոնարհման բայերի համար, և ի վերջավորությունը՝ ե խոնարհման բայերի համար։ Այլ կերպ ասած՝ ժխտական դերբայը կազմվում է անորոշ դերբայից դեն նետելով անորոշի լ վերջավորությունը և ե խոնարհման բայերի ե խոնարհիչը փոխելով ի-ով։ Օրինակ՝ գրել—գր+ի, ասել—աս+ի, անել—ան+ի, խմել—խմ+ի, վերցնել—վերցն+ի, փախչել—փախչ+ի, ընկնել—ընկն+ի, ջարդվել—ջարդվ+ի, կոտրատել—կոտրատ+ի, թռչել—թռչ+ի, կարդալ—կարդ+ա, մոտենալ—մոտեն+ա, աղալ—աղ+ա, կաղալ—կաղ+ա, հնանալ—հնան+ա, գնդեցկանալ—գնդեցկան+ա և այլն։ Շեղումներ ժխտական դերբայի կազմության այս եղանակից ժամանակակից հայերենում չեն նկատվում։

Ծանոթ.— XIX դարի վերջերի և XX դարի սկզբների գրականության մեջ նկատվում է ժխտական դերբայի գործածություն նաև լ վերջավորությամբ. մի բան, որ կապված է այդ դերբայի՝ անորոշ դերբայից առաջանալու հետ։ Օրինակ՝ Դժբախտաբար անեծքը չի վերադարձնիլ մեր կորուստը (Մուր.)։ Ձեմ խոսիլ քեզ հետ (ՀՔ)։ Սա, իհարկե, չէր ունենալ նրա առավելությունները

(Մուր.)։ Թե նա գնաց, էլ ետ չի գալ (ՀԹ)։ Սկզբնապես ժխտական դերբայի տարբերակումը անորոշ դերբայից կատարվել է միայն ե խոնարհման բայերի մեջ՝ ե>ի հնչյունափոխությամբ (խոսել—խոսիլ, գրել—գրիլ, ասել—ասիլ և այլն)։ Այնուհետև լ-ի անկումով ավարտվում է ժխտական դերբայի լրիվ տարբերակումը անորոշ դերբայից (կարդալ—կարդա, խոսել—խոսի)։

ԲԱՅԻ ԵԼԱՆԱԿԱՅԻՆ ՁԵՎԵՐԸ

§ 469. Բայի դիմավոր ձևերը նախադասության մեջ հանդես գալով ստորոգյալի պաշտոնով, այսինքն՝ գործողությունը վերագրելով առարկային՝ ենթակային, որպես նրա հատկանիշ, դրա հետ կապված արտահայտում են մի շարք քերականական իմաստներ, որոնք դրսևորվում են հատուկ քերականական կարգերի միջոցով։

Ստորոգում արտահայտող բայերին ժամանակակից հայերենում առաջին հերթին հատուկ է դեմքի քերականական կարգը, որով ցույց է տրվում գործողություն կատարողի հարաբերությունը հաղորդողի հետ (գնացի, գնացիր, գնաց)։ Դեմքի կարգի հետ սերտորեն կապված է թվի կարգը, որով ցույց է տրվում գործողություն կատարողի կամ որևէ դրության մեջ եղողի մեկ կամ մեկից ավելի լինելը (գնացի, գնացինք)։

Ամեն մի գործողություն տեղի է ունենում կամ եղելություն երևան է գալիս որոշակի ժամանակամիջոցում։ Գործողության կատարման կամ եղելության երևան գալու ժամանակը լեզվում դրսևորվում է ժամանակի քերականական կարգի միջոցով, որի հետ սերտորեն կապված է կերպի կարգը։

Խոսողը որևէ գործողության, եղելության կամ երևույթի մասին հաղորդելիս դրսևորում է նաև իր վերաբերմունքը հաղորդվածի նկատմամբ. մի բան, որ արտահայտվում է բայի եղանակի կարգի միջոցով։

Այսպիսով, բայի եղանակային կամ դիմավոր ձևերին հատուկ են դեմքի, թվի, եղանակի, ժամանակի և կերպի կարգերը։

ԲԱՅԻ ԴԵՄՔԻ ԿԱՐԳԸ

§ 470. Ժամանակակից հայերենի բայն ունի այն առանձնահատկությունը, որ իզանակային բայաձևերով դրսևորում է ոչ միայն գործողությունը կամ եղելությունը, այլ նաև հատուկ վերջավորությունների միջոցով ցույց է տալիս գործողությունը կատարող, որևէ դրության մեջ գտնվող կամ եղող առարկան. այսպես՝ գրեցի բայաձևով տրվում է ոչ միայն գրելու գործողության իմաստը, այլ նաև այն, որ գործողությունը կատարում է խոսողը։ Գործողությունը կարող է կատարել, բայով արտահայտված դրության մեջ կարող է լինել կա՛մ այդ մասին հաղորդողը՝ խոսողը, կա՛մ խոսակիցը և կամ մի այլ անձ, առարկա։ Ըստ այդմ, ժամանակակից հայերենում տարբերակվում են բայի երեք դեմք՝ առաջին, երկրորդ, երրորդ։

§ 471. Բայի առաջին դեմքը ցույց է տալիս, որ գործողությունը կատարվում է այդ մասին հաղորդողի և կամ այն խմբի՝ կոլեկտիվի կողմից, որի մեջ մտնում է հաղորդողը, խոսողը։ Օրինակ՝ Քեզ մոտ եմ գալիս, իմ հին տրամություն (ՀՔ)։ Կխոռոտակեմ կամարները երկնային, ես չեմ թողնի, ես չեմ թողնի դու մեռնիս (Իս.)։ Քիչ է պատահում, որ ինքս ինձնից փոքր-ինչ գոհ լինեմ (ՊՍ)։ Հյո՛ր եմ գնում հարազատներից մեկի մոտ (Ա. Սեկ., Ոսկե վազերի մեջ)։ Ես չեմ տա այս մարդու ոչ անունը, ոչ ազգանունը, կասեմ միայն, որ նրան ճանդիպեցի երկաթուղային վագոնում (ՍՋ, Հայրենասերը)։

§ 472. Բայի երկրորդ դեմքը ցույց է տալիս, որ գործողությունը կատարվում է այն անձի կողմից, որին դիմում է խոսողը, մի բան հաղորդողը (այսինքն՝ խոսակցի կողմից), կամ այն անձերի կողմից, որոնց մեջ մտնում է խոսակիցը։ Օրինակ՝ Տոկա՛, ճամբեի՛ր, իմ վիրավոր փրտա, վճիտ հայացքով աշխարհին նա՛յի՛ր (Իս.)։ Ի՞նչ մեծ հանճարով, ով հսկա պոետ, Ազատությունը կաշկանդող շղթան Հաշտեցրել ես դու ազատ մարդու հետ և Քաղցրացրել ես վիշտը գերության (ՀՔ)։

§ 473. Բայի երրորդ դեմքը ցույց է տալիս խոսողության գործընթացին, հաղորդմանը չմասնակցող անձի, անձերի կամ այլ առարկայի գործողությունը, եղելությունը։ Օրինակ՝ Գնացքը կանգնեց փոքրիկ մի կայարանում (ՀՔ, Մեծ տան զավակները)։ Նա

երբեք այնքան համարձակություն չէր ունեցել, որ ազատ կերպով այցելեր... ազգականներին (ՆԴ, Մահը)։ Գոհար աստղերի քարավանները թափառում էին երկնի ճամփեքով, եվ ղողանջում էր ողջ երկինքն անհուն՝ աստղերի շքեղ, անշեջ դաշնակով (Իս.)։

§ 474. Առաջին և երկրորդ դեմքերի բայաձևերը ցույց են տալիս գործողության հարաբերությունը խոսողության, հաղորդման մասնակիցների նկատմամբ և կարող են վերաբերել միայն անձերի։ Բացառություն են կազմում բնության երևույթների, անշունչ առարկաների անձնավորման դեպքերը գեղարվեստական գրականության մեջ. ինչպես՝ Գնա՛, միշտ գնա, իմ քարավանս և բայլի՛ր մինչև օրերիս վերջը (Իս.)։

Քանի որ առաջին և երկրորդ դեմքի բայաձևերով արդեն որոշակի հայտնի է գործողություն կատարողը, այդ պատճառով դրանց մոտ ենթակա սովորաբար չի դրվում. միայն երբեմն, երբ անհրաժեշտ է լինում շեշտել գործողություն կատարողը, կարող է դրվել առաջին կամ երկրորդ դեմքի անձնական դերանվամբ դրսեվորված ենթակա (տե՛ս վերևի օրինակները)։ Այլ է պատկերը երրորդ դեմքի ժամանակ։ Երրորդ դեմքի բայաձևերով կարող են դրսևորվել և՛ անձի, և՛ զանազան առարկաների գործողությունները, այդ պատճառով միայն բայաձևը բավական չէ գործողություն կատարողը որոշակիորեն ցույց տալու համար։ Եթե ընկա բայաձևով հասկանում ենք միայն ես ընկա որոշակի միտքը, կամ ընկար՝ դու ընկար, ապա ընկավ բայաձևը կարող է վերաբերել տարբեր անձերի կամ առարկաների (Աշոտն ընկավ, քարն ընկավ, գիրքըն ընկավ, մատիտն ընկավ և այլն)։ Այդ պատճառով երրորդ դեմքի բայաձևերը խոսքի մեջ պահանջում են ենթակա, որով դրսեվորվում է գործողություն կատարողը։ Ենթական բացակայում է միայն այն դեպքում, երբ կոնտեքստից հայտնի է։

§ 475. Բայերի առաջին և երկրորդ դեմքերը կապված են անձի կամ անձնավորված առարկաների հետ, հետևաբար առաջին և երկրորդ դեմք կարող են ունենալ միայն այն բայերը, որոնց ցույց տված գործողությունը կամ եղելությունը կապված է անձի կամ անձնավորված առարկայի հետ (տեսա, վազեցիր, մեծացանք, ուրախացանք, ճեռևեցի և այլն)։

Երբ բայի ցույց տված գործողությունը կամ եղելությունը կապված է բնության տարբեր երևույթների կամ առարկաների

հետ, բայը գործածվում է միայն երրորդ դեմքով։ Միայն երրորդ դեմքով են գործածվում հատկապես բնաձայնական բայերը (կարկաչել, զնգալ, կլթկլթալ, խոխոջել, չրխկալ, դիկդիկալ, կչկչալ և այլն), կրավորական շատ բայեր (ճայվել, փլվել, ծռվել, ավարտվել, գերակատարվել, գանձվել, գումարվել, fայfայվել և այլն), ինչպես նաև շատ այլ բայեր (մայր մտնել, նվագել, fշանալ, տեռևակալել, տեղալ, աննձրևել, փայլատակել, շողշողալ, բաբախել։ բառաչել, մկկալ, ծլել, կանաչել, ծաղկել և այլն, և այլն)։ Իհարկե, այս բայերից շատերը իրենց փոխաբերական իմաստներով կարող են ցույց տալ անձի հետ կապված գործողություն և գործածվել նաև առաջին կամ երկրորդ դեմքերով (ծլել, կանաչել, fանդվել, ճալվել և այլն)։

ԲԱՅԻ ԹՎԻ ԿԱՐԳԸ

§ 476. Բայի դեմքի կարգի հետ ամենասերտ կերպով կապված է թվի կարգը, որը ցույց է տալիս գործողություն կատարողի մեկ կամ մեկից ավելի լինելը։ Բայի թիվ ասելով պետք է հասկանալ բայի դեմքի թիվը։ Բայն ունի երկու թիվ՝ եզակի և հոգնակի։ Եզակի թիվը ցույց է տալիս, որ գործողությունը կատարողը մեկն է (գնացի, խոսեցիր, վազեց և այլն)։ Հոգնակի թիվը ցույց է տալիս, որ գործողություն կատարողը մեկից ավելի է (գնացինք, խոսեցիք, վազեցին և այլն)։

Բայի թիվը դրսևորելու համար հատուկ վերջավորություններ չկան։ Բայի և՛ դեմքը, և՛ թիվը արտահայտվում են բայական նույն վերջավորությունների միջոցով, այդ պատճառով դրանք հանգես են գալիս միասնաբար։ Յուրաքանչյուր դեմք եզակի և հոգնակի թիվ արտահայտելու համար ունի առանձին ձև, առանձին վերջավորություն, որով և դրսևորվում է բայի եզակի թիվ-հոգնակի թիվ հակադրությունը։ Հետևաբար որոշակի եղանակ և ժամանակ դրսևորող յուրաքանչյուր բայ ըստ դեմքի և թվի փոփոխվում է վեց ձևով, ունի վեց ձև, որոնք կազմում են տվյալ բայի դիմաթվային հարացույցը։ Այսպես՝

գնում եմ	*գնացի*	*տեսա*	*տեսնեմ*
գնում ես	*գնացիր*	*տեսար*	*տեսնես*
գնում է	*գնաց*	*տեսավ*	*տեսնի*

գնում ենք	գնացինք	տեսանք	տեսնենք
գնում եք	գնացիք	տեսաք	տեսնեք
գնում են	գնացին	տեսան	տեսնեն

Եզակի թիվ

§ 477. Առաջին դեմքի եզակի թիվը ցույց է տալիս, որ գործողությունը կատարվում է խոսողի կողմից։ Օրինակ՝ ես լսեցի մի անուշ ձայն (ԱԴ)։ Առաջին դեմքի եզակի թիվը ժամանակակից հայերենում դրսևորվում է հետևյալ վերջավորությունների միջոցով.

մ (վազում ե+մ, վազե+մ, գրե+մ, ուտե+մ),

ի (վազում է+ի, վազե+ի, գրե+ի, ուտե+ի),

ա (ընկ+ա, փախ+ա, տես+ա, մեծաց+ա)։

§ 478. Երկրորդ դեմքի եզակի թիվը ցույց է տալիս, որ գործողություն կատարողը կամ որևէ եղելության՝ դրության մեջ եղողը խոսակիցն է։ Այն դրսևորվում է հետևյալ վերջավորությունների միջոցով.

ս (վազում ե+ս, վազե+ս, գրե+ս, խմե+ս),

իր (վազում է+իր, վազե+իր, գրե+իր, տեսնե+իր, վազեց+իր, գր+իր),

ար (մոտեց+ար, փախ+ար, հեռաց+ար, թո+ար),

ու (մոտեցր+ու, փախցր+ու, հեռացր+ու, թոցր+ու)։

Ծանոթ.— Ա խոնարհման պարզ բայերի, ինչպես նաև մի շարք անկանոն բայերի հրամայական եղանակի եզակի երկրորդ դեմքը հատուկ վերջավորություն չունի (ունի զրո վերջավորություն)։ Մի դեպքում (ա խոնարհման պարզ բայեր) այն պարզապես ներկայի հիմքն է խոնարհիչի հետ (կարդա, աղա, գնա, լողադողա և այլն)։ Երկրորդ դեպքում (անկանոն բայեր) այն անցյալ կատարյալի հիմքն է (տես, դիր, առ, ել, կաց, բաց, թող, բեր և այլն)։

§ 479. Եզակի երկրորդ դեմքի ձևերը խոսքի մեջ երբեմն գործածվում են ոչ թե իրենց բուն նշանակությամբ՝ ցույց տալով կոնկրետ խոսակցի գործողությունը կամ եղելությունը, այլ ընդ-

հանուր-անորոշ նշանակությամբ, երբ խոսվում է ընդհանուր ճանաչում գտած, սովորաբար հանդես եկող գործողությունների, եղելությունների մասին, կամ արվում է որևէ ընդհանրացնող դատողություն։ Այդ իմաստով եզակի երկրորդ դեմքի ձևերը գործածվում են հատկապես ժողովրդական ասացվածքների մեջ և կամ երբ խոսողը դիմում է բոլորին, դրանց մեջ անորոշ կերպով նեբառելով նաև իրեն։

Օրինակ՝ Չես ճասցնում հայացքդ շրջել, տեղն արդեն ակոսված է (ԵԵ)։ Կաթ կուզես՝ կով պահի։ Շան անունը տուր, փետը ձեռքդ առ, Կուզես առաքի ցավեն ազատվիս, արմատը արեգակին ցույց տուր։ Մարագ ունիս, կարագ ունիս (Հայկական առածանի)։ Ուշանալ չի կարելի. փոքր ինչ դանդաղեցիր՝ կխախտվի վառարանի ջերմային ռեժիմը (ԵԵ)։ Աշխարհի կարգն է էդպես։ Ծլեցիր՝ պիտի ծաղկես, ծաղկեցիր՝ պիտի պտուղ տաս (ԽԴ, Խոդեդան)։ Մաիր ակումբը հիմա, մոիր թատրոնն ու կաֆեն՝ հազար արքա ու Արա կճանդիպես ժպտադեմ (ԵՉ)։ Աշխարհում էս հողի պես հող չկա. մենակ թե դու ջուր տուր նրան, դիմացը բուռեբուռ ոսկի կտաճաս (Ա. Սահ., Ծարավ)։ Գողն էլ մի կռնից, գելն էլ մյուս կռնից, Աչքդ թեֆեցիր՝ բանիդ տերը չես։ Քաշում են տանից, քաշում են դռնից։ Ու չես իմանում՝ որ կողմը թռչես (ՀԹ)։

§ 480. Եզակի երրորդ դեմքը ցույց է տալիս, որ գործողություն կատարողը կամ եղողը ոչ թե խոսակիցն է կամ խոսողը, այլ մի երրորդ անձ կամ առարկա։

Եզակի 3-րդ դեմքի վերջավորությունները հետևյալներն են.

ր (վազե+ր, գրե+ր, կարդա+ր, ուտե+ր),

եց (հասցր+եց, կերցր+եց, իջեցր+եց, վազեցր+եց),

ավ (հեռաց+ավ, ունեց+ավ, բարձրաց+ավ),

զրո վերջավորություն (գրի, կարդա, կգնա, գրեց, կարդաց, ասաց)։

Եզակի երրորդ դեմքի ձևերը երբեմն օգտագործվում են ընդհանուր-անորոշ նշանակությամբ՝ չդրսևորելով որևէ կոնկրետ դեմք։ Օրինակ՝ Այնքան ձանձրալի է խոսում, որ մարդու քուն տանում է։ Մարդ զարմանում է նրա աշխատասիրության վրա։ Մարդ հոգնում է նույն բանը անընդհատ լսելուց և այլն։

Հոգնակի թիվ

§ 481. Առաջին դեմքի հոգնակի թիվը ցույց է տալիս, որ գործողություն կատարողը կամ եղողը մարդկանց այն խումբն է, ո-ի մեջ մտնում է նաև խոսողը։ Գործողություն կատարողը կարող և լինել միայն խոսողն ու խոսակիցը (ես և դու գնացինք), միայն ոսողն ու մեկ այլ անձնավորություն (ես և նա գնացինք) և խոսողն ու շատերը՝ Թողնենք, ուրեմն նրան զվարճանալ առայժմ ուրայիններին հետ (Մուր., Առաքյալը)։

Հոգնակի առաջին դեմքի վերջավորություններն են՝

նք (խոսում է+նք, խոսե+նք, կարդա+նք, վազե+նք),

ինք (խոսում է+ինք, կարդաց+ինք, վազեց+ինք, բարձացր+ինք, գրեց+ինք, խոսեց+ինք, խոսե+ինք, իմանայ+ինք,

անք (տես+անք, մոտեց+անք, իջ+անք, լողաց+անք)։

Գիտական և հրապարակախոսական լեզվում հեղինակային ոսքի մեջ երբեմն հոգնակի առաջին դեմքի բայաձևերով արտայայտվում է եզակի առաջին դեմքի իմաստ։ Օրինակ՝ Մենք խոսցինք սատրոգման ձևավորման տարբեր միջոցների մասին (Ս. Աբրահամյան)։ Մենք աշխատել ենք շարադրել կատարված քայլերի լեզվաբանության հիմնական դրույթները (է. Աղայան)։

§ 482. Երկրորդ դեմքի հոգնակի թիվը ցույց է տալիս, որ գործողություն կատարողը կամ գործողությունն իր վրա կրողը, ինչպես նաև որևէ դրության մեջ եղողը մի խումբ է, որի մեջ մտնում է նաև խոսակիցը և կամ խոսակիցն է ու մեկ այլ անձնավորություն։ Օրինակ՝ Եկե՛ք, քույրեր, սեգ սարերի չքնաղագեղ ոգիներ (ՀԹ), Այս գործը պիտի կատարեք դու և Արամը։

Հոգնակի երկրորդ դեմքի վերջավորություններն են՝

ք (գրում է+ք, կարդում է+ք, գրե+ք, կարդա+ք),

իք (գրում է+իք, կարդում է+իք, գրե+իք, կարդա+իք, հասկացր+իք),

աք (հեռաց+աք, մոռաց+աք, հաս+աք, տես+աք),

եք (գրեց+եք, կարդաց+եք, մոռեցր+եք, տես+եք)։

Հոգնակի երկրորդ դեմքի ձևերը երկախոսությունների մեջ, որպես քաղաքավարական, հարգանքի, ինչպես նաև պաշտոնականության արտահայտման ձև, կարող են գործածվել եզակի երկրորդ դեմքի փոխարեն. օրինակ՝ —Ի՞նչ եք ասում, Սաշա քե-

ռի,— բացականչեց Անտոնինան (ՄԱ, 3ասվա)։ Ի՞նչ կասեիք երգարվեստի և Ձեր գրած երգերի մասին (Գար.)։

§ 483. Հոգնակի երրորդ դեմքը ցույց է տալիս, որ գործողություն կատարողը կամ այն իր վրա կրողը մեկից ավելի անձեր կամ առարկաներ են, որոնց մեջ չեն մտնում խոսողն ու խոսակիցը։ Օրինակ՝ Գոհար աստղերի քարավանները թափառում էին երկնի ճամփեքով (Իս.)։ Գյուղերից ու քաղաքներից մարդիկ էին գնում Դավիթ բեկի կոչին (Սխ, Մխիթար սպարապետ)։

Հոգնակի երրորդ դեմքի վերջավորությունները հետևյալներն են.

ն (գրում է+ն, կարդում է+ն, գնա+ն, ուտե+ն),
ին (գրում է+ին, կարդում է+ին, գնաց+ին, ուտե+ին),
ան (հաս+ան, տես+ան, մոտեց+ան, հեռաց+ան)։

Հոգնակի երրորդ դեմքը ևս կարող է արտահայտել ոչ միայն կոնկրետ թիվ, այլ ունենալ ընդհանուր-անորոշ նշանակություն, երբ հայտնի չէ, թե որոշակի ով է գործողություն կատարողը։ Օրինակ՝ Ասում են, իբրև խարույկի վրա Ջահել ըմբոստի մի սիրտ են այրել. Ասում են, իբրև, մոխիրը նրա խարույկից հանել ու մորն են տարել (ՀՇ)։ Սիրեցի, յարիս տարան, Յարա տվին ու տարան (Իս.)։

Հոգնակի երրորդ դեմքի բայաձևերը հաճախ գործածվում են նաև ընդհանրական նշանակությամբ՝ ընդհանուր դատողություններ, եզրակացություններ անելիս։ Այս իմաստով նրանք հատկապես շատ են հանդիպում ժողովրդական ասացվածքների, առածների մեջ։ Օրինակ՝ Պաղատու ծառին շատ քար կգցեն (ՀԹ)։ Շիտակ խոսքը հանաքով կասեն։ Մարդուն ընկերով են ճանաչում։ Արյունը արյունով չեն լվանա։

ԲԱՅԻ ԺԱՄԱՆԱԿԻ ԿԱՐԳԸ

§ 484. Յուրաքանչյուր գործողություն կամ եղելություն իրականության մեջ երևան է գալիս որևէ ժամանակահատվածում։ Գործողության կամ եղելության կատարման ժամանակը լեզվի մեջ վերացարկվում և դրսևորվում է բայի ժամանակի կարգի միջոցով, որը հատուկ է միայն բայի դիմավոր կամ եղանակային ձևերին։ Բայի յուրաքանչյուր դիմավոր ձև արտահայտելով առարկայի գործողությունը կամ եղելությունը, միաժամանակ մատնանշում է նրա կատարման ժամանակը։

Գործողության կատարման ժամանակը ցույց տալու համար անհրաժեշտ է այն վերցնել որևէ որոշակի պահի համեմատությամբ: Քերականագիտության մեջ այդպիսի չափանիշ է հանդիսանում խոսելու պահը: Բայի ժամանակը կարող է ցույց տալ կա՛մ խոսելու պահին կատարվող գործողություն, եղելություն, կա՛մ խոսելու պահից առաջ կատարված, տեղի ունեցած գործողություն, եղելություն և կամ խոսելու պահից հետո կատարվելիք գործողություն, եղելություն: Այսպես՝ երբ ասում ենք Աշոտը գրում է, Աշոտը գրեց *և* Աշոտը գրելու է, *երեք դեպքում էլ գործողության ժամանակը որոշում ենք խոսելու պահի համեմատությամբ: Առաջին օրինակում այն համընկնում է խոսելու պահին (գրում է հենց հիմա, հաղորդման պահին), երկրորդ դեպքում գործողությունը կատարվել, ավարտվել է խոսելու պահից առաջ (գրեց), երրորդ դեպքում այն պետք է կատարվի խոսելու պահից հետո (գրելու է):*

Սակայն բնության երևույթների, առարկաների միջև եղած տարբեր հարաբերությունների դրսևորման, գործողությունների, եղելությունների երևան գալու ժամանակը որոշելու համար միայն խոսելու պահը չափանիշ ընդունելը հաճախ չի բավարարում: Երբեմն խոսողի նպատակն է լինում հաղորդել այնպիսի գործողության կամ եղելության մասին, որը կատարվել է կամ պիտի կատարվի մի անցյալ կամ ապառնի ժամանակի համեմատությամբ. այսպես՝ Երբ գնացի, նա գրում էր, կամ՝ Եթե տեսնեմ, կասեմ: Այս նախադասություններում գրում էր և կասեմ բայաձևերի ժամանակը որոշվում է ոչ թե խոսելու պահի համեմատությամբ, այլ առաջին դեպքում մի անցյալ ժամանակի համեմատությամբ (երբ գնացի), իսկ երկրորդ դեպքում՝ մի ապառնի ժամանակի համեմատությամբ (եթե տեսնեմ): Այսպիսով՝

Բայի ժամանակը ցույց է տալիս գործողության հարաբերումը խոսելու պահին կամ սրա նկատմամբ վերցված որևէ անցյալ կամ ապառնի ժամանակների: *Ըստ այդմ բայը ունենում է երեք հիմնական ժամանակ՝* ներկա, անցյալ *և* ապառնի:

Բայի ներկա ժամանակը ցույց է տալիս խոսքի պահին համընկնող գործողություն կամ եղելություն: Օրինակ՝ Եվ պարզ աչքով ես տեսնում եմ Հայրենիքս ծաղկավետ, Այն ճոխ երկրից ես լսում եմ Անհոգ ծիծաղ լացի հետ (ՀՓ): Վտակը ժայռից ներքև է

թռչում, *թափ առած ընկնում քարերի գլխին, Ջարկում ավազին, շաչում է, ճչում, ճչում անհագիստ, փրփուրը բերնին (ՀԹ)։*

Բայի անցյալ ժամանակը ցույց է տալիս խոսելու պահին կամ ընդհանրապես մի անցյալ ժամանակակետի նախորդած գործողություն կամ եղելություն։ Օրինակ՝ Մեր մանկական ճիչն էր թընդում Դաշտերի մեջ ցողաթաթախ, Խայտում էինք զմրուխտ գետում, Եվ զնգում էր արևն ուրախ (Իս.)։ Երբ սպան դուրս գնաց, յուրաքանչյուրի սրտից կարծես մի քար ընկավ, և մրոտ թոնրատունը լուսավորվեց հանկարծ (ՍՋ, Ջաքարի հարսը)։

Բայի ապառնի ժամանակը ցույց է տալիս այնպիսի գործողություն կամ եղելություն, որ հաջորդելու է խոսքի պահին կամ որևէ ապառնի ժամանակակետի։ Օրինակ՝ Կխոտակեմ կամարները երկնային, Ես չեմ թողնի, ես չեմ թողնի դու մեռնիս (Իս.)։ Լուսաբացին արտաւերը արտը ջրած պիտի տեսնի, պիտի ժպտա և կռանա, մատներով տորի թաց հողը (ԱՔ, Մթնաձոր)։

§ 485. *Ժամանակակից հայերենի անցյալ և ապառնի ժամանակները ունեն դրսևորման բազմազան ձևեր, որոնցից յուրաքանչյուրն ունի իմաստային որոշակի երանգ. օրինակ՝ գրում էր, գրել էր, գրեց անցյալ ժամանակի բայաձևեր են, սակայն սրանցից յուրաքանչյուրը ցույց է տալիս անցյալում կատարված գործողության կամ եղելության տարբեր բնույթը։ Այսպես՝ գրում էր ձևը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետի նկատմամբ անցյալում սկսված և ընթացքի մեջ եղող գործողություն. գրել էր ձևը՝ մի անցյալ ժամանակակետի նկատմամբ կատարված-ավարտված գործողություն, իսկ գրեց ձևը՝ ներկայի համեմատությամբ կատարված-ավարտված գործողություն։ Այսպիսով, երեք անցյալ ժամանակ, երեք ժամանակային իմաստային երանգ։ Ապառնի ժամանակը ևս ունի իր տարբեր ձևերը. այսպես՝ գրելու եմ, գրեմ, կգրեմ, պիտի գրեմ բայաձևերը հավասարապես ապառնի ժամանակ են, սակայն դրանցից յուրաքանչյուրն ունի իր ուրույն իմաստը, որով տարբերակվում է մյուսներից։ Գրելու եմ ձևը նշանակում է մի ապառնի գործողություն, որի կատարումը խոսողի կողմից դիտվում է որպես հաստատ իրագործելի, պիտի գրեմ ձևը ցույց է տալիս ապագայում կատարվելիք գործողություն, որի կատարումը համարվում է անհրաժեշտ, գրեմ ձևը՝ այնպիսի գործողություն, որի կատարումը ցանկալի է։ Այս ձևերի տարբերու-*

թյունն արդեն ոչ թե ժամանակային է, այլ եղանակային, այսինքն՝ նույնը լինելով իրենց ցույց տված ժամանակով, սրանք հակադրվում են եղանակով։

Այսպիսով, եթե միևնույն ընդհանուր ժամանակին պատկանող բայաձևերը մտնում են եղանակային նույն խմբի մեջ, ապա հակադրվում են ժամանակային (մասամբ նաև կերպային) իմաստներով. ցույց են տալիս միևնույն ընդհանուր ժամանակի տարբեր ժամանակահատվածներում կատարվող գործողություններ։ Այդպիսին են սահմանական եղանակի անցյալ ժամանակները։ Իսկ երբ նույն ընդհանուր ժամանակին պատկանող բայաձևերը մտնում են տարբեր եղանակային խմբերի մեջ, ապա դրանք ժամանակի առումով նույնն են. նրանց հակադրությունը միայն եղանակային է։ Այդպիսին են սահմանական, ըղձական, ենթադրական, հարկադրական եղանակների ապառնի ժամանակները (գրելու եմ, գրեմ, կգրեմ, պիտի գրեմ), նաև՝ նույն եղանակների անցյալ ժամանակները (գրեի, կգրեի, պիտի գրեի, չգրեցի)։

ԺԱՄԱՆԱԿԻ ԿԱՐԳԻ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ՁԵՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

§ 486. Ժամանակակից հայերենում բայի ժամանակները ըստ կազմության լինում են համադրական և վերլուծական։

Համադրական են այն ժամանակային ձևերը, որոնք կազմությամբ ձույլ են և բաղադրված են բայահիմքից ու վերջավորություններից (գրեց+ի, տես+ա, կարդ+ամ, կուտ+եմ, վազ+եի և այլն)։

Վերլուծական են այն ժամանակային ձևերը, որոնք կազմվում են դերբայներից և օժանդակ բայից (գրում եմ, գրելու ենք, գրել էինք և այլն)։

Նշանք.— Բայի ժամանակների կազմության մասին խոսելիս հաշվի չեն առնվում կ և պիտի եղանակիչները, որովհետև սրանք կապված են բայի եղանակի կարգի հետ և ժամանակների կազմության մեջ որևէ դեր չեն խաղում։ Այդ եղանակիչներով բաղադրված բայաձևերը մտնում են կազմությամբ համադրական ժամանակների մեջ, ինչպես՝ կգրեմ, պիտի գրեմ, կգնայի, պիտի գրեիր և այլն։

ՀԱՄԱԴՐԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

§ 487. Ժամանակակից հայերենում կազմությամբ համադրական ժամանակային ձևեր ունեն միայն անցյալ և ապառնի ժամանակները։

Անցյալ ժամանակի համադրական ձևերը հետևյալներն են.

գրեցի	գրեի	կգրեի	պիտի գրեի
գրեցիր	գրեիր	կգրեիր	պիտի գրեիր
գրեց	գրեր	կգրեր	պիտի գրեր
գրեցինք	գրեինք	կգրեինք	պիտի գրեինք
գրեցիք	գրեիք	կգրեիք	պիտի գրեիք
գրեցին	գրեին	կգրեին	պիտի գրեին

Ինչպես երևում է բերված աղյուսակից, բայի անցյալ ժամանակի համադրական ձևերը կազմվում են բայի անցյալի կամ ներկայի հիմքի վրա ավելացնելով դեմքի և թվի կարգերն արտահայտող վերջավորությունները, որոնք անցյալ ժամանակի համար այլ են, ներկա և ապառնի ժամանակների համար՝ այլ։

Անցյալ ժամանակ դրսևորող դիմային վերջավորությունները հետևյալներն են.

	Եզ.	հոգն.	Եզ.	հոգն.
1-ին դ.	ի	ինք	ա	անք
2-րդ դ.	իր	իք	ար	աք
3-րդ դ.	0 կամ ր	ին	ավ	ան

§. 488. Առաջին խմբի վերջավորությունները ավելանալով ե և ա խոնարհման պարզ բայերի և պատճառական ու կրավորական բայերի անցյալի հիմքի վրա՝ կազմում են անցյալ կատարյալ ժամանակը. այսպես՝

վազեց+ի	կարդաց+ի	մեծացր+ի
վազեց+իր	կարդաց+իր	մեծացր+իր
վազեց+0	կարդաց+0	մեծացր+եց
վազեց+ինք	կարդաց+ինք	մեծացր+ինք
վազեց+իք	կարդաց+իք	մեծացր+իք
վազեց+ին	կարդաց+ին	մեծացր+ին

Ինչպես երևում է բերված օրինակներից, պատճառական բայերի անցյալ կատարյալ ժամանակի եզակի երրորդ դեմքը ունենում է ոչ թե զրո վերջավորություն, այլ եց, որը փաստորեն հիմքակազմիչ մասնիկն է։

§ 489. Այդ նույն վերջավորությունները, ավելանալով բոլոր բայերի ներկայի հիմքի վրա, կազմում են ըղձական եղանակի անցյալ ժամանակի ձևերը, որոնք նույնությամբ պահպանվում են ենթադրական և հարկադրական եղանակներում։ Ըստ որում, ե խոնարհման բայերում ներկայի հիմքի և անցյալի վերջավորության միջև ավելանում է ե խոնարհիչը, իսկ ա խոնարհման բայերում՝ ա խոնարհիչը։ Ա խոնարհիչի և ձայնավորով սկսվող վերջավորության միջև հանդես է գալիս յ ձայնակապը։ Օրինակ՝

վազ+ե+ի	*մոտեն+ա+յ+ի*	*մեծացն+ե+ի*
վազ+ե+իր	*մոտեն+ա+յ+իր*	*մեծացն+ե+իր*
վազ+ե+ր	*մոտեն+ա+ր*	*մեծացն+ե+ր*
վազ+ե+ինք	*մոտենա+յ+ինք*	*մեծացն+ե+ինք*
վազ+ե+իք	*մոտեն+ա+յ+իք*	*մեծացն+ե+իք*
վազ+ե+ին	*մոտեն+ա+յ+ին*	*մեծացն+ե+ին*

Ըղձական եղանակի անցյալ ժամանակի եզակի երրորդ դեմքը ունենում է ոչ թե զրո վերջավորություն, այլ ր (տե՛ս օրինակները)։

§ 490. Երկրորդ խմբի անցյալի վերջավորություններով (ա, ար, ավ) կազմվում է անցոյական անցյալի հիմք ունեցող բայերի, այսինքն՝ ե խոնարհման ն, չ ածանց ունեցող բայերի և ա խոնարհման են, ան ածանցավոր բայերի անցյալ կատարյալ ժամանակը։ Օրինակներ՝

փախ+ա	*տես+ա*	*մոտեց+ա*	*բարձրաց+ա*
փախ+ար	*տես+ար*	*մոտեց+ար*	*բարձրաց+ար*
փախ+ավ	*տես+ավ*	*մոտեց+ավ*	*բարձրաց+ավ*
փախ+անք	*տեսա+նք*	*մոտեց+անք*	*բարձրաց+անք*
փախ+աք	*տես+աք*	*մոտեց+աք*	*բարձրաց+աք*
փախ+ան	*տես+ան*	*մոտեց+ան*	*բարձրաց+ան*

Այսպիսով, անցյալ ժամանակի՝ կազմությամբ համադրական բայաձևերում (անցյալ կատարյալ և ըղձականի, հարկադրա-

կանի, ենթադրականի անցյալ) իմաստային տարբերակումը ձևավաբանորեն դրսևորվում է ոչ թե վերջավորությունների միջոցով, որոնք երկու դեպքում էլ նույնն են, բացառությամբ եզակի երրորդ դեմքի, այլ ներկայի հիմք—անցյալի հիմք հակադրությամբ։ Մի դեպքում անցյալի վերջավորություններն ավելանում են ներկայի հիմքի վրա (ըղձականի, հարկադրականի և ենթադրականի անցյալ), մյուս դեպքում՝ անցյալի հիմքի վրա (անցյալ կատարյալ ժամանակ)։ Այսպես՝ գրել—գրեց+ի—գր+ե+ի, խոսել—խոսեց+ի—խոս+ե+ի, կարդալ—կարդաց+ի—կարդ+ա+յ+ի և այլն։ Բացառություն են կազմում միայն ե խոնարհման և, շ և ա խոնարհման ան, են ածանցավոր բայերը, որոնց անցյալ կատարյալ և ըղձականի անցյալ ժամանակները տարբերվում են և՛ հիմքերով, և՛ վերջավորություններով. այսպես՝ տեսնել—տես+ա, տեսն+ե+ի, մոտենալ—մոտեց+ա, մոտեն+ա+յ+ի, հեռանալ—հեռաց+ա, հեռան+ա+յ+ի, փախչել—փախ+ա, փախչ+ե+ի և այլն։

§ 491. Իմաստային տարբերությունը սահմանական եղանակի անցյալ կատարյալ և ըղձական, ենթադրական, հարկադրական եղանակների անցյալ ժամանակների միջև հետևյալն է։ Անցյալ կատարյալ ժամանակը ցույց է տալիս խոսելու պահից առաջ, անցյալ ժամանակում կատարված, ավարտված գործողություն (Ես երեկ գնացի թատրոն), իսկ ըղձականի, ենթադրականի և հարկադրականի անցյալ ժամանակները ցույց են տալիս անցյալում ցանկալի, ենթադրվող, պարտադիր համարված, սակայն չկատարված գործողություն։ Գնայի, կգնայի, պիտի գնայի ձևերը իրենց արտահայտած ժամանակով հավասարարժեք են չգնացի ձևին, որովհետև, ցույց են տալիս չկատարված գործողություն։ Այս ձևերի միջև եղած տարբերությունը եղանակային է։

§ 492. Ապառնի ժամանակի համադրական ձևերը հետևյալներն են.

գրեմ	*կգրեմ*	*պիտի գրեմ*	*գրի՛ր*
գրես	*կգրես*	*պիտի գրես*	*գրեցե՛ք*
գրի	*կգրի*	*պիտի գրի*	
գրենք	*կգրենք*	*պիտի գրենք*	
գրեք	*կգրեք*	*պիտի գրեք*	
գրեն	*կգրեն*	*պիտի գրեն*	

կարդամ	կկարդամ	պիտի կարդամ	կարդա՛
կարդաս	կկարդաս	պիտի կարդաս	կարդացե՛ք
կարդա	կկարդա	պիտի կարդա	
կարդանք	կկարդանք	պիտի կարդանք	
կարդաք	կկարդաք	պիտի կարդաք	
կարդան	կկարդան	պիտի կարդան	

Այս ժամանակները ցույց են տալիս այնպիսի գործողություն կամ եղելություն, որի կատարումը խոսքի պահից հետո խոսողի կողմից համարվում է ցանկալի, պարտադիր կամ ենթադրվող։ **Գրեմ, կգրեմ, պիտի գրեմ** *բայաձևերը ժամանակ ցույց տալու առումով իրարից չեն տարբերվում. երեքն էլ ցույց են տալիս ապառնի ժամանակ, այսինքն՝ խոսքի պահից հետո սպասվող գործողություն կամ եղելություն։ Այս ձևերի միջև եղած տարբերությունը նույնպես եղանակային է։ Առաջին դեպքում ցույց է տրվում ապագայում սպասվող ցանկալի գործողություն, երկրորդ դեպքում դարձյալ ապագայում կատարվելիք ենթադրվող գործողություն, երրորդ դեպքում՝ ապագայում կատարվելիք պարտադիր համարվող գործողություն։ Եղանակային այս տարբերությունը դրսևորվում է կ և պիտի եղանակիչների միջոցով, իսկ ժամանակը երեք ձևերում էլ դրսևորվում է* **գրեմ** *ձևով։ Այսպիսով՝ ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակների ապառնի ժամանակը կազմվում է բայի ներկայի հիմքին ավելացնելով հետևյալ վերջավորությունները.*

	եզ.	հոգն.
1-ին դ.	*մ*	*նք*
2-րդ դ.	*ս*	*ք*
3-րդ դ.	*0*	*ն*

Այս վերջավորությունների և հիմքի միջև հանդես են գալիս ե և ա խոնարհիչները. առաջինը՝ ե խոնարհման բայերում, երկրորդը՝ ա խոնարհման բայերում։ Ըստ որում ե խոնարհիչը եզակի երրորդ դեմքում փոխվում է ի-ի։ Բերենք օրինակ յուրաքանչյուր խոնարհման համար.

վազ+ե+մ	*աղ+ա+մ*
վազ+ե+ս	*աղ+ա+ս*

վազ+ի	աղ+ա
վազ+ե+նք	աղ+ա+նք
վազ+ե+ք	աղ+ա+ք
վազ+ե+ն	աղ+ա+ն

§ 493. Համադրական ժամանակ ունի նաև հրամայական եղանակը, որի միակ ժամանակային ձևը ցույց է տալիս խոսքի պահից հետո կատարվելիք գործողություն, հետևաբար ապառնի է։ Այն ունի նաև մեկ դեմք՝ երկրորդ։ Հրամայական եղանակի ապառնի ժամանակը եզակի թվում ունի հետևյալ կազմություններ. ե խոնարհման պարզ բայեր՝ ներկայի հիմ+իր (գր+իր, խոս++իր), ա խոնարհման պարզ բայեր՝ ներկայի հիմ+ա խոնարհիչը (կարդ+ա), ան, են, ն, չ ածանցն ունեցող բայեր՝ անցյալի հիմ+իր (մոռաց+իր, ունեց+իր, փախ+իր, լավաց+իր, ել++իր, ընկ+իր), պատճառական բայեր՝ անցյալի հիմ+ու (մոռեցր+ու, խմեցր+ու, վազեցր+ու), մի շարք անցոյական անցյալի հիմք ունեցող բայեր՝ անցյալի հիմքը+զրո վերջավորություն (բեր, տես, առ, կեր և այլն)։

Հոգնակի թիվն ունի հետևյալ կազմությունը՝ անցյալի հիմ+եք (գրեց+եք, մոռեց+եք, կարդաց+եք, վազեցր+եք, տես+եք, կեր+եք, ունեց+եք և այլն)։

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

§ 494. Վերլուծական ժամանակները ժամանակակից հայերենում կազմվում են դերբայներից և օժանդակ բայի ձևերից։ Վերլուծական ժամանակների կազմությանը մասնակցում են անկատար, ապառնի, վաղակատար մասամբ նաև հարակատար դերբայները։ Դերբայները ցույց են տալիս գործողության կատարման ընթացքային վիճակը, իսկ օժանդակ բայի ձևերը՝ այն ժամանակակետը, որի հարաբերությամբ վերցվում է գործողությունը, ժամանակի իմաստը դրսևորվում է այս երկու սի համադրությամբ։ Այսպես՝ երբ ասում ենք գրում եմ, վազում եմ, տեսնում եմ, այս ձևերում գրում, վազում, տեսնում դերբայները ցույց են տալիս տևական, ընթացքի մեջ եղող գործողություն, իսկ եմ, ես, է օժանդակ բայերը ցույց են տալիս, որ այդ ընթացքի մեջ գտնվող գործողությունը վերցված է խոսելու պահի համեմատությամբ, այ-

ինքն՝ ամբողջ բայաձևը ցույց է տալիս խոսքի պահին սկսված, ընթացքի մեջ եղող գործողություն՝ ներկա ժամանակ։ Նույն անկատար դերբայները օժանդակ բայի անցյալ ժամանակաձևերի հարադրությամբ (գրում էի, վազում էինք, տեսնում էիր) *ցույց են տալիս, որ սկսված, ընթացքի մեջ եղող գործողությունը վերցված է անցյալ ժամանակակետի հարաբերությամբ, իսկ ամբողջ բայաձևը ցույց է տալիս մի անցյալ ժամանակի համեմատությամբ սկսված և ընթացքի մեջ եղող գործողություն, այսինքն՝ անցյալ ժամանակ։*

§ 495. Օժանդակ բայն ունի երկու ժամանակ՝ ներկա և անցյալ, որոնցից յուրաքանչյուրն ունի վեցական ձև՝ երեք դեմքի եզակի և հոգնակի թվերի համար։

Ահա օժանդակ բայի խոնարհման հարացույցը.

ներկա		անցյալ	
եզ.	*հոգն.*	*եզ.*	*հոգն.*
եմ	*ենք*	*էի*	*էինք*
ես	*եք*	*էիր*	*էիք*
է	*են*	*էր*	*էին*

Ինչպես երևում է, օժանդակ բայի խոնարհման ձևերը կազմվում են դիմային-ժամանակային նույն վերջավորությունների միջոցով, ինչ որ ունեն բայի համադրական ժամանակները. դրանք են՝ ներկայի համար մ, ս, Ø, նք, ք, ն, անցյալի համար՝ ի, իր, ր, ինք, իք, ին։

§ 496. Անկատար, ապառնի և վաղակատար (նաև հարակատար) դերբայներից յուրաքանչյուրը կարող է հարադրվել օժանդակ բայի ներկա և անցյալ ձևերի հետ՝ ստեղծելով տարբեր ժամանակային իմաստներ. այսպես՝ ընտում եմ՝ ներկա ժամանակ, ընտում էի՝ անցյալ ժամանակ, գրելու եմ՝ ապառնի ժամանակ, գրելու էի՝ անցյալ ժամանակ և այլն։ Դեմքի և թվի կարգերը բայերի վերլուծական ժամանակաձևերում դրսևորվում են օժանդակ բայի վերջավորությունների միջոցով։

Այսպիսով՝ բայի վերլուծական ժամանակները հետևյալներն են.

ներկա

վազում եմ	վազում ենք նաև՝	կանգնած եմ	կանգնած ենք
վազում ես	վազում եք	կանգնած ես	կանգնած եք
վազում է	վազում են	կանգնած է	կանգնած են

անցյալ

վազում էի	վազել եմ	վազել էի
վազում էիր	վազել ես	վազել էիր
վազում էր	վազել է	վազել էր
վազում էինք	վազել ենք	վազել էինք
վազում էիք	վազել եք	վազել էիք
վազում էին	վազել են	վազել էին

վազելու էի	կանգնած էի
վազելու էիր	կանգնած էիր
վազելու էր	կանգնած էր
վազելու էինք	կանգնած էինք
վազելու էիք	կանգնած էիք
վազելու էին	կանգնած էին

ապառնի

վազելու եմ	վազելու ենք
վազելու ես	վազելու եք
վազելու է	վազելու են

Անցյալ ժամանակների հարաբերությամբ վերցված վերլուծական ժամանակները հայ քերականագիտության մեջ ընդունված է անվանել բուռ կազմության։ Սկզբում անվանվում է ժամանակակիտը, ապա այն դերբայը, որով կազմվում է տվյալ ժամանակաձևը. դրանք են՝ անցյալի անկատար, անցյալի վաղակատար և անցյալի ապառնի։ Ներկա ժամանակակիտի հարաբերությամբ վերցված ժամանակների անվանման մեջ ժամանակակիտը չի նըշվում, որովհետև այն ինքնին հասկանալի է, դրանք են՝ վաղակատար, ապառնի։ Իսկ ներկա ժամանակակիտում ընթացքի մեջ գտնվող գործողություն ցույց տվող ժամանակը՝ կազմված անկատար դերբայից և օժանդակ բայի ներկայի ձևերից, կոչվում է ներկա ժամանակ։

Դրությունն, վիճակ ցույց տվող մի շարք չեզոք սեռի և կրավորական բայերի հարակատար դերբայը օժանդակ բայի ներկա և անցյալ ժամանակների հարադրությամբ կազմում է հարակատար և անցյալի հարակատար ժամանակները (նստած եմ, նրստած էի)։

Դրական խոնարհման մեջ վերլուծական ժամանակային ձևեր ունի միայն սահմանական եղանակը։

Կազմությամբ վերլուծական են նաև ենթադրական եղանակի ժխտական ձևերը, որոնք կազմվում են օժանդակ բայի ժխտական ձևերի և ժխտական դերբայի հարադրությամբ։ Այսպես՝

չեմ գրի (կարդա)	*չենք գրի (կարդա)*
չես գրի (կարդա)	*չեք գրի (կարդա)*
չի գրի (կարդա)	*չի գրի (կարդա)*

ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՐՊ

§ 497. Բայի համադրական և վերլուծական ժամանակների համեմատությունը ցույց է տալիս, որ այդ ձևերը, բացի կազմությունից, ունեն նաև յուրահատուկ իմաստային տարբերություն։ Բայի համադրական ժամանակային ձևերը արտահայտում են միայն գործողության կատարման ժամանակը՝ անկախ այդ գործողության կատարման վիճակից, իսկ բաղադրյալ ժամանակային ձևերով տրվում է ոչ միայն գործողության ժամանակը՝ ներկա, անցյալ կամ ապառնի, այլ նաև գործողության կատարման ընթացքային վիճակը, մի իմաստ, որը բայի տվյալ ժամանակին հաղորդում է դերբայը։ Օրինակ, երբ ասում ենք գնում էր, ընկալում ենք ոչ միայն անցյալում կատարված գործողություն, այլ նաև՝ մի անցյալ ժամանակակետի նկատմամբ կատարվող և ընթացքի մեջ գտնվող գործողություն, կամ երբ ասում ենք գրել է՝ ներկա ժամանակակետի համեմատությամբ անցյալում որոշ տևական ժամանակամիջոցում կատարված գործողություն և այլն։

§ 498. Բայի դերբայական ձևերում դրսևորված գործողության ընթացքը պայմանականորեն կոչվում է գործողության ընթացքային կամ կերպային վիճակ, իսկ այդ կերպային կամ ընթացքային վիճակի հարաբերումը որևէ ժամանակակետի հետ հայ քերականագիտության մեջ կոչվում է գործողության կերպ[49]։ Գոր-

49 Այս անվանումը ևս ընդունվում է պայմանականորեն։

ծողության կերպը ժամանակակից հայերենում անխզելիորեն կապված է ժամանակի կարգի հետ։ Ժամանակի կարգից դուրս գործողության կերպ ժամանակակից հայերենում գոյություն չունի։ Վերլուծական ժամանակաձևերը կերպաժամանակային ձևեր են, որոնք ցույց են տալիս գործողության ընթացքը որևէ ժամանակահատի հարաբերությամբ՝ դրանով դրսևորելով որևէ կոնկրետ ժամանակ։

Գործողության ընթացքի կերպային վիճակները ժամանակակից հայերենում, ինչպես հայտնի է, երեքն են՝ կատարվող, կատարված *և* կատարելի։ *Դրան համապատասխան ժամանակակից հայերենում տարբերակվում են երեք կերպ՝* կատարվող, կատարված *և* կատարելի։

1. Կատարվող կերպը *ցույց է տալիս ներկա կամ անցյալ ժամանակահատի համեմատությամբ կատարվող, ընթացքի մեջ եղող գործողություն կամ եղելություն։ Կատարվող կերպի են անկատար դերբայի և օժանդակ բայի ներկա և անցյալ ժամանակների հարադրությամբ կազմված վերլուծական ժամանակները. այսինքն՝ սահմանական եղանակի ներկա ժամանակը* (վազում է, fայլում է, գնում է, կարդում է *և այլն*) *և անցյալի անկատար ժամանակը* (վազում էի, fայլում էր, գնում էր, կարդում էր *և այլն*)։

2. Կատարված *է կոչվում այն կերպը, որը ցույց է տալիս ներկա կամ անցյալ ժամանակահատների համեմատությամբ կատարված, ավարտված գործողություն կամ եղելություն։ Կատարված կերպ ունեն այն վերլուծական ժամանակները, որոնք կազմվում են վաղակատար դերբայի ու օժանդակ բայի ներկա և անցյալ ժամանակների հարադրությամբ։ Դրանք սահմանական եղանակի վաղակատար* (վազել է, գնացել է, կարդացել է, կերել է *և այլն*) *և անցյալի վաղակատար* (վազել էր, գրել էր, կարդացել էր, խմել էր *և այլն*) *ժամանակներն են։*

3. Կատարելի կերպը *ցույց է տալիս ներկա կամ անցյալ ժամանակահատների համեմատությամբ դեռևս չկատարված, կատարելի գործողություն կամ եղելություն։ Այս կերպը դրսևորվում է այն ժամանակներում, որոնք բաղադրված են ապառնի դերբայով և օժանդակ բայի ներկա և անցյալ ժամանակներով։ Դրանք են՝ սահմանական եղանակի ապառնի ժամանակը* (վազելու եմ, գրելու եմ, խոսելու եմ, fնելու եմ *և այլն*) *և անցյալի ապառնի*

ժամանակը (վազելու էի, ուտելու էի, բնելու էի, կարդալու էի և այլն)։

Անհ բայի վերլուծական ժամանակների տախտակը ըստ կերպաժամանակային հարաբերության

Գործողության ընթացքի կերպային վիճակ	Ժամանակակետեր	
	Ներկա	անցյալ
կատարվող	վազում եմ, ես, է, ենք...	վազում էի, էիր, էր, էինք...
	գնում եմ, ես, է, ենք...	գնում էի, էիր, էր, էինք...
կատարված	վազել եմ, ես, է, ենք...	վազել էի, էիր, էր, էինք...
	գնացել եմ, ես, է, ենք...	գնացել էի, էիր, էր, էինք..
կատարելի	վազելու եմ, ես, է, ենք..,	վազելու էի, էիր, էր, էինք..
	գնալու եմ, ես, է, ենք...	գնալու էի, էիր, էր, էինք..

Ինչպես երևում է տախտակից, ներկա ժամանակակետի համեմատությամբ վերցված կատարվող, կատարված և կատարելի կերպային վիճակ ունեցող դերբայները կազմում են տարբեր ժամանակներ՝ ներկա, անցյալ և ապառնի, այսինքն՝ հակադրվում են իրար և՛ ժամանակով, և՛ կերպով, իսկ անցյալ ժամանակակետի համեմատությամբ վերցված ձևերը ցույց են տալիս անցյալում կատարված գործողության, այսինքն՝ ունեն նույն ընդհանուր անցյալ ժամանակը, սակայն հակադրվում են միմյանց գործողության ընթացքով՝ դրսևորելով կերպաժամանակային տարբեր հարաբերություններ։

§ 499. Կազմությամբ վերլուծական են նաև ենթադրական եղանակի ժխտական ձևերը, որոնք կազմվում են օժանդակ բայի ժխտական ձևերի և ժխտական դերբայի հարադրությամբ (չեմ վազի, չեմ գնա և այլն)։ Սակայն այդ ձևերը վերոհիշյալ կերպավիճակային իմաստը չեն արտահայտում երկու պատճառով. 1) ժխտական դերբայի ձևում կատարելի գործողության կերպային իմաստը այնքան թույլ է դրսևորված, որ այն չի հաղորդվում բաղադրյալ բայաձևին. 2) ենթադրական եղանակի դրական խոնարհման բայաձևերը կազմությամբ պարզ են և չունեն կերպային հիշյալ իմաստը, հետևաբար կերպային իմաստ չեն կարող ունենալ նաև նույն եղանակի ժխտական ձևերը (կգրեմ—չեմ գրի, կկարդամ—չեմ կարդա և այլն)։

§ 500. Բայի վերլուծական ժամանակները տարբերվում են համադրական ժամանակներից մեկ այլ հատկանիշով և. այն է՝ գործողության տևականության, շարունակականության իմաստով. մի իմաստ, որ բաղադրյալ ժամանակներին հաղորդվում է ինչպես դերբայի, այնպես էլ օժանդակ բայի միջոցով։ Նրանց բաղադրությամբ ստեղծված ժամանակները ցույց են տալիս գործողության վերագրումը գործողին որպես որոշ ժամանակի՝ ներկայի կամ անցյալի շարունակական հարաբերություն, գործողության որոշ տևականություն (համմտ. օրինակ՝ գրել եմ և գրեցի ձևերը)։

Գործողության տևականության, շարունակականության իմաստը առավել ընդգծվում է բայի երկրորդական վերլուծական ժամանակներում՝ կապված լինել բայի առանձնահատկության հետ։

ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐ

§ 501. Բացի բայի եղանակային ձևերի վերը թվարկված հիմնական կամ գլխավոր ժամանակներից, ժամանակակից հայերենում գործածվում են նաև երկրորդական վերլուծական ժամանակներ[50], որոնք ցույց են տալիս բայի գլխավոր ժամանակներով արտահայտված գործողությունների հարաբերությամբ կատարված, կատարվող կամ կատարվելիք գործողություններ, այսինքն՝ համաժամանակություն, նախաժամանակություն և ետաժամանակություն։ Օրինակ՝ Ամեն անգամ, երբ ես գնում եմ նրանց տուն, ճա պարապելիս է լինում։ Կամ՝ Մինչև ես գնամ, ճա եկած կլինի։ Բերված օրինակներում պարապելիս է լինում և եկած կլինի ձևերը երկրորդական վերլուծական ժամանակներ են և ցույց են տալիս գնում եմ և գնամ բայերի համեմատությամբ կատարվող և կատարված գործողություններ։

§ 502. Երկրորդական վերլուծական ժամանակները կազմվում են գուգընթացական, հարակատար, ապառնի դերբայների և լինել վերացական բայի խոնարհված ձևերի հարադրությամբ։

Ինչպես գլխավոր վերլուծական ժամանակաձևերին, այնպես էլ երկրորդական վերլուծական ժամանակաձևերին հատուկ է գոր-

50 Հայ քերականագիտության մեջ այս ժամանակները հայտնի են երկրորդական բաղադրյալ ժամանակներ անվանումով։

ծողության կերպի քերականական կարգը։ Այն ժամանակակետը, որի հարաբերությամբ վերցվում է գործողությունը, ինչպես նաև գործողության եղանակը որոշվում են լինել բայի խոնարհված ձևերով։ Ի տարբերություն գլխավոր վերլուծական ժամանակների, որտեղ գործողության կերպը դրսևորվում է միայն երկու ժամանակակետի համեմատությամբ՝ ներկա և անցյալ, երկրորդական վերլուծական ժամանակներում այն դրսևորվում է երեք ժամանակակետի հարաբերությամբ՝ ներկա, անցյալ և ապառնի։ Դա պայմանավորված է նրանով, որ լինել բայը, ի տարբերություն եմ օժանդակ բայի, ունի նաև ապառնի ժամանակաձևեր։

§ 503. Դերբայները, միանալով լինել բայի միևնույն ձևին, ամբողջ բաղադրյալ բայաձևին հաղորդում են տարբեր կերպաժամանակային իմաստներ։ Այսպես՝ վերցնենք գրել բայով և լինել-ի ներկա ժամանակով կազմված երկրորդական վերլուծական ժամանակների ձևերը՝ գրելիս եմ լինում, գրած եմ լինում և գրելու եմ լինում։ Այստեղ դերբայական ձևերի միջոցով տրվում է գործողության կերպային-ընթացքային վիճակը, իսկ լինել բայի ներկա ժամանակով՝ այն ժամանակակետը, որի համեմատությամբ վերցվում է գործողությունը, ինչպես նաև եղանակը։ Գրելիս դերբայը ցույց է տալիս սկսված և չավարտված գործողություն, այսինքն՝ կատարվող կերպ, գրած դերբայը՝ անցյալում սկսված և ավարտված գործողություն, այսինքն՝ կատարված կերպ, իսկ գրելու դերբայը՝ ապագայում սկսվող գործողության վիճակ, այսինքն՝ կատարելի կերպ։ Լինում է բայաձևը ցույց է տալիս, որ գործողությունը վերցված է ներկայի համեմատությամբ և որ վերլուծական ժամանակաձևը ունի սահմանական եղանակ, քանի որ այն խոսողի կողմից դիտվում է որպես հավաստի կերպով կատարվող։ Ըստ այդմ, տարբեր դերբայների և լինել բայի ներկա ժամանակաձևի հարադրությամբ ստանում ենք տարբեր ժամանակներ՝ գրելիս եմ լինում—սահմանական եղանակի ներկա ժամանակ, գրած եմ լինում—հարակատար ժամանակ և գրելու եմ լինում— ապառնի ժամանակ։

Երկրորդական վերլուծական ժամանակները անվանվում են նույն սկզբունքով, ինչ գլխավոր վերլուծական ժամանակները, այսինքն՝ հիմնականում ըստ կազմության։

Ծանոթ.— *Հարակատար դերբայով կազմված վերլուծական ժամանակներում հարակատար դերբայը սովորաբար ունենում է վաղակատար դերբայի իմաստ, այսինքն՝ ցույց է տալիս ավարտված, կատարված գործողության վիճակ՝ առանց հարաառնող հետևանքի և այդ հետևանքը որևէ առարկայի վերագրելու։ Ճիշտ այնպես, ինչպես ըուգբնթացական դերբայը երկրորդական վերլուծական ժամանակներում իմաստով համապատասխանում է անկատար դերբային։*

§ 504. Անցյալ ժամանակակետ են ցույց տալիս լինել բայի անցյալ ժամանակի ձևերը, որոնք հետևյալներն են՝ լինում էի, լինելու էի, եղել եմ, եղել էի, եղա, լինեի, կլինեի, պիտի լինեի։ Այս ձևերով կազմված բոլոր երկրորդական վերլուծական ժամանակներն ունեն անցյալ ժամանակ, իսկ ըուգբնթացական, հարակատար և ապառնի դերբայները նրանց հաղորդում են տարբեր կերպեր՝ կատարվող, կատարված և կատարելի (հմմտ. գրելիս եմ եղել—գրած եմ եղել—գրելու եմ եղել)։

Այս վերլուծական ժամանակների որ եղանակին պատկանելը որոշվում է լինել բայի խոնարհված ձևերի եղանակով։ Այսպես՝ գրելիս եմ եղել ձևը պատկանում է սահմանական եղանակին, գրելիս լինեի, գրելիս կլինեի, գրելիս պիտի լինեի՝ համապատասխանաբար ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակներին։

§ 505. Ապառնի ժամանակակետը դրսևորվում է լինել բայի ապառնի ժամանակի ձևերով։ Դրանք հետևյալներն են՝ լինելու եմ, լինեմ, կլինեմ, պիտի լինեմ, եղիր։ Սրանցով բաղադրված բոլոր ձևերն ունեն ապառնի ժամանակ և համապատասխանաբար կատարվող, կատարյալ և կատարելի կերպ. (հմմտ. գրելիս կլինեմ—գրած կլինեմ—գրելու կլինեմ)։

Այս ձևերը ըստ լինել բայի եղանակի համապատասխանաբար պատկանում են սահմանական, ըղձական, ենթադրական, հարկադրական և հրամայական եղանակներին, ըստ որում, սահմանական եղանակի ապառնու երկրորդական վերլուծական ձևերը լեզվում գրեթե չեն գործածվում։

§ 506. Երկրորդական վերլուծական ժամանակներից շատ տարածված են հատկապես ըուգբնթացական և հարակատար դեր-

բայերով կազմվածները։ Ապառնի դերբայով բաղադրված երկրորդական վերլուծական ժամանակները ժամանակակից հայերենում հանդիպում են խիստ սակավ։

Ծանոթ.— XIX դարի վերջերի և XX դարի սկզբների գեղարվեստական գրականության մեջ գործածական էին նաև անկատար դերբայով բաղադրված երկրորդական վերլուծական ժամանակները։ Օրինակ՝ Հայրս իբրև որմնադիր նորոգում է եղել եկեղեցու փլած տանիքը (Մուր.)։ Կարծես լուսինը՝ տիեզերքի սիրելին, իր արծաթափայլ ճառագայթներով մատնում լիներ նրանց (Ր, Խեներ)։ Ինչպես կատարյալ կլիներ նրա ուրախությունը, եթե այսօր Պետյան գտնվում լիներ այն փայլուն հյուրերի հետ (Մուր., Առաքյալը)։ Սակայն այս կազմություններն այժմ հնացած են և գրականության մեջ հազվադեպ են հանդիպում։ Այդ ձևերի փոխարեն այժմ կատարվող կերպ ունեցող երկրորդական վերլուծական ժամանակները կազմվում են միայն գուգընթացական դերբայով (նորոգելիս է եղել, գտնվելիս կլիներ, մատնելիս լիներ և այլն)։

ԲԱՅԻ ԵՂԱՆԱԿԻ ԿԱՐԳԸ

§ 507. Բայի դիմավոր ձևերին հատուկ է նաև եղանակի կարգը։ Հաղորդակցման պրոցեսում վերարտադրելով բնության երևույթները, իրողությունները, խոսողը պասսիվ կերպով չի հաղորդում դրանց մասին, այլ միաժամանակ դրսևորում է իր վերաբերմունքը հաղորդվածի նկատմամբ։ Մի դեպքում այդ երևույթները, իրողությունները կարող են դիտվել որպես ստույգ կատարված, կատարվող, կատարվելիք գործողություններ կամ եղելություններ, մի այլ դեպքում դրանք կարող են համարվել պարտադիր, ցանկալի կամ հնարավոր և այլն։ Օրինակ, երբ ասում ենք՝ Այսօր ձյուն է գալիս, մենք բնության տվյալ երևույթը ներկայացնում ենք որպես ստույգ կատարվող, հաստատական տեղի ունեցող, իսկ երբ ասում ենք Երանի այսօր ձյուն գա, այդ նույն ձյուն գալու գործողությունը ներկայացնում ենք որպես ցանկալի։

Խոսողի վերաբերմունքը իր հաղորդածի նկատմամբ դրսևորվում է գործողություն ցույց տվող բառերի՝ բայերի ձևաբանական

փոփոխությունների միջոցով. ինչպես՝ գնում եմ, գնամ, կգնամ, պիտի գնամ, գնա[51]:

Այստեղ նույն բայի տարբեր ձևերով ներկայացված է միևնույն գործողությունը տարբեր մոտեցմամբ: Գնում եմ ձևով տրվում է այնպիսի գործողություն, որը խոսողի կողմից դիտվում է որպես ստույգ կատարվող, գնամ *ձևով տրվում է խոսողի կողմից ցանկալի համարվող գործողություն,* կգնամ *ձևով՝ ապագայում ենթադրվող,* պիտի գնամ *ձևով՝ խոսողի կողմից պարտադիր համարվող գործողություն, իսկ* գնա *ձևով՝ հորդոր գործողությունը կատարելու վերաբերյալ: Այսինքն՝ բոլոր դեպքերում դրսևորվում է խոսողի վերաբերմունքը հաղորդած գործողության նկատմամբ: Այս բոլոր իմաստները լեզվի մեջ դրսևորվում են բայի եղանակի կարգի միջոցով:*

Բայի եղանակի կարգը ցույց է տալիս խոսողի վերաբերմունքը գործողության և իրականության հարաբերության նկատմամբ, այսինքն՝ գործողության հարաբերությունը իրականությանը ըստ խոսողի:

§. 508. Ժամանակակից հայերենի դիմավոր բայերը ըստ իրենց դրսևորած եղանակային իմաստի և այդ իմաստն արտահայտող ձևաբանական միջոցների, բաժանվում են հինգ խմբի.

1. Ըստ խոսողի օբյեկտիվորեն ստույգ գործողություն, եղելություն արտահայտող բայաձևեր (գրում եմ, գրելու եմ, գրել եմ, գրեցի և *այլն*):

2. Գործողության կատարման ցանկություն, իղձ արտահայտող բայաձևեր (գրեմ, գրեի, գրելիս լինեմ և *այլն*):

3. Կանխադրությամբ, ենթադրաբար, երբեմն նաև պայմանով կատարվելիք գործողություն արտահայտող բայաձևեր (կգրեմ, կգրեի, գրելիս կլինի և *այլն*):

4. Անհրաժեշտաբար, հարկադրաբար կատարվելիք գործողություն արտահայտող բայաձևեր (պիտի գրեմ, պիտի գրեի, գրելիս պիտի լինեի և *այլն*):

---

[51] *Խոսողի վերաբերմունքի դրսևորմանը հաճախ օժանդակում են նաև հնչեղանգը և եղանակավորող բառերը* (գուցե, երևի, երանի, հավանաբար, անշուշտ և *այլն*):

5. Գործողության կատարման հրաման, հորդոր, պահանջ արտահայտող բայաձևեր (գրի՛ր, գրեցե՛ք և այլն)։

Ըստ այդմ ժամանակակից հայերենում տարբերակվում են հինգ եղանակ՝ սահմանական, ըղձական, ենթադրական, հարկադրական և հրամայական։

§ 509. Ժամանակակից հայերենում եղանակի կարգը ամենասերտ կերպով կապված է ժամանակի կարգի հետ։ Յուրաքանչյուր դիմավոր բայաձև գործողության բնույթը՝ եղանակը ցույց տալու հետ մեկտեղ, ցույց է տալիս այն ժամանակը, որի ընթացքում կատարվում է տվյալ գործողությունը։ Հետևաբար յուրաքանչյուր եղանակային ձևի քննություն միաժամանակ այն ժամանակների քննությունն է, որի ընթացքում կատարվում, տեղի է ունենում խոսողի կողմից ներկայացվող գործողությունը։

ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

§ 510. Սահմանական եղանակը ցույց է տալիս այնպիսի գործողություն կամ եղելություն, որը խոսողի կողմից դիտվում է որպես օբյեկտիվորեն ստույգ կատարվող, կատարված կամ կատարվելիք։ Սահմանական եղանակի բայաձևերի միջոցով հաստատվում կամ ժխտվում է որևէ գործողություն, որն ըստ խոսողի համընկնում է իրականության հետ։ Գործողության ժխտումը չի ազդում բայի եղանակի բնույթի վրա, որովհետև այն ևս դիտվում է որպես իրականության մեջ տեղի ունեցած երևույթ՝ տրվյալ գործողության բացակայությունը անցյալում, ներկայում կամ ապագայում։ Օրինակ՝ Ամայի ձորերում, դեղնակարմիր անտառի և հնձած արտերի վրա իջել էր մի պայծառ տխրություն։ Ջինջ օդի սառնության մեջ զգացվում էր առաջին ձյունի շունչը (ԱԲ, Միրհավ)։ Դանդաղ իջնում էր երեկոն։ Լռել էր բակը, մոտակա փողոցները նույնպես լռեցին (Ա. Սեկ., Ոսկե վազերի մեջ)։ Գարունը եկավ, ծիծեռնակները վերադարձան իրենց բույները, իսկ դու չդարձար, չդարձար (Իս)։ Ամառ է։ Քննությունները վերջացել են։ Կամսարյանն ստացել է ավարտման վկայական (Մուր., Առաքյալը)։

Բերված օրինակներում ընդգծված բայաձևերը սահմանական եղանակի են, որովհետև դրսևորում են խոսողի կողմից իրական, ստույգ համարվող գործողություններ։

Ծանոթ.— *Խոսողը որպես իրական, ստույգ կատարվող գործողություն կարող է ներկայացնել նաև իրականում իրոք գոյություն չունեցող երևույթներ, ինչպես, ասենք,* Մառը *խայտում է: Այստեղ թեև հաղորդվում է այնպիսի երևույթի մասին, որ իրականում գոյություն ունենալ չի կարող, սակայն լեզվական տեսակետից մենք գործ ունենք սահմանական եղանակի բայի հետ, որովհետև խոսողը այդ երևույթը ներկայացնում է իբրև ստույգ կատարվող, իրական:*

§ 511. *Սահմանական եղանակը ժամանակակից հայերենում բայաձևերով ամենահարուստ եղանակն է: Այն ունի ութ վերլուծական և մեկ համադրական ժամանակաձև: Ի տարբերություն մյուս եղանակների, սահմանական եղանակի բայաձևերով դրսևորվում են և՛ ներկա, և՛ անցյալ, և՛ ապառնի ժամանակները: Սահմանական եղանակի ժամանակներն են՝* ներկա, անցյալի, անկատար, ապառնի, անցյալի ապառնի, վաղակատար, անցյալի վաղակատար *և* անցյալ կատարյալ, *մի շարք բայերի համար՝ նաև* ճարակատար ներկա *և* անցյալի ճարակատար: *Կազմությամբ համադրական է սահմանական եղանակի միայն անցյալ կատարյալ ժամանակը: Սահմանական եղանակն ունի նաև երկրորդական վերլուծական ժամանակներ, որոնք կազմվում են լինել բայի սահմանական եղանակի բայաձևերով և խոնարհվող բայի գուգընթացական, հարակատար և ապառնի դերբայներով:*

ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿ

§ 512. *Ժամանակակից հայերենում ներկա ժամանակ ունի միայն սահմանական եղանակը: Այն կազմվում է անկատար դերբայի և օժանդակ բայի ներկա ժամանակի ձևերի հարաղրությամբ: Ահա ներկա ժամանակի խոնարհված ձևերի պատկերը.*

Ե խոնարհում	Ա խոնարհում
վազում եմ	*գնում եմ*
վազում ես	*գնում ես*
վազում է	*գնում է*
վազում ենք	*գնում ենք*
վազում եք	*գնում եք*
վազում են	*գնում են*

Ինչպես երևում է աղյուսակից, օժանդակ բայը դրվում է դերբայից հետո։ Սակայն խոսքի մեջ հաճախ, հատկապես երբ անհրաժեշտ է լինում շեշտել մի բան անող կամ լինող առարկան, այսինքն՝ ենթական, օժանդակ բայը փոխում է իր շարադասությունը՝ դրվելով դերբայից առաջ, երբեմն նաև բայի լրացումներից առաջ։ Երբ նախադասության մեջ գործածվում են մեկից ավելի ներկա ժամանակի նույն դեմքն ու թիվն ունեցող բայաձևեր, օժանդակ բայը կարող է դրվել միայն մեկ բայաձևի մոտ, իսկ մյուսների մոտ զեղչվել (տե՛ս ստորև բերվող օրինակները)։ Սա մի օրինաչափություն է, որը վերաբերում է նաև մյուս վերլուծական ժամանակներին։

§ 513. Սահմանական եղանակի ներկա ժամանակը ցույց է տալիս խոսելու պահին կատարվող, սկսված և ընթացքի մեջ եղող գործողություն կամ եղելություն, որը խոսողի կողմից դիտվում է իբրև իրական, ստույգ։ Ներկա ժամանակը, ինչպես ասվել է, ունի գործողության կատարվող կերպ։ Օրինակ՝ —Ես մեջ եմ մեղադրում, մեզ,— չերմորեն արձագանքեց դոկտոր Մաշարը (ԳՍ, Թեհրան)։ Եվ պարզ աչքով ես տեսնում եմ Հայրենիքս ծաղկավետ, Այն ճոխ երկրից ես լսում եմ Անհոգ ծիծաղ լացի հետ (ՀԹ)։ Վտակը ժայռից ներքև է թռչում, թափ առած ընկնում քարերի գլխին, Ջարկում ավազին, շաշում է, ճչում, ճչում անհանգիստ, փրփուրը բերնին (ՀԹ)։

§ 514. Բացի իր հիմնական նշանակությունից, սահմանական եղանակի ներկա ժամանակը կիրառվում է նաև հետևյալ իմաստներով.

1. Ցույց է տալիս մշտապես տեղի ունեցող, կատարվող տեվական գործողություններ կամ եղելություններ, հաստատված, հանրահայտ ճշմարտություններ։ Օրինակ՝ Երկիրը պտտվում է արեգակի շուրջը։ Մարմինները տաքությունից լայնանում են։ Ձմռանը ճաշորդում է գարունը։ Գարնանը օրերը տարաճում են։

Այս իմաստով ներկան շատ է կիրառվում հատկապես առածների, ասացվածքների մեջ, ինչպես՝ Ուրիշի աշխատածը քամին է տանում։ Եզը որ ընկնում է, դանակավորը շատանում է։ Երեխայի խելոքը օրորոցից է երևում։ Ոսկին կրակով են փորձում։

2. Ցույց է տալիս բնության մեջ երևան եկած և արդեն կա-

յուն վիճակում գտնվող երևույթներ, աշխարհագրական տեղադրություններ և այլն։ Օրինակ՝ լեռնաշղթայի ճյուղերից մեկը ջոկվում է մայր լեռնաշղթայից, սեպի պես խրվում է Արարատյան դաշտի սիրտը և դեմ է առնում Արաքսին (ՎԱ, Որսորդական պատմվածքներ)։ Ահա գյուղերում այստեղ և այնտեղ բարձրանում են ամրոցներ, որոնք իրենց հպարտ աշտարակներով և ատամնավոր պարիսպներով իշխում են շրջակայքի վրա (Ր, Կայծեր)։ Նեղ կածանն անցնում է փոքրիկ մացառուտների միջով (ԱԲ, Բիլանագ)։

3. Յուրց է տալիս ներկան, խոսելու պահը ևս իր մեջ ներառնող մի երկարատև ժամանակամիջոցում սովորաբար կրկնվող գործողություններ։ Օրինակ՝ Պարում է ձմեռն հարսանիքներում, Կամ մեծավորի թեփշի է լիզում, Մինչև մի քանի շահի է ճարում (ՀԹ)։ Գիշերը լուսնի երկչոտ շողերը հենց որ մտնում են էն խավար ձորը... Ոգի է առնում ամեն բան էնտեղ, Ենչում է, ապրում, և մութն է ահեղ (ՀԹ)։ Ջգույշ է միրհավը, դժվար է նրան խփել։ Երբեմն այնքան մոտ է գալիս, ահա ուզում ես կրակել, բայց մի թեթև խշշոցից, նույնիսկ որսորդի խոր շնչառությունից, բացում է թևերը, թռչում է գնդակից արագ, ծղրտում, պտույտներ անում թանձր սաղարթի վրա և անձայն իջնում մի ուրիշ տեղ (ԱԲ, Միրհավ)։

4. Ներկա ժամանակի բայաձևով կարող է դրսևորվել նաև անցյալում կատարված-ավարտված գործողություն, երբ խոսողը պատմածը ավելի պատկերավոր, արտահայտիչ, կենդանի դարձնելու համար անցյալում կատարված գործողությունները մտովի տեղափոխում է խոսելու պահը և այդպես ներկայացնում։ Այս ներկան քերականագիտության մեջ կոչվում է պատմական ներկա։ Օրինակ՝ Թագավորն ու թագուհին էնպես ուրախանում են, էնպես ուրախանում են, որ աշխարհքովը մին են լինում։ Աչքալուս են գրում, նամակը տալիս են սուրհանդակին, ուղարկում են (ՀԹ, Կռնատ աղչիկը)։ Ու կրկին հեռուն նայելով քայլերով հատատատ, համաչափ, անցնում են նրանք Բայիլով, մտնում են քաղաքը նվաճած... (ԵՉ, Բալլադ քանվեցի մասին)։

5. Երբեմն, հատկապես խոսակցական լեզվում, ներկա ժամանակաձևը կարող է արտահայտել նաև ապագայում կատարվելիք գործողություն, այսինքն՝ կիրառվել ապառնու նշանակությամբ։ Այս իմաստով ներկան գործածվում է այն դեպքերում,

երբ խոսողը կատարվելիք գործողությունը համարում է այնքան հաստատ, անպայման, որ կարծես խոսելու պահին արդեն կատարվելիս լինի։ Օրինակ՝ Մոսկվա եմ գնում մայրիկ,— բացատրեց նա հրճվանքով։ Մի շաբաթ հետո մեկնում եմ (ՆՋ, Հացավան)։ Տղաներ,— ասում է մայրը,— գնում ենք հարձակման (ԲՀ, Սերմնացանները չվերադարձան)։ Մեկ շաբաթ հետո սկսվում են ընդունելության քննությունները։ Աղջիկը... երգի ելևէջող տոնով ասաց.— Վաղը գնում ենք (Ա. Սահ., Խաչուղինեք)։

Հարակատար ներկա

§ 515. Մի շարք չեզոք և կրավորական սեռի բայերի հարակատար դերբայը օժանդակ բայի ներկա ժամանակաձևերի հարադրությամբ կազմում է հարակատար ներկա ժամանակը. այսպես՝

կանգնած եմ	*կանգնած ենք*
կանգնած ես	*կանգնած եք*
կանգնած է	*կանգնած են*

Այս ժամանակային ձևերը ցույց են տալիս անցյալում բակըված և ներկա ժամանակաընթացքում հարատևող գործողություն՝ որպես ավյալ առարկայի դրություն, վիճակ։ Եթե չլիներ վերլուծական ժամանակների անվանման ընդունված սկզբունքը, ավելի ճիշտ կլիներ այդ ժամանակը կոչել վիճակային ներկա։ Բերենք օրինակներ՝ Խանութի շեմին, կավե ամանների մոտ, նըստած է Տոլստոյի նման մի ծերունի, ձախ կողմը կանգնած է չորչոր դեմքով, ձեռքերը կրծքին խաչած մի պառավ կին (ՄՋ, 2, 325)։ Վագոնում բոլորը ննջած են (ՀՔ, Մեծ տան զավակները)։ Ադամ զգաց, որ իր սիրտը կապված է Լիլիթի լուսաշող կրունկներին (Իս., Լիլիթ)։ Նրանց մկանների ուժը բնությունից, քեն դաստիարակությունից ընդարմացած է (ՆԴ, Մպանված աղավնի)։

Ժամանակակից հայերենում այս ժամանակը կարող են ունենալ հիմնականում կրավորական սեռի բայերը և խիստ սահմանափակ թվով չեզոք սեռի բայեր (նստել, կանգնել, քնել, հոգնել, պառկել և այլն)։

ԱՆՑՅԱԼ ԺԱՄԱՆԱԿ

§ 516. Սահմանական եղանակն ունի անցյալ ժամանակ արտահայտող վեց բայաձև, որոնցից յուրաքանչյուրն արտահայտում է կերպաժամանակային տարբեր իմաստային երանգ և ունի կիրառության որոշակի ոլորտ։ Այդ ժամանակաձևերն են՝ անցյալի անկատար, անցյալի ապառնի, վաղակատար, անցյալի վաղակատար և անցյալ կատարյալ (վազում էի, վազելու էի, վազել եմ, վազել էի, վազեցի)։ *Այս ժամանակներից հինգը կազմությամբ վերլուծական են, իսկ մեկը՝ համադրական։ Քննենք դրանցից յուրաքանչյուրն առանձին։*

Անցյալի անկատար

§ 517. Սահմանական եղանակի անցյալի անկատար ժամանակը կազմվում է անկատար դերբայի և օժանդակ բայի անցյալ ժամանակի ձևերի հարադրությամբ։ Այսպես՝

Ե խոնարհում	Ա խոնարհում
վազում էի	*գնում էի*
վազում էիր	*գնում էիր*
վազում էր	*գնում էր*
վազում էինք	*գնում էինք*
վազում էիք	*գնում էիք*
վազում էին	*գնում էին*

§ 518. Սահմանական եղանակի անցյալի անկատար ժամանակը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետի համեմատությամբ հաստատ կատարվող, սկսված և ընթացքի մեջ եղող գործողություն կամ եղելություն։ Օրինակ՝ Արև մի կեսօր Կաքավաբերդի քարափով բարձրանում էին երեք ձիավոր։ Ոչ միայն ըզգեստից, այլև ձի նստելուց երևում էր, որ առաջին երկու ձիավորը քաղաքի մարդիկ են... երրորդ ձիավորը նրանց ուղեկցում էր (ԱԲ, Ալպիական մանուշակ)։ Տղաները կուզեկուզ և զգուշությամբ ճեռնում էին նրան։ Նրանցից ոչ հեռու ժայռի ստորոտում մի երկար պաչ էր ուժգին խփվում գետնին, որից հազիվ նկատելի

փոշի էր բարձրանում (ՎԱ, Սևանի ափին)։ Գյուղացիները դեռ խոսում, վիճում էին։ Շառաները հրաժեշտ էին տալիս կանանց ու երեխաներին, մյուսները ատատանվում էին՝ գնա՞լ Դավիթ-բեկի կռվին, թե՞ ոչ (Սխ, Մխիթար սպարապետ)։

§ 519. Բացի իր այս հիմնական իմաստից, անցյալի անկատար ժամանակը ցույց է տալիս նաև մի անցյալ ժամանակամիջոցում՝ ներառյալ նաև անցյալ ժամանակակետը, որպես սովորություն մշտապես կատարված, պարբերաբար կրկնված գործողություններ, եղելություններ։ Օրինակ՝ էմման քիչ էր ուտում, քիչ էր ճնում, համարյա ոչ մի գործ չէր կատարում, ամեն բանից զզվում, ձանձրանում էր, ամեն մի չնչին բանի համար բարկանում էր (ՆԴ, Զազունյան)։ Երեկոները մենակ նստում էր իրենց շքեղ պատշգամբում, որի շուրջը բացվում էր պարտեզը հովասուն ծառերով և կարկաչուն շատրվաններով, նրա հոգին սլանում էր մի ուրիշ վայր, որ հեռավոր երազի պես մեկ երևում էր, մեկ չքացնում (Իս.)։ Ինքն ամեն օր ճանճնվում էր երազանքի մխիթարությանը։ Իրական դժբեմ կյանքից փախչում էր, փոխադրվում, այսպես ասած ապաստան գտնում անրջային աշխարհի մեջ (Իս.)։

Ծանոթ.— *Հայվադեպ, հատկապես խոսակցական լեզվում, անցյալի անկատար ժամանակը գործածվում է նաև անցյալի ապառնու նշանակությամբ՝ ցույց տալով այնպիսի գործողություն, որը անցյալում պիտի կատարվեր, սակայն չի կատարվել ինչ-որ հանգամանքների բերումով. ինչպես՝ Լավ էր շուտ եկար, ես էլ արդեն գնում էի։ Մի քիչ էլ ուշանայիր, թուղթը պատռում էի։ Այսպիսով գլորվեցին, անցան. դարձյալ մի քանի օրեր, և նա դեռ գնում էր Մարությանների տուն (ՆԴ, Մահը)։*

Վաղակատար

§ 520. Սահմանական եղանակի վաղակատար ժամանակը կազմվում է խոնարհվող բայի վաղակատար դերբայի և օժանդակ բայի ներկա ժամանակի ձևերի հարադրությամբ։ Այսպես՝

Ե խոնարհում	Ա խոնարհում
վազել եմ	*գնացել եմ*
վազել ես	*գնացել ես*

վազել է	գնացել է
վազել ենք	գնացել ենք
վազել եք	գնացել եք
վազել են	գնացել են

§ 521. Վաղակատար ժամանակը ցույց է տալիս խոսելու պահից առաջ, այսինքն՝ ներկա ժամանակակետի համեմատությամբ կատարված գործողություն կամ եղելություն։ Օրինակ՝ Ինչքան ցավ եմ տեսել ես, Նենգ ու դավ եմ տեսել ես, Տարել, ներել ու սիրել,— Վատը լավ եմ տեսել ես (ՀԹ)։ Մենք անցել ենք արյան ծովեր, Սուր ենք տեսել ու կրակ, Մեր ճակատը դեմ ենք արել Մրրիկներին հակառակ (ՀԹ)։

Բերված օրինակներում ընդգծված վաղակատար բայաձևերը ցույց են տալիս անցյալում կատարված, ավարտված գործողություններ։

Սակայն հաճախ վաղակատար ժամանակի միջոցով տրվում է այնպիսի գործողություն, որ թեև անցյալում է կատարվել, բայց հարատևում է մինչև խոսելու պահը։ Ժամանակային այդ իմաստը երևան է գալիս հատկապես դրության, վիճակ ցույց տվող բայերի վաղակատար ժամանակաձևում։ Օրինակ՝ Թեկուզ և մենակ լինի փարախում, Աժդահա Սաքոն ինչի՞ց է վախում։ Հապա մի նայիր հսկա հասակին, ոնց է մեկնվել (ՀԹ, Լոռեցի Սաքոն)։ Ես պահել եմ սրտիս խորքում մի լուռ գաղտնիք սիրային (ՀԹ)։ Զանգվի ափին խաչաձև նստել է մռայլ ու տխրադեմ երևանի բերդը (Իս., Քուրդ Ամոն)։ Արագածը իրար վրա իր պերճ զորգերն է փռել (Իս.)։ Եղբորս վաղահաս մահը սրտիս մեջ թողել է մի այնպիսի խոց, որ երբեք և ոչ մի բանով չի կարող բուժվել (ՆԴ, Աննա Սարոյան)։

§ 522. Վաղակատար ժամանակի բայաձևերի իմաստային առանձնահատկություններից է նաև այն, որ ցույց է տալիս անցյալում կատարված ավարտված, սակայն որոշակի տևականություն ունեցող գործողություն, որով և տարբերվում է անցյալ կատարյալ ժամանակից (համմտ. տեսել եմ—տեսա բայաձևերը)։ Այս ժամանակի մյուս բնորոշ գիծն այն է, որ հիմնականում գործածվում է համեմատաբար վաղ անցյալում կատարված գործողությունների և եղելությունների նկարագրության ժամանակ, որոնց խոսողը

կարող է ականատես եղած չլինել, վերապատմել ըստ ուրիշներից լսածի՝ համարելով դրանք հավաստի, իրական. ինչպես՝ Այդ պատահին փող է ելավգել քարանձավների ստվերում և նրա պարզ երգերին առնագանեել են ձորերը։ Երբեմն կարկուտն է ջարդել նրան, երբեմն քարեր են ffեռնել դեմքը, ցո րոը և արևը խանձել են նրա կուրծքը, ինչպես լեռան լանջը (ԱԲ, Միրանի փողը)։

Իմաստային այս առանձնահատկությունն է պատճառը, որ այս ժամանակը շատ է կիրառվում հատկապես անցյալում կատարված պատմական իրադարձությունների, դեպքերի, փաստերի և այլնի մասին հաղորդելիս, այսպես՝ Ըստ Ուխտանես պատմագրի վկայության, հայերը դեռևս 6-րդ դարի վերջերին կազմել են Թբիլիսիի բնակչության մի մասը (ԳԹ)։ Եղիշե Չարենցը ծնվել է 1897 թ. Կարս քաղաքում և այլն։

§ 523. Բացի իր այս հիմնական կիրառություններից, վաղակատար ժամանակը երբեմն գործածվում է ապառնի ժամանակի նշանակությամբ։ Այս դեպքում ընդգծվում է, որ խոսողը կատարվելիք գործողությունը դիտում է որպես արդեն կատարված, ավարտված։ Այս իմաստով վաղակատարը կարող է գործածվել և՛ ներկայի համեմատությամբ (Գնա, տվել եմ, տվել եմ, տվել, Սարգիս (ՆԴ, Բարերարը), և՛ մի ապառնի ժամանակակետի համեմատությամբ (Որ իմացել է կատարվածի մասին, խիստ կբարկանա)։ Վերջին դեպքում վաղակատար ժամանակը ունենում է ըղձական եղանակի ապառնու իմաստ։

Անցյալի վաղակատար

§ 524. Սահմանական եղանակի անցյալի վաղակատար ժամանակը կազմվում է վաղակատար դերբայի և օժանդակ բայի անցյալ ժամանակի ձևերի հարադրությամբ։ Այսպես՝

Ե խոնարհում	Ա խոնարհում
վազել էի	*գնացել էի*
վազել էիր	*գնացել էիր*
վազել էր	*գնացել էր*

Անցյալի վաղակատար ժամանակը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետի համեմատությամբ արդեն կատարված, ավարտված գործողություն կամ եղելություն։ Օրինակ՝ Գնում էին հազարավոր մարդիկ, որ ծնվել ու մեծացել էին տարբեր հորիզոնների տակ (ՀՔ, Մեծ տան զավակները)։ Ներսի Արսենը, Հարազատը և մի երկու երիտասարդ... մտան այգու այն մասը, ուր սավառնակն արդեն տեղացել էր բորդոյան հեղուկը (ՔԲ, Ոսկե Հովիտ)։ Այդ կնոջը հայտնի էին թագուհու ցավերը, տանջող վշտերը։ Նա սկզբից արդեն ամեն բան տեսել, իմացել և ստուգել էր։ Նա անկեղծ սրտով վշտացել և արտասվել էր մեծ տիկնոջ համար (Մուր., Գևորգ Մարզպետուհի)։

§ 525. Վաղակատար ժամանակի նման, անցյալի վաղակատար ժամանակը ևս հաճախ ցույց է տալիս նաև հարատևող գործողություն կամ եղելություն, սակայն այդ հարատևումը կատարվում է ոչ թե մինչև խոսելու պահը, այլ մինչև մի անցյալ ժամանակակետ, որի հարաբերությամբ կատարվել է տվյալ գործողությունը կամ եղելությունը։ Այսպիսի իմաստ արտահայտում են հիմնականում դրություն, վիճակ ցույց տվող բայերը (կանգնել, տիրել, մոռանալ, ճստել և այլն)։ Օրինակ՝ Եվ ահա, նոյեմբերյան տոներին եղեգնյա կտուրով այդ ակումբում եղավ մի սովորական դեպք։ Վառել էին բոլոր ճրագները... Աղջիկները դեղնավուն փշատերև թփերից, մասրենու կանաչ ճյուղերից և աշնան դաշտի ծաղիկներից ճյուսել էին մանյակներ ու պսակներ, բամբակի բացված կնդուղները ճագցրել էին պսակներին և այդ ամենը... կախել պատերից (ԱԲ, Սև ցելերի սերմնացանը)։

§ 526. Անցյալի վաղակատար ժամանակը շատ է գործածվում հատկապես գեղարվեստական գրականության մեջ՝ անցյալում կատարված դեպքերի, իրադարձությունների կամ երևույթների նկարագրությունների ժամանակ։ Այս դեպքում անցյալ ժամանակակետ ցույց տվող հարաբերակից բայ կոնկրետ կոնտեքստի մեջ կարող է չլինել։ Օրինակ՝ Արամիկը շրթունքները սեղմել էր իրար և այտերը փքել. դրանից նրա մանկական գեղեցիկ դեմքը ստացել էր մի տեսակ լուրջ, բայց շատ գրավիչ և սիրելի արտահայտություն (ՆԴ, Զագունյան)։ Վտակի ափին ուռենու տակ սրխուր նստել էր Լիլիթը։ Թախծանուշ դեմքը մարգարիտի պես գու-

նատ... և մազերը պճնող դրախտավարդերի պսակը թառամել էր արդեն (Իս., Լիլիթ)։

§ 527. Անցյալի վաղակատար ժամանակը երբեմն կիրառվում է ըղձական եղանակի անցյալի իմաստով (հատկապես պայմանի երկրորդական նախադասություններում)։ Բերենք մեկերկու օրինակ՝ —Նայիք, է՛, մի քայլ այս կողմ էր ընկել՝ վերջ (ԲՀ, Սերմնացանները չվերադարձան)։ Որ բռնել էի..., էս բոլոր ջարդված տնկիները նրա գլխին պիտի ջարդեի (ՆՋ, Հացավան)։ Ես մինչև այժմ վաղուց արդեն մեռած կլինեի, եթե քո սերը, քեղ կրկին տեսնելու հույսս քաջալերություն չէին ներշնչել ինձ (ՆԴ, Նունե)։

Անցյալի հարակատար

§ 528. Մի շարք չեզոք և կրավորական սեռի բայերի հարակատար դերբայը օժանդակ բայի անցյալ ժամանակաձևերի հարադրությամբ կազմում է անցյալի հարակատար ժամանակը. այսպես՝

կանգնած էի	*կանգնած էինք*
կանգնած էիր	*կանգնած էիք*
կանգնած էր	*կանգնած էին*

§ 529. Այս ժամանակը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետի հարաբերությամբ սկսված և հարատևող հետևանքով գործողություն, որպես տվյալ առարկայի վիճակ, դրություն. օրինակ՝ Հետևյալ առավոտ, դեռ արևը չծագած, կամասարյանը նստուն էր Օվանեսի կառքում (Մուր., Առաքյալը)։ Սեդան համոզված էր, որ քեռին կկատարեր իր խոսքը (Ա. Սեկ., Ոսկե վազերի մեջ)։ Եվ աշխարհը լցված էր, դյութված բյուր նվագներով հավերժ երկնային (Իս., Լիլիթ)։ Սառան դարձյալ կանգնած էր լուռ ու արձանացած (ՆԴ, Սպանված ազավնին)։ Ոսկեկեղև ծառերից կախված էին հեշտագրգիռ պտուղները (Իս., Լիլիթ)։

Այս ժամանակաձևերը կարող են ունենալ այն բայերը, որոնք ունեն հարակատար ներկա ժամանակաձևեր (տե՛ս § 515)։

Անցյալի ապառնի

§ 530. Անցյալի ապառնի ժամանակը կազմվում է ապառնի դերբայի և օժանդակ բայի անցյալ ժամանակաձևերի հարադրությամբ. այսպես՝

Ե խոնարհում	Ա. խոնարհում
վազելու էի	գնալու էի
վազելու էիր	գնալու էիր
վազելու էր	գնալու էր
վազելու էինք	գնալու էինք
վազելու էիք	գնալու էիք
վազելու էին	գնալու էին

Սահմանական եղանակի անցյալի ապառնի ժամանակը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետի նկատմամբ ապառնի համարվող, կատարվելիք գործողություն կամ եղելություն, որը սակայն մեծ մասամբ կամ չի կատարվել և կամ խոսողին հայտնի չէ այն կատարվել, տեղի է ունեցել, թե ոչ։ Օրինակ՝ Անշուշտ մենք մեր գրաստների հետ գոհ էինք գնալու պատառոտող ընտանի գազանների սուր ատամներին, եթե մեզ առաջնորդող քուրդը... ձայն չտար (ՊՊ, Ցեցեր)։ ...Որովհետև մեկնելու էր մի երկու ժամից, ուստի հրաժեշտ տվի հենց տանս և գնացի գործի (ՆԴ, Սպանված աղավնի)։ Այդ խնդիրը կատարելուց հետո... շարունակելու էինք դեպի արևմուտք քշել թշնամուն (ԳԲ, Կրակ)։ Ընդմիջումից հետո հանդեսի երկրորդ մասը պիտի սկսվեր մի բանաստեղծությամբ, որ արտասանելու էր նրա քույրը (ԱԲ, Խոնարհ աղջիկը)։

§ 531. Այս ժամանակը համարվում է անցյալ, քանի որ ցույց է տալիս թեև անցյալ մի ժամանակի համեմատությամբ ապառնի, կատարվելիք գործողություն, սակայն խոսելու պահի համեմատությամբ արդեն կատարված (եթե բայը ժխտական է) կամ չկատարված (եթե բայը դրական է) գործողություն։ Այն բռնում է կարծես մի տեսակ միջին տեղ անցյալ և ներկա ժամանակների միջև (կատարվում է որևէ անցյալ գործողությունից հետո, սակայն ներկա պահից առաջ)։

Սահմանական եղանակի անցյալի ապառնի ժամանակը ժամանակակից հայերենի գլխավոր ժամանակներից ամենաքիչ գործածականն է։ Նրա դրսևորած իմաստն արտահայտելու համար այժմ ավելի հաճախ գործածվում է հարկադրական (նաև ենթադրական) եղանակի անցյալ ժամանակը։

Անցյալ կատարյալ

§ 532. Անցյալ կատարյալը սահմանական եղանակի միակ համադրական ժամանակն է։ Այն կազմվում է բայերի անցյալի հիմքի վրա ավելացնելով դիմորոշ վերջավորություններ, որոնք անցյալի համար, ինչպես ասվել է, հետևյալներն են՝ 1) ե խոնարհման ն, չ ածանցներ ունեցող բայերի և Ա խոնարհման աճ, են ածանցներն ունեցող բայերի համար՝ ա, ար, ավ, աճմ, աք, աճ և 2) մնացած բայերի համար ի, իր, 0, իճմ, իք, իճ։ Պատճառական բայերի եզակի երրորդ դեմքում 0 վերջավորության փոխարեն լինում է եց (մոտցր+եց)։ Այսպես՝

վազեց+ի	*փախ+ա*	*գտ+ա*	*գնաց+ի*
վազեց+իր	*փախ+ար*	*գտ+ար*	*գնաց+իր*
վազեց+0	*փախ+ավ*	*գտ+ավ*	*գնաց—0*
վազեց+ինք	*փախ+անք*	*գտ+անք*	*գնաց+ինք*
վազեց+իք	*փախ+աք*	*գտ+աք*	*գնացիք*
վազեց+ին	*փախ+ան*	*գտ+ան*	*գնաց+ին*

մոտեց+ա	*հեռաց+ա*	*հեռացր+ի*
մոտեց+ար	*հեռաց+ար*	*հեռացր+իր*
մոտեց+ավ	*հեռաց+ավ*	*հեռացր+եց*
մոտեց+անք	*հեռաց+անք*	*հեռացր+ինք*
մոտեց+աք	*հեռաց+աք*	*հեռացր+իք*
մոտեց+ան	*հեռաց+ան*	*հեռացր+ին*

§ 533. Անցյալ կատարյալ ժամանակը ցույց է տալիս խոսելու պահից առաջ մի որոշակի անցյալ ժամանակահատվածում կատարված, ավարտված գործողություն կամ եղելություն։ Օրինակ՝ Ու Մարոյին զուգեցին, երեսին քող ձգեցին, Հինա դրին ձեռքերը... եկավ խաչով տերտերը, Տարավ ժամում կանգնեցրեց (ՀԹ)։ Երբ բացվեց հոգուս վաղորդայնը— Սիրեցի նվագները քո ես։ Սի-

rեցի երգերիդ քնքշությունը, երազներդ չքնաղ ու նրբին, Տխրադեմ դու մտար իմ տունը՝ Ոսկելար քնարը ձեռքիդ (ԵՉ)։ Վահոնը գլխավոր փողոցից ծռվեց դեպի ձախ։ Անկյունում նրա ականջին բնկավ երգը, տեսավ լուռ լսողների խումբը։ Նա գլուխը վեր բարձրացրեց և զարմացավ (ԱՓ, Սև հացը)։

§ 534. Անցյալ կատարյալ ժամանակը, վաղակատար ժամանակի նման ցույց տալով անցյալում կատարված, ավարտված գործողություն՝ իր ժամանակային իմաստով որոշակիորեն սահմանազատվում է նրանից։ Այս երկու ժամանակների առաջին տարբերությունն այն է, որ անցյալ կատարյալ ժամանակը ցույց է տալիս խոսելու պահին ավելի մոտ գործողություն, քան վաղակատարը (Հմմտ. մեկնեց—մեկնել է)։ Երկրորդ տարբերությունն այն է, որ եթե վաղակատար ժամանակը ցույց է տալիս ներկայի համեմատությամբ արդեն կատարված որոշակի տևականություն ունեցող այնպիսի գործողություն կամ եղելություն, որի մասին խոսողը պատմում է հիմնականում ոչ որպես ականատես, ապա անցյալ կատարյալ ժամանակը ցույց է տալիս անցյալում կատարված այնպիսի գործողություն կամ եղելություն, որին խոսողը կամ ականատես է եղել և կամ այնքան հավաստի և որոշակի գիտի այդ մասին, որ ներկայացնում է իբրև ականատես, մրտուվի իրեն տեղափոխում է այդ գործողության կատարման իրադրության մեջ (Հմմտ. Նա գնացել է դպրոց և Նա գնաց դպրոց)։

Անցյալ կատարյալ ժամանակի մյուս առանձնահատկությունն այն է, որ կարող է ցույց տալ ակնթարթային, կարճ ժամանակամիջոցում կատարված-ավարտված գործողություն կամ եղելություն (Հմմտ. կերավ—կերել է, տեսավ—տեսել է)։ Եթե վաղակատար որոշ բայաձևեր ցույց են տալիս անցյալում կատարված գործողության հարատևումը մինչև ներկա ժամանակակետը, ապա անցյալ կատարյալ ժամանակի բայաձևերում ժամանակային այդ իմաստը բացառված է։ Այս ձևերում հատկապես ընդգծվում է գործողության ավարտվածությունը խոսելու պահից առաջ։ Այսպես՝ երբ ասում ենք կանգնել է, նստել է և այլն, հասկանում ենք անցյալում կատարված, սակայն նաև մինչև ներկան, մինչև խոսելու պահը հարատևող գործողություն (Նա կանգնել է և այժմ կանգնած է, Նա նստել է և այժմ նստած է), իսկ կանգնեց, նստեց ձևերը ցույց են տալիս անցյալում որոշակի ժամանակամիջո-

ցում կատարված և արդեն ավարտված գործողություն։ Անցյալ կատարյալ ժամանակաձևը կարող է ցույց տալ և՛ վաղ անցյալում, և՛ խիստ մոտիկ անցյալում կատարված գործողություն (ընդհուպ մինչև խոսելու պահից անմիջապես առաջ կատարված), որի ավարտվածությունը որոշակի է։ Բերենք մեկ օրինակ ևս՝ Սիմոնն անտեսանելի արագությամբ ձիու համետը հանեց։ Արևի տակ փայլփլեց ձիու ոզորկ և գեր մեջքը։ Ապա նույն արագությամբ կոացավ և գետնից վերցրեց մի չեչաքար։ Երբ առաջին անգամ նա չեչաքարը Յոլակի մեջքին խփեց, ձին հովություն զգաց (ԱԲ, Սպիտակ ձին)։ Գործողության ավարտվածությունն ընդգծվում է նաև այն բայերի անցյալ կատարյալի ձևերում, որոնք կամ ըստ բայիմաստի, կամ ժամանակ ցույց տվող բառերի կցմամբ ցույց են տալիս երկար, տևական ժամանակամիջոցում կատարված գործողություն կամ եղելություն։ Օրինակ՝ Նա այդ գիրքը կարդաց երկու ժամում, կամ՝ Աշոտը երկու տարի հանապարհորդեց, շրջեց ամբողջ երկիրը։

§ 535. Բացի հիմնական իմաստից, անցյալ կատարյալ ժամանակաձևերը ժամանակակից հայերենում ունեն նաև երկրորդական կիրառություններ։

1. Կիրառվում են ներկա ժամանակին խիստ մոտ, անմիջապես հաջորդող գործողություն ցույց տալու համար. մի գործողություն, որ խոսողն արդեն համարում է հաստատ կատարված։ Օրինակ՝ —Դե ես իմ ասելիքն ասի ու գնացի, հիմի դու դիտես (ՆՉ, Հացավան)։ —Այժմ արդեն գնացինք,— ասացին տղաները (Ա. Սահ., Խաչուղիներ)։ —Շո՛ւտ եկեք, շարժվեցինք։

2. Հատկապես հաճախ է հանդիպում անցյալ կատարյալ բայաձևերի կիրառությունը ըղձական եղանակի ապառնի ժամանակի նշանակությամբ պայմանի երկրորդական նախադասություններում։ Օրինակ՝ Եթե ստացա քո համաձայնությունը, անմիջապես կմեկնեմ (ՆԴ, Մահը)։ Մի ծոխ աչք էլ որ կերա, կմեռնեմ (ՆՉ, Պ. Պետրոսն ու իր նախարարները)։ Վիրավորը որ ջրին գնաց, ջուր խմեց–պրծավ, էլ ապրիլ չի (ՀԹ)։ Թաղեմ քեզ հատիկ, և դարդս քեզ հետ, թե աստված ուզեց, դու կաճաչեցիր, թող դարդս մեռնի գետնի տակ անհետ (ՀՀ)։

3. Անցյալ կատարյալ ժամանակի բայաձևերը կիրառվում են նաև ընդհանրական նշանակությամբ՝ ցույց տալով սովորաբար

կրկնվող, որպես ճշմարտություն ընդունված իրողություններ։ Այս իմաստով անցյալ կատարյալը գործածվում է հատկապես ժողովրդական առածների, ասացվածքների մեջ, և հավասարարժեք է ներկա ժամանակի նույն իմաստով կիրառությանը։ Օրինակ՝ Սուտ ասողի տունը կրակն ըճկավ, չհավատացին։ Մինչև թուրը ճկավ, լեզուն գլուխը կտրեց։ Գելի գլխին ավետարան կարդացին, ասաց՝ շուտ արեք, նախիրը գնաց։ Գիժը գնաց հարսնքատուն, ասաց՝ ըստեղ լավ ա, քանց մեր տուն (ԱՂ, Հայկական առածանի)։

ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ

§ 536. Ինչպես ասվեց, սահմանական եղանակը ունի ապառնի ժամանակ դրսևորելու միայն մեկ ձև, որը կազմվում է վերլուծական եղանակով՝ ապառնի դերբայի և օժանդակ բայի ներկա ժամանակի ձևերի հարադրությամբ. այսպես՝

վազելու եմ	*գնալու եմ*
վազելու ես	*գնալու ես*
վազելու է	*գնալու է*
վազելու ենք	*գնալու ենք*
վազելու եք	*գնալու եք*
վազելու են	*գնալու են*

Սահմանական եղանակի ապառնի ժամանակը ցույց է տալիս խոսելու պահից հետո կատարվելիք այնպիսի գործողություն կամ եղելություն, որը խոսողի կողմից դիտվում է իբրև օբյեկտիվորեն ստույգ կատարվելիք։ Օրինակ՝ Նրա ճանապարհը չի լինելու ապագա հայ պոեզիայի ճանապարհը (ՎՏ)։ Ու մինչև այստեղ կհասնենք մենք դեռ, Այնքան են լալու, այնքան տանջվելու (ՀՔ)։ Շինվարչության կոլեկտիվը, որը իրականացնելու է այս բոլոր գեղեցիկ մտահղացումները... ամեն ինչ կանի բոլոր աշխատանքները որոշված ժամկետներին ավարտելու համար (ՍՀ)։

§ 537. Այս ժամանակը արդի հայերենում համեմատաբար սակավ է գործածվում։ Եթե ներկա կամ անցյալ ժամանակներում կատարված գործողությունները խոսողը կարող է հաղորդել որպես ստույգ կատարված կամ կատարվող, ապա դեռևս չկատարված, խոսելու պահից հետո կատարվելիք գործողությունը շատ

ավելի հաճախ խոսողի կողմից դիտվում է իբրև կանխագրվող, ենթադրվող կամ անհրաժեշտաբար կատարվելիք։ Այդ է պատճառը, որ խոսելու պահից հետո կատարվելիք գործողություն նկարագրելու համար ավելի հաճախ գործածվում են ենթադրական և հարկադրական եղանակների ապառնի ժամանակները (կգրեմ, պիտի գրեմ)։

Սահմանական եղանակի երկրորդական վերլուծական ժամանակները

§ 538. Բացի գլխավոր ժամանակներից, սահմանական եղանակն ունի երկրորդական վերլուծական ժամանակներ, որոնք կազմվում են զուգընթացական, հարակատար ու ապառնի դերբայներով (վազելիս, վազած, վազելու) *և լինել բայի սահմանական եղանակի բայաձևերով* (լինում եմ, էի, լինելու եմ, էի, եղել եմ, էի, եղա)։

Սահմանական եղանակի երկրորդական վերլուծական ժամանակները հետևյալներն են[52]։

1. Ներկա— *Այս ժամանակը կազմվում է զուգընթացական դերբայի և լինել բայի ներկա ժամանակի բայաձևերի հարադրությամբ* (վազելիս եմ լինում, գնալիս եմ լինում) *և կիրառվում է՝ 1) ընդհանրական նշանակությամբ՝ ցույց տալով իբրև սովորություն կրկնվող գործողություն, եղելություն կամ հանրահայտ ճշմարտություններ (Ինչքան գնում եմ, նա աշխատելիս է լինում), 2) պատմական ներկայի նշանակությամբ՝ ցույց տալով հեռավոր անցյալում մի այլ գործողության հարաբերությամբ կատարված տևական գործողություն կամ եղելություն (Հերը անչափ սիրելիս է լինում աղջկան (ՀԲ, Եղեմական ծաղիկը)։*

Այս ժամանակը ներկա է կոչվում միայն պայմանականորեն՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ կազմվում է լինել բայի ներկա ժամանակով և զուգընթացական դերբայով (վերջինս այս կիրառություններում հավասարարժեք է անկատար դերբային)՝ ցույց տալով տևական, ընթացքի մեջ եղող գործողություն։

---

52 Երկրորդական վերլուծական ժամանակների անվանումները վերցրել ենք Հ. Բարսեղյանի «Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն» գրքից։

Բուն ներկա ժամանակ, այսինքն՝ խոսելու պահին կատարված գործողություն այս ժամանակը ցույց չի տալիս:

2. Անցյալի անկատար— *Այս ժամանակը կազմվում է ըստ-ընթացական դերբայի և լինել բայի սահմանական եղանակի անցյալի ձևերի հարադրությամբ՝* վազելիս էի լինում, վազելիս էի լինելու, վազելիս եմ եղել, վազելիս էի եղել, վազելիս եղա: *Այս երկրորդական վերլուծական ժամանակները ցույց են տալիս մի անցյալ ժամանակի համեմատությամբ սկսված և ընթացքի մեջ եղող գործողություն և կամ անցյալում իբրև սովորություն կրկնվող գործողություն, եղելություն: Այս ժամանակները գործածվում են իրենց համապատասխան գլխավոր ժամանակների հետ. այսպես՝ Ու երբ մեռել են ու նրանց տանելիս են եղել վերջին հանապարհով, միշտ կանգնեցրել են (Վ. Պետր., Հայկական էսքիզներ): Ինչքան գնացել եմ, նա աշխատելիս է եղել: Ինչքան գնում էի, նա աշխատելիս էր լինում: Ինչքան գնացի, նա աշխատելիս եղավ և այլն: Լինել բայի անցյալի վաղակատար, անցյալի ապառնի և անցյալ կատարյալ ժամանակներով հարադրված անցյալի անկատար երկրորդական վերլուծական ժամանակները ժամանակակից հայերենում շատ սակավ են գործածվում:*

3. Հարակատար— *Այս ժամանակը կազմվում է խոնարհվող բայի հարակատար դերբայի և լինել բայի սահմանական եղանակի ներկա ժամանակի ձևերի հարադրությամբ* (վազած եմ լինում, գնացած եմ լինում) *և ցույց է տալիս՝ 1) մի անցյալ ժամանակի համեմատությամբ կատարված, ավարտված գործողություն, ըստ որում, գլխավոր անցյալ ժամանակը դրսևորվում է կա՛մ պատմական ներկայով, կա՛մ որևէ ժամանակի պարագայով (Երբ Արամը տեղ է հասնում, նա արդեն գնացած է լինում: Մինչև Արամի հասնելը (լուսաբացին) նա արդեն գնացած է լինում), 2) ներկան իր մեջ առնող մի հարաճիգ ժամանակամիջոցում իբրև սովորություն կրկնվող գործողություն կամ եղելություն (Ինչքան գալիս եմ, նա գնացած է լինում):*

4. Անցյալի հարակատար— *Այս ժամանակը կազմվում է խոնարհվող բայի հարակատար դերբայով և լինել բայի սահմանական եղանակի անցյալ ժամանակի ձևերով. այսպես՝* գնացած էի լինում, գնացած էի լինելու, գնացած եմ եղել, գնացած էի եղել և գնացած եղա: *Այս ժամանակները ցույց են տալիս այնպիսի գործողություն, որ մի անցյալ ժամանակի համեմատությամբ կամ մի*

երկարատև անցյալ ժամանակում կատարվել-վերջացել է։ Լինել բայի անցյալի անկատարով բաղադրված ձևերը կարող են ցույց տալ նաև անցյալում իբրև սովորություն տեղի ունեցած կրկնված գործողություն կամ եղելություն։ Օրինակ՝ Ձմեռոցը մի այգեշատ ու ընդարձակ շեն է,... ուր մշտական կանգնած էր լինում արքունի զորքի որևէ չոկատ (ԴԴ, Վարդանանք)։ —Որսի՞ էիր գնացած եղել,— հարցրեց նրան Վարդանը քնքշությամբ (Ն. տ.)։ Բայց իր ողջ կյանքում մեծ տիկնոջ հայացքի առաջ այդ ժողովուրդը կանգնած էր եղել իբրև գորշ մշուշ (Ն. տ.)։

5. Ապառնի— *Այս ժամանակը կազմվում է խոնարհվող բայի ապառնի դերբայով և լինել բայի սահմանական եղանակի ներկա ժամանակով (վազելու եմ լինում)։ Այն կարող է ցույց տալ՝ 1) մի անցյալ ժամանակի համեմատությամբ կատարելի գործողություն (երբ Սուրենը տեղ է հասնում, նա գնալու է լինում), 2) ներկան իր մեջ ներառնող մի հարաձիգ ժամանակամիջոցում սովորաբար կատարվելիք գործողություն (Ինչքան գնում եմ, նա բնելու է լինում)։*

Այս երկրորդական ժամանակը խիստ սակավ է կիրառվում։

6. Անցյալի ապառնի— *Այս ժամանակը կազմվում է ապառնի դերբայի և լինել բայի սահմանական եղանակի անցյալ ժամանակի բայաձևերի հարադրությամբ՝* գրելու էի լինում, գրելու էի լինելու, գրելու եմ եղել, գրելու էի եղել, գրելու եղա։ *Այս բաղադրյալ ժամանակները ցույց են տալիս մի անցյալ ժամանակի համեմատությամբ կամ անցյալ ժամանակամիջոցում ստույգ կատարվելիք գործողություն, եղելություն (Ինչքան գնացել եմ, նա բնելու է եղել)։*

Այս երկրորդական ժամանակները ևս ժամանակակից հայերենում հազվադեպ են հանդիպում։

7. Ապառնի անկատար— *Կազմվում է դուրընթացական դերբայի և լինել բայի ապառնի ժամանակի հարադրությամբ* (վազելիս եմ լինելու, գնալիս եմ լինելու) *և ցույց է տալիս մի ապառնի ժամանակում հաստատ կատարվելիք գործողություն կամ եղելություն (Այդ օրերին բոլորս աշխատելիս ենք լինելու)։ Այս ժամանակը ևս հազվադեպ կիրառություն ունի։*

8. Ապառնիի հարակատար— *Լինել բայի ապառնի ժամանակով բաղադրված երկրորդական վերլուծական ժամանակներից համեմատաբար շատ է գործածվում ապառնիի հարակատարը, որը*

կազմվում է հարակատար դերբայի և լինել բայի սահմանական եղանակի ապառնի ժամանակի ձևերով՝ գնացած եմ լինելու, վերջացրած եմ լինելու: Այս ժամանակը ցույց է տալիս մի ապառնի ժամանակակետի նկատմամբ արդեն կատարված, ավարտված գործողություն, եղելություն: Օրինակ՝ Տաս օր հետո արդեն գրած, վերջացրած եմ լինելու: Այս ժամանակը երկակի բնույթ ունի: Ներկա ժամանակի համեմատությամբ այն ապառնի է, ցույց է տալիս դեռևս չկատարված, բայց ստույգ կատարելի գործողություն, իսկ ապառնի ժամանակակետի համեմատությամբ համարվում է արդեն կատարված, ավարտված, այսինքն՝ անցյալ:

9. Ապառնիի կատարելի— Այն ժամանակը, որ կազմվում է խոնարհվող բայի ապառնի դերբայով և լինել բայի սահմանականի ապառնի ժամանակով (գնալու եմ լինելու, ճանաչելու եմ լինելու), դարձյալ հանդիպում է շատ հազվադեպ և գործածական չէ: Այն ցույց է տալիս մի ապառնի ժամանակակետի նկատմամբ ըստ ստույգ կատարելի գործողություն:

ԸՂՁԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

§ 539. Ժամանակակից հայերենի ըղձական եղանակի միջոցով դրսևորվում է խոսողի ցանկությունը, իղձը, խնդիրքը, հորդորը, երբեմն նաև պահանջը որևէ գործողություն կատարելու վերաբերյալ: Այսպես՝ Արագի ափին բոստանս լինի, Սալվի ուս տրնկեմ, վարդեր ու լալա. Հով ուռենու տակ քողտիկս լինի,—Ջաֆախս միջին կրակ բոցկըլտա: Ու սրտով սիրած Շուշանս լինի, Ջաֆախս կողքին գուրգուրեմ իրար (Իս.): Բարձր ճնշի մեր երգը թող, Ջարի ձենը խլացնի, Հնչյուններովն իր կախարդող երկրե երկիր թող աճցնի (ՀԹ):

Բերված օրինակներում ընդգծված բայաձևերը ըղձական եղանակի են, որովհետև արտահայտում են խոսողի իղձը, ցանկությունը՝ դրանցով (բայաձևերով) արտահայտված գործողությունների կատարման վերաբերյալ:

Ի տարբերություն սահմանական եղանակի, ըղձական եղանակը ցույց է տալիս ոչ թե ռեալ, ստույգ կատարվելիք գործողություն, այլ այնպիսի գործողություն, որ խոսողը համարում է ցանկալի, կամ հորդորում, խնդրում, երբեմն նաև պահանջում է,

որ այդ գործողությունը կատարվի. այսինքն՝ ըղձական եղանակի միջոցով դրսևորվում է խոսողի կամային, զգացական վերաբերմունքը գործողության կատարման նկատմամբ։ Եղանակային այս իմաստը ընդգծելու համար հաճախ ըղձական եղանակի բայաձևերի հետ գործածվում են երանի, գուցե, թող եղանակավորող բառերը։

§ 540. Ըղձական եղանակի բայաձևերն ունեն պարզ կազմություն, այսինքն՝ կազմվում են ներկայի հիմքի վրա ավելացնելով ներկայի և անցյալի դիմային վերջավորությունները։ Օրինակ՝ վազ+ե+մ—վազ+ե+ի, գր+ե+մ—գր+ե+ի, գն+ա+մ—գն++ա+յ+ի և այլն։ Ըստ այդմ կազմվում են ըղձական եղանակի երկու ժամանակները՝ ապառնի և անցյալ։

ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ

§ 541. Ըղձական եղանակի ապառնի ժամանակը կազմվում է բայի ներկայի հիմքի վրա ավելացնելով հետևյալ դիմային վերջավորությունները՝ մ, ս, Ø, նք, ք, ն։ Այս վերջավորությունների և հիմքի միջև ե խոնարհման բայերի մոտ ավելանում է ե խոնարհիչը, իսկ ա խոնարհման բայերի մոտ՝ ա խոնարհիչը։ Եզակի երրորդ դեմքում ըղձական եղանակի ապառնի ժամանակը դիմային վերջավորություն չունի։ Այն պարզապես ներկայի հիմքն է՝ ավելացրած խոնարհիչը, որը ե խոնարհման ժամանակ վերածվում է ի-ի։ Ահա ըղձական եղանակի ապառնի ժամանակի խոնարհման պատկերը։

վազ+ե+մ	վազ+ե+նք	գն+ա+մ	գն+ա+նք
վաս+ե+ս	վազ+ե+ք	գն+ա+ս	գն+ա+ք
վազ+ի	վազ+ե+ն	գն+ա	գն+ա+ն

§ 542. Ըղձական եղանակի ապառնի ժամանակը ցույց է տալիս խոսողի իղձը, ցանկությունը, խնդիրը, երբեմն նաև հորդորը խոսելու պահից հետո՝ մի ապառնի ժամանակամիջոցում կատարվելիք գործողության վերաբերյալ։ Օրինակ՝ Ապրելու կեսն էլ պատվով մեռնելն է։ Ա՛խ, երանի՛ թե ես այնպես մեռնեմ, Որ

դու... ինձ սգաս (ՊՍ)։ Նորից գարուն է, արտերը ելնեմ, ծղնիկների հետ հովի պես սուրամ, Արծիվների հետ երգով սավառնեմ, Սիրտս երկնքի սրտի հետ բաբամ (ՀՇ)։

Ղզձական եղանակի ապառնի ժամանակի ձևերով տրվում է ոչ միայն խոսողի, այլ նաև խոսակցի կամ մի երրորդ անձնավորության իղձը, ցանկությունը մի որևէ գործողության կատարման վերաբերյալ։ Այս դեպքում ղզձական եղանակի բայաձևերը հանդես են գալիս նպատակի պարագա, երբեմն նաև ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունների կազմում որպես ստորոգյալ՝ ցույց տալով գլխավոր նախադասության ենթակայի մտադրությունը, իղձը, ցանկությունը տվյալ գործողությունը կատարելու վերաբերյալ։ Օրինակ՝ Ամենքը շտապում էին մահամերձ միլիոնատիրոջ տունը, որ վերջին անգամ տեսնեն նրան (Շիրվ., Քառս)։ Մեծ ճիգ գործադրելով, որպեսզի վանի շփոթությունը, Արևիկը երերուն քայլերով մոտեցավ հյուրին (Սհ, Հողը)։ Ասա, կուզե՞ս այդ գոռ լեռները ճարթեմ—դաշտ չինեմ, անապատի մեջ դրախտ կառուցեմ, ավերիչ գետի հոսանքը դարձնեմ, չար ոգիներին ճզմեմ-ճալածեմ, աշխարհը միմիայն սիրո, բարության մի հովտի փոխեմ (ՎՓ, Ֆահրադ ու Շիրին)։

§ 543. Ղզձական եղանակի ապառնի ժամանակի բայաձևերը, գործածվելով թող եղանակավորող բառի հետ, արտահայտում են հորդոր, պահանջ, խնդիր, հանձնարարություն մի որևէ գործողության կատարելու վերաբերյալ։ Այս իմաստը երբեմն արտահայտվում է նաև առանց եղանակավորող բառի՝ հատուկ հնչերանգի օգնությամբ։ Օրինակ՝ Վաղարշը թող արևածագին նախարատեղը գա (ՄԱ, Փիլոն)։ Թող ինչպես կան, այնպես էլ մնան (ԳՍ, Թեհրան)։ Դո՛ւրս իմ տանից սևերես, ետ չնայե՛ս դեպի մեզ, Ոտ չդնես էլ տունս, Մրոտեցիր անունս (ՀՔ)։ Թող ուրեմն բերի բոլոր մուրհակները..., բերի իմ առաջ պատռի, թուղթ տա, որ ոչինչ պահանջ չունի,... թող ետ տա խլածները (ՎՓ, Ժայռ)։

§ 544. Ղզձական ապառնու հոգնակի առաջին դեմքի բայաձևերը ցույց են տալիս հորդոր, պահանջ, երբեմն նաև հրաման, կոչ խոսողի հետ համատեղ որևէ գործողություն կատարելու վերաբերյալ։ Այսպես՝ Եմենք նրա կենացը։ Ցանկանանք նրան հաջողություն (ՀՔ, Մեծ տան զավակները)։ Հին օրերի վերջալույսին, Արշալույսին նոր կյանքի երգենք սրտանց ու միասին եր-

գը հանուր բերկրանքի (ՀՔ)։ Թողնենք *ուրեմն նրան զվարճանալ առայժմ յուրայինների հետ (Մուր., Առաքյալը)։ Դե էլ ժամանակ* չկորցնենք, գնանք, *Հասմիկ (ՆՁ, Հացավան)։*

Յանկություն, իղձ, խնդիր, հորդոր արտահայտելն է պատճառը, որ այս բայաձևերը շատ են գործածվում ողջո յնի խոսքերի, օրհնանքների, բարեմաղթությունների, անեծքների և այլնի մեջ։ Օրինակ՝ Ու տվավ իր օրհնանքը անցվոր մարդը էն բարի. «Քո չինողի օր-կյանքը Ջրի նման երկարի» (ՀՔ)։ Տասը կտոր շաքարից ութն ես թողել, ութ կտոր դառնաս դու... Շատ էժան ենք առնում հա՞, որ քոռ ու փուչ ես անում, fողնաս *ու փչանաս դու... (ՆԴ)։* Ապրես, *դասդ լավ ես սովորել։* Թող ապրի *ու բարգավաճի մեր հզոր հայրենիքը։*

§ 545. Ապառնի ժամանակը կարող է ցույց տալ խոսողի մրտադրությունը, հաստատ որոշումը ներկային շատ մոտ ապագայում որևէ գործողություն կատարելու վերաբերյալ։ Օրինակ՝ Այսօր բացեմ գաղտնիք մի խորունկ, որ անշուշտ պիտի խիստ ցավ պատճառի (ՊՍ)։ Ահա պատմեմ ձեզ մի դեպք, մի պատմություն, որ երբեք Հիշատակով տըխրալի —Սրտիս հանգիստ չի տալի (ՀՔ)։

§ 546. Ըղձականի ապառնին ցույց է տալիս նաև ապառնի ժամանակում ենթադրվող, սպասվող կատարվելիք մի այնպիսի գործողություն, որի կատարման դեպքում կկատարվի մեկ այլ գործողություն ևս։ Այս իմաստով ըղձականի ապառնին կիրառվում է պայմանի երկրորդական նախադասություններում՝ երբեմն նաև ժամանակի պարագա երկրորդական նախադասություններում։ Օրինակ՝ Թե տիրես, մեծ շահ, դու նրա սրտին, Թաթուլն էլ անզոր կընկնի ոտքիդ տակ (ՀՔ)։ Եթե ամեն մարդ միայն իր փորձից դասեր առնի, մտքով, խելքով շատ աղքատ կմնա (ՀՔ, Մեծ տան զավակները)։

§ 547. Երբեմն ըղձական եղանակի բայաձևերը ցույց են տալիս անցյալում կատարված գործողություն կամ եղելություն, որի նկատմամբ խոսողը արտահայտում է իր զարմանքը, դժգոհությունը, զայրույթը և այլն։ Օրինակ՝ Մի՛ խառնաշփոթ, մի՛ աղաղակ... Ո՞նց, Հաբեթի աղան ձե՞ծ ուտի, խանո՛թի փոշի՞ն ավելի... (ՎՓ, Ջոչո քար)։ Մարդ 13 տարի Պոլիս մնա, հետո եւ դառնա և ասի ոչինչ չունի՞մ... (ՎՓ, Լալո)։ Մինչդեռ ե՛ս, ե՛ս... ամեն օր անհավատարիմ էի գտնվում իմ պաշտելի կնոջս... և այստեղ մի

վաշխառու, մի գծուծ, ստորաքարշ կենդանի գա պղծելու... աստված իմ, ինչո՞ւ այս բոլոր դժբախտությունները միասին ուղարկեցիր (ՎՓ, Ճգնավոր եղո)։

§ 548. Երբ խոսողը պատմում է անցյալում կատարված գործողությունների, եղելությունների մասին, որոնց ինքը ականատես է եղել, պատմածը ավելի պատկերավոր ու կենդանի դարձնելու համար այդ գործողություններն ու եղելությունները ցույց տվող բայերի անցյալ կատարյալ ժամանակի հետ համախ գործածում է նաև ըղձական սպառնի ժամանակի առաջին դեմքը, որն այստեղ ունի սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի նշանակություն։ Օրինակ՝ Մուսեցա՝ տեսնեմ մեկն ընկել է, էն մեկն էլ արյան թելը քարշ տալով թողել գնացել է ձորը (Սե, Հողը)։ Մեկ էլ տեսնեմ՝ շուրջս մարդ չկա (ԳՍ, Թեհրան)։ Մի առավոտ էլ վեր կացա տեսնեմ բոլոր տանեցիք տխուր են (ՀՔ, Ահմադը)։ Վերի ոտը քաշեցի, չըոթկացրի, տրաքեց ոչ։ Մտիկ տամ տեսնեմ քարը վեր է ընկել, կորել (ՀՔ)։ Ողջո՜ւյն Պառնասի գըլխից սրբազան... Ետ նայեմ, տեսնեմ՝ իմ ծանոթ Մուսան (ՀՔ)։

Ըղձական սպառնու այս իմաստով կիրառությունը հատկապես տարածված է ժողովրդական-խոսակցական լեզվում։

§ 549. Երբեմն ըղձական եղանակի սպառնի ժամանակի բայաձևերը ցույց են տալիս ընդհանրապես կրկնվող գործողություններ, որոնց նկատմամբ խոսողը դարձյալ իր դժգոհությունը, զայրույթն է դրսևորում։ Օրինակ՝ Չէ՛, այսպես չի լինի... Վարենք մենք, ճնձե Հասան բեգը. ժողվենք մենք, շարշարվենք մենք, «կոռի-բեգյարի» դիմանանք մենք, Հասան բեկը հանգիստ՝ մեջքը բարձին տա, ու մեր քրտինքը ուտե, մեր կանանց ֆալե ու ելնե մեր ամեն բանը ծաղրե (ՎՓ, Ճգնավոր եղո)։ Խեղճ աղքատի հոգին դուրս գա, Քարից, հողից հաց ֆամե, բեռով հացը հարուստին տա, Հարուստն իշխե, վայելե։ Խեղճ աղքատը դառը դատի. դատարկ ճատի... է՛յ աշխարհ, էլ ինչո՞ւ ես քարը թողնում քարի վրա, քա՛ր աշխարհ (Իս.)։

Ծանոթ.— Մի քանի բայերի ըղձական սպառնու որոշ ձևեր ժամանակի ընթացքում կորցնելով իրենց բայական հատկություն-

նները վերածվել են եղանակավորող բառերի, ինչպես՝ **ասես, կարծես, տեսնես, տեսնեիմ, չլինի, Երևի** *և այլն։ Բերենք մի քանի օրինակ՝ Նա ձեռքը տարավ դեպի գլուխը,* **ասես** *սպիտակ մազերի վտունջը անհանգստացնում էր (Բվ, Ինչպես է գալիս երջանկությունը)։ Հոկտեմբեր ամսվա վերջին շաբաթը սկսվել էր անամպ, չինչ երկնքով ու տաք օրով,* **կարծես** *նորից մի հրաշալի գարուն էր այցելելու Արարատյան դաշտին։* **Տեսնեիմ** *երբ են նիստ նշանակում (ԳՒ, Մագիլների մեջ)։* **Տեսնես** *երբ տեղ կհասնենք։*

ԱՆՑՅԱԼ ԺԱՄԱՆԱԿ

§ 550. Ըղձական եղանակի անցյալ ժամանակը կազմվում է խոնարհվող բայի ներկայի հիմքի վրա ավելացնելով անցյալ ժամանակի դիմային վերջավորությունները, այսինքն՝ **ի, իր, ր, իճ, իք, ին**։ *Այս վերջավորությունների և բայի հիմքի միջև* **ե** *խոնարհման բայերում ավելանում է և խոնարհիչը, իսկ* **ա** *խոնարհման բայերում՝* **ա** *խոնարհիչը։ Վերջինի և ձայնավորով սկսվող վերջավորությունների միջև դրվում է նաև* **–յ–** *ձայնակապը։ Ահա ըղձական եղանակի անցյալ ժամանակի խոնարհման պատկերը։*

ե խոնարհում		**Ա.** խոնարհում	
վազ+ե+ի	վազ+ե+ինք	գն+ա+յ+ի	գն+ա+յ+ինք
վազ+ե+իր	վազ+ե+իք	գնա+յ+իր	գն+ա+յ+իք
վազ+ե+ր	վազ+ե+ին	գն+ա+ր	գն+ա+յ+ին

§ 551. Ըղձական եղանակի անցյալ ժամանակը ցույց է տալիս անցյալում չկատարված (կամ կատարված) այնպիսի գործողություն կամ եղելություն, որի կատարումը (կամ չկատարումը) ցանկալի էր խոսողի համար։ Ըղձականի անցյալ ժամանակը, ենթադրական և հարկադրական եղանակների համապատասխան ժամանակների նման, ունի այն առանձնահատկությունը, որ դրական ձևը ցույց է տալիս անցյալում ցանկալի, բայց չկատարված գործողություն, իսկ ժխտական ձևը՝ անցյալում կատարված գործողություն, որի կատարումը խոսողի համար ցանկալի չէր։ Օրինակ՝ **Երանի գար,** *նշանակում է՝ չի եկել, բայց ցանկալի էր, որ գար.* **Երանի չգար,** *նշանակում է՝ եկել է, սակայն ցանկալի էր, որ*

չգար։ Բերենք բնագրային օրինակներ՝ Ջուր դառնայիր մորդ փորում, Հասո, երանի չմտնեիր այն աշխարհը, որ լի է աղաներով։ Երանի չտեսնեիր արևի փայլը, որ քեզ այրեց խորովեց (ՎՓ, Լուրդա-լուր)։ Ուր էր թե հարվածեր՝ խելքի գայի (ՊՍ)։

Բերված օրինակներում ընդգծված բայաձևերից դրականները՝ դառնայիր, հարվածեր, խելքի գայի, ցույց են տալիս անցյալում ցանկալի, բայց չկատարված գործողո թյուններ, իսկ ժխտականները (չմտնեիր, չտեսնեիր)՝ անցյալում կատարված այնպիսի գործողություններ, որոնց կատարումը ցանկալի չէր խոսողի համար։ Այդ բայաձևերը միաժամանակ դրսևորում են խոսողի ափսոսանքը տվյալ գործողության կատարման կամ չկատարման համար։

§ 552. Կիրառվելով պայմանի երկրորդական նախադասություններում, ըղձականի անցյալ ժամանակը ցույց է տալիս նաև անցյալում չկատարված (կամ կատարված) այնպիսի գործողության, որի իրագործումով (կամ չիրագործումով) պայմանավորված կլիներ մեկ այլ գործողո թյան կատարումը (կամ չկատարումը)։ Օրինակ՝ Երիտասարդ աբեղան երևի դեռ երկար ճառախոսեր, եթե խմբին չմոտեներ վանքի տնտեսը (Մուր., Առաքյալը)։ Եվ գուցե երկար շարունակվեր այդ, եթե հանկարծ չլսվեր լալագարի կողմից երաժշտության ձայն (ՎՓ)։ Կարող էր իսկապես վեճ ծագել, եթե Կաղ Մարտիրոսը դժգոհ ու երկար չմնար (ՍՋ, Ջաքարի հարսը)։

§ 553. Երբեմն ըղձականի անցյալը ցույց է տալիս անցյալում կրկնվող գործողություններ։ Այս դեպքում այն կորցնում է իր՝ սուբյեկտիվ վերաբերմունք դրսևորելու հատկությունը և հավասարվում է սահմանական եղանակի անցյալի անկատար ժամանակին։ Օրինակ՝ Բաց, դուրան տեղ էր. հերիք էր գլուխներս բարձրացնեինք՝ իրար տեսնում էինք (ՍՋ, Ջրհորի մոտ)։ Գործից հետո, ամեն իրիկուն ես սովորություն ունեի շվու ածել։ Հենց որ Ակոբ աղան գար ֆներ, ես կսկսեի իմ շվուն (ՍՋ,)։

§ 544. Շատ ավելի հաճախ ըղձական եղանակի անցյալ ժամանակի բայաձևերը ունենում են ապառնի ժամանակի նշանակություն և ցույց են տալիս այնպիսի գործողություն կամ եղելություն, որի կատարումը խիստ ցանկալի է, սակայն խոսողը այն համարում է դժվար իրագործելի, համարյա անհնար։ Այս կիրառություններում ըղձականությունը ավելի ուժեղ է դրսևոր-

վում, քան ապառնի ժամանակի բայաձևերում։ Օրինակ՝ Ախ որքա՜ն, որքա՜ն կուզեի այս րոպեիս վերջանար, չզգայի, չլսեի (ՎՓ, ժայռը)։ Ես հովիկ լինեի, Դու նազուկ ցարասի։ Գգվեի կարոտով վարսերդ սնդուսի (Իս.)։ Լինեի չոբան սարերում հեռու, Գայիր, անցնեիր վրանիս մոտով, Իրար նայեինք անուշ կարոտով, քնքուշ ժպտայինք հանկարծ իրարու (ՎՏ)։

§ 555. Ղձականի անցյալ ժամանակը ցույց է տալիս նաև մի անցյալ ժամանակի համեմատությամբ ապառնի գործողություն՝ դրսևորելով մի որևէ անձնավորության կամ խոսողի մտադրությունը, ցանկությունը անցյալում տվյալ գործողությունը կատարելու վերաբերյալ։ Օրինակ՝ Եվ ահա նա մի օր մտածեց այնպիսի մեծ ու շքեղ պարտեզ շինել... մեջը՝ լույս, ծառ, պտուղ կամ բանջար, թռչուն ու գազան անքան շատ լիներ, պաներ, պահպանվեր, որ իր հաճույքի համար ուզած ժամանակ ձեռի տակ գտնվեր (ՎՓ, Առվակը)։ Պետք էր այնպես մի խաղ սարքել, որ Հասոն ինքը թողներ հեռանար և մեկ էլ այդ կողմերը չվերադառնար (ՎՓ, Լուր-դա-լուր)։ Մամիկոնյանը ենթադրում էր, որ հարմար կլիներ, եթե հայությունը այդ գործով հանդես գար հենց Մոսկվայում, բանալով մի հսկայական հիվանդանոց (ՎՏ)։

Ղձական եղանակի անցյալ ժամանակի բայաձևերը երբեմն, հատկապես խոսակցական լեզվում, գործածվում են որպես քաղաքավարական ձև՝ որևէ ցանկալի գործողության կատարման վերաբերյալ խնդիրք, պահանջ դրսևորելու համար։ Օրինակ՝ —Եթե ձեզ այդ նեղություն չէր լինի, ինձ համար մի բան նվագեիք (ՆԴ, Ճշմարիտ բարեկամը)։ Արամ, լավ կլիներ, մի գնայիր, Աշոտին կանչեիր։

Ղձական եղանակի երկրորդական վերլուծական ձևերը

Ղձական եղանակը ևս բացի իր գլխավոր ժամանակներից ունի երկրորդական վերլուծական ժամանակներ, որոնք ունեն հիմնականում հարաբերական կիրառություն։ Քանի որ ղձական եղանակն ունի երկու ժամանակ՝ անցյալ և ապառնի, հետևաբար այս վերլուծական ձևերում կերպը դրսևորվում է երկու ժամանակաձևերի՝ անցյալի և ապառնու նկատմամբ, այսպես՝ գրելիս լի-

ենք—գրելիս լինեի, գրած լինեմ—գրած լինեի, գրելու լինեմ—գրելու լինեի:

Նշանոթ.— *Համախ լինել բայի ըղձականի ապառին ժամանակով բաղադրված երկրորդական վերլուծական ժամանակները ցույց են տալիս գործողության կերպը ոչ թե ապառնի, այլ ներկա ժամանակակետի համեմատությամբ։* Գրելիս լինեմ, գրած լինեմ, գրելու լինեմ *ձևերը ցույց են տալիս կատարվող, կատարյալ, կատարելի կերպերի հարաբերությունը և՛ ապառնի, և՛ ներկա ժամանակակետի հարաբերությամբ։*

§ 556. *Ըղձականի երկրորդական վերլուծական ժամանակները կազմվում են լինել բայի ըղձական եղանակի ձևերով և խոնարհվող բայի զուգընթացական, հարակատար ու ապառնի դերբայներով։ Դրանք հետևյալներն են.*

1. *Ըղձական ապառնիի անկատար—Այս վերլուծական ժամանակը կազմվում է զուգընթացական դերբայի և լինել բայի ըղձական ապառնու ձևերի հարադրությամբ. այսպես՝*

Ե խոնարհում

վազելիս լինեմ	*վազելիս լինենք*
վազելիս լինես	*վազելիս լինեք*
վազելիս լինի	*վազելիս լինեն*

Ա. խոնարհում

գնալիս լինեմ	*գնալիս լինենք*
գնալիս լինես	*գնալիս լինեք*
գնալիս լինի	*գնալիս լինեն*

Այս ձևերը ցույց են տալիս մի ապառնի ժամանակակետում սկսված և ընթացքի մեջ լինելիք, խոսողի համար ցանկալի համարվող գործողություն, եղելություն։ Օրինակ՝ լավ կլինի, եթե իմ գալու օրը վերջացնելիս լինես։ Եթե այդ վայրերով անցնելիս լինես, կհիշես ինձ։

Այս ժամանակը երբեմն ցույց է տալիս խոսողի իղձը, ցանկությունը ներկա ժամանակակետի համեմատությամբ գործողության սկսված և ընթացքի մեջ լինելու վերաբերյալ։ Օրինակ՝ ե-

բանի նա արդեն գալիս լինի: Իմ ցանկությունն է, որ նա հիմա աշխատելիս լինի:

Ինչպես երևում է բերված օրինակներից, իմաստային և ժամանակային այս տարբերակումը դրսևորվում է հիմնականում եղանակավորող բառերի և ժամանակ ցույց տվող այլ բառերի օգնությամբ (երանի, արդեն, հիմա և այլն):

Այս ժամանակի երկրորդ դեմքի բայաձևերը ցույց են տալիս նաև խոսողի հորդորը, հրամանը, պահանջը որևէ գործողություն ապառնի ժամանակամիջոցում կատարման ընթացքի մեջ լինելու վերաբերյալ. օրինակ՝ Տես հա՛, վաղը անպայման աշխատելիս լինես:

2. Ըղձական անցյալի անկատար— Այս վերլուծական ժամանակը կազմվում է խոնարհվող բայի ղուգընթացական դերբայի և լինել բայի ըղձական անցյալի բայաձևերի հարադրությամբ. այսպես՝

Ե խոնարհում

վազելիս լինեի	*վազելիս լինեինք*
վազելիս լինեիր	*վազելիս լինեիք*
վազելիս լիներ	*վազելիս լինեին*

Ա խոնարհում

գնալիս լինեի	*գնալիս լինեինք*
գնալիս լինեիր	*գնալիս լինեիք*
գնալիս լիներ	*գնալիս լինեին*

§ 557. Այս վերլուծական ձևերը ցույց են տալիս անցյալ ժամանակակետի համեմատությամբ (երբեմն նաև ներկա ժամանակակետի համեմատությամբ) սկսված և ընթացքի մեջ գտնվող՝ խոսողի կողմից ցանկալի համարվող, բայց չիրականացած տևական գործողություն կամ եղելություն: Օրինակ՝ Եթե աշխատելիս լինեիր, կհասկանայիր նրանց: Վազելիս չլիներ՝ չէր հասնի: Երանի ես գնալիս լինեի:

Այս ժամանակի ձևերը շատ են գործածվում համեմատությունների ժամանակ՝ ցույց տալով իրականում տեղի չունեցող, սակայն թվացող գործողություն: Օրինակ՝... [Նրա] աչքերը դուրս էին ընկած, կարծես խեղդվելիս լիներ (ԴԴ, Վարդանանք): Թվում

էր, թե նա քաշված մեկուսի տատանվելիս լիներ (ԴԴ, Վարդանանք)։

§ 558. Ղձական եղանակի ապառնիի անկատար և անցյալի անկատար վերլուծական ժամանակներն ունեն կատարվող կերպ, որովհետև ցույց են տալիս ընթացքի մեջ գտնվող, շարունակվող գործողություն։

3. Ղձական հարակատար— Այս ժամանակը կազմվում է խոնարհվող բայի հարակատար դերբայի և լինել բայի ղձական ապառնի ժամանակի բայաձևերի հարադրությամբ. այսպես՝

Ե խոնարհում

վազած լինեմ	*վազած լինենք*
վազած լինես	*վազած լինեք*
վազած լինի	*վազած լինեն*

Ա խոնարհում

գնացած լինեմ	*գնացած լինենք*
գնացած լինես	*գնացած լինեք*
գնացած լինի	*գնացած լինեն*

Այս ժամանակը ցույց է տալիս խոսողի ցանկությունը, իղձը երբեմն նաև ենթադրությունը ներկա կամ ապառնի ժամանակակետի հարաբերությամբ որևէ գործողության սկսված և ավարտված լինելու վերաբերյալ։ Այստեղ ևս գործողության կերպի՝ ներկայի կամ ապառնու հարաբերությամբ վերցվելը դրսևորվում է համապատասխան բառերի օգնությամբ կամ այն բայաձևերի օգնությամբ, որոնց ստորադասվում է այս երկրորդական ժամանակը։ Օրինակ՝ Երանի արդեն գնացած լինի։ Երանի վաղը գնացած լինի։ Թե գրած լինի, կուղարկի։ Հազիվ թե խմացած լինի։ Անհրնար է երևակայել մի ազգ, որի բոլոր տարրերը տոգորված լինեն մի ընդհանուր մտածողությամբ (ՎՏ)։ Որ թագավորը գրած լինի, թե իրավունք եմ տալիս, քեռին քանի՞ օրում կգա (ԱԲ, Նամակ ոուսաց թագավորին)։

§ 559. Այս ժամանակի երկրորդ դեմքի ձևերը ևս կարող են դրսևորել հրաման, պահանջ որևէ գործողություն ներկա կամ ապառնի ժամանակակետի համեմատությամբ ավարտած-վերջաց-

րած լինելու վերաբերյալ։ Օրինակ՝ լավացի՛ր, տե՛ս, որ վաղը լավացած լինես (ԴԴ, Վարդանանք)։ Շտապի՛ր, փութա՛, տե՛ր սպարապետ,— գրում էր Ատոմը,— ապա խմացած լինես, որ պարսիկների մի մեծ զորաբանակ շարժվում է դեպի Աղվանք կամ Հայաստան (ԴԴ, Վարդանանք)։

4. Ըղձական անցյալի հարակատար ժամանակը կազմվում է խոնարհվող բայի հարակատար դերբայի և լինել բայի ըղձական անցյալի բայաձևերի հարադրությամբ. այսպես՝

Ե խոնարհում

վազած լինեի	*վազած լինեինք*
վազած լինեիր	*վազած լինեիք*
վազած լիներ	*վազած լինեին*

Ա խոնարհում

գնացած լինեի	*գնացած լինեինք*
գնացած լինեիր	*գնացած լինեիք*
գնացած լիներ	*գնացած լինեին*

Այս ժամանակը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետի համեմատությամբ կատարված (եթե բայը ժխտական ձևի է), կամ չկատարված (եթե բայը դրական ձևի է) գործողության վերաբերյալ խոսողի ցանկությունը, փղձը, ենթադրությունը։ Օրինակ՝ Խցում ոչ ոք չկար բացի վիրավորից, որին մենակ կթողնեին միայն այն դեպքում, երբ նա մեռած լիներ (ԴԴ, Վարդանանք)։ Եթե դասդ սովորած լինեիր, լավ կպատասխանեիր։ Եթե նրան տեսած լինեի, անպայման կասեի։ Նրանի գնացած լինեիր։ ...Որի կամարները հազիվ թե մինչև ուսների մուտքը տեսած լինեին որևէ կնոջ (Աբ, Խաչատուր Աբովյան)։ Եթե մենք մինչև անգամ խնդրած լինեինք,... դուք այդ մասին չպիտի ասեիք նրան (Մուր., Խորհրդավոր միանձնուհի)։

§ 560. Ըղձական եղանակի հարակատար և անցյալի հարակատար երկրորդական վերլուծական ժամանակներն ունեն գործողության կատարյալ կերպ, որովհետև ցույց են տալիս անցյալ կամ ապառնի ժամանակակետի նկատմամբ սկսված և ավարտված գործողություն։

5. Ղձական երկրորդական ապառնի— *Այս ժամանակը կազմվում է խոնարհվող բայի ապառնի դերբայի և լինել բայի ապառնի ժամանակի բայաձևերի հարադրությամբ. այսպես՝*

Ե խոնարհում

վազելու լինեմ	*վազելու լինենք*
վազելու լինես	*վազելու լինեք*
վազելու լինի	*վազելու լինեն*

Ա խոնարհում

գնալու լինեմ	*գնալու լինենք*
գնալու լինես	*գնալու լինեք*
գնալու լինի	*գնալու լինեն*

Այս ժամանակի ձևերը ցույց են տալիս խոսողի ցանկությունը, հաճախ նաև ենթադրությունը մի ապառնի ժամանակակետի համեմատությամբ, երբեմն նաև ներկայի համեմատությամբ, կատարելի գործողության վերաբերալ։ Այս ձևերը հատկապես շատ են գործածվում պայմանի, գիջական երկրորդական նախադասություններում։ Օրինակ՝ Հայ գեղարվեստական ստեղծագործությունը կատարել է մի ամբողջական շրջանառություն... և եթե ճնելու լինենք նրա զարգացման էտապները, կտեսնենք, որ... (ՎՏ)։ Եթե այս յոթանասուն միլիոնը հավասար բաժանելու լինենք երեսուն հազար հողատիրոջ վրա, ամեն մի հողատիրոջը երկու հազար դեսյատինից ավել կընկնի (ՎՏ)։ Եթե աշխարհագրական քարտեզով առաջնորդվելու լինեք, ոչ մի տեղ «Ղաչաղան» չեք գտնի (ՍՋ, Ջմռան գիշերներ)։ Ինչ որ ասելու լինեմ, խոսքս գետին չի գցի (Ր, Դավիթ բեկ)։

§ 561. Այս ժամանակի ձևերի իմաստային տարբերությունը ղձական ապառնի ժամանակի ձևերից (քննելու լինենք—քննենք, բաժանելու լինենք—բաժանենք, առաջնորդվելու լինենք—առաջնորդվեք և այլն) միայն կերպային է։ Առաջին դեպքում ընդգծվում է կատարելի գործողության ընթացքը, տևականությունը, իսկ երկրորդ դեպքում տրվում է պարզապես կատարելի գործողություն։ Մյուս տարբերությունը կիրառական է։ Ղձական երկրորդական ապառնի, նաև անցյալի ապառնի ժամանակները ու-

նեն հիմնականում հարաբերական կիրառություն, այսինքն՝ գործածվում են երկրորդական նախադասությունների մեջ։

6. Ըղձական անցյալի ապառնի ժամանակը կազմվում է խոնարհվող բայի ապառնի դերբայի և լինել բայի ըղձական անցյալ ժամանակի բայաձևերի հարադրությամբ. այսպես՝

Ե խոնարհում

վազելու լինեի	*վազելու լինեինք*
վազելու լինեիր	*վազելու լինեիք*
վազելու լիներ	*վազելու լինեին*

Ա. խոնարհում

գնալու լինեի	*գնալու լինեինք*
գնալու լինեիր	*գնալու լինեիք*
գնալու լիներ	*գնալու լինեին*

Այս երկրորդական ժամանակը ցույց է տալիս մի անցյալ ժամանակակետի համեմատությամբ կատարելի, սակայն չիրականացած գործողություն, որի կատարումը խոսողի կողմից համարվում է ցանկալի կամ ենթադրվում էր։ Օրինակ՝ Եթե այդ մասին գրելու լինեի, կասեի։ Եթե այնտեղ աշխատելու լիներ, վատ չէր լինի։

Ըղձական եղանակի երկրորդական ապառնի և անցյալի ապառնի ժամանակները ունեն կատարելի կերպ։

ԵՆԹԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

§ 562. Գործողության կատարման նկատմամբ խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքն է դրսևորվում նաև ենթադրական եղանակի բայաձևերի միջոցով։ Բայի ենթադրական եղանակը ցույց է տալիս խոսողի հաստատ համոզմունքը, ենթադրությունը խոսքի պահից հետո կամ մի անցյալ ժամանակակետից հետո գործողության կատարման վերաբերյալ։ Օրինակ՝ Պարտքատերը գանգատ գնաց, Քյոխվեն կգա, կծեծի, Տերտերն օրհնեց, անվարձ մնաց, կբարկանա, կանիծի (ՀԹ)։ Իհարկե, Ֆաթին շատ ուրախ կլիներ, եթե որևէ տեղ իրեն ծառայության վերցնեին (ԳՍ, Թեհրան)։

Ծանոթ.— *Հայ քերականագիտության մեջ ընդունված է այս եղանակը կոչել պայմանական կամ ենթադրական։ Սակայն պայմանական անվանումը այս եղանակի համար նպատակահարմար չէ, որովհետև այն համապատասխանում է միայն այս եղանակի բայաձևերի մի մասնակի և այն էլ ոչ անկախ կիրառությանը*[53]։ *Այս եղանակի համար ավելի ճիշտ է ենթադրական անվանումը, որովհետև այն ընդգրկում է այս բայաձևերի գրեթե բոլոր կիրառությունները (ցույց է տալիս խոսողի ենթադրությամբ, կարծիքով հաստատ կատարվելիք կամ ենթադրվող գործողություն և եղելություն)։*

§ 563. *Ենթադրական եղանակի բայաձևերը իրենց եղանակային բնույթով որակապես տարբերվում են թե սահմանական եղանակի ապառնի և անցյալի ապառնի ժամանակներից և թե ըղձական եղանակի համապատասխան ժամանակներից։*

Սահմանական եղանակի ապառնի ժամանակը ցույց է տալիս խոսելու պահից հետո կատարվելիք գործողություն, որ խոսողը ներկայացնում է որպես ռեալ իրագործելի, օբյեկտիվ իրողություն։ Այսպես՝ երբ ասում ենք Նա գալու է, այստեղ գալու գործողությունը ներկայացվում է որպես օբյեկտիվորեն ստույգ կատարվելիք գործողություն, խոսողը շարադրում է իրականում հաստատապես կատարվելիք գործողությունը։ Իսկ երբ ասում ենք Նա կգա, այստեղ արդեն խոսողը ոչ միայն հաղորդում է կատարվելիք գործողության մասին, այլ նաև դրսևորում է իր վերաբերմունքը դեպի այդ գործողության կատարումը, հաստատ համոզմունքը կամ ենթադրությունը, որ այդ գործողությունը կկատարվի։ Ենթադրական եղանակի բայաձևերը իրենց բնույթով տարբերվում են նաև ըղձական եղանակի բայաձևերից, որոնք, ի տարբերություն առաջիններ, ցույց են տալիս խոսողի կամային վերաբերմունքը, իղձը, ցանկությունը գործողության կատարման վերաբերյալ։

§ 564. *Ենթադրական եղանակը ևս ունի երկու ժամանակ՝ ապառնի և անցյալ, որոնք կազմվում են ըղձական եղանակի համապատասխան ժամանակներից՝ կ եղանակիչի հավելումով. այսպես՝*

---

53 *Այս մասին տե՛ս է. Բ. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, էջ 370—373։*

Ապառնի ժամանակ

կվազեմ	կվազենք	կգնամ	կգնանք
կվազես	կվազեք	կգնաս	կգնաք
կվազի	կվազեն	կգնա	կգնան

Անցյալ ժամանակ

կվազեի	կվազեինք	կգնայի	կգնայինք
կվազեիր	կվազեիք	կգնայիր	կգնայիք
կվազեր	կվազեին	կգնար	կգնային

ԱՊԱՌՆԻ ԺԱՄԱՆԱԿ

§ 565. Ինչպես ասվեց, ենթադրական եղանակի ապառնի ժամանակի դրական ձևերը կազմվում են ըղձական եղանակի նույն ժամանակի բայաձևերի վրա ավելացնելով կ եղանակիչը, իսկ ժխտական ձևերը՝ օժանդակ բայի ներկա ժամանակի ժխտական ձևերով և խոնարհվող բայի ժխտական դերբայով (կվազեմ—չեմ վազի, կգնամ—չեմ գնա)։

Հղձականի ապառնի ժամանակը դրսևորում է խոսողի հաստատ համոզմունքը կամ ենթադրությունը խոսելու պահից հետո կատարվելիք գործողության իրագործման վերաբերյալ։ Օրինակ՝ Քեզ կօգնեն, և կհասկանաս։ Հավատա, կօգնեն (ՊՄ)։ Քանի շուտ է (ա), Թևոս, գոմեշները քաշի ու գնա տեղդ. Իզուր կշարշարվես, հետո գլխիդ կտաս (ՎՓ, Հողի աշխատավորը)։ Կգա կրկին մայիս մի նոր, և կծաղկեն արտ ու արոտ (ՎՏ)։ Մենք կհաղթենք։ Կհաղթենք մենք, քանի որ մերն է արդարությունը (ԴԴ, Վարդանանք)։

Բացի իր այս հիմնական իմաստից, ենթադրականի ապառնին ունի նաև այլ կիրառություններ, որոնցից կարևորները հետևյալներն են.

ա) Գործածվելով պայմանային հարաբերություններ արտահայտող բարդ ստորադասական նախադասություններում՝ ցույց են տալիս մի ապառնի ժամանակակետում կատարվելիք այնպիսի գործողություն կամ եղելություն, որի իրագործումը, ըստ խոսողի, կախված է մեկ այլ գործողության կատարումից, պայմանավորված է վերջինով։ Օրինակ՝ Թե տիրես մեծ շահ գու նրա

արտին, Թաթուլն էլ անզոր կրնկնի ոտքիդ տակ (ՀՔ)։ Պարսիկները բարեհաճ կլինեն դեպի հայերը այն ժամանակ, եթե դրանք ծողնեն այդ հռոմասիրությունը (ՍՋ, Պապ թագավոր)։

բ) Ցույց է տալիս խոսողի վճիռը, որոշումը, հաստատ նպատակադրումը որևէ գործողություն կատարելու վերաբերյալ։ Օրինակ՝ —Ես հայերենը չեմ թողնի,— ասաց Բաբիկը տակից վեր նայելով համառ ու չար (ԴԴ, Վարդանանք)։ —Այս րոպեիս կերթամ, ուր որ լինի կգտնեմ և կբերեմ (ՎՓ, Կտակ)։ Ես չեմ տա այս մարդու ոչ անունը, ոչ ազգանունը, կասեմ միայն, որ նրան հանդիպեցի երկաթուղային վագոնում, նոյեմբերյան մի գիշեր (ՍՋ, Հայրենասերը)։ Եվ այնտեղ ինչ որ տեսնեմ, նկատեմ, կրգամ քեզ, մայրիկ, մին-մին կպատմեմ (ՀՔ)։

գ) Ենթադրական եղանակի ապառնու երկրորդ դեմքի բայաձևերը կարող են ցույց տալ նաև խոսողի հանձնարարությունը, պատվերը, հրահանգը, հորդորը, մեղմ հրամանը խոսակցին մի ապառնի ժամանակամիջոցում որևէ գործողություն կատարելու վերաբերյալ։ Այսպես՝ —Այո... Կգնաս այն կողմը... կհարցնես... Հովհաննես քեհյային և կտաս նրան այս թուղթը (ՎՓ, Ճրագնավոր Տղո)։ Իսկ հիմա կփակվես ախոռապետ Վարաժի տանը և այնտեղ կհավաքես հետախույզ մարդկանց (ԴԴ, Վարդանանք)։

դ) Ենթադրական եղանակի ապառնին երբեմն դրսևորում է սովորաբար կրկնվող գործողություններ, եղելություններ։ Այս դեպքում այն կորցնում է իր եղանակային նշանակությունը և հավասարարժեք է դառնում սահմանական եղանակի ներկա ժամանակին։ Այս կիրառությունը հատուկ է հատկապես ժողովրդական-խոսակցական լեզվին։ Այսպես՝ Բայց նույնն է Թամարան, տղիդ կնայի երեսիդ, մտածածը չի թաքցնի և առանց կեղծիքի նշույլի կասի (ԵԵ)։ Լավ ընկեր չունեցող մարդը մենակ ու թույլ կզգա իրեն (ՀՔ, Մեծ տան զավակները)։ Գյուղում նրան կովարար մարդ էին համարում և գիտեին, որ կպռոթկա, կալեկոծվի ու մեկ էլ տեսար հանդարտվեց (Ն. տ.)։ Ասենք՝ այն գլխից ես չեմ հավանել նրան. ժամանակ-անժամանակ ներս կրնկնի, չաչանակի պես կխոսի, լիրբ-լիրբ կծիծաղի... ոչ մեծ կհարցնի, ոչ պստիկ (ՆԴ, Պայքարը)։

ե) Ենթադրականի ապառնին հաճախ գործածվում է ներկային խիստ մոտ ապագայում կամ ընդհանրապես ապառնի ժա-

մաքսակամիջոցում հաստատ կատարվելիք գործողություն ցույց տալու համար, մի գործողություն, որի կատարումը նախապես որոշված է և անվիճելի։ Այս իմաստով ըղձականի ապառնու կիրառությունը խիստ մոտենում է սահմանական եղանակի ապառնի ժամանակին։ Այսպես՝ Գարնան և ամռան ամիսներին հատուկ միջոցառումներ կմշակվեն բնակչության սպասարկման գործը ավելի բարձրացնելու համար (Մամուլ)։ Այս տարի ավտոմոտեսությունները կճամալրվեն նոր հարմարավետ մեքենաներով։ Հանրապետությունը կստանա 323 տաքսի, որից 277-ը կերթևեկեն Երևանի փողոցներում (Մամուլ)։ Ելույթ կունենա Գոհար Գասպարյանը։

Ծանոթ.— Ենթադրականի ապառնու այս կիրառությունն է հիմք հանդիսացել, որ որոշ լեզվաբաններ առաջարկում են այս բայաձևերը համարել սահմանական եղանակի ապառնի ժամանակի բայաձևեր։

դ) Այս բայաձևերը կարող են ցույց տալ նաև խոսողի ենթադրությունը, կարծիքը ներկա ժամանակամիջոցում որևէ գործողության կամ եղելության առկայության վերաբերյալ։ Օրինակ՝ — Արդեն տանը կլինի,— կարծես չլսելով շտապեց տեղ Սուսաննան որդու մասին (Վահ, Հավատը)։ Բոլորն էլ տաք հագուստի կարիք կունենան (ՍՋ, Մայրը)։

Երբեմն ենթադրական ապառնին գործածվում է անցյալի նշանակությամբ. այսպես՝ Ես մտածում էի, թե նա հրեշտակների մոտ կգնա (Ր, Կայծեր)։ Ես հույս ունեի, որ այստեղ կգտնեմ բազմաթիվ պատրաստի ուժեր (Ր, Դավիթ բեկ)։ Այս օրինակներում կգնա և կգտնեմ ձևերը գործածվում են կգնար, կգտնեի անցյալ ժամանակի նշանակությամբ։

ԱՆՑՅԱԼ ԺԱՄԱՆԱԿ

§ 566. Ենթադրական եղանակի անցյալ ժամանակի դրական ձևերը կազմվում են ըղձական եղանակի անցյալ ժամանակի բայաձևերից՝ կ եղանակիչի հավելումով, իսկ ժխտական ձևերը՝ ժխտական դերբայի և օժանդակ բայի անցյալ ժամանակի ժխտական ձևերի հարադրությամբ (կվազեի—չէի վազի, կգնայի—չէի գնա)։

Ենթադրական եղանակի անցյալ ժամանակը արտահայտում է խոսողի համոզմամբ կամ ենթադրությամբ անցյալում հնարա-

վոր, բայց անհրաժեշտ պայմանի բացակայության պատճառով չկատարված գործողություն կամ եղելություն։ Այս ժամանակի բայաձևերը իրենց հիմնական կիրառություններում ունեն նույն առանձնահատկությունը, ինչ ըղձականի անցյալ ժամանակը։ Այսինքն՝ դրական ձևերը ցույց են տալիս անցյալում հնարավոր, բայց չկատարված գործողություն, իսկ ժխտական ձևերը ցույց են տալիս անցյալում տեղի ունեցած գործողություն, որը, սակայն, ըստ խոսողի, չէր կատարվի, եթե նրան նախորդեր մեկ այլ գործողություն կամ եղելություն։ Օրինակ՝ ես մի հարվածով կջախջախեի այն ձեռքը, որ կմոտենար իմ տոհմական անարատ անունը արատավորելու։ ես այդ կարող էի անել (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Եթե ես բանաստեղծ լինեի, գիտե՞ս ինչ կգրեի (ՀՔ, Մեծ տան զավակները)։ Կլինեի հարգի մի մարդ, նույնիսկ եթե գլուխս այն ժամ դատարկ լիներ հազար անգամ (ՀՔ)։ Չէիր ձանձրանա դու գիտությունից, չէիր ձանձրանա սիրուց ու կյանքից, թե ունենայիր թշնամիներ մեծ (ԵՉ)։

Բերված օրինակներից երեքում կջախջախեի, կմոտենար, կգրեի և կլինեի բայաձևերը ցույց են տալիս անցյալում չկատարված գործողություն (չեմ ջախջախել, չի մոտեցել, չեմ գրել, չեմ եղել)՝ համապատասխան պայմանի բացակայության պատճառով, իսկ վերջին օրինակում չէիր ձանձրանա ժխտական բայաձևը ցույց է տալիս անցյալում կատարված գործողություն, որը, սակայն, ըստ խոսողի կարծիքի, ենթադրության չէր կատարվի, եթե դրա համար չլիներ համապատասխան պայման։

§ 567. Ենթադրականի անցյալ ժամանակը ցույց է տալիս նաև անցյալ ժամանակում հաստատապես հնարավոր համարվող, ենթադրվող, բայց դեռևս չկատարված գործողություն. այսպես՝ Ամբողջ գյուղը սարսափ էր ապրում. դիակին մոտեցողին կզնդակահարեին և ամբողջ տունը կերդեներին (ՎԱ, Մշտադալար ծառուղին)։ Ինչ էլ որ լիներ, երկուսն էլ ուրախացած էին։ Կտեսնեին Մեդային ու Շուրային (ՀՔ, Մեծ տան զավակները)։ Ավտոն փոքրինչ զվարթացավ— 100 փարա պիտի տաներ տուն, իսկ կեսօրվա հացից կեսը կուտեր և կեսը կպահեր ու կեսօրին կտաներ ընտանիքի համար (ՎՓ, Լալո)։

§ 568. Այս ժամանակաձևերը երբեմն ցույց են տալիս նաև խոսքի պահի համեմատությամբ ապառնի ժամանակում կատար-

վելիք գործողություն կամ եղելություն, որի իրագործումը, սակայն, խոսողի կողմից համարվում է քիչ հավանական։ Օրինակ՝ Ուզում էի տեսնել ձեզ, տեսնել հեռվից ձեզ այն պահին, երբ դուք կարդում եք այս տողերը... Այն ժամանակ ես ձեր դեմքի վրա կտեսնեի ամեն բան և կհասկանայի ամեն ինչ (ՀՔ, Գեներալի քույրը)։ Բայց որքան հրաշալի կլիներ տեսարանը, եթե հոսանքը մեկնիմեկ դուրս ցայտեր։ Հսկայական մի շատրվան, որ հովհարաձև կտարածվեր դեպի առաջ, կքոչեր, կողողեր ամեն ինչ և խուլ մռնչյունը դաշտը կթնդացներ (ՎՓ, Այիշա)։ Մի կտոր, միայն մի կտոր բան, և ես դարձյալ կբարձրանայի, ա՜հ, կգնայի դեպի արծիվը, կարյունոտեի ոտներս, ձեռքերս, ծնկներիս վրա կմագլցեի դեպի վեր, մինչև վերջին շունչս կընթանայի...միայն մի կտոր ուտելու բան (ՎՓ, Իկար)։

§ 569. Ենթադրականի անցյալը երբեմն գործածվում է անցյալ ժամանակամիջոցում սովորաբար կրկնված, երևան եկած գործողություններ, երևույթներ նկարագրելու ժամանակ։ Այս կիրառությունում այն կորցնում է իր եղանակային արժեքը և հանդես գալիս սահմանական եղանակի անցյալի անկատար ժամանակի իմաստով։ Օրինակ՝ Բաժին կտային, Վասիլիսան ամենալավ պատառը կպահեր իր տիկնիկի համար։ Իրիկունը, երբ ամենքը կպառկեին քնելու, նա իր նկուղում կփակվեր ու տիկնիկի հետ կխոսեր (ՀՔ)։

Այս կիրառությունը տարածված է հատկապես ժողովրդական-խոսակցական լեզվում։

§ 570. Գործածվելով մինչև շաղկապի հետ՝ ենթադրականի անցյալ ժամանակը ունենում է սահմանականի անցյալ կատարյալի նշանակություն՝ ցույց տալով անցյալում կատարված գործողություն, որի կատարման ընթացքում կամ որից անմիջապես հետո կատարվել է մեկ այլ գործողություն ևս։ Օրինակ՝ Մինչև վիրավորներին կիջեցնեին մեքենայից, նա վերադարձավ ու հրամայեց (ՀՔ, Մեծ տան զավակները)։ Ծառաները երևի կամ քնած էին և կամ զբաղված, որովհետև մինչև որ դռները կբացվեին, մինչև որ աղմուկ և շարժում կառաջանար, խոսրևը փողոց էր մըտել (ՎՓ, Ալեմգիր)։ Փոքր տատանումից հետո ներս մտա և մի պահ կանգնած էի մուտքի մոտ, մինչև աչքերս կսովորեին կիսախավարին (ՄՇ, Ավե Մարիա)։

Ենթադրականի անցյալը կիրառվում է նաև որպես քաղաքավարական ձև՝ մեկին մի բան հանձնարարելու, պատվիրելու, խնդրելու համար. այսպես՝ կխնդրեի, որ անպայման գաս։ Ես լսօր գնում եմ Երևան։ Կխնդրեի որ... (ՍՁ, Մի կյանքի պատմություն)։

Ենթադրական եղանակի երկրորդական վերլուծական ժամանակները

§ 571. Ենթադրական եղանակի երկրորդական վերլուծական ժամանակները կազմվում են գուգընթացական հարակատար և ապառնի դերբայներից՝ լինել բայի ենթադրական եղանակի բայաձևերի հարադրությամբ։ Այս ժամանակները ևս, մյուս երկրորդական ժամանակների նման, տարբերվում են գլխավոր ժամանակներից նրանով, որ դրսևորում են նաև գործողության կերպը՝ կատարված, կատարվող, կատարելի, միաժամանակ ընդգծելով գործողության տևականությունը, այսպես՝ կգրեմ—գրելիս կլինեմ ձևերը իրարից տարբերվում են գործողության բնույթով։ Եթե կգրեմ ձևը ցույց է տալիս պարզապես խոսելու պահից հետո կատարվելիք գործողություն, ապա գրելիս կլինեմ ձևը ցույց է տալիս դարձյալ խոսելու պահից հետո կատարվելիք, սակայն տևական, սկսված և ընթացքի մեջ եղող գործողություն։

§ 572. Ենթադրական եղանակի երկրորդական վերլուծական ժամանակները հետևյալներն են.

1. Ենթադրական ապառնի անկատար— Այս ժամանակը կազմվում է խոնարհվող բայի գուգընթացական դերբայի և լինել բայի ենթադրական ապառնու հարադրությամբ. այսպես՝

Ե խոնարհում

վազելիս կլինեմ	*վազելիս կլինենք*
վազելիս կլինես	*վազելիս կլինեք*
վազելիս կլինի	*վազելիս կլինեն*

Ա խոնարհում

գնալիս կլինեմ	*գնալիս կլինենք*
գնալիս կլինես	*գնալիս կլինեք*
գնալիս կլինի	*գնալիս կլինեն*

Այս ժամանակը ցույց է տալիս խոսողի համոզմունքը կամ ենթադրությունը մի ապառնի ժամանակամիջոցում կատարվելիք, սկսված և ընթացքի մեջ գտնվելիք գործողության վերաբերյալ։ Օրինակ՝ Հինգ օրից հետո արդեն գնալիս կլինենք: *Երբ ես գնամ, նա աշխատելիս կլինի:*

Ավելի հաճախ այս ժամանակի բայաձևերը արտահայտում են խոսողի ենթադրությունը խոսելու պահին, ներկա ժամանակակետում մեկ այլ վայրում սկսված և ընթացքի մեջ գտնվող գործողության մասին. այսպես՝ Նա հավանաբար արդեն գնալիս կլինի: Նա հիմա այդ մասին պատմելիս կլինի:

2. Ենթադրական անցյալի անկատար— *Այս ժամանակը կազմվում է խոնարհվող բայի զուգընթացական դերբայի և լինել բայի ենթադրական անցյալ բայաձևերի հարադրությամբ. այսպես՝*

Ե խոնարհում

վազելիս կլինեի	*վազելիս կլինեինք*
վազելիս կլինեիր	*վազելիս կլինեիք*
վազելիս կլիներ	*վազելիս կլինեին*

Ա խոնարհում

գնալիս կլինեի	*գնալիս կլինեինք*
գնալիս կլինեիր	*գնալիս կլինեիք*
գնալիս կլիներ	*գնալիս կլինեին*

§ 573. Ենթադրական անցյալի անկատար ժամանակը ցույց է տալիս այնպիսի գործողություն կամ եղելություն, որը խոսողի ենթադրությամբ, կարծիքով անցյալ ժամանակամիջոցում կամ ներկայում սկսված և ընթացքի մեջ կլիներ, եթե դրա համար անհրաժեշտ պայման լիներ։ Օրինակ՝ Եթե տեղ լիներ, արդեն պարապելիս կլինեինք: *Լավ եղանակ լիներ, մենք զբոսնելիս կլինեինք:*

3. Ենթադրական հարակատար— *Այս ժամանակը կազմվում է հարակատար դերբայի և լինել բայի ենթադրական ապառնու բայաձևերի հարադրությամբ. այսպես՝*

Ե խոնարհում

վազած կլինեմ	*վազած կլինենք*
վազած կլինես	*վազած կլինեք*
վազած կլինի	*վազած կլինեն*

Ա. խոնարհում

գնացած կլինեմ	*գնացած կլինենք*
գնացած կլինես	*գնացած կլինեք*
գնացած կլինի	*գնացած կլինեն*

§ 574. Այս ժամանակը արտահայտում է խոսողի ենթադրությամբ, համոզմունքով ապառնի ժամանակակետի հարաբերությամբ սկսված և ավարտված գործողություն կամ եղելություն: Օրինակ՝ երբ ես գնամ, նա արդեն վերջացրած կլինի: Այսօր կաք, իսկ վաղը չախչախված կլինեք փղերի ոտների տակ (ԴԴ, Վարդանանք):

Ենթադրական հարակատար ժամանակը ավելի հաճախ ցույց է տալիս խոսողի ենթադրությունը, կարծիքը ներկա ժամանակակետի համեմատությամբ սկսված և ավարտված գործողության վերաբերյալ: Օրինակ՝ Ինչուհյաց նախարարը լրտեսներ ուղարկած կլինի (ԴԴ, Վարդանանք): Պատերազմը քուշանների դեմ կատաղեցրած կլինի նրան (Ն. ա.):

4. Ենթադրական անցյալի հարակատար— Այս ժամանակը կազմվում է խոնարհվող բայի հարակատար դերբայի և լինել բայի ենթադրական եղանակի անցյալ ժամանակի բայաձևերի հաբարդրությամբ. այսպես՝

Ե խոնարհում

վազած կլինեի	*վազած կլինեինք*
վազած կլինեիր	*վազած կլինեիք*
վազած կլիներ	*վազած կլինեին*

Ա. խոնարհում

գնացած կլինեի	*գնացած կլինեինք*
գնացած կլինեիր	*գնացած կլինեիք*
գնացած կլիներ	*գնացած կլինեին*

§ 575. *Այս բայաձևերը ցույց են տալիս այնպիսի գործողության կամ եղելության, որը չի կատարվել, սակայն խոսողի ենթադրությամբ, համոզմամբ մի անցյալ ժամանակամիջոցում կատարված-ավարտված կլիներ, եթե դրա համար անհրաժեշտ պայմաններ լինեին: Օրինակ՝ եթե չհիվանդանայի, այդ աշխատանքը վաղուց ավարտած կլինեի: Եթե եղանակը լավ լիներ, ինքնաթիռը վաղուց թռած կլիներ:*

5. *Ենթադրական երկրորդական ապառնի.— Այս երկրորդական ժամանակը կազմվում է խոնարհվող բայի ապառնի ժամանակի և լինել բայի ենթադրական ապառնի ժամանակաձևերի հարադրությամբ. այսպես՝*

Ե խոնարհում

վազելու կլինեմ	*վազելու կլինենք*
վազելու կլինես	*վազելու կլինեք*
վազելու կլինի	*վազելու կլինեն*

Ա խոնարհում

գնալու կլինեմ	*գնալու կլինենք*
գնալու կլինես	*գնալու կլինեք*
գնալու կլինի	*գնալու կլինեն*

Այս բայաձևերը շատ հազվադեպ են գործածվում և ցույց են տալիս խոսողի համոզմամբ կամ ենթադրությամբ մի ապառնի ժամանակակետի համեմատությամբ կատարվելիք գործողություն: Օրինակ՝ եթե ոչինչ չխանգարի, երեկոյան գնալու կլինենք: Երբ գրելու կլինեմ, կզգուշացնեմ:

6. *Ենթադրական անցյալի ապառնի.— Այս ժամանակը կազմվում է խոնարհվող բայի ապառնի դերբայի և լինել բայի ենթադրական անցյալ ժամանակի բայաձևերի հարադրությամբ. այսպես՝*

Ե խոնարհում

վազելու կլինեի	*վազելու կլինեինք*
վազելու կլինեիր	*վազելու կլինեիք*
վազելու կլիներ	*վազելու կլինեին*

Ա խոնարհում

գնալու կլինեի	*գնալու կլինեինք*
գնալու կլինեիր	*գնալու կլինեիք*
գնալու կլիներ	*գնալու կլինեին*

Այս բայաձևերը ևս հազվադեպ են գործածվում և ցույց են տալիս այնպիսի գործողություն, որը թեև չի կատարվել, սակայն խոսողի կարծիքով, ենթադրությամբ մի անցյալ ժամանակակետի համեմատությամբ կատարվելու կլիներ, եթե դրա համար անհրաժեշտ պայման լիներ։ Օրինակ՝ եթե երեկոյան շատ աշխատանք չունենայի, ֆնելու կլինեի։

ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

§ 576. Բայի հարկադրական եղանակը ցույց է տալիս այնպիսի գործողություն կամ եղելություն, որի կատարումը ապառնի կամ մի անցյալ ժամանակամիջոցում խոսողի կողմից դիտվում է որպես անհրաժեշտություն, պարտադիր։ Հարկադրական եղանակի բայաձևերը կազմվում են ըղձական եղանակի բայաձևերի վրա ավելացնելով պիտի *կամ* պետք է *եղանակիչները* (պիտի գնամ, պիտի գնայի *կամ* պետք է գնամ, պետք է գնայի)։

Ծանոթ.— *Պիտի եղանակիչը գրաբարյան* պիտիմ *բայի եզակի երրորդ դեմքն է (պիտիմ, պիտիս,* պիտի), *որը ժամանակակից հայերենում կորցրել է իր անկախ կիրառությունը և գործածվում է որպես հարկադրական եղանակ կազմելու ձևաբանական միջոց։ Այս եղանակիչը թեև գրվում է խոնարհվող բայից անջատ, սակայն լրիվ կորցրել է իր նյութական իմաստը և խոնարհվող բայի հետ համարվում է մեկ բառական միավոր։ Պիտի գրեմ, պիտի կարդայի ձևերը մեկական բայաձևեր են և ունեն բայական մեկ միավորի արժեք։*

Այս եղանակիչը բանաստեղծական խոսքում երբեմն հանդես է գալիս ձևափոխված՝ պիտ *կամ* տի *ձևով*[54]*. ինչպես՝ Մի՞թե դեռևս*

54 *Այս եղանակիչը խիստ ձևափոխության է ենթարկվել հատկապես որոշ բարբառներում։*

անախրտ հագարը այն ավերակաց վրա պիտ իշխէ (ՀԹ)։ Կամ՝ է՞ր անխելք մարդ, երբ տի թողնես ապրողն ապրի սրտալի, ե՞րբ տի ապրես ու վայելես էս աշխարհքը շեն ու լի (ՀԹ)։

Հարկադրական եղանակի մյուս եղանակիչը՝ պետք է, *դրվելով ըղձական եղանակի ձևերի վրա, կորցնում է իր բառական ինքնուրույնությունը և հանդես գալիս որպես հարկադրական եղանակի դրսևորման ձևաբանական միջոց (պետք է գրեմ, պետք է կարդայի և այլն)։ Սակայն, ի տարբերություն* պիտի *եղանակիչի,* պետք է-*ն ժամանակակից գրական հայերենում ունի նաև անկախ կիրառություն, ինչպես՝ Այդ դիրքը ինձ* պետք է։ Պետք է *անպայման այցելել այդ ցուցահանդեսը։*

§ 577. Պիտի *և* պետք է *եղանակիչները հավասարապես գործածվելով որպես հարկադրական եղանակի ձևավորման միջոց, աստիճանաբար սկսում են ստանալ իմաստային նուրբ տարբերակում։* Պետք է *եղանակիչը ավելի է ընդգծում գործողության հարկադրական, անհրաժեշտաբար կատարվելու բնույթը, իսկ* պիտի *եղանակիչի մեջ այդ իմաստը աստիճանաբար մթագնում է (հմմտ. Ես վաղը* պիտի *գնամ և Ես վաղը* պետք է *գնամ նախադասությունները)։*

§ 578. Պիտի *և* պետք է *եղանակիչների՝ բայից անջատ գրվելու հետևանքով խոսքի մեջ այդ եղանակիչների ու բայի միջև կարող են ընկնել նախադասության այլ անդամներ. ինչպես՝ —Վաղը* պիտի *իր ոտանավորները կարդա,— վարանումից հանեց ինձ ընկերս (Խ.)։ Ինչ պատասխան* պիտի *ես տամ հող ու ծաղիկ տվողին (ՀԹ)։*

Երբ նախադասության մեջ գործածվում են հարկադրական եղանակի մեկից ավելի բայաձևեր, պիտի *կամ* պետք է *եղանակիչը կարող է դրվել դրանցից միայն առաջինի մոտ. ինչպես՝ Եվ այցելուն* պիտի *կանգնե Շիրմի առջև փառագոչ, Սրտի խորքից բացականչե Զայնով հպարտ ու դողդոջ (ՀԹ)։*

Ծանոթ.— *Խոսքի մեջ երբեմն* պիտի *և* պետք է *եղանակիչներին ավելանում է* որ *շաղկապը, որով գործողության անհրաժեշտաբար կատարվելու իմաստը որոշ չափով թուլանում է։ Այս ձևը ցույց է տալիս ենթադրություն որևէ գործողության՝ անհրաժեշտաբար, հաստատ կատարվելու վերաբերյալ։ Օրինակ՝ Նա այդ մասին* պիտի որ *իմանա։ Նա վաղը* պետք է որ *գնա։*

§ 579. Հարկադրական եղանակը ևս, ըղձական և ենթադրական եղանակների նման ունի երկու ժամանակ՝ ապառնի և անցյալ։

Ապառնի ժամանակ

§ 580. Հարկադրական եղանակի ապառնի ժամանակը կազմվում է ըղձական եղանակի ապառնի ժամանակի բայաձևերին ավելացնելով պիտի կամ պետք է եղանակիչը. այսպես՝

Ե խոնարհում	Ա խոնարհում
պիտի (պետք է) վազեմ	պիտի (պետք է) գնամ
պիտի (պետք է) վազես	պիտի (պետք է) գնաս
պիտի (պետք է) վազի	պիտի (պետք է) գնա
պիտի (պետք է) վազենք	պիտի (պետք է) գնանք
պիտի (պետք է) վազեք	պիտի (պետք է) գնաք
պիտի (պետք է) վազեն	պիտի (պետք է) գնան

§ 581. Հարկադրական եղանակի ապառնի ժամանակը ցույց է տալիս այնպիսի գործողություն, ոլի կատարումը խոսքի պահից հետո խոսողի կողմից համարվում է անհրաժեշտ, պարտադիր. մի գործողություն, որ պիտի կատարվի անհրաժեշտաբար, հարկադրաբար, երբեմն նույնիսկ հակառակ գործողությունը կատարողի կամքին։ Օրինակ՝ Նրանք, նրանք, որ պիտի գան, *որ* պիտի շրջեն լճերի ափին, *այգիներում պերճ, որ* պիտի ապրեն *գալիք օրերում և ապրեն շքեղ, որ* պիտի շնչեն *միայն վարդերի բույրը թովչական (ՍԿ)։ Եվ մռայլից, որ կա իջած Ծանր ու տարտամ քո սրտին,* Պիտի հառնեն *տանջված, խաչված ցնորքները քո նախկին (ՀՔ)։ Բայց մի՞թե այդ* պիտի լինի *երիտասարդ կամսարյանի կյանքի նպատակը (Մուր., Առաքյալը)։ Երբեք կյանքն այնքան քաղցր, անցյալն այնքան լավ ու գեղեցիկ չեն թվում մարդուն, ինչպես ճակատամարտից առաջ, որին նա* պիտի մասնակցի *(ՀՔ, Մեծ տան զավակները)։ Ճա՞րդ ինչ. ուզես-չուզես* պիտի կատարես։

§ 582. Հարկադրական եղանակի ապառնին հաճախ ցույց է տալիս ոչ միայն անհրաժեշտաբար, հարկադրաբար կատարվելիք

գործողություն, այլ նաև խոսողի կամ գործողության սուբյեկտի վճիռը, որոշումը, նաև ցանկությունը որևէ գործողություն խոսքի պահից հետո անպայման, հաստատ կատարելու վերաբերյալ։ Օրինակ՝ Նա պիտի ճվիրվի յուր տկար ազգակիցներին, շինականին և գյուղացուն, նրանց համար պիտի հոգա, նրանց համար պիտի մտածի (Մուր., Առաքյալը)։ Ես պիտի պատռեմ ձեր հզոր կուրծքը, ես պիտի քոչեմ դեպ սուրբ օրրանը իմ վեհ խոհերի, վառ ձգտումների (Իս.)։ Ծանր ու ահալի էր միայն սպանվելու միտքը։ Նա չպիտի սպանվի, ողջ պիտի մնա, գրքեր գրի (ՀՔ, Մեծ տան զավակները)։

Հարկադրական ապառնու երկրորդ դեմքի բայաձևերը իմաստով հաճախ մոտենում են հրամայականն եղանակի բայաձևերին՝ դրսևորելով հրաման, հորդոր խոսակցին (կամ այն խմբին, որի մեջ մտնում է խոսակիցը) մի ապառնի ժամանակամիջոցում որևէ գործողություն անհրաժեշտաբար կատարելու վերաբերյալ։ Օրինակ՝ Դու անձամբ պետք է ներկա գտնվես գործիդ քննության, (ՆԴ, Զազունյան)։ Դու պետք է անմիջապես հեռանաս այստեղից։

§ 583. Հարցական նախադասություններում հարկադրականի ապառնին կարող է ցույց տալ նաև խոսքի պահին, ներկա ժամանակամիջոցում հարկադրաբար, անհրաժեշտաբար, հաճախ խոսողի կամքին հակառակ կատարվող գործողություն կամ եղելություն, որի ավարտի ժամանակը խոսողին հայտնի չէ. այսպես՝ Մինչև ե՞րբ պիտի շարչարվես այդպես Տառապանքներով, առանց մխիթար (ՀԹ)։ Դեռ երկա՞ր պիտի գրեմ։ Մինչև ե՞րբ պիտի մարդիկ կատաղի Արցունքովն հայի կերածը թրջեն (ՀԹ)։

Անցյալ ժամանակ

§ 584. Հարկադրական եղանակի անցյալ ժամանակը կազմվում է ըղձական անցյալի բայաձևերի վրա ավելացնելով պիտի կամ պետք է եղանակիչը։ Այսպես՝

Ե խոնարհում	Ա խոնարհում
պիտի (պետք է) վազեի	*պիտի (պետք է) գնայի*
պիտի (պետք է) վազեիր	*պիտի (պետք է) գնայիր*
պիտի (պետք է) վազեր	*պիտի (պետք է) գնար*

պիտի (պետք է) վազեինք	*պիտի (պետք է) գնայինք*
պիտի (պետք է) վազեիք	*պիտի (պետք է) գնայիք*
պիտի (պետք է) վազեին	*պիտի (պետք է) գնային*

Այս ժամանակի ժխտական ձևերը ևս կազմվում են պիտի կամ պետք է եղանակիչին ավելացնելով չ ժխտական մասնիկը (չպիտի վազեի, չպետք է գնայի)։

§ 585. Հարկադրական անցյալ ժամանակը ցույց է տալիս ըստ խոսողի անցյալ ժամանակամիջոցում անհրաժեշտաբար, հարկադրաբար կատարվելիք գործողություն կամ եղելություն, որը կամ չի կատարվել և կամ խոսողին հայտնի չէ՝ այն կատարվել է, թե ոչ։ Օրինակ՝ Ինչքա՞ն ծաղիկ պիտի բուսներ, որ չբուսավ էս հողին (ՀՔ)։ Երկու հոգու գնդի շտաբն էին կանչել հետախուզության ուղարկելու։ Երեք հոգի էլ գնդի պարետային դատակից պիտի գնային (ՀՔ, Մեծ տան զավակները)։ Մյուս օրն ընկերս նրան պիտի հաղորդեր տտանավոր չինելու արվեստը՝ հանգեր, վանկեր և այլն (Իս.)։

Առաջին դեպքում դրական և ժխտական ձևերը ունենում են հակառակ նշանակություն, այսինքն՝ դրական բայաձևերը ունենում են ժխտական նշանակություն, ցույց են տալիս անցյալ ժամանակում անհրաժեշտություն համարվող, բայց չկատարված գործողություն։ Օրինակ՝ պիտի գնայի, պիտի գրեի, *բայց* չգնացի և չգրեցի: *Այստեղ հարկադրական անցյալի դրական ձևերը ցույց են տալիս նախատեսված, բայց չկատարված գործողություն։* Չպիտի գնայի, չպիտի գրեի, *բայց* գնացի և գրեցի: *Այստեղ հարկադրական անցյալի ժխտական ձևերը ցույց են տալիս կատարված գործողություն, որի կատարումը, սակայն, նախատեսված չէր, որը, ըստ խոսողի, չպետք է կատարվեր։*

Երկրորդ դեպքում (երբ խոսողին հայտնի չէ գործողության կատարման մասին) դրական և ժխտական ձևերը գործածվում են իրենց ուղղակի նշանակությամբ։ Դրական ձևերը ցույց են տալիս անցյալում կատարվելիք գործողություն, իսկ ժխտական ձևերը՝ անցյալում չկատարվելիք գործողություն։

§ 586. Անցյալում կատարված դեպքեր, իրողություններ նկարագրելիս հարկադրականի անցյալը կարող է կիրառվել ապառնու նշանակությամբ, այսինքն՝ ցույց տալ մի անցյալ ժամանա-

կակետի հարաբերությամբ անհրաժեշտաբար կատարվելիք գործողություն կամ եղելություն։ Օրինակ՝ Զայնարկու գնդի մոտ էր պահված նաև երկու հազարանոց պահեստային զորքը, որը պետք է *սպասեր ձայնարկու գնդին։ Հենց որ վերջինս ազմուկ աղաղակով սկսեր, պահեստայինները թշնամու վրա* պետք է *նետվեին (Հ, Տիգրան Մեծ)։ Ամբոխը բաժանվեց երկու հավասար մասի։ Ընթանցից ամեն մեկը* պետք է *բռներ հովտի մի զառիվայրը։ Զահավոր պահակները* պիտի *մոտենային վրաններին։ Հարձակման նշանը* պիտի *տար Մարզպետունին, իսկ առաջին կրակը* պիտի *վառեր Սեպուհը (Մուր., Գևորգ Մարզպետունի)։*

Հարկադրական եղանակի երկրորդական վերլուծական ժամանակները

§ 587. Հարկադրական եղանակի երկրորդական վերլուծական ժամանակները ևս ունեն երեք կերպ՝ կատարվող, կատարված, կատարելի, որոնք կազմվում են համապատասխանաբար զուգընթացական, հարակատար, ապառնի դերբայների և լինել բայի հարկադրական եղանակի բայաձևերի հարադրությամբ (գրելիս, գրած, գրելու պիտի լինեմ. գրելիս, գրած, գրելու պիտի լինեի)։ *Այս կերպերը վերցվում են երկու՝ ապառնի և անցյալ ժամանակակետերի հարաբերությամբ, սակայն* լինել *բայի հարկադրական ապառնին կարող է ցույց տալ նաև ներկա ժամանակակետ։* Գրելիս պիտի լինի *ձևը նշանակում է և՛ մի ապառնի ժամանակակետում կատարվելիք և ընթացքի մեջ եղող գործողություն, և՛ ներկա ժամանակակետի հարաբերությամբ սկսված և ընթացքի մեջ եղող գործողություն (Նա իմ կարծիքով արդեն* գրելիս պիտի լինի)։

Պիտի *եղանակիչը հարկադրականի երկրորդական վերլուծական ժամանակներում ունի ազատ շարադասություն։ Այն կարող է դրվել և՛ խոնարհվող բայից առաջ, և՛ խոնարհվող բայի ու լինել-ի միջև։ Հավասարապես գործածվում են և՛* պիտի գնացած լինի, պիտի վազելիս լիներ, *և՛* գնացած պիտի լինի, վազելիս պիտի լիներ *ձևերը։*

§ 588. Հարկադրական եղանակի երկրորդական վերլուծական ժամանակները հետևյալներն են.

§ 589. 1. Հարկադրական ապառնի անկատար.— Այս ժամանակը կազմվում է դուրնթացական դերբայի և լինել բայի հարկադրական ապառնու հարադրությամբ։ Այսպես՝

Ե խոնարհում

վազելիս պիտի (պետք է) լինեմ
վազելիս պիտի (պետք է) լինես
վազելիս պիտի (պետք է) լինի
վազելիս պիտի (պետք է) լինենք
վազելիս պիտի (պետք է) լինեք
վազելիս պիտի (պետք է) լինեն

Ա խոնարհում

գնալիս պիտի (պետք է) լինեմ
գնալիս պիտի (պետք է) լինես
գնալիս պիտի (պետք է) լինի
գնալիս պիտի (պետք է) լինենք
գնալիս պիտի (պետք է) լինեք
գնալիս պիտի (պետք է) լինեն

§ 590. Հարկադրական ապառնիի անկատարը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը բուռ խոսողի մի ապառնի ժամանակամիջոցում անհրաժեշտաբար պիտի սկսվի և ընթացքի մեջ լինի։ Օրինակ՝ Մեկ շաբաթ հետո նա անպայման աշխատելիս պիտի լինի։ Վաղը ես արդեն գնալիս պիտի լինեմ, որ ժամանակին տեղ հասնեմ։

Ավելի հաճախ այս ձևերը ցույց են տալիս խոսքի պահին, այսինքն՝ ներկա ժամանակամիջոցում խոսողի կարծիքով, ենթադրությամբ, համոզմամբ սկսված և ընթացքի մեջ եղող գործողություն։ Օրինակ՝ Նա հիմա աշխատելիս պիտի լինի։ Իմ կարծիքով նա այդ մասին գրելիս պիտի լինի։

§ 591. 2. Հարկադրական անցյալի անկատար.— Այս ժամանակը կազմվում է խոնարհվող բայի դուրնթացական դերբայի և լինել բայի հարկադրական անցյալի բայաձևերի հարադրությամբ։ Այսպես՝

Ե խոնարհում

վազելիս պիտի (պետք է) լինեի
վազելիս պիտի (պետք է) լիներիր
վազելիս պիտի (պետք է) լիներ
վազելիս պիտի (պետք է) լիներինք
վազելիս պիտի (պետք է) լինեիք
վազելիս պիտի (պետք է) լինեին

Ա. խոնարհում

գնալիս պիտի (պետք է) լինեի
գնալիս պիտի (պետք է) լիներիր
գնալիս պիտի (պետք է) լիներ
գնալիս պիտի (պետք է) լիներինք
գնալիս պիտի (պետք է) լինեիք
գնալիս պիտի (պետք է) լինեին

Հարկադրական անցյալի անկատարը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը խոսողի հաստատ համոզմամբ մի անցյալ ժամանակակետում սկսված և ընթացքի մեջ պիտի լիներ, որը սակայն կամ չի կատարվել և կամ խոսողը կատարման մասին չգիտի։ Օրինակ՝ Մեկ շաբաթ առաջ ես արդեն աշխատելիս պիտի լինեի, բայց հիվանդացա։ Նա երեկ աշխատելիս պիտի լիներ։

Այս ձևերը կարող են ցույց տալ նաև այնպիսի գործողություն, որը խոսողի կարծիքով, համոզմամբ ներկա ժամանակամիջոցում անհրաժեշտաբար պետք է սկսված և ընթացքի մեջ լիներ, սակայն չի իրագործվել։ Օրինակ՝ Իմ կարծիքով նա հիմա աշխատելիս պիտի լիներ։

§ 592. 3. Հարկադրական հարակատար.— Այս ժամանակը կազմվում է խոնարհվող բայի հարակատար դերբայի և լինել բայի հարկադրական ապառնու հարադրությամբ։ Այսպես՝

Ե խոնարհում

վազած պիտի (պետք է) լինեմ
վազած պիտի (պետք է) լինես
վազած պիտի (պետք է) լինի

վազած պիտի (պետք է) լինենք
վազած պիտի (պետք է) լինեք
վազած պիտի (պետք է) լինեն

Ա. խոնարհում

գնացած պիտի (պետք է) լինեմ
գնացած պիտի (պետք է) լինես
գնացած պիտի (պետք է) լինի
գնացած պիտի (պետք է) լիննենք
գնացած պիտի (պետք է) լինեք
գնացած պիտի (պետք է) լինեն

Այս ժամանակը ցույց է տալիս այնպիսի գործողության, որը խոսողի համոզմամբ մի ապառնի ժամանակակետի հարաբերությամբ անպատճառ, անհրաժեշտաբար պիտի կատարված-ավարտված լինի։ Օրինակ՝ Հինգ օր հետո աշխատանքն արդեն ավարտած պիտի լինեմ: *Վաղը նա արդեն* գրած պիտի լինի:

Այս ժամանակի երկրորդ դեմքի բայաձևերը հաճախ մոտենում են հրամայական եղանակին՝ ցույց տալով հրաման և վճռական պահանջ, պատվեր՝ որևէ գործողություն մի ապառնի ժամանակակետի հարաբերությամբ անհրաժեշտաբար կատարած-ավարտած լինելու վերաբերյալ։ Օրինակ՝ Վաղը աշխատանքները ավարտած պիտի լինեք: *Տես հա՛, ժամը տասներկուսին ներկայացրած պիտի լինես:*

Այս ժամանակի բայաձևերը հաճախ արտահայտում են այնպիսի գործողություն, որը խոսողի համոզմամբ, ենթադրությամբ մինչև խոսքի պահը արդեն կատարված-ավարտված պիտի լինի։ Օրինակ՝ Թե եղել եք, պետք է տեսած լինեք, *որ մեր բաղի տակով ճանապարհը գնում է դեպի խանդակի վրա (ԱԲ, Եղբայրության ընկուզենիներ)։ Նա վաղուց* գնացած պիտի լինի:

§ 593. 4. Հարկադրական անցյալի հարակատար. —Այս ժամանակը կազմվում է խոնարհվող բայի հարակատար և լինել բայի հարկադրական անցյալի բայաձևերի հարադրությամբ։ Այսպես՝

Ե խոնարհում

վազած պիտի (պետք է) լինեի
վազած պիտի (պետք է) լինեիր

վազած պիտի (պետք է) լիներ
վազած պիտի (պետք է) լինեինք
վազած պիտի (պետք է) լինեիք
վազած պիտի (պետք է) լինեին

Ա. խոնարհում

գնացած պիտի (պետք է) լինեի
գնացած պիտի (պետք է) լիներ
գնացած պիտի (պետք է) լիներ
գնացած պիտի (պետք է) լինեինք
գնացած պիտի (պետք է) լինեիք
գնացած պիտի (պետք է) լինեին

Սրանք արտահայտում են այնպիսի գործողություն, որը, ըստ խոսողի, մի անցյալ ժամանակակետի կամ ներկայի համեմատությամբ անհրաժեշտաբար պիտի կատարված-ավարտված լիներ, սակայն կամ չի կատարվել և կամ խոսողին հայտնի չէ դրա կատարման մասին։ Օրինակ՝ Թվում էր, թե Փառանձեմը կամ պիտի բողոքած *և հեռացած լիներ, կամ հաշտված (ԴԴ, Վարդանանք)։ Պատերը* պետք *է սևացած լինեին վառած մոմերից (ԱՔ, Խաչատուր Աբովյան)։ Նա փողոց* պիտի գնացած *լիներ։ Այդպիսի դեպքում ես* պիտի խնդրած *լինեի, որ գար ինձ մոտ (ՆԴ, Պայքար)։*

Որոշ կառուցվածքի նախադասություններում այս ժամանակը ցույց է տալիս նաև այնպիսի գործողություն, որը խոսքի պահին կամ դրանից անմիջապես առաջ թեև կատարվել է, սակայն ըստ խոսողի պիտի կատարված-ավարտված լիներ ավելի վաղ ժամանակամիջոցում։ Օրինակ՝ Դու այդ մասին վաղուց պիտի ասած լինեիր։ *Այդ աշխատանքը նա ոչ թե հիմա, այլ մեկ շաբաթ առաջ* պիտի կատարած լիներ։

§ 594. 5. Հարկադրական երկրորդական ապառնի.— Այս ժամանակը կազմվում է խոնարհվող բայի ապառնի դերբայի և լինել բայի հարկադրական ապառնի ժամանակի բայաձևերի հարադրությամբ։ Այսպես՝

ե խոնարհում

վազելու պիտի (պետք է) լինեմ
վազելու պիտի (պետք է) լինես

վազելու պիտի (պետք է) լինի
վազելու պիտի (պետք է) լինենք
վազելու պիտի (պետք է) լինեք
վազելու պիտի (պետք է) լինեն

Ա խոնարհում

գնալու պիտի (պետք է) լինեմ
գնալու պիտի (պետք է) լինես
գնալու պիտի (պետք է) լինի
գնալու պիտի (պետք է) լինենք
գնալու պիտի (պետք է) լինեք
գնալու պիտի (պետք է) լինեն

Այս բայաձևերը ցույց են տալիս խոսողի համոզմամբ մի ապառնի կամ ներկա ժամանակակետի համեմատությամբ անհրաժեշտաբար կատարվելիք տևական գործողություն։ Ինչպես՝ վաղը այս ժամին արդեն գրելու պիտի լինեմ։ Ինչպես երևում է բերված օրինակից, այս ձևերը արհեստական են և գրական լեզվում գործածական չեն։

§ 595 6. Հարկադրական անցյալի ապառնի.— Այս ժամանակը կազմվում է խոնարհվող բայի ապառնի դերբայի և լինել բայի հարկադրական անցյալի բայաձևերի հարադրությամբ։ Այսպես՝

Ե խոնարհում

վազելու պիտի (պետք է) լինեի
վազելու պիտի (պետք է) լինեիր
վազելու պիտի (պետք է) լիներ
վազելու պիտի (պետք է) լինեինք
վազելու պիտի (պետք է) լինեիք
վազելու պիտի (պետք է) լինեին

Ա խոնարհում

գնալու պիտի (պետք է) լինեի
գնալու պիտի (պետք է) լինեիր

գնալու պիտի (պետք է) լիներ
գնալու պիտի (պետք է) լինեինք
գնալու պիտի (պետք է) լինեիք
գնալու պիտի (պետք է) լինեին

Այս ժամանակը ցույց է տալիս այնպիսի գործողություն, որը ըստ խոսողի մի անցյալ ժամանակակետի համեմատությամբ անհրաժեշտաբար պիտի կատարվեր։ Օրինակ՝ Նա հինգ օր առաջ գրնալու պիտի լիներ։ Այս ձևերը ևս ժամանակակից հայերենում գործածական չեն։

ՀՐԱՄԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿ

§ 596. Բայի հրամայական եղանակը, ըղձական եղանակի նման, դրսևորում է խոսողի կամային վերաբերմունքը գործողության նկատմամբ։ Սակայն, ի տարբերություն ըղձական եղանակի, որի միջոցով արտահայտվում է խոսողի իղձը, ցանկությունը գործողության կատարման նկատմամբ, հրամայական եղանակը դրսևորում է խոսողի հրամանը, հորդորը, կոչը, պահանջը, թելադրանքը՝ ուղղված խոսակցին կամ այն խմբին, որին դիմում է խոսողը տվյալ գործողությունը կատարելու համար։ Օրինակ՝ Արմե՛ն, շո՛ւտ, մեջը ջուր լցրու։ Այդպես... դե հիմի ծորակը բա՛ց թող (ՎԱ, Սևանի ափին)։ Կապեցե՛ք սրանց,— դիմեց գինվորներին Վարդանը,— զանգահարեցե՛ք (ԴԴ, Վարդանանք)։ Դու քո ճամփե՛ն գնա, քույրի՛կ, եվ թող լինի նա պայծառ։ Ինձ մի՛ ժլատա, ինձ մի՛ սիրիր, ես ընկեր չեմ քեզ համար (ՀԹ)։

§ 597. Բացի հրամանից, հորդորից հրամայական եղանակը կարող է արտահայտել.

1. Կոչ, հրավեր, պահանջ՝ ուղղված ոչ թե մեկ հոգու, այլ ամբողջ կոլեկտիվի։ Այսպես՝ Սովետական գիտության աշխատողնե՛ր մեր Հայրենիքի գիտությունն ու տեխնիկան հարստացրե՛ք նորանոր հետազոտություններով... Ամրապնդեցե՛ք գիտության կապը արտադրության հետ (ՍՀ)։ Էհե՛յ, լսեցե՛ք վեհ Հայրենիքի կորիճ զավակներ, ժողովուրդներ քաջ, ելե՛ք, զարթնեցե՛ք, կանգնեցե՛ք արթուն (Իս.)։

2. Խնդրանք, մեղմ հորդոր խոսակցին մի որևէ գործողության կատարելու վերաբերյալ։ Օրինակ՝ **Արի՛**, *գութան,* **վարի՛** *գութան, օրն եկել է ճաշ դառել, Առը շո՛ւտ տուր, խոփիդ ղուրբան, օրհնյալ է աստված, հորովե՛լ (ՀԹ)։* **Ների՛ր**, *ո՛վ կույս, որ հուզեցի իսաղաղ կուրծքդ կուսական (ՀԹ)։*

3. Խրախուսանք, պատվեր, հորդոր։ Օրինակ՝ —**Թռե՛ֆ**, **աճցե՛ֆ**, *իմ սիրուն ոչխարներ,— երգում էր Հասոն,—* **թռե՛ֆ**, *իմ թուխամազ գառնուկներ,* **եկե՛ֆ** *ձեր տիրոջ մոտ (ՎՓ, Լուր-Դալուր)։*

4. Խորհուրդ, խրատ, հանձնարարություն։ Օրինակ՝ **Մի հավատար** *սովերներին,* **ճենվի՛ր** *միայն քեզ վրա, Աստելու չափ* **սիրի՛ր** *մարդկանց, բայց լավություն միշտ* **արա** *(Իս.)։* **Բարի՛ գործիր**, *եթե ունես առիթ և զորություն. մեզ մեր վսեմ նախնիք այսպես ավանդեցին (ՆՋ,* **Արա գեղեցիկ***)։ Այս իմաստով հրամայականը շատ է գործածվում հատկապես ժողովրդական ասացվածքներում։ Օրինակ՝ Բարեկամի հետ* **կեր ու խում արա**, *առևտուր մի՛* **անիր**։ *Շան հետ* **ընկերացիր**, *բայց փայտը* **ձեռքիցդ մի՛ գցիր**։ *Իշխանություն* **տուր** *և* **փորձիր** *մարդու հոգին։*

Հաճախ խոսողը հրամանով, հորդորով, որևէ բան անելու թելադրանքով դիմում է ոչ թե անձի, այլ անշունչ առարկաների, բնության տարբեր երևույթների և այլն։ Այդ դեպքում վերջիններս խոսողի կողմից անձնավորվում են, դիտվում որպես խոսակից, այսպես՝ **Տնկա՛**, **համբերի՛ր**, *իմ վիրավոր սիրտ, վճիտ հայացքով աշխարհին,* **ճայի՛ր** *(Իս.)։* **Շաչեցե՛ֆ** *գլխիս, ամեհի հողմեր, դուք, մրրիկնե՛ր,* **պայթեցե՛ֆ** *գլխիս (Իս.)։*

§ 598. Քանի որ հրամայական եղանակը ցույց է տալիս խոսողի հրամանը, թելադրանքը խոսակցին՝ մի որևէ գործողություն կատարելու, ուստի այն ունենում է միայն երկրորդ դեմքի բայաձևեր (եզակի և հոգնակի)։

Ծանոթ.— *Երբ խոսողը հրամայում, հորդորում է իր հետ միասին համատեղ գործողություն կատարելու և կամ հրամանը վերաբերում է մի երրորդ անձնավորության, այդ դեպքում ժամանակակից հայերենում գործածվում են ոչ թե հրամայական եղանակի, այլ ըղձական եղանակի բայաձևերը (գնամ, թող գնա). Ընդհանրապես հրամանը, հորդորը ժամանակակից հայերենում*

արտահայտվում են ոչ միայն հրամայական եղանակի բայաձևերի միջոցով, այլ նաև հատուկ հնչերանգի և որոշ բառական միավորների օգնությամբ՝ նաև այլ եղանակների բայաձևերով. ինչպես՝ գնա՛ք, թող գնա, կգնա՛ս, պիտի գնա՛ս և այլն։ Սակայն, եթե մյուս եղանակների համար հրաման արտահայտելը երկրորդական կիրառություն է, ապա հրամայական եղանակի բայաձևերի հիմնական իմաստը հենց որևէ գործողություն կատարելու հրաման, հորդոր, պահանջ, թելադրանք դրսևորելն է։

§ 599. Հրամայական եղանակը ունի միայն մեկ ժամանակ՝ ապառնի։ Այն կարող է ցույց տալ և՛ խոսքի պահին անմիջապես հաջորդելիք գործողության (Անմիջապես ներացե՛ք), և՛ ավելի ուշ կատարվելիք գործողության պահանջ (Եկեք մեկ շաբաթ կամ մեկ ամիս հետո)։ Ըստ որում, ինչքան խոսքի պահից հեռանում է պահանջված գործողության ժամանակը, այնքան թուլանում է հրամանը։

§ 600. Այսպիսով, հրամայական եղանակը ունի միայն ապառնի ժամանակ և երկրորդ դեմքի բայաձևեր։ Այդ բայաձևերի կազմությունը հետևյալն է.

1. Ե խոնարհման պարզ բայերի և բազմապատկական ու վ սեռածանցն ունեցող բայերի հրամայական եղանակի եզակին կազմվում է ներկայի հիմքի վրա ավելացնելով իր վերջավորությունը. այսպես՝ վազ+իր, կանգն+իր, գր+իր, խմ+իր, խոս+իր, կանաչ+իր, ծաղկ+իր, ջարդ+իր, շարժ+իր, զարկ+իր, երթևեկ+իր, դրսևոր+իր, ջարդվ+իր, հանդարտվ+իր, թռչ+կոտ+իր, կոտրատ+իր և այլն։

2. Ա խոնարհման պարզ բայերի հրամայականի եզակի թիվը կազմվում է ներկայի հիմքի վրա ավելացնելով ա խոնարհիչը. այսպես՝ գն+ա, կարդ+ա, սուր+ա, աղ+ա, զղջ+ա, զգ+ա և այլն։

3. Աճ, են, ն, չ ածանցներն ունեցող բայերի հրամայականի եզակին կազմվում է անցյալի հիմքի վրա ավելացնելով իր վերջավորությունը. այսպես՝ փախ+իր, մոտեց+իր, ունեց+իր, մեծաց+իր, իջ+իր, ընկ+իր, հեռաց+իր, բարձրաց+իր և այլն։

4. Պատճառական բայերի հրամայական եղակին կազմվում է անցյալի հիմքի վրա ավելացնելով ու վերջավորությունը. այսպես՝

մոտեցր+ու, բարձրացր+ու, հանգցր+ու, իջեցր+ու, հասկացր+ու և այլն։

5. Մի շարք անցոյական անցյալի հիմք ունեցող բայերի եզակի հրամայականը համընկնում է անցյալի հիմքի հետ, չունի հատուկ վերջավորություն. այսպես՝ թո՛ղ, տե՛ս, դի՛ր, ա՛ռ, կե՛ր և այլն։

Հրամայական եղանակի հոգնակի թիվը բոլոր բայերի համար ունի նույն կազմությունը. կազմվում է բայերի անցյալի հիմքի վրա ավելացնելով եք վերջավորությունը. օրինակ՝ վազեց+եք, նստեց+եք, կանգնեց+եք, խմեց+եք, գնաց+եք, աղաց+եք, խաղաց+եք, կարդաց+եք, բարձրաց+եք, մոտեց+եք, իջ+եք, տես+եք, ընկ+եք, մոտեցր+եք, բարձրացր+եք, խաղացր+եք, կերցր+եք և այլն։

Ծանոթ.— *Խոսակցական լեզվում, ինչպես նաև գրավոր լեզվում վերջին ժամանակներս խիստ տարածվել է և խոնարհման պարզ բայերի հրամայականի հոգնակիի կազմությունը ներկայի հիմքից, որի վրա ավելանում է դարձյալ եք վերջավորությունը. այսպես՝ դր+եք, խմ+եք, վազ+եք, կանգն+եք և այլն, փոխանակ՝ գրեցեք, խմեցեք, վազեցեք, կանգնեցեք։ Այս ձևերը, որոնք համընկնում են ըղձական եղանակի ապառնի ժամանակի հոգնակի երկրորդ դեմքի բայաձևերին, մեկ-երկու տասնամյակ առաջ հանդիպում էին հազվադեպ և համարվում էին սխալ կազմություններ։ Սակայն այժմ սրանք այնքան մեծ կիրառություն ունեն, որ այլևս սխալ համարել չի կարելի։*

§ 601. Հրամայական եղանակի դրսևորման քերականական միջոց է նաև հատուկ հրամայական հնչերանգը, որը բանավոր խոսքում արտահայտվում է բայի վերջին վանկի հատուկ շեշտված արտասանությամբ, իսկ գրավոր խոսքում՝ շեշտի միջոցով։ Օրինակ՝ գրեցի՛ք, վազի՛ր, խոսի՛ր, կե՛ր, մոտեցի՛ր, խմեցրո՛ւ և այլն։

§ 602. Հրամայական եղանակի ժխտական բայաձևերը կոչվում են արգելական հրամայական։ Արգելական հրամայականի եղակին կազմվում է հրամայականի դրական բայաձևերի վրա ավելացնելով մի ժխտական կամ արգելական մասնիկը։ Օրինակ՝ վազի՛ր—մի՛ վազիր, վերցրո՛ւ—մի՛ վերցրու, կե՛ր—մի՛ կեր, գնա՛—մի՛ գնա, պահի՛ր—մի՛ պահիր, փախի՛ր—մի՛ փախիր։

Ան, են, ցն ածանցներն ունեցող բայերի արգելական հրամայականը կազմվում է նաև ներկայի հիմքին համապատասխանաբար ավելացնելով ա կամ ի. այսպես՝ մի՛ հեռանա, մի՛ մոռանա, մի՛ վերցնի, մի՛ վախեցնի, մի՛ մտածենա, մի՛ վախենա և այլն։ Ա խոնարհման ածանցավոր բայերի մոտ երբեմն ավելանում է նաև ր, ինչպես՝ մի՛ վախենար, մի՛ հեռանար, մի՛ մոռենար և այլն։

§ 603. Արգելական հրամայականի հոգնակին կազմվում է ներկայի հիմքի վրա ավելացնելով եք (ե խոնարհման դեպքում) և ած (ա խոնարհման դեպքում) մասնիկները. այսպես՝ մի՛ գրեք, մի՛ վազեք, մի՛ խմեք, մի՛ չրեք, մի՛ կարդաք, մի՛ մոռեցած, մի՛ հեռանաք և այլն։

Վերջին շրջանում տարածվել է նաև հոգնակի արգելական հրամայականի կազմությունը հրամայականի դրական հոգնակի ձևերի վրա ավելացնելով մի ժխտական մասնիկը. այսպես՝ կարդացե՛ք—մի՛ կարդացեք, մոռեցե՛ք—մի՛ մոռեցեք, հեռացե՛ք—մի՛ հեռացեք, գնացե՛ք—մի՛ գնացեք, իջե՛ք—մի՛ իջեք, փախե՛ք—մի՛ փախեք, վերցրե՛ք—մի՛ վերցրեք և այլն։

Սահոք.— ժողովրդական-խոսակցական լեզվում տարածված է և թափանցում է գրականության մեջ հոգնակի արգելական հրամայականի կազմությունը ժխտական դերբայով և մի արգելականի վրա f հոգնակերտ մասնիկն ավելացնելու միջոցով. այսպես՝ մի՛ք գրի, մի՛ք կարդա, մի՛ք վազի, մի՛ք գնա, մի՛ք վերցնի, մի՛ք իջեցնի։

§ 604. Հրամայական եղանակի ժխտական ձևերում շեշտվում է ոչ թե բայը, այլ մի արգելականը (մի՛ վազիր, մի՛ խմիր, մի՛ գրեք և այլն)։ Իսկ երբ մի-ն շեշտ չի կրում, ունենում է ոչ թե ժխտական իմաստ, այլ հրամանը, պահանջը, հորդորը մեղմելու իմաստ. այսպես՝ Մի նայի՛ր, Հասմիկ, վրան նախշեր էլ կան (Վ. Սևանի ափին)։ Մի տե՛ս, պապի, տե՛ս ինչ են անում,—հրճվանքով կանչեց Հասմիկը (Ն. տ.)։ Բերված օրինակներում մի նայի՛ր և մի տե՛ս ձևերը արգելական հրամայական չեն։ Մի-ն այստեղ հանդես է գալիս որպես եղանակավորող մասնիկ և մեղմում է

բայով արտահայտված հրամանը։ Արգելական մի մասնիկը, որպես կանոն, միշտ դրվում է բայից անմիջապես առաջ, իսկ եղանակավորող մի մասնիկը ունի համեմատաբար ազատ շարադասություն, այն կարող է դրվել նաև բայի լրացումներից առաջ. այսպես՝ —Մի ասլանի ճտերին իմա՛ց տուր. գնանք էդ ավազակին բռնենք,— պատվիրեց պապը (ՎԱ, Սևանի ափին)։

§ 605. Ինչպես ասվեց, հրամայական եղանակը արտահայտում է մի որևէ գործողություն կատարելու հրաման, հորդոր, կոչ, պահանջ, երբեմն նաև խնդրանք՝ ուղղված խոսակցին։ Բացի իր այս հիմնական կիրառություններից, հրամայական եղանակը ունի նաև երկրորդական կիրառություններ, որտեղ այն կորցնում է իր հիմնական եղանակային առանձնահատկությունը։ Այսպես՝ գործածվելով պայմանի անշաղկապ նախադասությունների մեջ՝ հրամայական եղանակը ձեռք է բերում ըղձականի ապառնու նշանակություն և ցույց է տալիս այնպիսի գործողություն, որի կատարման դեպքում կկատարվի մեկ այլ գործողություն ևս կամ հանդես կգա մի երևույթ։ Այս կիրառությամբ հրամայական եղանակը կորցնում է նաև իր դիմային կոնկրետ իմաստը և ստանում է ընդհանուր-անորոշ նշանակություն։ Օրինակ՝ Մտի՛ր ակումբը հիմա, մտի՛ր թատրոնն ու կաֆեն՝ հազար արքա ու Արա կհանդիպես ժպտադեմ (ԵՉ)։ Ամառն ինչքա՛ն կարաս կա Այգեձորում... իսկ հիմա՝ նոյեմբերին շրջի՛ր գյուղը՝ ոչ մի կարասի չես հանդիպի (ՎԱ, Հովազաձորի գերիները)։ Աշխարհում էս հողի պես հող չկա. մենակ թե ջուր տո՛ւր նրան. դիմացը բուռեբուռ ոսկի կստանաս (Ա. Սահ., Ծարավը)։

§ 606. Երբեմն հրամայական եղանակի բայաձևերը գործածվում են ցույց տալու համար որևէ գործողության իրագործման անհնարինությունը կամ խիստ դժվարին լինելը։ Այս դեպքում նրանք մեծ մասամբ հանդես են գալիս գալ և գնալ բայերի հրամայական ձևերի զուգադրությամբ։ Օրինակ՝ Դե արի՛ ու էս տեսակ մարդկանց հետ բրիգադում համերաշխություն հաստատիր,— բողոքեց բրիգադիրը (ՆՉ, Հացավան)։ Դե հիմա գնա՛ ու գտիր նրան իր հայրենի անծայր անտառներում (Իս.)։ Այս նախադասություններում արի ու հաստատիր, գնա ու գտիր ձևերը նշանակում են՝ հնարավոր չէ հաստատել, հնարավոր չէ գտնել։

§ 607. Հրամայական եղանակի բայաձևերը երբեմն կիրառվում են սահմանական ներկայի նշանակությամբ՝ ցույց տալով սովորաբար կրկնվող գործողություններ, սակայն ունեն այն իմաստային առանձնահատկությունը, որ ընդգծում են կրկնվող գործողությունների կատարման դժվարությունը, երբեմն նաև խոսողի կամքին հակառակ լինելը, խոսողի դժգոհությունը: Այս դեպքում ևս հրամայական բայաձևերի հետ հանդես են գալիս գնալ և գալ բայերի հրամայական բայաձևերը, որոնք այս և վերևի կիրառություններում կորցրել են իրենց նյութական իմաստը՝ վերածվելով եղանակավորող բառերի: Օրինակ՝ Մանր երեխանց տեր, աղչկակոխ եղած, հիմի առի սրանց շորերը կարիր, կարկատիր, լվա, թափ տուր, հագցրու, տունը սրբիր... (ՂԱ, Երկու քույր): Կարծում ես իմ գործը հե՞շտ է: Ութ ժամ աշխատելուց հետո գնա սենյակ մաքրիր, աման լվա, ճաշ եփիր... խիստ հոգնել եմ:

Հրամայական եղանակի երկրորդական վերլուծական ձևերը

§ 608. Քանի որ հրամայական եղանակն ունի միայն մեկ ժամանակ՝ ապառնի, հետևաբար այն ունի երկրորդական վերլուծական միայն երեք ժամանակ՝ կազմված խոնարհվող բայի զուգընթացական, հարակատար և ապառնի դերբայներով ու լինել բայի հրամայական եղանակի բայաձևերով: Այս ժամանակները համապատասխանաբար ունենում են երեք կերպ՝ կատարվող, կատարված և կատարելի: Դրանք են՝

1. Հրամայական եղանակի ապառնի անկատար.— Այս վերլուծական ժամանակը կազմվում է խոնարհվող բայի զուգընթացական դերբայի և լինել բայի հրամայական եղանակի բայաձևերի հարադրությամբ: Այսպես՝

Ե խոնարհում	Ա խոնարհում
վազելի՛ս եղիր	*գնալի՛ս եղիր*
վազելի՛ս եղեք	*գնալի՛ս եղեք*

Այս ձևերը, որոնք հազվադեպ են գործածվում, ցույց են տալիս խոսողի պահանջը խոսակցից որևէ գործողություն մի ա-

պատնի ժամանակակետի հարաբերությամբ կատարելու և կատարման ընթացքի մեջ լինելու վերաբերյալ։ Օրինակ՝ Վաղը դու անպայման աշխատելիս եղիր։

2. Հրամայականի ապառնի ճարակատար— Այս բաղադրյալ ժամանակը կազմվում է խոնարհվող բայի հարակատար դերբայի և լինել բայի հրամայական բայաձևերի հարադրությամբ։ Այսպես՝

Ե խոնարհում	Ա. խոնարհում
վազա՛ծ եղիր	*գնացա՛ծ եղիր*
վազա՛ծ եղեք	*գնացա՛ծ եղեք*

Այս ձևերը ցույց են տալիս խոսողի պահանջը խոսակցից՝ որևէ գործողության մի ապառնի ժամանակակետի հարաբերությամբ կատարած-ավարտած լինելու վերաբերյալ։ Օրինակ՝ Վաղը ժամը հինգին գործերդ վերջացրած եղիր, որ կարողանանք համերգ գնալ։ Մինչև երեկո դասերդ սովորած եղիր։ Այս ժամանակը նախորդի համեմատությամբ ավելի գործածական է։ Հատկապես տարածված է իմանալ բայի այս ձևը (իմացած եղիր, իմացած եղեք), որն ունի հատուկ ոճական կիրառություն և ցույց է տալիս գործողության հարաբերումը ոչ թե ապառնի ժամանակակետի հետ, այլ ընդհանրապես և իմաստով հավասարարժեք է իմացիր, իմացեք գլխավոր բայաձևերին։ Օրինակ՝ Գնա, բայց իմացած եղիր, որ այլևս այստեղ գալ չես կարող։

3. Հրամայականի ապառնիի կատարելի.— Այս ժամանակը կազմվում է խոնարհվող բայի ապառնի դերբայով և լինել բայի հրամայական բայաձևերով. արտահայտում է խոսողի պահանջը խոսակցից որևէ գործողություն մի ապառնի ժամանակակետից հետո կատարելու վերաբերյալ։ Այսպես՝

Ե խոնարհում	Ա. խոնարհում
վազելու եղիր	*գնալու եղիր*
վազելու եղեք	*գնալու եղեք*

Այս բայաձևերը ևս ժամանակակից հայերենում գործածական չեն։

ԽՈՆԱՐՀՄԱՆ ՀԱՐԱՑՈՒՅՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳԻՐԸ

§ 609. Բայի եղանակների և ժամանակների նկարագրությունից հետո կարելի է տալ ժամանակակից հայերենի խոնարհման ընդհանուր պատկերը։

Խոսքի մեջ հանդես գալով իր հիմնական պաշտոնով՝ ստորոգման դերով, բայերը ենթարկվում են փոփոխության ըստ եղանակի, ժամանակի, թվի և դեմքի։ Այդ փոփոխությունները կատարվում են խիստ օրինաչափ կերպով, ունեն համակարգային բնույթ։

Բայերի փոփոխությունը ըստ եղանակի, ժամանակի, թվի և դեմքի կազմում է մի կուռ համակարգ և կոչվում է խոնարհում։

§ 610. Խոնարհման բնույթը անմիջականորեն կապված է բայերի կազմության հետ։ Ինչպես հայտնի է, ժամանակակից հայերենի բայերը կազմվում են եղ կամ ալ մասնիկների միջոցով, որոնց ե և ա բաղադրիչները կոչվում են լծորդներ կամ խոնարհիչներ։ Սրանք երևան են գալիս բայերի խոնարհված ձևերի մեծ մասում և որոշում են խոնարհման բնույթը։

Ըստ կազմության և խոնարհման բնույթի ժամանակակից հայերենի բայերը բաժանվում են երկու մեծ խմբի՝ ե կամ առաջին խոնարհման բայեր և ա կամ երկրորդ խոնարհման բայեր։

§ 611. Ինչպես ասվել է, բայերը ըստ կազմության լինում են պարզ և ածանցավոր։ Բայածանցներից ե, չ, ան, են, ցե ածանցները կատարում են ոչ միայն բայակազմական և քերականական դեր, այլ նաև օրինաչափորեն փոփոխություններ են մտցնում խոնարհման համակարգի մեջ։ Պարզ և ածանցավոր բայերի խոնարհման տարբերությունները երևան են գալիս հիմնականում անցյալի հիմքում և դրանից կազմված բայաձևերում։

Այսպիսով, ե և ա խոնարհման բայերը իրենց հերթին, ըստ կազմության և խոնարհման առանձնահատկությունների, բաժանվում են հետևյալ ենթախմբերի.

1. ե խոնարհում —ա) պարզ բայեր և կրավորական ու բազմապատկական բայեր, բ) ե, չ ածանց ունեցող բայեր, գ) ցե պատճառական ածանց ունեցող բայեր։

2. Ա խոնարհում —ա) պարզ բայեր, բ) ան, են ածանց ունեցող բայեր։

Այժմ տանք խոնարհման յուրաքանչյուր խմբի ընդհանուր նկարագիրը։

ե ԽՈՆԱՐՀՈՒՄ

Պարզ բայեր և կրավորական ու բազմապատկական ածանց ունեցող բայեր

§ 612. Ե խոնարհման պարզ բայերը և կրավորական ու բազմապատկական ածանց ունեցող բայերը խոնարհվում են նույն ձևով։

Այս բայերի ներկայի հիմքից են կազմվում բոլոր դերբայները, հետևաբար՝ համապատասխանաբար սահմանական եղանակի բոլոր վերլուծական ժամանակները և ըղձական, ենթադրական ու հարկադրական եղանակների բայաձևերը՝ համապատասխան վերջավորությունների հավելումով։ Սրանց անցյալի հիմքը ցոյական է (գր+եց, չարով+եց, կոտրատ+եց)։ Անցյալի հիմքից են կազմվում միայն սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի բայաձևերը և հրամայական եղանակի հոգնակին։

Ն և չ ածանց ունեցող բայեր

§ 613. Ն և չ ածանց ունեցող բայերը ժամանակակից հայերենում փոքր թիվ են կազմում և ունեն իրենց խոնարհման յուրահատկությունները, որով տարբերվում են ե խոնարհման պարզ բայերի խոնարհումից։ Այս բայերի անցյալի հիմքը անցյալական է, այսինքն՝ չունի ց հիմքակազմիչ մասնիկը։ Բացի դրանից ն և չ ածանցները անցյալի հիմքում ընկնում են, որով և անցյալի հիմքը տարբերակվում է ներկայի հիմքից։ Օրինակ՝ փախչել—փախչ-(ներկայի հիմք)—փախ-(անցյալի հիմք), ընկնել—ընկն—ընկ-, ելնել—ելն—ել-, թռչել—թռչ—թռ- և այլն։

Անցյալի հիմքից են կազմվում անցյալ կատարյալի բայաձևերը՝ ա, ար, ավ, աճ, աք, աղ վերջավորությունների հավելումով և հրամայական եղանակի բայաձևերը՝ համապատասխան վերջավորությունների հավելումով (իր, եք)։ Անցյալի հիմքից են

կազմվում նաև վաղակատար և հարակատար դերբայները, որոնցից առաջինը կազմում է սահմանական եղանակի վաղակատար և անցյալի վաղակատար բաղադրյալ ժամանակները։

Ն և չ ածանց ունեցող բայերի խոնարհման մյուս ձևերը կազմվում են ներկայի հիմքից։

Սանոթ.— Ն և չ ածանց ունեցող մի շարք բայերում (զարթնել, զբոսնել, խրտնել, ճաոնել, ոստնել, կաղչել, մարտնչել և այլն) այդ ածանցները քարացել են և ձուլվել բայարմատին, որի հետևանքով դրանք պահպանվում են խոնարհման բոլոր ձևերում։ Այս բայերը խոնարհվում են ե խոնարհման պարզ բայերի նման, այսինքն՝ ունեն ցոյական անցյալի հիմք, որից կազմվում են միայն սահմանական եղանակի անցյալ կատարյալի բայաձևերը և հրամայականի հոգնակին։

Պատճառական բայեր

§ 614. Պատճառական բայերը ևս հիմնականում խոնարհվելով են խոնարհման պարզ բայերի նման, սրանցից տարբերվում են միայն անցյալի հիմքի և դրանից կազմված ժամանակների կազմությամբ։ Պատճառական բայերի անցյալի հիմքը բեական է, այսինքն՝ ունի ր անցյալի հիմքակազմիչ մասնիկը, որը դրվում է ցն ածանցի ն բաղադրիչի փոխարեն. այսպես՝ վազեցնել—վազեցրն- (ներկայի հիմք)—վազեցր- (անցյալի հիմք), խմեցնել—խմեցն-խմեցր-, բարձրացնել—բարձրացն-բարձրացր- և այլն։

Պատճառական բայերի ներկայի հիմքից են կազմվում անորոշ, անկատար, ապառնի, ենթակայական, ժխտական և դուրսթացական դերբայները, ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակների բայաձևերը։

Անցյալի հիմքից կազմվում են սահմանական եղանակի անցյալ կատարյալի բայաձևերը ի, իր, եց, իմ, իք, ին վերջավորությունների և հրամայական եղանակի բայաձևերը՝ ու և եք վերջավորությունների հավելումով։ Անցյալի հիմքից են կազմվում նաև պատճառական բայերի վաղակատար և հարակատար դերբայները, որոնցից առաջինով բաղադրվում են սահմանական եղանա-

կի վաղակատար և անցյալի վաղակատար վերլուծական ժամանակները։

Ձև ածանց ունեցող բայերի նմանակությամբ այսպես են խոնարհվում նաև լցնել, հարցնել, դարձնել բայերը։

Ա. ԽՈՆԱՐՀՈՒՄ

Պարզ բայեր

§ 615. Ա խոնարհման պարզ բայերի խոնարհված ձևերը ևս կազմվում են ներկայի և անցյալի հիմքերից։ Ներկայի հիմքից են կազմվում անորոշ, անկատար, ապառնի, ժխտական և զուգընթացական դերբայները (խաղ-ալ, խաղ-ում, խաղ-ալու, խաղ-ա, խաղ-ալիս), ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակների բայաձևերը, հրամայական եղանակի եզակին։

Անցյալի հիմքը ցոյական է (խաղալ–խաղ–խաղաց, աղալ–աղ–աղաց և այլն)։ Սրանից կազմվում են սահմանական եղանակի անցյալ կատարյալի բայաձևերը, հրամայական եղանակի հոգնակին և վաղակատար, հարակատար, ենթակայական դերբայները։

Ան և են ածանց ունեցող բայեր

§ 616. Ան և են ածանց ունեցող ա խոնարհման բայերի խոնարհումը տարբերվում է ա խոնարհման պարզ բայերի խոնարհումից անցյալի հիմքի և նրանից բաղադրված ժամանակների կազմությամբ։ Այս բայերի անցյալի հիմքը ցոյական է, ըստ որում ց հիմքակազմիչը դրվում է ան և են ածանցների ն բազդրիչի փոխարեն. այսպես՝ մոտենալ—մոտեն (ներկայի հիմք), մոտեց (անցյալի հիմք), բարձրանալ—բարձրան–բարձրաց–, հասկանալ—հասկան–հասկաց–, պարծենալ—պարծեն–պարծեց– և այլն։

Ներկայի հիմքից են կազմվում այս բայերի անորոշ, անկատար, ապառնի, ժխտական, զուգընթացական դերբայները և ըղձական, ենթադրական, հարկադրական եղանակների բայաձևերը՝ համապատասխան վերջավորությունների հավելումով։

Անցյալի հիմքից են կազմվում սահմանական եղանակի անցյալ կատարյալի բայաձևերը ա, ար, ավ, աՆք, աք, ան վերջավորությունների հավելումով (ա խոնարհման պարզ բայերի անցյալ

կատարյալի վերջավորություններն են՝ ի, իր, Ø, իճ, իք, իճ), հրամայական եղանակի բայաձևերը և վաղակատար, հարակատար, ենթակայական դերբայները։

ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

§ 617. Ժամանակակից հայերենում կան մի շարք բայեր, որոնք շեղվում են խոնարհման վերը նկարագրված ընդհանուր կարգից։ Այդ բայերը կոչվում են անկանոն բայեր։ Անկանոն բայերը ժամանակակից հայերենում հետևյալներն են՝ գալ, լալ, տալ, ասել, գարկել, բերել, ուտել, բանալ, բառնալ, դառնալ, լվանալ, կենալ, անել, դնել, տանել, առնել, ելնել, թողնել, տեսնել, լինել։ *Ինչպես երևում է թվարկումից, ժամանակակից հայերենում կան կազմությամբ պարզ անկանոն բայեր, որոնք շեղվում են պարզ բայերի կանոնավոր խոնարհումից և կազմությամբ ածանցավոր անկանոն բայեր, որոնք շեղվում են ածանցավոր բայերի խոնարհումից։ Շեղումները և անկանոնությունները երևան են գալիս հիմնականում անցյալի հիմքից կազմված բայաձևերում և հրամայական եղանակում։ Ներկայի հիմքից կազմված բայաձևերում անկանոնություն ունեն միայն գալ, լալ, տալ բայերը, որոնք անկատար դերբայ չունեն։ Սրանց ներկա և անցյալի անկատար ժամանակները կազմվում են զուգընթացական դերբայի և օժանդակ բայի հարադրությամբ. այսպես՝* գալիս եմ, լալիս եմ, տալիս եմ, գալիս էի, լալիս էի, տալիս էի։

§ 618. Այժմ տանք վերոհիշյալ բայերից յուրաքանչյուրի խոնարհման առանձնահատկությունները։*

Ծանոթ.— *Կրկնությունից խուսափելու համար տալիս ենք միայն այն բայաձևերը, որոնք շեղվում են խոնարհման ընդհանուր կարգից։*

ԳԱԼ— *Ինչպես ասվեց, այս բայի ներկա և անցյալի անկատար ժամանակները կազմվում են ոչ թե անկատար դերբայից, այլ զուգընթացական դերբայից* (գալիս եմ, գալիս էի)։ *Կատարյալի հիմքը այլ արմատ է՝* եկ, *որից կազմվում են վաղակատար, հարակատար, ենթակայական դերբայները* (եկել, եկած, եկող), *սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակը և հրամայական եղանակի բայաձևերը։*

* Համմ. Հ. Բարսեղյան, նշվ. աշխ.։

Սահմանական եղանակի ներկա — գալիս եմ, գալիս ես, գալիս է, գալիս ենք, գալիս եք, գալիս են.

Անցյալի անկատար — գալիս էի, գալիս էիր, գալիս էր, գալիս էինք, գալիս էիք, գալիս էին.

Վաղակատար — եկել եմ, եկել ես, եկել է, եկել ենք, եկել եք, եկել են.

Անցյալի վաղակատար — եկել էի, եկել էիր, եկել էր, եկել էինք, եկել էիք, եկել էին.

Անցյալ կատարյալ — եկա, եկար, եկավ, եկանք, եկաք, եկան.

Հրամայական — ե՛կ, եկեք, մի՛ գար, մի՛ գաք (մի՛ եկ, մի՛ եկեք); Հրամայական եղանակի համար խիստ տարածված է նաև արի՛ ժողովրդական-խոսակցական ձևը:

ԼԱԼ — *Անկատար դերբայ չունի: Սահմանական եղանակի ներկա և անցյալի անկատար ժամանակները բաղադրվում են զուգընթացական դերբայից: Անցյալի հիմքն է լաց, որից կազմվում են վաղակատար, հարակատար և ենթակայական դերբայները՝ լացել, լացած, լացող, անցյալ կատարյալ ժամանակը և հրամայական եղանակի մեկ տարբերակը:*

Սահմանական եղանակի ներկա — լալիս եմ, լալիս ես, լալիս է, լալիս ենք, լալիս եք, լալիս են.

Անցյալի անկատար — լալիս էի, էիր, էր...

Վաղակատար — լացել եմ, ես, է...

Անցյալի վաղակատար — լացել էի, էիր, էր...

Անցյալ կատարյալ — լացեցի, լացեցիր, լացեց, լացեցինք, լացեցիք, լացեցին: Գործածվում են նաև լացի, լացիր, լացեց, լացինք, լացիք, լացին ձևերը:

Հրամայական եղանակ — լա՛ց, լացե՛ք, մի՛ լար, մի՛ լացեք:

Ծանոթ.— *Լալ բայի անցյալ կատարյալի հիմքից կազմված ձևերի փոխարեն շատ հաճախ գործածվում են լաց լինել հարադրության խոնարհված բայաձևերը (լաց եմ եղել, լաց եղա, լաց եղիր և այլն):*

ՏԱԼ — *Այս բայի ներկա և անցյալի անկատար ժամանակները ևս կազմվում են զուգընթացական դերբայից: Ունի անցյալի երկու հիմք՝ ցոյական և անցոյական—տու||տավեց: Տու հիմքից ու-վ հնչյունափոխությամբ կազմվում են վաղակատար, հարակատար և ենթակայական դերբայները՝ տվել, տված, տվող, անցյալ կատար-*

յալ ժամանակի մեկ տարբերակը և հրամայական եղանակը։ **Տք**— *վեց հիմքով է կազմվում անցյալ կատարյալ ժամանակի մյուս տարբերակը։*

Սահմանական եղանակի ներկա — տալիս եմ, ես, է...

Անցյալի անկատար — տալիս էի, էիր, էր...

Վաղակատար — տվել եմ, ես, է...

Անցյալի վաղակատար — տվել էի, էիր, էր...

Անցյալ կատարյալ — տվեցի, տվեցիր, տվեց, տվեցինք, տվեցիք, տվեցին. նաև՝ տվի, տվիր, տվեց, տվինք, տվիք, տվին (վերջին ձևերը շատ են գործածվում հատկապես խոսակցական լեզվում)։

Հրամայական եղանակ — տո՛ւր, տվե՛ք, մի՛ տուր, մի՛ տվեք։

ԱՍԵԼ *— Այս բայը հիմնականում խոնարհվում է ե խոնարհման պարզ բայերի նման։ Անկանոնություն է երևան գալիս միայն անցյալի հիմքում, որանից կազմված անցյալ կատարյալ ժամանակում և հրամայական եղանակում։*

Անցյալի հիմքն է ասաց, անցյալ կատարյալ ժամանակը՝ ասացի, ասացիր, ասաց, ասացինք, ասացիք, ասացին։ Սակայն վերջին շրջանում խոսակցական լեզվում խիստ տարածվել և գրաավոր խոսքի մեջ են թափանցում ասեցի, ասեցիր, ասեց, ասեցինք, ասեցիք, ասեցին *կանոնավոր ձևերը։ Երբեմն հանդիպում են նաև* ասի, ասիր, ասավ, ասինք, ասիք, ասին *անցոյական հիմքից կազմված ձևերը։*

Հրամայական եղանակն է՝ ասա՛, ասացե՛ք *(ասե՛ք),* մի՛ ասա *(երբեմն նաև՝ մի՛ ասիր),* մի՛ ասեք *(մի՛ք ասի)։*

ԲԵՐԵԼ *— Այս բայը ևս ունի անցյալի երկու հիմք՝* բեր *և* բերեց, *որոնցից կազմվում են անցյալ կատարյալ ժամանակի դուգահեռ ձևերը։ Դրանք են՝* բերեցի, բերեցիր, բերեց, բերեցինք, բերեցիք, բերեցին *և ոչ գրական* բերի, բերիր, բերեց, բերինք, բերիք, բերին։

Հրամայական եղանակն է՝ բե՛ր, բերե՛ք, մի՛ բեր, մի՛ բերեք։

ՋԱՐԿԵԼ *— Ունի անցյալի երկու հիմք՝* զարկ *և* զարկեց, *որոնցից կազմվում են անցյալ կատարյալ ժամանակի դուգահեռ ձևերը՝* զարկեցի, զարկեցիր, զարկեց, զարկեցինք, զարկեցիք, զարկեցին *և* զարկի, զարկիր, զարկեց, զարկինք, զարկիք, զարկին *(վերջին ձևերը հանձնարարելի չեն)։*

Հրամայական եղանակն է զարկի՛ր, զարկեցե՛ք, մի՛ զարկիր

(նաև՝ մի՛ զարկ), մի՛ զարկեք: *Գործածվում են նաև* զա՛րկ, զարկե՛ք *ձևերը:*

ՈՒՏԵԼ — *Անցյալի հիմքը փոխվում է՝* կեր, *որից կազմվում են վաղակատար, հարակատար դերբայները* (կերել, կերած), *անցյալ կատարյալ ժամանակը՝* կերա, կերար, կերավ, կերաճ, կերամ, կերան *և հրամայական եղանակը՝* կե՛ր, կերե՛ք, մի՛ կեր, մի՛ կերեք: *Արգելական հրամայականի համար գործածվում են նաև* մի՛ ուտիր, մի՛ ուտեք *կանոնավոր ձևերը:*

ԲԱՆԱԼ — *Անցյալի հիմքն է* բաց, *որից կազմվում են վաղակատար, հարակատար և ենթակայական դերբայները* (բացել, բացած, բացող), *անցյալ կատարյալ ժամանակը՝* բացի, բացիր, բացեց, բացինք, բացիք, բացին *և հրամայականը՝* բա՛ց, բացե՛ք, մի՛ բաց, մի՛ բացեք: *Արգելական հրամայականը կազմվում է նաև ներկայի հիմքից՝* մի՛ բանա(ր), մի՛ բանաք: *Բանալ բայի անցյալի հիմքից կազմված ձևերի փոխարեն հաճախ գործածվում են* բաց անել *հարադրության խոնարհված ձևերը (բաց արի, բաց արիր, բաց արա, բաց արեք և այլն):*

Ծանոթ.— *Ժամանակակից հայերենում* բանալ *բային զուգահեռ կազմվել է* բացել *բայը, որը խոնարհվում է կանոնավոր կերպով:*

ԲԱՌՆԱԼ — *Անցյալի հիմքն է* բարձ, *որից կազմվում են վաղակատար, հարակատար, ենթակայական դերբայները* (բարձել, բարձած, բարձող), *հրամայական եղանակի դրական ձևերը՝* բարձի՛ր, բարձե՛ք: *Արգելական հրամայականն է՝* մի՛ բառնա, մի՛ բառնաք, *նաև՝* մի՛ բարձիր, մի՛ բարձեք:

Բառնալ *բային զուգահեռ ևս ժամանակակից հայերենում* բարձ *անցյալի հիմքից կազմվել է* բարձել *կանոնավոր խոնարհում ունեցող բայը, որի անցյալի ձևերը՝* բարձեցի, բարձեցիր, բարձեց, բարձեցինք, բարձեցիք, բարձեցին *արդեն դուրս են մղել գործածությունից* բառնալ *բայի անցյալ կատարյալի ձևերը* (բարձա, բարձար *և այլն):*

ԴԱՌՆԱԼ — *Այս բայի անցյալի հիմքում վերականգնվում է արմատի* ձ *բաղաձայնը՝* դարձ: *Անցյալի հիմքից են կազմվում վաղակատար, հարակատար և ենթակայական դերբայները* (դարձել, դարձած, դարձող), *անցյալ կատարյալը՝* դարձա, դարձար, դար-

ձավ, դարձաճ, դարձաք, դարձաճ, *հրամայականը՝* դարձի՛ր, դարձե՛ք, մի՛ դարձիր, մի՛ դարձեք *(նաև՝* մի՛ դառնա, մի՛ դառնաք):

Խոսակցական լեզվում գործածական են նաև դառ հիմքից կազմված ձևերը՝ դառել, դառած, դառող, դառա, դառար, դառավ, դառաճ, դառաք, դառաճ, դառի՛ր, դառե՛ք, մի՛ դառիր:

ԼՎԱՆԱԼ — *Այս բայի անկանոնությունը երևան է գալիս անցյալ կատարյալ ժամանակում, որը կազմվում է ցոյական անցյալի հիմքի վրա ավելացնելով ոչ թե* ա, ար, ավ, աճ, աք, աճ *վերջավորությունները, ինչպես* աճ *ածանցով կանոնավոր բայերի խոնարհմանն է հատուկ, այլ ավելացնելով* ա *խոնարհման պարզ բայերին հատուկ վերջավորությունները՝* ի, իր, 0, իճ, իք, իճ: *Այսպես՝* լվացի, լվացիր, լվաց, լվացինք, լվացիք, լվացին: *Հրամայական եղանակն է՝* լվա՛, լվացե՛ք, մի՛ լվանա, մի՛ լվանաք (մի՛ լվա, մի՛ լվացեք): *Ինչպես երևում է, կանոնավոր խոնարհումից շեղվում է նաև այս բայի հրամայական եղանակի եզակին:*

Ծանոթ.— Լվանալ *բայի խոնարհման շեղումը կանոնավոր խոնարհումից պայմանավորված է լվալ ածանցազուրկ զուգահեռ ձևի առկայությամբ:*

ԿԵՆԱԼ — *Գործածվում է հիմնականում* վեր կենալ *հարադրության մեջ: Անցյալի հիմքն է* կա՛ց, *որից կազմվում են* վեր կացել, վեր կացած, վեր կացող *դերբայները, անցյալ կատարյալ ժամանակը՝* վեր կացա, կացար, կացավ, կացանք, կացաք, կացան, *հրամայականը՝* վե՛ր կաց, վե՛ր կացեք, մի՛ վեր կաց, մի՛ վեր կացեք *(նաև՝* մի՛ վեր կենա, մի՛ վեր կենաք):

ԱՆԵԼ— *Անցյալի հիմքն է* ար, *որից կազմվում են վաղակատար և հարակատար դերբայները՝* արել, արած, *անցյալ կատարյալ ժամանակը՝* արեցի, արեցիր, արեց, արեցինք, արեցիք, արեցին *և հրամայական եղանակը՝* արա՛, արե՛ք: *Արգելական հրամայականն է* մի՛ անիր, մի՛ անեք *(նաև՝* մի՛ արա, մի՛ արեք): *Անցյալ կատարյալ ժամանակի համար խոսակցական լեզվում գործածվում են նաև* արի, արիր, արավ (արեց), արինք, արիք, արին *ձևերը:*

ԴՆԵԼ — *Անցյալի հիմքն է* դիր, *վաղակատար և հարակատար դերբայները՝* դրել, դրած, *անցյալ կատարյալ ժամանակը՝* դրեցի, դրեցիր, դրեց, դրեցինք, դրեցիք, դրեցին *(գործածական են նաև*

դրի, դրիր, դրեց, դրինք, դրիք, դրին ձևերը), հրամայական եղանակը՝ դի՛ր, դրե՛ք, մի՛ դնիր, մի՛ դրեք (նաև մի՛ դիր, մի՛ դրեք):

ՏԱՆԵԼ — *Անցյալի հիմքն է* տար, *վաղակատար, հարակատար դերբայները՝* տարել, տարած, *անցյալ կատարյալ ժամանակը՝* տարա, տարար, տարավ, տարանք, տարաք, տարան, *հրամայական եղանակը՝* տա՛ր, տարե՛ք, մի՛ տար, մի՛ տարեք (նաև՝ մի՛ տանիր, մի՛ տանեք):

ԹՈՂՆԵԼ — *Այս բայը ունի անցյալի երկու հիմք՝* թող||թողեց: *Կանոնավոր խոնարհումից շեղվում են անցյալ կատարյալ ժամանակը և հրամայականը:*

Անցյալ կատարյալ ժամանակ — թողեցի, թողեցիր, թողեց, թողե՛ցինք՝ թողեցիք, թողեցին: *Խոսակցական լեզվում գործածվում են նաև* թողի, թողիր, թողեց, թողինք, թողիք, թողին *ձևերը:*

Հրամայական եղանակ — թո՛ղ, թողե՛ք, մի՛ թող, մի՛ թողեք (նաև՝ մի՛ թողնիր, մի՛ թողնեք):

ԼԻՆԵԼ — *Այս բայի անցյալի հիմքն է* եղ, *որից կազմվում են վաղակատար, հարակատար և ենթակայական դերբայները՝* եղել, եղած, եղող, *անցյալ կատարյալ ժամանակը՝* եղա, եղար, եղավ, եղանք, եղաք, եղան, *հրամայականը՝* եղի՛ր, եղե՛ք, մի՛ եղիր, մի՛ եղեք (նաև՝ մի՛ լինիր, մի՛ լինեք):

ԱՌՆԵԼ, ԵԼՆԵԼ, ՏԵՍՆԵԼ — *Այս բայերը շեղվում են կանոնավոր խոնարհումից միայն հրամայական եղանակում: Սրանց հրամայական եղանակի եզակին ուղղակի անցյալի հիմքն է, առանց որևէ վերջավորության, այն է՝* ա՛ռ, ե՛լ (նաև՝ ելի՛ր կանոնավոր ձևը), տե՛ս: *Հոգնակին կազմվում է կանոնավոր ձևով՝* առե՛ք, ելե՛ք, տեսե՛ք: *Սրանց արգելական հրամայականը կազմվում է երկու ձևով՝ 1. դրականի վրա ավելացնելով մի արգելականը՝* մի՛ առ, մի՛ առեք, մի՛ ել, մի՛ ելեք, մի՛ տես, մի՛ տեսեք *և 2. ներկայի հիմքի վրա ավելացնելով իր և եք վերջավորությունները (դարձյալ մի արգելականի հետ)՝* մի՛ առնիր, մի՛ առնեք, մի՛ ելնիր, մի՛ ելնեք, մի՛ տեսնիր, մի՛ տեսնեք:

ՊԱԿԱՍԱՎՈՐ ԲԱՅԵՐ

§ 619. Ժամանակակից հայերենում կան մի շարք բայեր, որոնք չունեն խոնարհման բոլոր ձևերը: Այդպիսի բայերը կոչվում են պակասավոր բայեր: Պակասավոր բայերը ժամանակակից հա-

լերենում հետևյալներն են՝ եմ, կամ, գիտեմ, ունեմ, արժել, լվալ, ճուսալ, ցանկալ, կեճալ:

ԵՄ — *Այս բայը ժամանակակից հայերենում ունի միայն սահմանական եղանակի ներկա և անցյալի անկատար ժամանակները. այսպես՝* եմ, ես, է, ենք, եք, են, էի, էիր, էր, էինք, էիք, էին: *Խոնարհման մյուս ձևերի իմաստն արտահայտելու համար օգտագործվում են լինել բայի ձևերը (եղա, լինեմ, եղիր և այլն):*

ԿԱՄ — *Այս բայը ևս ժամանակակից հայերենում ունի միայն սահմանական եղանակի ներկա և անցյալի անկատար ժամանակները. այն է՝* կամ, կաս, կա, կանք, կաք, կան, կայի, կայիր, կար, կայինք, կայիք, կային: *Այս բայի պակաս ձևերի իմաստն արտահայտելու համար ևս գործածվում են լինել բայի ձևերը:*

ԳԻՏԵՄ — *Ունի միայն սահմանական եղանակի ներկա և անցյալի անկատար ժամանակները. այն է՝* գիտեմ, գիտես, գիտի, գիտենք, գիտեք, գիտեն, գիտեի, գիտեիր, գիտեր, գիտեինք, գիտեիք, գիտեին: *Մնացած ձևերի համար գործածվում են* գիտենալ, *ինչպես նաև իմանալ բայերի ձևերը:*

ՈՒՆԵՄ — *Այս բայը ևս ունի միայն սահմանական եղանակի ներկա և անցյալի անկատար ժամանակները՝* ունեմ, ունես, ունի, ունենք, ունեք, ունեն, ուներ, ուներիր, ուներ, ունեինք, ունեիք, ունեին: *Մնացած ձևերի համար գործածվում են* ունենալ *բայի ձևերը:*

ԱՐԺԵԼ — *Ունի միայն ներկա և անցյալի անկատար ժամանակներ՝* արժեմ, արժես, արժի, արժեի, արժեիր, արժեր: *Մյուս եղանակների և ժամանակների համար գործածվում են* արժենալ *բայի ձևերը:*

ԼՎԱԼ — *Ի տարբերություն նախորդների, այս բայը չունի սահմանական եղանակի ներկա և անցյալի անկատար ժամանակները, որոնց համար գործածվում են* լվանալ *բայի ձևերը:*

ՀՈՒՍԱԼ — *Այս բայը ևս չունի անկատար դերբայ և հետևաբար՝ դրանից կազմված ներկա և անցյալի անկատար ժամանակներ: Քիչ գործածական են նաև սահմանական եղանակի մյուս ժամանակները: Պակաս ձևերը լրացվում են* հույս ունենալ *հարադիր բայի ձևերով:*

ՑԱՆԿԱԼ — *Ունի միայն ըղձական, ենթադրական և հարկադրական եղանակների ձևերը: Մնացած դեպքերում գործածվում են* ցանկանալ *բայի ձևերը:*

ԿՆՆԱԼ — *Անկախ գործածություն ունեն միայն այս բայի հրամայական եղանակի ձևերը՝* **կա՛ց, կացե՛ք, մի՛ կաց, մի՛ կացեք**:

Ժամանակակից հայերենում պակասավոր է նաև կենալ «ապրել» բայը, որից գործածվում են միայն **կեցցեմ, կեցցես, կեցցե, կեցցենք, կեցցեք, կեցցեն** *ձևերը*:

Ծանոթ.— *Հայ քերականագիտության մեջ ընդունված է եմ, կամ, գիտեմ, ունեմ, արժեմ բայերը համարել հավելավոր բայեր լինել, գիտենալ, ունենալ, արժենալ բայերի համար՝ նկատի ունենալով նրանց զուգահեռ կիրառություններ ներկա և անցյալի անկատար ժամանակներում. այսպես՝ եմ, կամ—լինում եմ, գիտեմ—գիտենում եմ, ունեմ—ունենում եմ, արժեմ—արժենում եմ և այլն։ Այս բայերը հավելավոր համարել չի կարելի, որովհետև բերված զուգահեռ ձևերը ունեն կերպային որոշակի տարբերություններ և մեկը մյուսով փոխարինել առանց իմաստային փոփոխության հրնարավոր չէ։ Ինչպես հայտնի է, այս բայերի ածանցավոր զուգահեռները ներկա և անցյալի անկատար ժամանակներում ունեն տեվական կերպի որոշակիորեն արտահայտված իմաստ, որով և տարբերվում են ածանցազուրկ տարբերակներից (համմտ. ես այստեղ եմ—ես այստեղ եմ լինում, ես ունեմ—ես ունենում եմ և այլն)։*

Հավելավոր չպետք է համարել նաև ուզել բայը ուզենալ ձևի համար, որովհետև այս բայերը սկսել են ձեռք բերել տարբեր իմաստներ։ Ուզել այժմ գործածվում է ավելի խնդրել, պահանջել իմաստով, իսկ ուզենալ-ը՝ ցանկանալ իմաստով։

ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՈՒՄ

§ 620. Բայերի խոնարհման ժխտական ձևերը ցույց են տալիս, որ խոսողը ժխտում, բացասում է բայահիմքի ցույց տված գործողության կամ եղելության կատարումը։ Այսպես՝ եթե գրում եմ ձևով հաստատվում է գրելու գործողության կատարումը, ապա չեմ գրում ժխտական ձևով բացասվում, ժխտվում է այն։

Բայի ժխտական ձևերը ժամանակակից հայերենում կազմվում են չ և մի ժխտական մասնիկների միջոցով, որոնք ավելանում են դրական ձևերի վրա։ Մի մասնիկով կազմվում են միայն հրամայական եղանակի ժխտական բայաձևերը։ Մնացած բոլոր դեպքերում ժխտական բայաձևերը կազմվում են չ մասնիկի օգնությամբ, որը դրվում է՝

ա) Սահմանական եղանակի անցյալ կատարյալ ժամանակի և ըղձական եղանակի բայաձևերի սկզբից. այսպես՝ չգրեցի, չգրեմ, չգրեի:

բ) Սահմանական եղանակի վերլուծական ժամանակների օժանդակ բայի վրա, որը փոխում է իր շարադասությունը և դրվում խոնարհվող բայի սկզբից. այսպես՝ չեմ գրում, չեմ գրելու, չէի գրել *և այլն: Օժանդակ բայի ներկա ժամանակի եզակի երրորդ դեմքը ժխտական խոնարհման ժամանակ փոխվում է ի-ի՝ է—չի* (չի գրում. չի խոսում, չի լսում *և այլն):*

գ) Ենթադրական եղանակի ժխտական ձևերը կազմվում են օժանդակ բայի ներկա և անցյալ ժամանակների ժխտական ձևերի և ժխտական դերբայի հարադրությամբ. այսպես՝ կգրեմ—չեմ գրի, կկարդայի—չէի կարդա *և այլն:*

դ) Հարկադրական եղանակի ժխտական ձևերը կազմելիս չ ժխտական մասնիկը դրվում է պիտի (պետք է) եղանակիչի վրա. այսպես՝ չպիտի (չպետք է) *գրեմ,* չպիտի (չպետք է) *ասեմ,* չպիտի (չպետք է) *կարդամ և այլն:*

Ինչպես ասվել է, հրամայական եղանակի ժխտական ձևերը կոչվում են արգելական հրամայական և կազմվում են մի արգելական մասնիկի օգնությամբ, որը դրվում է խոնարհվող բայից առաջ և միշտ շեշտվում է (արգելական հրամայականի կազմության մասին մանրամասն տե՛ս § 602, 603):

Դերբայներից ժխտական ձևեր ունեն միայն անկախ կիրառություն ունեցողները, այսինքն՝ անորոշը, հարակատարը, ենթակայականը, զուգընթացականը *և երկրորդ սահմանին: Սրանց ժխտականը կազմվում է դրական ձևերի վրա ավելացնելով չ մասնիկը, այսպես՝* չգրել, չգրած, չգրող, չգրելիս, չգրելիք:

ՀԱՐԱԴՐԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԽՈՆԱՐՀՈՒՄԸ

§ 621. Ժամանակակից հայերենի խոնարհման համակարգում ուրույն տեղ է գրավում բայական հարադրությունների խոնարհումը:

Ինչպես հայտնի է, ըստ կազմության բայական հարադրությունները բաժանվում են հետևյալ խմբերի՝ ա) որևէ անուն խոս-

քի մասից (հիմնականում գոյականից) և բայից բաղադրված հարադրություններ (գլուխ տալ, գլխի ընկնել, աչքով տալ, աչք գցել, ձեռքից գալ, կարմրին տալ *և այլն*), *բ) որևէ մակբայից կամ պարագայական նշանակությամբ բառից և բայից բաղադրված հարադրություններ* (դուրս գալ, առաջ ընկնել, վրա գալ, մոտ գալ *և այլն*), *գ) բայարմատներից և բայից հարադրված բարդություններ* (կոտր ընկնել, խույս տալ, թաք կենալ, կանգ առնել, պոկ գալ *և այլն*), *դ) ձայնարկությունից և բայից բաղադրված հարադրություններ* (ախ քաշել, վայ տալ, ախ ու վախ անել *և այլն*), *ե) երկու բայերից բաղադրված զուգաբայական հարադրություններ* (գրած ճասնել, գտնել բերել, վազել գալ *և այլն*), *զ) տալ բայով բաղադրված պատճառական հարադրություններ* (գրել տալ, խրմել տալ, կարդացնել տալ *և այլն*)։

Առաջին չորս խմբին պատկանող հարադրական բայերի խոնարհման ժամանակ առաջին բաղադրիչը՝ գոյականը, մակբայը, ձայնարկությունը, բայարմատը, մնում են անփոփոխ, փոփոխվում, խոնարհվում է միայն բայական բաղադրիչը. վերլուծական ժամանակներում բայից առաջ են դրվում ոչ միայն օժանդակ բայի ժխտական ձևերը, այլ նաև դրական ձևերը. այսպես՝ գլխի եմ ընկնում, գլխի եմ ընկել, վեր են կենում, ձեռ չեն քաշում, կոտր չեն ընկել *և այլն։ Պարզ ժամանակների ժխտական խոնարհման ժամանակ չ մասնիկը դրվում է անմիջապես բայի վրա. այսպես՝* գլխի չընկա, գլուխ չդնեմ, դուրս չգայի *և այլն։ Ենթադրական եղանակի կ եղանակիչը ևս դրվում է անմիջապես բայի վրա. օրինակ՝* ձեռս կմտնեմ, պոկ կգա, վրա կտա, ախ կքաշեր *և այլն։ Հարկադրական եղանակի պիտի եղանակիչն ունի համեմատաբար ազատ շարադասություն. կարող է դրվել և՛ բայից անմիջապես առաջ, և՛ ընդհանրապես հարադրությունից առաջ. այսպես՝* դուրս պիտի գնամ—պիտի դուրս գնամ, վեր պիտի կենամ—պիտի վեր կենամ, առաջ պիտի քաշեմ—պիտի առաջ քաշեմ *և այլն։ Հրամայական եղանակում շեշտվում է ոչ թե բայը, այլ հարադրության առաջին բաղադրիչը. այսպես՝* ձե՛ռ քաշիր, դո՛ւրս գնա, մո՛տ արի, վե՛ր կաց *և այլն։ Արգելական հրամայականում մի արգելականը դրվում է բայից անմիջապես առաջ և շեշտվում է. այսպես՝* ձեռ մի՛ տուր, առաջ մի՛ գնա, ետ մի՛ ընկնիր *և այլն։ Հնարավոր է նաև մի արգելականի շարադասությունը ամբողջ հարադրությու-*

նից առաջ. (վեր մի՛ կաց—մի՛ վեր կաց, դուրս մի՛ գա—մի՛ դուրս գա): *Խոնարհման նույն յուրահատկություններն ունեն նաև պատճառական բայական հարադրությունները: Այս դեպքում ևս հարադրության առաջին բաղադրիչը մնում է անփոփոխ, խոնարհվում է միայն տալ բայը* (խմել տվի, խմել եմ տալու և այլն):

§ 622. Զուգադրական բայական հարադրությունները (երբ բայը բաղադրված է երկու բայերից) ունեն խոնարհման հետևյալ առանձնահատկությունները: Այս դեպքում խոնարհվում են երկու բաղադրիչ բայերն էլ, սակայն բաղադրյալ ժամանակներում ունենում են մեկ օժանդակ բայ, որը սովորաբար դրվում է երկրորդ բաղադրիչից հետո (գնում ճաշում եմ): *Սակայն երբ տրամաբանական շեշտը առաջին բաղադրիչի վրա է լինում, օժանդակ բայը դրվում է նրանից հետո* (ճաշում եմ անցնում): *Ենթադրական և հարկադրական եղանակների կ և պիտի եղանակիչները դրվում են միայն առաջին բաղադրիչի վրա* (պիտի ճաշեմ անցնեմ, կճաշեմ անցնեմ):

Ծանոթ.— *Երբեմն կ եղանակիչ դրվում է նաև երկրորդ բաղադրիչի վրա, ինչպես՝ կճաշենք կանցնենք: Այս դեպքում հարադրության բաղադրիչների կապը զգալիորեն թուլանում է:*

§ 623. Զուգադրական բայական հարադրությունների ժխտական խոնարհման բաղադրյալ ժամանակներում ժխտական օժանդակ բայը ունենում է նախադաս շարադասություն, այսինքն՝ դրվում է ամբողջ հարադրությունից առաջ (չեմ գնում ճաշում, չի ֆչում տանում): *Պարզ ժամանակներում չ ժխտական մասնիկը դրվում է միայն առաջին բաղադրիչի վրա* (չիշեց տարավ, չծակեց անցավ), *մի արդելականը ևս դրվում է առաջին բաղադրիչից առաջ* (մի՛ վազիր գնա):

Մ Ա Կ Բ Ա Յ

ՄԱԿԲԱՅԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ

§ 624. 1. Մակբայը, ի տարբերություն հատկանիշ նշանակող մյուս խոսքերի մասերի, որոնք առարկայի հատկանիշի իմաստ ունեն, ցույց է տալիս հատկանիշի հատկանիշ։ Դա նշանակում է, որ մակբայները կարող են դրվել այն խոսքի մասերի վրա, որոնք առարկայի հատկանիշի իմաստ ունեն։

Մակբայի ամենատարածված կիրառությունը գործողության հատկանիշ ցույց տալն է, հետևապես և բայի վրա դրվելը։ Օրինակ՝ Երկու տող գիրը վայրկենաբար ալեկոծեց նրա մեջ սառած որդիական զգացումները (Շիրվ., Քառս)։ Պապը... կուզեկուզ մոտեցավ գետին (ՎԱ, Սևանի ափին)։ Եվան իսկույն կարմրեց, ետ գցեց իրեն ամենևին չխանգարող ծամն ու նորից շարունակեց (ԱՍ, Ոսկե մեղալ)։

Մակբայները գործողության հատկանիշ կարող են ցույց տալ՝ դրվելով նաև բայանունների վրա։ Օրինակ՝ Անհրաժեշտ է տերությունների ունեցած ատոմային զենքի արտադրության միանգամից արգելում, և այդ զենքի ամբողջ պաշարի լիովին ոչնչացում (լրագիր)։ Զարմանում եմ նրա հանկարծակի խոովության վրա (Ր, Ղարիբ մշեցին)։ Նրա ամեն մի վստահ արագ-արագ շարժումից զգացվում էր, որ շատ կորովի կին է (ՔԹ, Ոսկե հովիտ)։ Մեր հանպատրաստից զրույցը երիտասարդ, խոստումնալից կոմպոզիտորի հետ երկար տևեց (լրագիր)։

Մակբայները կարող են ցույց տալ առարկայի որակական հատկանիշի հատկանիշ՝ դրվելով սովորաբար ածականի վրա։ Օրինակ՝ Նրանք միայն անձրևաջուր, պղտոր հեղեղ են միայն, Հազարակունք ու հար հոսուն, հար մնայուն գետ ես դու (ՍՏ)։ Գե-

տափում՝ ձորի կապույտ ֆոնի վրա տնկվեց օջախի հազիվ նկատելի ծխի սյունը (Սխ, Հողը, 1)։ Մարդիկ համարյա մերկ են մանգալիս (ԿԱ, Ասիայի երկրներով)։ Դերասանների բրիգադները համերգներ էին տալիս անմիջապես առաջավոր դիրքերում (լրագիր)։ Ով, իրոք, պե՞տք է վախենալ արդյոք նրանից՝ այդ ծայրասպիճան, մարդասեր երգիծաբանից (ՎՓ, Սրտիս պարտքը)։ — Դե՛ եկե՛ք,— ասաց օրիորդը այլևս գրեթե հրամայական ձայնով (ԿՋ, Նավը լեռան վրա)։

Մակբայները կարող են ցույց տալ առարկայի չափի ու քանակական հատկանիշի հատկանիշ։ Օրինակ՝ Ջրային ավազանը հազիվ կես կիլոմետր շրջապիծ ուներ (ՎԱ, Լեռնային կածաններով)։ Ավելի քան կես միլիոն հանդիսատես. այսպիսին է սովետական «Երևան» կրկեսի արտիստների գրեթե չորսամսյա հյուրախաղերի արդյունքը (լրագիր)։ Համարյա բոլոր երեխաները մասնակցում էին մրցումներին։ Նրա դրամարկղում կա ընդամենը երեք հարյուր ռուբլի (Շիրվ., Քառս)։ Ներկա են եղել (ժողովներին) ընդհանուր առմամբ մեկ միլիոնից ավելի բանվորներ, գյուղացիներ, մտավորականության ներկայացուցիչներ (լրագիր)։ Ինչպես երևում է բերված օրինակներից, այս դեպքում մակբայները դրվում են թվականների, որոշ դերանունների կամ դրանցով կազմված բառակապակցությունների վրա։

Որոշ մակբայներ կարող են դրվել այլ մակբայների վրա։ Օրինակ՝ Օտարերկրյա թենդանթները համարյա միաժամանակ են կրակել հնդկական սիպայի ապստամբների և չինական տայպինի հերոսների վրա (ԿԱ, Ասիայի երկրներով)։ Պայքարն էլ ավելի սուր բնույթ ընդունեց (Ն. տ.)։ Նա գրեթե բոլորովին թողել էր իր սեփական տնտեսության հոգսերը (Սխ, Հողը, 1)։

Սակավաթիվ մակբայներ կարող են գործածվել ժամանակի իմաստ ունեցող գոյականների մասնավորապես պարագայական կիրառության հետ։ Ինչպես՝ Ուշ աշնանը ծառերը մերկանում են։ Գարնանացանն սկսեցինք վաղ գարնանը։ Խորհրդակցությունը վերջացավ ուշ երեկոյան։ Չնայած այս օրինակներում մակբայը դրված է գոյականների վրա, բայց վերջիններս հատկանիշի (ժամանակային հատկանիշի) իմաստ ունեն և տվյալ կիրառություններում կատարում են պարագայի պաշտոն։ Սա նշանակում է, որ մակբայների այդ կիրառությունը չի հակասում նրանց խոսքի մասային նշված առանձնահատկությանը։

Այսպիսով, հատկանիշի հատկանիշ ցույց տալը մակբայի խոսքի մասային իմաստն է, նրա ամենաբնորոշ գիծը, որով տարբերվում է մյուս բոլոր խոսքի մասերից։

§ 625. 2. Ձևաբանական տեսակետից մակբայի առանձնահատկությունը նրա չթեքվելն է։ Նա նյութական իմաստ ունեցող խոսքի մասերից միակն է, որ ունի այս հատկանիշը։

Մի քանի մակբայներ երբեմն ունենում են համեմատության աստիճաններ։ Ինչպես՝ արագ—ավելի արագ—ամենաարագ, դանդաղ—ավելի դանդաղ—ամենադանդաղ, շտապ—ավելի շտապ—ամենաշտապ, հապճեպ—ավելի հապճեպ—ամենահապճեպ, ուշ—ավելի ուշ—ամենաուշ և այլն։

Մակբայի բաղդատական աստիճանը գործածվում է դրական աստիճանի պես, այսինքն՝ սովորական ձևով դրվում է բայի վրա։ Ինչպես՝ Արամը քայլում է արագ։ Արամը քայլում է ավելի արագ։ Աշոտը դանդաղ է գրում։ Աշոտը ավելի դանդաղ է գրում։ Մենք պայքարում ենք միահամուռ։ Մենք պայքարում ենք ավելի միահամուռ։

Նշենք նաև, որ մակբայների գերադրական աստիճանը ազույն ածանցով չի կազմվում, այլ, ինչպես երևում է բերված օրինակներից, կազմվում է ամենա նախածանցով։

Մակբայի գերադրական աստիճանը սովորական ձևով չի դրվում բայի վրա։ Չենք կարող ասել՝ Արամը քայլում է ամենաարագ, Աշոտը ամենադանդաղ է գրում, Մենք պայքարում ենք ամենամիահամուռ։

Մակբայի գերադրական աստիճանը կարող է գործածվել հոդով, նախադաս (դրվելով բայից կամ նույնիսկ ենթակայից առաջ)։ Ինչպես՝ Արամը ամենաարագն է քայլում։ Աշոտը ամենադանդաղն է գրում։ Կամ՝ Ամենաարագը Արամն է քայլում։ Ամենադանդաղը Աշոտն է գրում։

Շատ հաճախ գերադրական աստիճանի իմաստն արտահայտվում է նկարագրական եղանակով։ Ինչպես՝ Արամը բոլորից (կամ՝ բոլորի համեմատությամբ) արագ է քայլում։ Արամը բոլորից (կամ՝ բոլորի համեմատությամբ) դանդաղ է գրում և այլն։ Մենք բոլորից (բոլորի համեմատությամբ) միահամուռ ենք պայքարում։ Բոլորից միահամուռ մենք ենք պայքարում։

Կան մակբայի գերադրական աստիճանը նկարագրական եղանակով արտահայտելու համար այլ կառուցվածքներ ևս։ Ինչպես՝ Ամենադանդաղ քայլողը Արամն է։ Ամենաարագ գրողը Աշոտն է։ Ամենամիահամուռ պայքարողը մենք ենք և այլն։

Այսպիսով, չնայած որ ընդհանրապես մակբային հատուկ չեն համեմատության աստիճանները, բայց վերջիններս առկա են սակավաթիվ մակբայների մեջ, որոնք արտահայտում են հատկանիշի համեմատելի հատկանիշ։ Մակբայների համեմատության աստիճանները (և մասնավորապես գերադրական աստիճանը) ունեն կազմության, կիրառական յուրահատկություններ, որոնք պայմանավորված են մակբայի խոսքի մասային իմաստով։

Ելնելով վերը շարադրվածից և մանավանդ այն իրողությունից, որ համեմատության աստիճաններ ունեն սահմանափակ թվով մակբայներ, այդ հատկանիշը պետք է համարել ոչ թե մակբայի, որպես խոսքի մասի, հատկանիշ, այլ միայն համապատասխան փոքրաթիվ մակբայների հատկանիշ։ Իսկ դա չի հակասում մակբայը չթեքվող խոսքի մաս համարելուն։

Այնուհետև, մակբայներին հատուկ չէ հոլովվելը։ Այնուամենայնիվ այդ խոսքի մասի մեջ հանդիպում ենք մի խումբ բառերի տարբեր հոլովաձևերի։ Օրինակ՝ շուտ—շուտով, նոր—նորից (ժամանակի իմաստով), հնում—հնուց։ Այսպիսի փաստերը չեն նշանակում, թե մակբայը հոլովվում է, այլ վկայում են, որ որպես մակբայ կարող են գիտակցվել նույն բառի տարբեր քերականական ձևերը, և վերջիններս ժամանակի ընթացքում կարող են գիտակցվել որպես բառի սկզբնաձևեր։

Մակբայների համակարգում կան հոլովական ձևերի այլ մասնակի արտահայտություններ ևս. ինչպես՝ այժմ, հիմա, առաջ. այժմվա, հիմիկվա, առաջվա. այժմվանից, հիմիկվանից, առաջվանից և այլն։ Այսպիսի բառերի հոլովաձևերը դարձել են կամ դառնում են մակբայ։ Բառիմաստի զարգացման ընթացքում մակբայական իմաստի չվերածվող ձևերը կամ կարող են վերածվել այլ խոսքի մասի (օրինակ, սեռականի ձևերը՝ ածականի), կամ դուրս ընկնել գործածությունից։ Այս կարգի փաստերը ևս ցույց են տալիս, որ ժամանակակից հայերենում մակբային, որպես խոսքի մասի, հատուկ չէ հոլովի կարգը։ Այս տեսակետից մասնակի շեղումները բնականաբար բնորոշ չեն։

§ 626. Մակբայը շփման եզրեր ունի այլ խոսքի մասերի հետ։ Այդ հարաբերակցությունների քննությամբ ավելի որոշակի ու խորը կդառնա մակբայի, որպես խոսքի մասի, ճանաչումը։

Ածականներից մակբայներին հարաբերակից են որակական ածականները, որոնք ևս կարող են դրվել բայի վրա և կատարել պարագայի պաշտոն։ Օրինակ՝ բարձր խոսեց, գոհ ժպտաց, հիանալի պատասխանեց և նման օրինակներում ածականը կատարում է պարագայի դեր։ Հիշենք այդ բառերի, որպես ածականների, բուն կիրառությունները՝ բարձր լեռ, գոհ մարդ, հիանալի մեքենա, ուր ածականը դրվում է առարկայի անվան վրա և ցույց է տալիս նրա հատկությունը։ Եթե նշված և այլ ածականները դիտելու լինենք այս տեսակետից (և այդպես էլ պետք է դիտել, քանի որ նրանց բնորոշ իմաստն ու դերը առարկայի հատկություն ցույց տալն է), ապա պարզ կդառնա, որ պարագայական դերը ածականի համար կիրառական հատկանիշ է, շարահյուսական դեր է և ոչ թե խոսքի մասային առանձնահատկություն։ Մինչդեռ այդպիսի իմաստը և նրանից բխող, նրանով պայմանավորված կիրառությունը, իրոք որ, բնորոշ են մակբայի համար։ Ածականի և մակբայի տարբերությունը որոշելիս պետք է նկատի ունենալ, որ մակբայը սովորաբար առարկայի անվան վրա չի դրվում, հետևապես և այն բառերը, որոնց համար բնորոշ է առարկայի անվան վրա դրվելը, ածական են։

Մակբայներին հարաբերակից են նաև մի շարք դերանուններ՝ այսպես, այդպես, այնպես, նույնպես, այսքան, այնքան, նույնքան և այլն, որոնք նույնպես կարող են դրվել բայի վրա ու կատարել պարագայի դեր։

Արդի քերականագիտությունը հատկորեն տարբերում է խոսքի մասերն ու նախադասության անդամները։ Մակբայը որոշելիս անտեսվում է կիրառության այն ընդհանրությունը, որ կա վերը նշված դերանունների ու մակբայների միջև։ Այդ ընդհանրությունը շարահյուսական դերի ընդհանրություն է, հետևապես վերաբերում է շարահյուսությանը։ Նրանց խոսքի մասային պատկանելությունը որոշելիս նկատի է առնվում իմաստային այն էական տարբերությունը, որ իրոք կա մակբայների և դերանունների միջև։ Այսպես, այդպես, այնպես ու նման բառերը դերանուններ են, քանի որ նրանք ունեն դերանվան խոսքի մասային հատկանիշ՝ ընդ-

հանուր, չտարբերակված իմաստ, որ զուգակցվում է դերանուններին հատուկ որևէ հարաբերության հետ (տարածական և այլն)։ Մինչդեռ մակբայներն ունեն հիմնականում տարբերակված իմաստ (թեև մի երկու մակբայներ մյուսների համեմատությամբ իմաստով ավելի ընդհանուր են)։ Օրինակ, այսպես դերանունով կարող է ցույց տրվել ամեն մի հատկանիշ, որը կամ որի կրողը խոսողի մոտ է գտնվում։ Այդ բառով կարող են հասկացվել «արագ», «դանդաղ», «հազիվ», «բարեկամաբար», «մտերմաբար», «վարպետորեն», «կամայականորեն» և այլն, և այլն։ Մինչդեռ նշված մակբայները, ինչպես և ամեն մի մակբայ, ունի տարբերակված իմաստ և ցույց է տալիս հատկանիշի որևէ որոշակի հատկանիշ։

Այսպիսով, չնայած մի շարք դերանունների և մակբայների կիրառության որոշ ընդհանրությանը, դրանք մնում են որպես տարբեր խոսքի մասերի պատկանող բառեր և, ի տարբերություն դերանուններին հատուկ ընդհանուր, չտարբերակված իմաստի, մակբայը բնորոշվում է տարբերակված իմաստով։

Վերջապես, պարագայի դերով կարող են հանդես գալ գոյականները տրական, բացառական, գործիական, ներդոյական հոլովներով դրվելու դեպքում և այդ առումով՝ շարահյուսական կիրառությամբ հարաբերակից են մակբայներին։ Այդ հարաբերակցությունն ավելի ակնհայտ է մանավանդ այն գոյականների նըշված հոլովներում, որոնց մեջ իշխում են տարածական, ժամանակային ու պարագայական բնույթի այլ իմաստներ։ Օրինակ՝ Աշնանը դպրոցականներն օգնում են բերքահավաքին։ Գարնանը հաճելի է զբոսնել անտառներում։ Ներսում շատ շոգ է։ Աշակերտները պատմության ուսուցչին լսում են մեծ ճաիշտակությամբ։ Նա միշտ ոգևորությամբ է պատմում իր մարտական ընկերների մասին։

Ընդգծված բառերը կատարում են պարագայի պաշտոն, համապատասխանաբար ցույց են տալիս գործողության ժամանակը, տեղը, ձևը, բայց մակբայ չեն, որովհետև դրանք հատկանիշի հատկանիշի իմաստով չէ, որ բնորոշվում են։ Այդ իմաստը դրսևորվում է նրանց թեքված ձևի համապատասխան շարահյուսական կիրառության մեջ, իսկ բառի խոսքի մասային պատկանելությունը չի կարելի որոշել նրա միայն որևէ ձևի կիրառության

մեջ դրսևորված իմաստով, և ոչ էլ կարելի է այդ ձևերը դիտել իբրև բառերի սկզբնաձևեր, իբրև ինքնուրույն բառեր՝ համարելով մակբայ, քանի որ դրանք լեզվի մեջ եղած և գիտակցվող գոյականների (աշուն, գարուն, ներս, հափշտակություն, ոգևորություն) թեքված ձևն են՝ վերջինիս հատուկ շարահյուսական դերով։

Վերջապես որոշ հարաբերակցություն գոյություն ունի մակբայների ու եղանակավորող բառերի միջև։ Եվ թեև եղանակավորող բառերը որոշակիորեն տարբերվում են մակբայներից, այնուամենայնիվ առանձին դեպքերում այդ սահմանը խիստ զգալի է, և բառը մակբայից անցնելով եղանակավորող բառերի շարքը, միաժամանակ կարող է պահպանել իր մակբայական իմաստն ու կիրառությունը։ Օրինակ՝ Նա այդ մասին խոսել է ի միջի այլոց և իր ասածներին մի առանձին կարևորություն չի տվել։ Ի միջի այլոց, նա երեկ խոսել է այդ մասին։ Ի միջի այլոց բառն առաջին օրինակում մակբայ է, երկրորդում՝ եղանակավորող բառ։

Այսպիսով, այն հանգամանքը, որ այլ խոսքի մասերի պատկանող որոշ բառեր ևս կարող են ցույց տալ հատկանիշի հատկանիշ, չպետք է շփոթության պատճառ հանդիսանա մակբայների և այդ խոսքի մասերի որոշման հարցում։ Այլ խոսքի մասերի՝ այս կամ այն չափով հատկանիշի հատկանիշ ցույց տալը չի բխում նրանց խոսքի մասային բուն էությունից, այլ պարզապես շարահյուսական կիրառության արտահայտություն է։

Այդ պատճառով էլ, չնայած մակբայների և այլ խոսքի մասերի նշված հարաբերակցությանը և կիրառական որոշ աղերսին, մակբայը կարելի է բնորոշել որպես մի խոսքի մաս, որ ցույց է տալիս գործողության կամ հատկանիշի ուրիշ հատկանիշ։ Մակբայի ձևաբանական հատկանիշը՝ չթեքվելը, սերտորեն կապված է նրա իմաստային այդ հատկանիշի հետ և բխում է նրանից։

ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

§ 627. Չկա բառակազմական այնպիսի հատկանիշ, որով բոլոր մակբայները բնորոշվեն և հակադրվեն մյուս խոսքի մասերին ու տարբերվեն նրանցից։ Դա երևում է այն փաստից, որ մակբայները կազմությամբ բազմազան են. կան պարզ կամ ար-

մատական (ապա, նախ, ուշ, դեռ, հար, խեթ, հիմա, վեր, միշտ, հաճախ, շատ, վար, շուտ), բարդ (մեկ-մեկ, տեղ-տեղ, մերթ-ընդմերթ, միաձայն, միաժամանակ), ածանցավոր (արմատապես, բարոյապես, ամբողջովին, համեստորեն), քերականական ձևերից կազմված (հնուց, վաղուց, նորից, շուտով) մակբայներ։

Այնուամենայնիվ բառակազմական որոշ երևույթներ ավելի հատուկ են մակբայներին, ուստի և կանգ առնենք դրանց վրա։

ԲԱՐԴ ՄԱԿԲԱՅՆԵՐ

§ 628. Նկատելի է, որ անիսկական բարդություններով կազմված մակբայներն անհամեմատ ավելի շատ են, քան թե իսկական բարդություններով կազմվածները։ Անիսկական բարդությունների մեջ էլ մեծ տեղ են գրավում կրկնավորները։

Նախ՝ ածականներով կազմված կրկնավորների մասին։ Այս խոսքի մասի հատկապես մի տեսակից՝ որակական ածականներից են կազմվում մակբայներ։ Սակայն ածականներից կազմված ոչ բոլոր կրկնավորներն են մակբայ։ Դրանց մի մասը մնում է ածականների շարքում։ Այս տեսակետից զգալի տարբերություն կա գրական լեզվի և բարբառների միջև։ Եթե վերջիններիս համար սովորական են կրկնավոր ածականները, ապա գրական հայերենում այդ կրկնավորները հակվում են ավելի մակբայների կողմը և մեծ մասամբ մակբայներ են, ինչպես՝ հիվանդ-հիվանդ (եկել էր դասի), սառը-սառը (խմել), տաք-տաք (հագնվել), ծանր-ծանր (շարժվել), բիշ-բիշ (բարձել), ուրախ-ուրախ (քայլել), մանր-մանր (կտրել) և այլն։

Մակբայական իմաստ արտահայտվում է նաև թվականների կրկնությամբ՝ մեկ-մեկ, երկու-երկու, երեք-երեք, չորս-չորս, հարյուր-հարյուր, հազար-հազար և այլն։

Մակբայներ են կազմվում նաև մի շարք դոյականներից՝ վերջիններիս կրկնությամբ՝ տեղ-տեղ, խաղաղ-խաղաղ (նայել գալ), գլուխ-գլուխ (շրջել), վանկ-վանկ (կարդալ), տող-տող, բառ-բառ, էջ-էջ (նայել), ալիք-ալիք և այլն։

Մակբայների կրկնությամբ կազմվում են սաստկական, երբեմն էլ բազմապատկական իմաստ ունեցող մակբայներ, ինչպես՝ շտապ-շտապ, ուշ-ուշ, ստեպ-ստեպ, շուտ-շուտ, երբեմն-երբեմն, խեթ-խեթ, կամաց-կամաց, արագ-արագ և այլն։

Սակայն միշտ չէ, որ կրկնվում է բառն ուղիղ ձևով։ Այս տեսակետից առանձնապես տարածված են այնպիսիները, որոնց առաջին բաղադրիչը գրաբարյան բացառական հոլովի ձևն է, կամ կազմված է նրա նմանությամբ։ Նման բարդություններ կազմվում են նաև ժամանակակից հայերենի բացառականից։ Որպես այդպիսի բառեր հանդես են գալիս հատկապես տեղ և ժամանակ ցույց տվող մի շարք դոյականներ։ Այդպիսիք են՝ պատեպատ, տնետուն, սարՙսար, բերնեբերան, գյուղե-գյուղ, fաղաfե-fաղաf, ավանե-ավան, երկրե-երկիր, տեղից-տեղ, վայրից-վայր, ճորից-ճոր *(սա ժամանակ է ցույց տալիս) և այլն։*

§ 629. Բարդության մեջ կրկնվող բառերը հաճախ կապվում են նախդիրներով. այդ եղանակով կազմվում են կրկնավոր հարադրություններ։ Այդպիսի կրկնավոր հարադրությունները կազմվում են տարբեր խոսքի մասերից, իմաստով շատ մոտ են համապատասխան աննախդիր կրկնություններին և վերջինների համեմատությամբ իմաստային նուրբ տարբերություն ունեն միայն։ Համմտ. գլուխ-գլուխ *կարդալ և* գլուխ առ գլուխ *կարդալ,* կետ-կետ *ստուգել և* կետ առ կետ *ստուգել։*

Առանձնապես տարածված են դոյականներից կազմված այնպիսի հարադրությունները, որոնց բաղադրիչները կապվում են առ նախդիրով. ժամանակ առ ժամանակ, ժամ առ ժամ, rոպե առ rոպե, վայրկյան առ վայրկյան, fայլ առ fայլ, բառ առ բառ, վանկ առ վանկ, տող առ տող, կետ առ կետ, գյուղ առ գյուղ, fաղաf առ fաղաf, ճակատ առ ճակատ *և այլն։*

Նույն արմատի ուղիղ ձևի կրկնությամբ ու առ նախդիրով մակբայներ կարող են կազմվել նաև այլ խոսքի մասերից՝ թվականներից, ածականներից, մակբայներից՝ մեկ առ մեկ *(մի առ մի),* փոfր առ փոfր, դեմ առ դեմ։

Արմատի կրկնությամբ կազմվող այդպիսի մակբայները երբեմն կապակցվում են նաև այլ նախդիրներով՝ ի, ըստ, ընդ, գ. վերջինս ժամանակակից հայերենում այլևս բառական ինքնուրույնություն չունի։ Ըստ որում, դրանց մի մասի բաղադրիչները կամ մեկ բաղադրիչը գործածվում են թեքված ձևով։ Այդպիսիք են՝ վերջ ի վերջո, բացեիբաց, օրըստօրե, ճետզճետե, իճճըստիճյաճ, մերթընդմերթ, մեջընդմեջ *և այլն։*

Մակբայների շարքում կան մի երկու բաղհյուսական ու սր-

բանցից կազմված կցական բարդություններ՝ նույն բառի կրկնությամբ. նրանց բաղադրիչները կապակցվում են ու շաղկապով. ավելի ու ավելի, դեմ ու դեմ, տեղնուտեղը, կրկին ու կրկին և այլն։

§ 630. Մակբայներ կարող են կազմվել նաև տարբեր բառերից, առանց կապակցող որևէ բառի, կամ որոնք կապվում են նախդիրներով, շաղկապով։

Առաջին տիպի կապակցություններ են՝ գիշեր-ցերեկ, ձյուն-ձմեռ, վոռֆ-ինչ, առավոտից-իրիկուն, լույս-ցերեկով *և այլն։*

Ինչպես տեսնում ենք, այսպիսի կազմություններին մասնակցում են տարբեր խոսքի մասեր։

Տարբեր բառեր մեկ բարդության մեջ կարող են միավորվել նաև ու շաղկապով։ Այսպիսի բազմյուսական բարդությունները հատկանշական են նրանով, որ հանձինս նրանց բաղադրիչների, իրար կապակցվում են հակառակ իմաստ ունեցող բառեր, հաճախ դրանց բառացի իմաստը չի պահպանվում, և բաղադրյալն արտահայտում է բազմակիության իմաստ։ Այդպիսի մակբայներ են՝ աչ ու ձախ, դես ու դեն, ետ ու առաջ, վար ու վեր *և այլն։*

Տարբեր բաղադրիչներ կարող են իրար միանալ նաև այլ միջոցներով՝ ի. ընդ նախդիրներով, և շաղկապով. օրնիբուն, փոռֆիշատե, վայրիվերո, գիրկընդխառն, այսօր ևեթ, վաղն ևեթ, իսկույն ևեթ, պատն ի վեր, սարն ի վեր, գետն ի վեր, գիշեր ու զօր *և այլն։*

§ 631. Նշվածով չի սպառվում նախդիրների դերը մակբայների կազմության գործում։ Հաճախ նախդիրը, դրվելով այլ խոսքի մասի վրա, ստեղծում է մակբայ, կամ դրվելով մակբայի վրա՝ կազմում է նոր մակբայ, ինչպես՝ առայժմ, առմիշտ, առնվազն, առավել, առայսօր, ընդամենը, իսպառ, ի վերջո *և այլն։*

§ 632. Մակբայների կազմության մեջ ուշադրության արժանի են վերջապես այն կցական բարդությունները, որոնք կազմվում են որոշիչի և որոշյալի կապակցությամբ. ինչպես՝ մեջտեղ, ամենուրեք, միանգամից, միանգամայն։

§ 633. Իսկական բարդությունների քանակը մակբայների մեջ քիչ է։ Այդպիսիք են՝ միաձայն, միաբերան, միաժամանակ, բարձրաձայն, ցածրաձայն, որոտաձայն, կիսաձայն, սրտաոտրոփ, սրտակոտոր, ոտքընչափ *և այլն։*

ԱԾԱՆՑԱՎՈՐ ՄԱԿԲԱՅՆԵՐ

§ 634. Արդի հայերենի մակբայների մի զգալի մասը ածանցավոր է։ Մի քանի ածանցներ մակբայների կազմության մեջ մեծ դեր են կատարում. դրանք մակբայակերտ ածանցներն են՝ (ա)բար, (ա)պես, որեն, ովին, *որոնք բնորոշ են հատկապես մակբայների համար։*

Սրանցից (ա)բար, (ա)պես, որեն *ածանցները հոմանիշներ են։ Դրանք հաճախ միևնույն իմաստն են արտահայտում։ Համմտ. մանրամասնաբար (=մանրամասն կերպով), մանրամասնորեն (=մանրամասն կերպով), խորապես (=խորը կերպով)։ Իմաստով ավելի մոտ են իրար մանավանդ* (ա)բար *և* որեն *ածանցները, և պատահական չէ, որ այդ տարբեր ածանցները հաճախ կարող են դրվել միևնույն բառի վրա ու ստեղծել նույն իմաստն ունեցող մակբայներ։ Համմտ.* բարեկամաբար—բարեկամորեն, ճիշդաբար—ճիշդորեն, ազնվաբար—ազնվորեն, անխղճաբար—անխղճորեն, գիտակցաբար—գիտակցորեն *և այլն։*

§ 635. (Ա)բար *ածանցի հիմնական կիրառություններն են*[55]*.*

1. Այն դրվում է անձ ցույց տվող գոյականների վրա և նշանակում է «իբրև», «նման», «պես», ինչպես՝ աշակերտաբար *(«իբրև աշակերտ», «աշակերտի պես»),* բարեկամաբար, երեխայաբար, թշնամաբար, հայրաբար, որդիաբար, ընկերաբար, մայրաբար, հերոսաբար, սարկաբար, վաշխառուաբար, դավադրաբար *և այլն։*

2. Դրվում է անձի որևէ հատկանիշ (հատկապես մտավոր, բարոյական) արտահայտող բառերի վրա և ցույց է տալիս անձի կատարած կամ անձին հատուկ գործողության հատկանիշ. գիտակցաբար, ազնվաբար, անգիտակցաբար, անխղճաբար, անամոթաբար, ագահաբար, խոնարհաբար, ճիշդաբար, փաղաքշաբար, անիրավաբար, գոռոզաբար, չարամտաբար *և այլն։*

3. (Ա)բար *ածանցը դրվում է նաև կենդանի ցույց տվող մի երկու բառի վրա. աղվեսաբար, գազանաբար, գայլաբար։ Այս մակբայները սովորաբար գործածվում են փոխաբերական իմաստով. աղվեսաբար նշանակում է «խորամանկորեն», գազանաբար՝ «անմարդկային ձևով, դաժանաբար»։ Հանձինս այս մի քա-*

---

55 *Համմտ.* Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն, 1931, էջ 253։*

նի գոյականների, որոնցից մակբայ են կազմվում, նկատի են առնվում նրանցով ցույց տրվող կենդանիների բնորոշ գծերը։

4. Եթե նկատի ունենաք (ա)բար ածանցի ծագումնային իմաստը, կարելի է ասել, որ այն պիտի գործածվեր միայն վերոհիշյալ բառերի հետ։ Սակայն քանի որ այն հեռացել է իր նախնական իմաստից և ձեռք բերել «իբրև», «կերպով», «պես» իմաստները, ուստի դրվում է նաև մի շարք այլ բառերի վրա, որոնք իմաստային մեկ ընդհանուր հատկանիշ չունեն և ցույց են տալիս հատկանիշ, ժամանակ, բառերի տեսակ (խոսքի մաս)՝ վայրկենաբար, րոպեաբար, անմիջաբար, պատահաբար, մանրամասնաբար, աստիճանաբար, ածականաբար, գոյականաբար։

§ 636. (Ա)պես ածանցի նախնական իմաստը հասկանալի է. այն նշանակել է «նման», «պես». բժշկապես «որպես բժիշկ», «բժշկի պես», տղայապես, օտարապես «տղայի, օտարի պես», «որպես տղա, որպես օտար»։ Սակայն այժմ նա այս իմաստը այլևս չունի և ձեռք է բերել «կերպով», «ձևով», (այս կամ այն) «տեսակետից» իմաստները։ Օրինակ՝ խորապես՝ խորը կերպով, գաղափարապես՝ գաղափարի կամ գաղափարական տեսակետից (և ոչ թե «գաղափարի պես», «խորի պես»)։

Այս ածանցը գերազանցապես դրվում է ածականների վրա՝ գլխավորապես, մասնավորապես, կատարելապես, գերազանցապես, հիմնավորապես, հատկապես, մեծապես և այլն, ու նշանակում է (այս կամ այն) «կերպով», «ձևով», երբեմն «չափով», ընդհանրապես՝ ընդհանուր կերպով, գերազանցապես՝ գերազանց չափով, առավել չափով։

Նույն իմաստով մակբայներ կազմելու համար (ա)պես ածանցը միանում է նաև մի քանի գոյականների. ինչպես՝ իրապես, վրեոապես, էապես, արմատապես և այլն։

Ժամանակի իմաստ ունեցող մի քանի գոյականներով, մակբայներով և նույն (ա)պես ածանցով կազմվում են ժամանակի մակբայներ՝ վայրկենապես, վերջապես, սկզբնապես, նախապես, մշտապես։

Դերանուններն այս տեսակետից պասիվ են. դրանցով և (ա)պես ածանցով կազմված ունենք միայն ամբողջապես, այլապես մակբայները։

(Ա)պես ածանցով կազմված մի շարք մակբայներ մասնա-

վորման իմաստ են արտահայտում՝ ցույց տալով, որ հատկանիշը վերագրվում է առարկային այս կամ այն տեսակետից։ Այսպիսի իմաստով մակբայները կազմվում են՝

ա) Գոյականով կամ հարաբերական ածականի մինչ ական ածանցը եղած մասով. ինչպես՝ առանձնապես, գաղափարապես, մարմնապես, պաշտոնապես, հոգեպես, նյութապես, տնտեսապես, ֆինանսապես, բարոյապես *և այլն։*

բ) Ածականով՝ բաղաքականապես, մտավորապես, արտաքինապես, ներքինապես *և այլն։*

§ 637. Որեն *ածանցն արտահայտում է «նման», «ձևով» իմաստ։ Այն ամենից շատ դրվում է ածականների վրա, կազմելով նշված իմաստով մակբայներ.* անշեղորեն, բարեխղճորեն, անբարեխղճորեն, միամտորեն, երկմտորեն, աներկմտորեն, լայնորեն, ծանրորեն, փարթամորեն, սերտորեն, բացարձակորեն, անգիտակցաբար *և այլն։*

Ծանոթ.— *Երբ* որեն *ածանցը դրվում է* ական-*ով կազմված ածականների վրա, այդ ածականակերտ ածանցը մեծ մասամբ պահպանվում է, ինչպես, օրինակ՝* կամայականորեն, հետևողականորեն, անմիջականորեն, տեսականորեն, գիտականորեն, դրականորեն, տոնականորեն, հաղթականորեն *և այլն։*

Որեն *ածանցը կարող է դրվել գոյականների վրա. ինչպես՝* բոլշևիկորեն, կոմունիստորեն, աշակերտորեն, վարպետորեն, բռնապետորեն *և այլն։*

Այս ածանցը դրվում է նաև մի երկու մակբայների վրա. ինչպես՝ դանդաղորեն, արագորեն, խստորեն։

Որեն *ածանցով կազմված մի շարք մակբայներ ևս արտահայտում են մասնավորման իմաստ՝ նշանակելով «այս կամ այն տեսակետից»։ Այդպիսիք են՝* գիտականորեն, տեսականորեն, գործնականորեն, կազմակերպորեն, բերականորեն *և այլն։*

§ 638. Մյուս մակբայակերտ ածանցն է ովին, *որը բաղադրյալ է՝ կազմված գործիական հոլովի* ով *վերջավորությունից և իճ մասնիկից։ Դրանով կազմված են համեմատաբար փոքր թվով մակբայներ. ինչպես՝* լիովին, կամովին, բոլորովին, գլխովին, ամբողջովին, ճիմնովին *և այլն։*

Նույն սկզբունքով բաղադրյալ ածանց կազմվում է նաև իճ մասնիկը կցելով հին գործիականի աւ (այժմ՝ ավ), ինչպես և հին բացառականի ուստ վերջավորություններին. ինչպես՝ տակավիճ. վերստիճ:

§ 639. Մակբայները կազմվում են այլ ածանցներով ևս, որոնք մասնակցում են նաև ուրիշ խոսքի մասերի կազմությանը: Հենց այդ պատճառով էլ մակբայ կազմելու իրենց դերով այս ածանցները դիջում են մակբայակերտ ածանցներին: Այդ ածանցներն են՝ ակի, այն, իճ, ուկ:

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԻՑ ԿԱԶՄՎԱԾ ՄԱԿԲԱՅՆԵՐ

§ 640. Մակբայների մի մասը կազմվել է ու կազմվում է քերականական ձևերից: Այս կարգի մակբայների մեծ մասը առաջացել է բացառական և գործիական հոլովներից:

Բացառական հոլովից առաջացած մակբայներ են (մեծ մասամբ գրաբարի, մի քանիսը նաև աշխարհաբարի)՝ ներքուստ, արտաքուստ, վերուստ, հանպատրաստից, հնուց, վաղուց, առաջուց, կամաց, ձեռաց, նորից, միանգամից, մեկից (=միանգամից, հանկարծ) և այլն:

Գրաբարյան, մասամբ էլ ժամանակակից հայերենի գործիականից են առաջացել հետևյալ մակբայները՝ հազիվ, սակավ, բրնավ, դիտմամբ, մասամբ, անձամբ, պատահմամբ, մեղմիվ, ճշտիվ (քիչ գործածական), փութով, շուտով և այլն:

Ծանոթ.— *Գրաբարյան գործիական հոլովի վերջավորությունների հետ միասին երբեմն հանդես են գալիս ի, իճ ածանցները, ինչպես՝* յուրովի, կամովին, գլխովին, բոլորովին, տակավին: *Այդպիսի բառերի* ովի, ովին, ավին *մասնիկները այժմ գիտակցվում են իբրև ածանց (իհարկե, բաղադրյալ), այդ ածանցները և դրանցով կազմված բառերը քննված են ածանցավոր մակբայների բաժնում:*

Սեռական հոլովը մակբայների առաջացման հարցում պասիվ դեր է կատարում, որովհետև այն սովորաբար չի կապվում գործողության հետ, այլ դրվում է գոյականների վրա, երբ այդ ձևը ձեռք է բերում հատկանիշի իմաստ: Այսպես՝ հավետ *բառից ու-*

Ննենք հավիտյան ձևը, որը հատկանիշ է ցույց տալիս, նշանակում է «միշտ»։

Ներգոյական հոլովից առաջացել են՝ ներկայումս *(ներգոյականի ձևին միացել է ցուցական ս հոդը),* ճնում *(ժամանակի իմաստով և ոչ թե «հին առարկայի մեջ»),* հետագայում, հիմնականում:

Հայցական հոլովից ևս առաջացել են մակբայներ։ Դրանք հիմնականում արմատական են և քննվել են վերը։ Այստեղ կարող ենք հիշատակել նաև դուրս մակբայը, որը հոգնակի հայցականից է ծագում (դուռն գոյականի)։ Վերջապես հայցականը հանդես է գալիս նաև նախդրավոր ձևերում. ինչպես՝ ցմահ, ցարդ *և այլն։*

Տարբեր հոլովաձևեր հաճախ մտնում են անիսկական բարդությունների տարբեր տեսակների, նախդրավոր կազմություններ մեջ, ինչպես, օրինակ՝ տեղ-տեղ, ալիք-ալիք, *բայլ առ բայլ,* ժամանակ առ ժամանակ, *բստիճբյան, ծայրեծայր,* հազիվհազ *և այլն։ Քանի որ այդպիսի մակբայների մասին խոսք եղել է վերը (բարդ մակբայների բաժնում), ուստի նորից չենք անդրադառնում դրանց։*

Դրաբարյան բայի քերականական ձևերից մակբայներ շատ քիչ են առաջացել։ Դրանք են՝ դարձյալ *(անցյալ դերբայից),* համարյա *(հրամայական եղանակից),* գրեթե *(հրամայական եղանակից՝ թե շաղկապով)։*

ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ՄԱԿԲԱՅՆԵՐ

§ 641. Նկարագրական մակբայները բառերի կիսակայուն կապակցություններ են, որոնք ունեն մակբայական իմաստ ու մակբայական կիրառություն։

Նկարագրական մակբայները մեծ մասամբ կազմվում են երկու բաղադրիչներից. ինչպես՝ ամենից առաջ, ժամ առաջ, մեծ մասամբ, կիսով չափ, վերին աստիճանի, ծայր աստիճան, չափից ավելի, չափից դուրս, մի կերպ, ազատ կերպով, արտում կերպով, հանդիսավոր կերպով, բանի գնում, առաջին հայացքից *և այլն։*

Երեք բաղադրիչներից բաղկացած նկարագրական մակբայները համեմատաբար քիչ են։ Դրանցից են՝ մինչև որ աստիճան, օր-օրի վրա և այլն։

Նկարագրական մակբայների կազմության հարցում առանձնապես ակտիվ դեր է կատարում կերպ բառը և՛ ուղիղ, և՛ թեքված ձևով (կերպով). վերջինիս մեջ հոլովական իմաստը մթագնվել է։ Կերպով բառը կարող է դրվել շատ ածականների (հատկապես որակական) վրա և նրանց հետ միասին կազմել նկարագրական մակբայ. ինչպես՝ հանդիսավոր կերպով, մասնավոր կերպով, անվերադարձ կերպով, անհողդողդ կերպով և այլն։ Կերպ-ը կարող է դրվել համեմատաբար սակավաթիվ բառերի վրա, որոնք են՝ մի, այլ, ուրիշ, ինչպես՝ մի կերպ, այլ կերպ, ուրիշ կերպ։

Նկարագրական մակբայների մեջ համեմատաբար շատ հանդես եկող բաղադրիչներից է առաջ բառը։ Սակայն դրա գործածության շրջանակները, այնուամենայնիվ, սահմանափակ են, և նա ակտիվության տեսակետից չի կարող մրցել կերպով բառի հետ։ Առաջ բառով կազմված նկարագրական մակբայներ են՝ ամենից առաջ, ժամ առաջ, օր առաջ, նախ և առաջ, ետ ու առաջ (ետ և առաջ)։

Նկարագրական մակբայների բաղադրիչները տարբեր չափով են միատնական։ Նրանք, որոնց բաղադրիչներն ավելի սերտորեն են կապված միմյանց, համեմատաբար շուտ կվերածվեն մեկ բառի։ Այդպիսիք են՝ ետ ու առաջ, ծայր աստիճան և այլն։ Իսկ, օրինակ, չափից ավելի, հանդիսավոր կերպով, տրտում կերպով և նման կապակցությունների բաղադրիչները այնքան էլ սերտորեն չեն կապված միմյանց հետ։

ՄԱԿԲԱՅՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԻՄԱՍՏԻ

§ 642. Մակբայների տեսակները որոշվում են ըստ այն բանի, թե հատկանիշի ինչպիսի հատկանիշ են ցույց տալիս՝ տե՞ղ, ժամանա՞կ, ձև՞, թե՞ չափ։ Մակբայների մեծ մասի մեջ այդ իմաստները որոշակիորեն են երևում, ուստի և այդպիսիների տեսակային պատկանելությունը որոշելը դժվար չէ։ Սակայն տեղի, ժամանակի, ձևի, չափի իմաստները մի շարք մակբայների մեջ որոշակիորեն ու անխառն չեն դրսևորվում։ Այսպես, հանկարծ մակ-

բայի մեջ կա ժամանակի որոշ իմաստ (այն առումով, որ այն նշում է գործողության խիստ կարճ ժամանակում, երբեմն մեկ ակնթարթում կատարվելը), բայց ձևի իմաստը (խիստ արագորեն, անսպասելիորեն) ավելի ակնհայտ ու քնորոշ է այդ բառի համար, ուստի և այն համարում ենք ձևի մակբայ։

Կան մակբայներ, որոնք մի կիրառության մեջ մի իմաստ են արտահայտում, մի այլ կիրառության մեջ՝ այլ իմաստ։ Օրինակ, մեկ-մեկ մակբայը կարող է արտահայտել և՛ ձևի իմաստ (Մեկ-մեկ խոսեցնք, ընկերներ—ԱՄ, Ոսկե մեդալ), և՛ չափի իմաստ (Հիմա էլ սիրտս մեկ-մեկ մորմոքվում է—Սա, Հողը, 1)։ Վերջին օրինակում առկա է նաև ժամանակի իմաստի թույլ երանգ։

Վերջապես կան մակբայներ, որոնք միևնույն կիրառության մեջ հավասարապես ունեն տարբեր իմաստներ։ Այսպես՝ շարունակ, անընդհատ մակբայներն ունեն և՛ չափի, և՛ ձևի, և՛ ժամանակի իմաստ։ Մակբայների տեսակները որոշելիս անհրաժեշտ է հաշվի առնել նրանց իմաստային նշված յուրահատկությունները։

Մակբայներն ըստ իմաստի լինում են՝ ժամանակի, տեղի, ձևի, չափի և ընդհանրական:

ԺԱՄԱՆԱԿԻ ՄԱԿԲԱՅՆԵՐ

§ 643. Ժամանակի մակբայները ցույց են տալիս գործողության, եղելության ժամանակը։ Դրանք կարելի է բաժանել մի քանի խմբերի, նայած իրենց արտահայտած ժամանակի իմաստի յուրահատկությանը։

§ 644. Ժամանակի տարորոշում չարտահայտող, գործողության կամ այլ հատկանիշի մշտատևություն ցույց տվող մակբայներ. միշտ, առմիշտ, մշտապես, հար, հավետ, առհավետ, հավիտյան, ընդմիշտ և այլն։

Օրինակներ՝ Կարող եք և մշտապես ազատվել, եթե մեզ համար մի փոքր գործ ևս կատարեք (ԴՍ, Թեհրան, 2)։ Իր օտարոտի վարմունքով սիրած երիտասարդին կորցրեց ընդմիշտ իր համար (ՆԴ, Մահը)։ Թող հավետ հնչի գուսլին ռուսական Մեր հայկական տավղի ու փանդիռի հետ (ՍՏ, Թող հավետ հնչի)։ Թողած հեռու Հալեպում Պանդխտությունը առմիշտ Վերածնվեց նոր կյան-

քով Այստեղ ազատ ու անվիշտ (ՍՏ, Բարդին երեք տարեկան)։ Ինձ ոչ մի հարված չի դիպել երբեք (ՊՍ, Մի խորունկ գաղտնիք)։ Այնուհետև ես իմ առաջարկությունը այլևս չկրկնեցի (ԳՄ, Մանկություն և պատանեկություն)։

§ 645. Ժամանակի մակբայներից մի քանիսը ցույց են տալիս տարորոշված ժամանակ՝ ներկա, անցյալ, ապառնի, բայց, իհարկե, ոչ իրրև ժամանակի քերականական կարգ։ Դրանք են՝ այժմ, հիմա, ներկայումս, հիմա, վերջերս, հետագայում, շուտով, հետո[56] և այլն։ Նա այժմ յուր սենյակումն է (ԳՍ, Թեհրան, 2)։ Հիմա խո երեխա չեմ... բավական մեծ եմ (Ր, Սամվել)։ Հավատացեք ներկայումս ապրում են միայն դերասանուհիները, իսկ ինձ նմանները թշվառ են (Շիրվ., Քաոս)։ Դուք հետագայում կհամոզվեք (Սխ, Հողը, 2)։ Բայց ե՞րբ։ —Շուտով, հենց այս քանի օրը (Մուր., Առաքյալը)։

Մի քանի մակբայներ որոշ չափով նման են նախորդներին, բայց և ունեն զգալի յուրահատկություն։ Դրանք են՝ նախ, կանուխ, նախօրոք, նախապես, ուշ։ Նախավերջին խմբում նշված մակբայները որոշակիորեն ցույց են տալիս ներկա, անցյալ, գալիք ժամանակներ, և դրա պատճառը այդ մակբայների իմաստը ներկա ժամանակի՝ խոսելու պահի համեմատությամբ առնվելն է, մինչդեռ այս վերջին մակբայների ժամանակի իմաստը ձևավորվում է ոչ հատկապես ներկայի համեմատությամբ, այլ որևէ ժամանակի համեմատությամբ որպես այդ ժամանակին նախորդող կամ հաջորդող, մոտիկ կամ հեռու։

Համմտ. Նախ *սովորեց։*	Նախ *կսովորի։*
Նախապես *հայտնեց։*	Նախապես *կհայտնի։*
Նախօրոք *պատրաստվել ենք։*	Նախօրոք *կպատրաստվենք։*

56 *Վերջին երեք բառերը այս շարքում դնում ենք որոշ վերապահությամբ, որովհետև դրանք ոչ միայն խոսելու պահի համեմատությամբ ապառնի, գալիք ժամանակ են ցույց տալիս (օրինակ՝ Մենք հետագայում պիտի զբաղվենք այդ հարցով), այլև գործածվում են անցյալի համեմատությամբ մի գալիք ժամանակ ցույց տալու համար (օրինակ՝ Սխալ է այն կարծիքը, թե Պոլսի լեզուն է, որ, հետագայում վերամշակվելով դառնալ գրական լեզու —ՀՆԳՊ, 2, Հետո նա բոլորին խնդրեց անցնել այնտեղ — Շիրվ., Քաոս)։*

Օրինակ՝ Դռնից դուրս նայեց, նախ Վարդանին և ապա Արծվիին դիտեց (ԴԴ, Վարդանանք, 1)։ Ուշ թե կանուխ թռնիմ կուգամ (Իս., Բայրամ Ալին)։ Չէ՞ որ եկեղեցին, կարծես, դիտմամբ, առավոտյան այնպես ուշ է զանգերը տալիս, իսկ երեկոյան այնպես կանուխ, չափազանց կանուխ (Իս., Մեծ ճշմարտությունը)։

Ճիշտ է, նախորդ խմբի մակբայներից մի երկուսը ևս երբեմն իրենց իմաստը դրսևորում են խոսելու պահի համեմատությամբ, բայց դա բնորոշ չէ նրանց համար։

Մի քանի մակբայներ ժամանակի համեմատաբար մասնավոր իմաստ են արտահայտում՝ կապված ժամանակի միավորների հետ. ինչպես՝ առավոտյան, երեկոյան, կեսօրին, կեսգիշերին, գիշերով, ցերեկով, օրը ցերեկով, լույս ցերեկով և այլն։

Օրինակ՝ Եկան ասացին, որ երեկոյան հայտարարվում է ընդհանուր ժողով (ՆՉ)։ Ընկերուհիները զրուցելով կեսգիշերին վերադառնում էին տուն (ՍՉ, Օրիորդ Մարիամը)։ Միխայլովը պատիվ տվեց ու դուրս եկավ գիշերով Սերգեյենկոյի գունդը գնալու (ՀՔ, Մեծ տան զավակները)։ Լույս ցերեկով անգամ այդ ոլորապտույտ անդուղքներով գնացողը կարող էր ամեն րոպե մոլորվել (Ր, Սամվել)։

§ 646. Մի շարք մակբայներ ցույց են տալիս ժամանակի միավորի կրկնվելն իրար հետևից և այդ պատճառով ունեն տևականության իմաստ։ Դրանք մեծ մասամբ կրկնավոր բարդություններ են, ըստ որում, կազմվում են ժամանակ ցույց տվող որևէ բառի կրկնությամբ՝ ամսեամիս, տարեցտարի, դարեդար, օրեցօր, օր-օրի (կա նաև՝ օր-օրի վրա), օրըստօրե, րոպե առ րոպե, ժամ առ ժամ և այլն։ Օրինակ՝ Նրա մարմնական զորությունները օրըստօրե սպառվում էին (Ր, Անմեղ վաճառք)։ Դրաբարն է հնչել դարեդար (ՊՍ, Անլռելի զանգակատուն)։ Այդ հեղուկն օր-օրի վրա պիտի ավելացնի Ալիմյանների հարստությունը (Շիրվ., Քաոս)։ Այսպիսով, տարեցտարի շատանում է վրանների թիվը (ՂԱ, Արևամանուկ)։ Տանը տեսնում էին, թե ինչպես Արսենն օրեցօր նիհարում է, մաշվում (ԳՍ, Թեհրան)։ Ժամ առ ժամ Արևիկի դրությունը դառնում էր վտանգավոր (ՍԽ, Հողը, 1)։

Ինչպես դժվար չէ նկատել, այս մակբայների մեջ առկա է գործողության կրկնության իմաստ՝ պայմանավորված այն ժամանակի հաջորդական կրկնությամբ, որի ընթացքում կատարվում

է գործողությունը, հարատևում է հատկանիշը։ Սակայն դա սովորական, պարզ կրկնություն չէ, այլ մի այնպիսի անընդհատ կրկնություն, որի ընթացքում աճում է գործողության չափը, սաստկանում է գործողությունը։ Դա է պատճառը, որ այդ մակբայները չեն դրվում զուտ շարժման իմաստ ունեցող բայերի վրա (օրինակ՝ գալ, գնալ, գրոսնել, ճանապարհվել, շարժվել, երթևեկել, տեղափոխվել և այլն), այլ սովորաբար դրվում են այնպիսի բայերի վրա, որոնց մեջ կա հատկանիշի իմաստ, և բայը կարող է ցույց տալ այդ հատկանիշի նվազում կամ աճում։ Այդպիսի բայեր են՝ ավելանալ, պակասել, ճարտանալ, աղքատանալ, զարգանալ, աճել, մեծանալ, փոքրանալ, շատանալ, նվազել, նիհարել, հզորանալ, փարթամանալ, չաղանալ, էչանալ և այլն (տարեցտարի հզորանալ, օրավուր աճել, օրեցօր զարգանալ, օրըստօրե փարթամանալ, րոպե առ րոպե պակասել, ժամ առ ժամ ավելանալ և այլն)։

§ 647. *Մի քանի մակբայներ՝* օր ու գիշեր, գիշեր-ցերեկ, օրնիբուն, զօրգիշեր *(քիչ գործածական, հնացած)*, գիշեր ու զօր *(քիչ գործածական, հնացած)*, գիշերն ի բուն և այլն, որոշ չափով մոտ են վերոհիշյալ մակբայներին, որովհետև դրանք ևս ունեն տևականության զգալի իմաստ։ Սակայն և տարբերվում են նախորդներից նրանով, որ սրանք չեն արտահայտում գործողության աստիճանական սաստկացում, նրա չափի աճ։ Օրինակ՝ երգեմ պիտի գիշեր-ցերեկ ու սրտի խաղ պիտի ասեմ *(ԵՉ, Աշուղ Սայաթ-Նովի նման)*։ Օրնիբուն համառ ձուլում, կառուցում է *(ՍՏ, Վրացական գիշեր)*։ Ու դու այսօր հերկվոր ես հաղթ ու քո ձայնով զօր-գիշեր Տրակտորիստ իմ քույրերի երգն է սուրում սարնիվեր *(ՀՇ, Խաղաղություն)*։

Այս մակբայները որքան շատ են հեռանում իրենց բառացի իմաստից, այնքան ավելի շատ են շեշտում ժամանակի տևականությունը։ Այսպես՝ գիշերն ի բուն մակբայը, որ լայն տարածում չունի, գործածվում է հենց իր բառացի իմաստով, նշանակում է «ամբողջ գիշերը». Ու գիշերն ի բուն ցավից կարկամեց *(ՀՇ, Մոր սերը)*։ Իսկ համապատասխան կազմություն ունեցող օրնիբուն մակբայը ցույց է տալիս ոչ թե մեկ ամբողջ օր, այլ ավելի հաճախ՝ իրար հաջորդող, բազմաթիվ ամբողջ օրեր (տե՛ս վերևի օրինակը)։

§ 648. Ժամանակի իմաստ ունեցող մակբայներից մի քա-

Նիսը ցույց են տալիս, թե երբվանից է սկսվում կամ մինչև երբ է տևում գործողությունը, եղելությունը։ Դրանք են՝ վաղուց, մանկուց, փոքրուց, առաջուց, ճնուց, այսուհետև, այժմյանից, այնուհետև, ցարդ, ցայժմ, ցմահ և այլն։ Օրինակ՝ Վաղուց չէր տեսել նման հանդեսներ (Շիրվ., Քառս)։ Պապը պատմեց մանկուց լսած զրույցը (Սև, Հողը, 2)։ Դու մի ասիլ՝ ճնուց էդ պատում գանձ է եղել պահած (ՀԹ, Խելոքն ու հիմարը)։ Ցմահ նրանց տեղը բանտն է (ԳՍ, Թեհրան, 2)։ Փոքրուց դեռ լսել էր, որ Հաշիմը գնացել է փող վաստակելու (ԳՍ, Թեհրան, 2)։ Այնուհետև ես իմ առաջարկությունն այլևս չկրկնեցի (ԳՄե, էջ 317)։

§ 649. Ժամանակի իմաստի դրսևորման և առհասարակ իմաստային փոփոխության տեսակետից զգալի հետաքրքրություն են ներկայացնում արդեն, դեռ, դեռևս, տակավին, իվերջո, վերջ ի վերջո, վերջապես մակբայները։

Այս բոլոր մակբայների ժամանակի իմաստը զգալի չափով անառարկայական է դարձել կամ գոնե այդպիսին դառնալու վիճակում է։ Իմաստային այս փոփոխությունը զուգակցվում է խոսողի որոշ վերաբերմունքի առաջացման հետ նրանց մեջ՝ գործողության կատարված կամ չկատարված, ինչպես և կատարելի լինելու տեսակետից։

Օրինակ՝ Ջուրն արդեն թևերի տակն էր հասել (ՎԱ, Սևանի ափին)։ Շահյանը դեռևս մտատանջվում էր, թե ինչպես տեսնվի Բազենյանի հետ (ՆԴ, Մահը)։ Նա դեռ մտքում համոզված էր, որ վերջ ի վերջո Միքայելը պիտի հաշտվի նրա հետ (Շիրվ., Քառս)։ Քեթևանի հիվանդությունը տակավին նույն դրության մեջն էր (Ր, Անմեղ վաճառք)։ Վերջապես ներս մտավ Ռոստոմը (Ր, Սամվել)։

Խոսողի որոշ վերաբերմունք կա նաև ժամանակի այն մակբայների մեջ, որոնք կազմվում են ևեթ կապակցությամբ ու ժամանակի իմաստ ունեցող որևէ բառով. այսօր ևեթ, վաղն ևեթ (վաղը ևեթ)։ ԵՒեթ բաղադրիչը այդ բառերին տալիս է գործողության կատարման փաստի կամ նրա անհրաժեշտության անհետաձգելիությունը այն ժամանակում, որի անվան վրա դրվելով՝ կազմվում է տվյալ մակբայը։ Օրինակ՝ Այսօր ևեթ (հենց այսօր—Ս. Ա.) դիմեցեք մի ճարտարապետի և հատակագիծը պատվիրեցեք (Շիրվ., Քառս)։ Կարող էի վաղը ևեթ տեղափոխվել (Ն. տ.)։

§ 650. Մի երկու մակբայներ ունեն ժամանակի անորոշ ի-

մասամ։ Դրանք են՝ առժամանակ, միառժամանակ, ժամանակով, մի ժամանակ և այլն։ Օրինակ՝ Դրիգորը հազում է և բժիշկների խորհրդով առժամանակ դադարել է գիմնազիոն հաճախելուց (ՆՂ, Աննա Սարոյան)։ Կմնա Կովկասում միառժամանակ (Շիրվ., Քաոս)։ Ժամանակով մի տղա է եղել, ջահել, սիրուն, հարուստ մի տղա (Իս., Հովվերգություն)։

ՏԵՂԻ ՄԱԿԲԱՅՆԵՐ

§ 651. Տեղի մակբայները ցույց են տալիս այն տեղը, որտեղ կատարվում է գործողությունը։ Դրանք են՝ ամենուր, ամենուրեք, դեմառդեմ, դեմդիմաց, դեմ-հանդիման, դեմուդեմ, առաջ, վեր, վար, այլուր, ետուռ, դռնեդուռ, գյուղեգյուղ և այլն։

Քննենք այս մակբայների տեղի իմաստի տարբեր դրսևորումները։

§ 652. Ամենուր, ամենուրեք մակբայները տեղ են ցույց տալիս միանգամայն ընդհանուր իմաստով, այսինքն այդ մակբայների ցույց տված տեղը սահմանափակված չէ որևէ հարաբերությամբ, որևէ ձևով։ Օրինակ՝ Ամենուրեք շնչում էր անսպառ հաճույքն, ամենուրեք տիրում էր անթառամ զվարթությունը (Ր, Սամվել)։ Բռընկած Կարմիր Ուրագանը մի օր Այս հերձեցյալ երկրում և ամենուր Գարնան անձրև դարձավ (ԵՉ, Յոթը խորհուրդ գալիքի սերմնացաններին)։

§ 653. Մի շարք մակբայների արտահայտած տեղի իմաստը համեմատաբար մասնավորված է. այդ մասնավորումը կամ սահմանափակումը կատարվում է խոսողի կամ որևէ առարկայի այս կամ այն կողմը նկատի ունենալու միջոցով։ Այդպիսիք են՝ դեմառդեմ, դեմդիմաց, դեմուդեմ, դեմ-հանդիման, վար, ընդառաջ, վեր, վերուստ և այլն։ Օրինակ՝ Լուռ հրավիրեց երիտասարդներին նրան տել դեմուդեմ (Շիրվ., Քաոս)։ Նա... կանգնեց սենյակի մեջտեղ (ԴԴ, Վարդանանք, 1)։ Ու բարձրանում էին վեր՝ արևին (ԵՉ, Էլեգիա՝ դրված վենետիկում)։

Վեր, վար մակբայներից ոչ միայն ձևով, այլև իմաստով որոշ չափով տարբերվում են վերը, վարը։ Եթե անհոդ ձևերը ուղղության և գործողության տեղի վախճանակետի իմաստ ունեն (Երեխաները բարձրացան վեր), ապա հոդով ձևերը ցույց են տա-

վիս այն տեղը, որտեղ կատարվում է գործողությունը կամ կա ավյալ հատկանիշը, առարկան։ Օրինակ՝ Վերը, կապույտ երկնքում, ուրուրները թևաբաց են բազեներն են ճախրում լեշակարոտ ու ագահ (ՍՏ, Վրաստանի լեռներում)։ Վարը, որպես հեռու անդարձ կյանքի մի հուշ՝ Տարածվել էր մի նուրբ ու թափանցիկ մշուշ (ԵՉ, Վերադարձ)։

Համեմատաբար այլ է ներու մակբայի իմաստը։ Նրա իմաստը չի մասնավորվում առարկայի որևէ կողմի ուղղությամբ. նա առարկային ոչ մոտ լինելու, հեռավորության իմաստ է արտահայտում։ Օրինակ՝ Բյուրավոր ճառագայթները զմայլելի բոցեղեն ծովից տարածվում են ներու ու ներու (Շիրվ., Քառս։)

§ 654. Մի շարք մակբայներ ունեն տեղի բազմակիության իմաստ, ավելի կոնկրետ՝ դրանք ցույց են տալիս, որ գործողությունը կատարվում է նույն տեսակի մեկ տեղից մյուսն անցնելով։ Այդ մակբայները կազմության տեսակետից ևս ունեն զգալի յուրահատկություն՝ տեղ ցույց տվող մյուս մակբայների համեմատությամբ. դրանք այնպիսի կրկնավոր բարդություններ են, որոնց առաջին բաղադրիչը դրված է բացառական հոլովով։ Այդ մակբայները սովորաբար գործածվում են շարժում ցույց տվող այնպիսի բայերի հետ, ինչպիսիք են՝ վազել, գնալ, շրջել, շրջագայել, թափառել, զբոսնել, մաճ գալ, երթևեկել, անցնել, փոխանցել, սլանալ և այլն։

Այդպիսի մակբայներ են՝ դռնեդուռ, գյուղեգյուղ (գյուղից-գյուղ), ձեռից-ձեռ, տեղից-տեղ և այլն։

Օրինակներ՝ Գյուղեգյուղ, ավանեավան շրջում էին փախստական շինականները (ԴԴ, Վարդանանք, 1)։ Հարբած զինվորականները դռնեդուռ ման են գալիս (Ա. Վարդանյան)։

Տեղի բազմակիության իմաստ ունեն նաև բառի ուղիղ ձևի կրկնությամբ ու առ նախդրի միջոցով կազմված մակբայները. ինչպես՝ գյուղ առ գյուղ, խաղաղ առ խաղաղ, փողոց առ փողոց. տուն առ տուն և այլն։

ՉԵՎԻ ՄԱԿԲԱՅՆԵՐ

§ 655. Այս մակբայները բնորոշվում են որպես գործողության ձև ցույց տվող մակբայներ, ինչպես՝ սրագ-սրագ քայլել,

զույգ-զույգ շարվել և այլն։ Սրանք, սակայն, հաճախ ոչ թե արտաքին՝ ձևային հատկանիշ են արտահայտում, այլ ներքին, որակական, ինչպես՝ ազնվորեն աշխատել, բարեխղճորեն վերաբերվել, գիտակցորեն մոտենալ և այլն։ Այս տեսակի մեջ են մտնում նաև այնպիսի մակբայներ, ինչպիսիք են՝ ճերպակաճորեն (վերլուծել), խաղախականապես (պատրաստվել), բարոյապես (հաղթել) և այլն, որոնք դժվար կարող են ըմբռնվել որպես գործողության ձև։ Այս բոլորը միավորվում են մեկ տեսակի մեջ բուն այն բանի, որ արտահայտում են գործողության կամ հատկանիշի որակի[57] (ներքին կամ արտաքին), բնույթի իմաստ։ Այնպես որ սրանց՝ ձևի մակբայ անվանումը խիստ պայմանական է։

Հիմնական գծերով զգալի ընդհանրություններ ունենալով հանդերձ, ձևի մակբայները հատկանիշի իմաստի բնույթի տեսակետից ունեն նաև որոշ տարբերություններ։

§ 656. Մի շարք ձևի մակբայներ ցույց են տալիս գործողության կատարման արտաքին հատկանիշը, մասնավորապես գործողության ընթացքի ձևը։ Դրանք են՝ կամաց, կամացուկ, կամաց-կամաց, արագ, արագ-արագ, արագորեն, դանդաղ, դանդաղորեն, շտապ, հանկարծ, միանգամից, փոխ-փոխ, ծանր-ծանր, ծանրորեն, հապճեպ և այլն։

Օրինակներ՝ Կամաց, ճիշտորեն ուղղեց ճակատիս վրա թափված մազերը (ՆԴ, Աննա Սարոյան)։ Յուցամատը ծանր-ծանր թափահարեց (ՊՊ, Գյուղական վարժապետներ)։ Առատ ու հաստ հոնքերը ծանրորեն վայր էին ընկնում մոխրագույն աչքերի վրա (ԲՎ, Լեռների որդին)։ Միանգամից պայթեց տասնյակ շների հաչոցը (ՍԽ, Հողը, 1)։ Վարդագույն շուրթերը ջղաձգորեն սեղմվել էին իրար (ԿՋ, Նավը լեռան վրա)։

Մի շարք մակբայներ իմաստով նման են նախորդներին, բայց և ունեն զգալի յուրահատկություն։ Սրանք ևս ցույց են տալիս հատկանիշի արտաքին հատկանիշը՝ ձևը։ Նախորդներից տարբերվում են նրանով, որ սրանց ցույց տված արտաքին հատկանիշը վերաբերում է ոչ թե գործողության ընթացքի բնույթին, այլ գործողությունը կատարող կամ գործողության օբյեկտ հանդիսա-

57 Որոշ քերականներ այս մակբայները անվանել են որակական մակբայներ, տե՛ս, օրինակ, Ս. Պալասանյան, Քերականություն մայրենի լեզվի, 1894, էջ 69, Մ. Աբեղյան, Աշխարհաբարի քերականություն, 1906, էջ 65։

ցող առարկաների վիճակի բնույթին՝ կապված այն կատարելու կամ նրան ենթարկվելու հետ։ Այդ մակբայներն են՝ մեն-մենակ, զույգ-զույգ, կեցե-կեցե, ջոկ-ջոկ, առանձին-առանձին, միասին, կուզեկուզ, բերանբերան, ճոռնկայս, չորեքթաք *և այլն։ Օրինակ՝ Մի քանի օր նա մեն-մենակ գնաց Մշկահանդ (Սխ, Հողը, 1)։ Նրանք ջոկ-ջոկ բռնել էին մորս և նրան պահել (ԴՄ, Մանկություն և պատանեկություն)։ Զինվորները զույգ-զույգ, խմբերով կամ մենակ սլանում էին տեղից տեղ (ԴԴ, Վարդանանք, 1)։ Վանահայրն ընկավ և չորեքթաք մղվեց դեպի դուռը։ Արի ինձ մոտ, Արփինե, միասին փնտրենք (ԱՍ, Ոսկե մեղալ)։ Որսկանը որդու հետ կուզեկուզ գնաց վայրի խոտերի ու մոշի թփերի միջով (Սխ, Հողը, 1)։ Պատվիրակներն ու հյուրերը ճոռնկայս հարգեցին Հայրենական մեծ պատերազմի հերոսների հիշատակը (մամուլ)։ Մարդիկ զույգ-զույգ, կեցե-կեցե կանգնած էին փողոցի մեջտեղում (Մարկ Տվեն, Թե ինչպես խմբագրեցի գյուղատնտեսական թերթը)։*

§ 657. Ձևի մակբայների շարքում զգալի տեղ են գրավում այն մակբայները, որոնք ցույց են տալիս հատկանիշի ներքին որակական հատկանիշը։ Այսպիսի մակբայները մեծ մասամբ ձևավավորվում են ածանցների միջոցով, որոնք դրվում են գոյականների և ածականների վրա՝ նշանակելով առաջին դեպքում՝ «այս կամ այն առարկայի պես», երկրորդ դեպքում՝ «այս կամ այն առարկայի ձևով, կերպով»։ Այսպես՝ ճայրաբար նշանակում է «հոր պես», անողոքաբար՝ «անողոք կերպով»։ Դրանք են՝ բարեկամաբար, եղբայրաբար, ճերոսաբար, թշնամաբար, վարպետորեն, մայրաբար, հանգամանորեն, փաղաքշաբար, ֆաչաբար, վեճորեն, միասնաբար, լրջորեն, անմիջականորեն, դառնորեն, հիմարաբար, աճամոթաբար, անմիջաբար, աշակերտաբար, երեխայաբար, ազնվորեն, պարզամտորեն, գիտակցորեն, անգիտակցաբար, ուշի-ուշով, մանրամասնորեն, հաստատապես, խոռապես, արտանց, միահամուռ, միաձայն *և այլն։*

Օրինակներ՝ Իսկապես չվախեցա՞ր,— հարցրեց Հասմիկը միամտաբար (ՎԱ, Սևանի ափին)։ Եթե հաստատապես գիտենայի, ես կմերժեի (ՆԴ)։ Անցածի փշերը դառնորեն խոցեն (ԵՋ, Վահան Տերյանի հիշատակին)։ Պետք է լրջորեն մտածել գյուղի ապագայի մասին (Սխ, Հողը, 1)։ Ամբողջ հայ ժողովուրդը մեկ

մարդու պես ոտքի էր կանգնել, նետվել մարտի դաշտ և հերոսաբար թշնամուն վտարել Արարատյան դաշտից դուրս (ԿՋ, Նավը լեռան վրա)։

Ձևի մակբայներից այս վերջին ու նախավերջին խմբերի միջև անանցանելի սահման չկա, և երբեմն դրանք խստորեն չեն հակադրվում իրար։ Դա լինում է հատկապես այն դեպքերում, երբ միևնույն մակբայի արտահայտած հատկանիշը ունի թե՛ արտաքին՝ ձևային և թե՛ ներքին՝ որակական կողմ։ Այդպիսիք են, օրինակ՝ ջերմորեն *(դիմավորել),* սառնորեն *(բաժանվել),* խորամանկորեն *(ժպտալ) և այլն։*

§ 658. Մի շարք մակբայներ, թեև համարում ենք ձևի, բայց որոշ չափով հեռանում են մակբայների այդ տեսակից և յուրահատուկ տեղ են գրավում թե՛ ձևի և թե՛ ընդհանրապես մակբայների շարքում։

Դրանք ունեն, այսպես ասած, մասնավորման իմաստ և ցույց են տալիս, որ առարկան տվյալ գործողությունը կատարում է կամ տվյալ հատկանիշն ունի այս կամ այն տեսակետից։ Օրինակ՝ Նա ֆիզիկապես *թույլ է։ Ֆիզիկապես մակբայը ցույց է տալիս, որ թույլ լինելու հատկանիշը տվյալ անձին հատուկ է ոչ թե ընդհանրապես, այլ միայն ֆիզիկական տեսակետից։ Այդպիսի մակբայներ են՝* նյութապես, բարոյապես, մտավորապես, հաղթականապես, արտաքինապես, տնտեսապես, ներքինապես, կազմակերպորեն, տեսականորեն, էրականորեն *և այլն։*

Օրինակներ՝ Նյութապես և բարոյապես *պաշտպանում էր հեռացված ուսանողներին (Թարգմ.)։ Խիստ հայացք ուներ, բայց* ներքուստ *հանգարտ էր, բարի (ԴԴ, Սաթոն)։ Ուրացա միայն աոերես (Ր, Հարեմ)։ «Հյուսիսափայլը» պայքարում էր ոչ թե որևէ բարբառ գրական լեզու դարձնելու համար, այլ աշխատում էր մշակել ժողովրդի՝ աշխարհագրորեն իրարից անջատ հատվածների համար հասկանալի մի ընդհանուր լեզու (ՀՆԳՊ, 2)։*

ՉԱՓԻ ՄԱԿԲԱՅՆԵՐ

§ 659. Չափի մակբայները ցույց են տալիս գործողության կամ այլ հատկանիշի չափը։ Այս մակբայները ժամանակակից հայերենի դասագրքերում ու քերականական աշխատություններ-

*րում հայտնի են տարբեր անուններով՝ **ֆանակական** մակբայները կամ քանակ ցույց տվող մակբայները, **չափ** ու **ֆանակի** կամ **ֆանակի** ու **չափի** մակբայները, **ֆանակ** ու **աստիճան** ցույց տվող մակբայները, **ֆանակի, չափի** ու **աստիճանի** մակբայներ։*

*Հարմար չէ մակբայների այս տեսակն անվանել միայն **ֆանակ** բառով, որովհետև քանակն ամենից առաջ հասկացվում է համապատասխան հատկանիշի դրսևորումը միավորների միջոցով, թվային արտահայտությամբ։ Մինչդեռ հատկանիշի չափի այդպիսի արտահայտությունը բնորոշ չէ մակբային, այդ հատկանիշն արտահայտվում է շատ աոհմանափակ թվով մակբայների մեջ՝ **եռակի, ֆառակի, երիցս**։ Սրանցից էլ **երիցս** մակբայը գրաբարյան ձև է, այժմ նրա գործածությունը գրքային, մասամբ և պաճուճիկ ոճի արտահայտություն է, և այն ժամանակակից խոսակցական հայերենի սովորական մակբայներից չէ։*

*Այս տեսակի մեջ մտնող մյուս բոլոր մակբայները գործողության կամ հատկանիշի չափ են արտահայտում առանց որոշակի թվային արտահայտության. ինչպես՝ **բազմիցս, հաճախ, մասնակիորեն, գերազանցապես, հիմնականում, ամբողջովին, լիովին, բոլորովին, իսպառ, ամենևին, մասամբ, կիսով չափ, շատ թե քիչ, սակավ առ սակավ, փոքր-ինչ, քիչ-քիչ, շատ-շատ, ավելի, առավել** և այլն։*

*Ինչ խոսք, **եռակի, ֆառակի, երիցս** բառերը ևս չափ են ցույց տալիս և կարելի է չափ անվանումով դրանք ևս նկատի ունենալ։ Այնպես որ քանակի նշումը չի բացառում չափ ցույց տալը, չափի իմաստը, այլ հանդիսանում է այդ չափի արտահայտության մի մասնավոր միջոց։*

*Բուն քանակի իմաստը մակբայ խոսքի մասին հատուկ չլինելը երևում է ոչ միայն այդպիսի մակբայների ծայրահեղ սակավությունից, այլև այդ սակավաթիվ մակբայների գործածության յուրահատկությունից։ Հայտնի է, որ մակբայների ամենաբնորոշ կիրառությունը բայի վրա դրվելն է. նշված մակբայները բայի վրա շատ հազվադեպ են դրվում. դրանք ավելի շատ դրվում են հատկանիշի իմաստ ունեցող գոյականի, ինչպես և ածականի վրա։ Օրինակ՝ Անկրկնելի է նաև այն տեսակետից, որ գրել է երեք լեզուներով՝ հայերեն, վրացերեն և ադրբեջաներեն, մրնալով հայ։ Այո՛, Սայաթ-Նովան **երիցս** անգամ բանաստեղծ է,*

երիցս մեծություն, երիցս վեհություն (լրագիր)։ Եռակի շքանշանակիր գունդ։

Այժմ դառնանք քննարկվող մակբայների մյուս անվանմանը (աստիճանի մակբայներ)։ Իրոք որ, չափի մակբայների մի մասի մեջ չափի իմաստն արտահայտվում է նրա աստիճանի նշումով, ինչպես՝ համարյա, գրեթե, հազիվ, բնդամենը, մոտավորապես և այլն։ Օրինակ՝ Գիսակի ծայրը համարյա մինչև կրունկներն էր հասնում (ՆԴ, Տանտիրոջս աղջիկը)։ Այս նախադասության մեջ համարյա մակբայը ցույց է տալիս, թե ինչ չափով է գիսակի ծայրը հասնում կրունկներին և ունի մոտավորության իմաստը։ Դահլիճը համարյա լիքն է նախադասության մեջ համարյա-ն ցույց է տալիս, թե ինչ չափով կամ որքանով է լիքը դահլիճը, այլ կերպ՝ դահլիճի լիքը լինելու չափը կամ աստիճանը։ Նրանք գրեթե ավարտել են նախատեսված աշխատանքը նախադասության մեջ գրեթե-ն ցույց է տալիս, որ աշխատանքն ավարտել են մոտավոր չափով, հիմնականում, այսինքն՝ ոչ լրիվ չափով։

Այսպիսով, այս մակբայների մեջ «աստիճան» համարված հատկանիշը չափի աստիճան է և չափի իմաստի դրսևորման ձևերից մեկն է։ Ուրեմն չափի իմաստը վերաբերում է նաև այս մակբայներին, հետևապես ժամանակակից հայերենում մակբայների այս տեսակի անվանման մեջ չափի բառի հետ միասին աստիճան տերմինի գործածությունը պատճառաբանված չէ։

Նկատի ունենալով վերոհիշյալը՝ մակբայների քննարկվող տեսակը ավելի հարմար է անվանել չափի մակբայ։

Չափի իմաստն այս մակբայների մեջ տարբեր արտահայտություններ ունի։

§ 660. Չափի մակբայներից մի երկուսի մեջ չափի հատկանիշը, ինչպես ասվեց վերը, դրսևորվում է թվային արտահայտությամբ, ինչպես՝ եռակի, երիցս, fառակի։ Օրինակ՝ Երիցս նախազգուշացվել է նրան այդ կապակցությամբ։ Եռակի շքանշանակիր Սիմֆերոպոլյան դիվիզիան փառապանծ հաղթանակներ էր տարել թշնամու դեմ մղվող մարտերում։

Ծանոթ.— Ասվում է նաև երիցս անգամ (տե՛ս վերը՝ Սայաթ-Նովան երիցս անգամ բանաստեղծ է), որ գործածական էր դեռևս գրաբարում, բայց քանի որ երիցս առանց անգամ բառի էլ ինքնին

նշանակում է «երեք անգամ», ուստի «անգամ» բառի գործածությունը ավյալ դեպքում ավելորդ է։

§ 661. Մի շարք մակբայներ չափի իմաստն արտահայտում են առանց կոնկրետորեն նշելու քանակը, առանց թվային արտահայտության, այլ գործողության կամ այլ հատկանիշի բազմակի կատարվելը, դրսևորվելը ցույց տալու միջոցով։ Դրանք են՝ ֆանիցս, բազմիցս, բազմակի, հաճախ, հաճախակի և այլն։ Օրինակ՝ Հանդիսականները ավելի ոգևորված կեցցեներով բազմիցս ողջունում էին նրան (Ր, Պարույր Հայկազն)։ Հաճախ, մանկություն, խռոված հոգուս ներկայանում ես ինչպես առավոտ (ՀԹ, Մանկություն)։ Մարուքյանների կողմից հեռացած որդուն հաճախակի գնացող նամակները սովորաբար գրում էր կամ ինքը՝ Մարուքյանը, կամ Եվան (ՆԴ, Մահը)։

§ 662. Չափի մակբայներից մի քանիսը արտահայտում են գործողության կամ այլ հատկանիշը կրկնվելու, նորից կատարվելու իմաստ։ Այդպիսիք են՝ դարձյալ, կրկին, վերստին, նորից։

Օրինակներ՝ Այրվում եմ, երբ հեռու եմ լինում նրանից. այրվում եմ նորից, երբ մոտն եմ լինում նրա (Իս., Լիլիթ)։ Հոգիս նորից ընկճվում է, նորից սկսում եմ տանջվել (ՆԴ, Աննա Սարոյան)։ Մենք մեր կողմից կատարեցինք մեր պարտականությունը վերստին կյանք տալով այդ կատակներին (ՄՆ, Ազգային ժառանգությունը)։ Այսօր առավոտ Անուշը դարձյալ ընդհարում էր ունեցել իր ամուսնու հետ (Շիրվ., Քառս)։

§ 663. Մի շարք չափի մակբայներ հատկանիշի չափը ցույց են տալիս մասի և ամբողջի հարաբերության նշումով։ Դրանք են՝ մասամբ, փոխ-ինչ, փոխրիշատե, մասնակիորեն, թեթևակի, հավասարապես, առավելապես, գերազանցապես, հիմնականում, ամբողջովին, լիովին, բոլորովին, իսպառ, ամենևին և այլն։

Չափի ընդգրկումն այս մակբայների մեջ տարբեր է. այստեղ մենք տեսնում ենք հատկանիշը մասնակի չափով ընդգրկելու իրողությունից մինչև նրա ամբողջական ընդգրկումը։ Օրինակ՝ Անուշը մասամբ իրագործեց հակառակորդների ծրագիրը (ԳՄ, Մանկություն և պատանեկություն)։ Այդ հայացքը թեթևակի շփոթեցրեց Սմբատին (Շիրվ., Քառս)։ Ամբողջովին մի շղթա էր գորշ (ԵՉ, Մեծ առօրյան)։ Թողարկում են գերազանցապես բարձրորակ

արտադրանք (լրագիր)։ Ինձ փոfրիշատե ճանաչելու համար հարկավոր է զրկվել... նախապաշարմունքից (ՊՍ, Նոր ծանոթություն)։ Նա բոլորովին խելագարված է (ՆԴ, Աննա Սարոյան)։ Ինչ անի Արամյանը, որ իսպառ մոռանա, քեզ չհիշի (ԲՎ, Լեռների որդին)։

Սրանց շարքը կարելի է դասել ամենևին մակբայը, որը, սակայն, ունի իմաստային ու կիրառական յուրահատկություն։ Նա ունի բոլորովին, միանգամայն մակբայների իմաստը, բայց գործածվում է ժխտական իմաստով, ժխտական նախադասություններում։ Օրինակ՝ Ամենևին չէր զգում, թե ինքն ում մոտ էր նստած և ում հետ էր խոսում (Ր, Ղարիբ մշեցին)։

Չափի մակբայների այս խմբի մեջ են մտնում նաև մի շարք նկարագրական մակբայներ՝ կիսով չափ, փոfր ի շատե, շատ քե fիչ. մեծ մասամբ և այլն։ Օրինակ՝ Իշխան Մուշեղը մտածում էր փոfր ի շատե կարգի դնել յուր ընտանեկան գործերը (Ր, Սամվել)։ Լաստափայտի կողքերը հարթած էին. մեջը մեծ մասամբ դուրս էր փորված (Ն. տ.)։ Քիչ հեռու նստարան էր երևում՝ կիսով չափ թաղված կանաչ թփերի մեջ (ԲՎ, Լեռների որդին)։

§ 664. Մի քանի մակբայների չափի իմաստն արտահայտվում է հատկանիշի չափի աստիճանի նշումով. ինչպես՝ համարյա, գրեթե, հազիվ. ընդամենը։ Օրինակ՝ Ընդամենը տասը տարի է, ինչ բաժանվել է իր հայրենիքից (ԳՄ, Մանկություն և պատանեկություն)։ Հազիվ մի սենյակի չափ տարածություն ուներ (կղզին) (ՎԱ, Սևանի ափին)։ Աշխենը համարյա բռնի կերպով նստեցրեց Եվային, և ինքն էլ նստեց կողքը (ՆԴ, Մահը)։ Նրան թվաց, թե այդ բոլորը նրանից է, որ շատ ցածր է նստած, այնքան ցածր, որ ծնկները գրեթե հավասարվում են կրծքին (Ն. տ.)։

§ 665. Մի քանի մակբայների մեջ չափի իմաստն արտահայտվում է հատկանիշի սաստկացման միջոցով։ Դրանք են՝ ավելի, էլ ավելի, առավել, չափազանց, վերին աստիճանի, սաստիկ և այլն։ Իրենց այդ իմաստային յուրահատկության պատճառով նշված մակբայները ավելի հաճախ դրվում են որակական կամ չափի հատկանիշ արտահայտող բառերի վրա։ Օրինակ՝ Եվ նա պատրաստ է էլ ավելի երկար՝ էլ ավելի համառ շարունակել պայքարը (ՄԹ, Գարնան շունչը)։ Լեզուն, որով գրված է այդ գիրքը, առավել ճոխ է, առավել հարուստ և առավել մոտ կենդանի ժողովրդի բարբառին, քան թե հեղինակի այլ գրվածքը մինչև այ-

սօր (ՄՆ, Կրիտիկա հանդես նոր հայախոսության)։ Յանցի մեջ ավելի ու ավելի խճճվելով՝ շուռ եկավ մեջքի վրա (ՎԱ, Սևանի ափին)։ Նույն րոպեին սաստիկ չոր հազը կարծես պատռեց նրա թոքը (ՆԴ, Աննա Սարոյան)։

Չափի մակբայների (և ոչ միայն չափի մակբայների) իմաստային ներքին խմբավորումները կատարվում են նրանց առավել բնորոշ հատկանիշների հիման վրա և իմաստային այս կամ այն երանգով նրանք կարող են նման լինել իրար։ Այսպես, օրինակ, չափի աստիճանի իմաստային որոշ երանգ կա նաև մասի ու ամբողջի հարաբերության իմաստ ունեցող մակբայների մեջ, թեև վերջիններիս հիմնական իմաստն այլ է, ինչպես տեսանք վերը։ Այնպես որ չափի մակբայների՝ վերը ներկայացված խմբավորումների միջև անանցանելի սահման չկա։

ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ՄԱԿԲԱՅՆԵՐ

§ 666. Մի շարք մակբայների մեջ հավասար կամ համարյա հավասար չափով առկա են տարբեր իմաստներ՝ ձևի, չափի և այլն, ուստի և դրանք չի կարելի դասել մակբայների՝ վերը նշված տեսակներից որևէ մեկի շարքը։ Դրանք ընդհանրական մակբայներ են։

Ժամանակակից հայերենի ընդհանրական մակբայներն են՝ առաջ, ետ, մեկ-մեկ, մերթ-մերթ, մերթ ընդ մերթ, ստեպ-ստեպ, անընդհատ, անդադար, բերնեբերան *և այլն։*

Այս մակբայները կարելի է բաժանել երկու խմբի։

§ 667. Ընդհանրական մակբայների առաջին խմբի մեջ մտնում են նրանք, որոնք տարբեր կիրառություններում դեպքում որոշակիորեն դրսևորում են տարբեր իմաստներ։ Այդպիսիք են՝ մեկ-մեկ, առաջ, ետ, բերնեբերան *և այլն։*

Մեկ-մեկ մակբայը կարող է ցույց տալ և՛ ձև, և՛ չափ։ Նա ձև է ցույց տալիս, երբ վերաբերում է գործողությունը կատարողների կամ գործողության օբյեկտի վիճակին՝ կապված գործողության ընթացքի հետ։ Օրինակ՝ Աղջիկները սկսեցին մեկ-մեկ ցրվել (ԱՍ, Ոսկե մեղալ)։ Նստեցին, նստեցին ու մեկ-մեկ հեռացան (Ն. տ.)։ Դե հիմի մեկ-մեկ համբուրիր (Մուր., Անդրեաս երեց)։

Հետևյալ և նման օրինակներում մեկ-մեկ մակբայը վերաբերում է գործողության քանակական կողմին, չափի իմաստ ունի՝ Համմտ. Հիմա էլ մեկ-մեկ սիրտս մորմոքվում է (Սախ, Հողը, 1)։ Հիմա մեկ-մեկ երբ հանկարծ հանդիպում ենք իրարու, Մի ցնցող զարկ ենք զգում մեր սրտերում հին սիրով (ՍՏ, Կամուրջ)։ Այսպիսի կիրառություններում մեկ-մեկ մակբայը իր մեջ մասամբ ունի նաև ժամանակի իմաստ։

Առաջ, ետ *մակբայները գործածվում են երբեմն ժամանակի, երբեմն տեղի իմաստով։ Ժամանակի իմաստով գործածություններ. Տարավ կիսաթախտի վրա, ուր ինքն առաջ նստած էր (Ր, Անմեղ վաճառք)։ Առաջ աղբյուրը ծաղիկների մեջ չէր երևում (ԱԲ, Եղբայրության ընկուզենիները)։ Տեղի իմաստով գործածություններ. Նա անգադար առաջ էր նայում (Ր, Հարեմ)։ Սարսափած սրտով մենք անցանք առաջ (ԵՉ, Դանթեական առասպել)։ Ու վերջին անգամ նայեցինք մենք ետ (Ն. տ.)։*

Բերնեբերան *մակբայը, երբ նշանակում է «բերնից բերան» (ինչպես՝ տեղից տեղ և այլն), տեղի իմաստ ունի։ Օրինակ՝ Լուրը բերնեբերան հասնում է Պանրենց տուն (ԳՄ, Մանկություն և պատանեկություն)։ Իսկ, օրինակ,* Բաժակը բերնեբերան լցրեց *նախադասության մեջ նույն մակբայը գործողության չափ է ցույց տալիս (որքա՞ն լցրեց)։ Այսպես նաև՝ Շանզ-Էլիզեն՝ հրապարակի լայնություն ունեցող այդ փողոցը, բերնեբերան խցկված է մեքենաներով (ՍԿ, Քարավանները դեռ քայլում են)։*

§ 668. Ընդհանրական մակբայների երկրորդ խմբի մեջ մըտնում են այն մակբայները, որոնք ոչ միայն խոսքից դուրս, այլև միևնույն գործածության ժամանակ իրենց մեջ համատեղում են տարբեր իմաստներ։ Այսպես՝ Անընդհատ *ածանցավոր նախադասության մեջ անընդհատ մակբայը, իհարկե, ժամանակի իմաստ ունի (այդ մակբայը համարվում է ժամանակի մակբայ), բայց դրանից պակաս զգալի և պակաս բնորոշ չեն ձևի և չափի իմաստները։ Հասկանալի է, որ գործողության առանց ընդհատումների (կամ ընդհատումներով) կատարվելու հատկանիշի մեջ չի կարելի ձև չտեսնել։ Իսկ գործողության այդ ձևով կատարվելը, այդպիսի ձև ունենալը, միաժամանակ նրա չափի մասին է խոսում։ Դա երևում է, օրինակ՝ հետևյալ նախադասությունների համեմատությունից։* Անընդհատ *անձրևում է։* Մերթ-մերթ *անձրևում է։*

Այս մակբայների շարքը կարելի է դասել հետևյալները՝ **շարունակ, անընդհատ, անդադար, մերթընդմերթ, մերթ-մերթ, ըստեպ-ստեպ**: *Այդ մակբայները ունեն և՛ ձևի, և՛ ժամանակի, և՛ չափի իմաստ։*

Օրինակ՝ **Ավոյի** *ապրանքները* **շարունակ** *ճանապարհորդության մեջ են (ՊՊ, Գյուղական խանութպան)։* **Անընդհատ** *ներս ու դուրս էին անում գնդացիրի ժապավեններ կապած և ձեռքի նռնականետով զինված նավաստիներ, բանվորներ, կարմիրգվարդիականներ (ԱԲ, Մի անգամ հոկտեմբերի 25-ին)։ Ծավալել սոցիալիստական մրցություն ժողովրդական սպառման ապրանքների արտադրությունն* **անընդհատ** *զարգացնելու համար (լրագիր)։* **Մերթընդմերթ** *այս ու այն կողմից լսվում են ինչ-որ խշշոցներ (Շիրվ., Քաոս)։* **Ստեպ-ստեպ** *վահանակին էին զրնվում պատահական գնդակները (Մուր., Գևորգ Մարզպետունի)։*

Հնարավոր է, որ առանձին, եզակի դեպքերում, պայմանավորված կոնկրետ խոսքով կամ խոսելու պայմաններով, այս մակբայների որևէ մի իմաստը ավելի ընդգծված լինի մյուս իմաստների համեմատությամբ։

Ընդհանրական և մյուս մակբայների սահմանազատումը երբեմն դժվար է լինում։ Եվ առհասարակ չի կարելի անանցանելի սահման գծել նրանց միջև։ Այդ կարգի հարցերը քննելիս անհրաժեշտ է ունենալ կոնկրետ մոտեցում և մակբայի իմաստի մեջ գլխավորը տարբերել երկրորդականից։ Այսպես, կարող է թվալ, թե ընդհանրական մակբայների շարքում տեղ պիտի գտնեին նաև **հաճկարծ, հանկարծակի** *մակբայները, քանի որ դրանց մեջ կա և՛ ձևի, և՛ ժամանակի իմաստ։ Սակայն այդ բառերի մեջ գործողության անմիջական կատարման, անսպասելիության իմաստն ավելի բնորոշ է, իսկ ժամանակի իմաստը համեմատաբար երկրորդական, ուստի դրանց տեսակը որոշելիս բնականաբար պետք է հիմնվել առաջինի վրա։ Այդպես էլ վարվել ենք. դրանք ձևի մակբայներ են, իհարկե, ժամանակային իմաստի որոշ թույլ երանգով։*

Կ Ա Պ

ԿԱՊԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ

§ 669. Կապը նյութական իմաստից զուրկ խոսքի մաս է, այսինքն չի արտահայտում ո՛չ առարկայի, ո՛չ հատկանիշի իմաստ, այլ ցույց է տալիս տարբեր հարաբերություններ։ Կապերի այդ իմաստը խոսքի մեջ դրսևորվում է հետևյալ կերպ. դրվելով բառերի վրա, կապերն արտահայտում են նրանց տարբեր հարաբերությունը գերադաս բառի նկատմամբ։ Օրինակ՝ խոսեցի ընկերոջս հետ։ Կգաք մեզ մոտ։ Պայքար հանուն խաղաղության։ Այս օրինակներում հետ, մոտ, հանուն կապերը չունեն առարկայի, հատկանիշի իմաստ, այլ ցույց են տալիս ընկերոջս, մեզ, խաղաղության բառերի տարբեր հարաբերությունները խոսեցի, կգամ, պայքար գերադաս բառերի նկատմամբ։

Արդ, ո՞րն է կապերի յուրահատկությունը ի տարբերություն հատկապես շաղկապների, որոնք նույնպես հարաբերություն են արտահայտում։

Կապերին վերագրվում է մասնավորապես պարագաները ստորոգյալին կապելու դեր։ Ճիշտ է, պարագայական հարաբերություններ ցույց տալը, պարագա ձևավորելն ու ստորոգյալին կապելը կապի առավել տարածված դերն է։ Օրինակ՝ Բյուրավոր բանվորներ ջախջախվել են քարահանքերի փլուզումների տակ, վայր են ընկել պարիսպներից, և փշրվել է նրանց գանգը քարերի վրա (Իս., Չինական մեծ պարսպի երգը)։ Այդ օրը երեք ընկերներով շրջում էին ֆերմայի հովիվների հետ (ՎԱ, Լեռնային կածաններով)։ Այդ հանգամանքը անհանգստացնելու չափ ինձ հետաքրքրեց (Մուր., Գևորգ Մարզպետունի)։

Սակայն մի շարք կապեր կարող են ստորոգյալի հետ կապել վերջինիս մյուս լրացումը՝ խնդիրը։ Օրինակ՝ Սարերի հետև ընկած

այդ գյուղի մասին քաղաքում ոչ ոք չգիտե (ԱԲ, Մթնաձոր)։ Օ՜, տես դեռ չգիտեի, թե ինչ իրավունք ունեմ նրա վերաբերմամբ (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Այդ կիսախելագար վանականն առաջինը հարձակվեց նրա վրա (ԱԲ, Անավարտ էջեր)։ Իմ հայրը իմ դեմ մեղանչեց, սակայն՝ չմեղանչեցի ես ոչ ոքի դեմ (Իս., Աբու-Լալա Մահարի)։

Մի շարք կապեր մասնակցում են գոյականի լրացումների ձևավորմանը. ձևավորում են հատկապես բաղադրյալ որոշիչներ, մասնական բացահայտիչը կապում են բացահայտյալին։ Օրինակ՝ Քեզ նման արդարներին ներկայացնում են մեզ (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Նա Վասակ իշխանի նման հայրենասեր մարդուն զուր տեղը կկալանավորեր (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Ջողի պես բարակ մի պատանի մանղալներից մեկն իսկույն բերեց (ԳՍ, Թեհրան, 2)։ Հայկական ՍՍՀ Մինիստրների սովետին կից տերմինաբանական կոմիտեն պետք է թարմացնի իր աշխատանքները։ Ինչ, մի՞թե նա այժմ պիտի ներկայանա ինձ իբրև յուր թագուհուն... իբրև յուր թագավորի ամուսնուն (Մուր., Գևորգ Մարզպետունի)։

Ինչպես երևում է վերոհիշյալ օրինակներից, կապերը ոչ միայն պարագան են կապում ստորոգյալի հետ, այլև նախադասության ուրիշ երկրորդական անդամներ՝ խնդիր, որոշիչ, մասնական բացահայտիչ։ Ուրեմն կապերը բառերի ստորադասական տարբեր հարաբերություններ են արտահայտում։ Կապերի բնորոշման մեջ պետք է հաշվի առնել այս բոլոր հատկանիշները, ավելի ճիշտ դրանց ընդհանուրը, որով կապը, նախ, սահմանազատվում է նյութական իմաստ ունեցող խոսքի մասերից, իբրև վերաբերական իմաստ ունեցող խոսքի մաս, և ապա սահմանազատվում է նաև վերաբերական իմաստ ունեցող մյուս խոսքի մասից՝ շաղկապից, բառերի ստորադասական հարաբերություններ արտահայտելու իր առանձնահատկությամբ։ Շաղկապները բառերի ստորադասական հարաբերություններ արտահայտել, ստորադաս բառը դերադասին կապել չեն կարող. նրանք նախադասություններ կապելիս կարող են արտահայտել ստորադասական ու համադասական հարաբերություններ, իսկ բառեր կապելիս միայն համադասական հարաբերություն են արտահայտում։

Կապերը վերաբերական իմաստ ունեցող բառեր են, որոնք

դրվելով այլ բառերի (գոյականների, առարկա նշանակող դերանունների, գոյականաբար գործածված բառերի) վրա՝ ցույց են տալիս նրանց ստորադասական, լրացական հարաբերությունը և դրանով իսկ կապում գերադաս անդամի հետ: *Գերադաս անդամը սովորաբար արտահայտվում է նախադասության մեջ: Երբեմն այն կարող է արտահայտվել անվանական որոշ նախադասություններում, վերնագրային տիպի արտահայտություններում, ինչպես՝ Հանուն հայրենիքի: Այս դեպքում էլ հասկացվում է գերադաս բառի իմաստը, կապն իր էությունը չի փոխում. այն կատարում է սպասարկու, ստորադասական հարաբերություն ցույց տալու իր դերը՝ որոշ յուրահատկությամբ:*

§ 670. Կապերի դերը նման է հոլովների դերին, դրանք երկուսն էլ արտահայտում են բառերի նույն բնույթի հարաբերություններ:

Համառոտակի քննենք լեզվական այդ երկու միջոցների իմաստային-կիրառական առնչակցությունները:

1. Որոշ կապեր, երբեմն դրվելով այս կամ այն հոլովաձևի վրա, արտահայտում են այն նույն հարաբերությունը, ինչ որ տվյալ հոլովաձևն առանց կապի:

Ընդունելության քննությունները տեղի կունենան օգոստոսի մեկից *հաճ*: *Ընդունելության քննությունները տեղի կունենան* օգոստոսի մեկից մինչև *հաճ*: *Երևանից Շաուրյան ընկած ճանապարհի երկարությամբ կառուցվել են բարձրահարկ շենքեր:* *Երևանից մինչև Շաուրյան ընկած ճանապարհի երկարությամբ կառուցվել են բարձրահարկ շենքեր:* *Ընտանիքով մեկնեց ամառանոց:* *Ընտանիքով հանդերձ մեկնեց ամառանոց:* *Երեք օրից կվերադառնա:* *Երեք օրից հետո կվերադառնա:*

Այս զուգահեռ օրինակներում արտահայտված են միևնույն հարաբերությունները (առանց կապի և կապով). դրանց միջև կա միայն ոճական նուրբ երանգային տարբերություն: Նախ, առանց կապի ձևերը սեղմ ոճի արտահայտություն են, ի տարբերություն կապով ձևերի: Այնուհետև, կապերը մի փոքր շեշտում են տվյալ հարաբերությունը: Ոճական այս տարբերությունը տարբեր դեպքերում արտահայտվում է տարբեր չափով:

Այսպես՝ կապի գործածությունը հետևյալ օրինակում ավելի շատ է անհրաժեշտ, քան վերոհիշյալ օրինակներում. հանդերձ

կապը միանգամայն որոշակիացնում է դիջական հարաբերությունը, որն առանց կապի կարտահայտվեր շատ աղոտ կերպով։ «Հյուսիսափայլի» աշխատակիցներից յուրքանչյուրը՝ ունենալով հաճդեռն իր ուրույն ոճը, լեզվական առանձնահատկությունները, ենթարկվում էր միասնական, հյուսիսափայլյան լեզվական կանոններին (ՀՆԳՊ, 2)։

2. Հաճախ միևնույն հարաբերությունը կարող է արտահայտվել թե՛ որևէ հոլովով՝ առանձին վերցրած, թե՛ մի այլ հոլովով ու կապով՝ միասին վերցրած։

Գիրքը դրեցի սեղանին։ Գիրքը դրեցի սեղանի վրա։ Նրանք խոսում են անցյալից։ Նրանք խոսում են անցյալի մասին։ Անահիտն ընկերներով վերադարձավ։ Անահիտն ընկերների հետ վերադարձավ։ Նրա կարծիքով այդ աշխատանքը կարելի է ավարտել երեք ամսում։ Ըստ նրա կարծիքի (կամ ըստ նրա) այդ աշխատանքը կարելի է ավարտել երեք ամսում։

3. Կապերի մեծ մասն արտահայտում է այնպիսի հարաբերություններ, որոնք միայն հոլովներով հնարավոր չէ արտահայտել։ Ինչպես՝ առ (այն), բացի (դրանից), (պայքար արտադրողականության բարձրացման) համար կամ՝ հաճուն (արտադրողականության բարձրացման), (նրա) օրոք, (ուսումնական տարին փակելու) առթիվ (երեկո կազմակերպել), նախօրեակ (գնալը), (գնալուց) առաջ, (փողոցների) միջև (ընկած տարածություն), (մեկի) հետ (զրուցել), (պայքար) ընդդեմ (բյուրոկրատիզմի), (կամ բյուրոկրատիզմի) դեմ, (նրա) պես (խելոք), որպես, իբրև (առաջավոր), (դպրոցի) մոտ, (սեղանի) տակ, (շրջապատի) նկատմամբ՝ վերաբերմամբ (ուշադիր լինել), փոխանակ (գիրք բերելու տեղը է բերել) և այլն։

Այսպիսով, կապերի և հոլովական վերջավորությունների դերի միջև կա որոշակի ընդհանրություն։ Թե՛ հոլովական վերջավորությունները և թե՛ կապերը, դրվելով բառի վրա, ցույց են տալիս նրանց այս կամ այն հարաբերությունը լրացյալի կամ գերադաս անդամի նկատմամբ, որոշում բառի պաշտոնը։ Ըստ որում, նույնիսկ նույն հարաբերությունները ցույց տալու դեպքում դրանց միջև լինում են երանգային տարբերություններ։

Այս տարբերությունները ինքնին հասկանալի են. այլապես կապերը ավելորդ կլինեին լեզվի մեջ, չէին առաջանա և չէին պահ-

պանվի։ Ուրեմն՝ կապերը լրացնում են հոլովների արտահայտած հարաբերությունների թերին, հետևապես և նույնպիսի դեր են կատարում լեզվի մեջ։

Չնայած կապերի և հոլովական վերջավորությունների դերի ընդհանրությանը, դրանք չեն նույնանում, այլ հանդիսանում են լեզվական տարբեր միջոցներ, պատկանում են լեզվի կառուցվածքի տարբեր կողմերին. հոլովները՝ ձևաբանական կառուցվածքին, կապերը՝ բառային կազմին։ Ուրեմն՝ դրանք իրարից տարբերվում են ամենից առաջ իբրև լեզվական միավորներ։ Կապերը բառեր են, հետևապես և ունեն իրենց բառային իմաստը, որ դիտակցվում է նույնիսկ նախադասությունից դուրս։ Իսկ հոլովական վերջավորությունները քերականական մասնիկներ են, որոնք անկախ գործածությունն և առանձին վերցրած իմաստ չունեն։ Նույնիսկ նախադասությունից դուրս հասկանալի են մեջ, վրա, համար, ճանուն, չնայած և մյուս կապերի իմաստները, մինչդեռ նույնը չենք կարող ասել ի-ի, ին-ի, ում-ի և այլնի մասին, որոնք նշանակություն են ստանում, երբ կցվում են հոլովվող բառին։

Այնուհետև, հոլովական վերջավորությունները, լինելով զուտ քերականական մասնիկներ, քերականական իմաստ արտահայտելու տեսակետից հասել են կատարյալ վերացականության։ Մինչդեռ կապերը, առաջացած լինելով նյութական իմաստ ունեցող խոսքի մասերից, մինչև այժմ էլ հաճախ զգալ են տալիս իրենց ծագումնային կապը այդ խոսքի մասերի հետ, և դրա հետևանքով նրանց արտահայտած հարաբերության իմաստը անհամեմատ պակաս վերացական է, քան հոլովների ցույց տված հարաբերության իմաստը։ Ի դեպ նշենք, որ տարբեր կապերի իմաստի վերացությունը նույն մակարդակին չէ և չի կարող լինել։ Որքան կապը հին ծագում ունի և շատ է հեռացել իր ծագման աղբյուրից, այնքան ավելի վերացական է նրա իմաստը, և հակառակը։

§ 671. Կապերը հարաբերակից են ոչ միայն հոլովներին (ավելի ճիշտ՝ հոլովական վերջավորություններին), այլև նյութական իմաստ ունեցող շատ բառերի, որոնք ևս տարբեր չափով գործածվում են բառերի հարաբերություններ արտահայտելու համար։ Այդպիսի բառեր կան նյութական իմաստ ունեցող համարյա բո-

լոր խոսքի մասերի մեջ։ Պետք է նշել, որ կապերի՝ տարբեր բնույթի լեզվական միավորների հետ (մի կողմից՝ քերականական, մյուս կողմից՝ նյութական իմաստ ունեցող բառերի) հարաբերակից լինելը բոլորովին էլ պատահական չէ, այլ բխում է կապի, որպես խոսքի մասի, բնույթից, այն բանից, որ կապերը բառական միավորներ են, բառեր, բայց սրանք լեզվի մեջ կատարում են քերականական դեր, արտահայտում են քերականական հարաբերություններ։ Հենց այդ հարաբերությունն է ընկած կապերի կազմավորման, առաջացման հիմքում։

Կապերի և այլ խոսքի մասերի հարաբերակցությունը ցույց տանք մի քանի օրինակների վրա։ Հայտնի են, օրինակ, ձեռ. գիծ, նպատակ, ժամանակ, հավասար, համաձայն, դուրս, ետու բառերի նյութական իմաստները, ըստ որում դրանք համապատասխանաբար գոյական են, ածական, մակբայ։ Դա երևում է նրանց շատ սովորական կիրառություններում։ Օրինակ՝ Նա գլուխը կախել էր գետնին և ինչ-որ գծեր էր քաշում հողի վրա (ԴԴ, Վարդանանք, 1)։ Կարծես մի ծանր երազ լիներ այդ, որի ազդեցությունն անցել էր ժամանակի հետ (ՆԴ, Մահը)։ Գարեգինը բոլոր հրամանատարներին շարել էր իրարից հավասար հեռավորության վրա (ԴԴ, Վարդանանք, 2)։ Դուրսն արդեն մթնել էր (ՆԴ, Մահը)։ Նախարարները լսում էին անխոս, քանի որ համաձայն էին (ԴԴ, Վարդանանք, 1)։

Սակայն այդ նույն բառերը կարող են գործածվել նաև ոչ իրենց նյութական հայտնի իմաստով, այլ կապական առումով, այսինքն՝ կապերի պես կարող են արտահայտել հարաբերություններ՝ դրվելով բառերի վրա։ Ահա այդպիսի մի քանի օրինակ՝ Հետաքրքիր է, պրոֆմիության գծով որևէ միջոցառում անցկացվո՞ւմ է (ԲՎ, Ինչպես է գալիս երջանկությունը)։ Ղրիմում կատարած իր շրջագայության ժամանակ առատ հունձ է ունեցել (ՆԴ, Մահը)։ Կին հեծյալները վարժ ու լուրջ վազում էին նրանց այրմարդկանց հավասար (ԴԴ, Վարդանանք, 2)։ Իսկ ես կարծում էի, թե դուք ձեր գյուղից դուրս աշխարհ չեք ճանաչում (ՆԴ, Մահը). Մենք մեր գործը կբռնենք մեր հանգամանքների համաձայն (ԴԴ, Վարդանանք, 1)։

Կապերի և այլ խոսքի մասերի հարաբերակցությունը, սակայն, չի տարածվում վերջիններիս բոլոր բառերի վրա։ Այլ խոս-

քի մասերից կապերին հարաբերակից են այնպիսի բառեր, որոնց մեջ կա հարաբերության որոշ իմաստ, որի շնորհիվ նրանք կարող են նախադասության մեջ գործածվել կապական առումով։

Սա, իհարկե, չի նշանակում, թե ձեռ, գիծ, ժամանակ, հավասար, դուրս, համաձայն և նման բառերը ժամանակակից հայերենում կապեր են։ Դրանք նյութական իմաստ ունեցող բառեր են, իսկ դրանց հիշյալ կապային կիրառությունները շարահյուսական կիրառություններ են։ Այնպես որ ստորադասական հարաբերության կիրառություն ունեցող ամեն մի բառ չէ, որ կապ է. կապի համար այդպիսի հարաբերություն արտահայտելը պետք է լինի ոչ թե առանձին շարահյուսական առանձին կիրառությունների հետևանք, այլ այդ հարաբերությունը պետք է լինի նրա իմաստը, ընդհանուր լեզվական իմաստը և բնորոշ լինի նրա, որպես բառական միավորի, համար։

ԿԱՊԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ ԱՍՏԻՃԱՆՆԵՐԻ

§ 672. Կապերն առաջանում են տարբեր խոսքի մասերից, մեծ մասամբ գոյականներից, ինչպես և ածականներից, մակբայներից, համեմատաբար քիչ չափով՝ բայերից։ Սակայն այս խոսքի մասերի մեջ մտնող ոչ բոլոր բառերը կարող են վերածվել կապի։ Կապի կարող են վերածվել այն բառերը, որոնց մեջ առկա է հարաբերության իմաստ։ Այսպես՝ եթե մոտ, վրա, տակ, առաջ, դեմ, դիմաց բառերը վերցնելու լինենք իրենց ոչ կապային, այլ նյութական իմաստով, միանգամայն որոշակիորեն կզգացվի, որ դրանց մեջ որոշիչը հարաբերության իմաստն է։

Որ իսկապես ժամանակակից հայերենի բոլոր կապերն առաջացել են երբեմնի նյութական իմաստ ունեցող բառերից, մեծ մասամբ երևում է ակնհայտ կերպով, իսկ մի քանի կապերի վերաբերմամբ այն պարզվում է միայն պատմա-համեմատական ուսումնասիրության տվյալներով։ Հաշվի առնելով կապերի առաջացման պատմական պրոցեսը, այն է՝ բառի նյութական իմաստը աստիճանաբար եռին պլանի վրա մղվելն ու մարելը և, ի հակակշիռ դրան, վերաբերության իմաստը աստիճանաբար աճելն ու ի վերջո միակ իմաստ դառնալը՝ կապական կիրառություն ունեցող բոլոր բառերը բաժանում են երեք խմբի։

1. Բառեր, որոնք զրկված են նյութական իմաստից և հանդես են գալիս միայն որպես կապ։ Սրանք իսկական կապեր են։ Դրանք են՝ ի, ըստ, առ, մասին, առանց, բացի, դեպի, համար, հանուն, հանդերձ, ornf, շնորհիվ, առթիվ, նկատմամբ, վերաբերյալ, փոխանակ*, տեղակ, մինչև*, նախքան, ներքո, միջև, ետև**, fով**, ընդդեմ, հանդիման, հանդեպ, պես, հանձին (հանձինս)***, իբրև, որպես, ի դեմս, ի վար, ի վեր, ի փառս, ի հետևուկս, ի հաշիվ, ելման վրա:

2. Բառեր, որոնք չեն զրկվել այն խոսքի մասի իմաստից, որից անցնում են կապերին, բայց նրանց հիմնական խոսքի մասային իմաստն արդեն երկփեղկված է, և նյութականի կողքին հավասար, համարյա հավասար, կամ առավել չափով հանդես են գալիս կապական որոշակի իմաստն ու հատկանիշները։ Դրանք են՝ մոտ, վրա, մեջ, տակ, շուրջ, դեմ, փոխարեն, դիմաց, առջև, համեմատ, արբաներ, համաձայն, հակառակ, չափ, նայած, չնայած, տեղ, նման, զատ, անց, առաջ, հետո, միջոցին: *Սրանք անիսկական կապեր են։*

3. Բառեր, որոնք թեև այս կամ այն չափով գործածվում են կապի դերով, բայց նրանց իմաստի մեջ իշխողը, որոշիչը նյութական իմաստն է։ Այդպիսի բառեր են՝ ժամանակ, վերև, ներքև, ներս, դուրս, հետու, կից, զուգընթաց, պատճառով, միջոցով, ձեռքով, գծով, անուճով, անուճից, կողմից, համապատասխան, հավասար, ընթացքում, սկզբում, նպատակով, հետևանքով, անցած և այլն։ *Սրանք էլ կապական բառեր են։*

Այս երեք խմբերից առաջին երկուսը՝ իսկականը և անիսկականը, կապեր են։ Իսկ կապական բառերը դուրս են մնում կապի,

---

* *Սրանք նաև շաղկապական առում ունեն։ Բայց որովհետև լրիվ չափով զուրկ են նյութական իմաստից և շաղկապական առումը կապային առումից է ածանցվել, այդ պատճառով համարում ենք իսկական կապ։*

** *Սրանք հոդ ստանալու դեպքում էլ* (ետուս, fովս, ետդ, fովդ) *դարձյալ ունենում են վերաբերության և ոչ նյութական իմաստ։*

*** *Սրանք փաստորեն նույն կապերն են, այն տարբերությամբ, որ* հանձին-ը *եզակի իմաստ ունի* (հանձին ուսուցչի), *իսկ* հանձինս՝ *հոգնակի* (հանձինս ուսուցիչների), *թեև այժմ շատ անգամ չի պահպանվում նրանց իմաստային այս տարբերությունը, և ոմանք էլ դրանք գործածում են որպես նույնանիշներ։*

որպես խոսքի մասի, համակարգից։ Դրանք, ճիշտ է, հարում են կապերին, բայց փաստորեն կամ գոյական են, կամ ածական, կամ մակբայ, կամ բայ։ Երբ երկրորդ խմբի մեջ մտնող բառերը գործածվում են նյութական իմաստով, հասկանալի է, որ այդ դեպքում նրանք որպես կապ չեն հանդես գալիս, այլ ուրիշ խոսքի մաս։

Հանձինս այս երեք խմբերի, մենք փաստորեն գործ ունենք կապերի կազմավորման երեք հիմնական աստիճանների հետ։ Հասկանալի պատճառով այդ խմբերի միջև խիստ սահմանագիծ անցկացնել դժվար է։

Միշտ էլ կարելի է կարծել, թե հատկապես կապական բառերից մեկ-երկու բառ կարելի է համարել անխոսկական կապ, կամ հակառակը։ Ուսումնասիրողի այդպիսի տատանումները պայմանավորված են իրենց իսկ լեզվական փաստերի տատանումներով, այսինքն՝ տվյալ բառի կամ բառերի՝ անցման վիճակում գտնվելու, բառերի այդ երկու խմբերի սահմանագլխին լինելու հանգամանքով։

ԿԱՊԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

§ 673. Կապերն ըստ կազմության լինում են՝ 1. պարզ կամ արմատական, 2. քերականական ձևերից առաջացած, 3. նախդրավոր։

§ 674. Պարզ կամ արմատական են՝ **ի, առ, ըստ, ճեռ, պես, մոտ, վեր, վրա, տակ, դեմ, զատ, չափ, fով և այլն։**

Թեև այս կապերը հակադրում ենք քերականական ձևերից առաջացած կապերին (իհարկե, նաև նախդրավոր կազմություններին), չի նշանակում, թե սրանց առաջացման մեջ քերականական հատկանիշը դեր չի կատարել։ Մասնավորապես խոսելով գոյականական ծագում ունեցող պարզ կապերի մասին, պետք է նկատի ունենալ, որ այդ կապերի առաջացման հարցում դեր կատարել է նաև նրանց հոլովական իմաստը, բայց քանի որ դրանք միաձևույթ են, չունեն հոլովական վերջավորություն, այդ պատճառով էլ համարում ենք պարզ կամ արմատական։

§ 675. Քերականական ձևերից առաջացած կապերի մեջ մեծ տեղ են գրավում հոլովական ծագում ունեցողները։

Կապերի կազմավորման գործում ակտիվ դեր է կատարել գործիական հոլովը և՛ գրաբարում, և՛ աշխարհաբարում։ Գործիական հոլովաձևից են առաջացել հետևյալ կապերը և կապական բառերը[58]. *առթիվ, շնորհիվ, նկատմամբ, վերաբերմամբ, ուղղությամբ, բացառությամբ, կապակցությամբ, պատճառով և այլն։ Այս կապերից առաջին չորսը իսկական կապերի մեջ են մտնում, քանի որ նրանց մեջ նյութական և հոլովական իմաստները բոլորովին վերացել են։ Մյուսները մտնում են կապական բառերի շարքը, որովհետև դրանք ժամանակակից հայերենում հանդես են գալիս ոչ միայն որպես կապ, այլև որպես համապատասխան գոյականների գործիական հոլով։*

Կապերի կազմավորման գործում դերի տեսակետից հաջորդ հոլովը տրականն է, որից առաջացել են մի քանի կապեր՝ մասին, օգտին, հաշվին, պատվին և այլն։

Բացառական հոլովը շատ պասիվ է այս տեսակետից. դրանով են կազմվել երեսից, ձեռից կապական բառերը։

Կապերի կազմության խնդրում որոշ դեր են կատարում բայի թեքման ձևերը, որոնցից առաջացել են վերաբերյալ, նայած, չնայած, սկսած, հաշված, չհաշված կապերն ու կապական բառերը։ Գոյականի և բայերի թեքման ձևերից կապերի առաջացման գործում կարևոր դեր են կատարում բառի և՛ բառային, և՛ քերականական իմաստը։

§ 676. Նախդրավոր կազմությամբ կապերը կազմվել են նախդրի ու որևէ բառի միացման միջոցով։ Այդպիսիք են՝ հանուն (ի անուն), հօգուտ (ի օգուտ), դեպի (դեպ ի), բացի (բաց ի), առանց (առ անց), առընթեր, ընդդեմ, նախքան և այլն։ Ի նախդիրը միշտ չէ, որ միացել է բառարմատին։ Բառասկզբում գործածվելիս նա միացել է, եթե բառն սկսվում է ձայնավորով, բառավերջում նա միացել է, անկախ հնչյունական այդպիսի պայմաններից. օրինակ՝ դեպի, բացի։ Ի տարբերություն կապ կազմող մյուս նախդիրների, ի նախդիրը չի միացել բառին, եթե չկան հիշյալ պայմանները։ Այսպես՝ այդ նախդիրը չի կցվել բառարմատին

---

58 *Այստեղ և ստորև կապերը քննելիս նշում ենք նաև համապատասխան խմբի մի քանի կապական բառեր, որոնք ունեն համեմատաբար տարածված կապային կիրառություններ, հարում են կապերին։*

մի քանի կապերի մեջ՝ ի փառս, ի հեճուկս, ի վեր, ի վար, ի տրիտուր, ի հաշիվ, ի պատիվ և այլն։ Ի նախդրով որոշ կապերի իմաստը երբեմն արտահայտվում է համապատասխան բառի տրական հոլովով, ինչպես՝ ի հաշիվ—հաշվին, ի պատիվ—պատվին, հօգուտ—օգտին։

ԿԱՊԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԻՄԱՍՏԻ

§ 677. Յուրաքանչյուր խոսքի մասի ըստ իմաստի դասակարգման հիմքում ընկած է լինում տվյալ խոսքի մասի համար իմաստային ամենաբնորոշ հատկանիշը։ Այդպես պետք է դասակարգել նաև կապերը։

Կապերը դասակարգելիս պետք է նկատի ունենալ, որ արտահայտած հարաբերությունների բնույթի տեսակետից նրանք բազմազան են, հետևապես և նրանց տեսակները թվով շատ սահմանափակ չեն։

Պետք է նկատի ունենալ նաև, որ նյութական իմաստից զրկված լինելու և հարաբերության իմաստ ունենալու պատճառով հաճախ միևնույն կապն ունենում է մեկից ավելի հարաբերության իմաստ։ Սովորաբար այդ իմաստներից մեկը լինում է հիմնական, բնորոշ, իսկ մյուսները՝ երկրորդական, ածանցյալ։ Այդպիսի դեպքերում կապի տեսակը որոշելիս հիմք ենք ընդունում առաջին, բնորոշ իմաստը։

Այնուամենայնիվ կապերի բազմիմաստությունը շատ է դժվարացնում նրանց դասակարգումը, քանի որ հաճախ դժվար է լինում որոշել տվյալ բառի առավել բնորոշ, հիմնական իմաստը։

Օրինակ, ի վեր բաղադրյալ կապը թե՛ տարածական և թե՛ ժամանակի իմաստ է արտահայտում։ Այսպես՝ սարն ի վեր, լեռն ի վեր, գետն ի վեր, ծառն ի վեր, պատն ի վեր և նման կապակցություններում ի վեր կապը ցույց է տալիս տարածական հարաբերություն (ուղղության երանգի հետ միասին), իսկ, օրինակ՝ այն ժամանակից ի վեր, 1917 թվից ի վեր, 5-րդ դարից ի վեր և նման կապակցություններում նույն ի վեր կապը արտահայտում է ժամանակի հարաբերության իմաստ։

Հանդերձ կապի նախնական իմաստը եղել է միասնության հարաբերությունը. այդ իմաստով այն գործածվում է նաև այժմ,

ինչպես՝ ընկերներով հաղթեր, ընտանիքով հաղթեր, աշակերտներով հաղթեր, դասարանով հաղթեր: Այս իմաստից ժամանակին ածանցվել է զիջական իմաստը, որն այժմ իր կշիռով, տարածվածությամբ չի զիջում միասնության իմաստին: Օրինակ՝ Այդ բոլորն իմանալով հաղթեր, նա չընդառաջեց: Երևանից շատ հեռու լինելով հաղթեր, սրտով միշտ այնտեղ է զգում իրեն:

Այսպիսի կապերի տեսակը չի կարելի որոշել հաշվի առնելով միայն այդ իմաստներից մեկը: Այդպիսիք կամ պետք է մտցնել համապատասխան թե՛ մեկ և թե՛ մյուս տեսակների մեջ (տարածական ու ժամանակային, միասնության ու զիջական), կամ համարել կապերի առանձին խումբ (գուցե ընդհանրական կամ նրման մի այլ անվանումով)՝ հաշվի առնելով ու քննելով նրանց հավասարարժեք տարբեր իմաստներն ու կիրառությունները: Ավելի նպատակահարմար է հարցի առաջին լուծումը:

Կապերը լինում են՝ տեղի, ժամանակի, վերաբերության, բացառման ու զիջման, ներգործության ու պատճառի, նպատակի, բացահայտման, ձևի, չափի, ընդդիմության, միասնության:

ՏԵՂԻ ԿԱՊԵՐ

§ 678. Տեղի հարաբերություն ցույց տվող կապերն են՝ **մեջ, վրա, տակ, մոտ, հով, ներքո, միջև, հանդեպ, դիմաց, շուրջ, ի վար, ի վեր, դեպի և այլն:**

Տեղի հարաբերության իմաստ են արտահայտում նաև մի քանի կապական բառեր, ինչպես՝ **հեռու, վերև, վեր, վար, դուրս, առաջ և այլն:**

Այս կապերը և կապական բառերն ունեն իմաստային տարբերություններ՝ հանձինս տարածական տարբեր հարաբերությունների:

§ 679. Տեղի կապերի մեծ մասը տարածական իմաստ է արտահայտում հանձին առարկայի որևէ կողմի: Դրանք են՝ **մեջ, վրա, տակ, ի վեր, ի վար, ներքո, հանդեպ, դիմաց** *կապերը,* **առաջ, վեր, վար, վերև** *կապական բառերը: Օրինակ՝ Նստեցնք ձեր մեծ թթենու տակ (ԳՍ, Թևհրան, 2): Գրասեղանի հանդեպ հանգիստ նստել էր Իլյիչը (ՆՀ, Բալլագ Վլադիմիր Իլյիչի, մուժիկի և մի գույգ կոշիկի մասին): Կուզես մնալ միշտ ձիուդ վրա (ՀՇ, Մոր սերը):*

Մանոթ.— *Վրա կապը երբեմն գործածվում է տարածական մի այլ իմաստով ևս՝ «մոտ», «կողքին»։ Օրինակ՝ Այս ճանապարհի վրա էին գտնվում Նախճավան, Դվին, Անի, Կարս, Կարին, Արծն, Երզնկա քաղաքները (ՀԺՊ, 1)։ Նշված հարավային մագիստրալի վրա գտնվում էին Հեր, Վան, Բերկրի, Արճեշ, Մանազկերտ և այլ քաղաքները (ն. տ.)։*

Նույնպես տարածական, բայց մի քիչ այլ բնույթի հարաբերության իմաստ ունեն մոտ, ետև կապերը, ետու կապական բառը, որոնց ցույց տված հարաբերությունները առնվում են մի առարկայի նկատմամբ տարածական հեռավորության տեսակետից։ Ըստ որում՝ ետու կապական բառը հենց այդ հարաբերության չափի տեսակետից հակադիր է առաջին երկուսին, որոնք հոմանիշներ են։ Օրինակ՝ Ջաբին ու շոֆերը նստեցին դռան մոտ (ԳՄ, Թեհրան, 2)։ Երկաթուղուց հեռու, գավառական այդ քաղաքում լուր է տարածվում (ԳՄ, Մանկություն և պատանեկություն)։

Ի վեր, ի վար *(հազվադեպ ի վայր), դեպի կապերը տարածական հարաբերության հետ միասին արտահայտում են նաև ուղղության իմաստ։ Վերջին իմաստն այս կապերի մեջ որոշ յուրահատկություն ունի։*

Ի վար, ի վեր *կապերը արտահայտում են շարժման ուղղությունը առարկայի, տեղի, տարածության երկարությամբ, ունեն «դեպի վար», «դեպի վեր» իմաստը։ Այդ պատճառով էլ նշված կապերը կարող են դրվել համապատասխան իմաստ ունեցող բառերի վրա, այնպիսի բառերի, որոնց հետ կարող է կապվել և՛ երկարության, և՛ վայրէջքի ու վերելքի գաղափար, ինչպես՝ գետն ի վեր (ի վար), ձորն ի վեր (ի վար), ճանապարհն ի վեր (ի վար), հոսանքն ի վեր (ի վար), լեռն ի վեր (ի վար), ժայռն ի վեր (ի վար), ծառն ի վեր (ի վար), աշտարակն ի վեր (ի վար) և այլն։ Օրինակ՝ կարծես թե մագլցում էր ժայռերն ի վեր (Սխ, Հողը, 1)։ Նրանք բարձրանում էին լեռն ի վեր (Վև, Սևանի ափին)։ Այս սարն ի վեր փախչողները, երևի, հոգնել են ու հետզհետե թափել իրենց բեռը (ն. տ.)։ Անդունդն ի վայր իջնող խճուղին կորավ աչքից (Սխ, Հողը, 1)։*

Դեպի կապի ուղղության իմաստն այլ բնույթ ունի. այն սովորաբար ցույց է տալիս ուղղություն դեպի մի առարկա, մի տեղ և այլն։ Օրինակ՝ Գործում էր մեքենայաբար և հաճախ անհանգիստ

հայացքով նայում էր դեպի դուրս (ԳՄ, Մանկություն և պատանեկություն)։

§ 680. Յուրահատուկ իմաստ ունի միջև կապը, որը ցույց է տալիս երկու կամ ավելի առարկաների միջև եղած տարածության հարաբերությունը խնդրառու բայով արտահայտված գործողության կամ եղելության նկատմամբ։ Օրինակ՝ Մասիս և Արագած լեռների և Ախուրյանի ու Արփայի միջև... փռված է Հայկական լեռնաշխարհի սիրտը կազմող Արարատյան դաշտը (ՀԾՊ, 1)։

§ 681. Դուրս կապական բառը ցույց է տալիս մի առարկայի, տեղի ներսը չլինելու, այլ նրա սահմաններից այն կողմ լինելու իմաստ. ինչպես՝ սենյակից դուրս, քաղաքից դուրս, դաշտից դուրս, գրքից դուրս, անտառից դուրս և այլն։ Տարածական իմաստ ունեցող կապերի մեծ մասի իմաստը վերաբերում է առարկայի սահմաններից դուրսը լինելուն. վրա, մոտ, տակ և այլն. սակայն սրանց մեջ կա իմաստի մասնավորում (դրսի այս կամ այն կողմի և այլն), մի բան, որ չկա դուրս կապի մեջ։

§ 682. Ի տարբերություն վերոհիշյալ կապերի, առարկայի չորս կողմի հարաբերություն է արտահայտում շուրջ կապը։ Օրինակ՝ Շանթի տարափ մեր շուրջ փռենք, Լուսավորվի աշխարհը (Հ. Հակ., Դարբնի երգը)։

§ 683. Տեղի հարաբերություն ցույց տվող կապերը, բացի իրենց հիմնական իմաստից, գործածվում են նաև այլ իմաստներով։ Այդ խմբի մեջ մտնող տարբեր կապեր տարբեր չափով կարող են երկրորդական կիրառություններ ունենալ։

§ 684. Դրանց համար համեմատաբար տարածված է ժամանակի հարաբերության իմաստը, որով կարող են գործածվել վրա, մոտ, մեջ, ի վեր կապերը։ Սրանցից յուրաքանչյուրի արտահայտած ժամանակի հարաբերությունը յուրահատուկ է և տարբերվում է մյուսներից։ Այդ տարբերությունները հիմնականում բխում են իրենց իսկ բառերի գլխավոր իմաստի յուրահատկությունից։

Համեմատենք հետևյալ օրինակները։

1. Սեղանի վրա դասավորեց գրքերը։
2. Տաք թեյի վրա խմեց սառը ջուր։
1. Երեխան հասավ սեղանի մոտ։
2. Հանդիպեցինք ժամը 8-ին մոտ։

Առաջին օրինակներում վրա, մոտ կապերը տարածական հա-

բաբերություն են ցույց տալիս, իսկ երկրորդ օրինակներում՝ ժամանակային հարաբերություն։ Այս հակադրությունից որոշակիորեն երևում է, թե ինչպես կապերի տարածական հարաբերության յուրահատկություններն արտահայտվում են նրանց ժամանակային հարաբերության մեջ։ Եթե **վրա** կապը տարածական իմաստով հիմնականում ցույց է տալիս մի առարկա մյուսի վերևը, մակերեսին դրվելու, տարածությամբ, այսպես ասած, մյուսին ուղղահայաց դիրքով հաջորդելու հարաբերություն, ապա նույն կապը ժամանակային իմաստով ցույց է տալիս նույնպես հաջորդելու հարաբերություն, բայց ժամանակային տեսակետից։ **Մոտ** կապը իր հիմնական տարածական իմաստով գործածվելիս ցույց է տալիս առարկային մոտիկ լինելու հարաբերություն, և, ինչպես երևում է վերևի օրինակից, կիրառության որոշակի պայմաններում այդպիսի հարաբերությունից կարող է ածանցվել ժամանակային տեսակետից մոտիկության հարաբերություն։

Ժամանակային հարաբերություն արտահայտելու համար **վրա** կապը դրվում է գործողության իմաստ ունեցող կամ գործողության իմաստի հետ անուղղակի կապ ունեցող բառերի հետ։ Օրինակ՝ *Հենց այդ խոսքի վրա կողքից դուրս եկավ նա, որի մասին խոսում էին։ Բայց ահա մթնելու վրա էր, որ խառն ձայներ լսվեցին (ԴԴ, Ավելորդը)։* **Երեսունչորսերորդի վրա** *(երեսունչորսերորդ աղբյուրը կառուցելիս) հիվանդացավ և հույսը կտրեց (ՄԱ, Հեղնար աղբյուր)։*

Մոտ կապը ժամանակային հարաբերություն է արտահայտում հատկապես դրվելով ժամանակի իմաստ ունեցող բառերի վրա և ցույց է տալիս ժամանակի տվյալ միավորին կամ կետին մոտիկ ժամանակ, ըստ որում՝ ժամանակի այդ միավորին ոչ թե հաջորդող *(ինչպես* **վրա** *կապի հետ էր)*, այլ նախորդող, նրան մոտեցող ժամանակը։ Օրինակ՝ *երեկոյան* **մոտ**, *առավոտյան* **մոտ**, *կեսօրին* **մոտ**, *ամսի վերջին* **մոտ**, *տարեվերջին* **մոտ**, *ժամը 6-ին* **մոտ** և այլն։

Մեջ կապը ժամանակի հարաբերության իմաստով գործածվելիս արտահայտում է ներգոյական հոլովով դրսևորվող ժամանակի պարագայի իմաստ, ցույց է տալիս, որ գործողությունը կատարվում է, եղելությունը լինում է կապվող բառի ցույց տված ժամանակի ընթացքում։ Օրինակ՝ *Մեկ օրվա* **մեջ** *(մեկ օրում) եր-*

կու օրվա աշխատանք կատարեց։ Երեք տարվա մեջ նա ոչ մի թերացում չի ունեցել։ Մեկ շաբաթվա մեջ ամբողջ անցածը կրկնենք։

Ի վեր կապի արտահայտած ժամանակային հարաբերությունն այլ է. այն ցույց է տալիս գործողության, եղելության բուկըսվելը որևէ ժամանակից, ժամանակակետից։ Վերջինիս անունը դրվում է բացառական հոլովով։ Օրինակ՝ Որովհետև անհիշելի ժամանակից ի վեր գյուղը խիտ անտառի մեջ է, ճանապարհից զուրկ,—Սաքու գյուղի երեխան այնպես է կարծում, թե աշխարհն անվերջ անտառ է (ԱԲ, Սաքու)։

Երբեմն ի վեր կապի հետ ժամանակ ցույց տվող բառը դրվում է ուղղականով, եթե այն գործածված է հոգնակի թվով. ինչպես դարեր ի վեր, տարիներ ի վեր։

§ 685. Վրա, տակ, մեջ *կապերը գործածվում են նաև ձևի իմաստով։ Վրա կապն այդպիսի հարաբերություն արտահայտելիս դրվում է սովորաբար մարմնի մասերի անունների վրա։ Ինչպես՝ պառկել մեջքի վրա, փորի վրա, կողքի վրա. կանգնել ոտի վրա, գլխի վրա և այլն։ Նման դեպքերում որպես խնդրառու բառ են գործածվում հետևյալ բայերը՝ կանգնել, բայլել, զբոսնել, մաճ գալ, ցատկոտել, գլորվել, սողալ, պառկել և այլն։ Օրինակ՝ Տեսա՝ էլ ազատվելու դուռը չկա, ասի՝ ես առաջուց երեսիս վրա վեր ընկնեմ, որ երեսս փշացնի ոչ (ՀԹ, Արջառոս)։ Անդոն պառկել է կողքի վրա (ԱԲ, Սև ցելերի սերմնացանը)։ Սամվելը ոտքի վրա անցուդարձ էր անում (Ր, Սամվել)։*

Վրա կապը երբեմն ձևի հարաբերություն կարող է ցույց տալ նաև մի քանի այլ բառերի վրա դրվելու դեպքում։ Օրինակ՝ Այստեղ աղախինները, մինը մյուսի վրա գլուխ դրած, խմբով պառկեցին (Ր, Սամվել)։ Երեխաները փողոցում հավաքվել էին իրար վրա։

Տակ կապը ևս կարող է ձևի հարաբերության իմաստ արտահայտել որոշակի պայմաններում. այն է, երբ կապվող բառի հետ միասին հանդես է գալիս որպես խոսել, մռմռալ, մրթմրթալ, փնթփնթալ, շշվացնել, ծիծաղել, ժպտալ և նման բայերի խնդիր։ Որպես կապվող բառ նման դեպքերում սովորաբար գործածվում են ինք, բեղ բառերը։ Օրինակ՝ Վերջին ձիավորը քթի

տակ մոմոում էր մի երգ (ԱՔ, Մթնաձոր)։ Նա անընդհատ բեզի տակ փնթփնթում էր (ՆԴ, Մահը)։

Շատ հազվադյուտ դեպքում մեջ կապը նույնպես արտահայտում է գործողության ձևի իմաստ՝ գործածվելով fիք, կոկորդ կապվող բառերի հետ. Նա խոսում է քթի մեջ։ Ընկերդ երգում է կոկորդի մեջ։

§ 686. Քով, մոտ, վրա, մեջ, դիմաց կապերը և առաջ կապական բառը կարող են արտահայտել համեմատության հարաբերության իմաստ։ Այս ձևով դրսևորվող անդամի խնդրառու բառը (մեծ մասամբ ստորոգելիական վերադիր) սովորաբար ունենում է հատկանիշի իմաստ։ Օրինակ՝ Չինգիզխանն անգամ մարդ էր աբնախում այս հրեշի fով (ՆՋ, Նա պիտի կախվի)։ Սևանա լիճը, որը աշխարհի բարձր լեռնային լճերի մեջ ամենամեծերից և մեծ լճերի մեջ ամենաբարձր լճերից մեկն է, գտնվում է ծովի մակերևույթից 1916 մետր բարձրության վրա (ՀԺՊ, 1)։ Ես ինձ բոլորովին փոքրացած էի զգում այդ մարդկանց առաջ և հետագա նսեմանալուց խուսափելու համար, որոշեցի այլևս այդ կարգի միամիտ ու ինձ նվաստացնող հարցեր չտալ (ՎԱ, Լեռնային կածաններով)։

Քով, մոտ կապերով արտահայտվող համեմատության իմաստը կիրառելի է սովորաբար առարկաների, երևույթների ստատիկ վիճակի նկատմամբ. որպես կանոն, նման դեպքերում համեմատվում են տարբեր առարկաներն իրար հետ։ Մինչդեռ վրա կապով ավելի շուտ նույն առարկայի տարբեր ժամանակներում ունեցած վիճակներն են համեմատվում իրար հետ, ավելի ճիշտ ու կոնկրետ՝ հաջորդ շրջանինը նախորդի հետ։ Ուրեմն նրա ձևավորած համեմատությունը կայուն վիճակի համեմատություն չէ, այլ փոփոխուն։ Այդ պատճառով էլ այս դեպքում նախադասության ստորոգյալը կամ մեզ հետաքրքրող խնդրառու բառը, ի տարբերություն նախորդ դեպքերի, բայական է լինում։ Օրինակ՝ երեկվա վրա մի փոքր լավ է զգում (կամ լավացել է)։ Անցյալ օրվա վրա բավականին մեծացել է։

§ 687. Շուրջ, դեպի կապերը գործածվում են նաև վերաբերության հարաբերություն արտահայտելու համար։ Օրինակ՝ Պարզ է, որ այդպիսի թեմայի շուրջը մտքերի փոխանակությունը պիտի հետաքրքրություն առաջացներ առաջին հերթին ուսանողության

շրջաններում (Արշ., Մոսկվայի համալսարանը և հայ առաջավոր ինտելիգենցիան)։ Մեր մամուլն ու հասարակությունը առանձին հետաքրքրության նշաններ են ցույց տալիս դեպի այդ խնդիրները (ՎՏ, Հայ գրականության դալիք օրը)։

§ 688. **Վրա** *կապը կապվող բառի հետ միասին գործածվում է նաև գործողության ճանգման առարկան ցույց տալու համար։ Այդ լինում է այն դեպքում, երբ, որպես խնդրառու բառ, գործածվում են հետևյալ բայերը՝* **ճարճակվել** *(մեկի, մի բանի վրա),* **շարանալ**, *(աչքերը)* **չռել**, **սիրահարվել**, **զայրանալ**, **կրակել** *և այլն։ Օրինակ՝* **Կա՜նգ առեք, էլ մի՛ կրակեք ձեր եղբայրների վրա. Ձեր որդիների, քույրերի ու Ձեր հայրերի վրա** *(Ավ, Ռամ Ռոյ)։* **Իշխանի խոսքերը ազդեցին ժողովրդի վրա** *(Մուր., Գևվորգ Մարզպետունի)։* **Դեռ աշնանը ողջ հույսը դրել էր տարվա լավ բերքի վրա** *(Սխ, Հողը, 2)։*

§ 689. **Վրա** *կապը երբեմն դրվում է կապվող բառի վրա և ցույց է տալիս, որ վերջինս գործողության միջոց, գործիք է։ Դա մասնավորապես լինում է երաժշտական գործիքների անուններ-ի հետ գործածվելիս. նման դեպքում բնականաբար խնդրառու բայերը լինում են՝* **նվագել**, **կատարել** *և այլն։ Օրինակ՝* **Ինչի՞ նըման է այն կինը, որը չի կարողանում նվագել մի այդպիսի պատվական գործիքի վրա** *(Սխ, Հողը, 1)։* **Մի խումբ երաժիշտներ, վրանի առջևում կանգնած, ածում էին զանազան նվագարանների վրա և ավելի անլուրի ձայնով երազում էին** *(Ր, Սամվել)։*

§ 690. **Տակ** *կապի որոշ կիրառություններում ակնբախ է պատճառի հարաբերության յուրահատուկ իմաստը։ Օրինակ՝* **Ու կես համփին Փայտե ձին Մեր վշտի տակ կոտրվեց** *(ՀՇ, Իմ ընկեր Լորիկը)։ Այդ զգացման ազդեցության տակ բնակարանս փոխելու որոշմանս իրագործումն էլ եւին գծի վրա էր քաշվել (ՆԴ, Տանտիրոջս աղջիկը)։*

§ 691. **Հավանականության**, **անհավանականության**, **հնարավորության** *ու* **անհնարինության** *իմաստ կարող են արտահայտել մոտ, հեռու կապերը։ Ըստ որում, մոտ կապը հավանականություն, հնարավորություն կարող է ցույց տալ, իսկ հեռու կապը՝ անհավանականություն, անհնարինություն։ Վերջին իմաստով երբեմն գործածվում է նաև վեր կապը։ Այսպես՝* **տրամաբանության մոտ, տրամաբանությունից հեռու, ճշմարտության մոտ, ճշմարտությու-**

նից հետու, խելքի մոտ, խելքից հետու, հավանականության մոտ, հավանականությունից հետու, հավանականությունից վեր և այլն։

Ինչպես տեսնում ենք, քննարկվող կապերն այդ իմաստով գործածվում են՝ դրվելով մարդու հատկապես մտավոր ու այլ կարողությունների իմաստ, ինչպես և ճանաչողական արժեք ունեցող բառերի վրա։ Օրինակ՝ *Սա շատ խելքի մոտ թվաց Վարազվաղանին (ԴԴ, Վարդանանք, 1)։ Ճշմարտության մոտ բաներ ես ասում։ Դրանք ճշմարտությունից հետու ենթադրություններ են։*

ՎԵՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՊԵՐ

§ 692. Վերաբերության հարաբերություն արտահայտող կապերն են՝ մասին, վերաբերյալ, վերաբերմամբ, նկատմամբ, առթիվ, կապակցությամբ։ *Վերաբերության իմաստ ունեն նաև* նկատի, ուղղությամբ *կապական բառերը։*

Այս կապերը գործածվում են, երբ անհրաժեշտ է լինում ցույց տալ, որ որևէ գործողություն, եղելություն կամ միտք, խոսք վերաբերում է մեկին, մի բանի։ Սրանց մեջ վերաբերության հարաբերությունն արտահայտվում է տարբեր յուրահատկություններով։

§ 693. Մասին, վերաբերյալ *կապերը արտահայտում են հարաբերություն այն անձի, առարկայի, երևույթի նկատմամբ, որոնց վերաբերում է ասելու, խոսելու, մտածելու գործողությունը։ Ուրեմն, սրանք ձևավորում են ասացական ու մտածական բայերի և բայանունների անուղղակի խնդիր (վերաբերության անուղղակի խնդիր)։ Այդպիսի բայեր են՝* ասել, խոսել, գրել, պատմել, գեկուցել, զրուցել, երգել, շարադրել, հայտարարել, հաղորդել, հայտնել, տեղեկացնել, մտածել, դատել, խորհել, իմաճալ *և այլն, բայանուններ՝* գրություն, պատմություն, գեկուցում, հայտարարություն, զրույց, երգ, շարադրություն, հաղորդում, հարց *(կամ* հարցում*)*, տեղեկություն, դատողություն *և այլն։*

Ահա մասին, վերաբերյալ *կապերի համապատասխան կիրառությունների օրինակներ. Հետո դարձյալ խոսեցին ինստիտուտի կազմակերպության մասին (ԳՍ, Թեհրան, 2)։ Քեզանից խելոք գլուխներ են մտածում այդ մասին (ԲՎ, Լեռների որդին)։ Հաղորդում՝ ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ։ Շատ անգամ իրենց ուրույն վերաբերմունքն ունենալով*

հանդերձ քննարկվող հարցերի վերաբերյալ՝ բարեկրթորեն լռում էին և արտաքուստ հետաքրքրությամբ ու ակնածանքով ունկընդրում ավագների խոսքին (Ա. Սահ., Ծարավ)։

§ 694. Նկատմամբ և վերաբերմամբ *կապերն արտահայտում են բարոյական, վերաբերմունքային բնույթի հարաբերություն։ Սրանք ձևավորում են հետևյալ և նման բառերի համապատասխան լրացումները՝* հարազատանալ, հարազատություն (զգալ), մեղմ (լինել), ուշադիր (լինել, դառնալ), աշառու (լինել, դառնալ), անաչառ (լինել, դառնալ), կողմնակալ (լինել, դառնալ), անկողմնակալ (լինել, դառնալ), խիստ (լինել, դառնալ), մեղմ (լինել, դառնալ), հոգատար (լինել, դառնալ), ներողամիտ (լինել, դառնալ), անողոք (լինել, դառնալ), անտարբեր (լինել, դառնալ) *և այլն։*

Բերենք օրինակներ՝ Հարազատություն զգաց Միսակյանի նկատմամբ (Սխ, Հողը, 1)։ Ինչ անեմ Սմբատի վերաբերմամբ (Շիրվ., Քաոս)։ Կան մարդիկ, որոնց նկատմամբ անտարբեր չի կարելի լինել (Բվ, Լեռների որդին)։

§ 695. Առթիվ, կապակցությամբ *կապերը, ելիրված, ուղղությամբ կապական բառերն արտահայտում են աշխատանքային գործողության, հաճախ միջոցառման իմաստ ունեցող խնդրի վերաբերություն։ Օրինակ՝ Դեռ անցյալ տարի նա իր մտքում դրել էր մի եզ մորթել որդու գալու առթիվ (ԱՒ, Մթնաձոր)։ Դժվարությունների առաջ կանգ առան նրանք, ովքեր ցանկանում էին այդ ուղղությամբ նյութեր հավաքել (Արշ., Մոսկվայի համալսարանը և հայ առաջավոր ինտելիգենցիան)։*

Առթիվ, կապակցությամբ *կապերը, ինչպես և մասամբ ուղղությամբ կապական բառը երբեմն ձևավորում են նաև ասացական և իմացական բայերի խնդիր. ինչպես՝ արտահայտվել այդ հարցի* առթիվ *(կամ* կապակցությամբ), *մտածել այդ* ուղղությամբ։ *Նրան թվաց, թե հանդիմանության մի մասն էլ իր ասածի* առթիվ *է (ԱՒ, Կարմրաքար)։*

ԲԱՅԱՌՄԱՆ ՈՒ ԶԻՋՄԱՆ ԿԱՊԵՐ

§ 696. Բացառման ու զիջման հարաբերություն արտահայտող կապերն ու կապական բառերն են՝ բացի, առանց, զատ, վր-

խարեն, փոխանակ, հանդերձ, տեղ, տեղակ, չնայած, չհաշված, հակառակ, բացառությամբ:

Այս կապերի իմաստների միջև կա որոշ տարբերություն, որը, սակայն, չի խանգարում այս բոլորը մեկ տեսակ համարելուն:

§ 697. Բացառման հարաբերություն արտահայտում են հատկապես բացի, առանց, զատ, *չհաշված կապերը:*

Բացի կապի բացառման հարաբերության յուրահատկությունը հետևյալն է. այն ցույց է տալիս տվյալ առարկայի կամ առարկաների բացառումը այս կամ այն գործողությունը կատարելու, գործողության օբյեկտ դառնալու կամ հատկանիշն ունենալու տեսակետից, որոնք (գործողություն կատարելը, գործողության օբյեկտ դառնալը, հատկանիշն ունենալը) հատուկ են այլ առարկաների: Օրինակ՝ Հյուրերն սկսեցին ցրվել, բացի Միքայելի ընկերներից ու բարեկամներից (Շիրվ., Քառս): Մյուսները հեռանեցին նրան, բացի Գադիշոյից, Գյուտից և Ոշտունյաց Արտակից (ԴԴ, Վարդանանք, 1): Գարնանը նրանք ծաղկեցին, բացի մեկից (ԱԲ, Սև ցելերի սերմնացանը): Նրանք թիավարեցին այդ նեղուցով և երկաթյա պետերից բացի ոչինչ չտեսան (ՎԱ, Սևանի ափին):

Բացի կապը երբեմն փաստական բացառում չի արտահայտում, այլ զուգադրվելով նաև, էլ շաղկապներին և կամ առանց դրանց, արտահայտում է մի հարաբերություն, ըստ որի առարկան անպայմանորեն ունի նշված հատկանիշը, ու դա դիտվում է որպես հայտնի իրողություն, և ի հավելումն դրա նշվում է, որ տվյալ հատկանիշն ունեն նաև այլ առարկաներ: Օրինակ՝ Արտաշիր սեպուհը... Սյունյաց զորագնդի օգնական հրամանատար լինելուց բացի, հսկում էր մյուս նախարարների զորագնդերին (ԴԴ, Վարդանանք, 2): Բացի լուսավորական գաղափարներին արձագանքելուց, Քերովբե Պատկանյանը իր պոեմում տվել է ժողովրդական կենցաղի, նրա սովորությունների ու ծեսերի մանրամասն նկարագրություններ (ՀՆԳՊ, 2):

Այս դեպքում, ինչպես երևում է օրինակներից, բացի կապի դերը որոշ չափով նման է թվարկում արտահայտող այնպիսի գրագրական շաղկապների առաջին եզրին, ինչպիսիք են՝ ոչ միայն... այլև, ինչպես... այնպես:

Զատ կապը հոմանիշ է բացի կապին. սրանց միջև տարբերությունն ավելի ոճական բնույթ ունի, քան իմաստային, այն առումով, որ զատ-ն ունի շատ թույլ բարբառային երանգ կամ համեմատաբար գրական լեզվին այնքան հատուկ չէ, որքան բացի բառը։ Օրինակ՝ Ես ուխտել եմ իմ անձը նրան (հայրենիքին) նվիրել, նրա սիրուց զատ աշխարհում ոչինչ սեր չճանաչել, նրա ցավերից զատ ուրիշ ցավերով չվշտանալ (Մուր., Խորհրդավոր միանձնուհի)։ Այստեղ կոց տաճարներից զատ գտնվում էին նաև հոյակապ պարանք (Մուր., Գևորգ Մարզպետունի)։

Բացի կապին հոմանիշ է նաև չհաշված կապական բառը։ Դրանց միջև հիմնական տարբերությունը հոլովառության մեջ է. բացի-ն սովորաբար բացառական հոլովով բառի վրա է դրվում (հայցականի վրա դրվելը սովորական չէ գրական լեզվին), իսկ չհաշված-ը դրվում է հայցականի վրա։ Նշենք նաև, որ չհաշված-ը քանի որ կապական բառ է, կապային առումով քիչ է գործածվում։ Օրինակ՝ Տան մխիթարությունն ու ուրախությունն էր նա, չհաշված այն, որ նրա պատվին իրենց պատիվն էլ էր մեծացել գյուղում (Ա. Սահ., Ծարավ)։ Մի քանի խարվար կորեկ են բերում իմ պահնաորը, չհաշված անասուններն ու թռչունները (Ն. տ.)։

Առանց կապը ևս արտահայտում է առարկայի, երևույթի բացառում տվյալ գործողությունը կատարելու, նրան ենթարկվելու կամ որևէ հատկանիշ ունենալու տեսակետից։ Օրինակ՝ Թագուհին դուրս գնաց դահլիճ, առանց նաժիշտների ընկերակցության (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Երբեմն մոտ էր պահում նրա գլուխը և նայում էր առանց աչքերը թարթելու (ԱԲ, Խաչատուր Աբովյան)։ Այդ երկաթուղով է, որ սլանում է մեր գնացքը՝ քրտնած, հևիհև, համարյա առանց կանգառների (ՍԿ, Քարավանները դեռ քայլում են)։

§ 698. Փոխարեն, փոխանակ, տեղ (տեղակ), չնայած, հակառակ, հանդերձ կապերը զիջական հարաբերության իմաստ ունեն։ Զիջման հարաբերությունը սրանց մեջ արտահայտվում է իմաստային որոշ յուրահատկություններով։

Հակառակ և չնայած կապերի մեջ զգալի է հակադրության իմաստը, որն արտահայտվում է հետևյալ կերպ. նշվում է գործողության կատարման հնարավորության կամ անհրաժեշտության բացառումն այս կամ այն տեսակետից և այդուհանդերձ այդ նույն

գործողության կատարումը։ Այդ հանգամանքն էլ այս կապերի մեջ ստեղծում է հակառակ հիմունքի, զիջման հարաբերության։ Օրինակ՝ Հակառակ նորամուծ սովորության, այրի Ոսկեհատը պահանջել էր, որ հանգուցյալի հիշատակին այնպիսի հոգեճաշ տրվի, որի նմանը եղած չլիներ։ Սմբատը համաձայնության էր տվել, հակառակ իր հայացքների (Շիրվ., Քառս)։ Չնայած ծերունու բարձրագոչ արգելումներին, բակն աննկատելի լցվում, ողողվում էր դպրոցականներով (ԱՄ, Ոսկե մեդալ)։

Զիջման հարաբերությունը փոխաճակ, փոխարեն, տեղ. տեղակ բառերի մեջ արտահայտվում է փոխարինության ընդգծված երանգով հանդերձ։ Օրինակ՝ Դու փոխաճակ շնորհակալ լինելու նրանից, հավատում ես ուրիշի զրպարտություններին (Սե, Հողը, 2)։ Մարդուն պատասխանելու տեղ Անդրին կանչեց յուր ձիուն, որ հեռացել էր բավական (ՀԹ, Սովի ժամանակից)։ Ձեռքերդ շարժելու փոխարեն շարժիր ուղեղդ, կարդա՛, կարդա՛, ուսումնասիրիր (ԲՎ, Լեռների որդին)։ Վա՛յ, գետինն անցնեք,— ճչաց խորթ մերը, թող դուք կորչեիք հորթերի տեղակ (ՀԹ)։

Հանդերձ կապը անցյալում մխանության հարաբերություն էր արտահայտում։ Այդ իմաստով այն գործածվում է նաև այժմ (տե՛ս § 717)։

Սակայն մեր գրական լեզվի արդի շրջանում հանդերձ կապը մի այլ բնորոշ իմաստ է ձեռք բերել. դա նրա զիջական իմաստն է, որն արտահայտում է հատկապես անորոշ դերբայի, ինչպես և երբեմն բայանունների ու հատկանիշի իմաստ ունեցող գոյականների գործիականի ձևի վրա դրվելիս։ Օրինակ՝ Բացի դրանից, Մերուժանը յուր խստասրտությամբ հանդերձ, գիտեր գնահատել բարձրը, վսեմը և ազնիվը (Ր, Սամվել)։ Միծաղում ես և միևնույն ժամանակ, ապշում, որ մարդիկ այս բոլորը գիտենալով հանդերձ, ինչ-որ նոր տարիներ են հնարել (ՆԴ, Մահը)։

ԺԱՄԱՆԱԿԻ ԿԱՊԵՐ

§ 699. Ժամանակի հարաբերության իմաստ ունեն հետևյալ կապերն ու կապական բառերը՝ որոմ, որով, հետո, ասց, նախքան, միջև, միջոցին, պահին, առաջ, առ, ժամանակ, որոնք դրվելով կապվող բառի վրա՝ ցույց են տալիս գործողության կատարման ժամանակը։

Ծանոթ.— *Սակավ դեպքերում, հատկապես չափածո խոսքի մեջ, գործածվում է* ետ *կապը, իբրև* հետո *կապի համարժեք. եվ այն օրից* ետ, *երբ ընկերացա մուրճ ու սալի հետ, Քրտինքը դեմքես ծորում է կաթ-կաթ (Հ. Հակ., Նամուս ու ղեյրաթ)։*

Ժամանակի իմաստ ունեցող կապերն ու կապական բառերը կարելի է բաժանել երեք խմբի։

§ 700. *Առաջին խմբի մեջ մտնում են այն կապերն ու կապական բառերը, որոնք ցույց են տալիս, որ տվյալ գործողությունը կատարվում է այն ժամանակի, դեպքի ընթացքում, որի անվան վրա դրվում է կապը։ Դրանք են՝* ժամանակ, միջոցին, պահին, ornf, ornվ: *Օրինակ՝ Բազմաթիվ երթևեկություններից ժամանակ համարյա ամեն տեղ նա նոր ու նոր բարեկամներ էր գտնում (ԴՍ, Թեհրան, 2)։ Սրա (Միհրդատ Եվպատորի)* ornf *Պոնտոսը ուժեղացել էր և դարձել հզոր պետություն (ՀԺՊ, 1)։ Արքայական գահի դեմ ունեցած գժտությունը... սկսված էր Աշոտ Երկաթի* ornվ *(Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Խափշիկն այդ խոսքերն ասելու* միջոցին *հանդարտ էր (Ր, Հարեմ)։*

§ 701. *Երկրորդ խմբի մեջ մտնում են այն կապերն ու կապական բառերը, որոնք ցույց են տալիս, որ գործողությունը կատարվում, եղելությունը լինում է կապվող բառով ցույց տրվող ժամանակից (կամ կապվող բառով ցույց տրվող գործողության, դեպքի կատարման ժամանակից) հետո, նրան հաջորդող ժամանակում։ Դրանք են՝* հետո, ասց, սկսած, որից, ի վեր և այլն։ *Օրինակ՝ Իսկ ամուսնանալ կարող էր միայն շուայլ կենցաղը փոխելուց* հետո *(Շիրվ., Քաոս)։ Մի փոքր ասց բերին մոտ քսան մեծ պարկ ցորեն (ԴԴ, Վարդանանք, 2)։ Սենյակը վարձելուց ի վեր Հերյանը նրան տեսել էր երկու կամ երեք անգամ (ԿՋ, Նավը լեռան վրա)։*

§ 702. *Վերջապես, երրորդ խմբի կապերն ու կապական բառերը ցույց են տալիս գործողության, եղելության նախորդելը որևէ ժամանակի, գործողության կատարվելը մի ժամանակից, դեպքից, գործողությունից առաջ։ Այդ կապերն են՝* նախքան, մինչև *(մինչ)*, առաջ, առ:

Օրինակ՝ Սակայն նախքան *այդ, մի փոքրիկ մեթոդոլոգիական նկատողություն (ՎՏ, Ալեքսանդր Մատուրյան)։ Ես կես ժամ*

առաջ այստեղ էի (ՀՔ, Մեծ տան զավակները, 1)։ Մուքը իջավ համատարած, մինչ կայարանը վերցրին (ԵՉ, Ամբոխները խելագարված)։

Ծանոթ.— Առ կապը շատ սակավ դեպքերում ստանում է վիրաբերության իմաստ. ինչպես՝ սեր առ ուսումը։ Այն լայն տարածում չունի ժամանակակից հայերենում։ Նա ժամանակի իմաստով գործածվում է հիմնականում վիճակագրական, գրասենյակային ոճի մեջ, իսկ վերաբերական իմաստով կիրառությունները համարյա սահմանափակվում են մի երկու կապակցություններով։

ՀԻՄՈՒՆՔԻ ԿԱՊԵՐ

§ 703. Հիմունքի կապերն արտահայտում են գործողության եղելության հիմունքի հարաբերություն։ Դրանք են՝ ըստ, համաձայն, ելմամբ, ելման վրա, նայած։ Հիմունքը կարող է տարբեր լինել՝ իրավական, սովորութային և այլն։ Օրինակ՝ Գյուղի սովորության համաձայն նստեցրել էին ձիու վրա, Բաղդասարի թարքին ու տարել եկեղեցի (Սխ, Հողը, 1)։ Չնայած դրան, նա ըստ սովորության հարցրեց (ԳՍ, Թեհրան, 2)։ Համաձայն համալսարանի նոր կանոնադրության 10 ամբիոնի փոխարեն հաստատվում են 28 ամբիոն (Արշ., Մոսկվայի համալսարանը և հայ առաջավոր ինտելիգենցիան)։ Այդ ծրագրի ելման վրա Ռուսաստանը բաժանվում էր վեց զոնայի (Ն. տ.)։ Նայած նրա ապարոշին՝ Արտակի հայրենակիցն էր կամ հարևան երկրից (ԴԴ, Վարդանանք, 1)։

Սրանց է հարում ելմամատ կապը, որը նույնպես հաճախ հիմունքի հարաբերություն է արտահայտում։ Օրինակ՝ Մինչև այդ խոսակցությունը տեղի էր ունենում օր. Սահակյանի և Մինասյանի միջև, Աշխենը, իր սովորության ելմամատ, նստած էր բոլորովին լուռ (ՆԴ, Մահը)։ Համեմատ կապը երբեմն արտահայտում է ոչ թե հիմունքի, այլ համեմատության իմաստ։ Օրինակ՝ Սա նրա ելմամատ լավ է։

ՊԱՏՃԱՌԻ ԿԱՊԵՐ

§ 704. Պատճառի կապերն ու կապական բառերը արտահայտում են գործողության, եղելության պատճառի հարաբերություն։ Դրանք են՝ չնորհիվ, ձեռից, երեսից, պատճառով։

Շնորհիվ *կապը ժամանակակից հայերենում, որպես կանոն, դրական իմաստով է գործածվում, իսկ* ձեռիցգ, *երեսից կապական բառերը՝ բացասական։ Օրինակ՝ Այդ կապերի շնորհիվ շատ արտոնություններ ձեռք կբերեն ձեր դյուղի համար, և ձեր կոլխոզը կդառնա Հայաստանի ամենահարուստ տնտեսություններից մեկը (Սախ, Հողը, 2)։ Ինչ փորձանք որ մեր գլխին գալիս է, դրա երեսից է (ՔԹ, Ոսկե հովիտ)։ Էլ որս չմնաց, դադարցյուն եղան նրանց* ձեռիցգ *(Սախ, Հողը, 1)։*

Սակայն երբեմն հանդիպում են շնորհիվ կապի նաև բացասական իմաստով կիրառություններ, որոնք սովորական չեն։ Օրինակ՝ Սիրելի Լևոն, անշուշտ չգիտես, որ անցյալ օրը ինձ մի փոքրիկ դժբախտություն պատահեց, որի շնորհիվ այժմ չեմ կարողանում սենյակից դուրս գալ (ՆԴ, Մահը)։

Շնորհիվ *կապը կարող է արտահայտել նաև ավյալ գործողության, եղելության միջոցի իմաստ. (Լուցկու) շնորհիվ մենք միշտ կարող ենք կրակ և լույս ունենալ (ՆԴ, Մահը)։*

ՆՊԱՏԱԿԻ ԿԱՊԵՐ

§ 705. Նպատակի հարաբերություն արտահայտող կապերն են՝ համար, *ի օգուտ, հանուն, ի։ Այս իմբին է հարում* օգտին *կապական բառը։*

Համար կապը որոշակիորեն նպատակային հարաբերություն է արտահայտում այն դեպքում, երբ դրվում է բայի (դերբայի հոլովաձևի), այլև որոշ գոյականների վրա, եթե վերջիններիս հետ ուղղակի կամ անուղղակի կերպով կապվում է գործողության իմաստը։ Օրինակ՝ Նա մտքում բառեր էր փնտրում վշտացած մորը հանգստացնելու համար (ԳՍ, Թեհրան, 2)։ Այդ դրոշակի տակ ես ուխտեցի կռվել ու անձնատուրհվել հայրենիքի համար, ազատության համար (Իս., Գարիբալդիականը)։

Համար կապը երբեմն ցույց է տալիս գործողության կատարման պատճառը։ Պատճառի իմաստի ձևավորմանն ու ըմբռնմանը նպաստում են ավյալ նախադասության կից նախադասությունները, մանավանդ նախորդ նախադասությունը։ Օրինակ՝ Օրը մինչև իրիկուն կնկա կոզքը կտրած նրա հետ դուրս գնալիս դուրս էր գը-

նում, տուն գալիս՝ տուն գալի։ Դրա համար էլ անունը դնում են Վախկոտ Նազար (ՀԹ, Քաջ Նազարը)։ Ինքը մի բարի մարդ է լինում, բայց ինչ գործ որ բռնում է, ձախ է գնում։ Դրա համար էլ անունը դնում են Ձախորդ Փանոս (ՀԹ, Ձախորդ Փանոսը)։

Համար կապի արտահայտած պատճառի իմաստը նաև կարող է հասկացվել հենց միևնույն նախադասության մեջ։ Օրինակ՝ Գարեգինը նայեց պատուհանից դուրս ու ինքն էլ իրեն կշտամբեց ուշանալու համար (Սե, Հողը, 1)։ Սկզբում նրան կատաղած տիկին էին ասում չար, նախանձոտ և մաղձոտ բնավորության համար (ՔԹ, Ոսկե հովիտ)։

Համար կապը երբեմն ցույց է տալիս վերաբերություն, հատկացում. Մեծ աղետ կլիներ այդ վայելքը եղջերուների ցեղի համար (ՎԱ, Լեռնային կածանների)։

Ծանոթ.— Ճիշտ չէ համար կապի գործածությունը ինչու բառի հետ։ Օրինակ՝ Ինչո՞ւ համար ժամանակը այնքան բարեհոգի է գտնվել Սայաթ-Նովայի վերաբերմամբ (լրագիր)։ Ինչու-ի մեջ ինքնին կա համար-ի իմաստը, ուստի և կապի գործածությունը նման դեպքերում անտեղի է։

Գրաբարյան ի նախդիրը սակավ դեպքերում այժմ էլ գործածվում է որպես կապ։ Այսպես՝ Շիրակումն է իմ հոգին խոյացել արդար հպարտությամբ ի տես մեր նախնիների կերտած այդ զարմանալի գեղեցիկ և ներդաշնակ ճարտարապետության (Իս.)։ Արևվելքի երկրների հասարակայնությունը արտահայտվում է ի պաշտպանություն եգիպտական ժողովրդի (լրագիր)։

Սակայն ի-ն արդեն համարյա կորցրել է իր բառական արժեքը և այժմ նա մեծ մասամբ կապվող բառի հետ միասին ձևավորում է բաղադրյալ կապ, ինչպես՝ ի փառս հայրենիքի, ի պատիվ հայրենիքի, ի ձյան երախտագիտության, ի հեճուկս հակառակորդների և այլն։ Էլ չենք խոսում հանուն (<յանուն<ի անուն), հօգուտ (<յօգուտ<ի օգուտ) և նման բառերի մեջ եղած նախկին նախդրի մասին, որը վաղուց միացել է բառին և այլևս չի գիտակցվում որպես նախդիր։

ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԿԱՊԵՐ

§ 706. Բացահայտման կամ մեկնական հարաբերություն արտահայտող կապերն են՝ իբրև, որպես: Այս կապերը, ինչպես հայտնի է, մասնակցում են մասնական բացահայտիչ ձևավորելուն և ունեն նման այլ կիրառություններ: Օրինակ՝ Հաճախ այս մասն էլ ընդունում են իբրև 2 աշխարհամասերի պայմանական սահման (ԿԱ, Ասիայի երկրներով): Ն. Զարյանը իբրև պոետ ծնվեց սովետական կարգերում (Հ. Մկրտչյան):

§ 707. Սրանց շարքը պետք է դասել նաև ի նշան բաղադրյալ կապը, որը ևս բացահայտման, մեկնական իմաստ ունի: Օրինակ՝ Տեղի ունեցավ աշխատավորների ընդհանուր գործադուլ, որը հայտարարված էր ի նշան բողոքի՝ ֆաշիստների բանդիտական գործողությունների դեմ (լրագիր):

ՁԵՎԻ ԿԱՊԵՐ

§ 708. Ձևի հարաբերություն արտահայտող կապերի քանակը խիստ սահմանափակ է. այդ հարաբերությունը հիմնականում արտահայտվում է պես կապով, նման, ինչպես կապական բառերով:

Այս կապերը ցույց են տալիս, թե գործողությունն ինչպես, ինչ ձևով է կատարվում, առարկան ինչպիսին է: Օրինակ՝ Քնած ամրոցը՝ ՌղականԸ, զառիվերին կառչած վագրի պես փակել էր աչքերը (ԴԴ, Վարդանանք, 1): Ու գուրգուրեց մի մոր նման (ՀՇ, Երկու որբեր): Ներս մտավ մայրը, արևի նման, սփոփեց որդուն (ՀՇ, Մոր սերը): Ինչպես հանկարծահաս մի փոթորիկ կամ գարնանազայր մի հեղեղ թափվեցան նրանք արաբացիների վրա (Մուր., Գևորգ Մարզպետունի):

§ 709. Պես և նման կապերի իմաստների միջև էական տարբերություն չկա, և հաճախ դրանք կարելի է փոխարինել մեկը մյուսով: Պատահում է, որ միևնույն նախադասության մեջ միևնույն տեսակի հարաբերություն ցույց տալու համար գործածվում են և՛ մեկը, և՛ մյուսը՝ միևնույն կապի կրկնությունից խուսափելու նպատակով: Օրինակ՝ Ծիծաղում էիք ինձ նման, լալիս հորս պես

(ՀՇ)։ Ինչպես երևում է, պես, նման բառերը ձևի հարաբերությունը ձևավորում են համեմատության միջոցով, և այդպես ձևավորված ձևի պարագան տարբերվում է այդ նույն անդամի այլ արտահայտություններից։

Քննարկվող կապերը ձևավորելով ձևի պարագա և լրացնող բառը կապելով լրացյալի (դերազանցապես պարագայի) հետ, դրանով իսկ վերջին հաշվով մեծ մասամբ տրամաբանորեն բնորոշում են ենթական այս կամ այն տեսակետից, այս կամ այն դեպքում։ Այդպիսիք են վերը բերված բոլոր օրինակները։ Մեր այս միտքը պարզաբանենք մեկ օրինակով։ Դ. Դեմիրճյանի «Քնած ամրոցը՝ Ողականը, զառիվերին կառչած վագրի պես փակել էր աչքերը» խիստ պատկերավոր ու բնութագրող նախադասության մեջ ձևի պարագան բնականաբար լրացնում է ստորոգյալին, և դրանով իսկ բացահայտվում է ամրոցի՝ Ողականի, էությունը, բնութագիրը այդ պահին, և վագր բառով ըստ էության ամրոցն է բնորոշվում, որն այստեղ ենթակա է։

Քննարկվող կապերով արտահայտվող ձևի հարաբերությունը համեմատաբար սակավ դեպքերում կարող է վերաբերել ոչ թե ենթակային, այլ լրացմանը, հատկապես խնդրին։ Օրինակ՝ Ադադին... հետաքրքրական վեպի պես մի շնչով կարդաց Տիգրանի ձեռագիրը (ԳՍ, Թեհրան, 2)։ Այստեղ վեպի պես-ով ոչ թե ենթակայի բնույթն է որոշվում, այլ խնդրի (ձեռագիրը)։

§ 710. Պես կապը երբեմն դրվում է անորոշ դերբայի տրական հոլովաձևի վրա և արտահայտում է ժամանակի իմաստ. այն է՝ երկու գործողություններից մեկը մյուսին անմիջապես հաջորդելու իմաստ։ Օրինակ՝ Բրիգադիրին տեսնելուն պես խնդալից բացականչեց (ՔԹ, Ոսկե հովիտ)։ Տուն մտնելուն պես իմ առաջին հարցը եղավ... (ՎԱ, Լեռնային կածաններով)։

ՉԱՓԻ ԿԱՊԵՐ

§ 711. Չափի հարաբերություն արտահայտող կապերն ու կապական բառերն են՝ չափ, ավել, ավելի, բաճ, ավելի բաճ, միևչև։

§ 712. Չափ կապով հարաբերության իմաստ է արտահայտվում համեմատության եղանակով. առարկան չափի, մեծության, քանակի տեսակետից համեմատվում է այլ առարկայի հետ և վեր-

չինիս միջոցով գաղափար է տրվում առաջինի չափի, քանակի, մեծության մասին։ Օրինակ՝ ես դեռ մինչև հիմա նրա բեղերի չափ երկար բեղ չեմ տեսել (ԴՄ, Մանկություն և պատանեկություն)։ Մերոնք Պարսկաստան գնալիս անապատում մի լոքու չափ կլոր քար են դնում լեզվի տակ ու ծծում (ՎԱ, Լեռնային կածաններով)։ Երեկոյան իր հավաքնի չափ փոքրիկ խանութը փակելուց հետո տուն էր գնում (ՆԴ, Մահը)։

Չափ *կապը երբ դրվում է թվականի կամ թվական որոշիչ ունեցող կամ չափ ցույց տվող այլ բառի վրա, սովորաբար արտահայտում է կապվող բառով ցույց տրված չափի մոտավորության իմաստ։ Օրինակ՝* **Մի ժամի չափ** *բոլորին մի առ մի քննեց (Մ. Սանթրոսյան, Հայ մեծ լուսավորիչ, մանկավարժ Ս. Աբովյանը)։*

Չափ-ը *դրվում է նաև անորոշ դերբայի կամ գործողության հատկանիշի իմաստ ունեցող բառերի վրա և ցույց է տալիս տվյալ գործողության կամ հատկանիշի չափը։ Օրինակ՝ Բոկոտն, գլխաբաց, կեղտոտ երեխաները ճանճերի պես իրար խառնված՝ վազվզում էին փողոցներում ականջ խլացնելու չափ ճիչ ու ծղրտոցով (ՆԴ, Հոպոպ)։ Մանուշը ինքնամոռացության մեջ չիմացավ, թե ինչպես բռնեց Արուսի ձեռքն ու ցավացնելու չափ հուպ տվեց (Սխ, Հողը, 1)։*

Գործողության չափի հատկանիշ ցույց տալու դեպքում չափ կապը կարող է դրվել նաև իր այս կամ այն հատկանիշով բնորոշ բառի վրա։ Օրինակ՝ ես քեզ սիրում եմ ամենաքաղցր շաքարի չափ (ՀԹ, Սագարած աղջիկը)։ Ներունին ու ազին աշխարհի չափ կուրախանան (Սխ, Հողը, 1)։

§ 713. **Ավելի (ավել), ավելի քան** *կապերը ցույց են տալիս գործողության չափի կամ եղող առարկաների քանակի շատ, առավել լինելը կապվող բառով ցույց տրվող առարկաների քանակի համեմատությամբ։ Այս զորական մտահոգություններից ավելի Ատոմին մտատանջում էին ներքին հոգեկան տարակուսանքները (ԴԴ, Վարդանանք, 2)։ Կոլտնտեսությունները օրական հավաքում և շարում են ավելի քան 15 հազար թելամետր ծխախոտ (լրագիր)։*

§ 714. Այժմ՝ մինչև կապի մասին։ Այս կապն ունի տարբեր կիրառություններ, որոնցից կարևորը երեքն են. դրանցից բերենք մեկական օրինակ.

1. Նա տնից ոտքով վազեց մինչև հեռավոր այգին:
2. Նա մեզ սպասեց մինչև ժամը յոթը:
3. Աշոտը օրական կատարում է մինչև 3 նորմա:

Առաջին օրինակում կապի և կապվող բառի կապակցության մեջ կա տեղի որոշ իմաստ, երկրորդ օրինակում համապատասխան կապակցության մեջ առկա է ժամանակի իմաստ, երրորդ օրինակում մեզ հետաքրքրող կապակցությունը սոսկ չափ է ցույց տալիս:

Մի փոքր ավելի մոտիկից քննենք կապի իմաստն առաջին երկու օրինակներում: Դրանցում տեղի ու ժամանակի իմաստները յուրահատուկ դրսևորում ունեն. փաստորեն արտահայտվում են կապվող բառերի միջոցով: Պատահական չէ, որ այդ նախադասությունների մեջ ընդգծված կապակցություններին չի կարելի տալ որտե՞ղ (կամ ո՞ւր), ե՞րբ հարցերը, այլ ավելի ճիշտ պետք է հարցընել որքա՞ն (տարածություն վազեց, ժամանակ սպասեց): «Տնից մինչև ո՞ւր» և «մինչև ժամը քանի՞սը» հարցերը չեն վերաբերի կապին կամ կապի ու կապվող բառի կապակցությանը, այլ միայն՝ կապվող բառին: Քննարկվող առաջին ու երկրորդ օրինակներում ժամանակի ու տարածության իմաստները յուրահատուկ կերպով զուգակցված են չափի իմաստի հետ: Կապի արտահայտած չափի իմաստը մի դեպքում դրսևորվում է տեղի նկատմամբ, մյուս դեպքում՝ ժամանակի նկատմամբ՝ պայմանավորված կապվող բառի իմաստով:

Օրինակ՝ Պամիրից սկիզբ առնող լեռնաշղթաներից ամենահյուսիսայինը՝ Տյան-Շանը, ձգվում է մինչև Մոնղոլիա (ԿԱ, Ասիայի երկրներով): Ջուրը հասավ մինչև ձիերի թամբը (ՍՋ, Պապ թագավոր): Այսպես թափառելով ժամանակն անցկացրինք մինչև դիշերվա ժամը տասը (ԳՍ, Թեհրան):

Երրորդ տիպի օրինակներում բուն չափի իմաստ է արտահայտվում առանց ժամանակային ու տարածական իմաստի: Համմտ. Յուրաքանչյուր դասարանում կա մինչև քառասուն աշակերտ: Մեները բաժակը խմեց մինչև վերջ (ԳՍ, Թեհրան, 2): Յուրաքանչյուր «աշխարհ» կամ նահանգ բաղկացած էր 8-ից մինչև 16 գավառներից (ՀԺՊ, 1):

ԸՆԴԴԻՄՈՒԹՅԱՆ ԿԱՊԵՐ

§ 715. Ընդդիմության հարաբերություն են արտահայտում դեմ, ընդդեմ կապերը։ Սրանք նախապես հիմնականում տարածական իմաստ են արտահայտել։ Այժմ էլ դեմ կապը երկրորդաբար արտահայտում է անցյալում իր համար բնորոշ այդ հարաբերությունը։ Օրինակ՝ Ինքը հայ գյուղ, դեմն՝ Արագած (ՀՇ)։ Անցանք Խաչ-Փողանը... և մեր դեմ կանգնեց բերդն ու քաղաքի դուռը (ԳՄ, Մանկություն և պատանեկություն)։

Տարածական հարաբերության իմաստն այլևս այնքան էլ սովորական չէ ընդդեմ կապի համար։

Այս երկու կապերի ամենաբնորոշ իմաստն արդի հայերենում, ինչպես ասվեց, ընդդիմության հարաբերության իմաստն է։ Օրինակ՝ Հայ ժողովուրդը... կոտրել է Դարեհ Վշտասպյանի զոռոզությունը, նա ճակատել է հռոմեական լեգեոնների դեմ, արաբական մոլեռանդ հորդաների դեմ (Իս., Մեր իդեալներն անսասան են)։ Հայկական բանակը փառավոր հաղթանակ տարավ Շապուհի զորքերի դեմ (ՀԺՊ, 1)։ Բանվորական քաջամարտ ոգին առյուծ շարքերով կգնա ընդդեմ բռնակալների (Հ. Հակ.)։

§ 716. Դեմ կապը, ժամանակ ցույց տվող մի քանի բառերի հետ գործածվելով, արտահայտում է տվյալ ժամանակին մոտ լինելու իմաստ։ Օրինակ՝ Երեկոյան դեմ որոտները դադարեցին (ՎԱ, Հայրենի թուփը)։ Առավոտյան դեմ հալածողները եւս դարձան (Մուր., Գևորգ Մարզպետունի)։

Դեմ կապը երբեմն ցույց է տալիս ժամանակի հարաբերությունը ավելի կոնկրետ՝ ժամանակի կամ գործողության սպասելի լինելը, հաջորդելը մի այլ ժամանակի։ Օրինակ՝ Մեր դեմը ձմեռ, մեր դեմը արուն Ու ձմռան միջից ժպտացող գարուն (ԵՉ)։ Այս իմաստով դեմ բառը մոտ է առջև կապի համապատասխան ժամանակային հարաբերության իմաստին։ Համմտ. մեր առջև ձմեռ է։

ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ԿԱՊԵՐ

§ 717. Միասնության հարաբերություն արտահայտող կապերն են՝ **հետ, հանդերձ**։

Հետ կապն արտահայտում է տարբեր առարկաների միասին, միատեղ լինելու կամ միասին, միատեղ գործելու հարաբերության իմաստ։ Միասնության հարաբերությունը դրսևորվում է մեծ մասամբ տեղի ու ժամանակի ընդհանրության հիմքի վրա։ Ինչպես՝ բայլել մեկի հետ, աշխատել ընկերոջ հետ, ապրել բարեկամի հետ և այլն։ Սակավ դեպքերում հնարավոր է, որ միասնության հարաբերության հիմքում ընկած լինի միայն ժամանակի ընդհանրությունը։ Օրինակ՝ Սիրիայի վրա գաղութարարների ճնշման ուժեղանալու հետ միաժամանակ, պատերազմ է մղվում Օսմանի դեմ (լրագիր)։ Նման դեպքերում հետ բառի հետ կարող է գործածվել միաժամանակ բառը, բայց ոչ պարտադիր կերպով, ինչպես այլ դեպքերում նույն կապի հետ միասին բառն է գործածվում նույնպես ոչ պարտադիր կերպով։

Հետ կապը, որպես միասնության հարաբերություն արտահայտող կապ, իմաստային տարբեր երանգներով է գործածվում։

Այս հարաբերության ամենաբնորոշ դրսևորումն այն է, որ նախադասության ենթակայի (կամ այլ անդամի) հետ միասնության մեջ մտնող անդամը (որը ձևավորվում է հետ կապով) որոշ չափով կատարում է ենթակայի (կամ այլ անդամի) կատարած գործողությունը, թեև ստորադաս անդամ է։ Օրինակ՝ Ինքը Կոլոսովի հետ միևնույն հիվանդանոցումն է (Սիր., Հայր և որդի)։ Ասատուրի հետ միասին նա ձին տանում էր գոմը (ՆՋ, Հացավան)։ Իմ ապագա կյանքը պատկերացնում եմ այսպես. ունենալ սիրող մի կին, որը համաձայնի ինձ հետ միասին որդեգրել ու խնամել Միշային (ն. տ.)։

Հետ կապով կարող է ցույց տրվել այնպիսի միասնություն, որ մի առարկա, առարկաների մի խումբ կամ նրանց գործողությունը հանգում, վերաբերում է մյուսին, մյուսներին։ Օրինակ՝ Փոքրի հետ փոքր է նա, մեծի հետ՝ մեծ (ՆՋ, Արմենուհի)։

Ինչպես նշվեց վերը, միասնության հարաբերություն արտահայտող մյուս կապը հանդեր-ն է, որն իբրև միասնության կապ իմաստային բազմազանություն չունի։ Այս կապը նույնիսկ որոշ չափով գրքայնության, հնաբանության կնիք է կրում։ Օրինակ՝ Կյորեսի հարբած ուխտավորները ծաղրով ու ահագին գոռում գոչյունով կանաչ եկեղեցում ուխտից քշում էին Կիզակով Իսակին հանդեր ընտանյոք (ԱԲ, Եղբայրության ընկուզենիները)։

Դու ևս, արքա, քո ժողովրդով հանդերձ կմերժեք և կվանեք չարաբաստիկ հրամանը (ԴԴ, Վարդանանք)։

ԿԱՊԵՐԻ ՀՈԼՈՎԱԽՈՒԹՅՈՒՆԸ

§ 718. Կապերը կարող են դրվել գոյականների, դերանունների (ոչ բոլոր), գոյականաբար գործածվող ու հոլովվող այլ բառերի և մի քանի մակբայների վրա։

Առանձնապես բնորոշ է կապերի գործածությունը գոյականների հետ։ Եվ դա պատահական չէ. կապերն իրենց շարահյուսական դերով, ինչպես ասվել է վերը, զգալիորեն նման են հոլովներին, ուստի և դրվում են այնպիսի բառերի վրա, որոնց հարաբերությունը անհրաժեշտ է արտահայտել։ Իսկ այդպիսիք ամենից առաջ գոյականներն են, որոնք առարկա են ցույց տալիս։ Օրինակ՝ Մենք առանց Ֆարաեզի կմոլորվենք (ՎԱ, Սևանի ափին)։ Մարդու նկատմամբ մա՛րդ եղեք, մարդի՛կ (ՊՄ)։ Ձեր նախանձի ժայռի մեջ է Մհերի պես իմ ոգին (ՀՇ)։ Աչքերիս դեմ նորից զրկությունների ծով է, դոների մոտ ու միջանցքներում՝ նորից ոտքի մրնացած բազմություններ (ՍԿ, Քարավանները դեռ քայլում են)։

Վերոհիշյալ պատճառով կապերը կարող են դրվել նաև դերանունների, մասնավորապես առարկա ցույց տվող և հոլովվող դերանունների վրա։ Օրինակ՝ Ովքե՞ր են Ձարդարյանները նրա համար (Շիրվ., Քառս)։ Խոսում եմ ես ո՞ւ մասին քեզ հետ (ՊՄ, Մարդը ափի մեջ)։ Գիտեք, նա էլ ձեզ նման մի ծաղիկ էր (Ար., Արևը)։ Հանդիպումը թողել էր իրեն վրա անմոռանալի տպավորություն (ՍԿ, Քարավանները դեռ քայլում են)։

Իսկ այն դերանունները, որոնք չեն հոլովվում, սովորաբար չեն գործածվում որպես կապվող բառ. ինչպես, օրինակ՝ ամեն ոք, յուրաքանչյուր ոք, ոչինչ, ինչ, ինչի և այլն։ Միայն այս, այդ, այն դերանունները կարող են գործածվել սակավաթիվ կապերի հետ. ինչպես՝ այս (այդ, այն) մասին։

Կապերը դրվում են նաև գոյականաբար գործածվող և հոլովվող ածականների ու թվականների վրա։ Օրինակ՝ Նա լավի հետ լավ է վարվում, վատի հետ՝ վատ։ Փոքրի մասին ասում են, որ շատ խելոք է։ Փոքրն առանց մեծի չի մնում տանը։ Նա յոթանասունի մոտ, բայց շատ առույգ մի ծերունի էր (ԴԴ, Վարդանանք, 1)։ Հիսունի չափ գնդակահարեցին (ԴԴ, Խոշտանգվածի ավանդը)։

Որպես կապվող բառեր գործածվում են նաև անորոշ, հարաբակատար, ենթակայական դերբայները։ Օրինակ՝ Օրիորդը առանց մի խոսք ասելու անցավ իր սենյակը (Շիրվ., Քառս)։ Ուղեվորվելուց առաջ անդամալույծը ասաց, թե չի ուզում հանքերում ապրել (Ն. տ.)։ Վիզը ետ թեքելուն պես հարևան դիրքից որոտաց որսկան Օսեփի հրացանը (ՀՔ, Եղջերուն)։ Երեխաները հավաքվեցին երգողի մոտ։ Ուժերիս ներածին չափ օգտակար կլինեմ մերոնց (Սխ, Հողը, 2)։

Կապերը համեմատաբար սակավ դեպքերում կարող են դրվել նաև մի շարք մակբայների վրա։ Օրինակ՝ Բայց ինչո՞ւ մինչև հիմա պահած ես (ՆԴ, Աննա Սարոյան)։ Մինչև այժմ ինչպե՞ս եմ մեծացել (Ն. տ.)։ Չէր համարձակվում առանց նրա թույլտվության մի քայլ անել դեպի ետ (ՎԱ, Սևանի ափին)։ Լավ էր դա թե վատ, մինչև հիմա էլ չէր կարող որոշել (ԲՎ, Լեռների որդին)։

§ 719. Կապերը դրվում են տարբեր հոլովաձևերի վրա։ Այս տեսակետից ամենատարածվածը տրական հոլովն է, որի վրա դրվում է կապերի կեսից ավելին։

Տրականի վրա դրվող կապերն ու կապական բառերն են. մեջ, տակ, շուրջ, ետ, ներս, միջև, դիմաց, մասին, վերաբերյալ, վերաբերմամբ, նկատմամբ, կապակցությամբ, առթիվ, պատճառով, ժամանակ, որոշ, օգտին, պատվին, տեղ, փոխարեն, մոտ, վրա, պես, համար, չափ, առանց, հաճուն, հակառակ, ըստ և այլն։

Օրինակ՝ սենյակի մեջ, սեղանի տակ, ճովաճավորության ներս, շենքերի միջև, այցելության առթիվ, հյուրերի պատվին և այլն։

Քննարկվող կապերից մի քանիսը՝ միասին, կապակցությամբ, առթիվ, պատճառով, ժամանակ և այլն, կարող են դրվել նաև այս, այդ, այն դերանունների, իսկ կապակցությամբ, պատճառով կապական բառերը՝ նաև սույն, նույն դերանունների ուղիղ ձևի վրա։ Օրինակ՝ Այս մասին մտածելիս անգամ մազերս փշաքաղվում են (ՆԴ, Աննա Սարոյան)։ Այդ առթիվ ողջույնի հեռագրեր են ստացվել (լրագիր)։ Սույն պատճառով, նույն կապակցությամբ, այն մասին և այլն։

Առանց կապը երբեմն գործածում են նաև տուղտականի հետ, որպիսի կիրառությունն առհասարակ բնորոշ չէ ժամանակակից հայերենին։ Նախ, խիստ բարբառային է առանց կապի գործածու-

թյունը անորոշ դերբայի ուղղականի հետ, ինչպես՝ Առանց կարդալ (փոխանակ՝ առանց կարդալու) պատմեց դասը։ Ելույթ ունեցավ առանց գրել։

Գոյականների հայցական-ուղղականը երբեմն գործածվում է որպես առանց-ի կապվող բառ, թեև համեմատաբար այդ քիչ բնորոշ և ընդունելի է այժմ, քան տրականով կապվող բառի գործածությունը։ Օրինակ՝ Քո գերեզմանը չի կորչի խոով, Առանց շիրմաքար չի մնա երկրում (ՀՇ)։ Մի փոքր ավելի սովորական է առանց կապի գործածությունը այս, այդ, այն հայցական-ուղղականի հետ, ինչպես՝ առանց այս, առանց այդ, առանց այն, բայց նախընտրելի է առանց-ի հետ գործածել սա, դա, նա դերանունների համապատասխան հոլովաձևը։

§ 720. Ուղղականի վրա են դրվում հետևյալ կապերը՝ ի, առ, ման, դեպի, մինչև (մինչ), անց, ի վար, չհաշված, ավելի ման։ Օրինակ՝ Առաջնորդեց յուր պայծառափայլ հյուրին մինչև դուռ (Ր, Անմեղ վաճառք)։ Փողերը հազրեցի՞ր,— դարձավ նա դեպի հիվանդը (Ն. տ.)։ Քսան րոպե անց պատվելին երևաց դռների մեջ (ԳՄ, Մանկություն և պատանեկություն)։ Նայեցին գետափն ի վար (Սխ, Հողը, 1)։

Մանոթ.— Ինչպես ասվել է վերը, ի կապը հաճախ միանում է իր կապվող բառին և վերջինիս հետ միասին կազմում բաղադրյալ կապ, ինչպես՝ ի վեր, ի վար, ի փառս և այլն։ Այսպիսի բաղադրյալ կապերի հետ գործածվող կապվող բառը չի կարելի համարել, և մենք չենք համարում հատկապես ի նախդրի կապվող բառ, այլ բաղադրյալ կապի կապվող բառ։ Օրինակ՝ վաղուց ի վեր, գետն ի վար, ի փառս հայրենիքի և այլն։ Ուստի այդպիսի կապվող բառերի հոլովառությունը չենք քննում ի կապի առնչությամբ։

§ 721. Բացառական հոլովի վրա են դրվում հետևյալ կապերը՝ հետու, վեր, վար. դենը, բացի, զատ, սկսած, հետո և այլն։ Օրինակ՝ Միքայելը նստած էր նռանից հետու (Շիրվ., Քառս)։ Սարից դենը, դեպի ներքև, ընկած է անմարդաբնակ մի երկիր (ԱՔ, Մրոց)։ Ժողովուրդն անհամբեր սպասում էր գյուղից վերև (ՀՔ, Քաջերի կյանքից)։ Բացի վերջին լուրերից, նա ուրիշ բան չէր լսում (ԳՍ, Թեհրան 2)։

Բացի կապի հետ երբեմն հանդիպում են ուղղական հոլովով

կիրառություններ, որոնք անտեսվոր են ժամանակակից հայերենում։ Այսպես՝ Նրան շատ անհանգստություն է պատճառում, բացի իր ամուսնու ճակատագիրը... նաև իր սկեսրոջ առողջական դրությունը (ԴԴ, Վարդանանք, 1)։ Եվ ուրիշ էլ ձայն չկար, բացի այն խորհրդավոր ձայներր, որ գալիս էին հուռութի քարանձավներից (ԱԲ, Եղբայրության ընկուզենիները)։

Բացի կապի հետ համեմատաբար ավելի են տարածված այս, այդ, այն դերանունների կիրառությունները։ Օրինակ՝ Բացի այդ, ես քեզ կասեմ նաև այն (ԴԴ, Վարդանանք, 1)։

Հետո կապը սովորաբար դրվում է բացառական հոլովի վրա։ Օրինակ՝ Կես ժամից հետո ես և Խոսրով խավարն այստեղ կլինենք (ԳՍ, Թեհրան, 2)։ Մի քանի rոպեից հետո գնացքը կամաց-կամաց դանդաղեցնելով իր ընթացքը անզգալի կերպով կանգ առավ (ՆԴ, Մահը)։

Հետո կապը դրվում է նաև հայցական հոլովաձևի վրա. Հինդ rոպե հետո անցա պարտականություններիս կատարմանը (ԳՄ, Մանկություն և պատանեկություն)։ Մի շաբաթ հետո լույս տեսավ նրա երրորդ համարը (ԳՍ, Թեհրան, 2)։

Նուրբ տարբերություն կա միևնույն իմաստը այդ տարբեր միջոցներով արտահայտելու միջև։ Բացառական հոլովով դրված կապվող բառով ցույց տրվող ժամանակի կամ տարածական միավորը դիտվում է իբրև ժամանակային կամ տարածական մի ըսկզբնակետ, որից սկսվում է գործողությունը կամ որից այն կողմ լինելու է մի բան։ Օրինակ՝ Երեք օրից հետո սկսվում է բերքահավաքը։ Ութ կիլոմետրից հետո սկսվում են խիտ անտառները։

Իսկ ուղղականի և հետո կապի կապակցությամբ ցույց տրված ժամանակը կամ տարածությունը ոչ թե դիտվում է որպես սկզբնակետ գործողության կամ եղելության համար, այլ ավելի շուտ այն առնվում է որպես մինչ հետագա գործողությունը կամ առարկան ընկած միջանկյալ ժամանակ կամ տարածություն։ Օրինակ՝ Երեք օր հետո Հունվարի 1-ն է։ Երկու շեմք հետո մեր տունն է։

§ 722. Գործիական հոլովով կապվող բառի վրա դրվում է հիմնականում հանգերձ կապը։ Օրինակ՝ Արդ, եթե դու ևս, արքա, քո ժողովրդով հանգերձ կմերժեք և կվանեք չարաննդ հրամանը, ապա ամենափույթ պատասխանով տեղյակ կացուցիր մեզ ձեր վճիռն ու անելիքը (ԴԴ, Վարդանանք, 1)։

Գործիական հոլովի վրա է դրվում նաև սակավ գործածական մեկ կապական բառը։ Օրինակ՝ Համբավը տարածվեց ամբողջ աշխարհով մեկ (ԿԱ, Ասիայի երկրները)։

Ինչպես որոշակիորեն երևում է վերևի շարադրանքից, կապերը մեծ մասամբ դրվում են որևէ մեկ կամ հիմնականում մեկ հոլովի վրա։

§ 723. Մի քանի կապեր հավասարապես կարող են դրվել տարբեր հոլովների վրա։ Դրանք են՝ ի վեր, առաջ, իբրև, որպես, ինչպես։

Ի վեր կապը կարող է դրվել բացառական կամ ուղղական հոլովների վրա։ Ըստ որում, այդ կիրառությունները որոշակիորեն տարբերակված են ոչ միայն ձևով, այլև իմաստով։ Ինչպես ասվել է, ի վեր կապը երբ ցույց է տալիս ժամանակի հարաբերություն, դրվում է բացառականի վրա, իսկ երբ ցույց է տալիս տեղի հարաբերություն, դրվում է ուղղականի վրա։

Առաջ կապը կարող է դրվել տրական, բացառական հոլովների վրա. ինչպես՝ դռան առաջ, դռանից առաջ։ Տրականի վրա դրվելիս առաջ կապը հիմնականում տարածական հարաբերություն է արտահայտում, երբեմն էլ՝ վերաբերություն։ Օրինակ՝ Դրսում դարբասի առաջ մի ավտոմեքենա կանգնեց (ԳՍ, Թեհրան, 2)։ Ջոքեց նրա առաջ Մամիկոնյան տիկինը (ԴԴ, Վարդանանք, 2)։ Կյանք էին վերադարձնում կամ վերջին պարտքն էին կատարում զինվորյալների առաջ (ԴԴ, Վարդանանք, 2)։

Ժամանակի իմաստ արտահայտելու դեպքում առաջ կապը դրվում է բացառական կամ ուղղական հոլովների վրա։ Նայած թե սրանցից ո՛ր հոլովի վրա է դրվում, ըստ այնմ էլ ունենում է համապատասխան իմաստ։ Այս կարգի փաստերը, ի միջի այլոց, ցույց են տալիս, որ կապի և կապվող բառի դրսևորած շարահյուսական ֆունկցիայի ու նրանց քերականական իմաստի հարցում կարևոր դեր է կատարում ոչ միայն կապը, այլև կապվող բառի հոլովական իմաստը։ Այս երկուսի միասնությամբ է դրսևորվում համապատասխան իմաստը, ֆունկցիան։

Առաջ կապը իր հոլովառությամբ հիմնականում նման է ետո կապին։ Առաջ կապի՝ բացառականով դրված կապվող բառը ցույց է տալիս այն ժամանակակիցը, ժամանակը, որից այն կողմ կամ մինչև որը կատարվել է, եղել է մի բան։ Օրինակ՝ Մեր թվա-

կանությունից առաջ 326 թվականին հասան մինչև Ինդոս գետի ափերը (ԿԱ, Ասիայի երկրներով)։ Տուն գնալուց առաջ տեղկոմը հայտարարեց, որ երեկոյան ժամը 6-ին բոլորը հավաքվեն (ԱԲ, Իվան Բեյը)։ Մարտից առաջ նվագում, երգում էին գուսանները (ԴԴ, Վարդանանք, 2)։

Համապատասխան իմաստը, իհարկե, որոշ յուրահատկությամբ, հաճախ արտահայտվում է առաջ կապի և ուղղականով կապվող բառի միջոցով։ Օրինակ՝ Մի or առաջ հանդիպեց Սամվելը (Ր, Սամվել)։ Մի ֆանի or առաջ հայտնվեց, որ Տիզբոն գրնալն ավելորդ էր (ԴԴ, Վարդանանք, 1)։

Այս դեպքում կապվող բառը (or), ինչպես երևում է օրինակներից, իր հերթին ունենում է քանակ ցույց տվող որոշիչ (մի, մի ֆանի)։ Ունենք նաև՝ or առաջ, ժամ առաջ, վայրկյան առաջ, ուր or, ժամ, վայրկյան բառերը որոշիչներ չունեն, սակայն որոնք ձեռք են բերել նոր իմաստ և ժամանակ արտահայտող նկարագրական մակբայներ են։ Օրինակ՝ Յանկանում է or առաջ ճանապարհվել տուն (ԴԴ, Վարդանանք, 1)։ Կարծես or առաջ տեսնում էր այդ երկրի կործանումը և ճգնում էր ժամ առաջ կանխել վտանգը (ԴԴ, Վարդանանք, 1)։ Վճռել էր or առաջ ազատվել նրանից (ԴԴ, Վարդանանք)։

Ժամանակի անուններն առաջ բառի հետ կարող են դրվել առանց քանակի իմաստ ունեցող բառերի. բայց այդ դեպքում նրբանք գործածվում են հոգնակի թվով։ Օրինակ՝ Սպասի՛ր, դու ինձ մոտ եղել ես տարիներ առաջ (ԴԴ, Վարդանանք, 1)։

Բոլորովին այլ յուրահատկություն ունեն իբրև, որպես կապերը այս տեսակետից։ Այս կապերը հիմնականում գործածվում են մասնական բացահայտիչի հետ, դրվում են վերջինիս վրա, իսկ մասնական բացահայտիչի հոլովը պայմանավորված է բացահայտյալի հոլովով։ Այնպես որ այս դեպքում չի կարելի խոսել կապվող բառերի կայուն հոլովաձև ունենալու մասին։ Այսպես՝ Արամը, որպես (իբրև) ավագ..., Արամի, որպես (իբրև) ավագի..., Արամին, որպես (իբրև) ավագի..., Արամից, որպես (իբրև) ավագից... և այլն։

ՇԱՂԿԱՊ

ՇԱՂԿԱՊԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ

§ 724. Շաղկապը կապի հետ միասին կազմում է հարաբերության իմաստ արտահայտող խոսքի մասերի խումբ։ Շաղկապի խոսքի մասային առանձնահատկությունը որոշելու համար անհրաժեշտ է պարզել նրա արտահայտած հարաբերության յուրահատկությունն ի տարբերություն կապի։ Շաղկապներն արտահայտում են բառերի հարաբերություններ և նախադասությունների հարաբերություններ։ Կապերն արտահայտում են բառերի հարաբերություններ։ Բառերի հարաբերություն արտահայտելու տեսակետից կապի և շաղկապի միջև կա այն տարբերությունը, որ եթե կապը դրվում է անվան (կամ անվանական գործածություն ունեցող բառի) վրա և ձևավորում է նրա շարահյուսական պաշտոնը, ապա շաղկապով կապվող բառերի շարահյուսական պաշտոնի մեջ շաղկապը որևէ դեր չունի, շաղկապը չէ, որ նպաստում, ծառայում է նրանց պաշտոնի ձևավորմանը։ Այսպես՝ Նա երգում է սոխակի պես։ Նա սիրում է վարդ ու մեխակ։ Պես կապով (և սոխակի կապվող բառով) ձևավորվում է ձևի պարագա, իսկ ու շաղկապով անդամ չի ձևավորվում, այն շաղկապում է նախադասության ձևավորված անդամներ՝ ուղիղ խնդիրներ։

Ուրեմն այս դեպքում կապը պաշտոն ձևավորող արժեք ունի, շաղկապը՝ ոչ։ Շաղկապի համար դա այդպես է նաև այն դեպքում, երբ այն շաղկապում է համադաս նախադասություններ։ Այլ կերպ՝ հիշյալ յուրահատկությունը վերաբերում է համադասական շաղկապներին։

Այլ է ստորադասական շաղկապների յուրահատկությունն այդ տեսակետից։ Ստորադաս նախադասության բնույթի, վերադաս նա-

խադասության նկատմամբ նրա ունեցած հարաբերության հարցում շաղկապը որոշակի դեր ունի։

Դա կարելի է տեսնել հետևյալ օրինակներում՝

Մենք կկատարենք այդ աշխատանքը,
- *եթե դու գաս։*
- *միայն թե դու գաս։*
- *որպեսզի դու գաս։*
- *հենց որ դու գաս։*
- *մինչև որ դու գաս։*

Նրանք վաղը կմեկնեն,
- *որովհետև մենք հրավիրել ենք։*
- *քանի որ մենք հրավիրել ենք։*
- *թեև մենք հրավիրել ենք։*

Ինչպես նախադասության անդամի ձևավորում ասելով հասկանում ենք բառին բերականական այս կամ այն միջոցով ձևավորում տալը՝ համապատասխան քերականական հարաբերությունն արտահայտելու համար, այնպես էլ ստորադաս նախադասության ձևավորման մեջ պետք է հաշվի առնել նաև քերականական այն միջոցները, որոնցով արտահայտվում է այս կամ այն հարաբերությունը գերադաս նախադասության նկատմամբ։ Շաղկապն, ուրեմն, ոչ թե ըստ ամենայնի ձևավորված ստորադաս նախադասությունը գերադասին սոսկ շաղկապելու դեր է կատարում, այլ նրպաստում է ստորադաս նախադասության ձևավորմանը և հենց դրանով էլ որոշում և արտահայտում է ստորադաս նախադասության հարաբերությունը գերադասի նկատմամբ ու այդ հարաբերությամբ էլ արտահայտվում է նրա կապը. ավելի ճիշտ՝ այդ կապը հենց այդ հարաբերությունն է։

Այսպես՝ վերը բերված օրինակներում ստորադասական շաղկապները (եթե, միայն թե, որպեսզի, հենց որ, մինչև որ, որովհետև, քանի որ, եթե, թեև) *պետք է դիտել որպես ստորադաս նախադասությունների կազմի մեջ մտնող բաղադրիչներ, առանց որոնց այդ ստորադաս նախադասությունները չէին կարող ճանաչվել ու գիտակցվել որպես այդպիսին։ Ստորադաս նախադասությունը որպես այդպիսին է գիտակցվում գերադասի հետ ունեցած իր հարաբերությամբ, իսկ սա էլ նշանակում է, որ այդ հարաբերության քերականական միջոցը, տվյալ դեպքում շաղկապը պետք է դիտել որպես ստորադաս նախադասության բաղադրիչ*

տարր։ Իրենց այս դերով ստորադասական շաղկապները նման են կապերին, ինչպես ասվեց վերը։ Իսկ սա նշանակում է, որ կապերը՝ վերը նշված յուրահատկությամբ հակադրվում են ոչ թե բոլոր շաղկապներին, այլ նրանց միայն մի մասին (համադասականներին)։ Շաղկապի համար հատկանշական է այն, որ նա կապում է համադաս բառեր ու նախադասություններ և ստորադաս նախադասությունը գերադասին։

§ 725. Շաղկապը իմաստային, ճանաչողական տեսակետից ունի ուշագրավ յուրահատկություն։ Գետ, ծառ, խայտել և նման բառերի իմաստը արտահայտվում է հանձին նրանց ճանաչողական արժեքի. այդ բառերով արտահայտում, անվանում ենք օբյեկտիվ իրականության մեջ եղած ու իրարից որոշակիորեն տարբեր առարկաներ, գործողություններ, և այդ բառերից յուրաքանչյուրի ու մեզանից դուրս գոյություն ունեցող համապատասխան առարկայի գործողության միջև կա որոշակի համապատասխանություն։ Կարելի էր կարծել, թե շաղկապներն էլ հանդիսանում են այդ հարաբերությունների համապատասխան արտահայտություններ, ինչպիսին որ տեսանք վերը բերված բառերի ճանաչողական արժեքի կապակցությամբ։ Սակայն այդպես չէ։ Թեև շաղկապները հարաբերության իմաստ ունեն, սակայն նրանք չեն հանդիսանում միայն շաղկապներին հատուկ հարաբերությունների արտահայտություններ. դրանց միջև որպես օրինաչափություն չկա այնպիսի համապատասխանություն, ինչպիսին հատուկ է վերոհիշյալ և նման բառերին։

Ասվածը պարզենք մի քանի փաստերի վերլուծումով։

Աշոտն ու ընկերները վերադարձան։

Աշոտն ընկերների հետ վերադարձավ։

Աշոտն ընկերներով վերադարձավ։

Այս երեք նախադասություններում մեզ հետաքրքրող հարաբերություններն արտահայտված են քերականական տարբեր միջոցներով և ունեն տարբեր արժեք։ Առաջին օրինակում ունենք բազմակի ենթականեր, որոնք միացած են համադասական ու շաղկապով։ Երկրորդ օրինակում այլևս համադասություն չկա, ունենք հետ կապը, որը, ինչպես և մյուս բոլոր կապերը, ստորադասական հարաբերություն է արտահայտում (ընկերների և վերադառնալու գործողության միջև), որի հետևանքով էլ այլևս Աշոտ և

ընկերներ բառերը համազոր չեն։ Երրորդ օրինակում չունենք ո՛չ շաղկապ, ո՛չ կապ, և ստորադասական, լրացական հարաբերությունն արտահայտված է միայն հոլովով (գործիական), ըստ որում, թե՛ վերջին և թե՛ նախավերջին օրինակներում Աշոտ ու ընկերներ բառերի միջև այլևս քերականական կապ չկա։

Վերադառնալու գործողության փաստական կատարման տեսակետից այս երեք նախադասությունների արտահայտածի միջև տարբերություն չկա. չնայած նրանց վերոհիշյալ քերականական տարբերություններին, բոլոր դեպքերում էլ նշվում, հաստատվում է Աշոտի, ընկերների վերադառնալու գործողությունը. դրանց դենոտատը նույնն է։ Իմաստային տեսակետից դրանց միջև կա ոճական նուրբ տարբերություն, որ ավելի շուտ վերաբերմունքային արժեք ունի, քան թե փաստական, իրավիճակային։

Նույնպիսի համեմատություն կատարենք ստորադասական շաղկապների վերաբերմամբ։

Աշոտը գնաց, որ ջուր բերի։

Աշոտը գնաց ջուր բերելու համար։

Աշխատանքը շուտ վերջացրին, քանի որ հորդ անձրև էր տեղում։

Աշխատանքը շուտ վերջացրին հորդ անձրև տեղալու պատճառով։

Այս զուգահեռ օրինակներում փաստական տեսակետից միևնույն երևույթների միջև միևնույն հարաբերությունն է արտահայտված լեզվական տարբեր միջոցներով. տարբեր է նախադասությունների կառուցվածքը, և ըստ այնմ տարբեր խոսքի մասեր են գործածված (շաղկապ և կապ)։ Ուրեմն կապի կամ շաղկապի գործածությունը տվյալ դեպքում չի բխում ներկայացվող երևույթների փաստական, իրավիճակային տարբերությունից, այլ պայմանավորված է միևնույն երևույթը լեզվական տարբեր կառույցներով ներկայացնելու պահանջով։

Նույն համեմատությունը կատարենք շարահյուսական տարբեր բնույթի հարաբերություններ արտահայտող և տարբեր իմաստ ունեցող շաղկապների վերաբերմամբ։

Աշոտը հասավ լեռան գագաթը, երբ Արամը դեռ ստորոտումն էր։

Աշոտը հասավ լեռան գագաթը, բայց Արամը դեռ ստորոտումն էր։

Աշոտը հասավ լեռան գագաթը, և Արամը դեռ ստորոտումն էր։

Այս նախադասություններում ներկայացված է միևնույն իրավիճակը, միևնույն փաստը, իրողությունը՝ Աշոտի հասնելը լեռան գագաթը և Արամի՝ ստորոտում գտնվելը։ Սակայն այս միևնույն իրողությունը, իրավիճակը, ինչպես երևում է, ներկայացված է լեզվական տարբեր միջոցներով, շարահյուսական տարբեր հարաբերություններ ունեցող նախադասություններով՝ համադասական, ստորադասական, որոնց մեջ առկա են իմաստային որոշակի տարբերություններ։

Առաջին օրինակում առկա է ժամանակի հարաբերություն, ըստ որում՝ երկրորդ նախադասությունը ստորադասված է առաջինին և լրացնում է նրա միտքը։ Երկրորդ օրինակում երկու բաղադրիչ նախադասությունները ներկայացված են իբրև համազոր և հակադրության մեջ են գտնվում. այստեղ առկա է հակադրական հարաբերություն։ Երրորդ օրինակում հակադրության երանգը խիստ թուլանում է, քանի որ հակադիր վիճակների հարաբերությունն արտահայտվում է ոչ բուն հակադրական, այլ միավորիչ շաղկապով։

Եթե նույն իրավիճակն արտահայտելիս կարելի է գործածել բոլորովին տարբեր հարաբերություն, տարբեր իմաստ արտահայտող շաղկապներ, նշանակում է՝ այդպիսի պարագայում շաղկապը գործածվում է ոչ թե օբյեկտիվորեն գոյություն ունեցող մեկ որևէ որոշակի հարաբերություն արտահայտելու, մի քիչ խիստ ասած, արտացոլելու համար (ինչպես գետ բառով արտահայտվում է այդ անունը կրող առարկան)։

Այս եզրակացության օգտին է խոսում նաև այն փաստը, որ ինչպես տեսանք վերը, միևնույն իրավիճակին հատուկ հարաբերությունը լեզվական տարբեր կազմություններում արտահայտվում են շաղկապով (բարդ նախադասության մեջ) և կապով (պարզ նախադասության մեջ)։ Սա միաժամանակ նշանակում է, որ կապի ու շաղկապի խոսքի մասային տարբերությունը պետք է որոնել ոչ թե նրանց արտահայտած հարաբերությունների օբյեկտիվ բնույթի մեջ, այլ ամենից առաջ երևույթների, հարաբերություններ լեզվական արտահայտության մեջ։

Այս բացատրությունը չի նշանակում, թե շաղկապի իմաստի և նրա ցույց տված հարաբերության օբյեկտիվ բնույթի միջև որևէ

կապ չկա։ Որոշ շաղկապների մեջ այդ կապն ու համապատասխանությունը զգալի է։ Օրինակ՝ Նրան աշխատանքից ազատեցին, որովհետև իրեն չի արդարացնում։ Այս նախադասության մեջ որովհետև շաղկապը ցույց է տալիս պատճառի հարաբերություն, և նախադասության մեջ այդ հարաբերությունը հանդիսանում է համապատասխան իրական հարաբերության արտահայտություն։ Լեզվականի և իրականի նույնպիսի համապատասխանություն կա նաև, օրինակ, նպատակի հարաբերություն արտահայտող որպեսզի շաղկապի մեջ։ Համմտ. Նա անմիջապես մտավ գետը, որպեսզի օգնի ընկերոջը։ Լեզվականորեն ձևակերպված այս նպատակի իմաստը հանդիսանում է իրական գործողության նպատակային հարաբերության արտահայտություն։

Բայց նույնիսկ նման դեպքերում չի կարելի պնդել, թե շաղկապը այնպիսի իրական որոշակի հարաբերություն է ցույց տալիս, որով այն տարբերվում է այլ խոսքի մասերից և ամենից առաջ նրան քերականորեն հարաբերակից կապից։ Վերոհիշյալ նախադասությունների արտահայտած միտքը այլ կառուցվածքի նախադասությամբ արտահայտելու դեպքում պատճառի և նպատակի հարաբերությունները այլևս շաղկապով արտահայտել չի կարելի, այլ՝ կապով, կապական բառով։

Նրան աշխատանքից ազատեցին իրեն չարդարացնելու պատճառով։

Նա անմիջապես մտավ գետը ընկերոջն օգնելու համար։

Այս նախադասություններում արտահայտված են այդ նույն իրողությունները, նույն պատճառի ու նպատակի հարաբերությունները, ինչ որ վերը բերված նախադասություններում։ Բայց այստեղ այդ հարաբերություններն արտահայտված են կապերով։ Ստացվում է, որ օբյեկտիվորեն գոյություն ունեցող միևնույն հարաբերությունը արտահայտված է մի դեպքում շաղկապով, մյուս դեպքում՝ կապով։ Շաղկապն այդ հարաբերությունն արտահայտում է նախադասությունների միջև, իսկ կապը՝ բառերի միջև։ Ուրեմն այստեղ մենք գործ ունենք այդ երկու խոսքի մասերի քերականական տարբերության հետ։

Նրանք, նախ, կարող են արտահայտել բառերի համադասական հարաբերություն՝ իրար կապելով համադաս բառեր. ինչպես՝ Աղքատների և հարուստների, ազնվականների և ռամիկների այս որոշակի հակադրությունը բնորոշ է Դուրյանի պիեսների համար

(ՀՆԳՊ, 2)։ Այստեղ նրա որդիներն ու թոռները սկսում են անչափ շատանալ (ՂԱ)։

Այնուհետև, շաղկապները կարող են ցույց տալ բարդ նախադասության կազմի մեջ մտնող նախադասությունների համադասական և ստորադասական հարաբերություններ՝ շաղկապելով համադաս նախադասություններն իրար հետ, ինչպես և ստորադաս նախադասությունը գերադասի հետ։ Օրինակ՝ Թող այդ երեխան միշտ աչքի առջևը լինի, և գոնե դրա անմեղությունը զարթեցնի նրա խիղճը, տանջի, չարչարի նրան (ՆԴ, Զազունյան)։ Դեմքով նա հազիվ երեսուն տարեկան լիներ, բայց քունքերն արդեն լրիվ սպիտակել էին, իսկ կլորիկ գլխին գրեթե մազ չկար (ՍՆ, Հողը, 1)։ Ես գիտեմ, որ ձեզ անպատճառ հայտնի պետք է լինի, թե ինչ է պատահել էմմային, որովհետև, կրկնում եմ, այն օրից, ինչ դուք հեռացել եք մեր տնից, նա այդպես դառավ (ՆԴ, Զազունյան)։

Վերջապես, շաղկապները կապում են խոսք կազմող միավորներ, մասեր (այն է՝ ամբողջական նախադասություններ, պարբերություններ, հատվածներ)։ Օրինակ՝ Սենյակի պատերը օտարոտի, խաղաղ նայեցին նրան։ Ու թեև կարող էր մնալ անկողնում, շուռումուռ գալ իր համար, բայց համ չառավ։ Հագնվեց, գնաց պարտեզ, լվացվեց աղբյուրի մոտ։

Եվ արդեն պատրաստ էր. մնում էր մի բան ուտելը ու վրա ընկնել մի հիմնավոր աշխատանքի։ Եվ թվում էր, թե իսկապես հիմի մի բան կսկսվի, և ինքը մի բան պիտի անի։

Բայց հանգստի տանը ի՞նչ աշխատանք։ Լուռ էր տունը,— բանվորները դեռ քնած, ոչինչ չէր սկսվում (ԴԴ, Դադար)։

Չպետք է կարծել, թե բոլոր շաղկապները հավասարապես կարող են հանդես գալ այս երեք հիմնական կիրառություններով։ Կան, իհարկե, և՛ այդպիսի շաղկապներ, և՛ այնպիսիները, որոնց կիրառությունը սահմանափակվում է նշված կետերից միայն երկուսով կամ նույնիսկ մեկով։ Այսպիսով, շաղկապի բառական արժեքը, նրա դերը գնահատելիս պետք է հաշվի առնել այն կապակցությունները, որոնց կազմությանը նա մասնակցում է։

Այսպիսով՝ շաղկապ կոչվում են այն սպասարկու բառերը, որոնք վերաբերական տարբեր իմաստներով իրար են կապակցում համադաս բառեր, բարդ նախադասություն կազմող մասեր, ինչպես և ամբողջական նախադասություններ ու խոսքի հատվածներ։

§ 726. Շաղկապները հարաբերակից են տարբեր խոսքի մա-

սերի։ Վերն արդեն խոսվեց շաղկապի և կապի հարաբերակցության մասին։

Նշենք, որ այդ հարաբերակցության հողի վրա որոշ կապեր ձեռք են բերել շաղկապական կիրառություններ, մտել նաև շաղկապների շարքը։ Դրանք են՝ մինչև (մինչ), նախքան, քան, փոխանակ, չնայած։

Ահա այդ բառերի կապական կիրառությունների օրինակներ. Հասանք մինչև գյուղի սահմանը (ՍՋ, Պապ թագավոր)։ Մինչև Հավնունու դղյակ գալը՝ թագավորը եղել էր Բասենի Մանուկ իշխանի մոտ (Ն. տ.)։ Սակայն թագուհին այդ լուրից փոխանակ ուրախանալու, շփոթվեց սաստիկ (Ն. տ.)։ Սրանք գնացին և փոխանակ հանգստանալու իրենք սկսեցին ծեծել ոմանց (ԴԴ, Վարդանանք, 1)։ Չնայած նախազգուշացմանը, միջոցներ չձեռնարկվեցին վտանգի առաջն առնելու համար։ Նախքան մեկնելը ամեն ինչ վերջացրեց։

Այդ նույն բառերի շաղկապական կիրառությունների օրինակներ. Տարակուսանքը ձեզ չի թողնի, մինչև դուք չտեսնեք հաստատ հույս և առհավատչյա (ԴԴ, Վարդանանք, 1)։ Մինչև Բաբիկը վրդովված ման էր գալիս, նա հետևելով նրան հաղորդում էր, որ ետ կենա սուտ վարմունքներից (ԴԴ, Վարդանանք, 1)։ Փոխանակ ինքը գա, ուղարկել է երեխային։ Չնայած եղանակը վատ էր, բոլորը դուրս էին եկել աշխատանքի։

Կապերից շաղկապ առաջանալու երևույթի մեջ նկատելի է հետևյալ օրինաչափությունը։ Նախ, կապերից առաջանում են ստորադասական շաղկապներ, և դա այն պատճառով, որ կապերը ստորադասական հարաբերություն են արտահայտում ու, վերածվելով շաղկապի, պահպանում են իրենց իմաստային այդ հատկանիշը։

Երկրորդ, շաղկապ առաջանում են նախադաս գործածվող կապերից՝ նախադրություններից։ Դրա պատճառն այն է, որ կապերից, ինչպես տեսանք, միայն ստորադասական շաղկապներ կարող են առաջանալ, իսկ վերջիններս էլ դրվում են ստորադաս նախադասության սկզբում։

Երրորդ, տարածական և ժամանակային հարաբերություն ունեցող կապերը շաղկապի վերածվելով՝ պահպանում են իրենց միայն ժամանակային հարաբերության իմաստը։ Այդպիսիք են՝

մինչև, մինչ բառերը։ Դրա պատճառն այն է, որ դրանք, իբրև կապեր, տարածական իմաստ են արտահայտում այն դեպքում, երբ դրվում են տեղ ցույց տվող գոյականների, մակբայների, դերանունների վրա։ Բայի հետ գործածվելիս և այլ դեպքերում նրանք արտահայտում են ժամանակի իմաստ։ Շաղկապի վերածվելիս դեր են կատարում դիմավոր բայի հետ նրանց գործածությունները, ուստի և շաղկապական իմաստի մեջ միայն ժամանակային հարաբերություն է արտահայտվում։

§ 727. Շաղկապներին (ստորադասական) հարաբերակից են նաև հարաբերական դերանունները, որոնք ստորադաս նախադասությունը կապում են գերադասին։ Օրինակ՝ երբեմն լինում են այնպիսի անմիտ բաներ, որոնք խոր իմաստ են ունենում, և որոնց ամեն ոք չի կարող հասկանալ (ՆԴ, Զազունյան)։ Տանտիրոջս ծառան, որը միևնույն ժամանակ ծառայում էր և ինձ, վաղուց արդեն քնած էր անշուշտ (Ն. տ.)։ Բանակը դիտելուց հետո նա դիմեց դեպի այն կողմը, որտեղ կատարվում էր բարբարոսական գործողությունը (Ր, Սամվել)։ Որքան մտածում էր նա, ոչընչով չէր կարողանում արդարացնել Հորը (Ն. տ.)։

Իրենց ֆունկցիայի՝ նախադասություններ կապակցելու դերի տեսակետից այս օրինակներում ընդգծված բառերը նման են շաղկապներին, բայց շաղկապներ չեն և վերջիններիցս տարբերվում են հատկապես իմաստային հատկանիշով։ Մինչդեռ շաղկապները զուրկ են նյութական իմաստից և ունեն բերականական իմաստ, իսկ շաղկապի դերով հանդես եկող մյուս բառերն ունեն նյութական իմաստ։ Դրանով պայմանավորված՝ շաղկապները նախադասության անդամի դեր չեն կատարում, իսկ նյութական իմաստ ունեցող այդ բառերը շաղկապական ֆունկցիայով հանդես գալու դեպքում էլ այդպիսի դեր են կատարում։ Այսպես՝ վերևի օրինակներում գործածված հարաբերական դերանուններից առաջին երկուսը ենթակայի պաշտոն ունեն, երրորդը՝ տեղի պարագայի, վերջինը՝ չափի պարագայի։

§ 728. Շաղկապներին հարաբերակից են սակավաթիվ մակբայներ ու եղանակավորող բառեր, ինչպես՝ ապա, էլ, միայն։ Այս առանձին բառական միավորները իմաստային ու կիրառական յուրահատուկ զարգացման հետևանքով հանգել են բերականական համանունության՝ ստանալով տարբեր խոսքի մասային արժեքներ։

ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ

§ 729. Շաղկապներն ըստ կազմության բաժանվում են հետևյալ խմբերի՝ 1. պարզ շաղկապներ, 2. քերականական ձևերից առաջացած շաղկապներ, 3. ածանցավոր շաղկապներ, 4. բարդ շաղկապներ։

ՊԱՐԶ ՇԱՂԿԱՊՆԵՐ

§ 730. Պարզ կոչվում են այն շաղկապները, որոնք կազմված են մեկ արմատից կամ, համենայն դեպս, այդպես են գիտակցվում մեր այսօրվա լեզվամտածողությամբ։ Դրանց մեջ ամենից առաջ մտնում են հետևյալ շաղկապները՝ և, ու, որ, բայց, այլ, կամ, էլ, իսկ, թե, ևս, ապա:

Պարզ շաղկապների մյուս խումբը այժմ էլ գիտակցվում է որպես պարզ, բայց ստուգաբանորեն մոտենալով, կարելի է առանց մեծ դժվարության որոշել նրանց նախնական բաղադրիչները։ Այդ շաղկապներն են՝ Եթե, թեկուզ, թեպետ, մինչև, սակայն, ուրեմն, ևսի, ևս *և այլն։*

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ՇԱՂԿԱՊՆԵՐ

§ 731. Քերականական ձևերից առաջացած շաղկապները քիչ են՝ որովհետև, այնուամենայնիվ, այդուամենայնիվ, ըստ որում, համենայն դեպս, չնայած, նայած *և այլն։ Որոշ վերապահությամբ սրանց շարքը կարելի է դասել նաև* ասես, կարծես *բառերը, որոնք ոչ թե բուն շաղկապներ են, այլ ավելի ճիշտ՝ շաղկապական բառեր։ Դրանք հիմնականում եղանակավորող բառեր են, քանի որ արտահայտում են խոսողի վերաբերմունքը։*

Այնուամենայնիվ, այսուամենայնիվ, այդուամենայնիվ, որովհետև *շաղկապները ծագել են գործիականի ձևերից։ Համենայն դեպս ծագել է գրաբարյան հոգնակի հայցականից՝ հ (<յ<ի) նախդրի հավելումով. ժամանակին արտահայտել է ներգոյականի իմաստ. համմտ. բոլոր դեպքերում։ Ըստ որում-ը ծագում է* որ *բառի գրաբարյան տրական հոլովաձևից ըստ նախդրի հավելումով։*

Այս շաղկապները, բացի հիշյալ հատկանիշից, այլ հատկանիշ ևս ունեն. նրանք բարդ բառեր են և այդ տեսակետից կնշվեն

նաև բարդ շաղկապների բաժնում, բայց քանի որ դրանք բառերի սկզբնաձևերից չեն բաղադրված, այլ հոլովական ձևերից, և վերջին հանգամանքը կարևոր դեր է կատարել այդ շաղկապների կազմավորման, առաջացման խնդրում, ուստի և քերականական թեքված ձևերից առաջացած լինելը դրանց կազմության համար բնորոշ գիծ է։

Չնայած, նայած շաղկապները (ունենք նաև չնայած որ, նայած թե ձևերը) առաջացել են հարակատար դերբայից։ Դրանցից չնայած-ը, որ ժխտական չ մասնիկով է կազմված, արտահայտում է զիջական, հակառակ հիմունքի հարաբերություն, նայած-ը, որ հաստատական ձևից է առաջացել, արտահայտում է հիմունքի հարաբերություն։

ԱԾԱՆՑԱՎՈՐ ՇԱՂԿԱՊՆԵՐ

§ 732. Ածանցավոր շաղկապները շատ քիչ են։ Դրանք են՝ այլապես, ետևապես, ետևաբար: *Եղած այս քիչն էլ չի ածանցավորվել հատկապես շաղկապ կազմելու համար, այլ այսպես ածանցավոր ձևով սրանք շաղկապների շարքն են մտել մակբայներից։ Ուրեմն սրանք փաստորեն ունեն մակբայական ծագում և մակբայական կազմություն։*

ԲԱՐԴ ՇԱՂԿԱՊՆԵՐ

§ 733. Բարդ շաղկապները չունեն հայերենի բառաբարդման բազմազանությունը։ Դրանք երկու հիմնական խմբի են բաժանվում. 1. կցական բարդություններով կազմված շաղկապներ, 2. հարադրական կազմությամբ շաղկապներ։

§ 734. Կցական բարդություններով են կազմված հետևյալ շաղկապները՝ այնինչ, այսինքն, այնուամենայնիվ (այսուամենայնիվ, այդուամենայնիվ), այնուհանդերձ (այսուհանդերձ, այդուհանդերձ), մինչդեռ, ուրվիետև, մինչև, ևան, թեև, թեպետ, որպեսզի, բանզի:

Այժմ տեսնենք, թե այս կցական բարդությունները ինչպիսի բաղադրիչներից են կազմված։

Այնինչ շաղկապը կազմված է այն, ինչ բառերից։ Այս շաղ-

կապը գրաբարում և որոշ հեղինակների մոտ նույնիսկ մինչև XIX դարը գործածվում էր անջատ գրությամբ։ Այնինչ–ը *ժամանակակից հայերենում դերազանցապես շաղկապ է, բայց դեռևս երբեմն գործածվում է որպես անորոշ դերանուն, ինչպես՝ այնինչ մարդը, այնինչին տեսա։*

Այնուամենայնիվ *շաղկապը կազմված է այն և ամենայն բառերի գործիական հոլովաձևերից։* Այնուամենայնիվ-*ի սկզբունքով են կազմված ժամանակակից հայերենում համեմատաբար քիչ գործածական* այսուամենայնիվ, այդուամենայնիվ *շաղկապները այն տարբերությամբ, որ վերջիններիս առաջին բաղադրիչը* այս, այդ *դերանունն է։ Գործիականի ձևերից է կազմված նաև* որովհետև *շաղկապը։* Թեպետև *շաղկապը կազմված է* թեպետ+և-*ից, իսկ* թեպետ-*ը իր հերթին ևս պարզ չէ։* Թեև *շաղկապը կազմված է* թե+և *արմատներից, նաև-ը՝* նա+և-*ից,* ֆանգի-*ն (որն այժմ սակավ գործածություն ունի, այն էլ հատկապես չափածո երկերում) կազմված է* ֆան+զի *բաղադրիչներից։*

Որպես *և* զի *բաղադրիչներից կազմվել է* որպեսզի *շաղկապը։ Իհարկե,* որպես *բառն էլ իր հերթին բարդ է՝ կազմված* որ *և* պես *արմատներից։*

Մինչև *բառը կազմված է* մինչ+և *բաղադրիչներից։*

Բաղհյուսական բարդության կանոններով է կազմված բայց *և այնպես շաղկապը։*

§ 735. Զգալի թվով շաղկապների բաղադրիչներ չեն մնացել, չեն կցվել իրար։ Դրանք բաղադրյալ կամ հարադրական կազմությամբ շաղկապներ են։

Բաղադրիչների կապի սերտության տեսակետից այս շաղկապները միատեսակ չեն։ Այն շաղկապները, որոնք կազմվել են համեմատաբար վաղ շրջանում և ավելի հաճախ են գործածվում, բնականաբար ավելի հեշտ կվերածվեն կցականի. դրանց բաղադրիչներն ավելի սերտ են միացած, քան թե նրանք, որոնք ուշ են կազմվել։

Այս շաղկապների կազմության մեջ մեծ դեր են կատարում հատկապես թե, և, որ *շաղկապները։*

Թե *շաղկապը միանալով որևէ այլ բաղադրիչի՝ կազմում է հետևյալ շաղկապները՝ կամ* թե, *միայն* թե, ֆան թե, *ապա* թե, *ասես* թե, *կարծես* թե *և այլն։* Թե *շաղկապով է կազմվում նաև*

ոչ թե-ն, որը, սակայն, առանձին շաղկապ չէ, այլ՝ ոչ թե... այլ զուգադրական շաղկապի մի մասը։

Հիշյալ կազմություններում թե-ն գործածված է որպես երկրորդ բաղադրիչ և դրված է կամ շաղկապի, կամ այլ բառերի վրա։ Բայց չի բացառվում, որ այն գործածվի որպես բաղադրյալ շաղկապի առաջին բաղադրիչ։ Օրինակ՝ Թուչունի հետ զրուցելը պատեպնդեց նրան, թե չէ նրա կռնակը բոլորովին փետացել էր գիշերը (ԷՀ, Ներունին և ծովը)։

Այսպես և՝ թե ինչ է շաղկապը, որ տարածված է հատկապես ժողովրդա-խոսակցական ոճի մեջ։ Օրինակ՝ Ամեն մինը մի ծակ են մտել, մի քանի թոփ չիթ ու կտորի վրա նստել, արշինը ձեռքին, աչքը քուչովն անցկացողին, թե ինչ է մի քանի շահի փող գցեն դախլը (ԱՓ, Կարմրաքար)։

Հարադրական շաղկապներ կազմելու տեսակետից ավելի շատ ակտիվ է որ շաղկապը, որը մեծ մասամբ որպես թարմատար, դրվելով շատ բառերի, հատկապես հարաբերականի դերով գործածված դերանունների վրա, կազմում է շաղկապներ[59]։ Այդպիսիք են՝ ֆանի որ, ճենց որ, մինչև որ, թե որ, այնպես որ, մանավանդ որ, չնայած որ, չնայելով որ, այնման որ, այնմանով որ և այլն։

Բաղադրյալ շաղկապների կազմության հարցում զգալի դեր է կատարում նաև և շաղկապը, որով և մի այլ բաղադրիչով կազմված են հետևյալները՝ ուստի և, ուրեմն և, թեկուզ և, ինչպես և, բայց և, և ոչ թե և այլն։

Բաղադրյալ շաղկապների կազմության մեջ նվազ դեր կատարում են նաև այլ շաղկապներ։ Օրինակ՝ եթե շաղկապով են կազմվում եթե ոչ, ապա եթե ոչ, եթե միայն և նման հարադրական շաղկապները։

Հարադրական կազմությամբ շաղկապները ոչ միայն կազմության ու կազմավորման, այլև իմաստային ու կիրառական տեսակետից յուրահատուկ տեղ են գրավում շաղկապների շարքում։ Երբանք առաջանում են արտահայտելու համար կամ այնպիսի հա-

59 Ցպետք է կարծել, թե երբ թարմատար շաղկապը որևէ բառի վրա է դրվում, բոլոր դեպքերում կազմվում է հարադրյալ շաղկապ։ Այդպիսի կապակցությունը այն դեպքում պետք է համարել շաղկապ, երբ թարմատար ընդունող բառը զրկվում է նյութական իմաստից։

բաբերություններ, որոնք մյուս շաղկապներով չեն արտահայտվում, և կամ ցույց տալու հարաբերությունների որոշ նրբերանգներ։

Այս տեսակետից քննենք վերևի օրինակներից գոնե մեկը։ Ձենց որ հագարացիք առաջին փոքրիկ խրամատը բացին, իրանք այդ տեղով սկսան թափել ահագին քանակությամբ թեփախառն նավթ (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Ձենց որ շաղկապը իմաստով մոտ է երբ բառին, բայց միաժամանակ և զգալի չափով տարբերվում է նրանից։ Երկուսն էլ ժամանակի հարաբերություն են արտահայտում։ Բայց, ի տարբերություն երբ-ի, ձենց որ շաղկապի իմաստի մեջ կա ժամանակները միմյանց անմիջապես հաջորդելու, մի գործողությունը մյուսից անմիջապես հետո կատարվելու իմաստ։

§ 736. Հաճախ նախադասության իրար հետ հարաբերության մեջ մտնող բաղադրիչ նախադասություններից յուրաքանչյուրում գործածվում են տարբեր շաղկապներ, որոնցից ամեն մեկն իր հերթին նպաստում է այդ հարաբերության դրսևորմանը, ամբողջացմանը։

Այդպես կարող են գործածվել հետևյալ շաղկապները՝ թեպետև (թեպետ)... բայց, թեպետև (թեպետ)... սակայն, թեպետև (թեպետ)... բայց և այնպես, չնայած... սակայն, չնայած... այնուամենայնիվ, թեև... այնուամենայնիվ, թեկուզ... բայց, թեկուզ... սակայն, եթե... ապա, եթե... ուրեմն, քանի որ... ուրեմն, քանի որ... ուստի, որովհետև... ուստի և այլն։ Օրինակ՝ Իշխանը թեպետ չհայտնեց նրան Սևադայի կամ Ամրամի իրեն հայտնած գաղտնիքները, բայց թագավորը գուշակում էր (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Ձնայելով որ աշնան վերջ էր, սակայն օրը մեղմ ու տաքուկ լինելով՝ ախորժելի էր։ Թեպետ նա այդ ասում էր կատակելով, սակայն վերջին բառերը արտասանելիս նրա ձայնը քիչ դողում էր (ԿՋ, Նավը լեռան վրա)։ Եթե զգացումով հայրենիք չի ստեղծվում, ապա ինչո՞վ է ստեղծվում (Ն. տ.)։ Իրենք էին կամովին քողազերծ անում իրենց... բարձր գնահատելով պատահմամբ իրենց վրա կանգ առնող թեև հոգեկան տգեղություններ տեսնող, բայց և ներքին գեղեցկություններ գնահատող ամենատես աչքերը (ՎՓ, Սրտիս պարտքը)։

Քանի որ սրանք սերտ միասնություն չեն կազմում, ուստի

չենք դիտում որպես բառական միություններ, այլ դիտում ենք որպես շաղկապների զուգադրական կիրառություններ: Սակայն չի բացառվում, որ սրանց մի մասը կամ սրանց նման որոշ շաղկապներ ժամանակի ընթացքում լմբռնվեն որպես մեկ յուրահատուկ հարադրյալ շաղկապ:

Ժամանակակից հայերենում բառերի մի շարք գործածություններ ունեն կապակցական արժեք և հարում են զուգադրական շաղկապներին, այս կամ այն չափով մոտ են նրանց և ժամանակի ընթացքում կարող են վերածվել բուն շաղկապի: Այդպիսիք են՝ մեկը... մյուսը, մի կողմից... մյուս կողմից, ինչպես... այնպես, որ-ֆան... այնֆան, նախ... ապա, նախ... հետո *և այլն:*

§ 737. Կան կրկնավոր շաղկապներ և միավորիչ շաղկապների կրկնավոր գործածություններ, որոնք պետք է տարբերել իրարից: Առաջինի տիպական օրինակն է ո՛չ... ո՛չ-ը, *որի բաղադրիչներն առանձին վերցրած շաղկապ չեն. շաղկապ է ամբողջը, որ կազմված է* ոչ-ի *կրկնությամբ: Երկրորդի օրինակ է և միավորիչ շաղկապի կրկնավոր գործածությունը՝* և՛... և՛, *որը բառական մեկ միավոր չէ, ի տարբերություն* ո՛չ... ո՛չ-ի: *Որոշ շաղկապների կրկնավոր գործածություններն ունեն հետաքրքրական յուրահատկություն: Ունենք* թե *և էլ համադասական շաղկապներ և ունենք* թե... թե, էլ... էլ *կրկնավոր գործածությունները: Սակայն* թե, էլ *շաղկապների և նրանց համապատասխան կրկնավոր գործածությունների (*թե... թե, էլ... էլ*) միջև տարբերությունը միայն կրկնության մեջ չէ, այլև որոշ չափով իմաստների: Օրինակ, էլ շաղկապն առանձին գործածությամբ հավելական իմաստ ունի, իսկ կրկնավոր նախադաս գործածությամբ՝ թվարկման, եռադաս գործածությամբ՝ հավելական թվարկման: Թե շաղկապն էլ, ինչպես տեսանք, իբրև համադասական շաղկապ, պատմողական առոգանություն ունեցող նախադասություններում շատ լայն գործածություն չունի և չի կարող հանդես գալ այն բոլոր դեպքերում, ուր գործածվում է նրա կրկնավորը:*

Չնայած նշված շաղկապների կառուցվածքային ու կիրառական տարբերություններին, դրանց բոլորին էլ հատուկ է թվարկում արտահայտելը:

ՇԱՂԿԱՊՆԵՐԻ ԵՐԿՈՒ ՏԵՍԱԿՆԵՐԸ. ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ԵՎ ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ

§ 738. Շաղկապներն ըստ արտահայտած հարաբերության բնույթի լինում են երկու տեսակ՝ համադասական և ստորադասական։

Համադասական շաղկապներն արտահայտում են համադասական հարաբերություն նախադասության անդամների, բարդ նախադասության կազմի մեջ մտնող նախադասությունների, ինչպես և միևնույն խոսքի մեջ մտնող ամբողջական նախադասությունների, խոսք կազմող մասերի միջև։

Համադասական շաղկապներն են՝ և, ու, ևս, ևս, էլ, այլ, այլև, իսկ, բայց, սակայն, կամ, այնինչ, այլապես, ապա, *այլև հետևյալ բաղադրյալները՝* բայց և այնպես, բայց և, սակայն և, և սակայն, նույնպես և, նմանապես և, ինչպես և, ինչպես նաև, այն էլ, այն է, և կամ, կամ էլ, կամ թե, կամ թե չէ, թե չէ, ապա թե ոչ և այլն։

Սրանց շարքը պետք է դասել նաև ոչ... ոչ, ոչ թե... այլ, ոչ միայն... այլև, ոչ միայն... այլ նաև, ոչ միայն... այլ շաղկապները։

Ստորադասական շաղկապները արտահայտում են նախադասությունների ստորադասական հարաբերություններ՝ կապելով ստորադաս նախադասությունը գերադասի հետ։ Ստորադասական շաղկապներն են՝ որ, թե, եթե, որովհետև, թեև, որպեսզի, թեկուզ, թեպետ, թեպետև, քանի, մինչ, մինչև, մինչդեռ, չնայած, *այլև հետևյալ հարադրյալները՝* թե որ, թեկուզ և, քանի թե, մինչև որ, չնայած որ, նայած թե, ինչից որ, չէ որ, քանի որ, քանի դեռ, ինչ է թե և այլն։

Երբեմն շաղկապների այս երկու տեսակների տարբերություններն այնքան էլ որոշակիորեն չեն հանդես գալիս։ Դրա հետևանքով՝ կամ նույն շաղկապի մեջ երբեմն կարող են համատեղվել տարբեր հարաբերությունների իմաստներ՝ սովորաբար մեկի գերազանցությամբ, կամ տվյալ շաղկապը տարբեր դեպքերում կարող է դործածվել տարբեր հարաբերություններ ցույց տալու համար։ Այդպիսի շաղկապներից են՝ թե, թե չէ, եթե... ապա, *որոնք մի դեպքում կարող են հանդես գալ որպես ստորադասական, մի այլ դեպքում՝ որպես համադասական շաղկապներ։*

Ահա նշված շաղկապների երկակի բնույթն ապացուցող փաստեր։

1. Այժմ ես հասկանում եմ, թե ինչու արաբը ծունր է դնում ջրի ափին և օրհնելիս առատ ջուր է ցանկանում (ՎԱ, Մարավ)։ Հեռվից իրենք մարդ տեսնում են թե չէ, երեք աղջիկն էլ կանչում են (ՀՔ, Կիկոսի մահը)։ Եթե այս մտածությունը մի հանցանք է եղել, ապա հրամայիր պատժել ինձ ամենածանր կերպով (Մուր., Գևորգ Մարզպետունի)։

2. Ամեն մարդ, մեծ թե փոքր, նման է միայն իրեն (ԳՄ, Թեհրան, 2)։ Յուզիայի բախտն է, որ զբաղված է վոդևիլով, թե չէ պալատում սիրուն օրիորդներ կան և կարող են՝ դրամա բեմադրել (ՀՔ)։ Եթե երջանկությունը տևողական չէ, ապա վշտերն էլ հավիտենական չեն (Մուր., Գևորգ Մարզպետունի)։

ՀԱՄԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

§ 739. Համադասական շաղկապներն ունեն իմաստային տարբեր հատկանիշներ։ Ըստ իմաստի, համադասական շաղկապները կարելի է բաժանել երեք խմբի՝ ա) միավորիչ շաղկապներ, բ) ներհակական շաղկապներ, գ) տրոհական շաղկապներ։

ՄԻԱՎՈՐԻՉ ՇԱՂԿԱՊՆԵՐ

§ 740. Միավորիչ շաղկապներն են՝ **և, ու, էլ, ևս, նաև, այլև, թե, նույնպես և, նմանապես և, ինչպես և, ինչպես նաև, ոչ միայն... այլև, ոչ միայն... այլ նաև, ոչ միայն... այլ, ոչ... ոչ, թե... թե** *և այլն։*

Այս շաղկապներն իրենց հերթին երկու ենթախմբերի կարելի է բաժանել.

Ա. Բուն միավորիչ (կամ թվարկում արտահայտող) շաղկապներ.

Բ. Հավելում արտահայտող շաղկապներ.

§ 741. Բուն միավորիչ կամ թվարկման հարաբերություն արտահայտող շաղկապներն են՝ **և, ու,** *ինչպես և* **թե** *շաղկապը համադասական իմաստ արտահայտելու դեպքում։ Վերջինս մյուսների համեմատությամբ քիչ է գործածվում։ Միավորիչ է նաև* **ոչ... ոչ** *շաղկապը։*

Այս շաղկապները կարող են կապելու, միավորելու դեր կատարել թե՛ բառերի, թե՛ բարդ նախադասության կազմի մեջ մտնող նախադասությունների և թե՛ խոսք կազմող նախադասությունների, հատվածների միջև։ Այնպես որ այս շաղկապների և մասնավորապես և, ու շաղկապների կիրառության ոլորտը շատ լայն է։

Միավորիչ շաղկապներն իմաստային ընդհանրությամբ հանդերձ ունեն նաև տարբերություններ։ Ու, և շաղկապների տարբերությունը հատկապես երևում է այն դեպքում, երբ գործածվում են միևնույն նախադասության մեջ։

Երբ միևնույն նախադասության, պարբերության մեջ կա և, ու շաղկապների գործածության անհրաժեշտություն, ապա ու շաղկապը գործածվում է ավելի սերտ միասնության հարաբերություն ցույց տալու համար, ավելի փոքր միավորներ կապելու համար, իսկ և-ը, ընդհակառակն, կապում է համեմատաբար մեծ ծավալի լեզվական միավորներ։ Ավելի կոնկրետ ասած՝ և շաղկապը, օրինակ, բարդ նախադասություններում հակված է ավելի բազադրիչ նախադասություններ կապելու, իսկ ու շաղկապը՝ նախադասության անդամներ։ Օրինակ՝ Ամրոցի պարիսպներից ու աշտարակներից տեղում էր յուր զորքի վրա նետերի սաստիկ տարափ, և հարյուրավոր սվիններ ու գերանդիներ օդի մեջ թռչելով շամփրում են հարձակվողների կրծքերն ու թիկունքները (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Եվ որովհետև հայերը նույնպես հոգնել էին, ուստի անմիջապես կռիվը դադարեցրին և զինաթափ անելով արաբացիներին, քաղաքն ու բերդն առան իրենց հսկողության տակ (ն. տ.)։

Որ իսկապես ու շաղկապը բառերի ավելի սերտ հարաբերություններ է արտահայտում և շաղկապի համեմատությամբ, վկայում է, ի միջի այլոց, նաև այն փաստը, որ բաղհյուսական բարդությունների (ինչպես և դրանցից առաջացած կցականների) բազադրիչները միանում են սովորաբար ու-ով. ինչպես՝ անց ու դարձ, ասուլիս, ախ ու վախ, ել ու մուտ, աղ ու հաց, տուն ու տեղ, նիստ ու կաց, սար ու ձոր, մարդ ու կին, հարցուփորձ և այլն։

Միավորիչ շաղկապների (և առհասարակ համադասական շաղկապների) համադասական հարաբերության իմաստը չպետք է հասկանալ բացարձակ իմաստով, հատկապես այն դեպքում, երբ

նրանք շաղկապում են նախադասություններ։ Հաճախ քերականական համադրությունը չի զուգակցվում կապակցվող միավորների իմաստային-տրամաբանական խիստ համադրությամբ։ Որոշ դեպքերում և, ու շաղկապները հանդես են գալիս իմաստային տարբեր նրբերանգներով՝ 1. պատճառի ու հետևանքի, 2. ժամանակային և այլն։ Այսպես՝

1. Մայրաքաղաքի պարիսպներն ու մարտկոցները պատած էին կրակով, և հեռվից նայողը կարծում էր, թե քաղաքն ամբողջապես գտնվում է հրդեհի մեջ։ Սա ուրեմն թագավորի կողմից է, մտածեցի ես, և ուրախությունից շունչս բռնվեցավ (Մուր., Գևվորգ Մարզպետունի)։

2. Շուտով մի քանի ոստյուն անելով՝ մեղմացան և երկչոտ ու խեթ նայեցին անձրևից օրորվող թփերին (ՍԱ, Լեռնցիներ)։ Իսկ Հայկանուշը հարցական նայեց նրան, գլուխն օրորեց ու լուռ հեռացավ (Ն. տ.)։

Թե համադասական շաղկապը թվարկման իմաստ է արտահայտում պատմողական նախադասություններում. ինչպես՝ Բակ էին հավաքվել աղջիկ թե տղա։

Վերջապես, թվարկման իմաստ ունեն կրկնավոր շաղկապներն ու շաղկապների կրկնադիր գործողությունները (ոչ... ոչ, թե... թե, էլ... էլ, և... և և այլն։ Օրինակ՝ Այդ մարդու հետ միասին ծունկ չոքեցին հրապարակում հավաքված բոլորը՝ թե հայ, թե հույն, թե թուրք և միասին ծեծեցին իրենց կուրծքը (ՄԱ, Հեղնար աղբյուր)։ Նա ո՛չ պոետ է, ո՛չ քննադատ, Ո՛չ վիպագիր է, ո՛չ մտածող, Բայց ունի գլուխ, ունի ճակատ եվ բավական է ունեցածով։ Եվ երազում է նա անընդհատ Ուղեղով իր ծույլ ու բթացող, Որ թե՛ պոետ է, թե՛ քննադատ, Թե՛ վիպագիր է, թե մտածող (ԵՉ)։ (Ծանծաղ ջրերում) հազար ու մի ձկնիկ է վխտում, էլ ջրշուն ու ձկնկուլ, էլ ջրագռավ ու աղվես (ՎԱ, Սևանի ափին)։

§ 742. Հավելում ցույց տվող միավորիչ շաղկապներն են՝ ևս, ևս, էլ, այլև, ինչպես և, ինչպես ևս, նույնպես և, համապես, նույնպես էլ, ոչ միայն... այլև, ոչ միայն... այլ ևս, ինչպես... այնպես էլ։ Այս շաղկապներն արտահայտում են տվյալ պայմաններում արդեն եղող կամ որևէ տեսակետից հայտնի առարկայի կամ հատկանիշի շարքը այլ առարկա կամ հատկանիշ հավելելու իմաստ։ Անկասկած տարբերություն կա մի կողմից՝ Արամն ու

Աշոտը վերադարձան նախադասության և մյուս կողմից՝ հետևյալ նախադասությունների միջև. Արամը վերադարձավ։ Աշոտը ևս վերադարձավ։ Ոչ միայն Արամը վերադարձավ, այլև Աշոտը։ Եթե առաջին օրինակի մեջ ու շաղկապով կապված անդամները (Արամը, Աշոտը) համազոր են բոլոր տեսակետներից՝ քերականական, տրամաբանական-ճանաչողական և ոճական, ապա հաջորդ օրինակներում ևս, ոչ միայն... այլև շաղկապներով կապվող անդամները մի փոքր այլ հարաբերության մեջ են գտնվում կամ, համենայն դեպս, այլ ձևով են ընկալվում։

Հավելման շաղկապների կիրառության օրինակներ. Այսօր նրանք բաց էին, բաց էին ևաև ապակե փեղկերը (Շիրվ., Քաոս)։ Նա նստեց անկողնում, սենյակում կային ևս վեց հոգի (Սիր., Հայր և որդի)։ Ես չեմ մոռանում այն գարնան երեկոն, երբ ես առաջին անգամ իմացա, որ ծիծեռնակի մայրն էլ մայր է, ու սիրտն էլ սիրտ է, ինչպես մերը (ՀԹ, Մայրը)։ Այժմ ոչ միայն որսից եմ զրկվում, այլև գիշերվա բքին լեռան գագաթին լինելն արդեն ինքնին բավական վտանգավոր է ինձ համար (ՎԱ, Լեռնային կածաններով)։ Այս ձուկը նմանապես իմ բարեկամն է (ԷՀ, Ծերունին և ծովը)։

Հավելման իմաստի հիմքում կարող են ընկած լինել օբյեկտիվ ու սուբյեկտիվ բնույթի տարբեր գործոններ։ Հավելում արտահայտող մի շարք շաղկապների հետ, ըստ որում առավել տարածված, առավել գործածական շաղկապների հետ (ևս, ևաև, էլ) կողք-կողքի սովորաբար չեն գործածվում ըստ էության շաղկապվող լեզվական միավորները։ Բերված շաղկապների հետ գործածված է լինում շաղկապվող բաղադրիչներից կամ եզրերից սովորաբար մեկը։ Մյուս բաղադրիչը կամ եզրը, որի հետ կատարվում է շաղկապումը, հաճախ արտահայտված է լինում նախորդ նախադասության մեջ կամ նախորդ նախադասություններից որևէ մեկում, մի քանիսում։ Օրինակ՝ Սրանց աչքը միշտ գալիս է ձախի վրա, ու արմատում տակից մի կոշտ ունի։ Էդ կոշտից հինգ փայլոճն ամուր երակներ են ձգվում... Ներքևի ձախ աւտոմիճն թևն էլ նույն կազմն ունի (ՀԹ, Ծղրիդը)։ Էշն ընկնում է ետևիցը, իբրև թե հալածում է։ Ոչխարն էլ է գելի ետևիցն ընկնում (ն. տ.)։ Մարզպետունի իշխանուհին սկսավ ծիծաղադեմ դեպի դուռը նա-

յել։ Ձվարթ արտահայտության ստացան նաև օրիորդ ճաժիշտաների և դայակի երեսները (Մուր., Գևորգ Մարզպետունի)։

Հիշյալ շաղկապներով կապակցվող բառերը և այլն կարող են գործածվել նաև միևնույն նախադասության մեջ։ Այդպիսի գործածությունը հնարավոր է, ամենից առաջ, բարդ նախադասության մեջ, որի տարբեր բաղադրիչ նախադասություններում հանդես են գալիս այդ լեզվական միավորները։ Օրինակ՝ Ինքը նույնպես ծառայել էր յուր հոր բավականության համար, և յուր որդին ևս պետք է ծառայեր յուր բավականության համար (Ր, Սամվել)։ Գնա՛, հանգստացի՛ր, ասա՛, որ նա ևս հանգստանա (Ն. տ.)։ Սպասավորները հեռացան, նրա մոտ մնացին նաժիշտները միայն, որոնք փոքր-ինչ սպասելով և տեսնելով, որ իրենց տիկինը առանձին հրաման չունի, իրանք ևս հեռացան (Ն. տ.)։

Քննարկվող երևույթը հանդիպում է նաև որոշ կարգի պարզ նախադասություններում։ Օրինակ՝ Կհալածեն մեջտեղից բաժանման ոդին, և ընդհանուր հայրենիքը պաշտպանելով կպաշտպանեն նաև իրենց երկրները, հայրենի կալվածները, տունն ու ընտանիքը (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Դրանց համաձայնությունն առնելուց ետ, նրանք պիտի դիմեին նաև Վասպուրականի տներին (Ն. տ.)։ Այդտեղ Կոտց տաճարներից զատ, գտնվում էին նաև հոյակապ ապարանքներ (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Նա ևս յուր դայակի նման կթողներ և կհեռանար յուր սենյակը (Ր, Սամվել)։

Հավելում արտահայտող շաղկապները մեկ ընդհանուր հատկանիշ ունենալով հանդերձ, ունեն նաև երանգային ու կիրառական տարբերություններ։ Այսպես՝ զուգադրական շաղկապները՝ ոչ միայն... այլև, ոչ միայն... այլ նաև, ինչպես... նույնպես էլ, ինչպես... նույնպես և, հանդես են գալիս միևնույն նախադասության կազմի մեջ, որ նշանակում է, թե նույն նախադասության մեջ գործածվում են այդ շաղկապով կապվող եզրերը։ Օրինակ՝ Ոչ միայն շքակիր խմբով եկավ հարսանիքին, այլև Գանձակ գրնալով հնարներ գործ դրավ, որ վրաց Ատրներսեհին թագավորից գոնե կես օր առաջ բերե Գարդման (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Այս սուրը ճանապարհ կբանա իմ թագավորի համար ինչպես Ուտիքը, նույնպես և Գարդմանը նորից գրավելու (Ն. տ.)։

Հավելական իմաստ արտահայտում է նաև և շաղկապով։

եվ-ի հավելման իմաստը նման է նաև, ևս, էլ շաղկապների իմաստին։ Օրինակ՝ Երբեք Պետրոս Դուլամյանը չէր մտածել, թե այն, ինչ որ ինքն է անում, կարող է անել և իր կինը (Շիրվ., Քառս)։ Բոլորը ծիծաղում են։ Ծիծաղում է և ինքը Սաթոն (ԴԴ, Սաթոն)։

ՆԵՐՀԱԿԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

§ 743. Ներհակական շաղկապները մեծ մասամբ շաղկապում են նախադասությունները, իսկ երբեմն էլ բառեր, որոնք ներհակ, հակադիր են միմյանց նկատմամբ։ Այս շաղկապներն են՝ իսկ, բայց, սակայն, այլ, միևչդեռ, միայն, այնինչ, ապա (ճապա), բայց և այնպես, և սակայն, այնուամենայնիվ, թե չէ, եթե ոչ, և ոչ թե, այլ ոչ թե, բայց ոչ, եթե... ապա, ոչ թե... այլ և այլն։

Ներհակական հարաբերության իմաստն այս շաղկապների մեջ առկա է տարբեր չափով. ըստ այդմ քննարկվող շաղկապները կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

1. Ժխտման հարաբերություն արտահայտող ներհակական շաղկապներ,

2. Հակաման հարաբերություն արտահայտող ներհակական շաղկապներ,

3. Հանդիպադրական հակադրություն արտահայտող ներհակական շաղկապներ,

4. Պայմանական հակադրություն արտահայտող ներհակական շաղկապներ։

§ 744. Ժխտման հարաբերություն արտահայտող ներհակական շաղկապներ են՝ այլ, ոչ թե, և ոչ թե, այլ ոչ թե, ինչպես և ոչ թե... այլ, ոչ միայն... այլ զուգադրական կազմությամբ շաղկապները, որոնց ներհակական հարաբերության հիմքում ընկած է ժխտումը։ Այսպես՝ Սա մատիտ չէ, այլ գրիչ, Սա գրիչ է, և ոչ թե մատիտ նախադասություններում բացասվում, ժխտվում է ցույց տրվող առարկայի մատիտ լինելը և հաստատվում մի այլ բան, որ այն գրիչ է։

Օրինակ՝ Հայրենիքը փրկելու համար չպետք է սպասել հաջող հանգամանքների և ոչ էլ իշխանների ձեռնտվությունը մուրալ, այլ պետք է հույսալ միայն սեփական բազկի վրա և անձը

նվիրելու չափ հայրենասիրություն ունենալ (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Ոչ թե քայլում, այլ սողում է (ՎԱ, Սևանի ափին)։ Արաբացին Արաբիայում պիտի իշխե և ոչ թե հայոց երկրում (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Ես ներում եմ քեզ, ներում էլի, Քանզի խեղճ ես դու և ոչ թե չար (ԵՉ)։

Այդ շաղկապներով ժխտման հարաբերություն կարող է արտահայտվել ոչ միայն նախադասության անդամների, այլև ամբողջական նախադասությունների միջև. ինչպես՝ Ոչ թե ես եմ ուշացել, այլ դու ես շտապել։ Ոչ թե սենյակն է ցուրտ, այլ դու ուղղակի մրսկան ես։ Ոչ թե դու մոռացել ես, այլ ես քեզ դեռ չեմ ասել այդ մասին։ Կամ՝ Ես չեմ ուշացել, այլ դու ես շտապել։ Սենյակը ցուրտ չէ, այլ դու ուղղակի մրսկան ես։

§ 745. Հակադման հարաբերություն են արտահայտում հետևյալ շաղկապները՝ բայց, բայց և, սակայն, և սակայն, սակայն և, բայց և այնպես, միևնույն, այնուամենայնիվ, միայն, միայն թե և այլն։

Այս շաղկապների իմաստային տարբեր երանգների մեջ առավել բնորոշ հարաբերությունը կարելի է որոշել դրանց տիպական և առավել տարածված կիրառությունների օրինակների վրա.

1. Արամը քիչ է պարապում, բայց (սակայն, միևնույն) աշխատասերի համբավ ունի։

2. Արամը քիչ է պարապում, բայց (սակայն, միևնույն) ընդունակ է։

3. Արամը քիչ է պարապում, բայց (սակայն, միևնույն) արդյունքը մեծ է։

4. Արամը քիչ է պարապում, բայց (սակայն, միևնույն) նա հրնարավորություններ ունի շատ պարապելու։

5. Արամը քիչ է պարապում, բայց (սակայն) ճիշտ եղանակով։

6. Արամը շատ է պարպում, բայց (սակայն, միայն) ոչ բոլոր առարկաները։

Չնայած իմաստային որոշ տարբերություններին, այս հարաբերությունների մեջ իշխողը, առավել բնորոշն ու ընդհանուրը հակադման, անհամապատասխանության հարաբերությունն է։ Առաջին օրինակում հակասություն, անհամապատասխանություն է արտահայտված Արամի մի իրական հատկության և նրա մասին

եղած կարծիքի միջև, երկրորդում՝ Արամի տարբեր հատկությունների միջև, երրորդում՝ պարապելու և նրա արդյունքի միջև, չորրորդում՝ նրա պարապելու և հնարավորության միջև, հինգերորդում՝ նրա պարապելու չափի ու որակական հատկանիշի միջև, վեցերորդում՝ արտահայտվում է հակասություն նրա շատ պարապելու և նրա այդ հատկանիշը ոչ բոլոր առարկաների վրա տարածվելու միջև. այս վերջին դեպքում հակասությունն առնչվում է սահմանափակման, վերապահության միջոցով։

Ուրեմն ամբողջությամբ վերցրած այս շաղկապների համար հիմնականը, բնորոշը հակասման, անհամապատասխանության հարաբերությունն է իր տարբեր դրսևորումներով, որի պատճառով էլ դրանք կարելի է անվանել հակասման, անհամապատասխանության շաղկապներ։ Օրինակ՝ Ուշ է, բայց բոլորովին անցած չէ, տե՛ր արքա (Ր, Սամվել)։ Վաղուց նրանց աչքերում ցոլանում էին սիրո այն կայծերը, որոնք այրում, տոչորում են սրտի թաքուն խորշերը, սակայն արքունիքում դեռ չէին նշմարում այդ (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Լույսը բացվելուն մոտ էր, որ նրա աչքերը ծանրացան, մինչդեռ Սեդան վաղուց վայելում էր խաղաղության հրեշտակի բարիքը (ն. տ.)։

Սահմանափակման, վերապահության իմաստը համեմատաբար ավելի զգալի է միայն, միայն թե շաղկապների մեջ, և դա գալիս է նրանց եղանակավորման յուրահատուկ իմաստից (դրանք շաղկապների շարքն են անցել եղանակավորող բառերից)։ Օրինակ՝ Դղյակի ուրիշ շատ սենյակների նման քարաշեն էր և այս առանձնատունը, միայն այն զանազանությամբ, որ սա կերտված էր ընտիր, գույնզգույն քարերից (Մուր., Գևորգ Մարզպետունի)։

Այս օրինակներում հակասման, անհամապատասխանության իմաստը համեմատաբար թույլ է, և դրա հիմքում ընկած է որոշ սահմանափակման, վերապահության հանգամանք, որը հակասման հարաբերությունը սահմանափակում է այս կամ այն չափով, այս կամ այն հատկանիշով։

Այս շաղկապների մեջ երբեմն առկա է լինում նաև զիջական երանգ։ Դա ավելի շատ վերաբերում է այնուամենայնիվ, այնուհանդերձ շաղկապական բառերին։ Օրինակ՝ Որքան էլ որ անակընկալ չէր Աշխենի համար եվայի այդ վարմունքը, այնուամե-

ձայնիվ սկզբում նա սառած մնաց (ՆԴ)։ Որքան էլ տխրալի բան է մահը, որքան էլ ես վախենում եմ մեռնելուց, այնուամենայնիվ հաշտվում եմ (ՆԴ, Մահը)։

§ 746. Հանդիպադրական հակադրություն արտահայտող շաղկապներն են՝ իսկ, եթե... ապա, ապա (հապա), միայն։ Սրանք սոսկ հակադրություն են արտահայտում սովորաբար առանց ժխտման և առանց հակասման։ Այսպես՝ Դու նվագում ես, իսկ նա երգում է։ Այստեղ իսկ շաղկապը հակադրության իմաստ է արտահայտում այնչափով, որչափով այն կապում է այնպիսի նախադասություններ, որոնցում տարբեր հատկանիշներ վերագրված են տարբեր առարկաների։ Օրինակ՝ Սեմյոնովկայից ճանապարհը ըստ կըսում է փոքր-ինչ ցածրանալ, իսկ բնության շքեղությունները նվազում էին (Մուր., Առաքյալը)։ Հարձակման նշանը պետք է տար Մարզպետունին, իսկ առաջին կրակը պիտի վառեր սեպուհը (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Եթե Սոֆիայի և Դրոզդովի կապերը նրանց տարան դեպի ֆիզիկական ու բարոյական անկում, ապա Կատյայի և Վարդանի ամուսնությունից ստեղծվեց բարձր բարոյականության և անձնվեր սիրո վրա հիմնված մի օրինակելի ընտանիք (ՀՆԳՊ, 2)։

§ 747. Պայմանական ներհակական են հետևյալ շաղկապները՝ թե չէ, եթե ոչ, ապա եթե ոչ, ապա թե ոչ, այլապես։ Սրանք ներհակական, հակադրական հարաբերություն են արտահայտում որոշ պայմանականությամբ, կախված որոշ պայմանից։ Իսկ այդ պայմանը ենթադրվում է և ուղղակիորեն չի արտահայտվում նախադասության մեջ։ Այսպես՝ լավ սովորիր, թե չէ (եթե ոչ, ապա թե ոչ, այլապես) դուրս կմնաս ինստիտուտից։ Նախադասության երկրորդ մասը հակադրվում է առաջինին, իսկ պայմանը (եթե լավ չսովորես) չի արտահայտված, այլ հասկացվում է։ Օրինակ՝ Հունձը կես գիշերին պետք է անել, կնի՛կ, երբ հասկերը գիշերվա շաղից թացանում են, թե չէ արևի տակ կոտրվում, փչանում են (ՍԱ, Լեռնցիներ)։ Դե գնանք, ես քեզ կուղեկցեմ, թե չէ մեր շունը ուրիշ մարդ տեսնելիս՝ շղթան էլ է պոկում (ՍԽ, Հողը, 1)։ Դու այդ մասին շատ հայտնիր, այլապես կարող են քեզ մեղադրել։ Կգործադրենք միասին, եթե ոչ կանեմ այն, ինչ որ դու կհրամայես (Մուր., Գևորգ Մարզպետունի)։

ՏՐՈՀԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

§ 748. Տրոհական հարաբերություն արտահայտող շաղկապներն են՝ կամ, կամ թե, կամ թե չէ. և կամ, թե, որոնք ցույց են տալիս, որ շաղկապվող բառերի կամ նախադասությունների արտահայտած առարկաներից, հատկանիշներից, երևույթներից մեկը կամ մի խումբն է նկատի առնվում, իրական, հնարավոր համարվում որևէ տեսակետից, ի տարբերություն մյուսի կամ մյուսների։

Նրանք գնալու են Գառնի կամ Գեղարդ։ Հիմա կկանչեն ինձ ու քեզ կամ Արամին ու Գրիգորին։ Առաջին նախադասության մեջ երկու տեղերից մեկի հնարավոր լինելն է արտահայտված այնտեղ գնալու տեսակետից։ Իսկ երկրորդ նախադասության մեջ արտահայտված է կանչելու գործողության հնարավորությունը երկու խումբ անձանցից միայն մեկ խմբի վերաբերյալ։

Բաժանման իմաստը ընդգծված է արտահայտվում հատկապես այն դեպքում, երբ կրկնվում է համապատասխան շաղկապը։ Իսկ այս կիրառությունը հատուկ է մանավանդ կամ շաղկապին։ Օրինակ՝ Կամ մեռնել այստեղ, կամ վերջնականապես ջախջախել այս թշնամուն (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Երկուսից մինը, կամ կհաղթանակեմ, կամ թե խմբով իսպառ կջնջվեմ (Ն. տ.)։

Ինչպես երևում է վերջին օրինակից, շաղկապների կրկնության դեպքում բաղադրյալ կազմության ունեցողների կամ բաղադրիչն է կրկնվում, իսկ մյուս բաղադրիչը (թե, թե չէ, և) գործածվում է միայն վերջին կրկնվողի հետ. այսպես՝ կամ... կամ թե չէ, կամ... կամ թե, կամ... և կամ։

§ 749. Շաղկապով արտահայտված տրոհական իմաստը միշտ չէ, որ ընդգծվում է ու կապվող եզրերից մյուսը բացառվում։ Այսպես՝ Ամեն մի շենի կամ ավանի մոտեցած ժամանակ հնչեցնել էին տալիս փողեր ու շեփորներ (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Երկուսից մեկի հնարավորությունը, որ արտահայտված է այստեղ կամ շաղկապով, պետք է հասկանալ ոչ թե բացառնակ իմաստով, այլ շաղկապված եզրերից ամեն մեկի տեսանկյունից։ Չէ՞ որ այդ բնակավայրերից ամեն մեկը կամ շեն է, կամ ավան։ Ուրեմն քննարկվող օրինակում արտահայտված է այն միտքը, որ նշված գործողությունը կատարվում է ամեն բնակավայրի (շենի ու ավանի) մոտեցած ժամանակ, լինի այն շեն, կամ թե չէ ավան։

Այս կարգի օրինակներ են հետևյալները. Ջկային այդտեղ դիմադրող զորքեր և ոչ էլ կռվի կամ պաշտպանության պատրաստության (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Հարավից դեպի հյուսիս, կամ արևելքից դեպի արևմուտք անցնել ուզող աշխարհակալները կամ հակառակորդ ազգերը, ամենից առաջ ընդհարվում էին հայաստանցոց հետ (Ն. տ.)։

Սովորաբար հենց այսպիսի իմաստով է գործածվում լայն տարածում չունեցող և կամ հարադրյալ շաղկապը, որն իր և բաղադրիչի պատճառով, որպես կանոն, չի գործածվում ընդգծված կամ բացարձակ բաժանական հարաբերության ցույց տալու համար։ Օրինակ՝ Նա մեծ է տարիքով և թույլ է գիտությամբ, որպեսզի հաճախի սեմինարիա և կամ համալսարան (ԱԲ, Խաչատուր Աբովյան)։

Կամ շաղկապով կապվում են նաև միևնույն առարկայի միևնույն տեսակետից տրված տարբեր անվանումները, մակդիրները։ Օրինակ՝ Նույն գյուղացիները իրենց գյուղին «հայրենիք» կամ «երկիր» էին ասում, հարևան գյուղին՝ «օտար երկիր» կամ դարիբ տեղ (ԱԲ, Կյորես)։

§ 750. Կամ թե չէ շաղկապի բաժանական իմաստը երբեմն ունենում է ներհակական երանգ իր թե չէ բաղադրիչի պատճառով։ Օրինակ՝ Կամ կատարիր պարտականություններդ, կամ թե չէ այլ կերպ կվարվենք քեզ հետ։

Իսկ ավելի հաճախ կամ թե չէ շաղկապը գործածվում է կամ-ի իմաստով, միայն բաժանական հարաբերության մեջ եղած շատ թույլ ներհակական իմաստային տարրը ավելի ընդգծված՝ իր թե չէ բաղադրիչի միջոցով։ Օրինակ՝ Դու պիտի սովորես, կամ թե չէ պիտի աշխատես, այլ կերպ չի կարելի։ Երբ չեն կարողանում ըմբռնել մի որևէ բանի ներքին իմաստը, հոգին, կամ թե չէ կորցնում են ժամանակի ընթացքում, պաշտում, պաշտպանում են ձևը, առանց հասկանալու (ՀԹ, Ջևն ու հոգին)։

§ 751. Թե շաղկապը տրոհական իմաստով գործածվում է հատկապես հարցական նախադասություններում, կամ, համենայն դեպս, հարցական առոգանությամբ։ Օրինակ՝ Կտեսնի՞ նորից, թե՞ վերջին անգամն է համբուրում ճակատը (ՍԱ, Լեռնցիներ)։ Ո՞վ պիտի նախաձեռնի, օրինակ, գյուղացիների ազատագրումը, իրենք գյուղացինե՞րը, թե՞ նրանց շահագործող կալվածատերերը.

ի՞նչ հիմքերի վրա պիտի լինի նրանց ազատագրումը՝ հողո՞վ, թե՞ առանց հողի, փրկավճարո՞վ, թե՞ առանց փրկավճարի, անձնակա՞ն, թե՞ համայնքների սկզբունքով (ԱՀ, Նալբանդյանը և նրա ժամանակը)։

ՍՏՈՐԱԴԱՍԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

§ 752. Ստորադասական շաղկապներն արտահայտում են ստորադասական հարաբերություններ՝ կապելով ստորադաս նախադասությունը գերադասին։

Ստորադասական շաղկապների համար սովորական չէ համադասականների մեծ մասին հատուկ՝ առանձին, ամբողջական նախադասություններ կապելու դերը։ Դրա պատճառն այն է, որ ստորադասական շաղկապները ավելի սերտ հարաբերություններ են արտահայտում, քան թե համադասական շաղկապները։ Եվ քանի որ ամբողջական նախադասությունները բավականաչափ ինքնուրույն են, այդ պատճառով էլ, որպես կանոն, չեն կապվում միմյանց հետ ստորադասական շաղկապներով։

Հետևյալ տիպի փաստերը չեն հակասում վերոհիշյալին։ «Ինչո՞ւ մեր կուսակցությունը վճռական պայքար ծավալեց անհատի պաշտամունքի և նրա հետևանքների դեմ։ Որովհետև անհատի պաշտամունքը նշանակում է չափից դուրս մեծարել առանձին մարդկանց, նրանց օժտել գերբնական գծերով ու հատկություններով»։ Այդպիսի նախադասությունների կիրառական նպատակը հատուկ ճարտասանական նկատառումն է, իսկ նախադասությունների (մասնավորապես երկրորդ նախադասությանն է վերաբերում խոսքը) կիրառական հիմքը վերցված է երկախոսություններից։ Համմա.

— Ինչո՞ւ մեր կուսակցությունը վճռական պայքար ծավալեց անհատի պաշտամունքի և նրա հետևանքների դեմ։

— Որովհետև անհատի պաշտամունքը նշանակում է չափից դուրս մեծարել առանձին մարդկանց, նրանց օժտել գերբնական գծերով ու հատկություններով։

Այս կարգի օրինակներ են հետևյալները.

— Կուզե՞ս, երեկոյան ե՛կ միասին պարապենք։

— Եթե տատս լավ զգաց (ԱՍ, Ոսկե մեդալ)։

ՀԵՂԻՆԵ.— Ա՜խ, մայրի՛կ, դու ուրախ ես երևում։

ՀՈՌՈՄ.— Որովհետև ուրախալի լուր եմ բերել (Շիրվ., Իշխանուհի)։

Այսպիսով, ստորադասական շաղկապները համադասականներից տարբերվում են ոչ միայն իրենց արտահայտած հարաբերության բնույթով, այլև կիրառական տլորտով, կիրառական այլ հատկանիշներով։

Ստորադասական շաղկապներն ըստ իմաստի բաժանվում են հետևյալ տեսակների՝ մեկնական, ժամանակի, պայմանի, պատճառի, նպատակի, զիջական, համեմատության, մակաբերական, բացահայտման:

ՄԵԿՆԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

§ 753. Մեկնական շաղկապներն են՝ որ, թե, *ինչպես և իճչ, որոնք մեկնական, բացատրական հարաբերություն են արտահայտում՝ գերադաս նախադասությունը կապելով այնպիսի ստորադաս նախադասության, առանց որի գերադասի միտքը խիստ թերի կլիներ և հաճախ պարզապես կիսատ կմնար։*

Սա ամենից առաջ վերաբերում է մեկնական շաղկապների այն կիրառություններին, երբ նրանց կապած երկրորդական նախադասությունը լրացնում է գերադասի՝ ներգործական սեռով արտահայտված ստորոգյալին. իսկ սա՝ մեկնական շաղկապների ամենատարածված կիրառությունն է։ Օրինակ՝ Իմացել եմ, որ արշը ականչ է դնում (ՀԹ, Արշաուս)։ *Ոմանք էլ ասում էին, թե այդպես ավելի լավ է (ԱԲ, Մինա բիբին)։ Փորձեց* որոշել, թե ովքեր են գալիս (Ն. տ.)։

Այս շաղկապների մեկնական իմաստը դրսևորվում է ոչ միայն նշված, այլև ուրիշ կիրառություններում (ենթակա, ստորոգելիական վերադիր և այլ երկրորդական նախադասություններ գերադասի հետ կապելու դեպքում)։ Օրինակ՝ Թվում է, թե ձյունը կաթկթում է ցուրտ աստղերից (ԱԲ, Եղբայրության ընկուզենիները)։ Եվ այդպես էլ չիմացվեց, թե ինչ եղավ Եփոր Ադամովը (ԱԲ, Նամակ ռուսաց թագավորին)։ Ամենից զարմանալին այն է, որ անկողինները չէին երևում (ԳՍ, Թեհրան)։ Քնելուց առաջ Տիտոսի վերջին միտքն այն մասին էր, թե չի կաթում այդ կտուրը անձրև օրերին (ԱԲ, Բևա՜ն, Բևա՜ն)։

§ 754. Որ և թե շաղկապները իմաստով զգալի չափով տարբերվում են իրարից։ Դրանցից առաջինը հաստատական իմաստ է արտահայտում, իսկ երկրորդը՝ ոչ հաստատական, թեական։ Համմա.

Ասում են, որ պիեսը կարդացել է բավական ժամանակ առաջ (ՌՋ, Սիրանույշ)։ Մտածում էր, թե պիեսը երբ է կարդացել։

Գեթ մխիթարվիր, որ նույն համն ունեն քրտինք ու արցունք (ՊՍ)։ Նա մտածում էր, թե ինչ համ ունեն քրտինք ու արցունք։

Հարությունը գտավ, որ կինն իրավացի է (Սխ, Հողը, 2)։ Հարությունը կարծում էր, թե կինն իրավացի է։

Թե շաղկապի երկբայական իմաստն ավելի շեշտելու և նույնիսկ անհավանական դարձնելու նպատակով նրա հետ երբեմն գործածվում է համապատասխան իմաստ արտահայտող եղանակավորող բառ, հատկապես իբր բառը։ Օրինակ՝ Ռուսական մամուլում տպագրվել է Սիրանույշի նկարը՝ «Հայկական Դուզե» մակագրությամբ, բայց ամենից ավելի ասել են, թե իբր նա հայկական Սառա Բեռնարն է (ՌՋ, Սիրանույշ)։ Ձևանալով բարեպաշտ, նա ցույց է տալիս, թե իբր համաձայն է նրանց ամուսնությանը (ՀՆԳՊ, 2)։

Որ շաղկապին իր իմաստով հարում է ինչ մեկնական շաղկապը, որը, սակայն, նրա պես լայն գործածություն չունի։ Օրինակ՝ Ահա մի քանի օր է, ինչ տեսնում եմ, որ դու կիրճերից վեր բարձրանում ես ժայռերը (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Հաշվապահ Մոխրարին մոտ քսան տարի է, ինչ աշխատում էր Իրանի բանկում (ԳՍ, Թեհրան)։

Ինչպես երևում է բերված օրինակներից, ինչ մեկնական շաղկապով կապվող երկրորդական նախադասությունը լրացնում է գլխավոր նախադասության այնպիսի ստորոգյալի կամ այլ անդամի, որն ունի ժամանակի իմաստ։

ԺԱՄԱՆԱԿԻ ՇԱՂԿԱՊՆԵՐ

§ 755. Ժամանակի իմաստ ունեցող ստորադասական շաղկապներն են՝ մինչ, մինչև, հենց, ձախաճ, բանի, ինչ, մինչ որ, հենց որ, բանի դեռ, թե չէ, որ, երբ որ։

Այս շաղկապները կապում են ժամանակի պարագա երկրորդական նախադասությունը գերադաս նախադասությանը և արտահայտում են ժամանակի իմաստ տարբեր երանգներով՝ հանձինս գերադաս ու ստորադաս նախադասությունների բովանդակության ժամանակային տարբեր փոխհարաբերությունների։

Ըստ ժամանակային այդ փոխհարաբերության՝ քննարկվող շաղկապները կարելի է բաժանել հետևյալ խմբերի։

§ 756. **Մինչ, մինչև, մինչև որ, նախքան** *շաղկապները սովորաբար ցույց են տալիս, որ գերադաս նախադասությամբ արտահայտված իրողությունը, գործողությունը և այլն նախորդում են երկրորդական նախադասությամբ արտահայտված իրողությանը, գործողությանը և այլն։ Օրինակ՝* **Մինչ** *նա կմտածեր, թե ինչ պատասխանի Լաչինյանին, Հարությունն ասաց (Սխ, Հողը, 1)։ Մենք էլ էինք նստում այնքան, մինչև քունը հաղթեր, գլուխներս հենեինք քուրսու թախտին, մինչև տատը բոթեր մեզ, զարթնեցներ ու վեր կացներ (Աբ, Նամակ ռուսաց թագավորին)։ Դեռ մեր ժողովուրդը չի ասել իր խոսքը, ուստի նա չի մեռնելու իբր ազգ,* **մինչև որ** *չասի իր խոսքը (ՎՏ)։*

§ 757. **Հենց, հենց որ, թե չէ** *շաղկապները ցույց են տալիս, որ գլխավոր նախադասությամբ արտահայտված գործողությունը, երևույթը անմիջապես հաջորդում է երկրորդական նախադասությամբ արտահայտված գործողությանը, երևույթին։ Օրինակ՝ Հեռվից իրենց մորը տեսնում են թե չէ, երեք աղջիկն էլ կանչում են (ՀԹ, Կիկոսի մահը)։* **Հենց որ** *շրջանից մի օր բացակայում եմ, անպայման մի օյին պիտի խաղան գլխիս (Սխ, Հողը, 1)։*

Այս խմբին են հարում ժամանակի **որ, երբ որ** *շաղկապները, որոնք ևս ցույց են տալիս գերադաս նախադասության գործողության հաջորդելը ստորադաս նախադասության գործողությանը, միայն այն տարբերությամբ, որ* **որ, երբ որ** *շաղկապների մեջ չկա նշված մյուս շաղկապներին հատուկ հաջորդելու անմիջականության իմաստը։ Օրինակ՝ Ախո՛ն, որ մեծանաս, ի՞նչ ես դառնալու (Աբ, Բահ՛ն, Բահ՛ն)։*

Երբ որ *մեծանաս, կարդաս երգերս,*
Վերքերիս համար չտխրես, չլաս,

Կորած կլինեն արդեն վերքերս,
Երբ nr, իմ բալի՛կ, երգերս կարդաս (ՀՇ)։

Հնարավոր է, որ առանձին դեպքերում, պայմանավորված գերադաս նախադասության բայ-ստորոդյալի ժամանակով, նշվի գերադասի գործողության, եղելության նախորդելը ստորադաս նախադասությամբ արտահայտված գործողությանը, եղելությանը։ Օրինակ՝ Երբ nr մերոնք մտան քաղաք, Թշնամին այն արդեն Թողել էր ու նահանջել։

Այս շաղկապները կարող են նաև արտահայտել գործողությունների միաժամանակություն։ Օրինակ՝ Երբ nr (որ) մենք բարձրանում էինք Աբովյանով, նրանք իջնում էին։ Երբ nr արևը մայր մտնելու վրա էր, կոլտնտեսականները ավարտում էին օրվա աշխատանքը։ Երբ nr առաջին հերթի աշակերտները դուրս էին գալիս դպրոցից, երկրորդ հերթի աշակերտները դպրոց էին մտնում։

Այս և նման փաստերը ցույց են տալիս, որ թեև շաղկապները խմբավորում ենք (տարժամանակյա՝ իր երկու ենթատեսակներով և համաժամանակյա), բայց և այնպես նրանք կարող են ունենալ այլ կիրառություններ ևս։

§ 758. Ինչ ժամանակի շաղկապը գերազանցապես այնպիսի ստորադաս նախադասություն է կապում գերադասին, որով արտահայտված գործողության կատարումից սկսվում է գերադաս նախադասության մեջ արտահայտված գործողության կատարումը։ Օրինակ՝ Ծրևում է՝ Ադան ինչ մորից ծնվել է, կուշտ չի կերել (ՔԲ, Ոսկե հովիտ)։ Ինչ նա եկել է մեզ մոտ, ամեն ինչ կարգավորվել է։

§ 759. Քանի շաղկապը հիմնականում ցույց է տալիս ստորադաս ու գերադաս նախադասությունների գործողությունների, եղելությունների միաժամանակություն։ Օրինակ՝ Քանի տղա եմ, էստեղ կաշխատեմ, կապրեմ (Իս., Համբերանքի չիբուխը)։ Շնորհակալ եմ քեզնից, անչափ շնորհակալ, պիտի օրհնեմ կյանքդ, քանի կենդանի եմ (Մուր., Գևորգ Մարզպետունի)։

Ժամանակի շաղկապների իմաստը հաճախ իր մեջ ունենում է նաև պայմանի որոշ տարր, բայց իհարկե, հիմնականը ժամանակի իմաստն է։

ՊԱՅՄԱՆԻ ՇԱՂԿԱՊՆԵՐ

§ 760. Պայմանի շաղկապներով կապակցվող ստորադաս նախադասությունն արտահայտում է գերադաս նախադասությամբ ցույց տրված գործողության, եղելության, արված որևէ դատողության պայմանը։ Պայմանի հարաբերություն արտահայտող շաղկապները են՝ եթե, թե, թե որ, որ, միայն թե, եթե միայն, նայած, նայած թե, բանի դեռ *և այլն։*

Պայմանի շաղկապներն իմաստային ու կիրառական տեսակետից տարբերվում են իրարից։ Ըստ որում, տարբերություններն արտահայտվում են թե՛ կիրառական ոլորտի և թե՛ պայմանի հարաբերության դրսևորման յուրահատկությունների մեջ։

Պայմանի շաղկապներից գործածության ամենալայն ոլորտ ունեցողը եթե-ն *է։ Ինչպես պայմանի մյուս շաղկապների, այնպես էլ* եթե-ի *գործածության դեպքում իրրև պայման ներկայացվող գործողությունը, երևույթը նախորդում է գերադաս նախադասությամբ արտահայտված գործողությանը, երևույթին։ Օրինակ՝ Անչափ գոհ կլինեի, եթե ինձ պատահեր մի այնպիսի վարժուհի (ՆԴ, Մահը)։*

Թե պայմանի շաղկապն իմաստով շատ մոտ է եթե-ին, *դրանց միջև տարբերությունն ավելի ոճական բնույթ է կրում.* թե-ն *ավելի հատուկ է ժողովրդա-խոսակցական լեզվին և գիտական, հրապարակախոսական խոսքի մեջ համարյա չի գործածվում։ Օրինակ՝ Կոտորվեք դուք... ինչ վայնասուն կհանեիք դուք խմբովի, թե այդ բանը ես չանեի (ՀԱՆԿՈ-ԱՊԵՐ)։ Ինչ կլիներ ծառի հալը, թե չլիներ մեր հով տալը (ՀԱՆԿՈ-ԱՊԵՐ)։*

Թե չծնվեր մեծ Կոմիտասն իմաստուն,
Հայ ժողովուրդն այսքան անուշ չէր լինի,
Թե չլիներ հայ ժողովուրդն աշխարհում՝
Կոմիտասն էլ այսքան անուշ չէր լինի (ՀՇ)։

Եթե միայն, միայն թե շաղկապները ևս պայմանի հարաբերություն են նշում և իրենց բաղադրիչ միայն բառով սահմանափակում ու մասնավորում են այդ պայմանը։ Այդ մասնավորման պատճառով պայմանն ավելի է շեշտում եթե միայն շաղկապը,

իսկ միայն թե-ի պայմանի իմաստն ունի զիջական որոշ երանգ։ Օրինակ՝ Իրավ է, այդ իմ մարդիկն էլ կարող էին անել, եթե միայն մարթել պետք լիներ (Ր, Սամվել)։ Սրա սովորեցնելն ինչ բան է որ... Կսովորեցնեմ, միայն թե ինչ որ ասեմ, պետք է լսես։ —Աչքիս վրա,— խոսք է տալիս գելը (ՀԹ, Ջարմանալի աշուղը)։

Ժամանակային որոշ երանգով, բայց հիմնականում պայմանի հարաբերության իմաստով կարող են գործածվել քանի, քանի դեռ շաղկապները. Տարօրինակ մարդ է, նա այրվում է, նա բորբոքվում է, քանի դեռ ճակատ է տալիս, քանի դեռ կռվում է այդ գորշ, անհրապույր քարերից քամելու ևս մի նյութ (ԲՎ, Լեռնեբի որդին)։

§ 761. Պայմանի հարաբերություն արտահայտելու համար կազմվում են մի քանի զուգադրական շաղկապներ, ինչպիսիք են՝ եթե... ապա, եթե... ուրեմն, եթե... ապա ուրեմն, թե... ուրեմն, թե որ... ուրեմն, թե որ... ապա ուրեմն և այլն։ Օրինակ՝ եթե նա գլխի նշանով է հայտնել իր անհամաձայնությունը, ապա ինքը չի տեսել, քանի որ հարսի երևսը ծածկված է եղել քողով (ԱԲ, Խալատուր Աբովյան)։ եթե նա լսել է այդպիսի բան, ապա ուրեմն խոհեմություն է անում մեր ամրոցը գալով (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Թե Ջամալյանն է զանգահարել, կանչել, ուրեմն, առաջին հերթին նրա մոտ պետք է գնա (ՔԹ, Ոսկե հովիտ)։ Թե որ այդ զգուշությունը վարձկանի անուն պիտի վաստակի ինձ համար, ապա ուրեմն այս վայրկյանից իսկ Բողնում եմ ես այս սրբությունները բախտի կամքին (Մուր., Գևորգ Մարզպետունի)։

ՊԱՏՃԱՌԻ ԵՎ ՀԻՄՈՒՆՔԻ ՇԱՂԿԱՊՆԵՐ

§ 762. Գերադաս նախադասության հետ պատճառի ու հիմունքի շաղկապներով կապվում են այնպիսի ստորադաս նախադասություններ, որոնք արտահայտում են գերադաս նախադասության բովանդակության իրականացման պատճառը, հիմունքը։

Պատճառի և հիմունքի շաղկապներն են՝ որովհետև, քանի որ, որ, չէ որ, մանավանդ որ, նամանավանդ որ և այլն։

Պատճառի և հիմունքի շաղկապներից ամենատարածվածներն են որովհետև-ը և քանի որ-ը, որոնք գործածվում են թե՛ պատճառի և թե՛ հիմունքի իմաստով, ըստ որում դրանցից առաջինին

ավելի շատ պատճառի իմաստն է հատուկ, երկրորդին՝ հիմունքի իմաստը։

Բերենք այս շաղկապների՝ պատճառի իմաստով կիրառությունների օրինակներ. Նրա դեմքը Շահյանը չկարողացավ տեսնել, որովհետև այդ կինը նայում էր դեպի դահլիճ (ՆԴ, Մահը)։ Սաքուլը երկար ժամանակ չէր համաձայնում նոր պարտք անելու, fանի որ արդեն բավական հին պարտքեր ուներ վճարելու (ՆԴ, Սաքուլն ուխտ գնաց)։

Ահա այդ նույն շաղկապների՝ հիմունքի իմաստով կիրառությունների օրինակներ. Բայց, իհարկե, չէի կարծում, թե կգաք, որովհետև նամակիս չէիք պատասխանել (ՆԴ, Մահը)։ Ձեր հայրը մեռած չէ, այլ կենդանի է դեռ, fանի որ ունի ձեզ պես զավակներ (ՂԱ)։ Բայց ինչպե՞ս կարող եմ ետ կենալ, fանի որ գործը վերաբերում է հարազատ եղբայրներիս փրկությանը (ՂԱ)։

Որ շաղկապը պատճառի և հիմունքի իմաստ արտահայտում է հատկապես ժողովրդա-խոսակցական լեզվում, որից և անցել է գեղարվեստական գրականությանը, մինչդեռ որովհետև-ր ավելի բուն գրական լեզվին հատուկ շաղկապ է և գործածական է թե՛ գեղարվեստական, թե՛ գիտական գրականության մեջ։

Որովհետև և որ շաղկապների ոճական տարբերության տեսակետից հետաքրքրական է հետևյալ փաստը։ Հ. Թումանյանի գեղարվեստական երկերում պատճառի հարաբերություններն արտահայտված են որ շաղկապով, և չկա որովհետև շաղկապի գեթ մի գործածություն։ Մինչդեռ, օրինակ, Շիրվանզադեի, Նար-Դոսի երկերում համապատասխան պատճառի ու հիմունքի հարաբերությունն արտահայտելու համար առաջնությունը բացահայտորեն տրված է որովհետև շաղկապին։ Դա, անշուշտ, բացատրվում է այդ հեղինակների լեզվառճական ընդհանուր ուղղվածությամբ ու բնույթով։

Բերենք որ շաղկապի նշված կիրառությունների օրինակներ. Ես, որ մի զարկով կարող եմ հազար շունչ կենդանի ջարդել, էլ ի՞նչ եմ էս անպիտան կնգա կողքին վեր ընկել (ՀԹ, Քաջ Նազարը)։ Որ այդպես է, լավ նայիր քեզ ու ինչքան կարող ես՝ շատ ապրիր (ԷՀ, Մերունին և ծովը)։

Մանավանդ որ, նամանավանդ որ շաղկապները պատճառի ու հիմունքի հարաբերության իմաստ են արտահայտում՝ հատուկ ընդգծելով որևէ տեսակետից կարևոր այս կամ այն անդամները։

Օրինակ՝ կպատմեմ քեզ դիտեցածներս, առանց որևէ մի բան թաքցնելու, մանավանդ որ ասում ես, թե իմ տված տեղեկությունները օգուտ պիտի բերեն գործին (Մուր., Գևորգ Մարզպետունի)։

Չէ որ շաղկապը պատճառի ու հիմունքի իմաստ է արտահայտում հարցական առոգանությամբ նախադասություններում. Նա իրեն միանգամայն կարդարացնի, չէ որ շատ բարեխիղճ է։ Համմտ. Նա իրեն միանգամայն կարդարացնի, fանի որ շատ բարեխիղճ է։

§ 763. Ժամանակակից հայերենում հազվադեպ գործածվում է fանզի շաղկապը խոսքին հռետորական երանգ, հանդիսավորություն տալու համար։ Օրինակ՝ Ես քեզ ներեմ... ես, որ վարդը կրծքիս չառա՝ քանզի վաղուց բացված էր նա (ՀՇ)։

Ինչ է քե հարադրական շաղկապը այնպիսի պատճառ կամ հիմունք է արտահայտում, որը խոսողը դիտում է իբրև ոչ կարևոր, ոչ բավարար՝ գլխավոր նախադասության մեջ արտահայտված գործողությունը կատարելու համար։

Եթե որդին տրտում երգով
Իր ծնողի մահն է սգում,
Աղաչում եմ, մի ընդհատեք,
Ինչ է քե նա... լավ չի երգում (ՊՍ, Աղաչում եմ)։

Դե որ հարադրական կազմությամբ շաղկապը պատճառի և մանավանդ հիմունքի իմաստով գործածվում է հատկապես ժողովրդա-խոսակցական լեզվում։

ՋԻՋԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

§ 764. Ջիջական շաղկապներն արտահայտում են զիջական իմաստ և այնպիսի ստորադաս նախադասություն են կազմում գերադասին, որի բովանդակությունից չի բխում գերադասով արտահայտված գործողությունը, իրողությունը, այլ վերջինս տեղի է ունենում հակառակ ստորադաս մասում արտահայտվածին։ Ժամանակակից հայերենի զիջական շաղկապներն են՝ թեև, թեկուզ, թեկուզև, թեպետ, թեպեան, չնայած, չնայած որ, փոխանակ և այլն։

Օրինակ՝ եղանակն անձրևային էր, անախորժ, մինչև անգամ ցուրտ, թեև օգոստոսը դեռ չէր վերջացել (Շիրվ., Չհուդի ականջը)։ Ահա այս գործի համար էր, որ մեր իշխաններն սկսան ինձ մեղադրել, թեպետև իրանք այդպիսի դեպքում տասնապատիկ ավելի չարիքներ են հասցրել (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Փոխանակ այս բոլորից հետո լռեք, դեռ համարձակվում եք... (ՔԹ, Ոսկե հովիտ)։ Դեռ կռում էին ու կոփում ռումբեր, Թեկուզ գիտեին՝ ուր պիտի ճամփեն (ԵՉ)։ Թեկուզև գեներալ չէ և ոչ էլ զինվորական, բայց քաղաքում ունեցած իր դիրքի և ազդեցության շնորհիվ ստացել է այդ պատվավոր հորջորջումը (ԵՉ, երկիր Նաիրի)։

Քննարկվող շաղկապները իմաստի տարբեր երանգներ ունեն։ Այս տեսակետից զիջական շաղկապներից առանձնանում է հատկապես փոխանակ բառը, որն արտահայտում է սպասելի գործողության փոխարեն մի այլ գործողության կատարելու հարաբերություն։ Օրինակ՝ Փոխանակ դասերը պատրաստի, ամբողջ օրը խաղում է բակում։

§ 765. Զիջական բոլոր շաղկապներից (բացի փոխանակ-ից) կարելի է կազմել զուգադրական շաղկապներ. այդպիսի զուգադրականների մյուս եզրը լինում է ներհակական շաղկապ, ինչպես՝ թեև... բայց, թեպետ... բայց, թեպետ... սակայն, թեպետ... այնուամենայնիվ, թեպետև... այնուամենայնիվ, չնայած որ... բայց, թեկուզ... բայց, թեկուզ... բայց և այնպես, թեև...բայց և այնպես, թեև... սակայն, թեպետ... սակայն։ *Օրինակ՝* Թեկուզ *մի շաբաթ էր անցել, բայց արդեն գլիրը բեզարել էր (ԱԲ, Մրոց)։ Մենք* թեպետ *վայելչագրության տեսրակի վրա գլխահակ ենք, բայց գիտենք, որ նա դեպի մեզ է գալիս (ԱԲ, Բրուտի տղան)։* Չնայած որ *Արամյանը խոսում էր իր կնոջ հետ, բայց չէր մոռանում պլենումը (ՔԹ, Ոսկե հովիտ)։* Թեպետ *իմ պատմության մեջ մեծ դեր չէ խաղում Միկիթ-բեկը, այսուամենայնիվ ես ավելորդ չեմ համարում ծանոթացնել ձեզ նրա անձնավորության հետ (Մուր., Չհաս է)։* Թեպետ *հեղինակը ամեն կերպ աշխատում է տգիտության աղաղակող այդ փաստը ներկայացնել իբրև մասնակի մի երևույթ... սակայն գրվածքի միջից հառնում է տիպական հայ քահանան իր մտավոր խեղճության ու ողորմելիության (ՀՆԳՊ, 2)։*

ՆՊԱՏԱԿԻ ՇԱՂԿԱՊՆԵՐ

§ 766. Նպատակի շաղկապները գերադաս նախադասության հետ կապակցում են վերջինիս նկատմամբ նպատակային հարաբերության մեջ գտնվող ստորադաս նախադասություններ։

Բարդ ստորադասական նախադասության մեջ նպատակային հարաբերությունը գերազանցապես արտահայտվում է որպեսզի, որ շաղկապներով. այդ իմաստով գործածվում են նաև միայն թե, ինչ է թե հարադրական կազմությամբ շաղկապները։

Որպեսզի և որ նպատակային շաղկապների կիրառական ոլորտի, ոճական տարբերությունների, ժողովրդա-խոսակցական լեզվի նկատմամբ ունեցող առնչության մասին կարելի է ասել այն, ինչ ասվել է պատճառի ու հետևանքի որովհետև և որ շաղկապների մասին։ Որպեսզի-ն բուն նպատակային շաղկապ է, հատուկ է մանավորապես գրական լեզվին և գործածվում է նրա բոլոր արտահայտություններում (գեղարվեստական գրականություն, գիտական գրականություն, հրապարակախոսություն և այլն. միայն չափածոյում նրա գործածությունը համեմատաբար սահմանափակ է), իսկ որ-ը ավելի ժողովրդա-խոսակցական ոճին է հատուկ։ Օրինակ՝ Առանց խոսքը վերջացնելու լռեց, որպեսզի այլևս չգրգռի որդուն (ՆԴ, Սաքուլն ուխտ գնաց)։ Կարում է ամբողջ օրը՝ վաղ առավոտից նստած, որպեսզի վերջացնի, տանի տա տիրոջը, մի քանի կոպեկ փող ստանա (ՆԴ, Հոգուն վրա հասավ)։ Միայն խնդրում է, որ իրեն մի ձի տա, մի քիչ ծախսի փող և ազատություն, որ գնա ճանապարհորդի, աշխարհք տեսնի (ՀԹ, Ճերմակ օձը)։

Միայն թե շաղկապով նշվում է նպատակի մասնավորումը, սահմանափակումը, և դրանով իսկ ընդգծվում է տվյալ նպատակը։ Օրինակ՝ Նա այժմ պատրաստ է ամեն բանի համար... ամեն ձևնաբկություն հանձն առնել, միայն թե յուր եղբայրը հայոց թագավոր լինի (Ր, Սամվել)։

Ինչ է թե-ն, թե ինչ է-ն այնպիսի նպատակի նախադասություն են կապում գերադասին, որին հատուկ կարևորություն չի տրվում, կամ այնքան էլ արժանի չի համարվում այդպիսի մի նպատակի համար այն գործողության կատարումը, որն արտահայտված է գերադաս նախադասությամբ։ Օրինակ՝ Հինգ հարյուր

կիլոմետր ճանապարհ գնաց, թե ինչ է ֆուտբոլի մի խաղ պիտի դիտի։ Երկու տարի անգործ մնաց, թե ինչ է անպայման քաղաքում պիտի աշխատի։ Շատ տարիներ հրաժարվում է իրեն տված բնակարանից, թե ինչ է քաղաքի կենտրոնում պիտի ստանա։

ՀԱՄԵՄԱՏՈՒԹՅԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

§ 767. Համեմատության շաղկապները գերադաս նախադասությանը կապում են այնպիսի ստորադաս նախադասություն, որով գերադասում արտահայտված գործողությունը, առարկան, հատկանիշը և այլն համեմատվում են մի այլ գործողությամբ, առարկայի, հատկանիշի հետ։

Համեմատության շաղկապներն են՝ **ասես թե, կարծես թե, ման, ման թե, ոնց, ոնց որ, ոնց որ թե, ինչպես որ, որպես թե, ինչպես, ասես, կարծես** *(վերջին երեքը ավելի ճիշտ շաղկապական բառեր են)։*

Այս շաղկապներով նշվող համեմատությունը երկու տարբեր բնույթ ունի՝ 1. համապատասխանության ու նմանության և 2. անհամապատասխանության ու տարբերության։

§ 768. Համապատասխանության ու նմանության հարաբերություն են արտահայտում **ասես թե, կարծես թե, ոնց որ, ոնց որ թե, ինչպես որ, ինչպես, ասես, կարծես, որպես թե** *շաղկապները։*

Համապատասխանության ու նմանության հարաբերության իմաստը այս շաղկապների մեծ մասի մեջ արտահայտվում է մոտավոր նմանության, թվացողության երանգով։ Այդ իմաստով կարող են գործածվել հետևյալ շաղկապները՝ **ասես թե, կարծես թե, ոնց որ, ոնց որ թե, որպես թե, ասես**։ *Օրինակ՝ Լավում էր մի հանգիստ ռիթմիկ շշուկ, ասես բնությունն էլ շնչում էր քնի մեջ (ՍԱ, Լեռնցիներ)։ Դադաղն էլ, ինքն էլ ծածկվեցին հանկարծ, Ասես թե բընաավ աշխարհ չէր եկած (ՀԹ, Դեպի անհունը)։ Թագուհին խորը շունչ քաշեց, որպես թե մի ճնշող ծանրությունից ազատված լիներ (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Ջարչարվեց, քոթոնը պոկեց ու, ոնց որ մարդը խտաի, խտաեց, բերավ թե վրես գցի (ՀԹ, Արջառոս)։*

Որոշ շաղկապներ գործածվում են ոչ թե մոտավոր կամ թը-

վացող, այլ իսկական համապատասխանություն արտահայտելու համար։ Օրինակ՝ Ոնց որ դու ինձ համար կարմիր ծաղիկը բերել ես ու ընկել փորձանքի մեջ, էնպես էլ ես պետք է ազատեմ քեզ էդ փորձանքից (ՀԹ, Կարմիր ծաղիկը)։ Այդ հանգած կրակն այժմ այնտեղ, հոգու խորքում, ծուխ էր արձակում այնքան թանձր ու ծանր և այնքան հեղձուցիչ, ինչպես վառված փայտի վրա ջուր թափելուց հետո (ՆԴ, Մահը)։

§ 769. Տարբերության ու անհամապատասխանության (երբեմն որոշ հակադրությամբ հանդերձ) համեմատություն են արտահայտում քան, քան թե շաղկապները։ Օրինակ՝ Երևի Ափխազիայի օրհորդը առավել գրավիչ և գորեղ էր, քան Սահակ Սևադայի աղջիկը (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Ավելի լավ է ազատ մեռնենք, քան ստրուկ ապրենք (ն. տ.)։

ՄԱԿԱԲԵՐԱԿԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

§ 770. Մակաբերական շաղկապներն են՝ **ուստի, ուրեմն, հետևաբար, հետևապես, ուստի և, ուրեմն և, և ուրեմն, այնպես որ:**

Մակաբերական շաղկապները շփման եզրեր ունեն թե՛ համադասական և թե՛ ստորադասական շաղկապների հետ։ Այնուամենայնիվ մակաբերական շաղկապների մեջ կա կախման հարաբերության իմաստ. նրանցով կապվող նախադասությունները լրացման և լրացյալի հարաբերության մեջ են գտնվում, և դա ավելի նկատելի է այն դեպքում, երբ այդ շաղկապները կապում են բարդ նախադասության բաղադրիչներ։

Նշված պատճառով մակաբերական շաղկապները չի կարելի անվերապահորեն համարել կամ համադասական, կամ ստորադասական։ Դասելով ստորադասական շաղկապների շարքը, մենք գտնում ենք, որ դրանք զգալի չափով ունեն նաև համադասական բնույթ։

Նրանցով այնպիսի նախադասություններ են միանում նախորդին, որոնց բովանդակությունը մակաբերվում, բխեցվում, բխում է նախորդից (երբեմն էլ՝ նախորդներից. այդ մասին՝ քիչ հետո)։ Այսպես՝ Եղանակն այս տարի շատ բարենպաստ է, ուրեմն պետք է սպասել, որ առատ բերք լինի։ Այս նախադասության երկրորդ

մասի բովանդակությունը բխեցվում է, մակաբերվում է առաջին մասից։ Այստեղ կա տրամաբանական հետևություն, եզրանակի հիման վրա արված եզրակացություն, նախադասության առաջին մասի բովանդակությունից մակաբերված մի դատողություն։ Ինչ խոսք, որ այդ հետևությամբ կամ եզրակացությամբ վերջին հաշվով նշվում է սպասելիք մի հետևանք, բայց վերջինս բոլորովին ետին պլան է մղված և հիշյալ տիպի փաստերի համար բնորոշը մակաբերական իմաստն է։

Բերենք օրինակներ՝ Բայց քո հոռետեսությունն ախր երևակայական է, լոկ մտավորական և բոնազբոսիկ, չունի իրական հիմք, ճեռևաբար և ոչ մի արդարացում (ՆԴ, Մահը)։ Երկուսը նայում էին դեպի հովիտը, այնպես որ չէր կարելի տեսնել նրանց դեմքը (ԴԴ, Վարդանանք, 1)։ Որ անգղները կովում են, ուրեմն գիշերս անձրև է գալու (Սխ, Հողը, 2)։ Երբ արագիլը տղմուտ հողերում այլևս գորտ չէր բռնում, ուրեմն ետ էին գնացել Արաքսի ջրերը (ԱԲ, Սև ցելերի սերմնացանը)։

ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ՇԱՂԿԱՊՆԵՐ

§ 771. Բացահայտման շաղկապներն են՝ այսինքն, այն է։

Բացահայտման (և ոչ միայն բացահայտման) շաղկապների քերականական բնույթը ճիշտ որոշելու համար ամենից առաջ պետք է ելնել այն բանից, թե ի՛նչ է ստորադասությունը, և ի՛նչ է համադասությունը, և ապա պարզել քննարկվող շաղկապների առանձնահատկությունն այդ տեսակետից։ Ստորադասական կապակցությունը, ի տարբերություն համադասականի, բնորոշվում է կապակցվող մասերից մեկի նկատմամբ մյուսի լրացական, քերականական կախման հարաբերությամբ։ Ուրեմն որտեղ ունենք քերականական լրացական հարաբերություն, այնտեղ էլ առկա է կապակցության ստորադասական եղանակը։ Սա վերաբերում է թե՛ նախադասություններին, թե՛ նախադասության անդամների կապակցությանը։ Բացահայտման շաղկապների միացրած բաղադրիչներից երկրորդը նախորդի նկատմամբ լրացական, հետևապես և ստորադասական հարաբերության մեջ է գտնվում։ Դա այդպես է թե՛ նախադասություններ և թե՛ նախադասության անդամներ կապակցելու դեպքում։ Այսպես՝ Մեր մասնագետներից կազմված արշավախումբը ուղևորվեց վեցերորդ աշխարհամասը, այսինքն (այն

է) *Անտարկտիդա*։ *Այստեղ* Անտարկտիդա *բառով բացահայտվում է, թե ո՛րն է «վեցերորդ աշխարհամասը», հետևապես և դրանց միջև կա լրացական հարաբերություն։ Դա ավելի ակնհայտ կերպով ցույց տալու համար բերված օրինակից հանենք շաղկապը։ Այդ դեպքում մենք ունենում ենք բացահայտչի և բացահայտյալի կապակցություն, որը լրացման և լրացյալի, այսինքն՝ ստորադասական կապակցություն է. Մեր մասնագետներից կազմված արշավախումբը ուղևորվեց դեպի* վեցերորդ աշխարհամասը՝ Անտարկտիդա։

Անկախ կապակցման միջոցներից (շաղկապ և բացահայտման հնչերանգ, որ գրության մեջ նշվում է բութով) վեցերորդ աշխարհամաս *և* Անտարկտիդա *բաղադրիչների միջև կա միևնույն հարաբերությունը՝ բացահայտման հարաբերությունը։ Իսկ դա էլ նշանակում է, որ այսինքն, այն է շաղկապները արտահայտում են բացահայտման հարաբերություն, իսկ վերջինս իր բնույթով ստորադասական է։*

Համանման հարաբերություն են արտահայտում այդ շաղկապները նաև նախադասություն կապակցելու դեպքում. տարբերությունն այն է, որ եթե վերը նախադասության անդամի բացահայտումը կատարվել է մեկ բառով, մեկ անդամով, ապա այս դեպքում կատարվում է նախադասությամբ։ Ինչպես՝ Հիանալի մտահղացում է, սիրելի՛ս, բայց արի տես, որ հիմա մեքենա չունեմ, այսինքն՝ վար անող տրակտորներ դեռ չեմ ստացել (Ա. Սեկ., Ոսկե վազերի մեջ)։ Մի շատ սովորական առավոտ նա զգաց, որ շրջապատի համար միանգամից դառնում է սովորական, այսինքն՝ ավարտում է հյուր լինելու շրջանը (Ն. տ.)։

Սակայն բացահայտման շաղկապները կապակցած մասերի սերտության տեսակետից զիջում են մյուս ստորադասական շաղկապներին, որով և մասամբ հեռանում են նրանցից։ Նշված հատկանիշի պատճառով էլ բացահայտման շաղկապները և մասնավորապես այսինքն շաղկապը գործածվում են նաև ինքնուրույն նախադասություններ կապելու համար։ Օրինակ՝ Ինչքան էլ ուրախ ու աղմկոտ լիներ, նա այնուհանդերձ իսկույն նկատում էր խոսակցի, առանձնապես հարազատի տրամադրության աստիճանը։ Այսինքն *հենց հեռախոսի մեջ լսելով քրոջ ձայնը, զգացել էր, որ նրա հետ մի անախորժ բան է պատահել (Ա. Սեկ., Ոսկե վազերի մեջ)։*

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ԽՈՍՔԻ ՄԱՍ

§ 772. Եղանակավորող բառերը տարբերվում են նախորդ բոլոր խոսքի մասերից նրանով, որ ոչ նյութական իմաստ ունեն, ոչ քերականական։ Նրանք վերաբերմունք արտահայտող բառեր են, բայց և որոշակիորեն տարբերվում են վերաբերմունք արտահայտող մյուս խոսքի մասերից՝ ձայնարկությունից։

§ 773. Եղանակավորող բառերի, իբրև առանձին խոսքի մաս, ինքնուրույնությունը որոշելու համար ամենից առաջ անհրաժեշտ է ցույց տալ նրանց և մակբայների տարբերությունը, որոնց շարքը դասվել են դարեր շարունակ։

Եղանակավորող բառերը, ի տարբերություն մակբայների, որոնք դրվում են հատկանիշ ցույց տվող բառի վրա հատկանիշի օբյեկտիվ հատկանիշ ցույց տալու համար, արտահայտում են խոսողի վերաբերմունքը։

Ահա եղանակավորող բառերի հիմնական առանձնահատկությունները ի տարբերություն մակբայների։

1. Եթե մակբայները ցույց են տալիս հատկանիշի օբյեկտիվ հատկանիշը, ապա եղանակավորող բառերը այս կամ այն երանգն են հաղորդում նախադասության մտքին, խոսողի վերաբերմունքն են արտահայտում այս կամ այն իրողության, առարկայի նկատմամբ։

2. Դա նշանակում է, որ եղանակավորող բառերը չունեն նյութական իմաստ (առարկայի ու հատկանիշի իմաստ), և դրանով նրանք հակադրվում են թե՛ մակբայներին և թե՛ նյութական իմաստ ունեցող մյուս խոսքի մասերին։

3. Եթե մակբայները դրվում են հատկանիշ ցույց տվող բառի վրա, ապա եղանակավորող բառերը դրվում են դերազանցական նախադասությունների, ինչպես և նախադասության այլ անդամների վրա, անկախ այն բանից, թե վերջիններս ինչ խոսքի մասով են արտահայտված։

4. Դրանցով պայմանավորված, եթե մակբայները կատարում են պարագայի դեր, որի տեսակը որոշվում է մակբայի իմաստային առանձնահատկությամբ, ապա եղանակավորող բառերը նախադասության անդամ չեն լինում։

§ 774. Եղանակավորող բառերը էապես տարբերվում են նաև ձայնարկություններից։ Ի տարբերություն ձայնարկությունների, բոլոր եղանակավորող բառերը առաջացել և առաջանում են նյութական իմաստ ունեցող բառերից, մինչդեռ ձայնարկությունների մեջ այդպիսի եզակի օրինակներ կարելի է գտնել։ Բայց դա ոչ թե սոսկ պատմական կազմավորման տարբերություն է, այլև խիստ կերպով արտահայտվում է այդ խոսքի մասերի այժմյան ձևային հատկանիշների մեջ հետևյալով։ Եթե բուն ձայնարկությունների ճնշող մեծամասնությունը կազմված է մեկ, երկու, երեք հնչյուններից (ա՛, օ՛, է՛, ո՛ւ, ի՛, բ՛, ա՛յ, օ՛յ, ո՛ւյ, է՛հ, օ՛հ, վա՛յ, վո՛ւյ, վա՛շ, վի՛շ և այլն), և, ինչպես երևում է, հայերենի նույնիսկ յուրաքանչյուր ձայնավոր կարող է ձևավորվել որպես ձայնարկություն, ապա եղանակավորող բառերը իրենց կազմի մեջ ունեն ձևույթներ, քանի որ ժամանակին (երբ դեռ եղանակավորող բառեր չէին) դրանցից էլ կազմվել են (իհարկե<ի-հարկ-ե, իրավ<իր-ավ, հարկավ<հարկ-ավ, կարծես<կարծ-ես և այլ), թեև այս ձևույթները այլևս չեն պահպանում իրենց նախկին իմաստն ու դերը։ Այստեղ կարևոր է նշել ձայնարկության, որպես այդպիսինի, կազմավորման ու դիտակցման գործում յուրահատուկ առոգանության բացառիկ դերը. մի առանձնահատկություն, որով ձայնարկությունները հակադրվում են եղանակավորող բառերին, ինչպես և մյուս խոսքի մասերին։

Իմաստային տեսակետից ևս դրանք տարբերվում են իրարից։ Ձայնարկությունները զգացական վերաբերմունք են արտահայտում, իսկ եղանակավորող բառերը՝ մտածական, դատողական վերաբերմունք։ Եվ դա ոչ միայն երևում է այդ երկու խոսքի մասերի ընդհանուր բնույթից, այլև բնականաբար արտահայտվում է նր-

բանց տեսակների մեջ։ Այսպես, եթե ձայնարկություններն արտահայտում են հիացմունքի, ուրախության, զարմանքի, ցավի, վշտի, զզվանքի և նման այլ վերաբերմունք, ապա եղանակավորող բառերը արտահայտում են, ինչպես ստորև կտեսնենք, հաստատում, ժխտում, երկբայություն և այլն, որոնք երևույթի, առարկայի նկատմամբ դատողական մոտեցման արդյունք հանդիսացող վերաբերմունք են։

Այսպիսով՝ եղանակավորող բառերը որոշակիորեն տարբեր են նաև ձայնարկություններից։

§ 775. Եղանակավորող բառերը այժմ էլ շարունակում են հարստանալ այլ խոսքի մասերի հաշվին։ Այդ կարգի փոխանցման փաստեր են հատկապես այն բառերը, որոնք, նայած կիրառության, թե՛ եղանակավորող բառ են և թե՛ պատկանում են այլ խոսքի մասի։ Այդպիսիք են՝ թող, ասես, չլինի՞ (նաև բայ են), ապա, ի միջի այլոց (նաև մակբայ են), մի (նաև արգելական հրամայական ձևավորող մասնիկ է, թվական, անորոշ դերանուն), անգամ (նաև գոյական է), իսկ (նաև շաղկապ է[60]) և այլն։

Բերենք այդ բառերի տարբեր խոսքի մասերի պատկանելը հաստատող ուղահեռ օրինակներ, որոնք վկայում են եղանակավորող բառերի և այդ խոսքի մասերի որոշ հարաբերակցությունը և անցումը մի խոսքի մասից մյուսին։

1. Թե կսիրես, թող ինձ հիմա ու գնա
   Ու ականջ դիր, մի օր դուռդ կը բախեմ (Իս.)։
2. Ազատություն,— գոչեցի,—
   Թող որտտա իմ գլխին
   Փայլակ, կայծակ, հուր երկաթ,
   Թող դավ դնե թշնամին (Մն)։

2. Նրանք հասել են ծովափ։ Երկու ճայ թռչում էին ծայրից,

---

60 Իսկ բառի եղանակավորման իմաստը չի ածանցվել իսկ շաղկապի իմաստից։ Դա հին հայերենի իսկ գոյականից ածանցված և նույնիսկ զրաբարում ունեցած իմաստն է, որ գործածվում է նաև այժմ։

մյուսներից առանձնացած, և նրանք ի միջի այլոց կրակել են (Իլ. Վենեզիս, Ճայերը)։

1. Բայց ես մշտապես վերհիշում եմ մի վսեմ վերածնունդ, որը դու ևս, անկասկած, չես մոռացել (Իս.)։

2. Ահա քեզ ձեռքս, ընկե՛ր թանկագին, սեղմի՛ր դու նորան անվախ անկասկած (Հ. Հով.)։

1. Ապա, սկսեք տեսնեմ (ԴԴ, Վարդանանք, 1)։

2. Կյանքը թաքցրել էր իր երեսը, փոփոխական դիմակներ էր հագել, ապա խենթացած դարբնի նման մուրճը աջ ու ձախ շարժել և ամեն ինչ փշրել, կոտորել, վայր թափել (ԿՋ, Նավը լեռան վրա)։

§ 776. Եղանակավորող բառերի և այլ խոսքի մասերի հարաբերակցության քննությունը ցույց է տալիս, որ թեև եղանակավորող բառերն ունեն այլ խոսքի մասերի հետ շփման որոշ եզրեր, ձևավորվում են այլ խոսքի մասերի հաշվին, բայց էապես տարբերվում են նրանցից, իրենց ուրույն տեղն ունեն խոսքի մասերի համակարգում, որպես առանձին խոսքի մաս։

Եղանակավորող բառերն արտահայտում են խոսողի մտածական վերաբերմունքը, որով եղանակավորվում կամ երանգավորվում են նախադասությունը, նրա որևէ անդամը:

Ժամանակակից հայերենի եղանակավորող բառերն են՝ իրոք, իրավ, իրավամբ, արդարև, իսկապես, ճիրավի, ճարկավ, հավաստյավ, արդյոք, աճուկշտ, անառարակույս, աճա, աճավասիկ, գուցե, միգուցե, միթե, թերևս, նույնիսկ, անգամ *(Անգամ նա դիտե այդ մասին)*, ինչևէ, ինչևիցէ, կարծեմ, կարծես, ասես, գոնե, միայն, լոկ, մանավանդ, նամանավանդ, հատկապես, ևս, խոմ, այո, ոչ, իբր, հենց, թող (Թող *դավ դնե թշնամին)*, դե, մի (Մի *արի այստեղ)*, չլինի՞ (Չլինի *դու ևս ասել)*, նույնիսկ, գեթ, սոսկ, այնուամենայնիվ, ապա, ճապա:

Կան նաև բաղադրյալ ու նկարագրական եղանակավորող բառեր՝ միևչև իսկ, միևչև անգամ, իսկ և իսկ, իբր թե, իբրև թե, իսկապես որ, ինչ էլ լինի, ինչ խոսք, առանց այլևայլության, ոլ գիտի, ըստ երևույթին, ինչ գնով էլ լինի, դժվար թե, հազիվ թե, ուր մնաց թե (ուր մնաց, էլ ուր մնաց), ճիշտ որ, ճշմարիտ որ և *այլն։*

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԿԱԶՄՈՒԹՅԱՆ

§ 777. Եղանակավորող բառերը ըստ կազմության կարելի է բաժանել հետևյալ տեսակների՝ պարզ, ածանցավոր, բերականական ձևերից առաջացած, բարդ և նկարագրական։

ՊԱՐԶ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

§ 778. Պարզ եղանակավորող բառերը կամ կազմված են մեկ արմատից, կամ, համենայն դեպս, այժմ գիտակցվում են որպես այդպիսիք և ժամանակակից լեզվամտածողությամբ չեն բաժանվում բաղադրիչների։ Դրանք են՝ այո, ոչ, ին, խոմ, իբր, իսկ, անգամ, հենց, թող, նապա, ապա, մի, դե, աճա և այլն։

Եղանակավորման իմաստը այո, ոչ, ին, խոմ, իբր, հենց, դե բառերի միակ իմաստն է։ Իսկ, անգամ, ապա, մի, թող բառերն ունեն նաև այլ խոսքի մասային իմաստ, հետևապես և մտնում են նաև այլ խոսքի մասի մեջ։ Չնայած այս բառերը հանդես են գալիս նաև այլ իմաստներով, որպես այլ խոսքի մասերի պատկանող բառեր, բայց որովհետև եղանակավորման իմաստը տարբեր է նրանց մյուս խոսքի մասային իմաստների համեմատությամբ և ոչ թե վերջիններիս երկրորդական առումը, ուստի և պետք է այդպիսի իմաստ ունենալը համարել նրանց՝ եղանակավորող բառերի շարքը դասելու բավարար հիմք։

ԱԾԱՆՑԱՎՈՐ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

§ 779. Գոյություն չունեն եղանակավորող բառեր կազմող հատուկ ածանցներ, բայց կան ածանցավոր եղանակավորող բառեր։ Այդ բառերը իբրև բառական ամբողջական միավորներ (այդ թվում և իրենց ածանցներով) այս խոսքի մասի մեջ են մտել այլ խոսքի մասերից։

Ածանցավոր եղանակավորող բառերի քանակը մեծ չէ։ Դրանք են՝ անշուշտ, անտարակույս, անկասկած, անպատճառ, իսկապես, հատկապես, հավանաբար, հավանորեն։ Առաջին չորս բառերը կազմության տեսակետից բնորոշ են ան նախածանցով, ո-

րով կազմվող բառերը գերազանցապես ածականներ են, մասամբ՝ մակբայներ։ Ուրեմն ածանցավոր եղանակավորող բառերը ածականական ու մակբայական ծագում ունեն։ Անշուշտ, անպատճառ *բառերը գրաբարում ածական և մակբայ են եղել,* անկասկած-*ը՝ ածական,* անտարակույս-*ը՝ մակբայ։ Մակբայական ծագում ունեն նաև իսկապես, հատկապես, հավանաբար բառերը։ Աստիճանաբար կորցնելով իրենց նյութական իմաստը՝ դրանք վերածվել են խոսողի վերաբերմունքն արտահայտող բառերի՝ եղանակավորող բառերի։*

ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

§ 780. Թեև մակբայների մեջ էլ կան քերականական վերջավորություններով կամ, որ միևնույն է, բառահարաբերական ձևավոյթներով կազմված շատ բառեր, բայց եղանակավորող բառերն այդ հարցում ևս ունեն զգալի յուրահատկություն։

Մակբայների կազմության մեջ, ինչպես տեսանք, ամենաակտիվ դեր կատարող հոլովներն են բացառականը և գործիականը։ Եղանակավորող բառերի կազմավորման հարցում բացառականը պասիվ է (այդ հոլովաձևից ունենք միայն մեկ եղանակավորող բառ՝ իհարկե), ակտիվ է միայն գործիականը, որից կազմված են հետևյալ եղանակավորող բառերը՝ արդարե, հարկավ, հավաստյավ, իրավ, այնուամենայնիվ, այսուամենայնիվ, իրոք, կարծյոք *և այլն։*

Եղանակավորող բառերի մի զգալի մասը կազմավորվել է բայերի թեքման ձևերից։ Այդպիսիք են՝ կարծեմ, կարծես (կարծես թե), կարծեք, ասես (ասես թե), գուցե, միգուցե, չլինի (չլինի թե), երևի *և այլն։*

Բայական բաղադրիչը դեր է կատարում նաև շարահյուսական կապակցություններից առաջացած ինչևիցե, ինչևէ *կցականներում, հանձինս* ինչ, է *բաղադրիչների, ինչպես և մի քանի նախադրական կապակցություններում, որոնցով ևս խոսողի վերաբերմունքն է արտահայտվում. այդպիսիք են՝* ինչ էլ լինի, ինչ ունզում է լինի, ինչ գնով էլ լինի *և այլն։ Ինչպես երևում է, առավել ակտիվ դեր են կատարում բայի երկրորդ և երրորդ դեմքերը։ Առաջին դեմքի բայաձևերից կազմված եղանակավորող բառեր են՝* կարծեմ, խնդրեմ։

ԲԱՐԴ ԵՎ ՆԿԱՐԱԳՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

§ 781. Իսկական բարդությամբ կազմված եղանակավորող բառեր չկան։ Կցական բարդություններ են՝ աճավասիկ, թերևս, միգուցե, միթե, նույնիսկ։ Նույն բայի հաստատական և ժխտական ձևերի միացումով է կազմված կա–չկա եղանակավորող բառը։ Օրինակ՝ Կա–չկա դա Արտեմի տղի արածն է, իրիկունը ձին նըստած գնում էր էդ կողմերի վրա (ՎԱ, Լեռնային կածաններով)։

Եղանակավորող բառերի կազմության մեջ որոշ դեր է կատարում թե բառն իր թեական իմաստով։ Այդպիսի կազմություն ունեն, բացի միթե կցական բարդությունից, նաև շատ բաղադրյալ բառեր՝ կարծես թե, կարծեմ թե, հազիվ թե, ինչպես թե, դրժվար թե, երանի թե, իբր թե, իբրև թե, ինչ է թե և այլն։ Սրանց բաղադրիչներն առանձին են, չնայած թե բաղադրիչն առանձին չեշտ չունի։

Բաղադրյալ եղանակավորող բառերի քանակը դրանով չի սահմանափակվում։ Այդպիսիք են նաև՝ մինչև անգամ, մինչև իսկ, ինչ խոսք, ինչպե՞ս չէ և այլն։

§ 782. Կան այնպիսի բառակապակցություններ, որոնք թեև չեն վերածվել մեկ բառի, բայց և այնպես իմաստով հարում են եղանակավորող բառերին, նրանցով արտահայտվում է խոսողի վերաբերմունքը այս կամ այն իրողության, երևույթի, առարկայի նկատմամբ։ Այդպիսիք են՝ ինչ էլ լինի, ինչ ուզում է լինի, ինչ գնով էլ լինի, ինչ գնով ուզում է լինի, առանց այլևայլության, ըստ երևույթին, ուր մնաց թե, ուր է (էր) թե, ով գիտի, ով իմանա և այլն։

Օրինակ՝ Լսիր, ես վճռել եմ ամուսնանալ օրիորդ Մարկոսյանի հետ և ամուսնանալու եմ... ինչ էլ լինի (Շիրվ., Քառս)։ Ըստ երեվույթին խոսում էր ակադեմիայի պրեզիդենտի քարտուղարի հետ (ԲՎ, Լեռների որդին)։ Ուր էր թե լոր լինեի, Քար, սար ու ձոր լինեի, Ոչ թե սիրույդ վանդակում Այսպես մոլոր լինեի (ՀՇ)։ Մրգ չի հասնում միանգամից, ուր մնաց թե՝ խնդրքանան, Ջուլգ չեն կազմում միանգամից, ուր մնաց թե՝ երեքանան (ՊՍ, Միանգամից)։ Ով իմանա, Մասիս սարը քանի գարուն է տեսել (ՀՇ)։

Դժվար է թվարկել նկարագրական բնույթի բոլոր եղանակավորող բառերը, որոնք այժմ էլ շարունակում են կազմվել և հարըստացնել եղանակավորող բառերի կազմը։

Նկարագրական բառերը արտահայտում են այն նույն բնույթի վերաբերմունքներ, ինչ որ մյուս եղանակավորող բառերը։ Սակայն նկարագրական եղանակավորող բառերն իրենց բառակազմի մեջ եղած բաղադրիչների իմաստային երանգների շնորհիվ հաճախ արտահայտում են այնպիսի նրբերանգներ, որպիսիք չկան համապատասխան մեկ բառական միավորով արտահայտված եղանակավորող բառի մեջ։ Այդ է պատճառը, որ ժամանակակից հայերենն անընդհատ հարստանում է այդպիսի կազմություններով։ Իսկ խոսքի ճշգրտությունը և դրա համար լեզվական միջոցների հայթայթումը միշտ ուղեկցել և ուղեկցում է լեզվի զարգացմանը և ծառայում իբրև լեզվի զարգացման կարևոր ազդակ։

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ԸՍՏ ԻՄԱՍՏԻ

§ 783. Եղանակավորող բառերն իմաստային տեսակետից բազմազան են. նրանցով արտահայտվում է խոսողի տարբեր վերաբերմունք՝ հաստատական, ցուցական, երկբայական, սաստկական, սահմանափակման, կամային, զիջական, ժխտական, բաղձանքի։

ՀԱՍՏԱՏԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

§ 784. Հաստատական եղանակավորող բառերը խոսողի հաստատական վերաբերմունքն են արտահայտում տվյալ երևույթի, գործողության և այլնի վերաբերմամբ։

Հաստատական եղանակավորող բառերը ժամանակակից հայերենում համեմատաբար շատ են՝ արդարև, իսկապես, իսկապես որ, իճարկե, ճարկավ, հավաստյավ, իրոք, իրավ, իրավ որ, ինչպես չէ, ինչ խոսք, իսկ և իսկ և *այլն։*

Օրինակ՝ Արդարև *նրա համար կորուստն այնքան մեծ չէր, որքան իր եղբորը հանձնված ծրարի բովանդակությունը (Շիրվ., Քառս)։* Ո՛չ, իճարկե, *կարող է քեզ կործանել (ԵՉ)։* Իսկապես որ *նոր պիտի խոսեին սրտանց (ԴԴ, Երկու եղբայր, երկու քույր)։* Իսկ և իսկ, *հենց այդպես եղած կլինի (ՎԱ, Սևանի ափին)։* Ինչ խոսք, *որ խոշոր նշանակություն է ունեցել այն, որ այդ ներկայացման մեջ Սիրանույշին շրջապատել էին հմուտ արվեստագետներ (ՌՉ, Սիրանույշ)։*

§ 785. Հաստատական եղանակավորող բառերի շարքը պետք է դասել նաև անպատճառ, անշուշտ, անկասկած, անտարակույս բառերը, որոնք հաստատման հետ միաժամանակ հաճախ անխուսափելիության իմաստ են արտահայտում։ Օրինակ՝ Նա կգա, անպատճառ կգա (Ր, Ղարիբ մշեցին)։ Մեզ գրեթե ոչինչ չի հասել ոչ հեթանոսական գրականությունից, ոչ էլ այն գրականությունից, որ անտարակույս գոյություն է ունեցել (ՎՏ, Հայ գրականության գալիք օրը)։ Անշուշտ մի խոշոր պատճառ կա (Շիրվ., Քառս)։

Հաստատականների շարքը պետք է դասել նաև այո բառը, որը գործածվում է թե՛ առանձին և թե՛ նախադասության հետ միասին՝ հաստատելով նախադասության միջոցով ներկայացված իրողությունը, երևույթը։ Օրինակ՝ —Ասա, ի՞նչ պարզվեց։ Քննեցի՞ք... — Այո,— խոսեց Օսեփը կես բերան (ՍՋ, Հեղկոմի նախագահը)։ — Քեզնից թուլլտվություն վերցրե՞լ են։ — Այո՛, վերցրել են (ՍԽ, Հողը, 2)։ — Մի ինստիտուտ ավարտե՞լ ես։ — Այո՛, ավարտել եմ (ՍԽ, Հողը, 1)։

Ոչ միայն այո բառը, այլև հաստատական մյուս եղանակավորող բառերը կարող են գործածվել իբրև պատասխանական բառ, որով խոսողը հաստատում է խոսակցի այս կամ այն միտքը։ Օրինակ՝ —Իսկ Սիրանածինը ընդունո՞ւմ է լրացումը... — Իհարկե, իշխա՛ն (ԴԴ, Վարդանանք, 2)։ — Լավ, մի՞թե ոչինչ չես տեսնում այդ թերակղզու վրա։ — Ինչպե՛ս չէ, մի լեռ եմ տեսնում (Ժյուլ Վեռն, Ուղևորություն դեպի երկրի կենտրոնը)։

§ 786. Հաստատական վերաբերմունք է արտահայտվում նաև մի շարք կապակցությունների միջոցով, որոնք կամ նկարագրական կազմություն ունեցող եղանակավորող բառեր են, կամ այդպիսիք դառնալու ուղու վրա են կանգնած։ Դրանք են՝ ինչ էլ լինի, ինչ ուզում է լինի, ինչ գնով էլ լինի, առանց այլևայլության, առանց այլևայլի և այլն, որոնց մեծ մասն ունի դիջական իմաստի շատ թույլ երանգ։ Օրինակ՝ Ջինա՛ր, այս գիշեր, ինչ գնով էլ լինի, մենք ամբողջ խորդենին պետք է քաղենք (ՔԹ, Ոսկե հովիտ)։ Բայց ինչ էլ լինի, պետք է օգտագործել բոլոր հնարավորությունները (ԳՍ, Թեհրան, 2)։ Մեր խմբագիրներն ու հրատարակչական մարմինները պետք է լինեն զգոն և բանիմաց, շնորհունակներին քաջալերեն... միաժամանակ փակեն անկոչների, ինչ գնով ուզում է լինի բանաստեղծ դառնալու մարմաջով բռնվածների մուտքը գրականության մեջ (լրագիր)։

Մանոթ.— Առանց այլևայլության, առանց այլևայլի *կապակցությունները եղանակավորելու դեր են կատարում հատկապես այն դեպքում, երբ գործածվում են բայի ապառնի ժամանակների հետ։ Երբ դրանք գործածվում են բայի անցյալի ժամանակների հետ (անցյալ կատարյալ, վաղակատար, անցյալի վաղակատար), սովորաբար ունենում են մակբայական իմաստ, թեև ոչ անխառն. նրա մեջ արդեն զգացվում է եղանակավորման որոշ երանգ։ Օրինակ՝ Հանկարծ մի շատ հաճելի գլխապտույտ զգաց և առանց այլևայլի առաջարկեց Աստղիկին իր կինը դառնալ (ԴԴ, Յավաճ սեր)։ Այստեղ* առանց այլևայլի *կապակցությունը մակբայական իմաստ ունի և ձևի պարագա է։*

ՅՈՒՅԱԿՍԱՆ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

§ 787. Հայտնի է, որ լեզվի մեջ կան ցուցական իմաստ ունեցող շատ բառեր, ինչպես, օրինակ՝ ցուցական դերանունները։ Դրանք կամ առարկա են ցույց տալիս, կամ առարկայի հատկանիշ կամ գործողության հատկանիշ և քանի որ ոչնչեն նյութական իմաստ, ուստի նախադասության անդամ են լինում[61]*։ Մինչդեռ այդպիսին չէ եղանակավորող բառերի ցուցականությունը։ Սրանց մեջ չկա նյութական իմաստ, այսինքն՝ ո՛չ առարկայի և ո՛չ հատկանիշի իմաստ, որի հետևանքով չեն կարող ուղղակիորեն կապակցության մեջ մտնել նախադասության որևէ անդամի հետ՝ իբրև լրացում կամ լինել լրացյալ և ընդունել լրացում, այլ մնում են որպես խոսողի կողմից, եթե կարելի է ասել, անխառն, աննյութական ցուցականություն արտահայտող բառեր։*

Ցուցական եղանակավորող բառերն են՝ ահա, ահավասիկ։ Այս բառերը հավասար գործածություն չունեն ժամանակակից հայերենում։ Ահա-ն ավելի լայն տարածում ունի, իսկ ահավասիկ բառը որոշ գրքայնության երանգ ունի և հնաբույր է, որի պատճառով էլ համեմատաբար քիչ է գործածվում։

Ցուցական եղանակավորող բառերը ցույց են տալիս՝

1. Առարկա, որ գտնվում է խոսողի մոտ. ինչպես՝ Կանգնե-

61 *Մասնակի յուրահատուկ կիրառություններ տվյալ դեպքում նկատի չունենք, երբ որոշ դերանուններ առանձին կիրառություններում նախադասության անդամ չեն լինում, ինչպես՝ Այդ մենք ենք գալիս՝ Մաշված բաճկոններ, յուղոտ ու մրոտ (Շ. Կուրդինյան)։ Ո՛չ, այս ինչ աննման ծաղիկներ են բացվել պուրակում (ԱՍ, Ոսկե մեղալ)։*

ցին ահա այս թթենու տակ (ԲՎ, Լեոների որդին)։ **Ահավասիկ** *ցուցակը (ԴԴ, Վարդանանք, 1)։* **Ահա** *երեանը։*

2. Գործողություն, երևույթ, որ տեղի է ունենում խոսելու պահին. Մարդկանց առաջ և քո առաջ **Ահավասիկ** *ինքս եմ բացում, Ինչ որ ունեմ—ինչ որ չունեմ իմ հոգու մեջ (ՊՍ, Մարդը ափի մեջ)։* **Ահա** *դարձյալ անձրև է տեղում։*

3. Գործողություն, երևույթ, որ տեղի է ունեցել խոսելուն նախորդող պահին, կամ տեղի է ունենալու խոսելուց անմիջապես հետո. Ես, ահա, բոլորովին ձրի պիտի ծառայեմ (ՆԴ, Մահը)։

4. Հենց նոր ասվածը կամ ասելիքը. Որոշեցի մոռանալ իմ անձը և նվիրվել հասարակաց բարվույն... Այս մտքով **ահա** *ոգեվորված ես եկա կաքավաբերդ (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ Ծանոթացա* **ահա** *թե ինչպես։ Մի օր անցնում էին փողոցով... (ՆԴ, Մահը)։*

5. Այնպիսի անձ, առարկա, երևույթ, որոնք ժամանակով, տարածությամբ հեռու են խոսողից, խոսելու պահից, բայց խոսողը կամ հեղինակը հատուկ ոճավորումով ներկայացնում է խոսակցին, ընթերցողին, կարծես թե ի տես։ Այս կիրառությունը լինում է հատկապես թվարկումների դեպքում. Հայ իրականությունը... ականավոր դերասանուհիներ շատ է տվել։ Անունների բավական մեծ շարք է դա, որ սկիզբ է առնում անդրանիկ հայ դերասանուհուց... Արուսյակ Փափազյանից. ապա գալիս է նրա գործընկցուհին՝ Երանուհի Գարա-գաշյանը, կամ **ահա** *մայրական ծով սիրո արտահայտիչներից առաջինը՝ Քեթևան Արամյանը։* **Ահա** *Սաթենիկ Ջմշկյանը, մի առաքինի հայուհի, որն իր նշանավոր ամուսնու և խանդավառ համախոհների հետ միասին հայ ազգային բեմի հիմքերն է դրել... Կամ* **ահա** *Քնարիկը, իսկապես մի տաղանդավոր աղջիկ, որ հազիվ ծլարձակած՝ գերեզման իջավ (ՈՉ, Սիրանույշ)։*

ԵՐԿԲԱՅԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

§ 788. Երկբայական եղանակավորող բառերը ցույց են տալիս խոսողի երկբայական, թեական վերաբերմունքը գործողության կատարման, այլև առարկայի, հատկանիշի եղելության նկատմամբ։ Այդպիսի իմաստ արտահայտող բառերը շատ են քանակով և տարբեր՝ իմաստային երանգներով։

Երկբայական եղանակավորող բառերը ըստ իմաստային բ-անդների բաժանում ենք հետևյալ երեք տեսակների՝ երկբայական-հավանական, երկբայական-անհավանական, երկբայական-հարցական:

§ 789. Երկբայական-հավանականության, թվացողության իմաստ են արտահայտում հետևյալ բառերը՝ կարծես, կարծեմ, կարծես թե, ասես, թերևս, երևի *և այլն: Դրանց երկբայական իմաստին զուգակցված է հավանականության, թվացողության որոշ իմաստ: Վերջին իմաստն էլ տարբեր չափով է առկա սրանց մեջ: Այսպես՝* թերևս, երևի *բառերի համեմատ մյուսներն ավելի պակաս հավանականություն են արտահայտում, նրանց իմաստը թվացողության ավելի զգալի երանգ ունի: Օրինակ՝* Կարծեմ հարյուր տարի կլինի՝ չեմ տեսել նրան (Կուպրին): Ես ձեզ կարծես թե տեսել եմ մի տեղ (ՆՐ, Մի օր աշնանը): Արմե՛ն, այստեղ կարծես խանութ կա, մի երկու տառեխ չե՞ս բերի (ԲՎ, Լեռների որդին):

Ծանոթ.— Ասես, կարծես, կարծես թե *եղանակավորող բառերի մեջ հաճախ առկա է լինում նաև համեմատության որոշ իմաստ: Օրինակ՝* Արևն ասես բոց էր թափում և ամեն ինչ խանձում (ՔԹ, Ոսկե հովիտ): Դարավոր կաղնին ասես մի ինչ-որ երգ էր մմմռում կանաչ քթի տակ (ՊՍ, Մարդը ափի մեջ): Աշնանային արևը մոխրագույն ամպերից երկչոտությամբ նայում էր, կարծես մրսում էր և սիրտ չէր անում դուրս գալ (Ն. տ.):

Թերևս, երևի *բառերի իմաստի մեջ թվացողության երանգը համեմատաբար ետին պլանի վրա է. այս դեպքում խոսողի վերաբերմունքի օբյեկտիվ կողմը ևս որոշակիորեն զգալի է, թեև դա վերջին հաշվով արտահայտվում է խոսողի վերաբերմունքի միջոցով: Համեմատենք այդ երկու ենթատեսակների եղանակավորող բառերով մեկական օրինակ. 1.* Կարծեմ վաղը նա գնալու է, *2.* երևի (թերևս) վաղը նա գնա: *Երկու նախադասություններում էլ ընդգծված բառերը երկբայական-հավանականության իմաստ են արտահայտում, չկա հաստատման վերաբերմունք՝ գալու գործողության նկատմամբ: Բայց կարծեմ բառի համար ավելի բնորոշ է խոսողի իմանալու կամ չիմանալու իմաստային երանգը, մինչդեռ* երևի, թերևս *բառերի համար ավելի բնորոշ է գործողության*

կատարման հաստատ լինելը։ Բերենք օրինակներ. Տղերք, այս գոռոցը երևի մի շատ հասարակ պատճառ ունի (ՎԱ, Սևանի ափին)։ Վաղը թերևս անձրև գա, էնտեղ երևի մարդիկ են ապրում (ՀԹ, Անտառի տնակը)։ Թիֆլիսում Աստղիկը շատ շուտով համբավի հասավ, իսկ Սիրանույշին, որը թերևս ավելի տվյալներ և իրավունք ուներ դրա համար, անհասկանալի պատճառներով պահում էին ստվերի մեջ (ՌՋ, Սիրանույշ)։

§ 790. Երկբայական-անհավանականության իմաստ են արտահայտում հետևյալ եղանակավորող բառերը՝ իբր, իբր թե, իբրև թե։ Օրինակ՝ Գուցե ճշմարիտ էին նրանք, որոնք իբր թե բաղնիսի ավազանների մեջ տեսել էին կանաչ գորտեր (ԱԲ, Եղբայրության ընկուզենիները)։ Ինչո՞ւ է լինելու։ — Իբրև թե հավատի համար (ԴԴ, Վարդանանք, 1)։

§ 791. Երկբայական-հարցական են՝ գուցե, միգուցե, չլինի, չլինի թե, արդյոք, միթե, ճո, խոմ բառերը, որոնք սովորաբար գործածվում են հարցական նախադասությունների մեջ, արտահայտելով խոսողի երկբայական վերաբերմունքը նախադասության մտքի կամ նրա որևէ անդամի վերաբերյալ։ Նրանցից յուրաքանչյուրն ունի մյուսներից տարբեր իմաստային երանգ։ Այսպես՝ գուցե, միգուցե եղանակավորող բառերի մեջ առկա է ենթադրության որոշ թույլ երանգ, իհարկե, հարցման, տարակուսանքի հետ միասին։ Օրինակ՝ Սկզբում վախեցավ, միգուցե Պետրոսը կնոջ գլխին փորձանք է բերել (Շիրվ., Քառս)։

Միթե, չլինի, չլինի թե բառերի մեջ երկբայական-հարցական երանգին ավելանում է անսպասելիության, զարմացական երանգը։ Օրինակ՝ Մի՞թե բժիշկներն այդպես հեշտ կարող են խաղալ իրենց հիվանդների կյանքի հետ. մի՞թե առանց զարհուրանքի նրանք կարող են նույնիսկ մտածել այդպիսի բաներ (ՆԴ, Աննա Սարոյան)։ Չլինի՞ դու արդեն եկել ես (ԴԷ)։ Չլինի՞ թե որևէ վիրավորական բան ասացի (ՆԴ, Մահը)։ Սրանք հաճախ գործ են ածվում ճարտասանական նպատակով։

Միթե բառի մեջ իմաստային այս վերջին երանգը՝ անսպասելիության երանգը, երբեմն խիստ կերպով շեշտվում է և մոտենում ժխտման իմաստին։ Օրինակ՝ Մի՞թե դու այդքան վախկոտ ես. բարձրացի՛ր (Ժյուլ Վեռն, Ուղևորություն դեպի երկրի կենտրոնը)։

Արդյոք-ը իմաստով մոտ է միթե բառին, միայն նրա մեջ ան-

սպասելիության, հարցականության երանգը համեմատաբար թույլ է։ Օրինակ՝ Դա երախտամոռություն չէ՞ արդյոք (Շիրվ., Քառս)։ Անգին քույրիկ, արդյոք հասկանո՞մ ես, թե ինչ է նշանակում այդ բանը (ՆԴ, Աննա Սարոյան)։

Հո, մանավանդ խոմ բառերը երկբայական-հարցական իմաստով գործածվում են հատկապես ժխտական կառուցվածքի նախադասություններում։ Խոսողն այդպիսի նախադասություններով ցանկանում է կամ ժխտել նախադասությամբ ներկայացվող երևույթը, կամ իմանալ նրա իսկությունը, ռեալ լինելը։ Օրինակ՝ Իմ թշնամին հո չե՞ս (ՀՔ, Գիքորը)։ Ես խոմ չեմ սպանում, բայց դու սպանում ես թռչուններին (Ր, Որսորդը)։ Նա քաղաքաժնում է, կովից հեռու են լինելու, խոմ քաղաքժինը չի՞ կովելու (ՀՔ, Մեծ տան զավակները)։

ՍԱՍՏԿԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

§ 792. Սաստկական եղանակավորող բառերը դրվելով նախադասության այս կամ այն անդամի կամ բառակապակցության վրա՝ շեշտում են այն, սաստկություն են հաղորդում նրան։

Սաստկական եղանակավորող բառերն են՝ **ճույնիսկ, անգամ, մինչև իսկ, մինչև անգամ, իսկ, մանավանդ, նամանավանդ** *և այլն։*

Սրանք կարող են դրվել նախադասության բոլոր անդամների վրա, անկախ նրանից, թե ինչ խոսքի մասով են արտահայտված դրանք։ Միայն իսկ բառն է, որ սովորաբար ստորոգյալի վրա չի դրվում, այլ դրվում է նախադասության մյուս անդամների վրա՝ ետադաս գործածությամբ։ Մյուս եղանակավորող բառերը որոշակի կայուն ետադասություն չունեն. գործածվում են թե՛ նախադաս և թե՛ ետադաս։ Օրինակ՝ Իսկ ահեղ որդին խելահեղ խմեց վերջին շիթն անգամ վերջին բաժակի (ՀՇ, Մոր սերը)։ Նա մինչև անգամ քրտնեց իր գիրուկ ուսերի վրա դրած ծանր ու ահավոր բեռան տակ (Շիրվ., Քառս)։ Երկրորդ անգամ ամուսնանալը նա մինչև իսկ մեղք է համարում (ՆԴ, Բարեբար և որդեգիր)։ Հալչում էին ամենակայուն մետաղներն իսկ (Ժյուլ Վեռն, Ուղևորություն դեպի երկրի կենտրոնը)։

Համեմատաբար սակավ դեպքերում սաստկական եղանակավորող որոշ բառեր կարող են վերաբերել ամբողջ նախադասությա-

նը։ Օրինակ՝ Մանավանդ, թող իմանան մի բան. ինքը շահագրգռված է միայն բարոյապես (ԲՎ, Լեռների որդին)։

ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

§ 793. Սահմանափակման իմաստ արտահայտող եղանակավորող բառերն են՝ գեթ, գոնե, լոկ, միայն, միմիայն և այլն։

Սրանք ավելի հաճախ արտահայտում են գործողությունների, հատկանիշների, առարկաների սահմանափակման իմաստ, հետևապես և այդ դեպքում կարող են դրվել նյութական իմաստ ունեցող բոլոր խոսքի մասերի, այլև տարբեր բառակապակցությունների վրա։ Օրինակ՝ Անշուշտ հետաքրքրական է գեթ ամենաընդհանուր գծերով հիշատակելու այդ զարգացման մի քանի կարևոր կետերը (ՎՏ, Հայ գրականության գալիք օրը)։ Նայի՛ր ինձ գեթ մի անգամ (Իս., Սիրտ վեպը)։ Դու լոկ Ջարենց ես, միայն Ջարենց (ԵՉ)։ Նա իր հոգու խորքում գոհ էր, որ մահը հեռացավ իրենից գոնե մի դար ևս (Իս., Անանդան և մահը)։ Շահեցիր լոկ ծաղր ու ծանակ միայնակ ցուցարարի պես (ՊՍ, Մարդը ափի մեջ)։

Խոսողի վերաբերմունքն այս կարգի եղանակավորող բառերի մեջ երբեմն այնքան էլ ընդգծված չէ, բայց, այնուամենայնիվ, կա։ Դա վերաբերում է մանավանդ, միայն, միմիայն, լոկ բառերին, իսկ գեթ, գոնե եղանակավորող բառերում խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը համեմատաբար շեշտված է։ Խոսողի կողմից սահմանափակման վերաբերմունքը դրսևորվում է հետևյալ ձևով։ Գործողությունների կատարման, հատկանիշների, առարկաների եղելության հարցում հնարավոր կամ, համենայն դեպս, ցանկալի շատ ելքերի վրա հույս չդնելով, կամ այդպիսի բոլոր ելքերի իրականացված չլինելը, անիրականանալի կամ ոչ անհրաժեշտ լինելը նկատի ունենալով՝ խոսողը սահմանափակվում է դրանցից մեկով, մեկ տեսակով կամ մի մասով, մի խոսքով՝ սահմանափակում է դրանց չափը (տե՛ս վերևի օրինակները)։

Երբեմն եղանակավորող բառով նշվում է արդեն գոյություն ունեցող որևէ սահմանափակում։ Օրինակ՝ Արտիստների խումբը Երևանում մնաց միայն մեկ շաբաթ։ Նման դեպքերում խոսողի վերաբերմունքը համեմատաբար թույլ է։ Համմտ. Եթե երկար ժամանակով հնարավոր չէ, գոնե մեկ շաբաթով արի։

ԿԱՄԱՅԻՆ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

§ 794. Մի քանի եղանակավորող բառեր արտահայտում են խոսողի կամքը գործողության կատարման կամ չկատարման վերաբերյալ։ Դրանք կարելի է կոչել կամային վերաբերություն արտահայտող եղանակավորող բառեր։ Այդպիսիք են՝ թող, դե, ճապա, ապա, մի *և այլն։*

Օրինակ՝ Թող կայծեր ցայտեն քո սմբակներից, թող շանթեր տեղան մեզ վրա վերից։ Թող վրադ բացեն հազար խոց ու վերք, թող քամին սուլի միշտ մահվան քայլերգ (Սվ, Կուվի երգ)։ Դե, դե, մեկ էլ շուռ տվեք (ԴԴ, Քարհատներ)։ Ապա գնա տես, սեղանի վրա կլինի լրագիրը (ՆԴ, Աննա Սարոյան)։ Ապա ասացեք տեսնեմ, ի՞նչ եք անցել ֆիզիկայից (ԳՍ, Թևհրան, 2)։ Իսկ ճապա սրա՞ն, որ ասես լինի առածի պարան. Հապա փորձ արա ու ցախ դիր վրան (ՊՍ)։

Բերված օրինակներում ընդգծված եղանակավորող բառերը ցույց են տալիս խոսողի կամքը գործողության կատարման վերաբերյալ։ Ինչպես ասվեց վերը, այդ բառերը նաև կարող են նշել խոսողի կամքը գործողության չկատարման վերաբերյալ։ Ինչպես՝ Թող դեռ չսկսեն նոր շենքի շինարարությունը, մինչև նախորդը լրիվ վերջացնեն։ Հապա մի՛ հուշեք նրան, տեսնենք կարո՞ղ է ինքնուրույն պատմել։ Քանի դեռ լրիվ չի առողջացել, թող աշխատանքի չգա։

Ինչպես երևում է բերված օրինակներից, կամային եղանակավորող բառերը իրենց իմաստային յուրահատկության պատճառով սովորաբար գործածվում են բայի ըղձական և հրամայական եղանակների հետ (հաստատական կամ ժխտական, նայած խոսողի նպատակին)։

Սակավ դեպքերում նախադասությունը կարող է ունենալ կառուցվածքային այլ յուրահատկություն և չունենալ այդ եղանակային ձևերով արտահայտված ստորոգյալ։ Օրինակ՝ Ապա, մի սրամարտ կարո՞ղ եք,— աշխուժացավ Ատոմը և դնաց դեպի տղաները (ԴԴ, Վարդանանք, 1)։ *Այստեղ նախադասությունը ըստ էության հրամայականի արժեք ունի. քերականական հատկանիշներով հարցական է, տրամաբանորեն հրամայականի դեր է կատարում, արտահայտում է խոսողի կամքը, թելադրանքը։*

Իբրև կամային եղանակավորող բառ դե֊ն ընդհանուր առմամբ նման է մյուսներին՝ թե՛ իր իմաստով, թե՛ կիրառական հատկանիշներով։ Այնուամենայնիվ այն որոշ չափով տարբերվում է մյուսներից. եթե մյուսները, ինչպես տեսանք վերը, ամեն տեսակի կառուցվածքային նախադասություններում գործածվելու տեսակետից ազատ չեն, ապա դե բառը համեմատաբար ավելի ազատ է այդ հարցում։ Օրինակ՝ Դե, մենք ճանապարհվում ենք։ Դե, քանի որ այդպես է, ի՞նչ կարող ենք անել։ Դե, էլ եղածը եղել է, ես թեկնածու եմ (ԴԴ, Նիգյար)։

Ինչպես կարելի է նկատել, դե բառը որքան իր կիրառական յուրահատկությամբ հեռանում է քննվող տեսակի մյուս բառերից, նշանակում է այնքան նրա մեջ կամային եղանակավորման իմաստը նվազում է։

Կամային եղանակավորող բառերը երբեմն գործածվում են առանձին, առանց դրվելու նախադասության վրա։ Այդ դեպքում խոսողը իր կամքը, թելադրանքն է հայտնում խոսակցին՝ կատարելու նրան հայտնի գործողությունը։ Օրինակ՝ Վարաժն ու Մարկոսը հանկարծ այլայլվեցին և խլելով Վահագնի ու մյուսի ձեռքից նժույգներ, պարանները հանեցին դեն շպրտեցին և թռան վրաները։ Անմիջապես երիտասարդացան կարծես... —Դե, ապա՞,— հրամայեց Վարաժը և թռավ։

Մարկոսը միջոց չտվեց. սլացավ հետևից ու մի ակնթարթում միացավ Վարաժին։ Սա կատաղի նայեց Մարկոսին, զայրացավ, որ նա հասավ իրեն և շարունակ աչքերը գամած նրա աչքերին՝ սպառնագին գոչում էր. — Դե՛... (ԴԴ, Վարդանանք, 1)։

ՁԻՋԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

§ 795. Այս եղանակավորող բառերն արտահայտում են խոսողի ջիջական վերաբերմունքը տեղի ունեցած կամ տեղի ունենալիք երևույթի, իրողության վերաբերմամբ։ Ջիջական եղանակավորող բառերն են՝ ինչևէ, ինչևիցե, ինչ որ է, համենայն դեպս, այնուամենայնիվ, այսուամենայնիվ, ինչ էլ լինի *և այլն։*

Օրինակ՝ Ինչևիցե, գլխավորն այն է, որ գիտենաք Ձեզ համար ծաղիկներ ենք քաղել *(ՀՔ, Նամակներից)։ Արամը ևս բոլոր առարկաներից հավասարապես ուժեղ չէ, բայց նա,* այնուամենայ֊

ձիվ 10-րդ դասարանի լավագույն աշակերտն է։ Ինչ էլ լինի, պարտավոր եք ինձ հետ դուք-ով խոսել (ՀՔ, Մեծ տան զավակները)։ Ինչ որ է, պահեք ձեր տանը, ձեզ պետք կգա (ԲՎ, Ինչպես է գալիս երջանկությունը)։

ԺԽՏԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

§ 796. Ժամանակակից գրական հայերենում որպես ժխտական եղանակավորող բառ հիմնականում հանդես է գալիս ոչ բառը, որը այդ հատատական հականիշն է։ Նրա պես ոչ բառը ևս գործածվում է թե՛ նախադասության հետ և թե՛ իբրև պատասխանական բառ՝ ստանալով նախադասության արժեք։

Նախ՝ առաջին գործածության մասին։

Ոչ եղանակավորող բառը հաճախ գործածվում է ժխտական քննության նախադասության հետ և ավելի է շեշտվում նրա ժխտումը։ Օրինակ՝ — Ո՛չ, այդ կողմերից չեմ գալիս (ՆԴ, Մահը)։ — Հասավ ժամը, որ անողորմ ճակատագիրը պիտի բաժանե մեզ միմյանցից։ — Ո՛չ, մենք չենք բաժանվի միմյանցից, ուր որ քեզ տանելու լինեն, ես էլ քեզ հետ կգամ (Ր, Սամվել)։

Ոչ ժխտական բառը հաճախ գործածվում է իբրև ժխտական պատասխանական բառ և այս դեպքում, ինչպես ասվեց, որպես կանոն ունի նախադասության արժեք։ Օրինակ՝ — Դու քեզ վիրավորվա՞ծ ես համարում։ —Ո՛չ (Ր, Սամվել)։ Նաղաշ.— Այն մեղքը, որով մեզ ես դատում, ինքդ չե՞ս արել։ Թոմաս.— Ո՛չ (ԴԴ, Դատաստան)։

Ոչ բառը կարող է գործածվել ոչ միայն երկախոսություններում, այլև մենախոսություններում՝ արտահայտելու համար ժխտական վերաբերմունք իր իսկ առաջադրած հարցին։

Եվ մի՞թե մարդիկ այստեղ չեն նայել
Երբեք հեռուներն այս լավ աշխարհի,
Ուր արևը բյուր հրաշք է վառել,
Որ մարդու հոգին խանդավառ, բարի՝

Գլխի մի անմար հիացքով չահել
Ամեն մի խոտի, ամեն մի քարի։
Ա՜խ, ո՛չ։
(ԵՉ, Դանթեական առասպել)։

Որպես ժխտական եղանակավորող բառ գործածվում է նաև չէ-ն, որն ունի բարբառային երանգ։ Օրինակ՝ — Խոստովանի՛ր, որ դու գյուղում վաշխառությամբ էլ ես պարապում։ — Չէ, այդ չեղավ, քույրի՛կ ջան (ՆԴ, Մահը)։ Միջակին էլ շատ մի հավատա... Միջակն էլ երես տալու բան չի։ Իսմայիլովը ձեռքը բարձրացրեց. —Չէ, չէ, չէ. միջակի հարցում զգույշ. գյուղի հիմնական դեմքը միջակն է (ԴԴ, Ռաշիդ)։

Բնավ, ամենևին բառերը հատկապես որպես պատասխան բառ գործածվելիս հարում են ժխտական եղանակավորող բառերին։ Օրինակ՝ — Դու սկսում ես ծաղրել։ —Բնավ (ԱԴ, Մրգաշատի լուսաբացը)։

ԲԱՂՁԱՆՔԻ ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

§ 797. Բաղձանքի եղանակավորող բառերն արտահայտում են բաղձանք, ցանկություն որևէ գործողության, երևույթի վերաբերյալ։ Դրանք են՝ **Երանի, Երնեկ, Երանի թե, Երնեկ թե, ուր է (էր) թե, ուր է (էր) և այլն։**

Օրինակ՝ Ա՜խ, ես երանի կայծակ լինեի (ՀԹ)։ **Երանի թե** *մարդու պակասը փողը լինի (ՀԹ, Քեֆ անողին քեֆ չի պակսիլ)։* **Երնեկ** *էսպես՝ անվերջ քեզ հետ—իմ կյանքի հետ լինեի. Հազար* **երնեկ** *դաշտում մենակ երկրնքի հետ լինեի (ՀԹ)։ Օ՜, թող վայելեն, ու* **երնեկ** *հանկարծ Իրենց երազից չզարթնեն ինձ պես (ՀԹ)։* **Ուր է թե** *մեր վարժուհիներն այդքան ինքնասիրություն ունենային (ՆԴ, Մահը)։*

Երնեկ, երանի *բառերը հաճախ գործածվում են տրական հոլովով դրված գոյականի, դերանվան, գոյականաբար գործածված բառերի վրա։ Օրինակ՝* **Երնե՛կ** *ծրտին, ճյուղի միջին, Ծլվլվլում է, թրթրտում (ՀԹ, Անիծած հարսը)։* **Երնեկ** *նրան, որ իր գործով կապրի անվերջ, անդադար (ՀԹ, Թմկաբերդի առումը)։*

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԽՈՍՔԻ ՄԱՍ

§ 798. Ձայնարկություններն ունեն բառական-բառակազմական և ընդհանրապես խոսքի մասային յուրահատկություններ, որոնցով տարբերվում են բոլոր մյուս խոսքի մասերից։ Ի դեպ, ձայնարկությունները իրենց բառական յուրահատուկ բնույթի պատճառով որոշ մասնագետների կողմից դուրս են թողնվել խոսքի մասերի համակարգից։ Սակայն, քանի որ խոսքի մասերը բառա-քերականական կարգեր են (և ոչ թե մասնավորապես քերականական), ուստի լեզվի մեջ եղած բոլոր բառերը մտնում են խոսքի մասերի մեջ, կազմում են խոսքի մասերի համակարգը։ Բառերի ձևային և իմաստային յուրահատկությունները չեն կարող հիմք հանդիսանալ դրանք խոսքի մաս չհամարելու համար, այլ միայն կարող են հաստատել տվյալ խոսքի մասի յուրահատկությունը, ի տարբերություն մյուսների։

Նախ այն մասին, թե ձայնարկություններն ինչո՞ւ են բառեր։

Բառն ունի երկու հիմնական հատկանիշ՝ ձևային կամ նյութական և իմաստային։ Ձևային կամ նյութական հատկանիշ ասելով նկատի է առնվում բառի հնչյունական կողմը, այսինքն այն, որ բառը կազմված է լինում հնչյունից կամ հնչյուններից։ Ինչ խոսք, այդպիսիք են նաև ձայնարկությունները, որոնք կազմված են մեկ հնչյունից (օ՜, ա՜, է՜ և այլն), կամ մեկից ավելի հնչյուններից (ա՜յ, օ՜խ, վա՜յ, ուխա՜յ և այլն)։

Ձայնարկություններն ունեն նաև իմաստ՝ ավարտված, վերջավորված իմաստ։ Ակնբախ է, օրինակ, ջա՜ն, ա՜խ, վա՜յ, ուխա՜յ հնչյունական կապակցությունների իմաստավոր միավորներ լինելը։ Դրանցից յուրաքանչյուրը հայերեն իմացողի համար ինչ-որ պատահական, անիմաստ հնչյունակապակցություն չէ, այլ նրա և

առհասարակ մեր լեզվի բառապաշարի անհրաժեշտ միավորները, հանրորեն ճանաչված ու գիտակցված, հայերենի մյուս խոսքի մասերի մեջ մտնող բառերից տարբեր իմաստ և տարբեր կիրառություններ ունեցող բառեր։ Մի շարք ձայնարկությունների՝ խոսքից դուրս մեկ որոշակի իմաստ չի կարելի վերագրել, քանի որ դրանք տարբեր դեպքերում գործածվում են տարբեր իմաստով։ Բայց այդ հանգամանքը վկայում է ձայնարկության ոչ թե իմաստից զուրկ լինելը, այլ բազմիմաստությունը։ Իսկ բառի բազմիմաստությունը լեզվի մեջ սովորական երևույթ է և տարբեր չափերով հատուկ է բոլոր խոսքի մասերին։

§ 799. Ձայնարկությունները կարելի է համարել սակավահնչյուն բառեր։ Նրանց մեծ մասը կազմված է կամ մեկ ձայնավորից, կամ մեկ ձայնավորից ու բաղաձայնից և կամ երկու բաղաձայնից ու մեկ ձայնավորից, ինչպես և երկու ձայնավորից ու մեկ բաղաձայնից։

Որպես ձայնարկություններ կարող են ձևավորվել բոլոր ձայնավորները՝ ա, է, ի, ու, ը, օ։ Օրինակ՝ Ա՛.— զարմանում եմ ես ճանաչելով նրան (ԵՉ)։ Է՛, գնո՞ւմ ես (ԴԴ, Վարդանանք, 1)։ Սիրվարդ.— Ի՛... դու էլ... քեֆ արա (ԴԴ, Դատաստան)։ Օ՛, ալեհեր պոետ, ինչ չեմ անշուշտ այստեղ դատապարտում (ԵՉ, Մանկություն)։ Թոմասը ձեռքիդ չէ՞. հուպ տուր սիրտը ու խոսքդ արա... Ը՛, ես ունենայի էդ նախշուն աչքերը... (ԴԴ, Դատաստան)։

Մեկ ձայնավորից ու մեկ բաղաձայնից կազմված ձայնարկություններ են՝ այ, էյ, օյ, ույ, աի, օի, ուի, ախ, իֆ, օֆ, ուֆ, ուխ, ույ, օն, վա, յա, հա, հե, հո, տո, ծո, ֆու, ֆի և այլն։

Շատ են նաև այն ձայնարկությունները, որոնք կազմված են երեք հնչյուններից՝ երկու բաղաձայնից ու մեկ ձայնավորից, կամ մեկ բաղաձայնից ու երկու ձայնավորից։ Այդպիսիք են՝ վայ, վախ, վահ, վույ, հայ, հույ, հեյ, հոյ, ջան, թուի, փուի, փահ, պահ, վաշ, վիշ, բիբ, օհո, էհե և այլն։

Իհարկե, սրանցով չի սպառվում ձայնարկությունների ցանկը։ Կան նաև չորս հնչյունից կազմված մի երկու ձայնարկություններ, չի բացառվում նաև, որ դրանք կազմված լինեն նույնիսկ ավելի հնչյուններից։ Սակայն ձայնարկությունների ճնշող մեծամասնությունը կազմված է երկու, երեք հնչյուններից՝ սրանց տարբեր դասավորություններով, ինչպես և մեկ հնչյունից։

Այսպիսով՝ սակավահնչությունը ձայնարկությունների ձևային հատկանիշներից մեկն է։

Այնուհետև, ձայնարկությունները սովորական ձևով չեն բաղադրվում ձևույթներից, այլև նրանց հատուկ չէ բառերի կազմության մեջ մտնելը։ Հայտնի է ձայնարկությունների մասնակցությունը սակավաթիվ անիսկական բարդությունների և հատկապես հարադրությունների կազմությանը. ինչպես՝ ախ ֆաշել, վայ տալ, ախ ու վախ ասել, ջան ասել։ Այսպիսի սակավաթիվ փաստերը, որոնք փոխանունության յուրահատուկ արտահայտություն են, կասկածի տակ չեն կարող առնել ձայնարկությունների հիշյալ յուրահատկությունը։ Ձայնարկությունները առաջանում, ձևավորվում են գերազանցապես հնչյունակապակցությունից կամ մեկ հնչյունից։ Խիստ հազվադեպ է նյութական իմաստ ունեցող բառը իմաստի մթագնումով ու փոփոխությամբ վերածվում ձայնարկության։ Ժամանակակից հայերենում այդպիսին է, օրինակ, ջան բառը։

Այնուհետև, այդպիսի հնչյուններն ու հնչյունակապակցությունները դժվար թե իմաստավորվեին և գիտակցվեին որպես բառ, եթե չունենային իրենց յուրահատուկ առոգանությունը։ Եվ իսկապես, ամեն բառ ունի բառական շեշտ, բայց ձայնարկությունների շեշտը, առոգանությունը բացառիկ նշանակություն ունի նրանց ձևավորման համար։ Այսպես՝ տուն, ես, հաց բառերը լինեն նախադասության մեջ, թե նախադասությունից դուրս, անկախ նրանից, թե ինչպիսի առոգանությամբ են արտասանվում, հասկացվում են որպես որոշակի իմաստ ունեցող բառեր։ Մինչդեռ, օրինակ, ա, ու, ի, ուխ, բա հնչյունները և հնչյունակապակցությունները առանց բացականչական առոգանության (ա՜, ո՜ւ, ի՜, ո՜ւխ, բա՜) չեն կարող գիտակցվել որպես բառ, այլ կլինեն սովորական հնչյուններ կամ հնչյունակապակցություններ առանց իմաստի։ Այնպես որ առոգանությունը ձայնարկության, որպես այդպիսինի, ձևավորման, գիտակցման հարցում խիստ կարևոր նշանակություն ունի։ Սա էլ ձայնարկությունների, որպես բառական միավորների, մյուս կարևոր հատկանիշն է։

§ 800. Այժմ՝ ձայնարկությունների իմաստային յուրահատկության մասին։

Ձայնարկությունները չունեն ոչ նյութական իմաստ, ոչ էլ քերականական կամ վերաբերական իմաստ, այլ խոսողի վերաբեր-

մունքն են արտահայտում։ Բայց խոսողի վերաբերմունքը տարբեր է լինում։ Ձայնարկությամբ արտահայտվում է խոսողի զգացական, ոչ դատողական վերաբերմունքը։

Պետք է նկատի ունենալ, սակայն, որ ձայնարկությունները խոսողի զգացական վերաբերմունքից բացի, արտահայտում են նաև կամային վերաբերմունք. դրանով խոսողը դիմում է մեկին, երբեմն էլ կենդանիներին՝ դեպի գործողության կատարում մղելու կամ այլ նպատակով։ Օրինակ՝ Բայց հենց էդ վայրկյանին, որտեղից որ էր, դուրս պրծավ մեր կատուն, վեր թռցրեց փոքրիկ ճուտը։ —Փի՛շտ, փի՛շտ,— վեր թռանք ամենքս, իսկ ծիծեռնակը սուր ծղրտոցով ընկավ կատվի ետևից (ՀԹ, Մայրը)։ Շամիր հե՛յ... գիվի բոլուկ է. չորս կողմս կտրել են... էրեխեն հետս է... Օգնեցեք հե՛յ... (ՀԹ, Գելը)։ Տո՛, եկե՛ք, եկե՛ք, կացին ախպերը կատաղել է (ՀԹ, Կացին ախպեր)։ Ա՛յ տղա, ինչի՞ ես էդպես ասում... (ՀԹ, Երկաթուղու շինությունը)։

Այսպիսով՝ **ձայնարկություններն այն բառերն են, որոնք արտահայտում են զգացական ու կամային վերաբերմունք, առանց** անվանելու դրանք:

Ձայնարկությունները որոշ չափով մոտ են եղանակավորող բառերին, բայց դրանց միջև կան էական տարբերություններ։ Եթե ձայնարկությունները զգացական, ոչ դատողական բնույթի բառեր են, ապա եղանակավորող բառերը, ընդհակառակն, դատողական բնույթի բառեր են։ Եղանակավորող բառերը, լինելով վերաբերմունք արտահայտող բառեր, միաժամանակ, իրենց տարբերությունից ձայնարկությունների, ճանաչողական ընդգծված դեր են կատարում՝ արտահայտելով հաստատում, ժխտում, հավանականություն, անհավանականություն, երկբայություն և այլն։

§ 801. Ձայնարկություններին են հարում նմանաձայնությամբ կազմված որոշ բառեր, որոնք նույնպես անվանումներ չեն հանդիսանում։ Այդպիսիք են կենդանիների արտաբերած ձայնի և առարկաների տարբեր տեսակի շարժումներից առաջացած ձայների մոտավոր հնչյունական վերարտադրությունները։ Այս բառերը ձայնարկություններին նման են նախ և առաջ իրենց ձևային հատկանիշներով՝ այդ թվում հնչյունային և առոգանական, իսկ իմաստային տեսակետից սրանք ձայնարկություններին հարում են

իրենց դատողական, մտածական հատկանիշի պակասով։ Այս կարգի բառերի մի զգալի մասը արտահայտվում է կրկնությամբ։ Այսպիսի բառեր են՝ ծի՛վ-ծի՛վ, կըլը՛կ... կըլը՛կ, եր՛ոռ-եր՛ոռ, զր՛զզ, բր՛զզ, տր՛զզ, վր՛զզ, ծուղրուղո՛ւ, ֆա՛ֆ-ֆա՛ֆ, միաո՛ւ, զրը՛նգ, չը՛խկ-չը՛խկ, ո՛ւ, չրա՛խկ, կոլո՛ւ-կոլո՛ւ, բր՛ոռ։

ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԻՄԱՍՏԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 802. Ձայնարկություններն ունեն իմաստային բազմազան նշանակություններ, առումներ։ Ըստ իրենց իմաստի բնույթի, ձայնարկությունները երկու ընդհանուր տեսակի են բաժանվում՝ 1. զգացում արտահայտող ձայնարկություններ, 2. կամային վերաբերմունք արտահայտող ձայնարկություններ։

ԶԳԱՑՈՒՄ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 803. Ձայնարկությունների այս տեսակը ավելի հարուստ է և՛ իմաստային բազմազանությամբ, և՛ քանակով, քան թե մյուս տեսակը։ Այդպիսի ձայնարկություններ են՝ վա՛յ, վո՛ւյ, վա՛հ, օ՛յ, ո՛ւյ, օ՛հ, է՛հ, ա՛խ, ո՛ւֆ, ի՛ֆ, ա՛, ֆո՛ւ, ֆի՛, վա՛խ, չա՛ճ, ուխա՛յ, օխա՛յ, ֆո՛ւճ, փա՛հ, պա՛հ, օհո՛, բհը՛, վա՛շ, վի՛շ, բա՛, վա՛, օ՛, ո՛ւխ և այլն։

Այս ձայնարկությունները կարող են արտահայտել խոսողի տարբեր, բազմազան զգացումներ՝ ուրախություն ու հաճելիություն, ցավ, զարմանք, զղջում, ափսոսանք, վախ, արհամարհանք, դժգոհություն, տհաճություն ու զզվանք, անտարբերություն և այլն։

Ձայնարկություններն ըստ այս իմաստների խմբավորելը կապված է դժվարությունների հետ, քանի որ հաճախ միևնույն ձայնարկությունը տարբեր նախադասություններում արտահայտում է տարբեր իմաստներ։ Այսպես, օրինակ՝ վայ-ը կարող է արտահայտել և՛ ուրախության, և՛ զարմանքի, և՛ ցավի, և՛ վախի, և՛ զզվանքի, և՛ այլ զգացումներ։ Օրինակ՝ Վա՛յ, Ծիրան ջան... դուրս թռավ սրտիցս (ՀԹ, Գելը)։ Վա՛յ, թանաք չկա, աղչիկնե՛ր, շո՛ւտ (ԱՍ, Ոսկե մեդալ)։ Վա՛յ, մեռա հա մեռա (ՀԹ, Նեսոյի քարաբաղնիսը)։ Վա՛յ, խեղճ իմ Սաքուլ, ի՛նչ լավ մարդ ես (ՆԴ, Սա-

քուլն ուխտ գնաց)։ Վա՛յ... Վա՛յ... ոտս,— գոչեց պատանին մորմոքելով (Ր, Անմեղ վաճառք)։

Ավելին, երբեմն նույնիսկ տարբեր իմաստներ են համատեղվում միևնույն կիրառության մեջ։ Օրինակ՝

Թանգիկ.— (Ուղղվելիս նկատելով իր մազերը Թոմասի շրթունքներին. հեռաfrfված, զարմացած և երկյուղած[62]) Վա՛յ... եղբայր...

Թոմաս.— (վեր կացնելով նրան) Դու գեղեցիկ ես... (Համբուրում է մազերի փունջը)։

Թանգիկ.— (երկյուղած, շփոթված) Մի՛ անի, եղբայր, մի՛ անի... Քո ոտի հողն եմ. վա՛յ, ես ինչ եմ քեզ մոտ (ԴԴ, Դատաստան)։

Իհարկե, բոլոր ձայնարկությունները չէ, որ ունեն շատ բազմազան իմաստներ։ Օրինակ՝ չա՛ն, օխա՛յ, բյո՛ւն և նման մի շարք ձայնարկությունների իմաստները սահմանափակ են, որոշակի։ Այնուամենայնիվ վերոհիշյալ դժվարությունը կա, որի պատճառով էլ ձայնարկությունների խմբավորումն ըստ իմաստի որոշ չափով պայմանական է։

Ձայնարկությունների այդ խմբերն արտահայտում են հետևյալ իմաստներն իբրև զգացում։

§ 804. ա) Ուրախություն ու հաճելիություն. *այդպիսիք են՝ չա՛ն, օխա՛յ, ուխա՛յ, վա՛յ, ո՛ւյ, օ՛ֆ, ա՛խ, օ՛յ և այլն։ Օրինակ՝* Ուխա՛յ, *ի՛նչ անուշ պատառներ են (ՀԹ, Հենզելն ու Գրետելը)։* Չա՛ն, չա՛ն, *մատաղ, չա՛ն,— արտասանեց պառավ Մարանը և հորանչեց (ՆՐ, Սև փողերի տոկոսը)։* Ո՛ւյ, *ջանիկս,— հրճվանքից ծափ են տալիս միջանցքում (ԱՍ, Ոսկե մեդալ)։* Օխա՛յ, *ապրի աշխատող ձեռքը. ի՛նչ հիանալի դրախտ (ԴԴ, Սեփականություն)։* Օ՛յ, *ինչ լավիկն է (ԳՍ, Թեհրան, 1)։*

§ 805. բ) Զարմանք. *այդպիսի ձայնարկություններ են՝* օ՜ֆո՛, օ՛, օ՛ֆ, բա՛, ա՛, պա՛ֆ, պա՛ ֆո՛, վա՛, վա՛յ, վա՛ֆ *և այլն։ Օրինակ՝ Մարդիկ մին էլ տեսնում են, վա՛ֆ, քաջ Նազարը վագրին նստած քշում է (ՀԹ, Քաջ Նազար)։ — Վա՛յ, գաղտի լիճը դա՞ է...*

62 *Հեղինակի խոսքի մեջ այս բառերն ընդգծելով՝ ընթերցողի ուշադրությունն ենք հրավիրում դրանց վրա, որոնք արտահայտելով գործող անձի բարդ հոգեվիճակը, կօգնեն ավելի լավ ըմբռնելու միևնույն ձայնարկության մեջ մեկից ավելի զգացումների համատեղումը։*

թողեք ես մի լավ նայեմ,— կանչեց Հասմիկը, վիզն առաջ երկարելով։ Վա՜, ինչքան թռչուն կա։ Իսկ սրանք ի՞նչ են, բնե՞ր են... Վա՜հ, ինչքան բուն կա (ՎԱ, Սևանի ափին)։ Օհո՜, աչքերդ կարմրեցին, ձայնդ դողաց, չլինի թե սիրահարված ես (Շիրվ., Քառս)։ Բա՜, մի՞թե փրկության համար նրանք պիտի խեղդամահ լինեն (Ն. տ.)։ — էնտեղից էստեղ քանի՞ ամսվա ճանապարհ է... — երեք ամսվա։ — Պա հո՜... միաբերան զարմացան ամենքը (ՀԹ, երկաթուղու շինությունը)։

§ 806. գ) Ցավ, վիշտ, վախ. ինչպիսիք են՝ վա՜յ, վո՜ւյ, վի՜, վըի՜, ըը՜, վա՜շ, վո՜ւշ, վի՜շ, ա՜, ամա՜ն և այլն։ Օրինակ՝ — Վո՜ւյ, քոռանամ ես, աղջի, ծեծում ա մաթրախով, ծեծում,— ճվաց Օսանը (ՆԴ, Ինչպես բժշկեցին)։ Վա՜յ, Կիկոս ջա՜ն, վա՜յ... (ՀԹ, Կիկոսի մահը)։ Վըի՜, վըի՜... մղկտում էր Անանը ցավերից գալարվելով (ՆԴ, Թե ինչ եղավ հետո, երբ շաքարամանից...)։ Ըը՜... ցավից մղկտաց Անանը (Ն. տ.)։ Աա՜ա.. երկար ու սուր ճչաց Անանը (Ն. տ.)։ Ո՜ւֆ, ջարդեցիր, արջ (ԱՍ, Ոսկե մեդալ)։ Վուո՜ւշ... ծնկները ծեծեցին հարսները (ԴԴ, Ավելորդը)։

Մունեատիկ.— Ջորք է գալիս, պա՜ճ, պա՜ճ, պա՜ճ, պա՜ճ։

Հսկաներ.— Ջորք է գալիս, վա՜ճ, վա՜ճ, վա՜ճ, վա՜ճ։

Ղոռոբողա.— Քաչ Նազարը էստեղ է, հա...

Հսկաներ.— Փախչենք, ապեր, շուտ, վա՜յ, վա՜յ... (ԴԴ, Քաչ Նազար)։

§ 807. դ) Զզվանք, տհաճություն. դրանք են՝ ֆո՜ճ, փո՜ւ, ա՜խ, օ՜, ի՜ճ, թյո՜ւճ (թո՜ւճ), թո՜ւ, վա՜ճ, ո՜ւճ և այլն։ Օրինակ՝ Ի՜ճ... ամենակուշտ անասունը աշխարհիս երեսին (ԴԴ, Վարպանանք, 1)։ Գալիս է դռանը կանգնում, չորս կողմի վրա հոտոտում ու իրեն-իրեն վըռնում, թո՜ւճ, թո՜ւճ, թո՜ւճ, մարդ-մարդահոտ է գալիս (ՀԹ, Գեղեցկուհի Վասիլիսան)։ Ա՜խ, այս բաղնիսի հոտն ինձ սպանեց (Շիրվ., Քառս)։ Փո՜ւճ, այս ինչ օդ է։ Բաց թողեք, բաց թողեք դուռը (ՆԴ, Մի օր աշնանը)։

§ 808. ե) Դժգոհություն. այսպիսի իմաստ արտահայտող ձայնարկություններ են՝ օ՜, օ՜ճ, է՜ճ, ա՜ճ, օ՜ֆ, ա՜խ, ըը՜: Օրինակ՝ Օ՜, սոսկալի մի վայր է այս, այդ է ահա պատճառը, որ ես փախչում եմ այստեղից (Մուր.,)։ Օ՜ֆ, ինչ երկար ու ձանձրալի է ժամանակն էստեղ (ՀԹ, Ձարմանալի աշուղը)։ — Օ՜ճ, երբ պիտի ազատվեմ (ՍՋ, Լիկկայանի ուսուցչուհին)։ Վա՜ճ, մի րոպե չեն թող-

նում մարդ հանգիստ իր գլուխը լա այս քանդվածում (ԴԴ, Սեփականություն)։

§ 809. գ) Հանդիմանություն, կշտամբանք. այդպիսիք են՝ ա՛յ-ա՛յ-ա՛յ, ա՛յ-ա՛յ, ա՛յ, վա՛յ-վա՛յ, ա՛խ, ը՛հ, ո՛ւհ, է՛խ, օ՛ֆ. էհե՛յ և այլն։ Օրինակ՝ Ո՛ւ, էլի սկսեցիր (ՆԴ, Պայքար)։ Ա՛յ դուք չար երեխեք, էսքան ժամանակ ինչ եք անտառում քնել ու մնացել (ՀԹ, Հենզելն ու Գրետելը)։ է՛հ, Արմեն, Արմեն,... անհասկանալի մարդ ես դու, դու, այդ քիչ է, վարակում ես և ուրիշներին (ԲՎ, Լեռների որդին)։

§ 810. է) Զղջում, ափսոսանք. այդպիսիք են՝ ա՛խ, է՛խ, ավա՛ղ, օ՛հ, օ՛, վա՛յ, վա՛խ և այլն։ Օրինակ՝ է՛խ, Ռամ Ռոյը ինչպես չհիշի, թե քանի-քանի անգամ դրել են գնդացիր մահաբեր Զարքաշ հին Հինդի սրտին (ԱՎ, Ռամ Ռոյ)։ Ա՛խ, կյանքի ծանրը պայմանները չեն թույլ տվել այդ երազանքներին ժամանակին զարթնելու (Շիրվ., Քառս)։ Օ՛, ափսոս է այդ սուրբ անունը (ՆԴ, Նունե)։

§ 811. ը) Անտարբերություն, համակերպում. այդպիսի ձայնարկություններ են՝ է՛, է՛հ, ա՛հ, ը՛հ և այլն։ Օրինակ՝ էէ՛, թող աքսորվեմ, եթե աշխարհի երեսին արդարություն չկա (Շիրվ., Քառս)։ է՛հ, արեք, ինչ ուզում եք,— ասաց նա խորին անտարբերությամբ (ՆԴ, Սաքուլն ուխտ գնաց)։ Ա՛հ, գիտեմ, ինչ պիտի ասես (Շիրվ., Քառս)։ է՛, պառկեցե՛ք, քնեցե՛ք, զավակնե՛րս,— ասաց նա, թեև նա կկամենար, որ վերջին գիշերը երկարեր մինչև հավիտյան (ԴԴ, Վարդանանք, 1)։

§ 812. թ) Մի քանի ձայնարկություններ արտահայտում են խոսողի վերաբերմունքը գործողության, իրողության ավարտի նկատմամբ և մի տեսակ ընդում են այդ ավարտը։ Նման դեպքերում խոսողի վերաբերմունքը մեծ մասամբ լինում է բավականության վերաբերմունք հաջող ավարտի, իրողության նկատմամբ։ Այդ իմաստով գործածվում են հետևյալ ձայնարկությունները՝ ըհը՛, բա՛ս, ըհա՛, դե՛ և այլն։ Օրինակ՝ Ձերը մնաց երկու գնդակ։ Իսկ ես երկուսը հազիվ եմ գցել... — Ըհա՛, ըհա՛։ Սա էլ յոթ (ԳՍ, Թեհրան, 2)։ Պետրոն աչքով արավ ինձ։ Այսինքն՝ կեցցես, խաչիկ։ Բա՛ս, Պետրոս ջան (ԱԴ, Մրգաշատի լուսաբացը)։

ԿԱՄԱՅԻՆ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ՁԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

§ 813. Այս ձայնարկութ յունները խոսողի կամքն են արտահայտում՝ ուղղված խոսակցին, նրան, որին դիմում է խոսողը։ Խոսողի կողմից դիմելը տարբեր նպատակներով կարող է լինել։ Ընդհանուր առմամբ այդպիսի ձայնարկութ յուններ խոսակցի, դիմացինի ուշադրությունը գրավելու միջոց է՝ նրան որևէ միտք հայտնելու, որևէ գործողության մղելու նպատակով։

Կամային վերաբերմունք արտահայտող ձայնարկութ յուններ են՝ ա՛, ա՛յ, հե՛յ, է՛յ, էհե՛յ, հա՛յ, հարա՛յ, տո՛, ծո՛, հե՛, օ՛ն և այլն։ Այդպիսիք են նաև կենդանիների նկատմամբ գործածվող հետևյալ ձայնարկութ յունները՝ ըղ՛ս–ըղ՛ս (շան վերաբերյալ), փիշի՛–փիշի՛, փի՛շտ (կատվի վերաբերյալ), ջո՛ւ–ջո՛ւ–ջո՛ւ, ֆշա՛ (հավերի, վերջինը նաև առհասարակ թռչունների, ինչպես և ճանճերի վերաբերյալ) և այլն։ Այս ձայնարկութ յուններից շատերը հաճախ գործածվում են պարզապես խոսակցի ուշադրությունը հրավիրվելու համար՝ նրան մի բան հաղորդելու նպատակով։ Օրինակ՝ Ա՛յ տղա, էգ անտեր ճիճուները մի քանի օր կացան կոտորվեցին (ՀԹ, Գաբո բիձու շերամապահուհ ութ յունը)։ Հե՛յ պարոններ, տեսա կանանչ գարունքին՝ էս սարերում լաց էր լինում մի պախրա (ՀԹ, Եղջերուն)։

Կամային վերաբերմունքի իմաստ ունեցող ձայնարկութ յուններ հաճախ էլ գործածվում են խոսակցին դիմելու համար՝ դեպի որևէ գործողության կատարում մղելու նպատակով։

Հե՛յ, բացվեցե՛ք, ամուր փակեր, ետ գնացե՛ք, լեն դարպասնե՛ր (ՀԹ, Գեղեցկուհի Վասիլիսան)։ Հե՛յ ձեղ մատաղ, բանվո՛ր տղերք, Մեկ է՛լ, մեկ է՛լ մի զարկ տվեք (Հ. Հակ., Մեկ էլ, մեկ էլ)։ Օ՛ն, ուրեմն, կատարենք մեր պարտքը (Մուր., Գևորգ Մարզպետունի)։ է՛–հե՛–հե՛յ,— ալիք-ալիք դիզվեց ձայնը,— ժողովո՛ւրդ... Թագավորի հրամանով առավոտը կանուխ ձիատերը ձիով քաղա՛՛ք, հե՛յ–հե՛յ... (ԱԲ, Սպիտակ ձին)։

Այս կարգի մեջ պետք է դասել նաև կենդանիներին կանչելու, քշելու, որևէ գործողության մղելու նպատակով նրանց կիրառութ յունները։ Օրինակ՝ Քշա՛, ֆշա՛, ձեր քոքը վառի... Քշա՛,— կրո-

կընում է բիձան ու քարը շպրտում հավերի վրա (ԴԴ, Հողը)։ Մուրոն հավաքում էր ոչխարը։ Լսելի էր նրա մեղմ սուլոցն ու ձայնը —«հոլե՛, հոլե՛...»։ Քիչ հետո ոչխարը գլուխը թևքից դեպի գյուղը (ԱԲ, Մուրոյի «գրույցը»)։ Ջամբար, ֆո՛ւս, Ալաբաշ, հասի (ԱԲ, Կյորես)։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԲ — Ակսել Բակունց
ԱԳ — Աշոտ Գրաշի
ԱԴ — Արշավիր Դարբնի
ԱԹ — Ալեքսանդր Թաւուրյան
ԱՀ — Աշոտ Հովհաննիսյան
ԱՂ — Արամ Ղանալանյան
Աճ. — Հրաչյա Աճառյան
ԱՍ — Անժելա Ստեփանյան
Ա. Սահ. — Անահիտ Սահինյան
Ա. Սեկ. — Անահիտ Սեկոյան
ԱՎ — Ազատ Վշտունի
Ավանգ. — «Ավանգարդ» (լրագիր)
Ար. — Արագի
Արշ. — Արշարունի
ԲՀ — Բաղիշ Հովսեփյան
ԲՎ — Բոգդան Վերդյան
ԳԱՏ — Գիտությունների ակադեմիայի «Տեղեկագիր»
Գար. — «Գարուն» (ամսագիր)
Գէ — Գևորգ Էմին
ԳԹ — «Գրական թերթ» (լրագիր)
ԳՄ — Գուրգեն Մահարի
ԳՄԹ — Գուրգեն Մահարի, երկեր
ԳՌ — Գագիկ Ռշտունի
ԳՍ — Գարեգին Սևունց
Գ. Սար. — Գեղամ Սարյան
ԴԴ — Դերենիկ Դեմիրճյան
ԵԵ — «Երեկոյան Երևան» (լրագիր)
ԵՋ — Եղիշե Զարենց
Եր. — «Երևան» (լրագիր)
ԷՀ — Էռնեստ Հեմինգուեյ
ԹՀ — Թաթուլ Հուրյան
Իս. — Ավետիք Իսահակյան
ԽԴ — Խաչիկ Դաշտենց
ՄԹ — Մերուժ Թորգոմյան
ԿԱ — Կամսար Ավետիսյան
ԿՋ — Կոստան Զարյան
ՀԹ — Հովհաննես Թումանյան
ՀԺՊ — Հայ ժողովրդի պատմություն (դասագիրք)
ՀԽ — Հայկ Խաչատրյան
Հ. Հակ. — Հակոբ Հակոբյան
Հ. Հովհ. — Հովհաննես Հովհաննիսյան
ՀՆԳՊ — Հայ նոր գրականության պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ.
ՀՇ — Հովհաննես Շիրազ
ՀՍ — Համո Սահյան
ՀՔ — Հրաչյա Քոչար
ՂԱ — Ղազարոս Աղայան
ՄԱ — Մկրտիչ Արմեն
ՄՆ — Միքայել Նալբանդյան
ՄՇ — Միքայել Շաթիրյան
Մուր. — Մուրացան
ՆԴ — Նար-Դոս
ՆՋ — Նահապետ Զարյան
Շիրվ. — Շիրվանզադե
ՊԲՀ — «Պատմա-բանասիրական հանդես»
Պոն. — Պյոտր Պոնոմարյով
ՊՊ — Պերճ Պռոշյան
ՊՍ — Պարույր Սևակ
ՌՋ — Ռուբեն Զարյան
ՍԱ — «Սովետական արվեստ» (ամսագիր)
ՍԱ — Սուրեն Այվազյան
ՍԳ — «Սովետական գրականություն» (ամսագիր)
ՍԴ — «Սովետական դպրոց» (լրագիր)

ՍՋ — Ստեփան Զորյան
Սիր. — Համայակ Սիրաս
Սխ — Սերո Խանզադյան
ՍԿ — Սիլվա Կապուտիկյան
ՍԿ, ՔԴՔ — Սիլվա Կապուտիկյան, Քարավանները դեռ քայլում են
ՍՀ — «Սովետական Հայաստան» (լրագիր)
ՍՄ — «Սովետական մանկավարժ» (ամսագիր)
ՍՎ — Սուրեն Վահունի
ՍՏ — Սողոմոն Տարոնցի
ՎԱ — Վախթանգ Անանյան
Վ. Ալ. — Վահրամ Ալազան
ՎԹ — Վահան Թոթովենց
ՎԽ — Վիգեն Խեչումյան
Վ. Պետր. — Վարդգես Պետրոսյան
ՎՏ — Վահան Տերյան
ՎՓ — Վրթանես Փափազյան
Ր — Րաֆֆի
ՔԹ — Քրիստափոր Թափալճյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 5
Ներածություն 7
Ձևաբանության առարկան, նրա կապը բառագիտության և շարահյուսության հետ 7
Բառի ձևաբանական վերլուծությունը 13
Խոսքի մասերի համակարգը և դասակարգումը 16

ԳՈՅԱԿԱՆ

Գոյականը որպես խոսքի մաս 34
Գոյականի իմաստային-բառականական խմբերը 37
Ընդհանուր դիտողություններ 37
Հասարակ և հատուկ գոյականներ 38
Թանձրացական ու վերացական գոյականներ 42
Անձ և ոչ անձ (իր) ցույց տվող գոյականներ 43
Գոյականի բառականական կարգերը 45
Ընդհանուր դիտողություններ 45
Թվի կարգը 45
Եզակի թիվ 46
Հոգնակի թիվ 49
Անհոգնական գոյականներ 55
Հոլովի կարգը 57
Հոլովների որոշման հիմունքը 57
Գոյականի հոլովները 67
Ուղղական հոլով 67
Տրական հոլով 69
Բացառական հոլով 73
Գործիական հոլով 75
Ներգոյական հոլով 77
Հոլովական անհամապատասխանություններ եզակի ու հոգնակի ձևերի միջև 79
Հոլովման տիպերը 81
Ընդհանուր դիտողություններ 81
Ընդհանրական, իմաստային ու ձևային հոլովումներ 82

Արտաքին և ներքին հոլովումներ . . . 86
Ընդհանուր բնութագիր 86
Արտաքին թեքման հոլովումներ 87
Ի հոլովում 87
Ու հոլովում 89
Ան հոլովում 92
Վա հոլովում 94
Ոչ հոլովում 99
Յ հոլովում 101
Ներքին թեքման հոլովումներ 102
Ա հոլովում 102
Ո հոլովում 104
Այլաձև հոլովումներ 105
Առկայացման (տարորոշման) կարգ 106
Որոշյալություն 107
Ստացականություն 115
Դիմորոշություն 119
Յուցականություն 121
Գոյականի կազմության առանձնահատկություններ 122

ԱԾԱԿԱՆ

Ածականը որպես խոսքի մաս 134
Ածականի և այլ խոսքի մասերի հարաբերակցությունը 136
Ածականի և մակբայի հարաբերակցությունը 136
Ածականի և գոյականի հարաբերակցությունը 139
Ածականի հարաբերակցությունը դերանվան հետ 141
Ածականի և բայի հարաբերակցությունը 142
Ածականի տեսակներն ըստ նշանակության. որակական և հարաբերական ածականներ 144
Որակական ածականների համեմատության աստիճանները . . 149
Ընդհանուր դիտողություններ 149
Բաղդատական աստիճան 152
Բաղդատական աստիճանի տեսակները և նրանց արտահայտությունը 153
Առավելական բաղդատական 153
Հավասարական բաղդատական 156
Նվազական բաղդատական 158
Գերադրական աստիճան 160
Հարաբերական գերադրական 160
Բացարձակ գերադրական 164
Համեմատության աստիճաններ չունեցող որակական ածականներ . 167
Ածականի հոլովումը 172
Ածականակերտ ածանցներ 173
Որակական ածականներ կերտող նախածանցներ 174
Որակական ածականներ կերտող վերջածանցներ 174
Հարաբերական ածականներ կերտող ածանցներ 178

ԹՎԱԿԱՆ

Թվականը որպես խոսքի մաս 182
Թվականի տեսակներն ըստ նշանակության 184
Քանակական թվականներ 185
Քանակական թվականների արտահայտությունը . . . 189
Քանակական թվականների կազմությունը 190
Կոտորակային թվականներ 192
Դասական թվականներ 195
Դասական թվականների արտահայտությունը 196
Դասական թվականների կազմությունը 198
Բաշխական թվականներ 200
Բաշխական թվականների արտահայտությունը 201
Բաշխական թվականների կազմությունը 201
Թվականների հոլովումը 204

ԴԵՐԱՆՈՒՆ

Դերանունը որպես խոսքի մաս 206
Դերանունների տեսակները 208
Անձնական դերանուններ 208
Ցուցական դերանուններ 210
Փոխադարձ դերանուններ 215
Որոշյալ դերանուններ 216
Անորոշ դերանուններ 219
Հարցական-հարաբերական դերանուններ 220
Ձևաբանական առանձնահատկությունները 223
Հոլովումը 224
Թիվը 231
Եզակի և հոգնակի թիվ ունեցող դերանուններ . . . 231
Անեզական դերանուններ 233
Անհոգնական դերանուններ 234

ԲԱՅ

Բայը որպես խոսքի մաս 235
Բայի կազմությունը 240
Համադրական բայեր 240
Հարադրական բայեր 248
Բայածանցներ 250
Բաղադրական-քերականական ածանցներ 251
Քերականական բայածանցներ 258
Բազմապատկական-սաստկական կերպածանցներ . . 259
Սեռային-քերականական բայածանցներ 263
Պատճառական բայածանցներ 263
Կրավորական սեռածանց 266

Բայական չձևդրություններ 267
Բայահիմքեր 269
Ներկայի կամ անորոշ դերբայի հիմք 272
Անցյալի հիմք 272
Բայի սեռը 277
Ներգործական սեռ 285
Կրավորական սեռ 288
Չեզոք սեռ 291
Կրավորաձև չեզոք բայեր 294
Պատճառական սեռ 298
Սեռային զուգահեռներ, փոխանցումներ և կրկնասեռություն . 305
Բայի արտահայտության ձևերը 309
Դերբայներ 309
Ինքնուրույն կիրառություն ունեցող կամ բուն դերբայներ . . 314
Անորոշ դերբայ 314
Հարակատար դերբայ 317
Ենթակայական դերբայ 320
Ջուգընթացական դերբայ 324
Ինքնուրույն կիրառություն չունեցող դերբայներ 325
Անկատար դերբայ 325
Ապառնի դերբայ 326
Վաղակատար դերբայ 330
Ժխտական դերբայ 331
Բայի եղանակային ձևերը 333
Բայի դեմքի կարգը 334
Բայի թվի կարգը 336
Եզակի թիվ 337
Հոգնակի թիվ 339
Բայի ժամանակի կարգը 340
Ժամանակի կարգի դրսևորման ձևաբանական միջոցները . 343
Համադրական ժամանակներ 344
Վերլուծական ժամանակներ 348
Գործողության կերպ 351
Երկրորդական վերլուծական ժամանակներ . . . 354
Բայի եղանակի կարգը 357
Սահմանական եղանակ 359
Ներկա 360
Հարակատար ներկա 363
Անցյալ ժամանակ 364
Անցյալի անկատար 364
Վաղակատար 365
Անցյալի վաղակատար 367
Անցյալի հարակատար 369
Անցյալի ապառնի 370
Անցյալ կատարյալ 371
Ապառնի 374

Սահմանական եղանակի երկրորդական վերլուծական ժամանակները 375
Ըղձական եղանակ 378
Ապառնի ժամանակ 379
Անցյալ ժամանակ 383
Ըղձական եղանակի երկրորդական վերլուծական ձևերը . . 385
Ենթադրական եղանակ 391
Ապառնի ժամանակ 393
Անցյալ ժամանակ 395
Ենթադրական եղանակի երկրորդական վերլուծական ժամանակները 398
Հարկադրական եղանակ 402
Ապառնի ժամանակ 404
Անցյալ ժամանակ 405
Հարկադրական եղանակի երկրորդական վերլուծական ժամանակները 407
Հրամայական եղանակ 413
Հրամայական եղանակի երկրորդական վերլուծական ձևերը . 419
Խոնարհման հարացույցի ընդհանուր նկարագիրը 421
ե խոնարհում 422
Պարզ բայեր և կրավորական ու բաղմապատկական ածանց ունեցող բայեր 422
Ն և չ ածանց ունեցող բայեր 422
Պատճառական բայեր 423
Ա խոնարհում 424
Պարզ բայեր 424
Ան և են ածանց ունեցող բայեր 424
Աննկանոն բայերի խոնարհումը 425
Պակասավոր բայեր 430
Ժխտական խոնարհում 432
Հարադիր բայերի խոնարհումը 433

ՄԱԿԲԱՅ

Մակբայը որպես խոսքի մաս 436
Մակբայների կազմությունը 442
Բարդ մակբայներ 443
Ածանցավոր մակբայներ 446
Քերականական ձևերից կազմված մակբայներ . . . 449
Նկարագրական մակբայներ 450
Մակբայների տեսակներն ըստ իմաստի 451
Ժամանակի մակբայներ 452
Տեղի մակբայներ 457
Չափի մակբայներ 458
Չափի մակբայներ 461
Ընդհանրական մակբայներ 466

Կապը որպես խոսքի մաս 475
Կապերի տեսակներն ըստ կազմավորման աստիճանների . . . 475
Կապերի կազմությունը 477
Կապերի տեսակներն ըստ իմաստի 479
Տեղի կապեր 480
Վերաբերության կապեր 487
Բացառման ու զիջման կապեր 488
Ժամանակի կապեր 491
Հիմունքի կապեր 493
Պատճառի կապեր 493
Նպատակի կապեր 494
Բացահայտման կապեր 496
Ձևի կապեր 496
Չափի կապեր 497
Ընդդիմության կապեր 500
Միասնության կապեր 500
Կապերի հոլովառությունը 502

ՇԱՂԿԱՊ

Շաղկապը որպես խոսքի մաս 508
Շաղկապների տեսակներն ըստ կազմության 517
Պարզ շաղկապներ 517
Քերականական ձևերից առաջացած շաղկապներ . . . 517
Ածանցավոր շաղկապներ 518
Բարդ շաղկապներ 518
Շաղկապների երկու տեսակները. համադասական և ստորադասական . 523
Համադասական շաղկապներ 524
Միավորիչ շաղկապներ 524
Ներհակական շաղկապներ 529
Տրոհական շաղկապներ 533
Ստորադասական շաղկապներ 535
Մեկնական շաղկապներ 536
Ժամանակի շաղկապներ 537
Պայմանի շաղկապներ 540
Պատճառի և հիմունքի շաղկապներ 541
Զիջական շաղկապներ 543
Նպատակի շաղկապներ 545
Համեմատության շաղկապներ 546
Մակաբերական շաղկապներ 547
Բացահայտման շաղկապներ 548

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐ

Եղանակավոռող բառերը որպես առանձին խոսքի մաս 550

Եղանակավորող բառերի տեսակներն ըստ կազմության 554
Պարզ եղանակավորող բառեր 554
Ածանցավոր եղանակավոր բառեր 554
Վերականական ձևերից առաջացած եղանակավորող բառեր . 555
Բարդ և նկարագրական եղանակավորող բառեր . . 556
Եղանակավորող բառերի տեսակներն ըստ իմաստի 557
Հաստատական եղանակավորող բառեր 557
Ցուցական եղանակավորող բառեր 559
Երկբայական եղանակավորող բառեր 560
Մասնական եղանակավորող բառեր 563
Ժամանակական եղանակավորող բառեր . . . 564
Կամային եղանակավորող բառեր 565
Զիջական եղանակավորող բառեր 566
Ժխտական եղանակավորող բառեր 567
Բաղձանքի եղանակավորող բառեր 568

ԶԱՅՆԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Զայնարկությունը որպես խոսքի մաս 569
Զայնարկությունների տեսակներն ու իմաստային նշանակությունները . 573
Զգացում արտահայտող ձայնարկություններ . . . 573
Կամային վերաբերմունք արտահայտող ձայնարկություններ . 577
Համառոտագրություններ 579

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍԵՐԳԵՅ ԳՅԱՆՋՈՒՄԻ
ՊԱՐՆԱՍՅԱՆ ՆՎԱՐԴ ԱՎԵՏԻՍԻ
ՕՀԱՆՅԱՆ ՀՄԱՅԱԿ ԱՎԵՏԻ
АБРАМЯН СЕРГЕЙ ГЯНДЖУМОВИЧ
ПАРНАСЯН НВАРД АВЕТИСОВНА
ОГАНЯН АМАЯК АВЕТОВИЧ

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ՀԱՏՈՐ 2

Տպագրվում է Հայկ. ՍՍՀ ԳԱ
Հր. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի
Գիտական խորհրդի որոշմամբ

Հրատարակչական խմբագիր
Հ. Գ. ՀԱԿՈԲՅԱՆ
Նկարիչ Հ. Ն. ԳՈՐԾԱԿԱՀՅԱՆ
Տեխնիկական խմբագիր
Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ
Սրբագրիչ Կ. Խ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ

ՎՏ 04642 Պատվեր 218 Խմհ 1381 Հրատ. 3618 Տպաքանակ 3000
Հանձնված է արտադրության 22.V. 1973 թ., ստորագրված է տպագրության 20.VIII. 1974 թ., տպագր. 36,75 մամուլ+1 ներդիր, հրատ. 29,0 մամուլ, թուղթ № 1, 60×90¹/₁₆։ Գինը 2 ռ. 56 կ.։
ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան—19, Բարեկամության 24բ.
Հասարակական գիտությունների բաժանմունքի շենք։

Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչության տպարան, Երևան, Բարեկամության 24